

«ՄԽԻԹԱՐ ԳՈՇ» ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
АРМЯНСКО-РОССИЙСКИЙ МЕЖДУНАРОДНЫЙ УНИВЕРСИТЕТ “МХИТАР ГОШ”
“MKHITAR GOSH” ARMENIAN-RUSSIAN INTERNATIONAL UNIVERSITY

«ՄԽԻԹԱՐ ԳՈՇ»

ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
(իրավագիտություն, մանկավարժություն, տնտեսագիտություն)

“МХИТАР ГОШ”

НАУЧНО-МЕТОДИЧЕСКИЙ ЖУРНАЛ
(правоведение, педагогика, экономика)

“MKHITAR GOSH”

SCIENTIFIC-METHODICAL REVIEW
(jurisprudence, pedagogics, economics)

10-12 (39)
2013

ՂՐԱՏԱՐԱԿՈՒՄ Ե «ՄԽԻԹԱՐ ԳՈՇ» ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄԻՋԱԶԱՅԻՆ ՀԱՍՏԱՏԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՅՈՒԹՅԱՆ ԵՐԱԾԽԱԿՈՐԽՅԱՅՐ

ԳԼՈՒԽՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ

Վաչիկ ԲՐՈՒՏՅԱՆ

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ,
«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային
համալսարանի ռեկտոր

ՊԱՏԱՍԽԱՎԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ

Լևոն ՍԱՐԳՍՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԳՐԱՎԿԱՆ ԽՈՐՅՈՒԹՅՈՒՆ

Հայկ ՂԵՐՁՅԱՆ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՌՈՒԹԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Համայիկ ՂԵՐՁՅԱՆ

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գրավիկ ԲԱՐՎԱՅԵԱՆ

Մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

Իրինա ՉՈՎԱԿԻՒՅԵԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Մերգեյ ՄԱՍԱՎԱՅԵԱՆ

Քանակաբանական գիտությունների դոկտոր

ՄԱՆԱԳՎԱԿԱՆ ՄԱՍԻՆԿՅԱՆ

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Էմնա ՆԱՍԻՒՅՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Հայկ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Մանկավարժական գիտությունների դոկտոր, դոցենտ

Գաղնիկ ՍԱՖԱՐՅԱՆ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Միքայել ՀԱՅՐԱԳՐԻ

Գլուխ ՍԱՐԳՍՅԱՆ

Համակարգչային ծևավորությունների կողմից

Արմենուիկ ՄՈՍԻՆՅԱՆ

Հանդեսում տպագրված բոլոր հոդվածները
գրախոսված են և երաշխավորված խմբագրական
խորհրդի անդամների կողմից

ՀԱՆԴԵՍԸ ԳՐԱՎԱԾՈ Ե ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ

ԱՆԱՀԱՅՐՈՒԹՅՈՒՆԻՒՄ

ԳՐԱՎԱԾՈՍ ՎԿԱՅԱԿԱՆ 01Մ 000219

Լույս է տեսնում տարեկան 4 անգամ

Իրատարակության 10-րդ տարի

ИЗДАЕТСЯ ПО РЕКОМЕНДАЦИИ УЧЕНОГО СОВЕТА
АРМЯНСКО-РОССИЙСКОГО МЕЖДУНАРОДНОГО
УНИВЕРСИТЕТА «МХИТАР ГОШ»

ГЛАВНЫЙ РЕДАКТОР

Վաչիկ ԲՐՈՒՏՅԱՆ

Кандидат педагогических наук, доцент
Ректор Армянско-Российского
международного университета «Мхитар Гош»

ОТВЕТСТВЕННЫЙ РЕДАКТОР

Լևон ՍԱՐԿԻՍՅԱՆ

НАУЧНЫЙ РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Гайк ДЕРЦՅԱՆ

Доктор юридических наук, профессор

Рудик ԳԵՎՈՐԿՅԱՆ

Кандидат юридических наук, доцент

ԱՅՄԻԿ ԴԵՐՑՅԱՆ

Кандидат педагогических наук, доцент

Գրավիկ ԲԱԲԱՅԱՆ

Кандидат педагогических наук, профессор

Իрина ОՎԱԿԻՄՅԱՆ

Доктор экономических наук, профессор

Сергей АГԱՋԱՆՅԱՆ

Доктор филологических наук

Միнацакан ՄԱՆՈՒԿՅԱՆ

Доктор педагогических наук, профессор

Էմма ՆԱՍԻԼՅԱՆ

Кандидат экономических наук, доцент

Գայк ՊԵՏՐՈՍՅԱՆ

Доктор педагогических наук, доцент

Գարնիկ ՍԱՓԱՐՅԱՆ

Доктор юридических наук, профессор

Կորբեկ Գօր ՍԱՐԿԻՍՅԱՆ

Компьютерный дизайнер

Армениу ՄՕՍԻՆՅԱՆ

Все статьи, опубликованные в журнале,
рецензированы и рекомендованы к публикации
членом редакционного совета

ЖУРНАЛ ЗАРЕГИСТРИРОВАН
В МИНИСТЕРСТВЕ ЮСТИЦИИ РА
СВИДЕТЕЛЬСТВО О РЕГИСТРАЦИИ 01Մ 000219

Издается 4 раза в год
10-ый год издания

ՀՈՒՇԱԳԻՐ ՀԵՂԻՆԱԿՍԵՐԻՆ

«ՄԽԻՏԱՐ ԳՈՇ» հանդեսի խմբագրությունը գիտական հոդվածներն ընդունում է, եթե դրանք՝
ա) պարունակում են սպառիչ տեղեկություններ հեղինակների մասին.
բ) ունեն 300 dpi խտությամբ էլեկտրոնային կամ 7x8 չափսի հեղինակի լուսանկար.
գ) ունեն հայերեն և անգլերեն լեզուներով անփոփումներ.
դ) ունեն հղում-ձանոթագրություններ և (կամ) օգտագործված գրականության ցանկ.
է) կից ունեն մասնագետի գրախոսություն:

Հոդվածներն ընդունվում են պնակիտով (diskette) կամ էլ. փոստով:

ПАМЯТКА АВТОРАМ

Редакция журнала “МХИТАР ГОШ” принимает научные статьи, если они:

- а) содержат исчерпывающие сведения об авторах;
- б) имеют фото автора в формате 300 dpi или размером 7x8 см;
- в) имеют резюме на армянском и английском языках;
- г) имеют ссылки-сноски и (или) список использованной литературы;
- д) приложена рецензия специалиста.

Статьи принимаются на дискете или по электронной почте.

ԴՏԴ 378:340

ԻՐԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄԱԽԱՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՒՄ*

Վաչիկ ԲՌՈՒՏՅԱՆ

**Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
«Մշիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի ռեկտոր**



Վայաստանում տեղի ունեցող արդի փոփոխությունները, ինչպիսիք են հասարակության ժողովրդավարացումը, իրավական պետության կառուցումը, մարդու իիմնարար իրավունքների և օգատությունների ճանաչումը, անձի հոգենոր և նյութական ապահովման համար ինարավությունների ընդլայնումը, իրատապ են դարձնում մարդու պատրաստվածության իիմնախնդիրը՝ ընտրելու և ինքնուրույնաբար պատասխան գործողություններ կատարելու քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում:

Վերը նշված միտումների զարգացումը Հայաստանի Հանրապետությունում պահանջում են կրթության նպատակների և արդյունքների վերահմաստավորում: Որպես կրթության գլխավոր արդյունք է դիտվում դպրոցն ավարտող երիտասարդ մարդկանց պատրաստականությունն ու ընդունակությունը՝ անձնական պատասխանատվություն կրել սեփական, ինչպես նաև այն հասարակության բարեկեցության համար, որում ապրում են:

Կրթությունը պետք է նպատակառուղիված լինի ապագա շրջանավարտի մոտ ձևավորելու՝

- սեփական բարեկեցիկ վիճակի և հասարակության բարեկեցության համար պատասխանատվություն,

- սոցիալական հմտությունների, գործնա-

կան ունակությունների յուրացում՝ սոցիալական հարաբերությունների ոլորտում,

- հասարակության մեջ սոցիալական շարժումներուն, այդ թվում՝ սոցիալական դերերի արագ փոփոխությունը յուրացնելու միջոցով,

- սեփական իրավունքների պաշտպանության հետամուտ լինելու, հասարակական կազմակերպությունների ստեղծմանը և գործունեությանը մասնակցելու պատրաստականություն,

- հանրուժողականություն ուղիղի կարծիքի հանեալ, երկխոսություն վարելու կարողություն, բովանդակալից փոխազդումներ փնտորելու և գտնելու ունակություն,

- իրավական իիմնարար նորմերի վերաբերյալ գիտելիքներն ու պետության իրավական համակարգի հնարավորություններն օգտագործելու ունակություններ [3, էջ, 38]:

Այսպիսով, իրավական, քաղաքացիական հասարակության կառուցումը և սոցիալակես պատասխանատու քաղաքացու դաստիարակությունը միասնական կապի մեջ են և լուծվում են դպրոցում իրավական (քաղաքացիական-իրավական, քաղաքացիական) կրթության միջոցով՝ «Հայաստակագիտություն» առարկայի դասվանդման շրջանակներում:

Իրավական կրթությունը, որն իր մեջ կրթական և դաստիարակչական գործառույթներ միավորող կրթական համակարգի կարևորագույն օլակներից մեկն է, նանկավարժների, փիլիսոփական գործունեությունների սեռուն ուշադրության օբյեկտ է վաղուց ի վեր:

Քաղաքացիական կրթություն ասելով հայկական ենք կրթական, դաստիարակչական և կառավարման նպատակառուղիված գործունեություն՝ ձևավորելու ժողովրդավարական երկիր

* Ներկայացվել է 16.12.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

ակտիվ քաղաքացիներ: Խոսքը գիտակից անձի մասին է, ով իր մեջ միավորում է ազատ քննադատական մտածողությունը և ինքնավարությունը օրինապահության հետ: Քաղաքացիական կրթությունը Ենթադրում է ժողովրդավարական արժեքների զանգվածային տարածում և բարձր իրավական և քաղաքական մշակույթի ձևավորման համար պայմանների ստեղծում, հասարակության մեջ հանդուրժողականության դաստիարակում և այլատյացության հաղթահարում, ինչը հանդիսանում է ժողովրդավարական վերափոխումների նախադրյալ: Այն կառուցվում է հումանիստական մանկավարժության հիմնարար սկզբունքի վրա և Ենթադրում է ժողովրդավարական տարածքի ստեղծում կրթական հաստատություններում:

Իրավական կրթություն ասելով հասկանում ենք սովորողներին հատուկ գիտելիքների փոխանցման գործնքացը, նրանց մոտ ունակությունների ու հմտությունների ձևավորումը, որոնք ծառայում են դրական սոցիալական փորձի յուրացմանը և հիմնավոր սոցիալական քանիմացության զարգացմանը: Դա համարի համակարգ համակարգ է՝ մանկավարժական գործունեության տարբեր ձևերի կազմակերպման համար **իրավական, քաղաքական և քարոյական կրթության ու դաստիարակության առանձքը**, որն իրականացվում է ինչպես ուսումնադասատիհարակչական գործնքացի ժամանակ:

Իրավական կրթությունը դպրոցում նպատակաւորված ուսուցողական գործողությունների համակարգ է, գործողություններ, որոնք կազմակերպված են իրավունքի, անձի ձևավորման գաղափարի վրա՝ ժամանակակից իրավական արժեքների հիմքով [1, էջ 30]:

Ներկայում իրավական ուսուցման ոլորտում (գիտելիքների, ունակությունների նպատակաւորված հաղորդման գործնքաց և իրավական գործունեության բնագավառում կայուն հմտությունների ձևավորում, որոնք թույլ են տալիս ունենալ ոչ միայն տեսական պատկերացումներ որոշակի իրավաբանական նորմների, տարբեր երկրների օրենքների վերաբերյալ, այլև կիրառել այդ գիտելիքները գործնականում) հարուստ փորձ է կուտակվել, որը թույլ է տալիս հաստատել իրավական կրթության բազմատարբերակ հայեցակարգերի գոյությունը էջ [2, էջ 193]:

Իրավական կրթության գործառույթները

- Փիլիսոփայական-մշակութարաբանական

- կրթական-իրավական
- հոգեբանական-զարգացնող
- դաստիարակչական-ծևավորող, շտկող: Իրավական կրթության համակարգը ներկայացված է հետևյալ հիմնական տարրերով (տես գծապատկեր 1):

Դպրոցական իրավական կրթությունը մտնում է Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական կրթության համակարգի մեջ որպես ինքնուրույն տարր: Կրթության համակարգը հիմնված է «Կրթության մասին» օրենքի վրա:

Կա կրթական ծրագրերի երկու տեսակ՝ մասնագիտական և հանրակրթական, որը մասնագիտական պատրաստվածության (միջնմասնագիտական պատրաստվածության) հիմքերն են դնում: Իրավաբանական կրթությունը կառուցվում է համակարգայնության և հաջորդականության հիման վրա:

Իրավաբանական կրթության ելակետային բաղադրիչ է իրավական կրթությունը, այսինքն՝ իրավական գործունեության առարկայական բովանդակության մասին տեղեկությունը: Այդ տեղեկության բնույթը հաճախ կախված է այն բանից, թե ինչպիսի տեսական դիրքերում (դիրքորոշումներ) է նա, ով հաղորդում է այդ տեղեկությունը: Ինչպես հայտնի է, միայն պետության և իրավունքի ծագման հարցի վերաբերյալ գոյությունը ունեն մի քանի տեսություններ՝ ասսպածաբանական, պայմանագրային, հոգեբանական և այլն: Իրավական գիտելիքների բազմազանությունը պայմաններ է ստեղծում դրանց առանձին տեսակների առանձնացման համար: Դրանք ընդհանուր տեսական իրավական գիտելիքներ են, որոնց հիմքում են օրենքը, իրավական նորմերը՝ որպես վերացական իրավական կատեգո-

Իրավական կրթության համակարգ

Իրավական կրթության նպատակները

Դպրոցական իրավաբանական կրթության բովանդակությունն ու կառուցվածքը

Իրավական կրթության գործնքացի գիտամեթոդական կազմակերպումը

Սովորողների ճանաչողական հնարավորությունները

Ուսուցման արդյունքները

ոհաների համակարգ, իրավական ոլորտում գործունեության եղանակների մասին գիտելիքները, փորձնական ճանապարհով ձեռք բերված գիտելիքները իրավական գործունեության մասին, գնահատողական իրավական, ուսումնական իրավական գիտելիքները:

Ուսումնական իրավական գիտելիքները, որոնցով հիմնականում գործ են ունենում ուսուցչն ու սվորողը, կարող են դասակարգվել հետևյալ կերպ՝ Եթե գիտելիքների հիմքում ընկած են իրավունքի, օրենսդրության կոնկրետ ճյուղերի նորմերը, ապա որ դրական իրավունքի բնագավառն է, որը դիտարկում է միայն այդ պահին գործող ճյուղային իրավունքը: Եթե գիտելիքների հիմքում իրավական գաղափարներն են, սկզբունքները, ապա այդ գիտելիքները վերաբերում են իրավունքի փիլիսոփայությանը: Դրանք՝ նախևառաջ, իրավունքի սոցիալական արժեքի, նրա եռթյան ու մեթոդաբանության՝ որպես իրավական իրականության ճանաչման սկզբունքների, միջոցների և մեթոդների հավաքականության հիմնահարցերն են: Իրավունքի փիլիսոփայության հիմունքների յուրացումը, անկանած, պարտադիր տարր է հանդիսանում, քանի որ իրավունքի փիլիսոփայությունը հետազոտում է իրավական տարրեր երևույթների միջև կապը, բացահայտում է օրենքի սոցիալական իմաստը, իրավական հայացքների էթնիկական եռթյունը: Առանց իրավունքի փիլիսոփայական հիմունքների մասին պատկերացումների դպրոցականները դժվար կարողանան օրյեկտիվ կերպով վերլուծել իրավական բարեփոխումները առանձնահատկությունները: Եթե գիտելիքների հիմքում իրավահարաբերություններն են, ապա այդ գիտելիքները վերաբերում են իրավունքի սոցիոլոգիային, որը դիտարկում է սոցիալական իրավական վարքագիծը օրենքի, իրավունքի տեսանկյունից: Իրավունքի սոցիոլոգիային են վերաբերում պատասխանաւության, իրավունքի արդյունավետության հիմնահարցի, իրավահարաբերությունների պայմանների ու պատճառների, իրավագիտակցության կառուցվածքի ու մակարդակի հարցերը:

Իրավական գիտելիքների առանձնահատուկ տեսակ են կազմում պատմահրավական գիտելիքները: Իրավունքի պատմությունն ուսումնասիրում է ժողովուրդների իրավական մշակույթի պատմությունը, իրավական կենցաղը, վերաբերում է իրավունքի ծագման և զարգացման գործընթացը, բացահայտում է իրավական համարականությունը:

Կացությունների բովանդակության պատմականությունը, ի ցույց է հանում այդ հասկացություններում պատմական կոնկրետության դրոշմը, վերլուծում և բնութագրում է կոնկրետ պատմական իրավական հուշարձաններն ու փաստերը, որոնք սկզբունքային նշանակություն ունեն ժամանակակից կյանքի համար:

Իրավաբանական ուսումնական պարապմունքների համար որպես հիմաստային միավորներ կարող են հանդիսանալ նաև իրավաբանական հասկացությունները, կատեգորիաները, տերմինները, իրավական պատկերացումները:

Իրավական գիտելիքների աստիճանականությունը գործընթացի համար, քանի որ իրավաբանական գիտելիքների բոլոր տեսակները որոշակի են են խաղում իրավագիտակցության ձևավորման մեջ, որը պայմանականորեն կարող է ներկայացվել երեք բաղադրիչներով՝ ճանաչողական, արժեքաբանական և կարգավորիչ: Այսպես՝ փաստերը, պատկերացումները, հասկացությունները կազմում են իրավագիտակցության ճանաչողական, գնահատողական գիտելիքներ՝ արժեքաբանական, իսկ իրավաբանական գործունեության ձևերի մասին գիտելիքները, իրավական դրույթները՝ կարգավորիչ բաղադրիչը: Եթե համադրենք այդ բաղադրասարությը դպրոցականների տարիքային հնարավորությունների հետ, ապա հիմնական դպրոցի համար իրավագիտական դասընթացների ծրագրերում պետք է գերակա դեռ ունենան ճանաչողական և արժեքաբանական, իսկ ավագ դպրոցի բարձր դասարանների համար՝ ճանաչողական և կարգավորիչ բաղադրասարությը:

Իրավական կրթուրյան գլխավոր նպատակները են ժողովրդավարական հասարակությունում ապրող քաղաքացու դաստիարակությունը: Այդիի քաղաքացին պետք է տիրապետի որոշակի գիտելիքների (իրավական, քաղաքագիտական, տնտեսական և այլն), **ունակությունների** (քննադատաբար մտածելու, վերլուծելու, համագործակցելու), **արժեքների** (հարգել մարդու իրավունքները, հանդիլրժողականություն, փոխազողականություն, արժանապատվություն, քաղաքացիական ինքնահատակցություն և այլն), ինչպես նաև ցանկություն ունենան մասնակցել հասարակական-քաղաքական կյանքին [4, էջ 2]:

Իրավական կրթուրյան կարևոր նպատակները են դպրոցականների հանրայնացումը: Նրանց կողմից ձեռք բերված քաղաքացիական գիտելիք-

ներն ու ունակությունները պետք է հաճարժեք լինեն վարքագծի բնույթին և ոճին, շրջապատողութերի հետ նրանց փոխհարաբերություններին: Դեռահամերը պետք է կարողանան տալ կյանքի, հասարակության, պատմության, մշակույթի և այլ բոլոր բաղադրատարերի բարոյական գնահատականները: Իրավական կրթությունն ուղղված է մարդու ներքին ազատության դաստիարակմանը:

Իրավական կրթության հիմքում ընկած է երկրի զարգացման ժամանակակից փուլում հասարակական նշանակալից խնդիրների լուծման մեջ անձի լիակատար նաևնակցության գաղափարը: Այդ կրթությունը համադրում է սոցիալական պրակտիկայի հմտությունների ծևափորումը սոցիալական գիտությունների հիմունքների խոր յուրացման հետ: Հենց այդ համատեսում է հնարավոր անձի զարգացումն ու ինքնորոշումը, նրա հոգովոր աճը: Դրա համար էլ իրավական կրթության հիմնական խնդիրներից մեկն այն է, որպեսզի օգնեն երեխային որպես անձ կայանալու, խուսափելու կյանքի շավից դուրս ընկնելու, լինելու հասարակության, տնտեսական, սոցիալական, քաղակական և հոգևոր կյանքի լիարժեք մասնակից: Իրավական կրթության գործընթացում սովորողների մոտ պետք է ծևափորվի որոշակի քաղաքացիական իդեալ, որ ծառայելու է որպես հասարակության հանդեպ անձի վերաբերմունքի ցուցիչ:

Իրավական կրթության մեջ գերակա է հանդիսանում անձի բարոյական զարգացման կողմը, դրա իրականացումը (հաշվի առնելով երեխայի տարիքային առանձնահատկությունները) նշանակալի դեր է խաղում կրթական գործընթացի բոլոր փուլերում՝ հանրակրթության նախադրուցականից մինչև միջնակարգ կրթություն: Երեխան պետք է սովորի ինքն իրեն նույնականացնելու որպես հասարակության զարգացման լիրակ մասնակից:

Իրավական կրթության առավել կարևոր խնդիրներից մեկն է սովորողների մոտ դրական իրավագիտակցության ծևափորումը: Հաշվի առնելով, որ հասարակագիտություն առարկայի դասավանդումը պետք է կողմնորոշված լինի ամենից առաջ դեպի դրական կողմերը, անհրաժեշտ է սովորողների մոտ ծևափորել իրավունքի՝ որպես սոցիալական արժարության, անհատական և հասարակական իրավունքների և ազատությունների պատմանության միջոցի իրականացման կարևոր պայմանի ու մեխանիզմի:

հանդեպ վերաբերմունք: Իրավական կրթությունը կոչված է ծևափորելու սովորողների կողմից «արդարություն», «հավասարություն», «ազատություն», «արժանապատվություն», «մարդու իրավունքներ» կատեգորիաների ըմբռում և մշակի դրանք առօրյա կյանքում իրականացնելու հմտություններ:

Այդպիսի ըմբռումը պետք է լինի գիտակցված և հիմնվի ինչպես փորձի, այնպես էլ զգացմունքների վրա: Դրա համար էլ պակաս կարևոր խնդիր չի հանդիսանում դպրոցականների մոտ քաղաքացիական-իրավական իրավիճակի բանական և հուզական ընկալումը: Այդպիսի կրթությունը երեխային թույլ է տալիս գործել բարդագույն իրավիճակներում, որտեղ ընդհարվում են տարբեր դիրքորոշումներ ու կարծիքներ:

Դա ապահովում է սեփական և ուրիշի զգացմունքները վերլուծելու, դրանք համակարգելու ձևեր փնտրելու, ուրիշի կարծիքի հանդեպ հանդուրժող լինելու և սեփական դիրքորոշումը անդելու ու պաշտպանելու ընդունակության ծևափորումը: Այդպիսով՝ տեղի է ունենալ ինքնագիտակցության հետևողական ծևափորում՝ պատասխանատու դիրք գրավելու միջոցով, ծևափորում է քննադատական մտածողություն, զարգանում է քանավոր խոսքը: Վերջին բաղադրիչները, իրենց հերթին, կազմում են հայորդակցական հմտությունների հիմքը:

Անհրաժեշտ է, որ մանկավարժները ուսումնաբաստիարակչական գործընթացը կառաւուն բանական-հուզական մոտեցման հիման վրա՝ առաջարկեն վերլուծել մարդու իրավունքների և ազատությունների իրականացման հիմնահարցերը, հնարավորություն տան սովորողներին արտահայտելու իրենց զգացմունքներն ու հուզական ապրումները: Ընդ որում՝ քաղաքացիական-իրավական կրթության կողմնորոշումը դեպի պողիտիկ ուղղությունները չպետք է փոխի քննադատական մոտեցումը հասարակության մեջ տեղի ունեցող երևույթների հանդեպ, հարթեցնի սուր ամելյունները կամ հեռու մնա սոցիալ-տնտեսական իրողություններից:

Իրավական կրթության գործընթացում սովորողները պատկերացում են ստանում հետևյալ քաղաքացիական արժեքների վերաբերյալ (տես գծապատկեր 2):

Քաղաքացիական-իրավական արժեքների ծևափորման գործընթացում հատկապես կարևոր է երեխայի դաստիարակությունը սոցիալ-մշակության և պատմական նվաճումների հիմ-

քի վրա, որ ձեռք են բերվել սեփական ժողովրդի և այլ երկրների ու մայրցամաքների ժողովուրդների կողմից: Հայերնասիրական դաստիարակության ձևերն ու ներողները պետք է նպաստեն իրավական կրթության իրականացմանը: Ընդ որում, կարևոր է գտնել ազգային և մշշագագային հասարակական արժեքների միջև լավագույն հարաբերակցությունը, հաշվի առնել նրանց փոխգործակցության և փոխազդեցության կարևորությունը:

Իրավական կրթության որակը բարձրացնելու ուղղությամբ կարևորագույն պայման է համարվում դպրոցի կենսական դրվագի՝ որպես քաղաքացիական հասարակության մոդելի վերակառուցումը:

Դա հասկապես կարևոր է Հայաստանի պայմաններում, եթե ժողովրդավարական, հանդուրժող, քաղաքացիական հասարակության տարրերը դեռ նոր են ծարքակում, հետևաբար չեն կարող ներկայացվել ոչ միայն երեխայի, այլև ընտանիքի և ուսուցչի կենսական փորձում:

Այդպիսի դրվագի բնորոշ գծեր կարող են լինել՝

- դպրոցի ձգում՝ ստեղծել իրավիճակներ, որպեսզի երեխան ընտրի իր կրթության բովանդակությունը, յուրացման ձևերը, թեմաները, տեմպերը, գործունեության տարրերակները,

- դպրոցի դեկավարության միտումներ՝ պատվիրակել կառավարման վերին մակարդակի լիազորություններ՝ հասարակական մակարդակին (մանկավարժական միավորումներ, ինք-

նակառավարման մարմններ),

- միտումները՝ ստեղծել հասարակական մարմիններ՝ կառավարելու դպրոցական կյանքի տարրեր ոլորտները,

- դպրոցական միավորումների բոլոր անդամների ներգրավում ընդհանուր կյանքի նորմեր և կանոններ ստեղծելու գործին,

- միտումները՝ դպրոցում ստեղծել մարդու իրավունքների, երեխայի իրավունքի պաշտպանության հաստատություններ (երեխայի պաշտպանության գործում լիազոր անձինք, հակասությունները լուծելու խորհրդատումներ և այլն):

Ճեն դպրոցի այսպիսի դրվագը է թույլ տալիս մասնակիցներին՝ ձեռք բերել փորձ և քաղաքացիական վարքագիր ձևեր, իսկ հասարակագիտական բնույթի առարկաները (հատկապես հասարակագիտությունը) պետք է օգնեն այդ փորձի ինաստավորմանը, հասցնեն այն մինչև մշակութային օրինակների ու հասկացությունների:

Իրավական գիտելիքների դասավանդումը դպրոցում իիմնվում է մի շարք սկզբունքների հավաքականության վրա.

- **իրավական ուսուցման և դաստիարակության միասնության սկզբունք.** իրավական ուսուցմը կազմակերպվում է առավելապես դաստիարակության խնդիրների լուծման նպատակով,

- **գիտականության սկզբունք.** Ենթադրում է ուսումնական նյութի համապատասխանություն իրավաբանական գիտության նորագույն նվաճումներին,

- **Մատչելիության սկզբունք.** նշանակում է

| | |
|---|--|
| Անձի ինքնորոշում | Դարգանք մարդու իրավունքների և ազատությունների հանդեպ |
| Բանական փոխազնան պատրաստականություն | Քաղաքական բազմազանության արժեք |
| Հարգանք մարդու արժանապատվության հանդեպ | Հայրենասիրություն |
| Հարգանք ազգային պահանջման պատվության համամարդկային արժեքների հանդեպ | Հարգանք քաղաքացիական հասարակության հանդեպ |
| Հանդուրժողականություն | Հարգանք ժամանակակից ժողովրդավարության կանոնների ու նորմների հանդեպ |



դյուրինից դեպի դժվարին, հայտնից դեպի անհայտին անցումը,

• **Կյանքի հետ, սովորողների անձնական փորձի հետ կապի սկզբունքը.** Ենթադրում է սովորողների իրավական գիտելիքները ընդլայնում, խորացում և հարստացում, միաժամանակ՝ աշակերտների ծերբազասում իրավական սխալ պատկերացումներից, կարծրատիպերից ու դրույթներից:

• **Իրավաբանական ճշգրտության և իրավական գիտելիքների որոշակիության սկզբունքը.** անրույշադրելի է ուսումնական ընլեռի ոչ պոտֆեսիոնալ հարմարեցումը, այնպիսի պարզեցունքը, որը կիսեղաբյուրի հասկացության, նորմի իմաստը:

• **Ծիրառարկայական գիտելիքների ապահովման սկզբունքը.** ինաստն է՝ բացահայտել ու-

սումնական գործընթացի բաղադրատարրերի փոխադարձ կապերը, որոնք առանձնացվում են ըստ առարկայական հատկանիշի [1, էջ 81-82]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Морозова С. А.**, Методика преподавания права в школе. М., “Новый учебник”, 2004.
2. **Пөвцова Е. А.**, Основные концепции правового образования // Теоретические и методические основы преподавания права в школе. М., “Новый учебник”, 2005.
3. Стаматия обучения демократическому гражданиству /Проект “Образование для демократического государства. Страсбург, 2000.
4. Гражданское образование / Под. ред. Н. Воскресенской, И. Фрумина. Совет Европы. М., АПК и ПРО, 2000.

MAIN ISSUES OF LEGAL EDUCATION AND MODERN INTENTIONS IN THE REPUBLIC OF ARMENIA

VACHIK BRUTYAN

Rector of Armenian-Russian International University “Mkhitar Gosh”
Candidate of Pedagogical Sciences, docent

Summary

In the article the author discusses redefining of aims of education and results taking place in the conditions of modern changes, especially in the sphere of legal education.

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԻՆՏԵԳՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ*

Վաչիկ ԲՐՈՒՏՅԱՆ

*Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
«Մշտիքար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի ռեկտոր*

Րումանիտար և մասնագիտական պատրաստվածության հնտեգրացման հիմնահարցի վերաբերյալ գրել են մանկավարժները, հոգեբանները, փիլիսոփաները՝ ուսումնակիրենով այն տարրեր տեսանկյուններից և շեշտը դնելով տվյալ հիմնահարցի տարրեր կողմների դիտարկման վրա: Հիմնահարցը լուծելու փորձերը բոլով են տվել ճշգրտել և կոնկրետացնել հասկացությունների հությունը և բացահայտել տվյալ գործընթացի առանձնահատկությունները: Ինտեգրացման գործընթացին տարբնույթը մոտեցունները հաճգեցրել են հակասությունների և տարածայնությունների, ինչի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել ստեղծելու հնտեգրացման գործընթացի հստակ համակարգ, որը փորձել է իրականացնել Ա. Է. Քաղդասարովը՝ առաջին անգամ ներկայացնելով իր կողմից ստեղծված մանկավարժական ինտեգրացման համակարգը: Խոսելով հնտեգրացման մասին՝ նա այն բնորոշել է որպես միջազարկային արտերների հասկացությունների ծևակիրման համակարգի գարգառումը: Տվյալ մակարդակում հնտեգրացման գործընթացը պետք է հանգեցնի ստեղծագործական մտածողության զարգացման՝ մի կողմից, բարոյականության զարգացման՝ մյուս կողմից:

Ներդր:

Առաջին մակարդակը մեկ առարկայի բովանդակությունն այլ առարկաների նյութերով հարստացնելու է, միասնական առանցքի սահմանումը (ամենից հաճախ դա պարապմունքների ընդհանուրն թենան է): Բովանդակության միասնականացման համար, այսինքն՝ թեմատիկ դասերի մշակումը:

Երկրորդ մակարդակը ապահովում է ավելի խոր առարկայական կապերի զարգացում՝ բոլոր առարկաների հավասարության հաշվին՝ որպես գլխավոր առանցք ունենալով հումանիտար շրջափուլը, համանարդկային արժերների հասկացությունների ծևակիրման համակարգի գարգառումը: Տվյալ մակարդակում հնտեգրացման գործընթացը պետք է հանգեցնի ստեղծագործական մտածողության զարգացման՝ մի կողմից, բարոյականության զարգացման՝ մյուս կողմից:

Երկրորդ մակարդակը ենթադրում է շրջապատող աշխարհի ողջ բազմազանության անխոսափելի փոխկապակցվածության փաստի գիտակցում, բոլոր առարկաների փոխներթափանցման և փոխադրեցության վրա հիմնական ամբողջությունը ու ներունակությունը, ծրագրերի մշակման գործում համալիրություն, որի գլխավոր առանցքը քաղաքակրթության զարգացման պատճենությունն է:

Վ. Ա. Բերկովկովան «Մանկավարժական ինտեգրացում. եռթյունը, կազմը, իրականացման մեխանիզմները» աշխատության մեջ հնտեգրումը դիտարկել է որպես մանկավարժական երևոյթ՝ մասնագիտական կրթության և պոլիտեխնիկական գիտելիքների ոլորտում: Ինտեգրացումը կրթության մեջ «ընդհանուր և մասնագիտական, ճարտարագիտական և մանկավար-

* Ներկայացվել է 16.12.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

ժական կրթության փոխկապակցվածության բարձրագույն ձևն է, որին հատուկ են բաղադրատարրերի անբաժանելիությունը, նոր օրյեկտիվությունը՝ մոնորթեկտ, նոր կառուցվածք, նոր գործառություններ, որ մտնում են բաղադրատարրերի կապի մեջ» [էջ 12]: Նա ծզգիտ բնութագործ է ինտեգրացման հիմնահարցի վիճակը անցյալ դարի 80-90-ական թվականներին՝ ընդգծելով ինտեգրատիվության գործընթացի կարևորությունը բովանդակային, ոչ թե գործընթացային պլանում. «Անբողոքության մեջ՝ տեսական և գործնական մանկավարժության վիճակը խոսում է նրանում աճող ինտեգրատիվ միտումների, ինտեգրացման գերազանցության մասին կրթության բովանդակային, ոչ թե գործընթացային մասում, ինտեգրացիոն գործընթացների դրսորման, մանկավարժական ինտեգրման տարրերկաների, տեսակների, մեխանիզմների բարդության ու բազմազանության մասին» [2, էջ 12]: Դեղինակը ինտեգրացումը դիտարկում է որպես համակարգերի տեսության բաղադրիչ, որում «ինտեգրացումը գործում է որպես տրամաբանական գիտելիք, որ չունի որևէ կոնկրետ բովանդակություն»: Եվ միայն մանկավարժությունը կարող է համարել ինտեգրացումը որոշակի բովանդակությամբ [2]:

Այսպիսով, մանկավարժական ինտեգրացման՝ որպես տեսական և մեթոդաբանական հիմնահարցի զարգացման և կյայացման մեջ նկատվում են երկու հիմնական միտումներ, որոնց վրա հենքում են գիտնականները նաև ներկայումս: Առաջինը դիտարկում է ինտեգրացումը որպես հստակ համակարգ, որտեղ բոլոր կապերը միավորվում են դասերի մեջ և հստակ տեղ են գրավում այդ համակարգում: Երկրորդը դիտարկում է մանկավարժական ինտեգրացումը գործնական դիրքերից: Տեսական դրույթներն ունեն տարերային, ոչ համանարդկային և ինքնարություն:

Սակայն մանկավարժական գիտության և գործնականի կուտակված փորձի հետազոտությունը ցույց է տալիս, որ բավարար չափով չեն մշակված ինտեգրացման հիմնահարցի ոլորտի գիտելիքները: Ինտեգրացման հիմնահարցի գիտական մշակվածության էական թերություն է հանդիսանում այն փաստը, որ ուսումնասիրված աշխատանքների մեջ չկա ոչ մի ընդհանրացնող աշխատություն, որն ամբողջապես կընդորվեր մանկավարժական ինտեգրացման ողջ հավաքականությունը բոլոր՝ մանկավարժական, հոգեթանական և փիլիսոփայական տեսանկյուններից:

Բացի այդ, չնայած տվյալ գործընթացի մեջ թափին ու մասսայականությանը, ուսուցման մեջ գոյություն ունեն շատ կարծիքներ, տեսակետներ տվյալ երևույթի վերաբերյալ: Դեռևսարար, այդ գործընթացի իրականացման ուղղության միասնական ընթառում չկա: Ներկայում կա հստակ մշակված ծրագրերի, դասագրքերի և մեթոդական ուղղուցույցների բացակայության հիմնահամեյիք, որ վերաբերում է ինտեգրացման ներդրմանը մասնագիտական կրթության մեջ: Ակնհայտ է դասում այն փաստը, որ անհրաժեշտ են կատարելագործում, ծզգուում, մանկավարժական պայմանների որոնում, սկզբունքների ու մոտեցումների փնտրութուք, մեթոդիկաների մշակում, որպեսզի ինտեգրացման գործընթացը ներդրվի որոշակի մասնագիտական գործունեության մեջ: Դրա համար է նպաստակահարմար է համարվում ներկայացնել ինտեգրացման գործընթացի իրականացման համընդիմանուր մողել, որը բացառում է նրա ոչ միանշանակ ընկալումը:

Ինտեգրացման գործընթացի իրականացման տվյալ նողելը կազմելիս պետք է հաշվի առնել հետևյալը՝

1. Ինտեգրացումը՝ որպես մանկավարժական երևույթ, ունի կայուն ավանդույթներ, իրենից ներկայացնում է միջառարկայական կապերի՝ ուսուցման որակապես նոր աստիճանի մարմարվորման բարձր ծե, որ նպաստում է գիտելիքների նոր, ամբողջական խմբի ստեղծմանը:

2. Որպես մանկավարժական հիմնահարց՝ ինտեգրացումն անցել է զարգացման երեք փուլ՝ սաղմնավորում, կայացում և զարգացում:

3. Ինտեգրացման ներմուծումը միաժամանակ չի փոփառինում դասական ուսումնական առարկաների ուսուցմանը, այլ միայն միավորում է ստացած գիտելիքները միասնական համակարգի մեջ: Բացի այդ, ինտեգրացիան ոչ թե գիտելիքների պարզագույն փոխանցումն է մի առարկայից մյուսին, այլ նոր դիդակտիկ համարժեքների ստեղծումը, որոնք արտացոլում են ժամանակակից գիտական գիտելիքների ինտեգրացման միտումը:

4. Կրթության մեջ ինտեգրացման եւթյունը հետևյալ մեջ է՝

• նախ՝ սովորողների մոտ ստեղծել ամբողջական պատկերացում շրջակա աշխարհի մասին (այստեղ ինտեգրացումը դիտարկվում է որպես ուսուցման նպաստակ),

• երկրորդ՝ գտնել ընդհանուր հարբություն՝ առարկայական գիտելիքների մերձեցման համար (այստեղ ինտեգրացումը դիտարկվում է որպես ուսուցման միջոց):

5. Որոշ հետազոտողներ ինտեգրացումը դիտարկում են որպես համակարգային կրթություն, որն իրենից ներկայացնում է՝

ա) ինտեգրատիվ միջովով, որ հանդիսանում է ինտեգրացման գործընթացային և վերջնական համադրում (ինչն է ինտեգրվում՝ ինտեգրվող հասկացությունների եռթյան բնորոշմամբ),

բ) ինտեգրատիվ գործընթաց (ինչպես է ինտեգրվում՝ ինտեգրացման գործընթացի բոլոր բաղադրիչների մանրանասն նկարագրություն՝ այն իրականացնելիս),

գ) ինտեգրացման արդյունք, որ արտացոլում է ինտեգրացման գործընթացի ընթացքում որոշակի ինտեգրացիոն արդյունքի ամրագրման պահը (որ դառնում է արդյունք) [1]:

6. Հետևաբար, ժամանակակից փուլում մանկավարժական ինտեգրացումն անհրաժեշտ է հետազոտել նրա գործունեության երեք հիմնական նակարդականերում՝ մեթոդաբանական, տեսական և գործնական, որոնք ազդում են ինտեգրացման գործընթացի արդյունքների վրա:

7. Նախակահարմար է նաև որոշակիացնել բաղադրիչ տարրերը գիտելիքների ինտեգրացման մոդելում՝ նպատակային, բովանդակային, կազմակերպական-գործընթացային և վերահսկչ-գնահատողական:

8. Տվյալ գործընթացն իրականացնելիս հարկ է հենվել համընդհանրության, բազմակողմանի հարաբերակցության, ներդաշնակության, զարգացման դիդակտիկ սկզբունքների և անհատական սկզբունքի վրա:

9. Ինտեգրատիվ գործընթացի մակարդակում նպատակահարմար է հասուն ուշադրություն դարձնել ինտեգրացման գործընթացի իրականացման կազմակերպական-մանկավարժական պայմանների հստակ ցանկի որոնման և որոշակիացման վրա:

Ինտեգրացման գործընթացի համընդհանուր ընդունված ցանկի բացակայության հետ կապված՝ հարկ է հենվել որոշակի գործընթացների վրա, որոնց թվին են դասվում մեթոդաբանական, զարգացնող, համակարգակազմից և տեխնոլոգիական գործընթացները:

10. Ժամանակակից կրթության մեջ ինտեգրացումը զարգանում է նի քանի ուղղություններով.

- ինտեգրացում ըստ բովանդակության, որը ենթադրում է առանձին առարկաների բովանդակության միավորում՝ ինտեգրատիվ դասընթացեն ստեղծելով նպատակով,

- ինտեգրացում ըստ մեթոդի, որը հենվում է առարկաների ուսումնասիրման գործընթացի

վրա՝ բացառապես ստեղծագործական-զարգացնող հարացույցով,

- ինտեգրացում ըստ տեխնոլոգիայի, որը ենթադրում է կրթական գործընթացում համակարգչային տեխնոլոգիաների օգտագործում,

- հերենենսիլիկա, որի խնդիրն է՝ գտնել և մշակել կրթական գործընթացի կառուցման ընդհանուր հաղորդակցական եղանակների որոնումն ու մշակումը:

11. Ինտեգրացիոն գործընթացն իրեն դրսկություն է տարրեր մակարդակներում՝

- ներառարկայական

- միջառարկայական

- միջբնույթային:

12. Կարելի է առանձնացնել ինտեգրատիվ գործընթացի եական հատկանիշները՝

ա) ինտեգրացումը կառուցվում է նախկինում տարրաժամկած տարրերի փոխգործակցության վրա,

բ) ինտեգրացումը կապված է փոխգործակցող տարրերի քանակական և որակական փոփոխությունների հետ,

գ) ինտեգրացումն ունի իր տրամաբանական-բովանդակային հիմքը,

դ) ինտեգրացման գործընթացն ունի իր սեփական կառուցվածքը,

ե) մանկավարժական ինտեգրացումն ունի իր առարկայական ուղղվածությունը:

13. Ինտեգրացման գործընթացը հսկայական ազդեցություն է ունենում ուսումնական նյութի բովանդակության ընտրության վրա. Ինտեգրվում են կամ ավանդական, դասական առարկաներից ունեցած գիտելիքները, կամ տեղի է ունենում նոր բովանդակային նյութի ներմուծման գործընթաց: Տվյալ մոտեցումը բույլ է տալիս հասնել հետևյալ արդյունքներին՝

ա) բացարձակապես նոր դասընթացների առաջացում,

բ) նոր մասնագիտածված դասընթացների առաջացում, որոնք նորացնում են մեկ կամ մի քանի առարկաների մեջ եղած բովանդակությունը,

գ) շրջափուլերի առաջացում, որոնք միավորում են մեկ կամ մի շարք առարկաների նյութը՝ պահպանելով անկախ գոյությունը,

դ) մեկանգամյա՝ տարրեր մակարդակի և բնույթի ինտեգրատիվ դասերի անցկացում:

14. Ինտեգրացումն առաջացել է իր հակադրության՝ գիտելիքների և նրանց ճյուղերի տարրերակման, գիտելիքների ծավալի աճի և դրանց առաջարկող պահանջների ֆոնի վրա՝ յուրաքանչյուր բնապավառում, որոնք հանգեցնում են

մասնագիտացման խորացման գիտելիքներում և գիտելիքների ներսում, նեղ մասնագետների մասնագիտական հետաքրքրությունների շրջանակի անխուսափելի նեղացման, մասնագետներ, որոնք դադարում են հաճախ հասկանալ միմյանց: Այն առաջացել է ավելի ու ավելի նոր գիտելիքների ստեղծման ֆոնի վրա:

15. Ինտեգրացումը նշանակում է փոխգործակցության որակապես նոր ձևերի կարգավորում և զարգացում՝ իր բաղադրիչ տարրերի միջև:

16. Որպես ուսումնական գործընթաց՝ ինտեգրացումն ունի մասնագիտական ուղղվածություն, որը պայմանավորում է նրա առանձնահատկությունները, կառուցվածքը, բովանդակությունը:

17. Ինտեգրացման գործընթացի արդյունք է հանդիսանում օրենսդիր գիտելիքներից անցումը դեպի սովորողների գիտակցության ներքին ոլորտ:

18. Մասնագիտական և հումանիտար գիտելիքների ինտեգրացումը ապագա մասնագետի անձի ձևավորման զարգացնող գործոն է հանդիսանում:

Այսպիսով, ժամանակակից կրթության մեջ հումանիտար և մասնագիտական գիտելիքների ինտեգրացման գործընթաց ասելով հասկանում են հեռանկարային և առաջադեմ ուղղություններից մեկը, որը պայմանավորում է կրթական

մասնագիտական կրթության կատարելագործման և թերությունների հաղթահարման ճանապարհը, ակտիվացնում է որոնումները՝ մանկավարժական շատ հիմնահարցեր լուծելու ուղղությամբ, որոնումներ, որոնք նպաստում են կրթության որակի բարելավմանը, ոչ միայն բարձր մակարդակի մասնագիտական բանհիմացության, այլև սովորողների նոտ աշխարհի ամրողական պատկերի ձևավորմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Гожиков В. Я.**, Организационно-педагогические условия совершенствования гуманитарного подготовки будущих офицеров в высшей военной школе России: Монография. /В. Я. Гожиков. М., ВУ, 2009, 444 с.
- Корнищенко Д. И.**, Интегральная диалогика: интенсивная технология гуманитарного образования (учебно-методический курс). Авторская редакция /Д. И. Корнищенко. М., 2005, 247 с.
- Коровин В. М.**, Система профессионального становления офицеров в военных вузах: Монография /В. М. Коровин. Воронеж: ВГУ, 2002, 364 с.
- Тюнников Ю. С.**, Методика выявления и описания интегративных процессов в учебно-воспитательной работе СПТУ / Ю.С. Тюнников. М., Академия пед. наук СССР, 1988, 246 с.

ORGANIZATION OF INTEGRATION PROCESS OF HUMANITIES AND PROFESSIONAL TRAINING OF STUDENTS IN THE SYSTEM OF LEGAL EDUCATION

VACHIK BRUTYAN

Rector of Armenian-Russian International University "Mkhitar Gosh"
Candidate of Pedagogical Sciences, docent

Summary

In the article it is discussed that today when saying integration process of humanities and professional knowledge in the modern education, it is understood one of perspective and leading directions, which is conditioned with the way of improvement of professional education and overcoming the drawbacks, activate the search for the direction of settling a lot of pedagogical tasks, not only the formation higher level of professional competence, but also the formation whole world picture among the learners.

ՍՈՑԻԱԼԻԿԱՆ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄ ԵՎ

ՌԵՌԱԶԱՍՆԵՐԻ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՈՒՄ ՈՐՊԵՍ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԵԿ ՀԻՄՆԱՅԱՐՁ*

Մինաս ՍԱՅԱՂՅԱՆ

Սամկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերով վարչության պետ



Fարձը տեխնո-
լոգիաների սրբնաց զար-
գացունքը և կյանքի
մշտապես արագա-
ցող ռիթմը ազդում են
ոչ միայն տնտեսու-
թյան, այլ նաև սոցի-
ալ-մշակութային մի-
ջավայրի վրա՝ փո-
փոխելով ժամանա-
կակից մարդու աշխարհընկալումը, այսինքն՝
նրան հասուլ մտքերի, մտքի ձևերի, արժեքների,
նորմերի և իդեալների, կարծրատիպերի ու
դրույթների համակարգը։ Տեղեկատվական հա-
սարակության կայացունքը և համաշխարհայնա-
ցունքը ակնառու առավելությունների հետ մեկ-
տեղ՝ կյանքի որակի բարելավում, աշխատան-
քային գործունեության թերևացում, ժամանցի
կազմակերպման բազմազանությունը և այլն, ու-
նեն նաև անկասկած բացասական կողմերը.
Նպաստում են հասարակության անհատակա-
նացմանը և միայնակության աճին, ստեղծում են
մարդկային ֆիզիկական գոյության նկատմամբ
սպառնալիք և խարիսում են մարդկային եզակի-
ության ու անկրկնելիության մասին պատկերա-
ցունքը։ Երկում տեղի ունեցող փոփոխություն-
ներն ունեն երկակի բնույթ՝ միաժամանակ
խորհրդանշելով հասարակական նոր կարգը և
անցման ճգնաժամը։

Չնայած դրան՝ աճող սերունդը այդուհան-
դերձ ստիպված է լուծել «հավերժական» հար-
ցերը, որ կապված են կենսական դիրքորոշման

գիտակցված ընտրության հետ։ Աճող սերնդի շր-
ջանում տարածված երևույթներ են դարձել հա-
մանարդկային արժեքների արժեգործումը, ժխ-
տղականությունը, հարմարվողականությունը,
տարաբնույթը շեղուները։

Փոփոխվող երկրում ավելի ու ավելի մեծ
նշանակություն են ձեռք բերում մարդու ինքնա-
ներկայացման համար՝ նոր անհատական-անձ-
նային հատկանիշները։

Նորմատիվ-իրավական փաստաթղթերում
նշված գերակայություններին համապատա-
խամ՝ կրթությունը պետք է նպաստի կայացող
մարդու բարեհաջող հանրայնացմանը, նրա
այնպիսի անձնային հատկանիշների ձևավոր-
մանը, որոնք մեծացնում են կյանքի ուղղու իմաս-
տավորված ընտրության հավանականությունը
հասարակության մեջ և կյանքում սեփական տե-
ղի գիտակցումը։

Սա նշանակում է, որ մանկավարժությունը՝
որպես գիտություն և ուսումնական առարկա,
մշտապես միտված է մարդու անձի ձևավորման
հատուկ կազմակերպված գործընթացի նոր մի-
ջոցների որոնման։ Այդ միջոցներից մեկն է հան-
դիսանում այնպիսի գիտության զարգացումը,
որն ունի վար արտահայտված անհատական-
կողմնորոշչի ուղղվածություն։

Դպրոցում որպիսմ և զարգանում են ապագա
անձի բոլոր կարևորագույն հատկանիշները,
տեղի է ունենում նրա հանրայնացման կա-
րևորագույն փուլը, որի հիման վրա ավելի ուշ
սկսվում է անձի անհատականացումը։ Դրա հա-
մար էլ առանձնակի սրությամբ ժամանակակից
կրթական գործունեության մեջ առաջ է քաշվում

* Ներկայացվել է 12.12.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.։

դեռահասի կենսական դիրքորոշման ձևավորման հոգեբանական-մանկավարժական պայմանների՝ որպես համապատասխան վարքագծում և արարքներում դրսենող սոցիալական իրականության տարեքը կողմերի հանդեպ ունեցած վերաբերմունքի կայուն համակարգի որոշակիացնան և իրականացնան խնդիրը [4]:

Այսօր անձնական հատկանիշների աճը ռողջական իմաստավորման փորձեր են արվում, հատկանիշներ, որոնք նպաստում են կենսական դժվարությունների հարթակարմանն ու բարեհաջող հարմարմանը: Դա և անձնական հարմարվողական ներուժի մասին հասկացությունն է, որ առաջ է քաշվել Ա. Գ. Մավլակովի կողմից, և անձնական ներուժի մասին հասկացությունը, որ մշակվել է Ռ. Ա. Լենտիկի կողմից՝ Ա. Գ. Մանարդաշվիլու, Պ. Տիլլիհիմի, Ե. Ֆրոնմի, Վ. Ֆրակլի ու այլոց փիլիսոփայական գաղափարների համադրման հիման վրա:

«Կենսակայունություն» հասկացությունը արտացոլում է մարդու հոգեբանական կենսունակությունն ու ընդյանված արդյունվետությունը, ինչպես նաև հանդիսանում է մարդու հոգեկան աղողոցության ցուցիչ: Դայրենական գրականության մեջ թիզ են կենսակայունությանը նվիրված հրապարակումները: Սակայն արտերկորում բավականաչափ շատ հետազոտություններ են նվիրված այդ հիմնահարցին [2]:

Ինչն է գլխավոր դեռահասի կենսունակության ձևավորման գործում՝ դեռ պարզված չէ: Որոշ գիտնականներ կարծում են, որ ներդաշնակ ընտանիքում դաստիարակությունը, համալրված հասարակական դաստիարակությամբ, մնում է լավագույն ձևն անձի կայացման համար, հատկապես կրտսեր և միջին դեռահասության տարիքում:

Կրայգը բերում է հետազոտության օրինակներ՝ նվիրված այն երեխաների բարեհաջող հանրայացմանը, որոնց մանկությունն անցել է ծայրահետ ծանր պայմաններում (աղքատություն, ետնախորշերի կյանք, պատերազմ և այլն): Այդպիսի երեխաների դիտարկումը, որոնք կյանքում հաջողության են հասել, ցույց է տալիս, որ նրանք ունեն հինգ ընդհանուր հատկանիշ:

1. Նրանք սոցիալապես բանիմաց են և իրենց անկանոն գործում ինչպես իրենց տարեկանությունը շրջապատում, այնպես էլ ավագմերի միջավայրում: Վերջիններս նրանց հաճախ այսպես են բնութագրում՝ մարդանու են, կարողանում են իրենց հանդեպ դրական տրամադրել, ձգուում են սովորել մեծերից:

2. Նրանք հիբնավստահ են, դժվարությունները միայն գրգռում են նրանց, անկանխատեսվելի իրավիճակները նրանց չեն նշահոգում:

3. Նաճախ այդ երեխաներն անկախ են: Նրանք ապրում են իրենց խելքով ու թեև լսում են մեծերի խորհուրդները, բայց, այնուհանդերձ, չեն ընկնում նրանց ազդեցության տակ:

4. Նրանք սովորաբար հաստատում են մի քանի կայուն, իրենց պաշտպանվածության գգացում հաղորդող կապեր ուրիշ մարդկանց հետ: Դրանք կարող են լինել ինչպես տարեկանությունների, այնպես էլ ուսուցչի, հարազատների հետ հարաբերությունների:

5. Վերջապես, այդ երեխաները ծգոտում են ծերքերումների: Նրանք տեսնում են, որ շատ բանի կարող են հասել և կարող են փոխել այն պայմանները, որոնք շրջապատում են իրենց:

Այս մոտեցման մեջ նկատվում է երեխայի ակտիվության խթանում: Միանգամայն հավանական է, որ կենսակայուն երեխաները միաժամանակ տիրապետում են բնական տվյալների, որոնք բարենպաստ են ցանկացած պայմաններում հարմարվելու համար [3]:

Ցավիք, «կենսակայուն երեխաների» կայացման ուսումնասիրությամբ զբաղվող հեղինակները խառնում են բոլորովին տարբեր գործները հոգեբանական և «հանրայացման» պլանում դժվար մանկություն՝ նյութական, կենցաղային գրկանընթեր պատճառով և շեղումներ ընտանիքներում՝ մերձավոր մարդկանց անձնային առանձնահատկությունների պատճառով՝ ծնողների հարթեցողություն, մեծերի դաժանություն (ստորացումներ, ծեծե):

Տարբեր ընտանիքներում կենսական մակարդակի նվազման հետևանքները տարբեր են: Եթե միաննան դժվարություններ է կիսում համերաշխ, ամուր ընտանիքը, դեռահասները, որոնք զգում են այդպիսի դրության ողջ ծանրությունը, չեն առանձնանում ընտանեկան հիմնահարցեղից: Դեպքերի բացասական զարգացում, որպես կանոն, տեղի է ունենում: Ավելին, այդ դժվարությունները մի շարք դեպքերում կարող են դրական դեր խապաղական դաշտում ընտանիքում երեխայի լիարժեք ներգրավման հիմք, ընտանիքի հիմնահարցերը լուծելուն նպաստել: Այս ընտանիքներում, որտեղ խախտված է հաղորդակցությունը, իսկ նյութական բարեկեցիկ վիճակը գլխավոր դեր է խաղում, կենսական մակարդակի նվազում հանգեցնում է ընտանեկան բոլոր հարաբերություններում ծանր խախտումների, և դեռահասները հայտնվում են շատ ծանր դրու-

թյան մեջ: Նրանք թողնում են ուսումը՝ սկսելով փնտրել աշխատանք: Այդպիսի դեռահասների մի ստվար մաս ներքաշվում է անցանկալի խմբերի մեջ:

Անբրենպաստ ընտանիքների երեխաները հաճախ դառնում են ընտանիքների քայլայման, ընտանիքան դրույթան լիակատար անկնան զոհեր, այսինքն՝ դառնում են սոցիալական որերեք:

Այն, ինչ անվանում են «սոցիալական որբություն», ամենածանր հետևանքներից մեկն է այն ճգնաժամի, որում այսօր, ի թիվս ՍՊԴ այլ երկրների, հայտնվել է Հայաստանը: Այն, բնականաբար, ընդգրկում է ոչ միայն դեռահասներին կամ դեռահասության տարիքին մոտեցող երեխաներին: Որպես կանոն՝ ընտանիքը նրանց համար կրոած է ընդմիշտ: Եվ դա անջնջելի հետոք է թողնում նրանց ֆիզիկական, մտավոր, բարոյական և հոգական զարգացման վրա: Դա ամենածանր ողբերգություններից մեկն է:

Սակայն ոչ պակաս լուրջ է այն դեռահասների խնդիրը, ովքեր որք չեն իրականում, բայց, չփինանալով ընտանիքի սոցիալական դրույթան կործանարար փոփոխություններին և դրանց ուղեկցող՝ ներշնոտանեկան մթնոլորտի փոփոխություններին՝ կոպուլյանը, ծնողների կողմից անտարբեր վերաբերմունքին, անախործ վհաճներին, հարբեցողությանն ու, վերջապես, ընտանիքի քայլայմանը, դուրս են շարուվում կյանքի սովորական հունդից և հայտնվում փողոցում:

Ահա ինչպիսին է այն ֆոնը, որի հիման վրա ավելի հաճախ է տեղի ունենում ձևավորվող անձին սոցիալական կայացումը, որը ընդորինակման կամ օտարման օրինակներ է դրսւորում [1, էջ 206-207]: Մեր իրականության այնպիսի կեղծ պատկերներ, ինչպես հեռուստաէլրաններից քարոզվող սարսափ ֆիլմերը, սպանությունները, քննությունները, հարուստների հաջողությունները, հանատարած գործազրկության, աղքատության, քրմանոլության, պոռնոգրաֆիայի, ահաբեկչության հետ, կործանարար կերպով են ազդում երիտասարդության վրա՝ ձևավորելով նրանց մոտ հորի բարեր, թելադրելով վարքագծի ձևեր, վնասելով հոգեկան աշխարհը:

Դրա հետևանքով երեխաներն ունենում են անկայուն հոգեկան աշխարհ: Իսկ ժամանակակից դարձողական ուսուցման մթնոլորտը ձևավորվում է մտավոր, հոգական և ֆիզիկական ծանրաբեռնվածությունների ամբողջությունից, որոնք ներկայացնում են նոր, բարդացված պահանջներ ոչ միայն երեխայի մտավոր հնարավո-

րություններին, այլ նաև նրա անձին, ամենից առաջ նրա սոցիալ-հոգեկան նակարդակին:

Դարձը, թե կարո՞ղ է արդյոք կրթությունը գործել որպես աճող (և ոչ միայն աճող) սերմոնի սոցիալական հարմարման հնատիտուտ և ձևավորել դաստիարակվողների կենսակայունություն, մնում է բաց: Կրթության հնատիտուտին ավանդաբար ամրակցված է երիտասարդ մարդկանց վերահսկվող հանրայնացման գործառույթը՝ միացյալ սոցիալ-մշակութային նորմերին և արժեքներին նրանց հաղորդակցական հիման վրա: Եվ կայուն հասարակության մեջ, որ ունի հաստատված արժեքա-նորմատիվային համակարգ, կրթությունն այդ խնդիրը լուծում է առավել կամ պակաս հաջողությամբ: Ժամանակակից հայաստանյան հասարակությունը սոցիալական կազմակերպությունների մակարդակներում բավականին ձևախեղված հասարակություն է: Այն զրկված է միասնական, համընդհանուր և բավականաչափ ընթացելի արժեքների ու նորմերի համակարգիվ, որը կրթության հնատիտուտը կարող է փոխանցել նոր սերմոնին: Այս հիմնահարցի հետ մեկտեղ կան նաև այլ հիմնահարցեր, որոնք կասկածի տակ են դրում կրթության՝ որպես սոցիալական հարմարեցման հնատիտուտի հարցը: Դրանց մեջ կարելի է առանձնացնել երկուսը: Նախ՝ մեր կրթության համակարգը գտնվում է բարեփոխման գործընթացում, ընդ որում՝ վերափոխմանների նպատակն այսօր է հստակ որշակիացված չեն: Ավելի շուտ, գոյություն ունեն միայն մի քայլի մտադրություններ, նշված են կողմնորոշիչ ինչ-ինչ բաներ, որոնք, ի դեպ, բավականին տարաբնույթ են և երբեմն՝ հակասական: Սեփական զարգացման հեռանկանների անորոշությունը բույլ չի տալիս կրթության հնատիտուտին՝ ընդհանուր առանձին, և առանձին կրթական հաստատություններին՝ մասնավորապես, համարժեքորեն ներգրավել հասարակական հարաբերությունների կառույցում, տեղ գրավել՝ զարգացման ժամանակակից միտումներին համապատասխան: Երկրորդ՝ կրթության համակարգը, ինչպես և ցանկացած այլ սոցիալական կրթություն, նախևառաջ մարդիկ են, որոնք կազմավորում են այն: Ցավոր, թիզ չեն այն դեպքերը, երբ նանկավարժը, հենվելով միայն սեփական փորձի վրա, սկսում է կիրառել մերողներ, որոնք նրան թվում են ծիծտ և մերգործուն, բայց ամրողացած հակասում են հոգեբանությանը, ինչն իր հերթին բացասաբար է անդրադառնում դաստիարակվողների անձնային հատկությունների զարգաց-

ման վրա [5]:

Այսպիսով, այսօր ոչ բավարար ուշադրություն է դարձվում ուսումնական գործընթացի դաստիարակչական ներուժին: Դպրոցը պետք է ստեղծի պայմաններ աշակերտի անձի զարգացման և ինքնազարգացման համար: Իսկ դա ի գորու են անելու միջան այն մանկավարժները, որոնք ընդունակ են ոչ միջան գիտելիքներ փոխանցել սովորողներին, այլ նաև նրանց մեջ զարգացման պահանջարկ արթնացնել: Բայց ցավոք, այսօր նկատվում է, որ դա հասկանում են գործող մանկավարժներից շատ քեզը: Իսկ մանկավարժական գործունեությունն առանձնահատուկ պատասխանատու խնդիր է, քանի որ այն անմիջականորեն կապված է երեխաների՝ ապագա անձնավորությունների հետ: Եվ թե որքանով այդ անձնավորությունները կարող են այդպիսիք համարվել, կախված է մանկավարժների պրոֆեսիոնալիզմից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Անդրեևա Տ. Վ.** // Жизнестойкость детея. Семейная психология Учеб. пособие. СПб., “Речь”, 2004.
2. **Маклаков А. Г.** // Личностный адаптационный потенциал: его мобилизация и прогнозирование в экстремальных условиях. Психологический журнал. 2001, Т. 22, N1, с. 16-24.
3. **Н. Н. Бойко, Н. Хамцова** // Жизнестойкость как валеная черта современного подростка. Сборник “Воспитание и его роль в становлении специалиста”.
4. **Попова Т. В.** // Специфика психолого-педагогической поддержки жизненного самоопределения современного подростка. Вестник Тамбовского государственного университета. Серия Гуманитарные науки. Тамбов, 2007, N5, с. 89-91.
5. Социальное самоопределение молодежи и образование // Проблемы социализации молодежи: Реф. сб. М., 1993.

SOCIAL ARRANGEMENT AND FORMATION OF TEENAGERS' VIABILITY AS ONE OF THE MAIN ISSUES OF MODERN PEDAGOGY

MINAS SAYADYAN

Candidate of Pedagogical Sciences, docent

Head of Department of Administration, Education, Culture, Sports and Youth Affairs of
Lori Regional Administration, RA

Summary

In the article the notion is based, which is necessary to pay attention the upbringing potential of educational process. School must create necessary conditions for development and self-development of pupil's individual. But it can do such a pedagogue, who accepts not only transference of knowledge to learners, as well to awake the demands of development in them.

ՄԱՆԿԱՎԱՐԺԻՇԽ ՆՈՐ ԴԵՐԸ. ԳԱՂԱՓԱՐՆԵՐ, ՄՈՂԵԼՆԵՐ, ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ*

Մինաս ՍԱՅԱՂՅԱՆ

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերով վարչության պետ

Գաղափարներ

1. Մանկավարժի դերը փոխվում է՝ ելնելով դպրոցի շրջանավարտի անձի հանդեպ ժամանակակից հասարակության պահանջներից, նրա բանհմացությունից՝ այն է՝ առավելագույնս իրացնել իրեն որպես անհատ հասարակության մեջ և ներդնել սեփական անհատական ռեսուլսներն այն հանրույթի զարգացման համար, որի մեջ ապրում է [1]:

2. Քերևարար, կրթական գործընթացում աշկերտին պետք է հմարավորություն տրվի և պայմաններ ստեղծվեն ներքին ակտիվության դրսնորման համար, որպեսզի նա ինքնարացահայտվի և կայանա, կուտակի հիմնական ընդունակությունները (գործառութային գրագիտությունը) ժամանակակից հանրույթի մեջ հետագա դրական ներգրավման համար:

3. Անձի ներքին ակտիվության դրսնորումը և աշակերտի կողմից հիմնական ընդունակությունների կուտակումը կախված են նի շարք արտաքին գործոններից կամ պայմաններից, որոնք կազմակերպվում են կրթական գործընթացում:

4. Որպես տվյալ գործոնների, պայմանների «կազմակերպիչ»՝ կրթության գործում հանդես է գալիս մանկավարժը, ինչից ենթադրվում է, որ հենց նրան են այժմ ներկայացվում մի շարք «պարտադիր պահանջներ», առանց որոնց կատարման անհմաստ է խոսել նոր տիպի շրջանավարտի մասին:

5. Որպես գլխավոր պայման սովորողների ներքին ակտիվության և ընդունակությունների դրսնորման համար մանկավարժն ինքը պետք է լինի ներքնապես ակտիվ անձնավորություն, քանի որ «նմանն առաջանում է նմանի միջոցով»: Ի՞նչ է սա նշանակում: Անձի ներքին ակտիվությունը՝ որպես ինտեգրալ բնութագիր, են-

թաղորում է հետևյալ իրողությունների առկայություն՝

- սեփական անձնավական և մասնագիտական առաքելության գիտակցում և իմաստավորում,
- սեփական աշխարհայացք, որոշակի հայեցակարգային մտածողություն, որոնք թույլ են տալիս սահմանել սեփական գործունեության իդեալական արդյունքը, պահապետել դրա իրականացման ռազմավարական և մարտավարական քայլերը,

• ընդունակություն՝ լավագույն և արդյունավետ կերպով լրտեղու սեփական կենսական և մասնագիտական հիմնահարցերը անորոշության պայմաններում, ելք գտնելու զանազան բարդ իրավիճակներից, և ընդունի՝ առավելագույնս ինքնադրսնորվելու հանրույթում՝ ելնելով իրական կենսական իրավիճակից,

- արժեքների սեփական համակարգ և հասարակության մեջ դրանց իրականացում (մանկավարժի անհատական-մասնագիտական հասունություն): Եթե մանկավարժը կարողանում է ներքնապես ակտիվ լինել, նա ավելի շատ հնարավություններ է ունենում դա սովորեցնել իր աշակերտներին:

6. Արտաքին կրթական պայմանները, որոնք նոր տիպի մանկավարժը պետք է ստեղծի իր աշակերտների համար, որպեսզի դրսնորվեն նրանց ներքին ակտիվությունը և հիմնական ընդունակությունները, կարող են լինել հետևյալները՝

- ընդհանուր առմանք ուղեկցող դիրքորոշում (դեկավարության, առաջնորդի այլնուրանք), որը խթանում է աշակերտի ներքին ակտիվությունը՝ նպաստելով նրա կայացմանը, գիտելիքների կուտակմանը և գործառութային գրագիտությանը: Այն արտահայտվում է:

* Ներկայացվել է 12.12.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

• Երկխոսային կրթական դաշտի, մանկավարժի և աշակերտի հավասարության կազմակերպմամբ, որ հիմնված է ժողովրդավարական արժեքների և անձի հիմնարար իրավունքների վրա (մանկավարժի հաղորդակցական բանհմացություն),

Խորիրդային մանկավարժությունը և մեծ ուշադրություն դարձրեց մանկավարժական դիագնոստիկային, մանկավարժական գործընթացի արդյունավետության բարձրացման մերողներին, միջոցներին, սկզբունքներին: Խորիրդային վաղ շրջանի պրակտիկ մանկավարժմերը իրենց գործնական մանկավարժական աշխատանքի տեսական հիմնավորումներում կարևորեցին երեխայի անձնային որակների ուսումնասիրությունը, դիագնոստիկան նրանց դաստիարակության գործընթացում: Մասնավորապես, շեշտը դրվում էր աստցիալ, շեղվող վարքով երեխաների դաստիարակության, ուղղման գործընթացների արդյունավետության բարձրացման: Վերջինս, նրանց կարծիքով հնարավոր էր միայն դիագնոստիկ աշխատանքի տվյալների հիման վրա մանկավարժական ներգործության կազմակերպման դեպքում: Խորիրդային մանկավարժները ևս հասան մանկավարժական գործընթացի տեխնոլոգիզացման՝ փուլայնացման գաղափարին: Օրինակ, Պ. Բլնձնկու համոզմամբ երեխայի հետազոտությունը պետք է իրականացնել անկետավորում (անամնեզ), թեստավորում, դիագնոզ, մանկավարժական դեղատոմն սխեմայի տրամաբանությանը [3]:

Քննարկվող ժամանակաշրջանում խորիրդային մանկավարժությունը մանկավարժական դիագնոստիկայի զարգացումը պայմանավորում էր երկու առաջնային խնդիրների լուծումներով. մանկավարժական մերողի նպատակահարմարության գնահատում և սովորողի անձի գնահատում: Մանկավարժական մերողի նպա-

տակահարմարության գնահատումը ենթադրում է յուրաքանչյուր մանկավարժական խնդիրն, մանկավարժական գործունեության օբյեկտին, սուբյեկտին, իրավիճակին համապատասխան մեթոդների ընտրություն, դրանց մշակում տեղայնացման նպատակով, մերողի արդյունավետության գնահատում: Երկրորդ խնդիրը՝ սովորողի անձի գնահատումը, ենթադրում է սովորողի անհատականության ուսումնասիրում, նրա հոգեկան գործընթացների, հատկությունների բացահայտում և դրանց հիման վրա ուսումնարաստիարակչական գործընթացի կազմակերպում, իրականացում: Այս խնդիրն, ըստ եւրյան, առաջին խնդիրի մի բաղադրիչ է: Լ. Վիգոտսկին գտնում էր, որ այդ երկրորդ խնդիրի նպատակը կոնկրետ մարդկանց վրա կոնկրետ մեթոդի կամ մեթոդների ներգործության արդյունավետության բացահայտումն էր: Այսինքն, նրա համոզմամբ, անհրաժեշտ էր մշակել փորձարկված մեթոդների համակարգ, որոնք արդյունավետության որոշակի չափարարման կապահովության մերժումներին ներգործության արդյունավետության բացահայտումը: Նույն ժամանակաշրջանում արդեն զարգանում էր այն գաղափարը, որ անհրաժեշտ էր մանկավարժական գործընթացում երեխաներին ուսումնասիրել տարբեր կողմերով և հոգեֆիզիոլոգիական, և սոցիալական հմտությունների, և արժեքային կողմնորոշումները: Ըստ այդմ էլ, ձևափոխվում էին մանկաբանություն կոչվող գիտության առարկան, նպատակը, խնդիրները, մանկատան մասնագետների աշխատանքի մեթոդները: Մանկաբաններն արդեն փորձում էին հստակեցնել, թե ինչպիսի անհատ պետք է ձևափորի, դաստիարակի մանկավարժը, իսկ մանկավարժությունը ինչպիսի մեթոդներ, մեթոդիկաներ պետք է մշակի այդ անձին դաստիարակելու համար: Փաստորեն, հիմք էր դրվում չափորոշչի ստեղծման գաղափարին: Զարգանում էր նաև ակտիվ կենսագործող անհատի ձևավորման գաղափարը, ով կկարողանար ոչ միայն պասիվ կերպով իր վրա ընդունել հասարակական ազդեցությունները, այլև ակտիվիզիրեն ներգործեր այդ հասարակական հարաբերությունների, նորմերի վրա, փորձեր ձևափոխել դրանք, հարմարեցներ իր պահանջներին, փոփոխեր նաև միջավայրը, ինքն իրեն:

Սովորողների ուսումնառության և ուսուցիչների դասավանդման գործընթացների արդյունավետությունը չափելու համար մանկաբաններին առաջադրվեց ստեղծել ստանդարտացված

թեստեր: Նշված աշխատանքներում նրանց պետք է օգնեին ուսուցիչներն ու մեթոդիստները, քանի որ նրանք էին ուսուցման գործընթացի անմիջական կառավարողները, սուբյեկտները: Կանխատեսվում էր, որ թեստերի արդյունքները կլինիկ հենց ուսուցման գործընթացի արդյունավետության ցուցիչները: Մանկաբաններին նաև հանձնարարված էր մշակել համակարգ, որը ցույց կտար, թե ինչպիսի հարցերի պետք է պատասխանի մանկավարժական դիագնոստիկան: Օրինակ՝ ՞ո՞րն է դիագնոստիկայի առարկան, օրյեկտը, ինչո՞ւ է ընտրվել այդ օրյեկտը, ուսումնասիրության արդյունքները ինչպե՞ս պետք է օգտագործվեն գործնականում, մանկավարժական դիագնոստիկան ինչպե՞ս է տեղապորվում մանկավարժական գործնթացի տրամաբանության մեջ և այլն:

Բացի ուսումնասիրության, ուսուցման գործընթացների դիագնոստիկայի իրականացումը՝ մեծ կարևորություն էր ներկայացնում երեխայի անձի դաստիարակվածության մակարդակի դիագնոստիկան, որա համար անհրաժեշտ մեթոդների, մեթոդիկաների ստեղծում: Դաստիարակվածության մակարդակի ուսումնասիրությունը, իրավիճակի, խնդիրների բացահայտումը հնարավոր էր իրականացնել դաստիարակության գործընթացի բովանդակության, մեթոդական համակարգի, արդյունքների ուսումնասիրության, վերլուծության արդյունքում: Անհրաժեշտ է առանձնացնել նաև անձի դաստիարակվածության դիագնոստիկայի հիմնական խնդիրներ, որոնցից առաջնային են.

1. Ուսումնասիրել անձի ինտեգրատիվ որակների դաստիարակվածության և ձևավորվածության նակարդակը,

2. Ուսումնասիրել ընտանիքի, դպրոցական ու դասարանական կոլեկտիվների, սոցիալական խմբերի հնարավորությունները և առանձնահատկությունները, նրանց մանկավարժական բնութագիրը, երեխաների վրա նրանց ազդեցության բնոյրը,

3. Ռեֆերենտային խճերի արժեքային կողմնորոշումները և դրանց ազդեցությունը երեխայի անձի վրա,

4. Դպրոցում մանկավարժական գործնթացի բովանդակությունը, ուղղությունները:

Բացի այդ, դիագնոստիկայի օրյեկտիվ տվյալներ ստանալու համար անհրաժեշտություն առաջացավ այդ խնդիրների ուսումնասիրությունը դարձնել շարունակական, դիագնոստի-

կա իրականացնել պարբերաբար, գրանցել ուսումնասիրվող երևույթների դինամիկան: Այսինքն՝ զարգանում էր այն գաղափարը, որ հեռարավոր է չափել դաստիարակվածության մակարդակը: Մանկավարժական դիագնոստիկայի բովանդակությանը, տեխնոլոգիաներին (ճամանակորապես, դաստիարակվածության մակարդակին) վերաբերող հետաքրքիր գաղափարներ, վերլուծություններ կատարել է Ա. Ս. Մակարենկոն, թեև դիագնոստիկա, տեխնոլոգիա տերմինները նա չի օգտագործել: Նրա մանկավարժական գործնական և տեսական աշխատանքների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս վեր համեմ մի շարք դրույթներ, որոնք անմիջականորեն վերաբերում են մանկավարժական դիագնոստիկայի երթյան ու կիրառման առանձնահատկություններին:

1. մանկավարժական դիագնոստիկ աշխատանքը պետք է նպատակառուղյական լինի անձի ձևավորմանն ու զարգացմանը, նրա հասարակայնորեն ընդունելի վարժագծի, անձնային դրական որակների ձևավորմանը,

2. դիագնոստիկ մանկավարժական աշխատանքում չպետք է հակադրվեն անձի անհատական և հասարակության շահերը,

3. դիագնոստիկ աշխատանքի արդյունքները պետք է ներդրվեն մանկավարժական գործնական աշխատանքում,

4. մանկավարժական դիագնոստիկ աշխատանքում պետք է նպատակային օգտվել հոգեբանական, ֆիզիոլոգիական դիագնոստիկ մեթոդներից, առանց որոնց հնարավոր չի լինի օրյեկտիվ և ամբողջական տվյալներ ստանալ հետազոտվող օրյեկտի մասին,

5. մանկավարժական դիագնոստիկան պետք է դիտարկել որպես անբողջական մանկավարժական գործունեության մեկ, ընդ որում, պարտադիր բաղադրիչ, առանց որի գործեք անհնար է դրական արդյունքներ գրանցել մանկավարժական գործնթացում,

6. մանկավարժական դիագնոստիկան պետք է իրականացնել հանալի՝ ապահովելով նրա անբողջականությունն ու համակարգայնությունը»:

Մանկավարժական դիագնոստիկայի զարգացման վերաբերյալ Ա. Տ. Շացկու մոտեցումները և լուրջ ավանդ են մանկավարժական գիտության ոլորտում: Նա ևս կիսում էր Ա. Ս. Մակարենկոյի այն կարծիքը, որ երեխայի անձի համակարգված դիագնոստիկայի տվյալների հի-

ման վրա է հնարավոր ամբողջական դաստիարակության համակարգի զարգացումը:

1932 թվականի օգոստոսի 23-ին ընդունվեց որոշում «Ուսումնական ծրագրերի և սկզբնական և միջին դպրոցի մասին»: Վերջինիս կարևոր դրույթներից մեկն այն էր, որ հստակ պահանջ էր դրվում ուսումնասիրել երեխաների անհատական առանձնահատկությունները, հաշվառել մանկավարժական գործընթացում դրանց արդյունքները: Սակայն միաժամանակ հրահանգվում էր, որպեսզի մասնագետ-մանկաբանները թերևացնեին թրագությունը, պարզեցնեին, մասնավորապես յուրաքանչյուր առանձին երեխային վերաբերող փաստաթղթերը: Նշված փաստաթուղթը նաև առավատական ծառայությունների համակարգմանը, զարգացմանը հանրակրթության ոլորտում: Արդյունքում հստակեցվեց նաև մանկավարժական ծառայությունների համակարգը, կառուցվածքը.

1. Կենտրոնական ղեկավարող օրգան, որը պարունակում էր միջօդերատեսչական մանկաբանական հանձնաժողովը և մանկաբան մասնագետների խումբ,

2. մանկաբանական օգնության գիտամեթոդական կենտրոններ, որոնք ընդգրկում են մանկաբանական սենյակներ և լաբորատորիաներ,

3. կոնկրետ մանկաբանական սենյակներ, հենակետեր դպրոցներում, որտեղ էլ իրականացվում էին ղեկավար օրգանի որոշումները և գիտամեթոդական կենտրոնների մեթոդական երաշխավորությունները:

Առաջին և երկրորդ օդակներն ապահովում էին դպրոցների մանկաբանական սենյակներին գրականությամբ, ուսումնական նյութերով, մեթոդիկաներով, տրամադրում էին մասնագիտական խորհրդատվություն, կազմակերպում էին մասնագիտական աջակցություն: Վերլուծելով դպրոցներում մանկաբանական սենյակների աշխատանքը՝ զայխ ենք եզրահանգման, որ նրանք իրականացնում էին հետևյալ գործառույթները:

1. դիագնոստիկ գործառույթ, որը ենթադրում էր սովորողների ֆիզիկական և հոգեկան առանձնահատկությունների ուսումնասիրում, զարգացման խանգարումների, դրանց պատճառների վերհանում,

2. կանխատեսող գործառույթ, որը ենթադրում էր դիագնոստիկայի տվյալների հիման վրա երեխաների հոգեկան, ֆիզիկական զարգաց-

ման հնարավոր հետևանքների կանխատեսում,

3. կանխարգելող գործառույթ, որը ենթադրում էր սովորողների հետ դաստիարակչական գրույցների իրականացում, հնարավոր բացասական երևույթների դրսերումների կանխսում,

4. ուսուցանող գործառույթ, որը ենթադրում էր երեխաների ծնողներին, ուսուցիչներին հաղորդել մանկավարժական գիտելիքներ, ձևավորել մանկավարժական կարողություններ երեխաների հետ աշխատանքի համար,

5. շտկող, վերականգնող գործառույթ, որը ենթադրում էր բացահայտված որոշակի թերությունների, շեղումների հաղթահարում:

Գործող մանկաբանական սենյակների գործունեության կարևոր բաղադրիչ էր դպրոցական ուսուցմանը նախադպրոցականների պատրաստվածության մակարդակի ուսումնասիրությունը: Իրենց գործառույթների և հետազոտության ոլորտների լայն ընդգրկման պատճառով մանկաբանական սենյակներն ու խմբերը ունենում էին կադրերի դեֆիցիտ, ինչն անմիջականորեն ազդում էր նրանց գործունեության որակի վրա: Խնդիրը լուծելու համար նախաձեռնեցվեց համապատասխան մասնագետների պատրաստման գործընթաց (1924-1925 ուսումնական տարում բուհերի ուսումնական պլաններում ներառվեցին փորձարարական հոգեբանության և մանկավարժության դասընթացներ, 1927-1928-ին մանկաբանությունը ներառվեց ուսումնական հաստատությունների բոլոր մանկավարժական պահներում): Ներառվուական փորձարարական աշխատանքների արդյունքները սկսեցին տպագրվել «Մանկաբանություն» հանդեսում, ինչը նպաստում էր նաև ոլորտում կատարված աշխատանքների տարածմանը, հանրայանացմանը:

1933 թվականին Ուսուաստանում օրենքի ուժով հանրակրթական դպրոցներում սահմանվեցին մանկաբան մասնագետների հաստիքները, պարտականությունները, նրանց առջև դրված մասնագիտական խնդիրները, մատուցվող ծառայությունները: Սահմանված խնդիրներում կարևորվում էր հանրակրթական դպրոցում աշակերտների ուսուցման ու դաստիարակության գործընթացների ուսումնասիրությունը, կրթության որակի գնահատման, դրա բարձրացման հիմնախնդիրները, դրանց լուծման մեթոդների և մեթոդիկաների մշակումը, արդյունավետ ներդրումը հանրակրթության ոլորտում: Կարևորվում էր նաև սովորողների մասնագիտական կողմնորոշման խնդիրը, որը հավանաբար ենթադրում

Եր մանկավարժական դիագնոստիկ աշխատանք, այսինքն՝ սովորողների վերաբերմունքի, աշակերտների մեջ այդ մասնագիտությանը համապատասխան անձնային որակների առկայության ուսումնասիրություն: Սեծ ուշադրություն էր դարձվում կրտսեր դպրոցականների տարիքային և անհատական առանձնահատկությունների ուսումնասիրմանը, ուսումնադաստիհարակչական գործնքացում դրանց արդյունքների ներդրմանը, տարրական դպրոցում կրության որակի բարձրացմանը: Տշված խնդիրների լուծմանը ակտիվիտեն մասնակցում էին տարրեր գիտահետազոտական ինստիտուտներ, գիտական ընկերություններ: Սանկավարժական դիագնոստիկայի զարգացման գործնքացը շարունակվում էր բուն վերայի նաև 20-րդ դարի 2-րդ կեսին: Այդ շրջանում մշակվեցին մանկավարժական դիագնոստիկայի իրականացման նոր տեսական մոտեցումներ: Կ. Ուշինսկին, Ն. Շելգունովը, Ն. Սեչենար, Ն. Պիրոգովը գտնում էին, որ մանկավարժական ներգործության արդյունավետությունը եապես պայմանավորված է դաստիարակողների անհատական ֆիզիկական և հոգեբանական առանձնահատկությունների ինացության և մանկավարժական աշխատանքում դրանց օգտագործման արդյունավետությամբ: Անհատական հոգեբանական առանձնահատկություններ ասելով նրանք հասկանում էին երեխայի անձի ուղղվածությունը, ինացական գործնքացները, հոգեկան հատկությունները, վարքային դրսևորումները և իշական, և՛ ոչ տիպական, արտասովոր իրավիճակներում: Խորիրդային մանկավարժությունն աճքողովին նպատակառությանը էր մանկավարժական գործնքացի, ուսուցման մերումների արդյունավետության վերլուծության, գնահատման, ուսումնական ծրագրերի իրականացման ընթացքի, պայմանների և արդյունքների ուսումնասիրման հիմնախնդիրների լուծմանը: Տշված հարցերի պատասխանները անհրաժեշտ էին ուսումնական գործնքացի կառավարության կողմէն կատարելու համար, ուսումնական կողմէն կատարելու համար կառավարության գործունեության բոլոր ուղղություններում բարձր արդյունավետ կիրառումը, լան տարածումը, մերժական առումով դրանց հիմնավորումները տարրեր երկուների գիտահետազոտական կենտրոնների կողմից:

Վերոնշալի արդյունքում կարող ենք եղանակացնել, որ բավականին լուրջ ձեռքբերությունը ստեղծումը, գործունեության տարրեր ուղղություններում դրանց արդյունավետ կիրառումը, լան տարածումը, մերժական առումով դրանց հիմնավորումները տարրեր երկուների գիտահետազոտական կենտրոնների կողմից:

Վերոնշալի արդյունքում կարող ենք վստահաբար եղանակացնել կատարել, որ մանկավարժական դիագնոստիկան կարող է ապահովել մանկավարժական գործունեության բոլոր ուղղություններում բարձր արդյունավետության, մանկավարժական գործնքացների վերահսկելություն, կանխատեսելիություն, առաջացող ինդիքսների արդյունավետ լուծում, բացքողումների վերացում:

Մանկավարժական դիագնոստիկան հնարավորություն է տալիս ուսումնասիրել, վերահսկել դարձնել և նպատակային ուղղորդել մանկավարժական գործնքացի մասնակիցների միջև փոխհարաբերությունները: Ընդհանրապես, դիագնոստիկան ճանաչողության, հետազոտության օբյեկտների, տարրեր փոխհարաբերությունների, դրանց զարգացման ընթացքի, վիճակների, սոցիալական տարրեր խնդերում և տարրեր փոխհարաբերությունների ուղղություններում դրանց կառավարման, հետագա զարգացման ուսումնասիրման, բացահայտման, կանխատեսման ու նախագծման միջոցներ: Մանկավարժական դիագնոստիկան մանկավարժական գործունեության արդյունքները, վեր հանելու բացերը, թերացումները, գտնելու դրանց հաղթահարման միջոցներ:

20-րդ դարի 40-60-ական թվականներին մանկավարժական դիագնոստիկայի ոլորտում լուրջ

ԳՐԱԿԱՂԹԹՅՈՒՆ

1. Յայկական Սովետական Յանրագիտարան:
2. **Блинова Л. Н.**, Диагностика и коррекция в образовании детей с задержкой психического развития: Учеб. пособие. М., Изд-во НЦ ЭНАС, 2001.
3. **Блонский П. П.**, Педология: Кн. для преподав. и студ. высш. пед. учеб. заведений /Под ред. В.А., Сластина. М., "ВЛАДОС", 1999.
4. **Симонова А.**, Внутришкольный контроль и его реализация через систему мониторинга // Учитель. 2000, №3, с. 18-24.
5. **Ушинский К. Д.**, Педагогические сочинения: В 6 т. М., 1990, Т. 5, с. 15.42.

THE ORIGIN AND EVOLUTION OF PEDAGOGY IN THE SPHERE OF PEDAGOGICAL DIAGNOSTICS

G. YEGANYAN

Armenian State Pedagogical University after Kh. Abovyan
Lector at the faculty of Vocational Education and Applied Pedagogics

A. HOVHANNISYAN

Armenian State Pedagogical University after Kh. Abovyan
Docent at the faculty of Vocational Education and Applied Pedagogics

Summary

The article describes and analyzes one of the stages of development of pedagogical diagnostics, which became a separate discipline and was named "Pedology". It was a science about the development of children, as well as an applied branch of pedagogical science. In frames of "Pedology" science, research and experimental works have been performed, which later became basis for the formation of diagnostical pedagogics.

ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԵՎ

ՀԱՆԴԻՍԱՏԵՍԻ ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐԸ*

Դակոր ԶԻԼՖԻՄՅԱՆ

Մանկավարժական գիտությունների թեկնածու



Անձի բազմակողմանի և ներդաշնակ զարգացումը միշտ էլ հանդիսացել է արդիական խնդիր, և յուրաքանչյուր հասարակություն ճգտել է ձևավորել օրվա պահանջին համապատասխանող անձնավորություն: Խնդիրն այն է, որ բազմակողմանիորեն զարգացած, հոգեպես հարուստ, ստեղծագործ անձի հետ է կապված գիտության, մշակույթի առաջընթացը: Այդ գործնները չի կարող իրականանալ տարերայնորեն, առանց դաստիարակչական հատուկ ծրագրերի, որի մեջ ուրուցն և կարևոր տեղ ունի արվեստի դաստիարակչության խնդիրը: Անձնային և իմաստային կարողությունների հնարավոր առավել լիարժեք բացահայտման և իրագործման առումով արդիական բնույթը է ստանում կրթության բովանդակության վերահիմաստավիրումը՝ արվեստի համալիր ուսուցումը: Անմիջականորեն և համակողմանի ազդելով մարդու վրա՝ արվեստը նրա մեջ ստեղծում է գեղեցիկ զգալու և գնահատելու ընդունակություն: Արվեստի ընկալման գեղագիտական բովանդակությունը մեծ մասամբ պայմանավորված է հասարակությանը գիտակցարար դեմքի արվեստի բնագավառը մուտքի հնարավորությամբ: Այս բնագավառում նշակույթի դաստիարակման գիտակցական գործընթացը կարող է հանդիսատեսին մղել արվեստի մասին գիտելիքների ծեռական հասկանալ արվեստը պատմական զարգացման մեջ, տեսնել արվեստը ժամանակակից արժեքներում:

Ուսումնասիրելով բարձր դասարանցիների՝

որպես հանդիսականի զարգացման և դաստիարակման խնդիրները, անհրաժեշտ է հիշել, որ արվեստի բնագավառում գերիշխող սկզբի ավանդական հարաբերությունն իրականի և պայմանականի հանդես է գալիս յուրահատուկ կապի մեջ: Այն արտահայտվում է աշխարհընկալմանը և գեղագիտական հաճույքի գիտակցմամբ: Խանդիսականի որակները մեծ մասամբ կախված են այն արվեստի բնույթից, որն առաջարկում են նրան: Որքան բարդ են նրա առջև դրված գեղագիտական, բարոյագիտական, փիլիսոփայական խնդիրները, այնքան մեծ է երևակայության պահանջը, ավելի ընդգծված են ապրումները, ճաշակի դրսնորումները՝ ավելի նուրբը: Այն մարդու, ով իրեն համարում է հանդիսական, դաստիարակության ընթացքում անխուսափելիորեն բախվում է որոշակի գեղագիտական և հոգեբանական դժվարությունների: Արվեստի՝ հանդիսականին առաջարրած խնդրի կարևորությունը հոգեբանական առումով այն է, որ կերպարը, որը ներկայացվում է իր ամրող բարդությամբ ու հակասականությամբ, ընկալվում է որպես իրական, օբյեկտիվորեն գոյություն ունեցող, և հանդիսականը կերպարի մեջ խորանալով և նրա գործողությունների վրա խորհելով՝ հայտնագործում է նրա ներքին էությունը, ընդհանրացող իմաստը: Ավելի հստակ, թատերական արվեստի առանձնահատկությունը կենդանի մարդու է՝ և որպես անմիջականորեն ապրումներ ունեցող հերոս, և որպես անմիջականորեն ստեղծող դերասան: Խոկ թատրոնի կարևորագույն օրենքը նրա անմիջական ազդեցությունն է հանդիսատեսի վրա:

Խանդիսատեսի մասին՝ որպես ներկայացման պարտադիր համաստեղծագործողի, գործում և խոսում են հենց թատրոնի գործիքները՝ բեմադրիչներ, գերասաններ: Առանց հասարակու-

* Ներկայացվել է 16.12.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

թյան թատերական ներկայացում գոյություն չունի. պիեսը հաջողության հնարավորություն ունի միայն այն դեպքում, եթե հանդիսատեսը ինքը է «խաղում» այդ խաղը, այսինքն՝ ընդունում է նրա կանոնները և կատարում է ապրումակցող կամ ինքնամեկուսացող անձի դեր: Սակայն հանդիսատեսի մեջ գեղեցիկի ընկալման արժանացումը տեղի է ունենում միայն այն դեպքում, եթե հանդիսատեսը կարողանում է լիարժեք ընկալել ներկայացման մեջ արտահայտված գաղափարները, եթե նա ընդունակ է լայնացնել իր գեղագիտական հնարավորությունը և ստվորել, արվեստի մեջ տեսնել նորը, եթե, հավատարիմ մնալով իր սիրած գեղարվեստական ոճին, նա անտարբեր չէ նաև ստեղծագործական մյուս ուղղությունների նկատմամբ, եթե ընդունակ է տեսնել դասական ստեղծագործության նոր ընթրցումը և կարողանում է առանձնացնել բեմադրիչի մոտականացումը դերասանի կատարումից և այլը: Այսպիսի «երե»-ներ շատ կարելի են նշել, հետևաբար, որպեսզի հանդիսատեսը մասնակից լինի այդ ստեղծագործությանը, որպեսզի նրա մեջ արթնանա գեղեցիկի ընկալումը մեր թատրոնի զարգացնան տվյալ փուլում, ամերածեց է հանդիսատեսի գեղարվեստական որակերի ընդհանուր բարձրացում: Նրա հիմքը մարդու ստեղծագործական կենսունակությունն է, որը տանում է անհատական կատարելագործման: Յուրաքանչյուր նորմալ մարդ իր ամբողջ գիտակցական կյանքում ուրիշ մարդկանց հետ գտնվում է փոխհարաբերությունների մեջ, իսկ մարդկային փոխհարաբերությունների վերածման համար հանդիսատեսին բավարար է նաև ընդհանուր գիտակցությունը: Եվ թատրոնի արվեստը ամփոփված է «մարդկային հոգու կյանքի» մասին նոր գիտելիքների (Կ. Ս. Ստանիլավսկի) նրա եռլրան մեջ, հանդիսական լինելով արվեստի այդ գիտելիքները հասկանալ կարողանալու և վերծանելու մեջ է [1]:

Արվեստագիտական գրականության և մասնավորապես թատերական արվեստի ընկալման խնդիրներին նվիրված գրականության, ինչպես նաև ավագ դպրոցականների արվեստի գործերի ընկալման միջոցների ձևավորման բազմանյա փորձի ուսումնասիրությունը մեզ հնարավորություն է տալիս պատկերացնել և նկարագրել հանդիսականի որակների բացահիկությունը: Հանդիսական որակները իրենցից ներկայացնում են մեկը մյուսի վրա ներգործող հետևյալ բաղադրամասերը՝ արվեստի մասին հատուկ

գիտելիքների որոշակի ծավալի առկայությունը, ներկայացման ու ցուցադրումների ամբողջական ընկալման անհրաժեշտ ունակությունների առկայությունը: Բաղադրամասերից յուրաքանչյուրը հայտնաբերում և արտահայտվում է տարբեր աստիճաններով՝ կախված պարապմունքների անցկացման ներողիկայից և նպատակներից: Սակայն դրանց արդյունաբերության չափամիջնամասն նկալման մեջ արվեստի կազմակերպված գործունեության ընթացքում: Օրինակ կարող է հանդիսանալ թատերական ներկայացմանը, որը թույլ է տալիս առավելագույնս իրացնել հանդիսականի վերաբերնությունը, որպեսզի թատերական հանդիսատեսը միաժամանակ ընկալի իր ստացած լրատվության ամբողջությունը [3]:

Հանդիսականի դաստիարակման խնդիրը պատկանում է քիչ ուսումնասիրված հարցերի թվին և մամկավարժության մեջ կրում է մասնակի բնույթ, որի համար նպատակահարմար է ընել արվեստի տարբեր ձևերի նկատմամբ պատահներին բնորոշ վերաբերմունքի առանձնահատկությունը: Հետազոտողները, որոնք գրավել են դպրոցականների գեղարվեստական հետաքրքրությունների ուսումնասիրությամբ, առաջ են քաշել առանձին դրույթներ, որ դպրոցում արվեստի ուսումնասիրության համար գոյություն ունեն տարիքային առավելագույն և քիչ արդյունավետ շրջաններ: Ինչպես ցույց են տալիս հոգեբանանկավարժական հետազոտությունները, ավագ դպրոցական հասակը մարդու ինքնահաստատման, անձի արագընթաց ձևավորման ժամանակաշրջանն է, որի դիրքերից բարձր դասարանցին ընկալում է շրջապատող աշխարհի երևույթը և որոշում իր տեղում հասարակության մեջ: Ինչպես նկատում են հոգեբաններն և սոցիոլոգները, կապված կյանքի և գեղարվեստական փորձի ընկալման հետ, բարձրդասարանցիների մոտ աճում են հնարավորությունները տարաբնույթ արվեստների լիարժեք գեղարվեստական ընկալման համար: Բարձր դասարանցին լիիրավ ընդունակ է գլուխ համել ներկայացված արվեստի նյութից, կոնկրետ իրադրության հերոսների գործողությունների և արարքների հետևում տեսնել արվեստագետի զարգացնող միտքը, ընկալի նրա բարոյագեղագիտական արժեքներ, նրա աշխարհայացքը: Հանդիսականի կուլտուրայի դաստիարակման խնդրի հետազոտման համատեքստում մեզ

համար հատկապես արդիական է բարձր դասարանցիների կողմից գեղարվեստական ստեղծագործության ձևի նկատմամբ հետաքրքրությունների ի հայու գայլը, ինչը հնարավորություն կտա խոսել գեղարվեստական հետաքրքրությունների զարգացման մասին։ Բարձր դասարանցու մոտ կարծես նվազում կամ ընդհանրապես վերամուռ է այն ներքին խոչընդուռ արվեստի լիարժեք գեղագիտական ընկալման համար, որը հատուկ է ավելի փոքր տարիքին և բնութագրվում է մաստուցման մերժումով, որոնք իրենց բեմատիկայով կամ ձևով հեռու են այդ տարիքի հետաքրքրություններից։ Բարձր դասարանցիներին կարող է հետքրքրել և նրա մոտ դրական գնահատական առաջացմել նաև արվեստի գործի մաստուցման եղանակը, որն իր առաջադրած խնդիրներով բավականին հեռու է նրա հետաքրքրությունների սովորական շրջանակից [2]։

Վերը թվարկածը հանդիսանում է ավագ դպրոցական գեղարվեստական ընկալման ոլորտի հնարավորությունների ընդհանուր բնութագիրը։ Սակայն այս հնարավորությունները կարող են նաև չիրականանալ, եթե չստեղծեն հանապատասխան պայմաններ աշակերտների գեղարվեստական զարգացման համար։ Դրա համար ճանկավարժության կարևոր խնդիրներից մեկն է մնում բարձր դասարանցիների գեղարվեստական փորձի ընդարձակումը և հարստացումը, նրա վերլուծական հնտությունների մշակումը։ Սակայն բարձր դասարանցին ի վիճակի է ընկալել իրեն առաջադրված ամենաբարդ խնդիրներով ու գեղարվեստական լուծումներով ներկայացումները և սկզբունքորեն կարող է հաճախել հանրության համար նախատեսված արվեստի անկացած միջոցառման։ Դա բավարար գործնական հիմք է հանդիսանում բարձր դասարանցիների հանդիսականի որակների զարգացման և դրանց աճին նպաստող մանկավարժական հաստուկ գործումներության կազմակերպման համար։ Գեղարվեստական կերպարի երթյան մեջ խոր թափանցելը ընդունակ է մարդուն ազատել գիտակցության արօրեական սահմանափակումներից ու պատրաստի սիեմաներից, որովհետև արվեստի ստեղծագործության անկրկնելիությունն ու ինքնատիպությունն ուղղված է հատկապես դրան։ Շատ հետազոտողների կողմից նշված բարձր դասարանցիների գեղարվեստական ընկալման ճանաչողական տեսակետը հանդիսականի որակների ձևակորման կարևոր տեսակետ է։ Այս ասպարեզում շատ են բաց հարցերը, որոնց անընդհատ բախվում է դպրոցականների գեղարվեստական կրթության գործնթացը կազմակերպող մանկավարժը։ Որքա՞ն է գեղարվեստական պահանջնությը աջակցում ընկալմանը։ Որոշակի հոգեբանական դիրքորոշման իմացությունն աղոյության դաշտում շափակության դրա բացահայտ տվյալներ չի առաջադրում երկրորդական կերպարի ստեղծման համար։ Այդպիսի հարցեր շատ են ծագում։ Այդ արթորվ Պ. Մ. Յակոբսոնը գրել է. «Մարդու

ետ տանելով ապրումակցումների պահը։ Հուգականությունը որպես երեխայի ընկալման ամենապայծած գիծ, պահպանում է, բայց կորցնում է այն անմիջականությունն ու սրությունը, որը բնորոշ է ավելի վաղ հասակին։ Ավագ դպրոցական հանդիսականի վարքագիծ ձևավորման ընթացքում դաստիրակաչական ծիգերը պետք է ուղղված լինեն ինչպես ընկալման հուզականության պահպանմանը, այնպես էլ թատերական արվեստի առանձնահատկության ընկալման ունակությունների զարգացմանն ու նրա գեղագիտական հակասական եղությանը։ Ինչպես ցոյց են տալիս ուսումնասիրությունները, զարգացած կայուն գեղագիտական (ինչն գեղագիտական) պահանջի ցուցանիշներից է կրկնակի անդրադարձը արվեստի այս կամ այն ստեղծագործությանը։ Իսկական արվեստի բազմաշերտությունն ու անհատի անընդհատ զարգացող կենսական ու գեղագիտական փորձը գրավական են այն բամի, որ յուրաքանչյուր կրկնակի, նորից ստեղծվող կերպար անպայման տարբեր է նախորդից։ Արվեստում հայտնի է հանդիսականի որակների չափանիշը հանդիսացող նույն միջոցառման անդրադանալու բացարիկ հնարավորություննը։ Կրկնվող ներկայացում, ցուցադրություն և այլն, անձը գալիս է գիտենալով, որ իրեն նորից պարուելու են հուզական ապրումները։ Ցուցադրությունների և ներկայացման գործնթացում հանդիսականի այդ վիճակը կոչվում է՝ «կատարսիս»՝ գեղագիտական հաճույք՝ կապված երեվակայության խաղի և ընկալմագի պատրանքի ստեղծման հետ։ Հուզական ապրումները խթանում են բարոյական գործունեությունն, որն իր հերթին խթանում է ապրումները։ Այսպիսով «փակ շրջան» արվեստում առկա է միշտ։ Չենց այդ պատճառով է նպատակահարմարի և հուզականի համագործակցման խնդիրը արվեստների ընկալման կառուցվածքում բարձր դասարանցիների հանդիսականի որակների ձևակորման կարևոր տեսակետն է։ Այս ասպարեզում շատ են բաց հարցերը, որոնց անընդհատ բախվում է դպրոցականների գեղարվեստական կրթության գործնթացը կազմակերպող մանկավարժը։ Որքա՞ն է գեղարվեստական պահանջնությը աջակցում ընկալմանը։ Որոշակի հոգեբանական դիրքորոշման իմացությունն աղոյության դաշտում շափակության դրա բացահայտ տվյալներ չի առաջադրում երկրորդական կերպարի ստեղծման համար։ Այդպիսի հարցեր շատ են ծագում։ Այդ արթորվ Պ. Մ. Յակոբսոնը գրել է. «Մարդու

զարգացնմը արտահայտվում է նրանում, որ նա կարողանում է յուրացնել գիտելիքների մի շարք բնագավառներ, ստեղծում ավելի բարենպաստ պայմաններ իր գեղարվեստական ընկալման ձևավորման համար: Այլ կերպ ասած՝ չկա մեխանիկական կապ մարդու կրթության մակարդակի և նրա գեղարվեստական ընկալման զարգացման միջև» [2]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Брянцев А. А.**, Воспитания. Статьи. Выступления. Дневник. Письма. Сборник. Ред. сост. А. А. Госенпуд. М., ВТО, 1979, 296 с.
2. **Станиславский К. С.**, Собр. соч. В 8 т. М., «Искусство». Т.1. 1954; Т.3. 1955; Т.5. 1958; Т.6. 1959.
3. **Якобсон Р. М.**, Психология чувств и мотивации / П. М. Якобсон, Воронеж, «Модэ»; Москва: Институт практической психологии, 1998, 304 с.

THE MODERN PROBLEMS OF ARTISTIC'S UNDERSTANDING AND AUDIENCE'S EDUCATION

HAKOB ZILFIMYAN

Summary

About audience as mandatory joint creator of presentation, write and speak just figures of theatre: producer and actors. Without society there isn't theatre presentation: the piece has a possibility only in that event, when audience itself "plays" that play.

ԵՆԴԻՐՆԵՐ ՈՒՏԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂ

ԶԱՐԳԱՑՆՈՂ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒԴԻՆԵՐԸ*

Մարիամ ՀԱԿՈԲՅԱՆ

Երևանի բժշկահոգերանամանկավարժական գնահատման կենտրոն



Մտավոր խնդիրներ ունեցող երեխայի հետ ընտանեկան պայմաններում անցկացվող վերականգնող-զարգացնող աշխատանքը հանդիսանում է երեխայի դաստիարակության և ինքնուրույն կյանքի նախապատրաստման ողջ համակարգի բաղկացուցիչ մասը ըստ իր հնարավարությունների: Այն, նաև և առաջ, ուղրված է երկրորդային խանգարումների շտկմանը, հոգեֆիզիկական զարգացման խանգարումների կանխարգելմանը և դպրոցական ուսուցմանը նախապատրաստելուն [2], [4], [3] և ուրիշներ:

Միաժամանակ, ինչպես ընդգծում են շատ մասնագետներ և ինչպես վկայում են մեր հետազոտությունները, ընտանիքի պայմաններում նոտավոր խնդիրներ ունեցող երեխայի հետ վերականգնող-զարգացնող աշխատանքը ոչ միշտ է հաջող ընթացք ունենում: Աշխատանքի անցկացման դժվարությունների պատճառները կապված են ոչ միայն այդ երեխաների զարգացման հոգեֆիզիկական և տարիքային առանձնահատկությունների հետ, այլ նաև այդ հարցերում ծնողների հրազեկվածության և գիտելիքների, ինչպես նաև ընտանեկան պայմաններում այդ աշխատանքի կազմակերպման և անցկացման գործնական կարողությունների մակարդակի հետ:

Հատուկ գիտամեթոդական գրականության վերլուծությունը ևս վկայում է այդ հիմնախնդիրի շատ հարցերի տեսական և գործնական թերի


մշակվածության մասին: Մասնավորապես, բացակայում են գիտականորեն մշակված և փորձարարությամբ հիմնավորված տեսական մոտեցումները և գործնական ուղիները, որոնք կօգնեն զարգացման մտավոր խնդիրներ ունեցող երեխաներին դաստիարակող ծնողներին վերականգնող-զարգացնող աշխատանքներ կազմակերպելու և անցկացնելու համար, իսկ ընտանիքներում անցկացվող դաստիարակչական զարգացմող աշխատանքն իրականացվում է հիմնականում ծնողների գիտելիքների և անձնական փորձի հիման վրա [1], [5], [6].

Այդ պատճառով ողջ դաստիարակչական և վերականգնող-զարգացնող աշխատանքը, որն անցկացվում է այդ ընտանիքներում, պետք է, առաջին հերթին, նպատակ ունենա ստեղծել արդյունավետ պայմաններ և օգնություն ցուցաբերել ծնողներին տվյալ երեխաների հետ այդ աշխատանքը հաջողությամբ անցկացնելու համար:

Ընտանիքի պայմաններում նտավոր խնդիրներ ունեցող երեխային վերականգնող-զարգացնող օգնություն ցուցաբերելու համար ծնողներին նախապատրաստելու օրինակելի նյութը ներկայացնում ենք հետևյալ հիմնական բաժիններով՝ տեսական գիտելիքների և գործնական կարողություններ ու ունակություններ (նկ. 1):

Այսպես, «Տեսական գիտելիքներ» բաժնում մենք ներառել ենք այնպիսի կարևոր թեմաներ, ինչպիսիք են «Ստավոր խնդիրներ ունեցող երեխայի հոգեֆիզիկական զարգացման առանձնահատկությունները», «Մտավոր խնդիրներ ունեցող երեխայի հոգեֆիզիկական լարվածությանը և նախագուշացմանը նպաստող պայմանները», «Կեցվածքի խանգարումների և զարգացման երկրորդային խանգարումների կանխար-

* Ներկայացվել է 20.11.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:



Նկ. 1. Մտավոր խնդիրներ ունեցող երեխայ ին դաստիարակող ծնողների տեսական գիտելիքների և գործնական կարողությունների օրինակելի ուղղված ծությունը

գելմանն ուղղված միջոցառումները» և այլն:

Մտավոր խնդիրներ ունեցող երեխայի հետ վերականգնող-զարգացնող աշխատանքների կազմակերպման և անցկացման վերաբերյալ ծնողների պատկերացումների զարգացման

համար անցկացվող միջոցառումների ծրագրում կարևոր տեղ ենք հատկացրել նրանց գործնական կարողությունների և ունակությունների ձևավորմանը: Դա առաջին հերթին հոգեկան, նյարդային և ֆիզիկական լարվածություն չառա-

ջացնող խաղեր, վարժություններ և տարրեր առաջարանքներ ընտրել կարողանալու է, հատուկ մոդելային իրավիճակներ ստեղծելու է, որոնց մասնակցելով երեխան կարողանում է դրսնորել իրեն՝ լինել հաստատուն, օգնել ընկերոջը, անձնային հետաքրքրությունները ենթարկեցնել կուլտուրային և այլն:

Մենք կարևոր տեղ ենք հատկացրել այն հանգամանքին, որ ծնողները կարողանան ընտրել և կեցվածքի խախտումները, և զարգացման երկրորդական շեղումները կանխարգելող շարժողական ոլորտի, բնավորության անհատական գծերի թերություններն ուղղող վարժություններ:

Ուսուցանող փորձարարության տարրեր փուլերում մենք առանձնահատուկ նշանակություն ենք տվել մտավոր խնդիրներ ունեցող նախադպրոցականին դպրոցին նախապատրաստելու գործնական կարողությունների և հմտությունների ձևավորմանը, ինչպես նաև այդ երեխաների ինքնասպասարկման, անձնական հիգիենայի, վարքածիք կանոնների և այլ հմտությունների ձևավորմանը, որոնք կարևոր նշանակություն ունեն նրանց դպրոցական ուսուցման շրջանում:

Մանկավարժական փորձարարությունը կառուցվել է այնպես, որ ծնողները հետևողականութեն յուրացնեն տեսական գիտելիքները և դրանց կիրառման գործնական կարողություններն ու ունակությունները: Իսկ այդ հարցերում զարգացման հասանելի մակարդակը պարզելու համար սահմանել ենք ծնողների տեսական գիտելիքների և գործնական կարողությունների պահանջները: Այսպես, օրինակ, «Տեսական գիտելիքներ» բաժնում ծնողները փորձարարության վերջում պետք է իմանան.

- մտավոր խնդիրներ ունեցող երեխայի հոգեֆիզիկական զարգացման առանձնահատկությունները

- ինչպիսի պարապմունքներ, խաղեր ու զվարճանքներ կարող են հոգեբանական և ֆիզիկական չափից շատ լարվածություն առաջացնել երեխայի մոտ,

- ընտանեկան պայմանները, որոնք նպաստում են երեխայի ծիշտ զարգացմանն ու դաստիարակմանը,

- վարժություններ, առաջարանքներ և պայմաններ, որոնք նպաստում են երեխայի մանր շարժումների, շարժումների կողորդինացիայի և ճզգության զարգացմանը,

- մոտեցումներ, որոնք բնավորության ծիշտ գծեր կծառավորեն մտավոր հետամնաց երեխայի մոտ,

- մոտեցումներ, որոնք կիարստացնեն երեխայի բառապաշարը,

- մոտեցումներ և պայմաններ, որոնք մտավոր խնդիրներ ունեցող երեխային կնախապատրաստեն դպրոցական ուսուցմանը:

Նշված տեսական գիտելիքների հետ մեկտեղ փորձարարության վերջում ծնողները պետք է տիրապետեն հետևյալ գործնական կարողություններին և հմտություններին:

- այս կամ այն պարապմունքը, խաղը կազմակերպելիս, հանձնարարել վարժություններ, որոնք կզարգացնեն երեխայի շարժումները և շարժողական ոլորտները,

- ստեղծել բարենպաստ միջանձնային հարաբերություններ մտավոր խնդիրներ ունեցող և մտանիքի անդամների միջև,

- ընտանիքում բարենպաստ պայմաններ ստեղծել մտավոր խնդիրներ ունեցող երեխայի զարգացման համար. օրվա ռեժիմ, անձնական հիգիենայի կանոնների և նորմերի պահպանում, շրջապատի հետ շփում և այլն,

- կազմակերպել երեխայի կեցվածքի, բնավորության անհատական գծերի թերությունները կանխարգելող միջոցառումներ:

Ծնողները նմանատիպ տեսական և գործնական կարողություններին ու հմտություններին պետք է տիրապետեն մտավոր խնդիրներ ունեցող երեխայի ուսուցման, դաստիարակման և զարգացման շատ այլ բաժիններում ևս.

- տեսական գիտելիքներ,

- գործնական կարողություններ և հմտություններ,

- գիտելիքների և կարողությունների հիմնական պահանջներ, որոնք պետք է տիրապետեն մտավոր խնդիրներ ունեցող երեխա դաստիարակող ծնողները:

Ուսումնասիրվող նյութը ընտրելիս, մշակելիս և համակարգելիս մենք հաշվի ենք առել ինչպես ծնողների տարիքը, կորությունն ու փորձը, այնպես էլ առաջարկված թեմայի նշանակությունը մտավոր խնդիրներ ունեցող երեխայի համար, ընտանեկան պայմանները, երեխայի հոգեֆիզիկական զարգացման հնարավորությունները և այլն:

Ընտանեկան պայմաններում մտավոր խնդիրներ ունեցող երեխայի հետ վերականգնող ու զարգացնող աշխատանքի կազմակերպումն ուսուցանելիս մենք խորհրդու ենք տախու հատուկ միջոցներ և մերժակական հնարներ, որոնք ապահովում են երեխայի ճանաչողական, խաղային, ուսումնական և աշխատանքային ակտիվությունը: Մենք հաշվի ենք առնում երեխայի պարապ-

մունքների բովանդակության կապը նրա ընտանեկան կյանքի հետ:

Ընտանեկան պայմաններում մտավոր խնդիրներ ունեցող երեխայի հետ վերականգնող և զարգացնող աշխատանքներ կազմակերպելու և անցկացնելու համատեքստում ծնողներին խորհուրդ ենք տալիս կարևոր տեղ հատկացնել իրական գործնական իրավիճակների մոնիթուրի գործառնանը, որտեղ երեխաները կվարողանան դրսնորել իրենց ձեռք բերած գիտելիքները, հմտություններն ու կարողությունները: Դատուկ ստեղծված իրավիճակներում երեխան, բացի ձեռք բերած գործնական հմտություններից, սփորում է ծիչտ խոսել, շփվել, պահպանել վարքագիր կանոններն ու կուլտուրան, հարստացնում է բառապաշտը ու զարգացնում խոսքը: Դա նշանակում է, որ մտավոր խնդիրներ ունեցող երեխայի մասնակցությունը հատուկ ստեղծված իրավիճակներին հիմք է դառնում նրա ընդունակությունների զարգացմանը, շփման փորձի ընդլայնմանը, թույլ է տալիս երեխային ամրապնդել և հարստացնել ձեռք բերած կարողություններն ու հմտությունները, որոնք կարևոր նշանակություն ունեն դպրոցական ուսուցման շրջանում:

Մենք կարևոր տեղ ենք հատկացնում նրան, որ ծնողները տիրապետեն մտավոր խնդիրներ ունեցող երեխայի հետ վերականգնող-զարգացնող պարապմունքների կազմակերպմանը և անցկացմանը, կեցվածքի խանգարումների կանխարգելմանը, նաև մոտորիկայի զարգացմանը, բառապաշտի հարստացմանը և շատ այլ կարողություններին ու հմտություններին: Այդ ամենը, բացի վերականգնող-զարգացնող շատ գործնական առաջարկանքների լուծումից, խթանում է նաև շփումների ու խոսր ակտիվացումը, բառապաշտի հարստացումը, խսրային հաղորդակցման և երկխոսությունների ձևավորումը, ինչը նույնական ծայրահետ անհրաժեշտություն է այդ երեխաների համար դպրոցական ուսուցման շրջանում:

սուցման շրջանում:

Կարևոր է նաև այս, որ առաջադրանքների, խաղերի, տարրեր միջոցառումների, շփումների ընթացքում մտավոր խնդիրներ ունեցող երեխան յուրացնի բառեր, որոնք նա կօգտագործի կենցաղում շփվելիս:

Այդ երեխաներին ընտանեկան պայմաններում տարրեր խաղերի, առաջադրանքների, մոդելային իրավիճակների մեջ ներգրավելը նպաստում է ոչ միայն նրանց ինքնուրույնության ձևավորմանը, այլև բնավորության մի շարք կարևոր անհատական գծերի ձևավորմանը մարդամտություն, ինքնավստահություն, որոնք կարևոր նշանակություն ունեն դպրոցական ուսուցման շրջանում:

Եվ այսպես, ներկայացված տեսական մոտեցումներն ու գործնական ուղիները, որոնք մշակված են մտավոր խնդիրներ ունեցող երեխայի հետ վերականգնող-զարգացնող աշխատանք կազմակերպելու և անցկացնելու գործում ծնողներին օգնություն ցուցաբերելու համար, ուղղված են ընտանեկան պայմաններում անցկացվող այդ բոլոր աշխատանքների կատարելագործմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ալեшина Ю. Е.**, Индивидуальное и семеиное консультирование. М., 2004. с. 203
- Власова Т. А., Певзнер М. С.**, О детях с отклонениями в развитии. М., 1973, 175 с.
- Кафян Э. М.**, Модель инегрированного обучения и воспитания дошкольников с особенностями развития: Автотеф. дисс. пед. наук. Ереван 2005, 22 с.
- Маслюкова Е. М.**, Ребенок с отклонениями развития. М., 1992, 150 с.
- Ткачева В. В.**, Гармонизация внутрисемейных отношений. М., "Гном-Пресс", 2001, 153 с.
- A.P.Turnbull&H.R.Turnbull.** Families, professionals and exceptionality. Columbus, OH: Merrill, 1986.

THEORETICAL ASPECTS AND PRACTICAL WAYS OF CREATING CORRECTION-DEVELOPING AID TO A MENTALLY RETARDED CHILD IN FAMILY CONDITIONS

MARIAM HAKOBYAN

Yerevan Medical Psychological Pedagogical assessment center

Summary

The article discloses theoretical aspects and practical ways of optimization of help to a family, upbringing mentally retarded child.

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՏԱԿԱՆ ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ*

Գրիգոր ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՀ ԿԳՆ Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարամի տնօրեն

Ատենախոսության թեման՝ Ավանդական գեղարվեստական արհեստների ուսուցումը որպես մշակութային ժառանգության պահպանման միջոց

Գիտական դեկան՝ Լենս ՆԵՐՍԻՍՅԱՆ, մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ ԿԱ ակադեմիկոս
ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ



Մասնագիտական ուսուցման գործընթացում կարևորվում է սովորողի մոտ օժտվածության որոշումը: Սովորաբար ընդունակությունը, ձիրքը, եթե այն առկա է, դրսևորվում է գորեք անմիջապես, բայց երբեմն այդ որոնումը հիշեցնում է հնագիտական պեղումներ: Բայց նոյնիսկ փոր բողոքն արժանի է մեծ ուշադրության: «Վարպետներ պետք է աճեցնել: Ահա թե ինչու հմտություն ձևավորելու պարապնունքներում ուսուցումը տարվում է առանց շտապելու և հիմնավորապես, բարյացակամության մթնոլորտում՝ սովորողի ստեղծագործական ակտիվության զարգացման նպատակով»: «Սովորող անորի նման չէ, որի մեջ լցնես, այլ օսի է, որը պետք է վառել», - ենթադրում է ֆրանսիացի ականավոր ֆիզիկոս Բլեզ Պասկալը:

Ավելի մանրամասնորեն, մեր կարծիքով, հարկավոր է մասնագիտական վարպետության ձևավորումը քննարկել նյութերի գեղարվեստական մշակման արհեստանոցային պարապնունքներում սովորողների ստեղծագործական գործունեության միջոցով: Միաժամանակ հատուկ նշանակություն է ստանում դեռահասի անձնավորություն կերպավորող ընդունակությունների հիմնախնդիրը, առանց դրանց անի-

մաստ է նրա որակական մասնագիտական պատրաստությունը:

Կերպավորման ընդունակությունների հիմնախնդիրը քննարկվում է Լ. Ս. Ներսիսյանի, Ա. Ա. Զելշյանի, Ս. Ս. Կարապետյանի, Ա. Ե. Մարտիրոսյանի և այլոց աշխատանքներում: Լ. Ս. Ներսիսյանն իր աշխատանքներում հատուկ ուշադրություն է նվիրում գեղարվեստական ընդունակությունների ժանաշման և դաստիարակության հիմնախնդիրներին, ընդ որում ընդգծելով, որ սկզբունքորեն անընդունակ մարդիկ չկան: Յուրաքանչյուր մարդու մեջ ճիշտ դաստիարակության միջոցով կարելի է «անվերջություն» զարգացնել ցանկացած ընդունակություն: «Խևական մանկավարդությունը բովանդակվում է այն փաստի ընդունման մեջ, որ նորմալ մարդկանց մեջ, ընդ որում առանց բացառության, չկա այնպիսին, որը ոչ մի բանի ընդունակ չլինի» [1]:

Վերոնշյալ հեղինակները նյութի գեղարվեստական մշակման ախտորոշման խնդիրներից առաջնային են համարում հմտությունների տիրապետելը, կերպավորման ընդունակությունների զարգացման մակարդակի նախնացությունը (կանխագուշակումը): նպատակ ունենալով դրանց հետագա կատարելագործումը:

Կերպավորման ընդունակությունները ներկայացնում են կառուցվածքային մի կազմություն-գոյացություն, որի բաղադրիչներից մեկը կերպավորման ընկալում-յուրացումն է:

Կերպավորման ընդունակությունների կառուցվածքի մասին բարդ փորձառական հետա-

* Ներկայացվել է 03.12.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

գոտություններից եկել ենք այն եզրակացության, որ կերպավորման գործունեության հակումը ներառում է մի շարք առանձնահատուկ ընդունակություններ:

1. Ընկալման ամբողջականությունը: Նյարդային գործունեության գեղարվեստական տիպի գերակշռությամբ օժտված մարդիկ ավելի շատ հակում ունեն շրջապատի աշխարհի զգայական ընկալման, քան նրա մասին տրամաբանական հետևությունների բացահայտման:

2. Ուղղահայցից և հորիզոնականից շեղումների գնահատումը:

3. Դամանամությունների գնահատումը՝ մասերի հարաբերակցության փոխանցումն ամրողությամբ:

4. Պայծառ լուսավորության հարաբերությունների գնահատումը:

5. Հեռանկարային կրծատումների գնահատումը:

6. Գունագացում՝ միատեսակ քրոմատիկ գույներ գտնելը:

7. Տեսողական իշշողություն:

Կերպավորման ընդունակությունը որոշում են ավանդական գեղարվեստական արիեստագործ մանկավարժ-նկարչի առանձնահաստկությունը: Բայց, առաջարկած ընդունակությունների, սանդղակում բացակայում է ստեղծագործության նկատմամբ դեռահասի հակումը, երևակայելու ընդունակությունը, որոնք այնքան անհրաժեշտ են կերպավորման գործունեության համար:

«Կերպավորման գործունեություն» եզրույթն ընդգրկում է արվեստների տեսակների բավականին մեծ շրջանակ: Այս խմբում են նաև գեղարվեստական արիեստները: Թանի որ ընդունում են, որ կերպավորման գործունեության բոլոր տեսակների հիմքը կազմում են պատկերի նկատմամբ ճեղք բերված գիտելիքները, ունակությունները և հմտությունները, ապա հետևում է եզրակացությունը՝ պատկերելու ընդունակությունն ամենաէկալան ու անհրաժեշտն է մյուս ընդունակությունների համեմատությամբ, որոնք նույնական գործում են կերպավորման գործունեության տարրեր տեսակներ իրականացնելիս:

Սակայն ավանդական գեղարվեստական արիեստագործության մեջ, որում առաջնային է համարվում նյութի գեղարվեստական մշակումը, կարևորվում է նաև նկարելու ընդունակությունների ծառակորման անհրաժեշտությունը: Այստեղ կարևոր է առաջին եռյակը, որն ընդգրկում է նկարելու, առարկայական աշխարհը գունային

երանգավորումնվ զգալու ընդունակություններ, ձեռքերի վարժվածություն, գեղարվեստական ստեղծագործության տվյալ տեսակին տիրապետելու դեռահասի լրացուցիչ ցանկություն:

Նյութերի գեղարվեստական մշակումը՝ որպես ավանդական գեղարվեստական արիեստագործության տարատեսակ, տարբերվում է ստեղծագործական, տեխնիկական և կերպավորման գործունեության միասնությամբ, որի հետևանքով վարպետ-նկարիչի առջև առանձնական ձևով դրվում է դեռահասների մեջ ստեղծագործական երևակայության ընդունակությանը դաստիարակելու հիմնահարցը: Իսկ դրանում, ինչպես պարզվում է, էական դեր է կատարում ստեղծագործական երևակայության տեխնոլոգիաները մեկը՝ ոճավորումը, այսինքն՝ գեղարվեստական մտահաղացումից հանել ամեն տեսակի երկրորդություն: Նյութերի գեղարվեստական մշակման ուսումնական առաջադրանքների վկա աշխատելու գործընթացում սովորողները գործողություններ են կատարում կոնկրետ զգայական ձևերով և պատկերացումներով, վերլուծումներով, համեմատումներով, ընդհանրացումներով: Այսպես, օրինակ, հագուստի ժամանակակից մոդելի ձեռքի նախշանկարը սկսելուց առաջ, օգտագործելով ժողովրդական նախշեր, անհրաժեշտ է ժողովրդական մոտիվների հսկայական ժառանգությունից առանձնացնել տվյալ մոդելի համար առանձին, առավել կարևորները, ժողովրդական զգեստի համար ընտրել ավանդական գույներ: Այսպիսով սովորողի համար հաջող ստեղծագործական գործունեության պայմաններից մեկն է դարձում վերլուծականորեն մտածելու կարողությունը:

Սակայն ոչ պակաս կարևոր է նաև մասնագիտական գործունեության գործընթացում ձեռքբերված տեսական և գործնական բոլոր գիտելիքները համադրելու կարողությունը: Միայն այս պայմանի դեպքում է հնարավոր ամրողական գեղարվեստական ստեղծագործության ստեղծումը:

Նյութերի գեղարվեստական մշակման գեղարվեստական և տեխնիկական ստեղծագործության միասնության նկատմամբ մոտեցումն առաջացնում է դեռահասների ընդունակությունների կառուցվածքի մշակման անհրաժեշտություն, որոնց բաղկացուցիչ տարրերն են.

- գեղարվեստական ընդունակությունները՝ ընկալման ամրողականությունը, համաձանաւությունների, միջմի, գույնի գնահատումը, տեղական հիշողությունը,

• ստեղծագործական ընդունակությունները՝ գեղարվեստական երևակայությունը, վերլուծման և սինթեզի ընդունակությունը, գեղագիտական զգացմունքայնությունը, զաղափարները պատկերների մեջ մարմնավորելով ընդունակությունը,

• տեխնիկական ընդունակություններ՝ վերլուծական մտածողությունը, ծեռքի վարժվածությունը:

Այսպիսով յուրաքանչյուր առանձին ընդունակության կառուցվածքը՝ որպես տվյալ գործունեության համար անձնավորության պատրաստություն, տարբերվում է զգալի բարդությամբ և ներառում է մի շաք հատկանիշների համալիր, որոնք նպաստում են ինքնուրույն տեխնոլոգիական և երանգանկարչական լուծումներին: Վարպետ-մանկավարժի ստեղծագործական մոտեցումները իր աշխատանքում ներառում են նաև սովորողի անձնավորության այնպիսի հատկանիշների բացահայտման կարողությունը, որոնք անհրաժեշտ են նաև ազգային համբերությանը, լրջմտությանը, գեղեցկության զգացողության: Թվարկվածի առկայությունն է որոշում է, թե արդյոք մարդ կարող է դառնալ բարձր որակավորմամբ նաև ազգետ այն գործում, որը նա ընտրել է:

Ներկայումս ուսումնական պյանդներում թվարկված առարկաների բոլոր ծրագրերը գործնականորեն կապված են միմյանց հետ: Յաստատված միջազգային կամքեն ընդլայնվում և կատարելազործվում են: Օրինակ, կենսաբանության ուսումնասիրության ընթացքում հաշվի է առնվում այն, որ բուսական զարդարները հիմնական տարրն է նյութի գեղարվեստական նախշանկարի գործ հորինվածքային նախագծեր կազմելիս, գործվածքների ներկման համար օգտագործվում են բույսերից ստացվող ներկեր: Մանկավարժ Վ. Ն. Պոլունինան գտնում է, որ «ամբողջ սրտով պետք է ձգտել դեպի բնություն, հետևեն նրան անկերծորեն և համառորեն, չնտորելով որևէ բանի մասին: Բացի նրա մտահղացման մեջ խորասուցվելուց, ոչ մի բան չմերժելով, ոչ մի բանից չիրաժարվելով, ոչ մի բանի նկատմամբ չդրսնորել արհանարհանք»: Թոշունների, կենդանիների, մարդու կենսաբանական կառուցվածքը («Կենսաբանություն» առարկան) «Պլաստիկ անատոմիա» առարկայի պարապմունքներում պետք է ուսումնասիրվի փոքր-ինչ այլ տեսակետից: Քիմիայի ուսուցչը պարապմունքներ է անցկացնում համապատասխան բաժինների վերաբեր-

յալ՝ հաշվի առնելով յուրաներկերով կամ անվիճայի ներկերով տարբեր տեսակների նյութերի վրա նախշանկարներ կատարելու տեխնոլոգիան: Գրական սյուժեները և ֆոլկլորային մոտիվները կարող են հորինվածքային ուսումնական և կուրսային աշխատանքների մշակման հիմք ծառայել: Դրանց կատարման ընթացքում օգտագործվում են այն նյութերը, որ սովորողները կուտակել են «Յա գրականություն», «Ժողովրդական գեղարվեստական արհեստների պատմություն», «Ժողովրդական զարդանկար» և այլ առարկաների պարապմունքներում: Ավանդական գեղարվեստական ստեղծագործություններ մեջ դեռ է կատարում այն նյութը, որից պատրաստված է իրը, քանի որ նյութի հատկությունները և նախշանկարի բնույթը սերտ փոխգործողության մեջ են: Մշակվող նյութի հատկությունները և տեսակները, աշխատանքային նյութի պատրաստումը սովորողներն ուսումնասիրում են նյութափոխության դասերին: Մեծ նշանակություն ունի «Գունագիտության հիմունքներ» առարկայի ուսումնասիրությունը, քանի որ նախշանկարների բազմազանությունը միշտ առավելությունն է տալիս ավանդական գեղարվեստական արհեստագործական շինվածքներին:

Սամանագիտական կրթական գործընթացում մեծ նշանակություն է տրվում դեռահասների ուսուցման բովանդակությանը և մեթոդիկային: Սյուրի գեղարվեստական մշակման ուսուցման մեթոդիկա ասելով հասկանում ենք ուսուցչի հետևողական և կանոնավոր գործողությունների կապակցված համակարգ, որը կազմակերպվում է սովորողների գործնական և ծանաշղողական գործունեությունն անհրաժեշտ տեսական գիտելիքների, գործնական կարողությունների և ունակությունների, արհեստագործական պատերային կառուցվածքի յուրացման ուղղությամբ:

Սյուրի գեղարվեստական նախշանկարի վարպետություն ուսուցանելիս մենք առանձնացնում ենք հետևյալ մեթոդական սկզբունքները.

- պարզից դեպի բարդ (ուսուցման սկզբնական փուլում),
- ընդհանուրից դեպի մասնակին,
- սովորողների նմանողական և ստեղծագործական գործունեության գուգորդում,
- գործնական պարապմունքներում տեսական գիտելիքների և գործնական կարողությունների գուգորդում,
- համակարգված վերահսկողություն գեղարվեստական գործունեությանը,
- ժողովրդական մանկավարժության մերոդ-

Եթի կիրառում (ընդօրինակում-տարբերակում-ինքնուրույն ստեղծագործական լուծում, ստեղծագործման խճակապնություն, տեխնոլոգիական եղանակների ավանդականություն, կոնյուգիցիոն լուծումներ և ժողովրդական գեղագիտություն),

- աշխարհայցքային և բարոյագեղագիտական գաղափարների տիրապետում,
 - ուսուցման դիտողականություն (ակնենություն):

Եթե ցանկանում եք սովորողին հաղորդել իրական և կայուն գիտելիքներ, հարկավոր է ընդհանրապես ամեն ինչ ուսուցանել անձնական դիտումների և զգայական ընկալման միջոցով:

Ուսուցչից աշակերտին անմիջական հաջորդականությամբ վարպետության փոխանզման

ավանդական համակարգից բացի ավանդական գեղարվեստական արհեստներում ստեղծվում են վարպետության պահպանման և փոխանցման նոր մեթոդներ: Նոր մանկավարժական մեթոդները և ժողովրդական մանկավարժությունը սերտորեն միահյուսված են, փոխադարձորեն հարստանում և լրացնում են միջանց:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ներսիսյան Լ. Ս.**, Կրթեստի տեսակների փոխազդեցության հիմնայինդիր որպես գեղագիտական դաստիարակության արժեքային համակարգ: «Գեղարվեստական միտք», Եր., «Զանգակ-97», 2008, էջ 6-11:
 2. **Полунина В. Н.**, Одолень-трава. Эстетическое воспитание детей и подростков в общении с народным искусством, М., 1989, 140 с.

THE IMPORTANCE OF CHOICE OF TEACHING METHODS IN THE PROCESS OF STUDY OF TRADITIONAL-ARTISTIC WORKMANSHIP

GRIGOR MKRTCHYAN

Summary

Contemporary methods and technology applied in the process of study of traditional-artistic workmanship is discussed in the article.

ՀՈՐԻՆՎԱԾՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԿՃԲՈՒՆՔՆԵՐԸ***Մուշեղ ՍԱՐԳՍՅԱՆ****ԴՊՄԴ կերպարվեստի ամբիոնի դասախոս**

Բնօրինակից կատարված ուսանողական աշխատանքների որակը շատ դեպքերում կախված է նրանից, թե որքան արտահայտիչ, գրագետ, մատչելի է կազմված նատյուրմորտ՝ իրանկարը: Իրանկարի մեջ հիմնականը կախված է առարկաների ընտրությունից և նույնիսկ այն բանից, ինչպես են նրանք դրվել: Ընտրության սկզբունքը, որը դրված է իրական գեղանկարչության հիմքում, իրանկարի մեջ հանդես է գալիս առանձնակի դիտողականությամբ: Առարկաների ընտրությունը իրանկարի համար առանձին դեպքերում կարող է պատահական թվայի, իսկ իմֆիշայլոց նրա մեջ է երևում նկարչի մտահղացումը: Մենք գտնում ենք, որ ամենադժվարը իրանկար դնելն է: Ուսումնական իրանկարի հորինվածքային կազմակերպումը ամենից առաջ ըստ ձևերի, չափերի, պատումի տրամաբանութեն կապված առարկաների ընտրությունն է, ինչպես նաև նրանց տեղադրումը հարթության վրա հորինվածքային օրենքներով [1]: Այստեղ անհրաժեշտ է գտնել մտահղացում արտահայտող ամենագլխավորը և այն լրացնել երկրորդականով: Կարելի է հաջողված համարել այն իրանկարը, որն կենսունակ ձևով աշխատում է մտահղացման վրա և պատասխանում է հորինվածքի հիմնական պահանջներին: Այդպիսի պահանջներից է հորինվածքի խնդիրները բացող կենտրոնին բռլոր առարկաների և ուսումնական դրվածքի մասերի ենթարկումը, բնանկարի առարկաների և մասերի համապատասխանումը դրվածքի միասնությանը, արտահայտչականությանը և այլն: Իրենց որակական հաստկանիշներով դրվածքի առարկաները ըստ պատումի պետք է լինեն ավելի արտահայտչի: Կախված առաջադրանքից՝ առարկաները ընտրվում են նյութականության, ձևերի, գույների, երանգների, չափերի և նմանության սկզբունքներով: Նորինվածքի կենտրոնի և ամբողջ բնանկարի կազմակերպումը կարող է իրագործվել միայն առարկաների հմուտ ընտրությամբ:

«Երեքից-յոր տարեկանում ընտանիքին համարայի, զուգասիր պետք է գործի նաև մանկապարտեզը, ուր կա մանկական կազմակերպված միջավայր՝ իր դաստիարակիչ ներգործությամբ, հետևապես նեղ պետք են նոր բնույթի, բովանդակության մանկապարտեզներ»,- գրում է Բարսայանը:

Լավագույն գիտելիքներով զինված, կիրթ վարօգոնվ, ամենայն պահանջվուսությամբ նա հաշվի էր առնում նանկանց տարիքային և հատկապես անհատական-հոգեբանական առանձնահատկությունները, ինարավորությունները, բարոյականացած դրսնորումները, պարապնունքներին հաշվի էր առնում մատչելիության պահանջները, օգտագործում զննական նյութեր, ֆիերեբեյան պարզ-խաղալիքներ և այլն: Ա. Բարայանը դեմ էր պատիժներին (խիստ պատժի և ծեծի մասին խոսք լինել չը կարող), նվաստացուցիչ արգելումներին, ավելորդ խստապահանութեամբ:

1880 թ. արդեն նա բացում է իր ընտանեկան մանկապարտեզզ 8-10 երեխաների համար: Մի քանի ամիս անց երեխաների թիվը հասնում է 60-70-ի:

«Մեր մանկական պարտեզն այցելում էին ոչ

* Ներկայացվել է 16.12.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

միայն մանուկները, այլև նրանց մայրերը, շատ անգամ դասամիջոցներին նրանց հայտնում էի մեր երազները ժողովրդական մանկական պարտեզի մասին, այդ տիկնայր և օրիորդները ոգևորվում էին և իրանց կողմից ամենայն աջակցություն խստանում: Վերջապես մի երեկո ժողով կազմեցին մեզ մոտ: Ես առաջարկեցի այդ տիկնանց իմ ուժերի և գիտցածիս չափ դասախոսել իրանց ֆրերելյան մանկական պարտեզի բերիան, իսկ գործնականը ամեն օր տեսնում էին մեր մանկական պարտեզում: Ամուսինս հայտնեց, որ ամենայն ուրախությամբ կրասախոսի իրանց մանկական հասակի առողջապահությունը: Միա այսպես կազմվեց ֆրերելյան ընկերությունը:՝ պատմում է Ս. Բարայանը [2]:

Սովոր Բարայանի մանկապարտեզի հետ է կապվում Ղազարոս Աղայանի անունը, որը 1882-1883 ուսումնական տարում ստանձնում է մայրենի լեզվի դաստիարակի գործը: Աղայանն օրական աշխատում էր երկու ժամ՝ գրագիտություն սովորեցնելով սաներին: Մնացած ժամանակը տրամադրում էր մանկական բանաստեղծություններ հորինելուն, որպեսզի զքաղեցնի նրանց: «Գրում էի մանկական երգեր և տալիս տիկին Սոֆյային, որ այնպես էր ուրախանում, ինչպես մի նոր գոյս արած: Ինձանից ծածուկ էր սովորեցնում երեխաներին և պատվիրում էր, որ ինձ չափն, մինչև լավ չպատրաստվեին» [2]:

Ֆրերելյան ընկերության շնորհիվ Սովոր Բարայանը որոշում է Զրկինենց եկեղեցուն կից բացել անդրանիկ ժողովրդական մանկապարտեզը, որի կառավարչութեալ պաշտոնը ստանձնում է Գայանե Յովհաննիսյան-Մատուկյանը: Մամուլը շերմորեն ընդունեց այս նոր հաստատության մուտքը՝ բարձր գնահատելով ֆրերելյան ընկերության անդամների ջանքերը [3]:

Զրկինենց մանկական պարտեզի բացումը նշանավորվեց նաև այն հանգամանքով, որ այդ օրն առաջին անգամ կանանց սեղակ եկավ հրապարակային ելույթով: Խոսքը Սովոր Բարայանի բացման ճաշի մասին է, որով նա ներկայացրեց մանկապարտեզի հիմնադրման և Ֆրերելյան ընկերության ստեղծման հանգամանքները, ծանոթացրեց հանրությանը Ֆրերելյի տեսությանը, բացատրեց մանկական պարտեզների նշանակությունը ու կարևորությունը ապագա սերնդի կրթության խնդրում, ցույց տվեց, որ նախադարձական հաստատությունների գաղափարը խորը չէ հայ հանրությանը՝ հիշելով «վարպետի ուսումնարանների» մասին և այլն: Նա շեշտեց

հատկապես, որ մանկական պարտեզ հաստատությունը կենսական նշանակություն ունի մանավանդ աղքատ դասի համար. «Աղքատ դասի երեխայոց ավելի պետք են մանկական պարտեզներ, որովհետև նոցա ծնողը ամբողջ օրեր զբաղված հացի և սննդի խնդրով և ծանր աշխատանքով՝ բնականարար մոռանում են իրանց գավակներին, որոնք փողոցի ամենավատքար օրինակներով պիտի կրթվին» [1, էջ 35]:

Զիացմունքից առավել զարմանք է պատճառում այն իրողությունը, թե ինչպիսի գոհունակությամբ, ուղղակի հրճվանքով ընդունվեց մտավորականության շրջանում հայ կնոջ ամբիոն բարձրանալը: «...Թեև պատվելի տիկինը համեստաքար հայտնեց ամբիոնին իր անսովոր լինելը, բայց նա այնքան գեղեցիկ, պարզ, առանց շփոթելու, հավասար ու հաստատ ծայնով խոսեց, որ կարող էր պատիվ բերել ամեն մի եւլողական ատենարանի: Մենք այդ օրն առաջին անգամ տեսանք հայ տիկնոջը ամբիոնի վրա խառն բազմության առաջ խոսելիս... Զայ կինը և հասարակական ամբիոնը: Ո՞ր հայ մարդու սիրտը չէր բարախի այդ տեսարանից: Զայ կինը անվախ, համարձակ բարձրանում է ամբիոնի վրա և խոսում է այնպիսի մի նյութի վրա, որպիսին մանուկների դաստիարակությունն է»,՝ գրում էր հանդեսի ականատես Շաֆֆին:

Սովոր Բարայանը միաժամանակ հանդես է եկել նախադարձական դաստիարակության տեսական հարցերի շարադրմանը ժամանակի պարբերականներում («Մեղու Յայաստանի», «Արձագանք», «Դպրոց», «Մանկավարժական թերթ»): Յովկաններում նա ներկայացնում է Ֆրերելյի կյանքը ու գործունեությունը, հիմնավորում նրա համակարգը, մեկնարանում նախադպրոցական դաստիարակության ընդհանուր հիմնունքները, հիմնավորում խաղի նշանակությունը երեխայի կյանքում, խաղալիքի կարևորությունը խաղային գործունեության ընթացքում, վերլուծում ֆրերելյի և անվանի մանկավարժների ասույթները այդ ամենի վերաբերյալ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Զայ նոր գրականության պատմություն», հատ. Ե., Եր., 1962:
2. Գ. Լևոնյան, Յուշեր, Եր., 1959:
3. Ռ. Պատկանյան, Երեխի ժողովածու, հատ. 5, Եր., 1968:
4. <http://www.gorsu.am/gradaran.html>
5. <http://gradaran.mskh.am/taxonomy/term/924>

SOFIA BABAYAN'S FREOBELYANS AND ZRKINENTS KINDERGARTENS

MARINE SAHAKYAN

Summary

Our newest reality preschool education principles and content freobelyan the first kindergartens organized by Sofia Babayan, which with her practical work, articles and books contributed to the realization of these issues in our lives and the theoretical provisions.

Sofia Babayan believed that the date of birth of the child begins to form, so you need emergency care and care for him. It is a great mother, the governess and irreplaceable role in the family and the surroundings, the environment where they live, are formed, stature of the child takes the family ... should be fixed moral grounds, to the environment, the model and the mother of all control of the Regulatory.

Մարիաննա ԱՄԻՐԱՂՅԱՆ

ԴՊՄԴ նախադրոցական մանկավարժության և մեթոդիկամերի ամբիոնի հայցողը



Լեզուն օրենտիվ աշխարհը մարդու մերաշխարհին կապող օրակն է:
Վ. ՅՈՒԽՐՈԼՏ

Մարդկության զարգացման առաջընթացին զուգընթաց առաջ են գալիս համակարգային նոր հատկություններ, որոնք ունեն համընդհանուր բնույթ: 20-րդ դարի արդյունաբերական տեսությունը 21-րդ դարի սկզբին վերափոխվում է «գիտելիքի տեսության», հասարակությունը՝ «տեղեկատվական հասարակության» կամ «գիտելիքի հասարակության», «նարդիկային ներուժ» ավանդական արտահայտությունը վերափոխվում է «մտավոր ներուժի»: Ակնհայտ է դաշնուն հասարակության և կրթության փոխկապվածությունը: Եթե հասարակության մեջ ընթացող տեղաշարժեր հանգեցնում են կրթության բռվանդակության փոփոխմանը, ապա կրթությունն էլ իր հերթին նպաստում է հասարակության զարգացմանը: Ուստի, կրթության և գիտության առաջընթացը չպետք է լինի ինքնանպատակ: Այն պետք է սովորողին հաղորդի ոչ միայն կայուն, հիմնարար գիտելիք, այլև ձևավորի այնպիսի քաղաքացու, ով ունակ լինի ինքնուրույնաբար որոշումներ ընդունելու, ակտիվ հաղորդակցւելու, վստահ փոխհարաբերվելու հասարակության հետ: Այսինքն, կրթության նպատակն է օգմել մարդու համակողմանի զարգացմանը, նրա դրսևորմանը: Կրթության բովանդակությունը պետք է արտահայտի կապը հասարակության ու սուբյեկտի միջև՝ ապահովելով ոչ թե ուղղությունը օբյեկտի հրողությունից դեպի սուբյեկտ, այլ սուբյեկտի դեպի օբյեկտի հրությունը:

Այսինքն ինքը միշտոցով որտեղ կարևորվում է երդորությամբ՝ տրիադայի սկզբունքը, այն է՝ մարդ - լեզու - հասարակություն, որտեղ ակնհայտ է դրանում լեզվի միշտոցով սուբյեկտի կապն օրենքի մասնել ոչ թե պատրաստի մողելներ, այլև, հենվելով նրանց զարգացման առանձնահատկությունների վրա, որուր բերել նրանցում եղած նախադրյալները՝ բույլ տալով ինքնուրույնաբար դրսևորմանը:

Այս ամենն իրականանում է լեզվի, խոսքի միշտոցով, որտեղ կարևորվում է երդորությամբ՝ տրիադայի սկզբունքը, այն է՝ մարդ - լեզու - հասարակություն, որտեղ ակնհայտ է դրանում լեզվի միշտոցով սուբյեկտի կապն օրենքի մասնել ոչ թե պատրաստի մողելների հետ:

Երկրորդ ազդարարային համակարգը՝ խոսքը, տրված է միայն «homo sapiens» (բանական մարդ) տեսակին: Այստեղից էլ գույց ճշշտ կիրար «homo sapiens» արտահայտությունը փոխարինվեր «homo loquens» (խոսող մարդ) արտահայտությամբ [5, էջ 12]: Ուստի կարևոր է, որ մարդ արարածն իր խոսքն արտահայտի գրագետ ձևով, կապակցված, ինաստալից, կարողանա անկաշկանդ կերպով հաղորդակցվել հասարակության հետ:

Խոսքային հմտությունների ծևավորման հիմքը դրվում է դեռևս տարիքային վաղ փուլում, սակայն այն առավել շեշտադրվում է նախադրյալու գործական տարիքում, եթե երեխան կարողանում է ներքին վերահսկման ներարկել սեփական խոսքը, գնահատել թե՛ իր, թե՛ դիմացինի ասածը, որն իրականանում է հասարակիցների հետ հաղորդակցման ընթացքում:

Երեխայի խոսքի զարգացման հիմնախնդիրն անդրադարձել են թե՝ մանկավարժներ, թե՝ հոգեբաններ, թե՝ լեզվաբաններ: Յուրաքանչյուրը փորձել է յուրովի մեկնաբանել հիմնախնդիրը: Եթե լեզվաբաններին հետաքրքրում է, թե ինչպես է երեխան լեզվական համակարգից լեզվական միավորներն օգտագործում իր խոսքում, հոգեբաններին հետաքրքրում է, թե ինչպես է երեխան իրականացնում խոսքային գործունեություն, մանկավարժներին հետաքրքրում են այն պայմանները, որոնցում իրականացվում է երե-

* Ներկայացվել է 16.12.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

խայի խոսքի զարգացման գործընթացը, ապա մեզ առավել հետաքրքրում է դրանց միասնական լինելը: Այսինքն, երեխայի խոսքի զարգացման գործընթացն ուսումնասիրելու համար բավական չէ հենվել միայն նրա արտահայտած լեզվական երևույթների, իրականացրած խոսքային գործունեության ու ստեղծված համապատասխան պայմանների ուսումնասիրման վրա, այլ պետք է ենել այդ ամենի միասնությունից, որպեսզի առավել հստակ պատկերացնեն երեխայի արտաքին խոսքի ներքին կազմակերպումը, և դրա զարգացման համար կիրառել համապատասխան հնարներ ու մեթոդներ:

Եթե երեխայի խոսքի զարգացման գործընթացը դիտարկում ենք օնտոգենեզում (անհատական զարգացման փուլ), մեր առջև ծառանում է հետևյալ պատկերը. տարիքային տարրեր փուլերում՝ որոշակի լեզվական միավորներ արտաքրելիս, երեխան իրականացնում է իաղորդակցման տարրեր ծևեր, որին գործընթաց փոխվում են նաև առաջատար գործունեության տեսակները: Օրինակ, մանկկության փուլում, եթե որպես առաջատար գործունեություն համդես է գայիս հոլովական հաղորդակցումը մեծահասակի հետ, 1-2 ձայնավոր և անորոշ հնչյուններ արտաքրելիս, երեխան իրականացնում է իրադրային-անձնային, ավելի ուշ՝ իրադրային-գործնական հաղորդակցում՝ արտաքրելով առավել բարդ լեզվական միավորներ [1, էջ 112]: Փորձենք ասվածը պատկերել այդուսակի տեսքով (այսուսակ 1):

Նշանակում է՝ երեխայի խոսքի գործընթացը կազմակերպելիս պետք է ենել վերոհիշյալ օրինաչփություններից և երեխայի խոսքի զարգացմանն ուղղված գործընթացն իրականացնելով ոչ թե նրան պատրաստի խոսքային միավորներ հաղորդելով, այլև նրա մեջ ծևավորելով խոսքային հնտություններ ու ունակություններ: Այս հանգամանքն ապացուցվում է ևս մեկ կարևոր փաստով. երեխայի կողմից խոսքի զարգացման գործընթացը դիտարկվում է երկու՝ միմյանց փոխլրացնող կողմերի՝ լեզվի և խոսքի միասնության մեջ: Խոսքի զարգացումը ցույց է տալիս, թե երեխան որքանով է հասկանում, կազմակերպում ու կիրառում բառերը խոսքի մեջ: Այն բաժանվում է երկու մակարդակի. երեխայի կողմից ընկալվող և երեխայի կողմից արտաքրվող լեզվի: Ընկալվող լեզուն ցույց է տալիս, թե երեխան որքանով է հասկանում իրեն ուղղված խոսքը, իսկ արտահայտումը՝ թե որքանով է երեխան կարողանում արտահայտել իր մտքերը, որքանով է ճիշտ կիրառում բառերը նախադասու-

թյունների մեջ:

Լեզվի զարգացման ոլորտում տարրերում ենք արտասանական և ձայնային ունակությունների դաստիարակումը: Եթե արտասանական կողմը կապվում է երեխայի կողմից հնչյունների ճիշտ արտաքրեման հետ, ապա «ձայնային ունակություն» եզրույթն առնչվում է այն հանգամանքի հետ, թե ինչպես է հնչում ձայնը, արդյոք այն չափազանց բարձր է, արագ, թե դանդաղ [4, էջ 290]: Սակայն այս երկու ոլորտների միասնության մեջ պետք է տարրերել խոսքի հմաստային կողմը. չէ՞ որ հնչյունների ճիշտ արտաքրեման, բառերը նախադասությունների մեջ քերականուն ճիշտ կապակցելու ժամանակ երեխան հաղորդում է որոշակի միտք, նրա խոսքը ունի իմաստ: Ուստի, խոսքային ունակությունը ենթադրում է լեզվական միավորների ճիշտ ընտրությամբ արտահայտված իմաստալից խոսք: Վերջինիս զարգացմանը պետք է ուղղվի երեխաների հետ տարվող աշխատանքի կազմակերպումը:

Ավագ նախադպրոցական տարիքը չափազանց կարևոր փուլ է երեխայի խոսքի զարգացման համար, քանի որ այդ փուլում երեխան նախապատրաստվում է անցում կատարել դպրոցի առաջին աստիճան: Ուստի շեշտադրվում է երեխայի խոսքի զարգացման գործընթացի պատշաճ կազմակերպումը: Բացի այդ, տարիքային այս փուլում երեխան հասնում է հոգեֆիզիոլոգիական այնպիսի մակարդակի, որը նպաստավոր հիմք է ստեղծում խոսքի կատարելագործման համար:

Տարիքային այս փուլում ծևավորվում է երեխայի անձնավորությունը, գիտակցությունը, նաև կարողանում է մտածել ընդհանուր հակացությունների շուրջ: Այս տարիքում բառը երեխայի համար ծերք է բերում ընդհանրացնող բնույթ:

Եթե միջին նախադպրոցական տարիքում երեխայի վարեագիծն անկայուն է, ապա ավագ նախադպրոցական տարիքում կայունանում է, կարգավորվում են հոգեկան գործընթացները: Ինարկե, վերջինս ունի նաև ֆիզիոլոգիական բացատրություն. մեծանում է գլխուղեղի կեղևի դերը երեխայի վարքի կարգավորման գործում, կատարելագործվում են բարձրագույն նյարդային համակարգի գործընթացները: Զևսվորվում և կատարելագործվում է սեփական գործողությունները պահանջորդելու, որոշակի մտահացումներ իրականացնելու կարողությունը, որն ի տարբերություն պարզ մտադրության, պարունակում է պատկերացում ոչ միայն գործողության նպատակի, այլև դրան հասնելու եղանակ-

Աղյուսակ 1

Խոսքային հաղորդակցման գործառույթները նախադրոցականի գործունեության առաջատար ձևերում

| <i>Տարիք</i> | <i>Առաջա-տար գործունեության տեսակները</i> | <i>Տարիք</i> | <i>Խոսքային գործունեության տեսակները</i> | <i>Խոսքի զարգացման փուլերը</i> | <i>Լեզվական միջոցները</i> |
|--|---|--|---|--|---|
| 0-1 տ. մանկի-կային փուլ | հոգական հաղորդակցում մեծահասակի հետ | 0-4 ամսական 2 ամսական 4-5 ամսական 6 ամսական 7-8 ամսական 8-9 ամսական | իրադրային-անձնային իրադրային-գործնական | նախաթորով-վանք թորովանք պասիվ խոսքի փուլ | 1-2 ձայնավոր և անորոշ հնչյունների արտաբերում կայուն հնչյունների արտաբերում ձայնավորից ու բաղաձայնից բաղկացած պարզ զուգորդությունների արտաբերում բարի վանկային ուր վագիծ, կարճ հրամայական և հարցական նախադասությունների հասկացում |
| 1-2,5 տարեկան մանկություն | առարկայական գործունեություն | 1 տարեկան 2 տարեկան | ճանաչողական ունակությունների ձևավորում, ընդհանրացում | ակտիվ խոսքի փուլ իրադրային խոսք, երկխոսության առաջացում | 1-ին բառերի արտաբերում, հնչյունը նույնականացնելու ունակություն, հնչյուն նային լսողության ձևավորում բառերի կապակցում, բառ-նախադասությունների կազմում և հասկացում |
| 2,5-6 տարեկան նախադրոցական տարիք | խաղային գործունեություն | 4-5 տարեկան 5-6 տարեկան | գիտակցության նշանային ֆունկցիայի, իմտելեկտուալ կարողությունների ձևավորում, վարքի կարգավորում ինքնակարգավորում, առանձին գործողությունների պլանավորում ոչ իրադրային-անձնային հաղորդակցում | բռնադակային (կոնսերվատային) խոսքի փուլ մեջախոսություն | ներքին խոսք բարի հնչյունային կողմի գիտակցում, բարդ ստորադասական նախադասությունների կիրառում և հասկացում |

Ների մասին: Սեփական վարքը ղեկավարելու կարողությունը դրական ազդեցություն է ունենալ երեխայի ուշադրության, հիշողության, նտածողության վրա, որոնք ել իրենց հերթին առավել նպաստում են խոսքի զարգացմանը: Տարիքային այս փուլում երեխաների փոխարարե-

րությունները հիմնվում են ավելի կայուն մտերմության, կապվածության վրա: Խմբի ներսում գտնվող երեխաները միմյանց նկատմամբ ունեն համակրանք և միշտ միասին են խաղում: Միաժամանակ երեխաները դառնում են ավելի քննադատ հասակակիցների նկատմամբ: Ընկերա-

կան հարաբերությունների ամրապնդման հետ մեկտեղ՝ առանձին երեխանների շրջանում ծագում է հասուլ կապվածություն խճի անդամների միջև, կազմավորվում են համատեղ գործունեության պարզագույն ձևերը [3, էջ 372]:

Վերոհիշյալ բոլոր առանձնահատկությունները, անշուշտ, իրենց ազդեցությունն են բողոքում խոսքի զարգացման վրա: Խոսքի զարգացումը ձեռք է բերում նոր ձևեր ու կառույցներ: Կոնկրետ իրավիճակներում երեխան իրականացնում է իրադրային (սիտուատիվ) խոսք, որն իրենից ներկայացնում է հարցեր՝ կապված նոր առարկաների ի հայտ գալու, դրանց ծանրացման հետ: Իրադրային խոսքին հասուլ է ենթականների դրւում նետումը և պահպանը շատ տեղ է հատկացվում դերանուններին, որոնք, սակայն, չեն հստակեցնում խոսքի բովանդակությունը: Բայց երեխայի գրուցակիցը «պահանջում է» խոսքային համատեքստը, որն անկախ է իրադրային խոսքից: Ենչպես շրջապատի ազդեցության տակ, այնպես էլ երեխայի հաղորդակցման շրջանակի ընդլայնման, ծանաչողական հետաքրքրությունների աճի հետ կապված՝ երեխան իր խոսքը ձևավորում է լսողի համար առավել հասկանալի ձևով: Նա տիրապետում է խոսքի բավականին բարդ կառույցի: Երեխայի խոսքը կառուցվում է ըստ լեզվի օրինաչափությունների, հարուստ բառապաշտարին ու բառային արտահայտություններին տիրապետելով օգնում է ազատորեն ընտրել լեզվական համապատասխան միջոցներ՝ կապակցված խոսք կառուցելու համար: Երեխան իր խոսքը շարադրում է տրամաբանորեն կապվակցված, գործողությունների հաջորդական շարադրմանը, հստակ, քերականորեն ծիշտ և պատկերավոր: Խոսքի զարգացումն ընթանում է բարից դեպի առարկան, եռանկարդար կառարդարակ խոսքը դառնում է առավել կատարյալ՝ իր հնչյունաբանական, ինաստրանական ու քերականական կողմերով: Ավագ նախադպրոցական տարիքի երեխան երե փորձում է շարադրել սեփական նմտերը, առաջ է գալիս այդ տարիքին համապատասխան խոսքային կառույց: Նա սկզբից օգտագործում է դերանուններ, ապա, զգալով իր ասածի ոչ լիսարժեք լինելը. կիրառում է նաև գոյականներ, որն էլ համոխանում է երեխայի խոսքի գոյականական փուլը: Արդյունքում երեխան տիրապետում է բովանդակյին խոսքին, որտեղ բավական շատ է նկարագրվում իրավիճակը: Տարիքային այս փուլում առաջ է գալիս բացատրական խոսքը, որը երեխայից պահանջում է նորի հաջորդական շարադրում, իրավիճակի հիմնական կապերի և հա-

րաբերությունների առանձնացում: Երեխայի խոսքում նկատվում է նաև մեկ այլ կարևոր յուրահատկություն: առաջ են գալիս որոշակի դադարներ, որոնք երեխայից պահանջում են որոշակի ժամանակ՝ միտքը կազմակերպելու և լեզվական միջոցներով դրանք օբյեկտիվացնելու համար: Վերջինս նշանակում է, որ երեխան իր խոսքը ենթարկում է ներքին վերահսկման՝ այն կառուցելով ըստ լեզվի օրենքների ու օրինաչափությունների: Այս երևույթն ակնհայտ է դառնում հատկապես հասակալիցների, ինչպես նաև մեծահասակների հետ հաղորդակցման ժամանակ:

Վերոհիշյալ առանձնահատկություններից հանգում ենք այն եզրակացության, որ երեխայի խոսքի զարգացմանն ուղղված աշխատանքը պետք է կազմակերպվի ըստ նրա՝ լեզվի նկատմամբ ունեցած յուրահատկությունների ու առանձնահատկությունների, որոնք իրենց արտահայտությունը պետք է գտնեն ժամանակակից կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերից մեկում, այն է՝ կրթական ծրագրերում: Ուստի, չափազանց կարևորվում է կուռ, համակարգված ու բովանդակալից ծրագրերի առկայությունը նախադպրոցական հիմնարկներում: Ասվածը, անշուշտ, վերաբերում է ծրագրերի խոսքի զարգացման բաժնին, որն այսոր ունի վերանայման և լրացման խնդիր:

Վրդի կրթական համակարգում առանձնացնում ենք նախադպրոցական կրթական հետևյալ ծրագրեր՝ «Նախադպրոցական կրթադաստիարակչական համալիր ծրագիր» (1998), «Մանկապարտեզի ավագ խճի (5-6 տ.) կրթական համալիր ծրագիր» (2007), «Պարտեզ» նախադպրոցական կրթական ծրագիր (2008):

Վերոհիշյալ ծրագրերում արտահայտված են միայն պահանջներ՝ կապված այս կամ այն խոսքային խճորի լուծման հետ: Դրանցում ուշադրություն է դարձված խոսքի միայն արտաքին կողմին ու արտաքին դրսերումներին: Մինչդեռ խոսքը, մինչև արտաքինին անցնելը, անցնում է երեխայի ներքին մեխանիզմներով, բեկվում նրա ներքին հոգեկան կառույցներով, նոր միայն ձեռք բերում արտաքին դրսերում: Մյուս կողմից էլ, արտաքին խոսքը վերահսկվում է ներքին խոսքով: Խոսքարտահայտման այս ամբողջ գործընթացը մեր ուշադրության կենտրոնում է, որի հաշվառման է միայն նպաստում խոսքի լիարժեք ձևավորմանը: Մեր մոտեցումը հենվում է խոսքի արտաքին ու ներքին կողմերի ամբողջական ընկալման վրա: Այսինքն, խոսքային գործունեությունն իրենցից ներկայացնում է երեխայի կողմից որոշակի ներքին դժվարությունների

հաղթահարում: Ուստի, խոսքի զարգացման մեջ թողիկան, լուծելով մի շարք խնդիրներ, պետք է նաև կիրառականություն գործնականություն կարող է լինել:

այն դարձնելով տարարությունների հաղթահարման գործիք: Ընդ որում, այդ դժվարությունները կարող են ծագել թե՝ հասակակից-

| | |
|--|--|
| Խոսքի զարգացման խնդիրները | Ուսուցման արդյունքում ձեռք բերված տարեվերջյան չափորոշիչները |
| 1. հնչյունային կուլտուրա | <ul style="list-style-type: none"> հնչարտասանումը ճիշտ է և հստակ, ձայնի ուժը, խոսքային շնչառությունը և արագությունը համաչափ են, ձևավորված է լսողական ուշադրությունը բառի մեջ առանձնացնում է առանձին հնչյուններ՝ յուրաքանչյուր արտաքերելով համաշահորեն, դրանք ենթակելով ներքին վերահսկման, կարողանում է տրված բառաշարքից առանձնացնել համապատասխան հնչյունները |
| 2. բերականական կողմանը | <ul style="list-style-type: none"> կողմնորոշվում է ժամանակի մեջ՝ ճիշտ կիրառելով բայ ի ժամանակածները, ճիշտ է կազմում գոյականի հոգնակի թիվը, բառերն արտահայտում է ճիշտ խոնարհմամբ, կազմում է պարզ և բարդ նախադասություններ՝ գիտակցելով բառի տեղը և դերը նախադասության մեջ, հեշտությամբ հաղթահարում է առաջադրված խոսքային խնդիրները |
| 3. բառապաշտության հարացուցում | <ul style="list-style-type: none"> կիրառում է խոսքի տարրեր մասեր, ճիշտ է ընտրում հոնանիշներ, հականիշներ, կիրառում է բազմինստ բառեր, նույնատիպ առարկաներն անվանում է մեկ ընդհանրացնող բառով, ընթոնում է սեփական խոսքի իմաստային կողմը, վերահսկում այն և փոխում փոփոխվող իրավիճակին համապատասխան |
| 4. կապակցված խոսքի զարգացում | <ul style="list-style-type: none"> պատմելու ընթացքում պահպանում է դեպքերի հաջորդականությունն ու տրամաբանությունը, հորինում է պատկերվածին նախորդող ու հաջորդող դեպքեր, ծավալում է երկխոսություն, որի ընթացքում տալիս է հարցեր և պատասխաններ, քննարկումների ժամանակ հաղթահարում է ստեղծված խոսքային դժվարությունները, սեփական խոսքը ենթակելով ներքին վերահսկման՝ օգտվում է շղթայական և զուգորդական կապերից, ընկալում է տեքստի կառուցվածքը, արտահայտում է գրագետ խոսք, որտեղ հանդես են գալիս համապատասխան խոսքային դադարն եր |
| 5. գեղարվեստավաճար գուսանության հետ ծամրությունը | <ul style="list-style-type: none"> գիտակցում է գրքի դերն ու նշանակությունը, կարողանում է գլխավորն առանձնացնել երկրորդականից, ընկալում է ստեղծագործության բնույթը ու կառույցը, տեքստի կառույցը ենթակելով ներքին վերահսկման՝ ներկայացնում է դրա առանձին մասերը, կարողանում է բնութագրել կերպարներին՝ որոշակի գնահատական տալով նրանց, ակտիվություն մասնակցում է նյութի համատեղ քննարկմանը |
| 6. գոյաճանաչության համար ուսուցուցում | <ul style="list-style-type: none"> բառի մեջ տարբերում է հնչյունները, վանկերը, ճիշտ է արտասանում կրկնակ բաղաձայնները, ճանաչում է բոլոր տառերը՝ մեծատառերը տարբերելով փոքրատարելու դիրք, ձևավորված է թղթի տարածական ընկալումը |

ների, թե՝ մեծահասակների հետ հաղորդակցման ընթացքում: Հետևաբար, խոսքի զարգացման ծրագրային խնդիրները պետք է բիւցվեն այս հիմքից՝ նպաստելով երեխայի մտքի ակտիվացման ու սեփական խոսքի հարստացմանը: Այստեղից էլ, խոսքի զարգացման ծրագրերը լրացվում են ավագ նախադպրոցականի խոսքային նոր չափորոշչներով, այն է՝ սեփական խոսքի վերահսկում և գնահատում, խոսքային հաղորդակցման ընթացքում առաջացած դժվարությունների հնքնուրույն հաղորդարում: Այսինքն, կարևորվում է խոսքային ընդունակության զարգացումը, որն էլ ենթադրում է խոսքային և հաղորդակցական ունակությունների ձևավորում:

Եթե փորձենք գծապատկերի տեսքով ներկայացնել մեր կողմից առաջադրվող ավագ նախադպրոցականի խոսքի զարգացման չափորոշչները, ապա կունենանք հետևյալ տեսքը (տե՛ս աղյուսակ 2):

Հետևաբար, երեխայի խոսքի զարգացման մեթոդիկան պետք է ուղղված լինի երեխայի խոսքային հնտությունների և ունակությունների ձևավորմանն ու զարգացմանը: Վերջինս նշանակում է, որ երեխայի հետ տարվող աշխատանքը պետք է լինի պահանջորված և իրականացվի քայլ առ քայլ: Փորձենք ասվածքը փաստել փորձիկ օրինակներով, որոնք ուղղված են երեխայի ինքնուրույն խոսքի, խոսքային հնտությունների զարգացմանը:

Դաստիարակը երեխաներին կարող է առաջդրել.

1. Կորինել համելուկներ՝ նկարագրելով մտքում ունեցած առարկան, թե ինչ ձև ունի այն, ինչ մասերից է կազմված, ինչ գույն ունի, այդ առարկայով ինչ գործողություն կարելի է կատարել, ինչ նյութից է այն պատրաստված,

2. Երեխաներին ցույց տալով թե՝ ցամաքային, թե՝ ջրային կենդանիներ պատկերող նկարներ՝ առաջարկել ստանձնել այդ կենդանիներից որևէ մեկի ները, նկարագրել դրան բնորոշ առանձնահատկությունները, բացատրել, թե ինչ-

պես մեկ կենդանին կարող է վերափոխվել մեկ այլ կենդանու: Օրինակ, արջն ինչպես կարող է դառնալ ծուկ. մարմինը պետք է փոքրանա, մորթին փոխարինվի թեփուկներով, թաթերը՝ լողակներով և այլն,

3. Երեխաներին մասնագիտություններին ծանոթացնելիս, դրանք ուսուցանել ըստ որոշակի կառույցի:

- անվանել մասնագիտությունը,
- անվանել այն աշխատավայրը, որտեղ աշխատում է այդ մասնագիտություն ունեցող անձը,
- նկարագրել, թե ինչ հագուստ է նա հագնում,

• բացատրել, թե ինչ է հարկավոր այդ աշխատանքն իրականացնելու համար, ինչ անհրաժշտ նյութեր կամ գործիքներ են կիրառվում,

- ինչ գործողություններ է կատարում այդ մասնագիտությանը տիրապետող անձը:

Նման կերպ իրականացվող ուսուցումն ավելի հստակ է, մատչելի, պարզ և ընթանելի: Այն խթանում է երեխայի մտքի ակտիվացումը, որն իր օբյեկտիվացումն է ստանում նրա խոսքում՝ համապատասխան լեզվական միջոցների օգնությամբ: Բացի այդ, այն երեխաների համար ավելի հետաքրքիր է ու գրավիչ:

Հետևապես, ինչո՞ւ չի կարող երեխայի՝ լեզվի նկատմամբ ունեցած յուրահատկությունների, նրա ներքին ներուժի վրա և խոսքի զարգացման մեթոդիկան չկազմակերպենք այդ առանձնահատկություններից ելնելով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ахутина Т. В., Горелов И. Н.**, Исследование речевого мышления в психолингвистике, М., 1985, 240 с.
2. **Залевская А. А.**, Проблемы организации внутреннего лексикона человека, К. 1977, 75 с.
3. **Helen Bee**, 'The Developing Child', New York, 1989, 369-472 р.
4. "The Crosslinguistic Study of Language Acquisition", edited by Dan Isaac Slobin, New Jersey, 1986, 255-365.
5. **Virginia P. Clark, Paul A. Eschholz, Alfred F. Rosa**, Language, New York, 1984, 720 p.

MODERN APPROACHES TO SPEECH DEVELOPMENT OF SENIOR PRESCHOOL AGED CHILD

MARIANNA AMIRAGHYAN

Summary

In our article we have accented the new standards of senior preschool aged child's speech according to the demand of today's development, which should be reflected in nowadays educational curriculums. We have also pointed out the ways, which stimulate the development of speech and communicative skills of the children aged from 5 to 6.

ՆԱԽԱԴՐՈՅԱԿԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋԱՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Մարիամնա ԱՎԱԳՅԱՆ

ՀՊՄԴ նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի դասախոս



Ախսադպրոցական տարիքում հասակակիցների հետ փոխհարաբերությունները կառուցվում են մեծահասակների միջնորդությամբ, որն էլ ապահովում է կրթական և դաստիարակչական կարևոր

խնդիրների լուծումը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել (Ռ. Ա. Սմիռնովա, Ա. Գ. Ուրզակյա, Ա. Կ. Յակոբսոն, Լ. Ն. Արտամովա), որ տարիքային տարրեր փուլերում (կրտսեր, միջին, ավագ նախադպրոցական տարիք), համապատասխանաբար փոխվում է երեխաների հաղորդակցական գործունեության բովանդակությունը:

Կրտսեր նախադպրոցական տարիքում երեխան հաղորդակցվում է հասակակիցների հետ հետաքրքրասիրությունից դրվագ, փորձում է բավարարել հետաքրքրությունները, նույն գործողությունները բխում են փոխգործունեության մասնակից դաշնալու պահանջմունքից:

Միջին նախադպրոցական տարիքում երեխան ցանկանում է ոչ միայն մասնակցել համատեղ գործունեությանը, այլ նաև դաշնալ այդ գործընթացի անմիջական կրողը: Այս փուլում երեխաների գործողությունները բխում են համատեղ գործելու, ստեղծագործելու պահանջմունքից:

Ավագ նախադպրոցական տարիքում դրսնորվում է համագործակցելու պահանջմունք, հասակակիցն հուզական աջակցություն ցուցաբերելու, փոխօգնության կարողություններ: Որակապես փոխվում են երեխաների գագամունքները:

Դրանք աստիճանաբար ձեռք են բերում սոցիալական ընույթ [1]:

Երեխաների համագործակցային կարողությունների ձևավորման նպատակով գործունեության տարբեր ձևերում փորձենք բացահայտել նրանց պահանջմունքները՝ պարապմունքների ընթացքում համագործակցելու ցանկությունը, հաղորդակցման դրդապատճառները, ինչպես նաև համագործակցային կարողությունների խարարնան պատճառները:

Խաղային գործունեության ընթացքում երեխաների պահանջմունքները դրսնորվում են հետևյալ կերպ՝ կրտսեր նախադպրոցական տարիքում երեխաները խաղում են կողմանակողի, կատարում նույնատիպ գործողություններ, չեն խանգարում միմյանց: Հետզհետև նրանք հետաքրքրություն են ցուցաբերում խաղային գործողությունների հանդեպ, դրսնորում հուզականություն և գործողություններին միավորվելու փորձ: Սակայն կան երեխաներ, որոնք անտարբեր են, միայնակ:

Միջին նախադպրոցական տարիքում խաղընկերոց ընտրության հարցում, կարծես, հուզականությունը երկրորդ պլան է մնում, և առաջնային է դառնում հետաքրքրությունների հաշվառում: Ձևավորվում են խաղային խնդեր, որոնց գործողությունները նպատակատղված են ընդհանուր գաղափարի շուրջ: Առավել աչքի են նեկանում ակտիվ երեխաները և ուղղորդված խաղը: Շատ երեխաներ (ամաչկոտ, պասիվ) պարզապես չեն նաև ակտուատ, անուշադրության են նաև նպանվում: Իհարկե, կան որոշ երեխաներ, որոնք ընկերասիրությունից դրվագ, փորձում են նրանց ներառել խաղային գործունեության մեջ:

Ավագ նախադպրոցական տարիքում երեխաները խաղընկերոց հանդեպ հիմնականում

* Ներկայացվել է 16.12.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

դրսւորում են հոգատար վերաբերմունք, հաշվի են առնում միջյանց հետաքրքրություններն ու ցանկությունները, զգուում են համբնդանուր արդյունքի [3]: Սակայն հիմնականում պյուժետադերային խաղերի ընթացքում երեխաների միջև դերերի բաշխնան ժամանակ կոնֆլիկտներ են առաջանում, և արդյունքում որոշ երեխաներ միայն կարևոր դերի են ստանձնում, մյուսները պարզապես լուր ու կատարում են կամ էլ առանձնանում, խաղում միայնակ:

Տարբեր պարապմունքների և աշխատանքային գործունելության ընթացքում կատարված դիտարկման արդյունքում փորձեցինք բացահայտել ավագ նախադպրոցականների համագործակցման դրդապատճառները: Դրանք հիմնականում դրսւորվում էին ընկերոջ հանդեպ հոգատար վերաբերմունքի ցուցադրմամբ, նրացանկությունների ու հետաքրքրությունների հաշվառմանը, միջյանց հետ դրական հարաբերությունների հաստատման կարողություններով, ինչպես նաև համատեղ գործունելության արդյունքի գնահատմամբ:

Դիմոցից վեց տարեկանում համագործակցային կարողությունների խաթարման պատճառները հիմնականում սոցիալականացման դժվարություններն են, որոնք դրսւորվում են ամաչկոտությամբ, նեղացկոտությամբ, սեփական ուժերի հանդեպ անվստահությամբ, ցածր ինքնագնահատականով [2]:

Դաղորդակցման դժվարությունները ունեն նաև գերակտիվ, դանաղակոտ, երեսառած, ցուցադրական վարքագործով, անկարգապահ (նեծահասակներին չենթարկվելու գերակայությամբ) երեխաները:

Այդ են վկայում երեխաների հետ կազմակերպված հարց ու պատասխանները:

- Ինչո՞ւ ես խանգարում ընկերոջը:
(Այդպես եմ ուզում):
- Ինչո՞ւ ես առանձնացել խմբից:
(Ես ուզում եմ մենակ խաղալ):
- Ինչի՞ց ես նեղացել:
(Ինձ հետ ոչ ոք չի խաղում):
- Ո՞ւմ հետ ես ուզում խաղալ:
(Ոչ մեկի):
- Երբ ընկերությունը քո կանաչ գույնի մատիտը, ինչո՞ւ չտվեցիր:
(Որովհետև մատիտն իմն է):
- Ինչո՞ւ ես թաքցնում նկարածի:
(Գեղեցիկ չի):
- Դաստիարակի հետ ես ուզում խաղալ, թե՝

ընկերներիդ:

- (Դաստիարակի):
- Ինչո՞ւ ես լաց լինում:
(Մայրիկիս եմ ուզում):
- Ճավատացա՞ծ ես, որ քո նկարածը բոլորից լավն է:

(Այո, իմն ամենա լավն է):

- Ինչո՞ւ է քեզ թվում, որ դու լավ չես արտասանում, երգում:

(Դաստիարակն է ասել):

- Քեզ դուր է գալիս միայնակ խաղալը, ինչո՞ւ:
(Այո, որովհետև չեմ սիրում, երբ իմ խաղալիքը վերցնում են):

- Զբասանքի ժամանակ ինչո՞ւ նեղացրիր փոքրիկներին:

(Խանգարում իմն ինձ):

- Ինչո՞ւ ես ուզում խաղալ քեզանից մեծերի հետ:

(Նրանց հետ լավ է):

- Ինչո՞ւ ես անընդհատ հակառակն անում, ասում:

(Այդպես եմ ուզում):

- Ինչո՞վ է պայմանավորված քո անհանգիստ վիճակը:

(Ուզում եմ տուն գնալ):

- Ինչո՞ւ ես խուսափում քո ընկերներից:
(Ես մենակ ինձ լավ եմ զգում):

- Ինչո՞ւ չմիացար համատեղ նկարչությանը:
(Ես լավ չեմ նկարում):

- Ինչո՞ւ ես անընդհատ անհարկի միջանտում:
(Որովհետև իրենք ծիշտ չեմ ասում):

- Ո՞վ է քեզ նեղացրել, վիրավորել:
(Երեխաները):

- Ինչո՞ւ ես թշնամացել Դավիթի հետ:
(Նա իմն հետ չի խաղում):

- Ինչո՞ւ ես խանգարում ընկերներից:
(Որ իմն էլ ընդգրկեն իրենց խաղի մեջ):

- Դարցերի պատասխանների արդյունքները թույլ են տալիս փաստել, որ ավագ նախադպրոցական տարիքում աշկա են համատեղ գործունելության խաթարումներ, որոնց ինմանական պատճառ կարող են հանդիսանալ հետևյալ վարքագծային դրսւորումները՝ անաչկոտությունը, նեղացկոտությունը, կոնֆլիկտայնությունը, ագրեսիվությունը, երեսառածությունը, ինքնամփոփությունը, տագնապայնությունը, քերահավատությունը, չափազանց ինքնավաստահությունը և այլն:

Այսպիսով, նախադպրոցականի համագործակցային կարողությունների զարգացման հա-

մար անհրաժեշտ է բացահայտել երեխաների պահանջնունքները գործունեության տարրեր ձևերում, համագործակցման դրդապատճառները, ինչպես նաև համատեղ գործունեության խարարնան պատճառները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ավագյան Մ. Ս.**, Նախադպրոցականի համագործակցային կարողությունների ձևավորման առանձնա-

- հատկությունները, Եր., 2010:
- 2. Յակորյան Ն., Գևորգյան Ս. Յովհաննիսյան Ա., Դավթյան Ա., Սամկավարժական հաղորդակցում, Եր., 2010:
- 3. Յովհաննիսյան Ա. Ա., Նախադպրոցական դաստիարակության հարցեր, Վա-Նա, Եր., 2003:
- 4. **Божович Л. И.**, Личность и ее формирование в детском возрасте. М., 1968.
- 5. **Божович Л. И.**, Проблема развития мотивационной сферы ребенка //Изучение мотивации поведения детей и подростков. М., "Педагогика", 1972.

THE SPECIALTIES OF DEVELOPMENT OF PRESCHOOL CHILDREN'S COOPERATIVE SKILLS

MARIANNA AVAGYAN

Summary

In the article the author represents the specialties of development of preschool children cooperative skills referring to the content of cooperating motivations and to the reasons of damage of cooperative activity.

ՆՏԴ 37.01:31

**«ՀԱՍԱՇԽԱՐՁԱՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ
ԻՐԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՍԱԿԱՐԳԻ ՎՐԱ» ԽՆԴՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՈՅՏԱՐՅՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ***

Միթրա ԱԲԴՈՒԼԱՐԻ

ԵՊՀ մանկավարժության ամբիոնի ասպիրանտ



Բետազոտությունն իր առջև խնդիր է դրել քննել և գնահատել Իրանի կրթության համակարգի հիմնախնդիրները համաշխարհային ազգային առաջնային գործոքաբների պայմաններում:

Սոցիարքում բարեկացած է երկու առանձին և տարբեր խնդրերից: Առաջին խումբը կազմում են ԻԻՀ-ի հանրակրթական դպրոցների տնօրենները և ուսուցիչները՝ թվով 920000 մարդ, ովքեր աշխատում են Իրանի 31 նահանգներում: Սոցիարքում երկրորդ խումբը են կազմում բուհերում աշխատող 63255 դեկաններ և դասախոսներ՝ Իրանի 31 նահանգներից: Նկատի առնելով ուսումնասիրվող բազայի խոշորամասշտար և լայնածավալ լինելը և ամբողջ երկրով մեկ տարածվածությունը, նաև ժամանակի և բյուջեի սղությունը, կատարվել է բազմափուլ կլաստերային (ճյուղային կամ ողկուզային) ընտրություն: Ակզրում հանրակրթության բաժնում պատահականության սկզբունքով ընտրվեցին երեք նահանգներ՝ Թեհրանը, Խուզխստանը և Ֆարսը, այնուհետև այդ երեք նահանգներից ընտրվեցին 7 քաղաք և կորավարչական շրջաններ: Ինչ վերաբերում է բարձրագույն կրթությանը, ապա 3 նահանգներից ընտրվեցին 7 բուհեր: Ըստ Քերսե և Մորգանի այլուսակի, պարզ պատահականության սկզբունքով ընտրվեցին 384 տնօրեններ և ոսուցիչներ, որոնք կազմնեցին հանրակրթության աշխատողներին ներկայացնող վիճակագրա-

կան ընտրանքը, նաև նույն սկզբունքով ընտրվեցին 27 դեկաններ և 357 դասախոսներ, որոնք կազմեցին բարձրագույն կրթության աշխատողներին ներկայացնող ընտրանքը: Ընդհանուր առմանը, ընտրանքը ներառում է 768 մարդ, 464-ը՝ արական սերի և 304-ը՝ իգական սերի ներկայացնություններ:


Հարցաքերթիկը բաղկացած է 28 հարցերից, որոնցից 10-ն ունեն պատասխան-այնումներ, իսկ 18 հարցադրումներ գնահատվում են աստիճանական սանդղակներով («Բարձր», «Միջին», «Ցածր» և «Կարծիք չունեմ»): Հավաքագրված տվյալների երկրորդական մշակումը կատարվել է համակարգչային **spss** ծրագրով, օգտագործվել է քայլ քառակուսի կորելյացիայի (համահարաբերակցության) փորձարկումը: Ստորև ներկայացնում ենք 28 հարցերից երեքը և սուագված արդյունքների վերլուծությունը:

Հարց 1. Ձեր կարծիքով, կառավարման ո՞ր մեթոդներն են առավել նպատակահարմար Իրանի կրթության համակարգի գլորալացման համար:


Ինչպես ցույց են տալիս գծապատճեր 1-ի և գծապատճեր 2-ի տվյալները, երկու խնդրերի տեսակներից էլ կենտրոնացված կառավարումը (**տարրերակ1-ը**) նպատակահարմար մեթոդ չէ Իրանի կրթության համակարգի գլորալացման համար: Բուհերի աշխատողների մեծ մասը նախընտրությունը տվյալ է ապակենտրոնացված մեթոդին (**տարրերակ 2-ին**), իսկ հանրակրթության աշխատակիցների գգալի հատվածը, հավանելով ապակենտրոնացված մեթոդը, այդուհանդերձ ընտրել է միջին ծեր կամ նաև կենտրոնացվածը (**տարրերակ 3-ը**), ըստ որի՝ խոշորանասշտար որոշումներն ու քաղաքականու-

* Ներկայացվել է 16.12.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

Գծապատկեր 1.Տնօրենների և ուսուցիչների պատասխանների տոկոսային տվյալները



Գծապատկեր 2.Դեկանների և դասախոսների պատասխանների տոկոսային տվյալները




թյունը աեւոք է սահմանվեն մայրաքաղաքում, իսկ ավելի փոքր մասշտարով որոշումներ՝ կայացվեն նազգերում և շրջաններում [4]: Բուհերն ունեն գիտական առավել հզոր ներուժ, շահախնդիր են տեղայի և արտասահմանցի ուսանողներ ներգրավելու, մրցակցության մեջ մտնելու և ավելի մեծ եկամուտներ ստանալու համար, մյուս կողմից՝ ձգտում են սերտ համագործակցություն ծավալել տարբեր կենտրոնների, այդ թվում արտադրական և արդյունաբերական ոլորտների հետ, հետևաբար մեծ ցանկություն ունեն ապակենտրոնացվելու և ներքին ու արտասահմանյան բուհերի հետ մրցակցելու համար: Նոյնը չի կարելի ասել հանրակրթության մասին, որն ունի հսկայածավալ ու ծանրաբեռնված կառուցվածք և ֆինանսական խիստ կախվածություն պետությունց, չունի բավականաչափ բարձրակարգ մասնագիտական ներուժ և ստեղծագործ ու եկամտաբեր ուժեր, այդ իսկ պատճառներով ընտրել է միջին ուղին և մեթոդը [1]:

Դարց 2. Ձեր կարծիքով, իրանում կրթական միջազգային հաստատությունների բացումն ի՞նչ չափով կարող է նպաստել իրանի կրթության համակարգի գլոբալացմանը:


Ինչպես ցույց են տալիս գծապատկեր 3-ի և գծապատկեր 4-ի տվյալները, թե՛ դեկաններն ու

դասախոսները և թե՛ ուսուցիչներն ու տնօրենները մեծ մասամբ այն կարծիքին են, որ կրթական միջազգային հաստատությունների բացումն իրանում նեծապես կարող է նպաստել իրանի կրթության համակարգի գլոբալացման գործընթացին: Մեր կարծիքով՝ միջազգային և արտասահմանյան կրթական հաստատությունների բացման առաջին և գլխավոր ազդեցությունն այն է, որ կարող է մատնանշել երկրի ժողովրդավարական և բաց լինելու փաստը, որտեղ տարբեր տեսակետները կարող են հավասար պայմաններում գոյակցել իրար կողքի, փոխլրացնել միմյանց և մրցակցել: Իրանում աշխատող արտասահմանյան յուրաքանչյուր բուհ, ունենալով իր ուսումնական ինքնուրույն ծրագրերը և դասերի բովանդակությունը, յուրատիպ մշակույթը ու միջազգայիրը, իրանցի ուսանողին հնարավորություն կտա նվազագույն ծախսերով սեփական երկրում ապրել և զգալ այլ երկրի մթնոլորտը, ծանոթանալ այլ երկրների մշակույթին ու քաղաքակրթությանը (ինչը գլոբալացման նախադրյալներից է), նաև գնահատել հարմարման և հանդուրժողականության սեփական աստիճանը: Դա ուսանողին հնարավորություն է տալիս արմատավորել ու գնահատել նաև տեղական մշակույթը, իմանալ նոր մշակույթի ներգործու-

Գծապատկեր 3. Տնօրեմների և ուսուցիչների պատասխանների տոկոսային տվյալները



Գծապատկեր 4. Դեկանների և դասախոսների պատասխանների տոկոսային տվյալները



թյան խորըն ու ծավալը կամ, այլ կերպ ասած, «իմունիտետ» ծեռք բերել օտար մշակույթների ծայրահեղ ազդեցության և սեփական արժանատերի կորստի դեմ [2]: Բացի այդ, արտասահմանյան համալսարանների բացումը մրցակցության կմիջի ներքին տեղական բուհերին և նրանց կողուղի բարելավել իրենց մակարդակը: Միջազգային համալսարանները փորձաքարտ են նաև հանրակրթության համար, քանի որ բացահայտում են 12-ամյա հանրակրթական դպրոցն ավարտած աշակերտի պատրաստվածությունը օտարերկրյա բուհերում սովորելու համար [3]:

Դարձ 3. Զեր կարծիքով, իրանի մասնակցությունը կրթական միջազգային պայմանագրերին ինչ չափո՞վ կարող է նպաստել իրանի և այլ երկրների կրթության համակարգերի համապատասխանեցմանը:

Ինչպես ցույց են տալիս **գծապատկեր 5-ի** և **գծապատկեր 6-ի** տվյալները, տնօրենների և ուսուցիչների ու նաև դասախոսների և դեկանների հարցվող խնդերը մեծ մասամբ ընտրել են «Քարձոր» գնահատականը: Սեր կարծիքով, միջազգային կրթական պայմանագրերին ներզրավվածությունը պարտավորեցնում է համա-


ձայնությունների կատարումն ու գործադրումը, նաև գործընկերներին շահագրգում աջակցել իրանին՝ կրթական համակարգի բարելավման ուղղությամբ: Եթե գլոբալացումը դիտարկենք ֆունկցիոնալ սոցիոլոգիայի և ստրուկտուրալիստական տեսանկյունից կամ համակարգային կառավարման տեսակետից, ապա պետք է ասել, որ համաշխարհային ընտանիքի հաջողությունը պայմանավորված է նրա բոլոր անդամների հաջողությամբ, ինտևաբար բոլոր կողմերից պահանջվում է շահագրգություն [1]:

Ի մի բերելով սոցիարցման մյուս հարցերից ստացված արդյունքները՝ կարող ենք անել հետևյալ հիմնական եղուակացությունները.


1. Դարցվողները մեծ մասամբ ընտրել են համաշխարհայնացման մասին առաջարկված դրական պնդումները, սակայն երկու խմբերի որոշակի հատվածի կողմից ընտրվել են նաև գլոբալացման մասին բացասական գնահատականները, ինչը վկայում է, որ բացասական հետևանքների մասին մտահոգությունը որոշակի չափով արևակ է նույնիսկ հասարակության կրթության հավելու և կրթական էլիտայի մոտ:

2. Գլոբալացման ուղղությամբ իրանի կրթու-

Գծապատկեր 5. Տնօրենների և ուսուցիչների պատասխանների տոկոսային տվյալները



Գծապատկեր 6. Դեկանների և դասախոսների պատասխանների տոկոսային տվյալները



թյան համակարգի առջև կանգնած նարտահրավերների վերաբերյալ երկու խմբերի կողմից ամենամեծ նարտահրավեր համարվել են ուսումնական ծրագրերը և դասերի բովանդակությունը:

3. Թե՛ հանրակրթության և թե՛ բարձրագույն կրթության աշխատողների մեջ մասը Իրանի կրթության համակարգի գլոբալացման ամենամեծ խոշնդուր համարում է Իրանի կրթական քաղաքականության անհամապատասխանությունը և աններդաշնակությունը կրթության համաշխարհային քաղաքականության հետ:

4. Գլոբալացման երևույթի հանդեպ Իրանի կրթության համակարգի ներկա կեցվածքի և նոտեցման վերաբերյալ երկու խմբերում նախապատվությունը տրվել է ակտիվ մոտեցման տարրերակին, այսինքն տեղական-ազգային մշակութիւնի հիմնա վրա գլոբալացման ազդեցություններից օգտվելու տարրերակին: Իհարկե, երկու խմբերում ևս հարցվողների մի մասն ընտրել է դիմադրողական մոտեցումը կամ կրավորական մոտեցումը, և սա նատանաշշում է առկա նտահոգությունները և տարրմբանումները տվյալ երևույթի և նրա տարրեր ազդեցությունների հանդեպ:

5. Իրանի կրթության համակարգի գլոբալացման համար անհրաժեշտ տեխնոլոգիական ենթակառույցների նախապատրաստությունը ցածր է գնահատվել թե՛ հանրակրթության և թե՛ բարձրագույն կրթության աշխատողների կողմից:

6. Իրանի ուսումնական ծրագրերում և դասերի բովանդակության մեջ համաշխարհային քաղաքացուն վերաբերող հասկացությունների (ինչպես օրինակ՝ ժողովրդավարության, խաղաղության, շրջակա միջավայրի պահպանան և այլն) ներառնան մասին թե՛ հանրակրթության և թե՛ բարձրագույն կրթության աշխատողների մեծամասնությունն ընտրել է «Ցածր» գնահատականը:

7. Հարցվողների մեծամասնությունը բարձր է գնահատել կրթության համաշխարհային չափորոշիչներին համահունչ դաշնայլու ազդեցությունը՝ Իրանից «ուղեղների փախուստը» կանխելու գործում:

Այսպիսով, սոցիարցումների արդյունքները մատնանշում են Իրանի կրթության համակարգի համաշխարհայնացման ուղղությամբ անհրաժեշտ առաջնահերթությունները, ուղիները և դրանց տարրեր հետևանքներն ու ազդեցու-

թյունները: Հետազոտությունը կարող է նպաստել համաշխարհայնացման բացասական հետևանքները կանխելու և նրա դրական ազդեցությունները մեծացնելու գործին, որով կիսքանվի Իրանի կրթության համակարգի զարգացումն ու արդիականացումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Սարիաղալամ Ա.,** Գլոբալացիան և Իրանը, Ռազմական հետազոտությունների կենտրոն, 1-րդ հրատարակություն, 21-22 էջ, Թեհրան, 2005:

2. **Ծահի Ս., Նավեհ Երրահիմ Ա., Ալիզադե Յ.,** Բարձրագույն կրթության կոմունիկացիաներ. Գլոբալացիայի նարտահրավերներին առերսվելու անհրաժեշտությունը Խուզիստան նահանգի համալսարան-ներում, Բարձրագույն կրթության ծրագրման գիտահետազոտական հանդես, 5-րդ համար, 1998:

3. **Ղելավար Ա.,** Յոգեքանական և մանկավարժական հետազոտությունների մեթոդիկան, Թեհրան, «Վիրայեց» հրատարակչություն, 2011:

4. **Աղել Յ.,** Կրթական հանակարգի բարեփոխման անհրաժեշտությունը. Կրթական տեխնոլոգիաներ, 25-րդ շրջան, 26-րդ համար, Թեհրան, 1999:

ANALYZING THE RESULTS OF THE RESEARCH ABOUT THE EFFECTS OF GLOBALIZATION ON IRAN'S EDUCATION SYSTEM

MITRA ABDOLAHİ

PhD student in Yerevan State University

Summary

In this work with respect to the given opinions by professors and chancellors of universities and also by teachers and principals of high schools of Iran, the effects of globalization on Iranian Education System and also its dimensions have been discussed and its result have also been analyzed.

ՏԱՐԲԵՐ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ*

Դարիք Ղոլան ՇԱՀՋԱՐԻ

ԵՊՀ-ի մանկավարժության ամբիոնի ասպիրանտ



21-ոդ դարը
տ ե ղ ե -
կատվա-
կան հեղափոխու-
թյան դար է: Տեղեկու-
թյունների ստեղծու-
մը, դրա փոխակեր-
պումը ծառայություն-
ների և ապա տարա-
ծումը համարվում են
արդի աշխարհի տն-
տեսության առանցքը: Տեղեկատվական ու հե-
ռահաղորդակցական հեղափոխությունը ներա-
ռել է սոցիալական կյանքի բոլոր ոլորտները,
այն ազդել է մաս աշխատանքային մոդելների
վրա՝ աշխատողներից պահանջելով առավել
խոր ու արդիական հնտություններ: Այս գործըն-
թացները առաջին պլան են մղել գիտությունը՝
այն դարձնելով զարգացման գլխավոր գործոն:

Տեղեկատվական տեխնոլոգիաների (SS)
ներմուծումը բարձրագույն կրթության մեջ իրա-
կանում նպատակ ունի ապահովել «ճկուն» ու-
սումնառություն: SS ներդրումը խթանում է ու-
սուցման ինտերակտիվ և կենսունակ մեթոդներ,
որտեղ ուսանողները հանդես են գալիս առավել
ակտիվ ու ստեղծագործ, իսկ ուսուցումը կազ-
մակերպվում է առավել փոխադրակցային մե-
թոդներով և ուսանողակենտրոն մոտեցումնե-
րով: SS-ի հիմքի վրա իրականացվող կրթությու-
նը սովորողների մոտ խթանում է ինքնուրույն
աշխատելու, առցանց թիմային փոխարարե-
րություններ ծավալելու և վերլուծական ու քն-
նադատական հայացքով խնդիրները դիտարկե-
լու կարողություններ [1]:

Տեղեկատվական ու հեռահաղորդակցական
ոլորտը ունի չորս կողմեր ու մակարդակներ,

հետևաբար այս ոլորտի կայացումը ուսումնա-
սիրելիս չորս տեսանյունից կարելի է մոտենալ
հարցին և SS-ի զարգացման ու զնույանան
մասշտաբները գնահատել այս չորս սանդղակ-
ների հիման վրա: Դրանք են՝ 1. Կոշտ սկավա-
ռակային գործոն, 2. Ինֆորմացիոն գործոն, 3.
Սարդկային ներուժի գործոն, 4. Կազմակերպա-
կան և ենթակառուցվածքային գործոն [4].

1. Կոշտ սկավառակային գործոնի մեջ ներ-
առվում են ինֆորմացիայի փոխանցման, հա-
ղորդման ու տեղափոխման տարրեր սարքավո-
րումները, նյութատեխնիկական բազան, հեռա-
խոսագերերը, համացանցը, հեռուստացույցը,
կաբելը, արբանյակը, հեռախոսային ցանցը, կա-
պի միջոցները և այլն:

2. Ինֆորմացիոն գործոն ասելով հասկա-
նում ենք համակարգչային տարրեր ծրագրերը,
որոնողական համակարգերը, ինֆորմացիայի
էլեկտրոնային տարրերակները, էլեկտրոնային
գրերն ու ձեռնարկները, խաղեր և ձայնի, պատ-
կերի, տեքստի կամ տվյալների ձևով մատուց-
վող ինֆորմացիան, նաև տեղեկություններ կի-
րառող ծրագրերը, տեղեկությունները թարգմա-
նող ու օգտագործելի դարձնող գործիքները՝ հե-
ռախոսակապ, ֆաքս, տեղեկությունների պահ-
պանման սարքեր, ինչպես օրինակ խոսակա-
վառակ:

3. Սարդկային ներուժի գործոն հասկացու-
թյունը նկատի ունի տեղեկատվական տեխնոլո-
գիաները կիրառող օգտագործող և զարգացնող
մարդկային համապատասխան ներուժը, նրա
հնտությունը, մոտիվացիաները, ընկալումներն
ու մոտեցումները և շահագործվածությունը այս
ոլորտի համեմատ:

**4. Կազմակերպական և ենթակառուցված-
քային գործոն** ասելով նկատի ենք առնում SS

* Ներկայացվել է 09.12.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

ոլորտի հովանավորման, զարգացման ու ընդլայնման ուղղությամբ արվող ներդումները, պահանջումը, հեռահար ու նպատակային ծրագրերի առկայությունը, համապատասխան ենթակառույցների և ինստիտուտների ձևավորումը, կարծ ասած, ոլորտին ինստիտուցիոնալ դարձնելը:

Մեր հետազոտության փորձարարական բաժնում Իրանի SS ոլորտի զարգացման աստիճանը և նրա արդի հիմնախնդիրները վերլուծելու նպատակով նենք հենվել ենք այս չորս գործների ու բաղադրիչների գնահատման վրա՝ ըստ բուների դասախոսական կազմի և ուսանողների կարծիքների։ Հետազոտության մեջ մշակած հարցաթերթիկներով քննել ենք այն հարցադրումը, թե Իրանի Բուշեր նահանգի դասախոսների և ուսանողների ընկալմամբ հատկապես որ գործոնն է առավել ազդում կրթության որակի և արդյունավետության բարձրացման վրա [5]:

SS-ի կիրառման վերաբերյալ օգտագործողների, ուսուցիչների, դասախոսների և սովորողների կարծիքներն ու մոտեցումները կարևոր են խաղում այդ ոլորտի զարգացման և նրա արդյունավետության բարձրացման գործում։ Դամակարգչային ու ինտերնետային հնարավորություններից օգտվողների մոտեցումներն ու տեսակետները գնահատելու նպատակով կարող ենք այն բաժանել երեք խնդիր կամ երեք գործոնով չափել՝ զգացական, ճանաչողական և վարքային։

Զգացական կողմ ասելով նկատի ունենք սպառողների և օգտատերերի շահագրգության ու հետաքրքրության աստիճանը։ ճանաչողական գործոնը վերաբերում է ինքնակրիացման և արդյունավետության աստիճանին, այսինքն համակարգչային տարրեր ծրագրերին ու գործառույթներին ծանոթ լինելու գործոնին։ Վարքային կողմ ասելով նկատի ունենք ինտերնետից օգտվելու վարքային նպատակն ու մտադրությունը՝ արդյոք SS հնարավորությունները օգտատերերի կողմից դիտարկվում են որպես աշխատանքային ու մասնագիտական սկզբանադրյուր կամ առաջախաղացում ձեռք բերելու միջոց, թե՝ զբաղնութիւն ու ժամանցի միջոց [2]:

SS-ի տարրեր բաղադրիչների ներդրման ազդեցությունը վերլուծելով արձանագրել ենք այն արդյունքը, որ կրթության որակի բարելավման ուղղությամբ Բուշեր նահանգի դասախոսները առավել կարևորել են կազմակերպչական

և ենթակառուցվածքային գործոնի դերը, իսկ ուսանողները՝ SS-ի ինֆորմացիոն գործոնի նշանակությունը։ Երկու խմբերն եւ ընդհանուր առմամբ կարևորում են SS ոլորտի բոլոր չորս բաղադրիչները, սակայն ուսանողները ավելի մեծ ուշադրություն են դարձնում էլեկտրոնային ինֆորմացիոն բազաներին և այն առավել անհրաժեշտ են զգում ուսումնառության գործընթացում, իսկ դասախոսները կարևորել են կազմակերպչական և ենթակառուցվածքային գործոնը, ինչը անհրաժեշտ է ուսուցման գործընթացը կազմակերպելու և իրականացնելու համար։ Իրանի բարձրագույն կրթության շահակից կողմերի՝ դասախոսների և ուսանողների այս պահանջների բավարարումը բարենպաստ ազդեցություն կարող է ունենալ կրթության որակը բարձրացնելու և ուսուցման մերուները արդյունավետ դարձնելու գործում [3]:

Ստորև ներկայացնում ենք SS-ի ներդրման հիմնական ազդեցություններն ու հետևանքները Իրանի բարձրագույն կրթության որակի բարձրացման, ուսուցման գործընթացում արդյունավետ մեթոդների կիրառման և Իրանի բարձրագույն կրթության կառավարման մի շարք հիմնախնդիրների լուծման ուղղությամբ [1].

- Իրանի կրթական համակարգում SS-ի ներդրումը կիրառակի Իրանի՝ որպես զարգացող երկրի և արդյունաբերական զարգացման մեջ կրթության որակի միջև ստեղծված անջրպեսությունը։

- SS-ի ներդրումը կիրանի Իրանի և միջազգային գիտահետազոտական կառույցների համագործակցությունները, կնպաստի միջազգային գործընթացներում Իրանի ներգրավմանը, կրթության համակարգը կրաքա՞նի առավել բաց և արդիական։

- SS-ի ներդրումը իրանցի դասախոսներին և ուսանողներին աջիք կտա ամրնդիհատ թարմացնել ու վերացնել ինֆորմացիայի բազան և ծանոթանալ գիտական վերջին նվաճումներին և ինտեգրվել համաշխարհային գործընթացներին։

- SS-ի ներդրումը կնպաստի մասնագիտական ներուժի հզորացմանը, պրոֆեսորադասասահոսական կազմին կազմակերպած բարձրացնել մասնագիտական որակները և վերացնել նոր գիտելիքներով ու հմտություններով, ծավալել գիտահետազոտական բարձրորակ աշխատանքներ, խնայել ժամանակը և այն հատկացնել գիտական ու տեսական աշխատանքնե-

թին:

- SS-ի ներդրումը հնարավորություն կտա ուսանողներին մատուցել տարբեր համացանցային ծառայություններ՝ սահունացնելով ու արագացնելով վարչարարական, թրաբանական ու կառավարման շատ հարցեր և խնայելով նրանց ժամանակը ու էներգիան:

- SS-ի ներդրումը և դրա ժիշտ ու արդյունավետ կիրառումը կարող է կրճատել իրանի կրթության համակարգում ուսուցման չափազանց տեսական ու վերացական լինելը և շուկայի պահանջներին անհամապատասխանությունը: SS-ի ընդլայնումը բազմաթիվ նոր աշխատատեղեր ու պրոֆեսիաներ է ստեղծում իրանի երիտասարդ աշխատութիւն համար և խթանում աշխատաշուկան: SS-ի կիրառումը կիսամի վարպետ աշխատութիւն պատրաստման գործը և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան հմտությունների ուսուցումը:

- SS-ի ներդրումն իրանական հասարակության տարբեր խավերին և սոցիալական ու տարիքային տարբեր խմբերին հնարավորություն կտա իրականացնել մշտատև և անհատական պահանջներին համապատասխան կրթություն:

- Իրանի հասարակությունն ամենաերիտասարդներից մեկն է աշխարհում: Իրանի բնակչության վիճակագրությունը ցույց է տալիս, որ երկրի բնակչության մեծամասնությունը կազմում էն 25 տարեկանից ցածր տարիքային խմբերը, որոնց մեծ մասը ցանկություն ունի ստանալ բարձրագույն կրթություն: SS-ի ներդրումը կարող է բավարարել բարձրագույն կրթություն ստանալու օրեցօր մեծացնող պահանջարկը, նաև բարելավել դասախոս-ուսանող քանակային հարաբերակցության ներկա ոչ բավարար մակարդակը:

- Քանի որ իրանական բուները բավականին բարձր վարկանիշ ունեն Միջին Արևելյում, SS-ի լայն ու խորացված ներդրումը իրանի բարձրագույն կրթությանը հնարավորություն կտա բազմակողմ փոխազդակցություններ ծավալել հարկան և Միջին Արևելքի երկրների բուհական հանակարգերի հետ:

- Բուշերի նահանգի մասշտաբով SS-ի ներդրումը հնարավորություն է ընձեռում այս սահմանային նահանգին ակտիվ կապ հաստատել իրանական և արտասահմանյան բուհերի հետ և համընթաց քայլել ներպետական և միջազգային կրթական համակարգերի հետ, բարձրացնել

նահանգի կրթության որակի ցուցանիշները: SS-ի ներդրումը Բուշերի նահանգի բուհերին թույլ կտա կրճատել նահանգային և կենտրոնական քաղաքների բարձրագույն կրթության որակի միջև տարբերությունները:

- Բուշերիում գործում են նավթարդյունաբերություն, ծովային արդյունաբերություն և միջուկային աստոմակայան, այդ իսկ պատճառով նահանգում այս ոլորտներում բարձրակարգ մասնագետների մեծ պահանջարկ կա: Բուշերի համալսարանները մասնագետ ուժերի կրթման ու պատրաստման գիշավոր օջախներն են: Նահանգը կարող է SS-ի ներդրմանը և տարբեր վիրտուալ հնարավորություններով իրականացնել տեղական պահանջներին և տնտեսական առաջնահերթություններին համապատասխան կրթություն:

- Նկատի առնելով իրանի աշխարհագրական ընդարձակ տարածքը և մեծ հեռավորությունները, SS-ի ներդրումը կարող է կրճատել այդ տարածությունները և իրանի բոլոր նահանգներին ու հեռավոր մարզերին, այդ թվում նաև Բուշերին, ընձեռել կրթական հավասար հնարավորություններ և խթանել նահանգի սոցիալ-տնտեսական կայուն զարգացումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- 1. Մոնթազեր Ղուլամ Ալի,** Բարձրագույն կրթության համակարգի ինֆորմացիոն զարգացման ստրատեգիաները, Հանալսարանների դեկանների 51-րդ խորհրդաժողովի հոդվածների ժողովածոր, բարձրագույն կրթության նախարարություն, Թեհրան, 2004:
- 2. Սեյդ Նաղավի,** Դասախոսների և ուսանողների մոտեցումները էլեկտրոնային ուսուցման հարցին, Իրանի բարձրագույն կրթության հետազոտական հանդես, 2007, համար 43:
- 3. Ֆարիյան Սոհամադ և Սահդավիդ Սեյդ Ջարամ,** Ինֆորմացիայի կառավարման հիմունքները և կառավարումը, Պոլիտեխնիկ համալսարանի իրատարակչական կենտրոն, Թեհրան, 2006:
- 4. Ֆարիհ Թուրուզ,** Բարձրագույն կրթության ուսումնական ծրագրերում SS նոր տեխնոլոգիաների կիրառման հնարավորության գնահատում, Բարձրագույն կրթության հետազոտական և ծրագրամշակման հանդես, 42-րդ հոդված, Թեհրան, 2006:
- 5. Khan B. H. (2002), "A Framework For Web-based Learning" Englewood Cliffs, Nt, Educational Technology Publication Madison, Magna Publication Inc voile4.**

THE EFFECT OF ICT DIFFERENT COMPONENTETS ON IRAN HIGHER EDUCATION SYSTEM***HABIB GHOLAM SHAHZARI***

PhD student in Yerevan State University

Summary

In article we analyses and review the effect of ICT different components (hardware, human reassures, info ware and organization ware) on Iranian higher education, because any of these aspects play an important role in universities. ICT based education in Iran higher education and universities faced with some limitations, problems and challenges. We study the role of ICT different components to increase the education quality, learning interactive methods, distribution and create of knowledge, innovations in education, effectiveness, cost expenditure, offering multiple services, solve many social-economic and job problems. It also helps Iran as a developing country to integrate in global processes and make education relationships with other countries. The article discusses about the necessity of ICT based education especially in Bousher province in Iran. ICT and its 4 components development in Iran education system and Bousher universities is emergence and actual.

ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՋԱՎԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Վարդուիի ԴԱՎՈՅԱՆ

Լոռու մարզի Սարալանջ գյուղի հիմնական դպրոցի մաթեմատիկայի ուսուցչուհի



Sնային առաջ ադրանքը «հավերժական» հիմնախմբիր է մանկավարժության մեջ. այն սկսվում է համբակրության պատճության հետ միաժամանակ: Տարբեր ժամանակներում յուրովի մոտեցումներ են դրսնորվել այդ հիմնախմբի լուծման համար, բայց այն շարունակել է գոյատևել չհամանալով ամբողջական ուսումնագիտական ավարտի:

Տնային առաջադրանքի բովանդակությունը, բնույթը և գործառույթները չի կարելի դիտել դասի վարման եղանակներից, ձևերից, մեթոդներից, վերջապես առարկայական չափորոշչային պահանջներից կտրված: Չենց դասի ընթացքում են ստեղծվում նախադրյալներ՝ տնային աշխատանքի հաջող կատարման համար: Տնային առաջադրանքի բովանդակության տարրերը պետք է այնպես միավորել միմյանց, որ ուսուցչի և աշակերտի համար ցանկացած դաս լինի նախապատրաստման փուլ՝ տնային առաջադրանքի կատարման համար: Այսինքն՝ կ' դասը, և՝ սովորողի հաջող ուսումնական աշխատանքը պետք է կազմեն միասնական գործընթաց: Մասնագիտական գրականության մեջ տնային աշխատանքը ասելով հասկանում են հանձնարարվող դասի բնույթը, ծավալը և գործառույթները: Դրանց արդյունավետ լուծումը կախված է ուսուցչից:

Ուսուցիչները, մշտապես օգտագործելով խնդիրներ կազմելով առաջադրանքները, փնտրում և գտնում են լրացուցիչ մոտեցումներ այդ աշխատանքների նկատմամբ սովորողների մեջ դրական վերաբերմունք ձևավորելու համար:

Նվիրվածությամբ աշխատող ուսուցչները, օրինակ, մաթեմատիկայի աստիճանական ֆունկցիաների ուսումնասիրնան դեպքում, սովորողներին առաջարկում են տանը հետազոտել կախվածությունը՝ արտահայտված Օհմի, Լյուսոնի և այլոց օրենքներով: Նման խնդիրներ կարելի է առաջարկել դասի ընթացքում տնային աշխատանքներն ստուգելիս:

Սովորողների մոտ գիտելիքների, կարողությունների և հնտությունների ձևավորման և զարգացման նպատակով եական նշանակություն են ստանում պրոբլեմային բնույթի հանձնարարություններով: Նման առաջադրյանընթերը բավականին դժվարություններ են ստեղծում երեխաների մոտ, և նրանք առաջին իսկ մոտեցումից հետո խուսափում են լուծել այդ առաջադրյանընթերը: Այդ պատճառով էլ ուսուցիչը պետք է տեղեկացված լինի պրոբլեմային բնույթի տնային հանձնարարությունների տեսակների մասին: Մ. Ի. Մախմուտովը վերլուծել է պրոբլեմային բնույթի տնային հանձնարարությունների տեսակները, որոնք են՝

1. դասին սկսված հետազոտության և հաջորդ դասին այն շարունակելու, ավարտելու հանձնարարությունը.

2. դասին ծագած պրոբլեմի հետազոտության անցկացման հանձնարարություն.

3. նոր, ոչ տիպային խնդիրի լուծման հանձնարարություն.

4. տևական հետազոտության անցկացման հանձնարարություն, արդյունքների հետագա քննարկում.

5. առանցքային գիտելիքների արդիականացման և փաստերի հավաքման հանձնարարություն, դիտարկումներ հաջորդ դասի, նոր թեմայի նախապատրաստման և ուսումնասիրման համար.

6. յուրացված գիտելիքները նոր իրադրության մեջ օգտագործելու հանձնարարություն.

* Ներկայացվել է 01.10.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

7. նոր մաթեմատիկական խնդիրներ ինքնուրույն կազմելու կամ դասագրքում և խնդրագրքուրում շարադրված խնդիրների բովանդակությունը փոխելու հանձնարարություն.

8. դասին ուսումնասիրված հասկացությունների, հավասարումների, բանաձևերի և այլ առանցքային նյութերի վերարտադրման և ամրապնդման հանձնարարություն [1, էջ 219-224]:

Մ. Ի. Մախմուտովն ընդգծում է, որ այդ խնդիրները բարձրացնում են ուսուցման մակարդակը և ակտիվացնում սովորողների իմացական և ճանաչողական ինքնուրույնությունը: Սակայն դրանց կիրառումը ուղեկցվում է ժամանակի կորստով, մանավանդ ծրագրի իրականացման և կոնկրետ թեմատիկայի բովանդակությունը ամրուցությամբ ներկայացնելու ընթացքում: Դրա համար էլ պրոբլեմային հանձնարարությունները պետք է լինեն ուղղորդված և նպատակային ու, որ ամենակարևորն է, տարրերակված: Այս թե ինչու լավ ուսուցիչը պրոբլեմային հանձնարարությունները տալիս է շերտավորման սկզբունքը: Նա սովորողների մի մասին տալիս է այդ հանձնարարությունը, և նրանք իրենք են գտնում առաջարդանքները կատարելու միջոցներն ու մոտեցումները, իսկ նյուև մասին ուսուցիչը բացառում է, թե ինչ միջոցով պետք է կատարել առաջարդանքը: Ինչ վերաբերում է տեսային հանձնարարություններին, ապա դրանք հանձնարարվում են այնպես, որ հետո ու հետաքրիր դառնան սովորողների համար: Եթե որոշ սովորողներ տանը սկսում են լուծել խնդիրը կամ վարժությունը, որը հեշտությամբ է լուծվում, այսինքն՝ իր մեջ բարդություններ չի պարունակում, իսկ եթե հանձնարարությունը չի լուծվում, ապա բարդությունն այն է, որ խնդիրը կամ վարժությունը դժվար է, և աշակերտները չունեն անհրաժեշտ կարողություններ և հմտություններ, որոնք նրանք իրենց հետ պետք է բերած լինեն իրավական ճախորդ աստիճանից: Սակայն մենք լավագույնս գիտենք, որ հարցը կապված է ոչ թե բոլոր սովորողների կողմից գիտելիքների, կարողությունների ու հմտությունների լավ յուրացման, այլ ուսուցիչ կողմից հասուլ աշխատանքի հետ՝ պայմանավորված յուրաքանչյուր աշակերտի անհատական առանձնահատկություններով: Ուսուցիչը մի քանի աշակերտի համար ինքն է կազմում առաջարդանքներն ըստ դասերի՝ պարզից բարդը, հեշտից դժվար սկզբունքով, մյուսներին օգնում է համապատասխան աշխատանքը դասին, օրինակ, անցկացվում են ինքնուրույն աշխատանքներ՝

համապատասխան ցուցումներով՝ առաջարկված խնդիրներից քեզ համար ընտրիր ամենահեշտը, ընտրիր և լուծեր ամենադժվարը և այլն: Սովորողներն այս դեպքում վարժվում են խնդիրների լուծման մեջ: Նման դասերից հետո, սովորող տուն վերադառնալով, առանց վարանելու սկսում է ինքնուրույն աշխատանք կատարել: Ասենք նաև, որ հանձնարարությունները չափով է լինեն չափից ավելի պարզունակ և հեշտ: Հակառակ պարագայում դրանք կրողնեն բացասական ազդեցություն: «Այն հանձնարարության հեշտացումը, որն աշակերտին գրկում է ինքնուրույն ջանքերից ու ներքին կենտրոնացումից, դառնում է վնասակար» [2, էջ 76]:

Նման տնային առաջադրանքի ստուգումը պահանջում է ուսուցիչ առավելագույն ուշադրություն, նրա գործառույթների ամրողացման իրականացում: Զանախ չտիրապետելով ինքնաստուգման բավարար միջոցների՝ մի խնդիր ծիցու չլուծող աշակերտները քոյլ են տալիս նման պիտաներ նաև հաջորդներում, եթե իրար հետևից լուծվում են միևնույն տիպի շատ խնդիրներ, ի հայտ է գալիս սխալների ամրապնդման հավանականություն: Նման դեպքում օգտակար է ուսուցիչ հսկողությունը զուգակցել սովորողների փոխադարձ հսկողության հետ: Տնային առաջադրանքի ստուգումը անհրաժեշտ է կազմակերպել այնպես, որ այն ընդունի կուեկտիվ բնույթ, որի ընթացքում բոլորի մասնակցությունը տնային հանձնարարությունների ըննարկմանը դառնում է պարտադիր: Ցուրաքանչյուր աշակերտ պետք է պատրաստ լինի հարցեր առաջադրելու և դրանց պատասխանելու կամ իր կողմից հարցին տված պատասխանը ուղղելու: Հասկանալի է, որ նման պարագայում աշակերտը ոչ թե պարզապես կրկնում, վերարտադրում է սովորածը, այլև զարգացնում է իր սովորելու կարողությունը: Զանախ մաթեմատիկայից տրված հանձնարարությունը կրում է վարժեցման բնույթ, որն ուղղված է հաշվողական հմտությունների ամրապնդման ու կատարելագործմանը, աղյուսակներից, լոգարիթմական քանոններից օգտվելուն: Հայտնի է, որ շատ սովորողներ ավելի շուտ սխալներ են գտնում ուրիշի աշխատանքում, քան իրենց: Ակնառու է նաև, որ փոխադարձ ստուգումը բարձրացնում է աշակերտների պատասխանատվությունը, դրանով իսկ կարևորում ուսումնական գործընթացի դաստիարակչական նշանակությունը: Տնային առաջադրանքի գնահատման հարցը կարևոր է, որովհետև այն արբանագույն է սովորողների

միտքը, խթանում է նրանց աշխատասիրությունը և բնականաբար տրամադրում նրանց ուսուցման գործնաբացը կատարելագործելուն:

Նրանք ձեռք են բերում վստահություն և համոզվում, որ տաճը կարող են աշխատել ինքնուրույն: Եվ ամենակարևորը՝ սովորողները հասկանում են, որ տնային աշխատանքը և դասարանական աշխատանքը նրանց համար ոչ թե երկու տարբեր, այլ մեկ միասնական պրոցես են: Եթե աշակերտը չի կարող կատարել առաջադրությունը ոչ լիիվ ծավալով, եթե նա կարող է փոխել մի խնդիրը մյուսով, ապա նա կունենա թեկուզն փոքր հաջողություն, բայց ամենակարևորը՝ նա պահպանում է իր աշխատելու ցանկությունը և պատասխանատվությունը իր և ուսուցչի առջև: Վերջապես, տնային աշխատանքի ստուգում ոչ թե պարզապես ստուգում է, այլ գիտելիքների իմաստավորում, խորացում և ամրապնդում:

Միևնույն առաջադրանքը տարբեր ուսուցիչների մոտ աշակերտները ընկալում և կատարում են տարբեր ձևով և հանդես բերում պատասխանատվության ու ցանկության տարբեր մակարդակներ: Անշուշտ, չի կարելի թերագնահատել ուսուցչի դերը: Սակայն նոյնինիկ լավագույն ուսուցիչը չի կարող ստիպել աշակերտներին կատարել այն, ինչ նրանք չեն ցանկանում կամ անօգտակար են համարում իրենց համար: Ահա թե ինչու ուսուցչի խնդիրներից մեկն էլ աշակերտի մեջ տնային առաջադրանքը նկատմամբ գրաբարերմանքի դրսուրման դաստիարակումն է, ինչը նպաստում է վերջիններին ինքնակրության ու ինքնազարգացմանը: Նպատակային առումով տնային առաջադրանքները ուղղված են հետևյալ խնդիրների լուծմանը.

1. դասի ընթացքում նոր ուսումնական նյութի յուրացում,

2. նոր ուսումնական նյութի կրկնություն ու ամրապնդում,

3. ձեռք բերված գիտելիքները կյանքում կիրառելու կարողության ձևավորում:

Սյուս կողմից՝ տնային առաջադրանք շարունակում է մնալ որպես կարևոր միջոց՝ գիտելիքների, հմտությունների և կարողությունների յուրացման և ամրապնդման համար: Ահա տնային առաջադրանքի հիմնական գործառույթներից մեկը՝ Դասկանալի է, որ դասի ընթացքում ոչ բոլոր աշակերտներն են հավասարապես ընկալում կամ հասկանում դասավանդվող նյութի բովանդակությունը, գլխավոր խնդիրը: Վ. Ա. Սուխոմլինսկին ուսուցչի մասին ասել է. «Երբեք մոտավոր շանքեր չպետք է գործադրել՝ հիշողու-

թյան մեջ միայն սովորածի ամրապնդման համար: Եթե դադարում է ինստավորական բարությունը, դադարում է մոտավոր աշխատանքը, և սկսվում է բացանող սերտողականությունը...» [3, էջ 24]: «Աերտումը կործանարար ազդեցություն ունի սանի բարոյական կերպարի վրա: Բացի անմիտ աշխատանք կատարելը՝ աշակերտը ստանում է միայլ պատսերացում մոտավոր աշխատանքի մասին ընդհանրապես, և ատում է ուսումը: Վերջիվեջը նա դադարում է աշխատել» [4, էջ 82]: Ահա թե ինչու ուսուցչի խնդիրը տնային առաջադրանք հանձնարարելու ժամանակ ոչ այնքան կրկնության, որևէ դասի հետ կապված առանձին հանձնարարությունների ճշգրտումն է, այլ այն գործողությունների իրականացումը, որոնք հաճացնում են աշակերտի մեջ մտածելու կարողությունների ձևավորման ու զարգացմանը: Այսինքն՝ տնային աշխատանքի կարևոր նպատակներից մեկը աշակերտների մեջ ուսման նկատմամբ հետաքրքրության խթանումն է և ինքնուրույն աշխատանքի հանդեպ ստեղծագործական մոտեցում ցուցաբերելը:

Ուսուցչի կողմից հանձնարարված տնային աշխատանքն բովանդակությունը, բնույթը, ձևը և ծավալը նախապես պլանավորվում է ամքող թեմատիկայից, ապա նոր՝ ըստ ժամաքանակի: Սովորողներին հաջորդ տնային աշխատանքին նախապատրաստելու ուսուցչի համար համարվում է յուրաքանչյուր դասի լավագույն խնդիր: Սակայն սովորողները միաժամանակ պետք է հասկանան, որ դասին պատրաստվում են նաև տնային աշխատանքի համար, որ տնային աշխատանքը ոչ թե դասերի ձևական յուրացումն է, այլ լավ ուսուցման անհրաժեշտ պայմաններից մեկը [5, էջ 37]:

Առարկայական խնդիրների լուծման, սովորողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների համար գործնական լուծումներից մեկը հասուն հուշաբերի կազմումն է: Օրինակ, մաթեմատիկական խնդիրների լուծման համար հուշաբերերը, որոնք սովորաբար կազմվում են Դ. Պոյի «Խնչակն լուծել խնդիրը» գրքում եղած հուշաբերի հիմնա վրա, կախվում են դասարանում կամ մաթեմատիկայի կարիքնետում: Բազմաթիվ ուսուցիչներ հասկապես նաթեմատիկա առարկայից օգտագործում են այդպիսի հուշաբերեր կամ քարտեր, որոնց հիմնական բովանդակությունը կարելի է ամփոփել հետևյալ կերպ:

1. ուշադիր կարդա խնդիրը և մտածիր՝ ի՞նչ է նշանակում յուրաքանչյուր թիվը խնդիրի մեջ.

2. համառոտ գրիր նրա պայմանը, կազմիր խնդրի լուծման սխեման, կամ նկարիր նրա պատկերը,
3. երկրորդ անգամ կարդա խնդիրը,
4. մտածիր՝ ի՞նչ տվյալներ պետք է խմանալ խնդրի հարցերին ապատախանելու համար,
5. կազմիր լուծման պլանը,
6. գրիր լուծումը,
7. սուսուցիր պատասխանը (օրինակ, հակադարձ խնդիրներ կազմելով և լուծելով) [6, էջ 53-55]:

Ամեն անգամ այդ հուշաբերքին դիմելով՝ դասի ընթացքում ուսուցիչը աշակերտին պատրաստում է հետագա տնային աշխատանքին կամ հուշաբերթ է առաջարկում կոնկրետ թեմաների վերաբերյալ՝ օրինակ, կանոնների վրա աշխատելու, մտավոր գործունեության եղանակների և այլն:

Սանկավարժական բազմաթիվ հետազոտություններում և ուսումնասիրություններում փորձ է արվում լուծել տնային աշխատանքների բովանդակության և ծավալի հետ կապված մի շաբթ հարցեր, որովհետև մինչև այժմ տնային աշխատանքների ընտրության տեսական հիմնավորում չի ենթայացվում ոչ դասագրքերում, ոչ էլ մեթոդական ծերնարկներում: Կա ընդհանուր ցուցումներ այն մասին, որ տնային աշխատանքի բովանդակությունը սերտորեն կապված է դասարանային աշխատանքի հետ: Ավելի պարզ ասած՝ ինչպիսի՞ն պետք է լինի տնային առաջադրանքը, ի՞նչ հատկանիշներով պետք է այն օժոված լինի, որ աշակերտի կամ նրա ծնողի համար չդառնա «պատուհաս և բեռ»: Տնային առաջադրանքները բնութագրող հատկանիշներից կարելի է առանձնացնել հետևյալ խումբ հատկանիշները՝

1. նյութի նորությունը (դասի ընթացքում չուսումնասիրված, ուսումնասիրված),
2. նյութի տեսական բնույթը (տեսական կամ փաստական),
3. ուսումնական կամ օժանդակ գրականություն, տեխնիկական միջոցներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ և այլն,
4. տնային առաջադրանքի ձևը (գրավոր առաջադրանք, բանավոր հարցում, գործնական, հետազոտական),
5. կատարման կազմակերպումը (անհատական, խճային, կոլեկտիվ, համագործակցային) և այլն
6. պարտադիրության աստիճանը (կարող է լինել պարտադիր, կարող է չլինել):

Յուրաքանչյուր կոնկրետ տնային առաջադրանքի վերոնշյալ հատկանիշների մանկավարժական ճիշտ զուգակցումը ապահովում է դրա ընդհանուր ուսումնա-դասատիարակչական պահանջների կատարումը, այն է՝ տնային առաջադրանքի նպատակահարմարությունը, հետաքրքրությունը, մատչելիությունը և այլն:

Վերջին տարիներին հաճախակի և տեղին է հնչում հետևյալ հարցը՝ թե կարելի է՝ ընդհանրապես աշակերտներին տնային առաջադրանք տալ, եթե հանձնարարվող թեմատիկան, խնդիրը և այլն ամբողջությամբ ընկալելու, ընթացական տեսակետից հարցականի տակ է դրված, կամ ուսուցիչը մտահոգ է դրանց կատարման հարցում: Դասկանալի է, որ եռաստիճան կրթական ծրագիր հրականացնող ուսումնական հաստատությունը՝ հատկապես հիմնական և ավագ դասարաններում տնային առաջադրանքի պարտադիրության աստիճանը պետք է լինի անհատականացված, այսինքն՝ թեք առաջադրանքը հանձնարարվում է նույնիսկ բոլորին, ապա անդամեցն է տարրերակված մոտեցում: Սովորողների մի մասին կարելի է տալ նյութին վերաբերող հարցերի ցուցակ, իսկ առավել ուսակ աշակերտներին՝ ինքնուրույն նույնանման հարցեր կազմելու առաջադրանքներ:

Տնային առաջադրանքը սովորողների մոտ առաջացնում է դրական վերաբերմունք ընդհանրապես ուսումնա նկատմանը: Փորձը ցոյց է տալիս, որ ուսման հաջողությունը և առարկայի նկատմամբ հետաքրքրասիրությունը միշտ չէ, որ որոշում են աշակերտի վերաբերմունքը տվյալ առարկայի նկատմամբ անբողջապես: Ուսման ընթացքում բազմաթիվ աշակերտներ առանձին առարկաներից ստանում են բավարար գնահատականներ, սակայն հասկանում են ուսուցման կարևորությունը իրենց հետագա գործունեության վրա և ցուցաբերում են դրական վերաբերմունք կրթական ամբողջական գործնքներից նկատմանը: Դասկանալի է, որ յուրաքանչյուր սովորող կարող է սովորել լավ և գերազանց գնահատականներով, բայց արդյո՞ք անեն մի երեխայի համար հնարավոր է ստեղծել բարենպաստ պայմաններ, նյութատեխնիկական միջոցներ, անհրաժեշտ գույք և վերջապես մասնագիտական-մեթոդական առումով լուծել և իմաստուն մանկավարժական համակազմ, որպեսզի երեխան, իր ընդունակություններին համապատասխան գնահատական ստանալով, ցանկություն ունենա կատարել թե՝ դասարանային, թե՝ տնային առաջադրանքները: Դասկանալի է, որ

տնային առաջադրանքներն իրենց ծավալով և քանակով չափությունը է պատուհաս դաշնամ աշակերտների համար և պատճառ դաշնամ բարոյահոգերանական անձնական բնույթի՝ բացասական երևույթի ծավալուն:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ տնային առաջադրանքն ունի երկու կարևոր նպատակադրում՝ մեթոդական-մասնագիտական (ի՞նչ և ինչպես հանձնարարել տնային աշխատանքը, ինչպես պատրաստել աշակերտին տնային ինքնուրույն աշխատանքի) և հոգեբանամանկավարժական, (ինչպես ծևավորել տնային աշխատանքի կատարման նկատմամբ դրական վերաբերմունք):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Махмутов М. И.**, Организация проблемного обучения в школе. М., 1877.
2. **Գ. Եղիսան**, Անտիպ Էջեր.Եր. 1988:
3. **Ռ. Վարդամյան**, Դայագիտությունը դպրոցում, 2009, №9:
4. **Գ. Գ. Նիկողոսյան**, Երեխաների և դեռահասների հիգիենայի դասագիրք. Եր., 1967:
5. **Շ. Պ. Շարալինա**, Դպրոցականների տնային ուսումնական աշխատանքը Եր., 1983:
6. **Կոնդրատյեա Դ. Փ.**, Состояньяе задачи небольшой сложности. “Начальная школа”. 1980, N3.

THE MAIN CHARACTERS OF HOMETASK

VARDUHY DAVOYAN

Teacher of Mathematics Main school of the village Saralange

Summary

The character, kinds of hometask, the ways of doing and the sorts of hometask are given in the article.

The professional abilities of the teacher, how is explained, given the hometask and checked it is very important.

The professional and methodical skills of the teacher is very important for development in the process of studying.

УДК 371:372.8

МЕТОДИКА ОБУЧЕНИЯ ЧТЕНИЮ УЧАЩИХСЯ КАК ВИДУ РЕЧЕВОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ*

Джулета ГРИГОРЯН

Учительница русского языка и литературы ст. школы N17, г. Ванадзор



из читаемого на изучаемом языке.

Через целенаправленное и систематическое чтение формулируется речевая способность быстрее лучше и глубже понимать читаемое.

Понимание читаемого - один из видов сложной интеллектуальной деятельности человека. Читающий не просто извлекает готовую информацию, он сравнивает значение и смысл читаемого со своим опытом и знаниями, накопленными в период обучения.

При обучении учащихся чтению следует различать характер чтения.

«Каждый вид чтения характеризуется своей методикой обучения, типами упражнений» [1].

Важно обратить внимание на отбор текстов, способствующих развитию интереса к чтению:

- новизна текстов по содержанию;
- доступность;
- проблемность;
- образность
- четкость структуры.

При этом следует учитывать, что интерес к овладению чтением формируются с развитием одного из механизмов чтения – прогнозирования.

Прогнозирование в чтении – это умение

Чтение является рецептивным видом речевой деятельности, однако это не исключает необходимости обучать ему как процессу активного и самостоятельного извлечения смысла

правильно угадывать слово по отдельным его элементам, предвидеть последующие части текста.

Типологию упражнений целесообразно представлять по видам чтения: изучающему, ознакомительному, просмотровому.

Изучающее чтение «предполагает умение вдумчиво, внимательно прочитать текст, определить основное содержание, частные детали» [2]. Навыки и умения изучающего чтения предполагают умение читающего анализировать мысли автора, умение вдумчиво читать – про себя.

Чтобы улучшить и ускорить понимание текстов, следует учить учащихся воспринимать текст не отдельными словами, а предложениями, группами предложений, абзацами, целыми смысловыми кусками. «Понимание смыслов целых частей текста, сохранение их содержания в памяти способствуют формированию умений осмысленного чтения» [3].

Для овладения умением вдумчивого чтения нужны упражнения на развитие умений разобраться в смысловых деталях информации текста. В упражнения к учебному тексту для отработки навыков чтения включаются следующие типы заданий:

I. Подготовительные (подготавливающие к коммуникативному чтению текста)

1. Лексические, предполагающие усвоение слов из текста для понимания, как основной информации текста, так и всего текста, так и всего текста в целом.

2. Лексико-грамматические, направленные на усвоение в тексте орфоэпических явлений, конструкций, представляющих особые трудности для национальной аудитории. (произношение, связь слов, управление слов при выражении объективных и обстоятельственных отношений). Назначение данных

* Ներկայացվել է 02.12.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

упражнений – снятие языковых трудностей перед чтением текста).

3. Вводно-речевые, направленные на чтение и осмысление предварительного текста, вводящего в тему.

II. Аналитико – синтетические. Данный тип упражнений направлен на «осмысливание частных деталей, на восприятие текста предложениями, целыми частями текста, несущими смысловую нагрузку». [4]

III. Контрольно – речевые упражнения (формирующие и контролирующие навыки осмысливанного чтения):

- чтение с пониманием содержания читаемого и передача содержания в устной или письменной форме;
- определение основного содержания текста, высказывание впечатления о прочитанном;
- прогнозирование содержания последующих частей при опоре на факты предыдущего;
- ответы на вопросы проблемного характера во время чтения;
- составление вопросов во время чтения;
- выбор из серии предложенных ответов или утверждений тех, которые соответствуют содержанию текста.

Представим некоторые из возможных творческих заданий.

Прочитать небольшой рассказ и написать изложение (подробное).

Послушать отрывок из художественного произведения и написать изложение (скжатое).

Ознакомительное чтение предполагает умение понимать общее содержание текста, находить основную информацию в нем и достаточно быстро читать. Важным тут становится умение определять существенное, выделять главные мысли.

Подготовительные упражнения предполагают «снятие языковых трудностей перед чтением текста» [5].

- чтение текста в сокращенном виде;
- выделение основной информации (с опорой на вопросы, без опоры);

В предтекстовых заданиях предполагается «работа над лексикой, ключевой» [6].

Данный вид чтения предполагает также работу над увеличением скорости чтения учащихся. С увеличением скорости чтения развиваются способности учащихся воспри-

нимать текст все большими отрезками, исключается привычка внутреннего проговаривания, приобретается привычка и умение более быстро извлекать основную информацию опускать второстепенную. Такое чтение является показателем уровня сформированности навыков чтения прослеживается в тесной взаимосвязи с показателями осмысливанного чтения. Такие типы упражнений сопровождаются фиксацией времени, затраченного на чтение, которое сравнивается с усредненной нормой скорости чтения вслух и «про себя» на родном языке и предусматривают следующие задания [7]:

- поиск и чтение предложений, которые начинаются со слов...;
- поиск и чтение предложений, в которых говорится о..., содержит мысль о том, что ...

Просмотровое чтение предполагает умение просмотреть газету, книгу, журнал и другую литературу с целью получения общего представления о содержании той или иной книги.

Упражнение на формирование умений данного типа чтения направлены на беглый просмотр материала книги, газеты, статьи с целью извлечения информации.

Организация самостоятельного чтения, система работы над текстами, обеспечит формирование навыка зрелого чтения, развитие умений профессионального и общекультурного общения.

ЛИТЕРАТУРА

1. Городилова Г. Г., Алексеева Н. Н., Единицы обучения речи в преподавании русского языка как иностранного:
2. Каракеев Т. О., О типологии коммуникации // Знак и общение, Фрунзе, 1974.
3. Кожина М. Н., Стилистика русского языка. М., 1977.
4. Русская разговорная речь. Фонетика. Морфология. Лексика. Жесты. М., 1983.
5. Фоломкина С. К., Обучение чтению. // Методика обучения иностранным языкам в средней школе. М., 1982.
6. Шанский Н. М., Характер и специфика лингвистических курсов для студентов – русистов национальных групп. М., 1983.
7. Иванова А. Ю., Экспериментальное исследование эффективности методических приемов обучения аудированию лекций на народном языке. М., 1982.

ԸՆԹԵՐՅԱՍՈՒԹՅԱՎՍ ՈՒԽՈՒՑՄԱՎՍ ՄԵԹՈԴԻԿԱՎՍ ՈՐՊԵՍ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՎՍ ՄԻՋՈՑ

ԶՈՒԼԵՏԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ուսուաց լեզվի և գրականության ուսուցչուհի, Վանաձորի N 17 ավագ դպրոց

Ամփոփում

Հոդվածում ուսումնասիրվում են լեզվի զարգացման հարցերի առանձնահատկությունները, տեքստերի ընտրությունը ընթերցանության ժամերին: Ուշադրություն է դարձվում բնագրերի և թեմաների ընտրությանը, տեքստի ընկալման մեթոդներին: Զարգացվում են տեքստը զարակարապես վերլուծելու հնտություններ:

THE METHOD OF TEACHING READING AS A MEANS OF LINGUAL DEVELOPMENT

JULETA GRIGORYAN

A teacher of Russian Language and Literature, Vanadzor N17 High School

Summary

The features of the language development, the choice of the texts at the reading lessons are studied in this article. It's paid attention to the choice of texts and themes, the methods of text perception and is developed the skills of analyzing texts ideologically.

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Հեղինե ԱՄԻՐԵԿՅԱՆ

Լոռու մարզի Մեծ Պարմի գյուղի միջնակարգ դպրոցի տարրական դասարանների ուսուցչուհի



Րանրակրթությունն ապահովում է հասարակական վերարտադրությունը և անձի կրթական պահանջների բավարարում՝ ելնելով ազգային մշակութային պահանջնունքներից և սոցիալ-տնտեսական պահանջներից, ինչն էլ արտահայտվում է հանրակրթության նպատակներով և բովանդակությամբ: «Հանրակրթությունը նպատակառուղղված է սովորողի մտավոր, հոգևոր, փիզիկական և սոցիալական զարգացմանը, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ծևավորմանը, ինքնուրույն կյանքի, մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական կրթության նախապատրաստմանը» [1, հոդված 5, կետ 1]:

Ազնիայտ է, որ այսօր հանրակրթության ընդհանուր նպատակներ շարունակում են մնալ՝

1. մանաւոր ընդհանուր զարգացումը, նրա անձնային ունակությունների բացահայտումը, որոնք անհրաժեշտ են նաև հասարակությանը և պետությանը,

2. անձի մասնագիտական ունակությունների ձևակիրումը, որը կարող է տեսնել և ձևակերպել իր բնագավարի հիմնախմնդիրներն ու առաջարկել դրանց լուծան իրատեսական տարրերակներ,

3. հանրակրթական հաստատություններից դուրս արդյունավետ ինքնակրթության ապահովումը և այլն:

Սյուս կողմից հասկանալի է, որ հանրակրթության նպատակներն իրականանալի կլինեն այն երկրում, որտեղ կա ձևավորված սոցիալական պահանջ վերը նշվածի՝ մանաւոր զարգացման, համապատասխան մասնագետի ձևավոր-

ման և ինքնակրթության նկատմամբ: Սակայն հանրակրթության նպատակը առանց վերջինիս բովանդակության անհնար է պատկերացնել, որովհետև անձի կամ քաղաքացու ձևավորումը չի կարող լինել ինքնանպատակ: այն պայմանավորված է կրթության բովանդակությամբ, որի երթունը կազմում էն՝

1. բնույթյան և հասարակության մասին գիտելիքների, տեսական ու գործնական մոտեցումների, հմտությունների ու կարողությունների համակարգը,

2. հիմնախնդիրների լուծման ուղիների որոնման ստեղծագործական աշխատանքները, եղած փորձի հիման վրա նոր գաղափարների կառուցումը,

3. մարդու գործունեության տեսակների, երևույթների, պատմական իրադարձությունների, փաստերի և նպատակների նկատմամբ արժեքային դիրքոռոշումը և այլն: Ի. 3. Լերների սահմանման՝ «Կրթության բովանդակությունը գիտելիքների, կառողությունների և հնությունների, ստեղծագործական գործունեության, փորձի, աշխատի նկատմամբ էնոցինալ վերաբերմունքի մանկավարժորեն հարմարեցված համակարգ է» [2, էջ 12]:

Հանրակրթական դպրոցի գործունեության նպատակը սովորողների կողմից հանրակրթության պետական չափորոշչի, առարկայական չափորոշչների և ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը, անհատի բազմակողմանի զարգացումը, նրա առողջության պահպանումը, ինչպես նաև ինքնակրթության և լրացուցիչ կրթության պահանջնունքների բավարարման պայմանների ստեղծումն ապահովելն է [3, կետ 11]:

Այսպիսով, ուսուցման գործընթացի արդյունավետությունը գլխավորապես պայմանավորված է՝

• ուսումնական նյութի բովանդակությամբ՝

* Ներկայացվել է 22.10.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

աճում են գիտելիքները, սակայն նվազում է դրա յուրացման հնարավորությունը.

- ուսուցչի անձի, մտավոր և մասնագիտական կարողությունների, նրա խոսքի ներգործության ուժով, նյութի հաղորդման ձևով ու մեթով, հոգականության ապահովումով.

- տեղեկատվական տեխնոլոգիաների, ուսումնական տարրեր միջոցների նպատակային օգտագործմանը, ուսուցչի և աշակերտների փոխադարձ հանգործակցությամբ.

- գիտելիքների գնահատման տարրեր ձևերի և տեսակների օգտագործմամբ և այլն:

Այլ կերպ ասած՝ ուսուցման գործընթացի արդյունավետությունը չափվում է ոչ միայն և ոչ այնքան սովորողի յուրացրած գիտելիքներով, որքան նրա ձեռք բերած կարողություններով, այսինքն՝ հնագույն են անել շրջանավարտները ըստ կրթական մակարդակների: Այս խնդիրը լուծելի է դառնում, եթե ուսուցման ընթացքում վերաբաշխվում են հիմնական արժեքները.

- ուսումնառության ընթացքում աշակերտը դասը վերարտադրողից կամ պասիվ ընկալողից վերածվում է գործուն մասնակցի, անհրաժեշտության դեպքում կարողանում է ընտրել պրոբլեմի լուծման սեփական տարրերակը և կարող է ավելի հեշտ կողմնորոշվել նոր միջավայրում,

- ուսուցչը հրաժարվում է միանձնյա որոշումներ կայացնող դերից, «կատարեք այն, ինչ են են ասում» սկզբունքից և ուսուցման ընթացքում դառնում է այդ գործընթացը կազմակերպող և համապատասխան որոշումներ կայացնող անձ, իսկ աշակերտի համար՝ խորհրդատու և գործընկեր: Կամ ուսուցման ժամանակ ուսուցչը ներկայացնում է խնդիրը, սակայն աշակերտի հետ միասին է իրականացնում որոշողական աշխատանքները՝ նրա հետ մտնելով փոխգործուն հարաբերությունների մեջ:

Ընդհանրապես գիտելիք սուբյեկտիվ բնույթ ունի, քանի որ հենվում է աշխարհներակալման անհատական մեկնարանության վրա: Ինչպես որ միևնույն երևույթը տարրեր կերպ կարող է ընկալվել, այնպես էլ գիտելիքների միևնույն շերտը տարրեր ձևերով կարող է յուրացվել: Ուսուցչի դերն էլ հենց նրանում է, որ օգնի սովորողին «կառուցելու» իր գիտելիքները՝ չնայած, որ յուրաքանչյուր ուսուցիչ իր նպատակին է հասնում ուրույն ճանապարհով, ստեղծագործական սեփական միջոցների, մեթոդական ձևերի ու հնարերի գործադրման միջոցով:

Տարրական դասարաններում կրտսեր դպրոցականը գիտելիքներ է ձեռք բերում իր պրե-

տիկ փորձի անընդհատ հարստացման, մեծերին ընդորինակելու, սեփական մտածողության ու դատողությունների, ստեղծագործական կարողությունների միջոցով: Կրթական աստիճաններով անցնելով՝ փոփոխության են ենթարկվում երեխայի հասկացությունները, դատողություններն ու պատկերացումները ընդհանրապես աշխարհներակալման վերաբերյալ: Զեքը բերելով իր տարիքին հաճապատասխան գիտելիքներ, հմտություններ և կարողություններ՝ երեխան կենտրոնացնում է իր ուժերը, վարժվում տևական աշխատանքի ու դրսորում ապելի բարդ առաջադրանքներ կատարելու ունակություններ: Աստիճանաբար փոխվում են նաև կրտսեր դպրոցականի գիտելիքների ձեռք բերման ձևերն ու երանակները: Յեռանալով գգայական իմացություններ՝ երեխան տեղափոխվում է ընկալման ավելի բարդ և միաժամանակ հասանելի աշխարհ, ստանում ստեղծագործական կարողությունների նոր հնարավորություններ: Այսինքն, սովորողը թեմայի բառային ըմբռնումից և իմաստավորումից անցնում է նրա ստեղծագործական յուրացմանը:

Ըստ Հանրակրության պետական չափորոշչն՝ տարրական կրտսերացն իհմնական նպատակներն են սովորողի՝

- 1) մտավոր, հոգնոր և ֆիզիկական կարողությունների զարգացումը.

- 2) լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության աշխարհայացքային պատկերացումների հիմքերի ստեղծումն.

- 3) աշխատանքային նախնական հմտությունների ձևավորումը.

- 4) բարեկիրդ վարքի և կայուն արժեհամակարգի հիմքերի ձևավորումը.

- 5) բարոյահոգեբանական, հայրենասիրական, գեղագիտական, էկոլոգիական և ֆիզիկական դաստիարակությունը և առողջ ապրելակերպի հիմքերի արմատավորումը.

- 6) միջին դպրոցում ուսումը շարունակելու համար պահանջվող կրթամակարդակի պահպանը և այլ [4, էջ 15]:

Չափորոշչային այս պահանջներն իրականացնելու և ցանկալի արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է ստեղծել համապատասխան պայմաններ:

1. Աշակերտի դերի փոփոխություն կամ, որ նոյն է, կրտսեր դպրոցականը պետք է դառնա ուսուցման պրոցեսի ակտիվ մասնակիցը, համաձայն իր ընդունակությունների և կարողությունների:

2. Ուսուցման ընթացքում դասապրոցեսի կազմակերպման բազմազան ձևերի ու մոտեցումների ներդաշնակ և ընկալելի համակցում: Ստեղծագործական առաջադրանքների ընտրություն, որոնց լուծման ճանապարհին ակտիվացնում սովորողների ստեղծագործական գործունեությունը:

3. Ստեղծագործական կարողությունների զարգացմանը նպաստող հնարների համակարգված կիրառություն:

Ըստ ստեղծագործական գործունեության տեսակի՝ կարելի է առանձնացնել մի խումբ մեթոդներ և հնարներ, որոնք նպատակաւորդված են կրտսեր դպրոցականների ստեղծագործական ակտիվության խթանմանը և համապատասխան ունակությունների զարգացմանը: Օրինակ, ստեղծագործության պատկերների բանավոր վերարտորումը մայթեմի դասերին կամ գեղարվեստական տեքստսերի շուրջ աշխատանքի ընթացքում արդյունավետ է ստեղծագործական ընթերցանության հնարի կիրառումը: Այս հնարի օգտագործմամբ՝ երեխաները տեքստի շուրջ կատարում են բազմազան ստեղծագործական բնույթի առաջադրանքներ, որոնք եւ նպաստում են կարդացածի վերլուծությանը և ստեղծագործաբար արտահայտվելու կարողությունների զարգացմանը: Այս մեթոդական հնարի նպատակը գեղարվեստական տեքստսերի ընկալման ակտիվացումն է ինչպես մինչ ստեղծագործության ուսումնաժողովում, այնպես էլ նրա վերլուծությունից հետո: Կարդալու ժամանակ երևակայական պատկերների ստեղծումն ընթերցողի ստեղծագործական ակտիվության արդյունք է: Այն կարող է դրսևորվել սովորողի կողմից կարդացածի վերաբերյալ տպակորությունների ներկայացմամբ, շարունակության հորինմամբ, սյուժեի ստեղծագործաբար վերարտադրմամբ և այլն:

Տարրական կրթության առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ սովորաբար տարրական դասարաններում երեխաներն իրենց աշխատանքի և մտավոր գործունեության նկատմամբ հետևողական չեն: Նրանք երբեմն սկսած գործը, կարող են բողոքել անավարտ և անցնել մյուս աշխատանքին: Այս վիճակը առաջանում է այն դեպքերում, երբ սովորողները հանդիպում են բարդ և մտքի լարում պահանջող գործողությունների: Նմանատիպ բարդ առաջադրանքների լուծմանը խանգարում են նյութերի ծավալը, խճվածությունը, առաջադրանքների տեսակը և այլն: Դրա համար մեծանում է ուսուցչի դերը նման առաջադրանքների նեկանարանման ժամա-

նակ. Նա խելամիտ հարցադրումների միջոցով ստեղծում է պորբեմային իրավիճակներ, որոնց ժամանակ սովորողը կարող է տրամաբանական եզրակացություններ անել: Մայրենի դասավանդման ժամանակ բնագիր վերլուծության մեթոդը և հետաքրքիր է, և հնարավորություն է ստեղծում խորանալու ենթատեսակի բովանդակության մեջ, կատարելու տրամաբանական ժիշտ եզրակացություններ և պայմաններ է ստեղծում բանավոր խոսքի կապակցման կարողությունների զարգացման համար:

Սովորողների հմացական կարողությունների և տրամաբանական մտածողության զարգացման գործում լեզուն անփոխարինելի դեր է կատարում, որովհետև լեզվի միջոցով երեխան կարողանում է զգայական խնացությունից հեռանալով՝ իրականությունը հասկանալ պետի խոր ու ամբողջական ճիշտ դատողություններ անել: Լեզուն երեխայի հոգեկան կերտվածքի և ընդհանուր զարգացման խթանն է ու ազդակը: Լեզուն և մտածողությունը փոխադարձաբար կապված են միմյանց և լրացնում են մեկը մյուսին: Լեզվի ուսուցման միջոցով երեխաների ուղղելում առաջանում են հնչյունների ու բառերի մտապատկերներ, որոնք, միանալով առարկաներից առաջացած մտապատկերներին, ստեղծում են զուգորդումներ՝ ինչն էլ նրանց հնարավորություն է տալիս յուրացնելու տարրական հասկացություններ, կատարել մտահանգումներ: Այսինքն՝ այս ամենի օգնությամբ կրտսեր դպրոցականը կարողանում է վերլուծել, համեմատել, հակադրել երևույթները, տալ դրանց գնահատականը և այլն: Գրաճանաչողության շրջանում աշակերտները դժվարանում են վաճելեր, բառեր ու նախադասություններ կազմել: Սակայն վերացական մտածողության ակտիվացմանը շնորհիվ նրանք կարծ ժամանակահատվածում հմտություններ են ծնոք բերում և վարժվում իրենց մտքերը գրավոր կամ բանավոր շարադրելուն: Խոսքի տարրական այդ հմտությունները փոխադարձաբար նպաստում են սովորողի տրամաբանական մտածողության զարգացմանը: Մեր կարծիքով մեթոդապես ճիշտ կառուցված դասը հնարավորություն է տալիս ոչ միայն ակտիվացնել աշակերտների գործունեությունը, այլև վերականգնել, ամրակայել անցած թեմաներից ունեցած գիտելիքները և ծևակորել, մշակել դրանց կիրառման հմտությունները:

Հանրակրթական ուսումնական հաստատությունների խնդիրը եղել և մնում է սովորողների տեսական և գործնական պատրաստության հա-

մադրումը: Ուսուցման տեսական մակարդակի կամ ուղղակի սոսկ ակադեմիական գիտելիքների բարձրացումը արդյունավետ չի կարող լինել, եթե այն չի ուղեկցվում կարողությունների և հմտությունների ձևավորմամբ: Այսպես, օրինակ, կրտսեր դպրոցականը գիտի ուղղագրական կանոնները, սակայն գրավոր խոսքում թույլ է տալիս բազմաթիվ վխալներ, բանավոր բառերը ճիշտ է վանկատում, բայց տողադրծ անել չի կարողանում, առանձին հոլովում է բառերը, մինչդեռ դժվարանում է նախադասությունը ենթարկել ձևաբանական վերլուծության և այլն:

Մանկավարժության մեջ կա կարծիք, ըստ որի՝ հիմնահարցի ձևակերպումը ավելի կարևոր ու բարու է, քան դրա լուծումը: Այս տեսանկյունից կրտսեր դպրոցականի ճանաչողական գործունեությունը զարգացնելիս դասվարի ստեղծագործ մոտեցումը դառնում է առաջնահերթ խնդիր: Դետագոտական, փորձարարական գործունեության նման ձևաչափն էլ տարբերվում է ավանդական ճանաչողական գործնմթացի կազմակերպումից և ունի իր առանձնահատուկ բնույթը: Այստեղ չկա խմբի պատասխանը հուշող հստակ ձևակերպում, ինչն էլ իր հերթին խոչընդոտում է ինքնուրույն, ստեղծագործական գործունեությանը: Եթե խնդիր մեջ բացակայում է պատասխանը հուշող հստակ ձևակերպումը, բարձրանում է երեխաների հուզականությունը,

և մեծանում է նրանց հետազոտական ակտիվությունը: Ինչպես արդեն նշել ենք, յուրաքանչյուր երեխա ունի անհատական մոտեցման կարիք, և ուսուցչի խնդիրն է այնպես կազմակերպել հետազոտական բնույթի աշխատանքը, որ իր ուշադրության կենտրոնում գտնվեն բոլոր երեխաները: Հասկանալի է, որ երեխայի անհատական կարողությունների ձևավորումը դժվար ու երկարատև գործնմթաց է: Կարևոր է երեխաներին սովորեցնել վստահ քայլ կատարել դեպի նորը, հետաքրքիրը, ուրախանալ սեփական հաջողություններով, չվիճակով ամփափական համար:

Այսպիսով՝ հիմք ընդունելով հանրակրթական և առարկայական չափորոշչային խնդիրները՝ ուսուցչի նպատակը պետք է լինի այնպես կառուցել իր աշխատանքը դպրոցում, որ այն դառնա հասանելի յուրաքանչյուր կրտսեր դպրոցականի համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, 10. 07. 2009:
2. Ն. Ղավրան, Կրթության բովանդակության հիմնախնդիրները, «Մանկավարժություն», 2003, N4:
3. ՀՀ «Պետական համակարգական ուսումնական հաստատություն» ոչ առևտուրային կազմակերպության Օրինակելի կանոնադրություն. ՀՀ կառավարության 2010 թ. հունիսի 15-ի N 954 – ն որոշման:
4. Հանրակրթության պետական չափորոշիչ, 11.10. 2012:

THE CHARACTERISTICS OF THE GENERAL AND PRIMARY EDUCATION

HEGINE AMIRBEKYAN

A primary teacher of Mets Parni school

Summary

In this article some problems are discussed which are connected with the realisation of the organization of the state educational policy. Some legislative and legal theories are explained as well as standard approaches and the characteristics of the educational content and their connection with the primary education.

Mainly the article is about the revision of the educational content in primary school education, that is the system of knowledge, skills and abilities and the relationship between the teacher and the pupil. The development of the creative. Thinking by the teacher is also emphasized in this article.

ԴՏԴ 74:502:18 ՊԻԶԱՅՆԻ ԲՆԱՊԱՐՊԱՆԿԱՆ, ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ-
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ*

Շողիկ ԲԱԼՅԱՆ

ՀՊՄԴ գեղարվեստական կրթության ֆակուլտետի հայցորդ

Ատենախոսության թեման՝ Դիզայնը որպես գեղագիտական պահանջմունք, դասավանդման
առանձնահատկությունները բուհում

Գիտական դեկան՝ Լենո ՆԵՐՍԻՍՅԱՆ՝ մանկ. գիտ. դոկտոր պրոֆեսոր, ՈԴ ԿԱ ակադեմիկոս
ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ



Հիգայնը՝ որպես մասնագիտություն, ձևավորվել է 19-րդ դարի վերջերին Անգլիայում ծավալված «Ճանուն արվեստի ու արհեստի կապի» հայտնի շարժումից, որի դեկանավարն էր առարկայական արվեստի հայտնի նկարիչ ու գործիչ Ուիլյամ Մորիսը: Ենց այդ ժամանակ են նշակվել դիզայնի գեղարվեստական սկզբունքները ու տեսաբանական ուղղությունները, որոնք մեծ ազդեցություն են թողել դիզայներական դարոցների ձևավորման ու դիզայներական ուղղությունների վրա:

Երբեմն դիզայնի՝ որպես մասնագիտության առաջացումը կապում են 20-րդ դարի սկզբի հետ, երբ արտադրական ճյուղերում նկարիչները գրավեցին առաջատար դիրքեր ու հնարավորություն ստացան նշակելու կազմակերպությունների ֆիրմային ոճը՝ դրանով իսկ ազդելով գործարանների թողարկած արտադրանքի արտաքին տեսքի ու ձևավորման վրա:

Գոյություն ունի կարծիք, որ դիզայնի՝ որպես մասնագիտության մասին կարելի է խոսել այն ժամանակից սկսած, երբ ձևավորվեցին դիզայնի դասավանդման մեթոդներով առաջնորդվող դպրոցները:

Դիզայն տերմինը երևան է եկել 20-րդ դարի սկզբին: Որպես հասկացություն տարբեր լեզուներում ունեցել է տարբեր ձևակերպումներ և սահմանումներ, որոնցից ելենելով էլ 1959 թ. ICSID (Արդյունաբերական դիզայնի կազմակեր-

պությունների միջազգային խորհուրդ) 1-ին համաժողովում հիմնական միջազգային տերմին է ընդունվել design գրելաձեզ, որը նշանակում է գծել, նկարել, պահանջիրել, նախագծել, մտահղանալ:

Մարդկային հարաբերություններում, կենցաղում, աշխատանքում դիզայնը ծառայում է որպես շրջապատող միջավայրը գեղեցկացնելու միջոց: Դիզայնը առաջացել է դեռևս այն ժամանակ, երբ մարդու մոտ առաջացավ հետաքրքրություն շրջապատող միջավայրի գեղագիտական վերակազմակերպման հանդեպ:

Դարբ որսկրերի, քարերի, գործիքների, կենցաղային իրերի վրա կատարված գժանկարները գալիս են ապացուցելու, որ նախնադարյան մարդու ոչ միայն վարժվել է պարզ գծեր անելու մեջ, այլ նաև ուսումնասիրել է պատկերվող առարկաների ձևերն ու համաշխափությունները՝ դրանց նկատմամբ ցուցաբերելով դիզայներական մոտեցում:

Վերածննդի խոշորագույն ներկայացուցիչ Ա. Դյուրերը դիզայնը համեմատել է բնության գեղարվեստական ընկալման և այն մարդու կողմից վերարտադրելու երևույթի հետ:

Դիզայնի մասին տեղեկություններ կան Յին Շունաստանի (Արիստոտել, Պլատոն, Պոլիկլետ, Յերոդոտոս և այլք), Յին Քոնմի (Պլիմիուս, Վիտրուվիոս և ուրիշներ), հին և միջին դարերի հնդկական, ճապոնական, չինական, հայկական, Մերձավոր և Սիցիին Արևելքի աղբյուրներում: Դիզայնի մասին հիշատակումներ է թողել նաև Լեոնարդո Դա Վինչին «Նկարչության մասին» աշխատությունում:

Գեղագիտական ճաշակի կամ դիզայնի ամենատարբեր տարրեր են պարունակում ուրար-

* Ներկայացվել է 21.10.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

տական արձանագրությունները:

Գեղագիտական ճաշակի մասին կարևոր հիշատակումներ և ակնարկներ կան 5-րդ դարի հայ պատմիչներ Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու, Ստեփանոս Տարոնացու, Սամվել Անեցու, Կիրակոս Գանձակեցու, Ստեփանոս Օրբեյանի, Թովմա Մեծովեցու և ուրիշների պատմագրական աշխատություններում:

Դիզայներական առանձնահատուկ խնդիրներ են արձարձված Դավիթ Անհաղի, Անանիա Շիրակացու, Հովհաննես Որոտնեցու, Գրիգոր Տաքեացու աշխատություններում: Պետք է կարևորել նաև 9-10-րդ դարերի պատմագիր Թովմա Վրձորուն՝ Աղքամարին նվիրված նկարագրությունները:

Ժամանակակից արդյունաբերական արտադրությունը չի կարող լինել ոչ տեխնոլոգիական, հակառակ դեպքում այն հակասության մեջ կմտնի մեթենյայական արտադրության ու շուկայի օրենքների հետ: Նույնիսկ դեկորատիվ-կիրառական գիտության մեջ, որի ստեղծագործությունները յուրահատուկ են և թողարկվում են սահմանափակ քանակությամբ, տեխնոլոգիայի հարցերն առաջնային տեղ են զբաղեցնում: Ապակե գեղարվեստական իրերի ստեղծումը հնարավոր է դառնում միայն փշելու, եզրային նուրբ զարդերի պատկերման և ապակու սեղման արվեստներին տիրապետելու դեպքում: Նույնը կարելի է ասել նաև թանկարժեք զարդերի ստեղծման մասին: Այս ոլորտում իրերի ստեղծումը հնարավոր է դառնում միայն թանկարժեք քարերի և գունավոր մետաղների մշակման արվեստին տիրապետելու դեպքում [1]:

Դիզայնը, իր զարգացմանը զուգահեռ, ոչ միայն վերածվել է առանձին մասնագիտական գործունեության, այլև սկսել է ազդեցություն ունենալ գեղարվեստական-նախագծային մշակույթի վկա ամբողջությամբ:

1970-ական թթ. առաջացավ ոճային մի ամբողջ ուղղություն՝ High-Tech: Առաջին անգամ այս ուղղության մասին հիշատակվել է 1978 թ. Կրոնի ու Սլեցինի նույնանուն գրքում: Այս ոճի հիմքում ընկած են տեխնոլոգիաներին ու տեխնիկային հիմնատիպ մոտեցումները: ճարտարագիտության մեջ ննան ոճի պատմական օրինակ է հանդիսանում Փարիզի Արվեստների կենտրոնը: Պատճառաբանելով առավելագույն ճկունության ապահովումը՝ կցակառուցները դուրս են բերվել հիմնական պարիսպներից՝ ստեղծելով արհեստական անտառների պատրամք:

Կահույքի տարրերի թվին սկսեցին դասել ավտորուսների, օդանավերի, ատամնաբրուժական բազկաթռուները, իսկ խեցեղենի, ամանեղենի պատրաստման համար սկսեցին օգտագործել լարորատոր ապակին:

Բնակարանային և գործարանային, բժշկական աշխատանքների համար նախատեսված լամպերի սեղման հարցում սուր ներգործությունների առաջացումը հանդիսանում էր ոչ ավանդական ծևերի ու լուսավորության կիրառման արդյունքը:

Օրգանական քիմիայի և արհեստական մետաղների, նոր, երեմն ոչ երկարատև ժամանակահատվածում փորձարկված հումքով իրերի արտադրությունն առաջին պլան է մղում հիգիենայի և մարդու կողմից դրանց տեղափոխման անվտանգության ապահովման հարցերը:

Կան դեպքեր, երբ իրենց վնասակար ազդեցության պատճառով արտադրությունից հանվել են ամրողական ապահովատեսակներ, ինչպես, օրինակ, բրիտանական մի կազմակերպության ռետինե «Ճացողո» խաղալիքները, որոնք նախատեսված էին փոքր տարիքի երեխաների համար, բայց առաջացնում էին ալերգիկ հակազդեցությունները:

Կարևոր է նաև անվտանգության միջազգային պահանջների բավարարումը բնակելի և հատկապես բժշկական նպատակներով օգտագործվող տարածքներում, որտեղ մարդիկ անցկացնում են իրենց ժամանակի մեջ մասը: Անվտանգ պետք է լինեն պատերի ներկերը, բնակարանի ներքին հարդարանքի համար նախատեսված նյութերը, առաստաղային կառույցները, հատակի մակերեսի համար նախատեսված շինարարանքը, կահույքը [2]:

Ժամանակակից պայմաններում շատ դժվար է պահույթի էկոլոգիական պահանջների բավարարումը, որոնք առնչվում են տնտեսավարության և տեխնիկայի հարցերին: Բնական, էկոլոգիապես մարդու հումքը թանկարժեք է արհեստականների համեմատությամբ, առանձին դեպքերում դրանք զիջում են արհեստական հումքին իրենց ծկունությամբ ու անվտանգ տեղափոխման ցուցանիշներով, իսկ որոշ դեպքերում, օրինակ՝ խոնավությունը բացառող հասուն կոշիկների ու հագուստի արտադրության մեջ, դրանք ընդհանրապես կիրառելի չեն:

Դիզայնի պրակտիկայում գոյություն ունի նյութերի ընտրության առանձնահատուկ մոնտեցում: Օրինակ՝ լինոլինմը, որով ծածկված է բնակելի տան՝ մանուկների համար նախատեսված հատվածի հատակը, կարող է երեխայի

առողջության ավելի մեծ վճար հասցնել, քան անորոշ հումքից պատրաստված խաղալիքը: Նույն լինութեամբ, սակայն, ավելի հարմար է օգտագործել բժշկական ծառայությունների մատուցման համար նախատեսված տարածքներում, նաև՝ քանի որ այն ավելի մատչելի է, և երկրորդ՝ իր խոնավությունը բացառող հատկության շնորհիվ թույլ է տալիս իրականացնել նման հաստատությունների համար անպայման համարվող խոնավ, թաց ախտահանում:

Բնակարանում ավելի հիգիենիկ է բնական, մաքուր հումքից պատրաստված կահույքի տեղադրումը, իսկ բացօթյա սրճարաններում ու հանգստյան տեղերում՝ համեմատաբար էժան հումքից պատրաստված կահույքի օգտագործումը: Դիզայններների կողմից ստեղծված միշտը առարկաների ոչ երկարակեցության արդյունքում առաջ էկած ու արտադրվող մեկանգամյա օգտագործման պարագաների ներառումը մարդու առօրյա առաջնային հարթություն են մոլում իրենց պահպանությամ ժամկետն անցած իրերի վերամշակման հարցերը: Խնդիրը հատկապես սրվել է վերջին տարիներին՝ արտադրության մեջ օրգանական քիմիայի տարրերի և նոր արհեստական նյութերիի օգտագործման պատճառով, քանի որ դրանք իհմնականում չեն այրվում և չեն ենթարկվում տարանջատման:

Վերամշակման երևույթի արտահայտումներից է վերջին տարիներին տարածում ստացած առարկաների երկրորդական օգտագործման պրակտիկայի իրականացումը: Դրա վար օրինակն է փողոցներում տեղադրված աղբամանների շահագործումը, որոնց մեջ առանձին հավաքվում են թթի, ստվարաբրդի բափոնները, ապակիները, պլաստմասն, կոշտ փաթեթները: Այս կերպ հավաքված բափոնները վերամշակման են ենթարկվում և նորից դրվում արտադրական շրջանառության մեջ:

Այս է պատճառը, որ ժամանակակից պայմաններում դիզայնների խնդիրը ոչ միայն նոր արտադրական լուծումների որոնումն է, այլ նաև իրերի երկրորդական օգտագործման ու վերամշակման/ուսիլիզացիայի իրականացման ապա-

հովումը:

Ժամանակակից աշխարհում ավելի ու ավելի մեծ տարածում է ստանում հագուստի մողելավորումը: Դեռևս նախորդ դարի 60-70-ական թթ. հագուստի մողելավորումն էր գտնում գեղարվեստական մողելավորողների աշխատանքներում, որոնք կատարվում էին անհատապես, մեծ տարածում էին ստացել պատվերով կարված զգեստները: Սուրելավորող-դիզայններների աշխատանքները կարի արտադրության մեջ «սեփական» բնույթ էին կրում (հեղինակային իրավունք) [1]:

Գրաֆիկական դիզայնը այսօր դիզայներական գործունեության՝ առավել տարածում գտած և ամենահինը համարվող ուղղություններից մեկն է: Դրան են վերաբերում գրքերի ձևակորումը, գովազդային-տեղեկատվական ծրագրերի ստեղծումը, բուկլետների, ցուցապատճենների, արտադրական գրաֆիկաների ու փաթեթավորման, ախտակների, առևտրային ապրանքանիշների, ֆիրմային նշանների և այլ տարրերի ստեղծումը: Գրաֆիկական դիզայնին են վերագրվում նաև գովազդային արտադրանքի, տեսահոլովակների, հեռուստաեթերում ցուցադրվող տեսահոլովակների արտադրությունները և մի շարք այլ արտադրանքներ [3]:

Դիզայնը շրջապատող առարկայական աշխարհի կառուցվածքային և գեղարվեստական նախագծումն է: Այն, որպես այդպիսին, գյուղայուն է ունեցել դեռևս վաղ ժամանակներից: Դիզայնը մարդու ստեղծագործական դրսերումներից է, քանի որ արտահայտում է մարդու գայլական, մտավոր, հոգևոր ընդհանրական համակցությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Բելօվ Ա. Ա., Գվօզդէվ Ե. Մ.** История дизайна. с.н.б. образование, (рос. гос. пед. ун-т. им. А. И. Герцена) 1993, 76 с.
- Կովեշնիկովա Հ. Ա.** Дизайн. История и теория. Учебное пособие. Л., Изд. "Омега", 2009, 223 с.
3. Композиционные средства и приемы художественной выразительности в дизайне. Труды ВНИИТЭ. Вып. 13, М., 1982.

THE ECOLOGICAL, AESTHETIC-OPERATIONAL MODERN TRENDS OF DESIGN

SHOGHIK BALLYAN

Summary

The design is the artistic and formation projection of surrounding material world. It has existed still early times. The design is the artistic displays of human, because it expresses the sensual, mental, spiritual generally combination of human.

ՍՈՎՈՐՈՂԻ ԻՆՔՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՑՉԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ*

Արմինե ՍԱՐԳՍՅԱՆ

Լոռու մարզի Գեղասար գյուղի միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի ուսուցչուհի



Ժամանակակից կրթության մեջ ուսուցման կազմակերպման համար կիրառվող ձևերը կրթության նպատակների ու բովանդակության հետ միասին սովորողներին թեև պահովում են տեսական գիտելիքներով, սակայն չեն ձևավորում դրանք իրական կյանքում կիրառելու կարողությունները։ Մ. Լատեհ ձևակերպման համաձայն՝ «... Կրթությունն այն է, ինչ մնում է դպրոցում սովորած մոռանալուց հետո» [1, էջ 169]։ Անհանդիպ է, որ կրթական գործընթացի յուրաքանչյուր մասնակից և առավելապես ուսուցիչները սովորողների ուսուցման գործընթացը նախապատրաստելիս ուշադրություն դարձնեն նրանց կողմից իրականացվող ինքնուրույն աշխատանքի կազմակերպման առանձնահատկությունների վրա։ Սովորողների ստեղծագործական գործունեության է յուղված ուսուցման ընթացքում նրանց ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը որպես ուսումնական գործունեության կարևորագույն պայման և միջոց։ Դատկապես կարևոր է այնպիսի ինքնուրույն աշխատանքը, որի կատարման ընթացքում սովորողը հնչանա հայտնի, այնպես էլ լուծումների նոր կառուցվելիք միջոցները պետք է անընդհատ տեղափոխի ճանաչողական գործունեության նոր իրավիճակներ։ Ինքնուրույն աշխատանքը կարելի է քննարկել մի շարք տեսանկյուններից։

ա. Ինքնուրույն աշխատանքը որպես սովորողի ճանաչողական գործունեության ուղղված միջոց, որպես նպատակավոր դպրոցում կազմակերպում է սովորողի ուսումնական գործունեությունը դասապրոցեսի ժամանակ և դասից դուրս՝ տնային հանձնարարությունները կատարելիս,

բ. ինքնուրույն աշխատանքը որպես ուսուցման դիդակտիկական միջոց, որպես մանկավարժական գործունեության հնար կամ ձև, որի միջոցով ուսուցչը կազմակերպում է սովորողի ուսումնական գործունեությունը դասապրոցեսի ժամանակ և դասից դուրս՝ տնային հանձնարարությունները կատարելիս,

գ. և իհարկե ինքնուրույն աշխատանքը որպես միջոց սովորողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների, որոշակի արժեքների, ստեղծագործական հմտությունների ձևավորման ու պահպանման համար։

Ինքնուրույն աշխատանքը որպես ուսուցման միջոց արտահայտվում է ինչպես տարաբնույթ առաջադրանքների ձևով, այնպես էլ ճանաչողական կամ գործնական խնդիրների միջոցով, որոնք հանդիսանում են որոշակի խթան սովորողներին ուսումնածանաչողական գործընթացի մեջ ընդգրկելու համար։ Այս խնդիրը ուսումնասիրողները առանձնացնում են սովորողի ինքնուրույն ճանաչողական գործունեության չորս տեսակ՝

1. Ուսուցչի անմիջական օգնությամբ սովորողի ուսումնառության նպատակի կանխորոշում կամ նրա ուսումնական գործունեության պահանակուում։ Այստեղ մենք նկատի ունենք առարկայական չափորոշիչների վրա կառուցվելիք գիտելիքների, հմտությունների և կարողությունների, որոշակի արժեքների ձևավորումն ու զարգացումը,

2. Սովորողի ուսումնառության նպատակադրության համար իրականացվում է միայն ուսուցչի կողմից, մինչեւ որպան հասնելու ձևերն ու միջոցները ընտրում է սովորողը,

3. Մրգած կոնկրետ առաջադրանքի նպատակադրում և պահանակուում սովորողը իրականացնում է ինքնուրույն ուսուցչի ներկայացրած ընդհանուր հանձնարարության շրջանակներում,

* Ներկայացվել է 11.11.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.։

4. սովորողը առաջադրանքը կատարում է առանց ուսուցչի օգնության՝ ձևակերպելով աշխատանքի բովանդակությունը և այն իրականացնելու անձնական նոտեցումներուն ու հնարավորություններուն:

Սովորողների մեջ ծանազողական գործունեության բոլոր տեսակների ձևավորման կարևորագույն միջոց է նրանց կողմից ինքնուրույն աշխատանքների տարրեր ձևերի ու տեսակների կատարումը: Որո՞նք են ինքնուրույն աշխատանքի տեսակները՝

ա. նմանօրինակ ինքնուրույն աշխատանքներ, որոնք պահանջում են լուծման հայտնի ձևը տեղափոխել նմանօրինակ ներառարկայական իրադրություն: Ինքնուրույն լուծման միջոցներին, որոնք ցույց է տվել ուսուցիչը կամ մանրամասն մկարագրված է դասագրքում: Օրինակ, «Երկու անհայտով երկու հավասարումների համակարգի լուծումը, եթե մեկ հավասարումը երկրորդ աստիճանի է, իսկ մյուսը՝ առաջին»,

բ. ըստ օրինակի ինքնուրույն աշխատանքներ, որոնք պահանջում են խնդիրի կամ վարժության լուծման հայտնի ձևը տեղափոխել նմանօրինակ կամ մոտավորապես նմանօրինակ միջառարկայական իրադրություն: Այդ առաջադրանքները նման են առաջին տեսակի աշխատանքներին, սակայն դրանց կատարման համար պահանջվում է հարակից ուսումնական առարկաների խնդիրների լուծման եղանակների կարողություն,

գ. նմանակի կամ հուշող հարցերի օգնությամբ բացատրվող ինքնուրույն աշխատանքներ, որոնց կատարման ժամանակ պահանջվում է լուծման մի քանի հայտնի եղանակները տեղափոխել ոչ սովորական միջառարկայական և ներառարկայական պրոբլեմային իրողություններ և համակցել:

դ. հետազոտական ինքնուրույն աշխատանքներ, որոնք պահանջում են ստեղծել ներառարկայական և միջառարկայական պրոբլեմային առաջադրանքների լուծման նոր եղանակ, ներող:

Նմանօրինակ միջառարկայական և ներառարկայական եղանակների միջոցով առաջադրանքների կատարումը սովորողներից պահանջում է ոչ միայն իմանալ եղանակի ուղղակի տեղափոխելու, խնդիրը վերարտադրելու, տարրերակները և լուծումը, ստացած գիտելիքների սուլցումն ու գնահատումը, այլև ըստ օրինակի նման օրինակ խնդիրների ինքնուրույն լուծումը: Այս իրավիճակներում սովորողի բոլոր գործունեու-

թյան եղանակների իմացությունից: Դրա սկզբունքային հնարավորությունը ելնում է պայմանների նմանությունից, իսկ համապատասխան եղանակի օգտագործման նպատակամդվագությունը կամ բխում է խնդիրի պայմաններից, կամ որոշվում է ուսուցչի ցուցումներով: Ուսուցչի հատուկ ցուցումների անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ աշակերտները չեն տիրապետում գործունեության եղանակների օգտագործման առանձնակի հետևանքների կանխագուշակման փորձի, եթե ուսումնասիրված գործողությունները վերափոխվում են, այսինքն մտնում են ավելի բարդ գործողությունների շղթայի մեջ: Այդ պատճառով ըստ օրինակի ինքնուրույն աշխատանքների կատարման ժամանակ սովորողի բոլոր գործողությունները միայն հիմք են հանդիսանում սեփական ճանաչողական գործունեության պլանավորման կարողության ձևավորման և ճանաչողական ինքնուրույնության փորձի ձևավորման համար: Այս փորձը սկսում է ձևավորվել միայն այն ժամանակ, եթե աշակերտը արդեն կատարում է տարբերակային ինքնուրույն աշխատանքներ՝ հայտնի եղանակը որոշ վերափոխությամբ ոչ սովորական միջառարկայական և ներառարկայական պրոբլեմային իրավիճակ տեղափոխելու ողղությամբ:

Ներկայացված ինքնուրույն աշխատանքները սովորաբար իրենց մեջ պարունակում են ճանաչողական խնդիրներ, որոնց պատասխանները գտնելու համար անհրաժեշտ է:

ա. հետազոտել իրենց համար ոչ սովորական իրավիճակները,

բ. բացահայտել այդ իրավիճակներում առաջացած ուսումնական պրոբլեմներին բնորոշ հատկանիշները,

գ. գտնել այդ պրոբլեմների լուծման միջոցները,

դ. հայտնի եղանակներից ընտրել ամենահրականը,

ե. ուսումնական իրավիճակներին համապատասխան վերափոխել դրանք:

Բոլոր այդ գործողությունները, ի տարբերություն նրանց, որոնք ձեռնարկում են սովորողները ըստ օրինակի ինքնուրույն աշխատանք կատարելիս, ակնառու չեն: Դրանով ինքնուրույն աշխատանքի նշված տեսակները իրենց լուծման համար պահանջում են ոչ միայն նախկինում ձեռք բերած գիտելիքների և նրանց օգտագործման եղանակների առանձին գործառնական կապերի, այլև նրանց ամբողջ կարուցվածքի իրականացում: Նկատենք, որ աշակերտը մի

քանի հայտնի եղանակներ տեղափոխելով և ուսուցման կոնկրետ հրավիճակում դրանք գորգակցելով՝ ոչ սովորական հրադրությունում հայտնի եղանակները զուգակցելիս կատարում է ընդհանրացում, առանձնացնում էականը ոչ էականից: Նմանատիպ ինքնուրույն աշխատանքը սովորողներին մղում է տրամաբանական մտածողության էական կապերը որոշելու համար, ինչն էլ ուսուցման գործընթացում դիտվում է ստեղծագործական փորձի և ծանազողական ընդունակությունների զարգացման նախադրյալ: Պատահական չէ, որ հանրակրության պետական քաղաքականության նպատակներից մեկն էլ համարվում է «ուսումնական հաստատություններում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը» [2, հոդված 5, կետ 4]:

Սովորողների ինքնուրույն աշխատանքի տեսակներից մյուսը համարվում է տնային առաջադրանքը: Եթե թեմատիկ, գործնական և կիսամյակային առաջադրանքների կատարման ժամանակ այնուամենայնիվ ուսուցչի մասնակցությունը նկատվում է սովորողներին ինչ-որ չափով օգնելու տեսանկյունից, որովհետև նշված աշխատանքները կատարվում են դասարանում, ապա տնային առաջադրանքի կատարման ընթացքում սովորողը ամբողջությամբ հայտնվում է միայնակ վիճակում՝ ուսուցչի գուցումների և խորհուրդների հետ միասին: Ուսուցչի խնդիրը տնային առաջադրանքի հանձնարարման ժա-

մանակ ոչ այնքան կրկնության, որևէ դասի հետ կապված առանձին հանձնարարությունների ճշգրտումն է, այլ այն գործողությունների հրականացումը, որոնք հանգեցնում են աշակերտի մեջ մտածելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը: Այս թե ինչու տնային առաջադրանքը որպես ինքնուրույն աշխատանքի տեսակ ունի իր առանձնահատուկ կողմերը: Տնային առաջադրանքի նման առանձնահատուկ գծերից են սովորողի իմացական և ծանազողական կարողությունների զարգացումը, նրա անձնային որակների դաստիարակումը: Տնային առաջադրանքը սովորողին ընձեռում է լրիվ ինքնուրույնության հնարավորություն և հանդես է գալիս որպես էական գործոն նրա բարոյականային հատկանիշների ձևավորման ու դաստիարակության համար:

«Այն հանձնարարության հեշտացումը, որն աշակերտին զրկում է ինքնուրույն շանքերից ու ներքին կենտրոնացումից, դառնում է վնասակար», - գրել է նշանավոր հայ մանկավարժ Գ. Էդիսանը [3, էջ 76]:

Այսպիսին էին ինքնուրույն աշխատանքի տեսակները, որոնք ընկած են սովորողների տեսական գիտելիքների ուսուցման իմբուլմ, որպես սեփական անձի ինքնաճանաչողությունը և ինքնազարգացումը պլանավորելու միջոց:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Լայզ Մ.**, Մօն տեօրիկան ուսուցչության մասին պատմություն մասին ՀՀ օրենք, Ե., 2009, հոդված 5, կետ 4, էջ 16:
2. Հանրակրության մասին ՀՀ օրենք, Ե., 2009, հոդված 5, կետ 4, էջ 16:
3. Գ. Էդիսան, Անտիկ էջեր, Եր., 1988:

ORGANISING OF STUDENT'S SELF WORK AND TEACHER'S ACTIVITY

ARMINE SARGSYAN

Teacher of maths of Geghasar secondary school

Summary

In the article it is explained the main ways of self work, as a main way and condition of teaching. They show the main types of self work, the specificity of each type during math's lesson.

They try to show the cognitive problems of self work from the point of view of students' self development and the formation of their personal qualities.

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՆ ԴԵՐԸ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԵՋ*

Լիլիթ Արուջոյեան

Վանաձորի N 10 ավագ դպրոցի պատմության ուսուցչուհի



Qնայած հաճ-
րակրության
ոլորտի տեսա-
կան մակարդակում
զգալի փոփոխու-
թյուններ են տեղի ու-
նեցել և շարունակում
են ունենալ, սակայն
գործնական առումնով
ուսումնական հաս-
տատությունների
նպատակը մնում է նոյնը, այն է՝ ստվերութերի
գիտելիքների որոշակի համակարգի ձևավորու-
մը, երանց ճիշտ տեսակետներով ու պատրաս-
տի պատասխաններով գինելը, ինչը հակասում է կրթության բովանդակության բաղադրիչների ոչ
նպատակային ու համարժեք կիրառմանը: Այս
մտահոգությունից ելնելով՝ կարծում ենք, որ
անհրաժեշտ է ուսուցչի մասնագիտական և մե-
թորական որակների փոփոխություն ստվերու-
թերի ճանաչողական և վարքագօային խնդիրնե-
րի առումով: Սա այն կարևոր ելակետային մո-
տեցումներից է, որն այլևս սահմանափակում է
ուսուցչի դերի կաղապարվածությունը, անհոգի
մտածելակերպը, սեփական սի գերազանահա-
տումը, տարիների ընթացքում անգիր արված
մտքերի հաղորդումը, ուսուցման նպատակների
հանդեպ անվստահությունը և այլն: Ահա թե ին-
չու այսօր ավելի հաճախ է խոսվում նորովի դա-
սավանդելու անհրաժեշտության մասին: Այս
նպատակով է անդրադառնում ենք ուսուցման
արյունավետության բարձրացման կարևոր
բնութագրականներից մեկին՝ կառուցղականու-
թյան սկզբունքին:

Կառուցղականության (կոնստրուկտիվզմի) գաղափարը սկզբ է առել դեռևս Սոլյարտ-
սից: Այն մշակվել և զարգացվել է Ա. Քիլբերտի,
Լ. Բրաուերի, Ա. Շեյինգի, Ա. Կոլմոգորովի, Ա.

Մարկովի, Պ. Լորենցենի և ուրիշների աշխատու-
թյուններում: Կառուցղականության մոտեցման
խնդիրն է համակարգի մեջ քննարկվող գաղա-
փարների և դրանց վերաբերյալ պնդումների
հաջորդական կառուցումը [1, էջ 214]: 18-րդ դա-
րում «կառուցղականության տեսության այնու-
ներներից է» եղել Զ. Վիկոն: Այդ տեսության հե-
տագա զարգացումը, բացի վերոհիշյալ հետի-
նակներից՝ հիմնավորապես տվել է Է. Կանտը,
ով փորձել է միացնել գիտելիքի մասին երկու
տարրեր տեսակետները՝ գործողությունների և
առարկաների տրամարանական վերլուծությու-
նը: Չնայած երկու տեսակետներն եւ ունեն իրենց
առավելությունները, սակայն առանձին-առան-
ձին չեն կարող ընկալել ողջ աշխարհը: Է. Կան-
տը ամրում էր, որ յուրաքանչյուր նոր գիտելիք
կազմված է ընկալումներից, որոնք գալիս են
համարելու արդեն գոյություն ունեցող դատո-
ղությունները: Դրանք կարող են լինել տեսա-
կետներ կամ ճանաչողական կառուցներ, որոնց
միջոցը դատողությունը վերլուծվում է և կազ-
մակերպվում: Ավելի ուշ Զ. Բրուները դրանք ան-
վանեց «մտավոր կառուցներ» [2, էջ 46]: Ահա թե
ինչու, եթե ասում ենք կառուցղական սկզբուն-
քով աշխատող ուսուցիչ, նկատի ենք ունենում
ստվորողին դեպի ճանաչողական կառուցներ
տանող, դասի ժամանակ, որպես կանոն, մտա-
ծողական ողջ գործընթացը իր վրա վերցրած,
այլ մտքերի կամ զարաֆարների փոխադարձ
ընկալման անհրաժեշտությունը գիտակցող
ան: Ուսուցիչը պարտավոր է իր աշակերտին
փոխանցել այն, ինչ նախատեսված է առարկա-
յական չափորոշչով, ուսումնական ծրագրով և
թեմայի բովանդակությամբ, սակայն կարևոր է,
որ ստվորող համագործակցության մեջ մտնի
ճանաչողության միջոցների կամ նյութի բովան-
դակության տարրերի հետ, ինչից ել սկսվում է
կառուցղական կրթությունը: Վերը շարադրվա-

* Ներկայացվել է 15.11.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

ծից հետևում է, որ պատմության առարկայի (նաև մյուս ուսումնական առարկաների) դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով պետք է կիրառվեն մի շարք մոտեցումներ, որոնք վերաբերում և ներառում են կառուցողականության գաղափարը.

ա. Թեմայի դասավանդման ժամանակ ուսուցչի գործունեության առաջին անհրաժեշտ պայման կարող է լինել առանցքային հասկացության կամ գաղափարի շուրջ նախնական քննարկում ծավալելը՝ հաճապատասխան հարցադրումների միջոցով։ Սովորողները անհատապես կամ խնբերով կփորձեն լուծել այդ խնդիրը՝ տալով նույնիսկ հակասական պատասխաններ, բայց, որ ամենակարևորն է, նրանք կներգրավվեն ուսուցման գործնքացի մեջ։ Սակայն եթե ուսուցիչն աշակերտներին սեփական կարծիքը ու տեսակետը արտահայտելուց առաջ հայտնում է իր տեսակետը, ապա դրանով բացառում է քննարկումները։ Սովորողը լսելով ուսուցչի կարծիքը՝ բավարարվում է դրանով և այլև չի մտածում ներկայացված հարցի ուղղությամբ։ Նախնական պատասխանները տվյալ հիմնահարցի վերաբերյալ աշակերտների նախնական մտքերն են։ Նետեարար ոչ վերջնական են, ոչ էլ ամբողջական։ Դրամբ լրացնելու, զարգացնելու միջոցով աշակերտները վերագնահատում են սեփական մտքերն ու դատողությունները։ Կարևոր է, որ առաջադրանքները ծևակերպելիս ուսուցիչը կիրարի ճանաչողական եզրակացություն, օրինակ, «Դասակարգել», «համեմատել», «Վերլուծել», «Լանջնատեսել», «Եզրակացնել» և այլն։ Այն ուսուցիչը, որը մի քանի տարբերակներից ծիշտ ընտրելու առաջադրանքով թեստային աշխատանքի ժամանակ աշակերտներին հանձնարարում է որոշել, թե տրված հնարավոր տարբերակներից ո՞րն է արտահայտում պատմության գլխավոր միտքը, ուսուցողական բոլորովին այլ նպատակ հետամտում ի տարբերություն այն ուսուցչի, որն աշակերտներին առաջարկում է վերլուծել, օրինակ, «Դայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.» և «Դայաստանը Խորհրդային իշխանության տարիներին» սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման առանձնահատկությունները, կամ ի՞նչ կկատարվեր, եթե չկործանվեր Դայաստանի Հանրապետությունը և այլն։ Պատմական փաստերի, իրադարձությունների, դեպքերի վերլուծությունը, կանխատեսումը և նման այլ ճանաչողական առաջադրանքները նպաստում են սովորողների նոր հասկացությունների ծևակորմանը։

բ. Ուսուցիչը, գիտենալով տվյալ դասարանի

սովորողների մտավոր կարողությունները, դասը կառուցում է ամբողջության մեջ ներկայացված հիմնական հասկացությունների շուրջ։ «Դայաստանի առաջին Հանրապետությունը թեման ուսումնակարգելու ժամանակակից այսպիսի հասկացություն կարող է լինել, օրինակ, «Մայիսի 28-ը», «Դայաստանի առաջին Հանրապետությունը», «Բարումի պայմանագիրը», «Դայաստանի Հանրապետության անկումը» և այլն։ Դասարակության զարգացման՝ Քրիստոսից առաջ և հետո ընկած ժամանակաշրջանի համար որպես հիմնական հասկացություններ կարելի է նշել հետևյալները՝ «Պատմությունը որպես գիտություն», «Պատմության օրյեկտն ու առարկան», «Սարդկային հասարակության օրյեկտն ու առարկան», «Դասարակարգի առանձնահատկություններ», «Դասարակության շարժիք ուժեր», «Պատերազմ», «Եղափոխություն», «Մշակույթ» և այլն։ Օրինակ, «Պատերազմ», հասկացության բացարձությունը կարելի է կառուցել հետևյալ ձևով։

- բացարձել պատերազմի բնույթը, պատճառները, մասնակից կողմերի կամ ռազմարարական դաշինքների նպատակները, հաղթանակի կամ պարտության պատճառները,

- նշել պատերազմող երկրների տնտեսական, ռազմական, քաղաքական զարգացման մակարդակը, պատերազմի բնույթը (արդարացի թե անարդարացի), կովող կողմերի մարդկային, նյութական, տարածքային պաշարները, սպառազինությունների, բանակի մարտունակության ասիֆճանը և այլն,

- հիշեցնել, թե ինչպիսի հատկանիշներով է բացարձություն պատերազմի արդարացի կամ անարդարացի բնույթը, և առաջադրանք տալիս այդ հատկանիշներով համեմատել ուսումնասիրվող պատերազմի հետ։ Նշել պատերազմի բնորոշ պատճառներն ընդհանրապես և համեմատել դրանք այն պատճառների հետ, որոնք բնորոշ են տվյալ դեպքին։

- գ. Ուսուցիչ կարևոր մոտեցումներից է սովորողների տեսակետները հաշվի առնելը, նրանց մոտերին ուշադրություն դարձնելը, որովհետև նման վերաբերնունքը նպաստում է սովորողների մոտերի կշռադատման կարողության զարգացմանը։ Դասի յուրացման արդյունավետությունն աճում է, եթե չափորոշչային պահանջները համապատասխանում են աշակերտի սպասելիքներին կամ դրոշակիրեն հասանելի են նրան։ Հայոց պատմության գրքող ծրագրերում ուսումնական նյութը կարգավորվում է իրադարձությունների ժամանակագրական հաջորդակա-

նուրբյամբ: Եվ կոնկրետ նյութի յուրացումը ենթադրում է պատմական փաստերի, իրադարձությունների, անունների, թվականների հիշողություն՝ առանց պատմական երևույթների եւթյան բացատրման և առանց պատմական գիտելիքների օգտագործման: Եթի սովորողները կրթական մի աստիճանից անցնում են նյութին, եթի նրանց հարցեր են տալիս, ապա պարզվում է, որ նրանց հիշողության մեջ, լավագույն դեպքում, նացել են կցկոտուր տեղեկություններ պատմական այս կամ այն իրադարձության, երևույթի, հասկացության մասին: Այս հանգամանքը վկայում է, որ պատմական հսկայաժամկալ նյութը երկար տարիներ չի կարող պահպանվել սովորողի հիշողության մեջ: Այլ բան է, եթի ուսուցիչը իրադարձությունների ժամանակագրական նյութը միայնուսում է պատմական տեսությունների, առանցքային գաղափարների, հիմնարար հասկացությունների տրամաբանական զարգացմանը: Մեկ օրինակ՝ «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թ.» թեման յուրացնելու արդյունքում սովորողը պարտավոր է ունենալ գիտելիքներ 1918-1920 թ. ՀՀ հասարակական կյանքի քաղաքական, տնտեսական, սոցիալական, հոգևոր-մշակութային բնագավառների մասին, նշանավոր իրադարձությունների, փաստերի և երևույթների, հայագիտ նշանավոր պետական, քաղաքական, գիտական, գրական, հոգևոր գործիչների մասին, պետական կառավարման, տնտեսության կառուցվածքի մասին և այլն: Ինչ վերաբերում է արժեքային համակարգին, ապա նման բովանդակությունը ունեցող դասերի յուրացման արդյունքում սովորողը պարտավոր է գիտակցել անձնական և պետական շահերի ներդաշնակության անհրաժեշտությունը, լինել հայրենասեր ու հայունների պաշտպանությանը պատրաստ և այլն: Չնայած այն բանին, որ վերը ասվածը պետական առարկայական պարտադիր պահանջներ են, այնուամենայնիվ, միշտ չէ, որ կրթական գործնրացի մասնակիցները հասնում են այդ պահանջների իրագործմանը:

Դ. Կառուցղականության սկզբունքով աշխատող ուսուցչի հաջորդ մոտեցումը առնչվում է սովորողների պատասխաններին: Եթի ուսուցիչը սովորողից ակնկալում է «այո» կամ «ոչ» պատասխաններ, ապա նա դրանով գրկում է իր սաներին մտածելու կարողությունից կամ նրանց նտահորիզոնը սահմանափակում է պարտադրված, կաղապարված պատասխանով, ինչն էլ հետագայում բանարիկ խնդիրներ է առաջացնում սովորողների մոտ [3, էջ 52]: Եթի ուսուցիչը սովորողի պատասխանը գնահատում

է «ոչ»-ով, ապա վերջինիս մոտ առաջանում է թերարժեքության զգացողություն, անհամարձակություն, հոգեկան այնպիսի իրավիճակ, որ սովորող հաջորդ հարցի պարագայում նտածում է, թե իր պատասխանը հիմարություն է և վերածվում է դասապրոցեսի պասիվ մասնակցի: «Ոչ»-ը աշակերտին ասում է, որ ելակետային հասկացության մասին իր դատողությունն ըստ արժանվույն չի գնահատվել: Այս պատճառով էլ ուսուցիչը հատկապես սովորողի ստեղծագործական կարողություններ և ինքնուրույն մտածելակերպ գարգացնելու նպատակով պարտավոր է տալ ոչ միայն այնպիսի հարցեր, որոնք պահանջում են «ոչ» կամ «այո» պատասխաններ, այլև բաց հարցեր, որոնք աշակերտին խորհելու, կշռադատելու հնարավորություն կտան կամ այնպիսի հարցեր, որոնք անձնական տեսակետ պարունակող և տարակարծիք բովանդակություն կունենան: Բնականաբար, կառուցղական մեթոդով աշխատող ուսուցիչը պատմության դասընթացը ներկայացնելու ժամանակ պարտավոր է անդրադառնալ այնպիսի հարցերի և առաջադրանքների, որոնց նպատակը սովորողների ստեղծագործական մտածողության ձևավորման է (օրինակ՝ ինչպես եք գնահատում Մայիսյան հերոսամարտերի դերը Հայոց անկախ պետության ստեղծման գործում, ինչո՞ւ Հայաստանի Հանրապետությունը 1920 թ. ստորագրեց Երևանի համաձայնագիրը և այլն):

Ընդհանրացնելով վերը ասվածը՝ կարող ենք առանձնացնել մի քանի մոտեցումներ, որոնք հատկանշական են կառուցղական մեթոդով աշխատող պատմության ուսուցչի համար:

1. Նա խախտուսում է սովորողների ինքնուրույնությունը և նախաձեռնությունը, սովորողի մեջ տեսնում է ակտիվ, ինքնուրույն գործող և ճանաչող անձ, որն իր վրա է կրում ոչ միայն ուսուցչի մանկավարժական ներգործությունը, այլև ինքն է իր հերթին ներգործում ուսուցչի վրա՝ նրան մղելով ուսումնառության նոր ձևերի և մեթոդների որոնման,

2. Նրա գլխավոր խնդիրը պետք է լինի ճանաչել սովորողին, որոնել և բացահայտել նրա ընդունակությունները, հետաքրքրությունները և կարողանալ դրանք զարգացնել,

3. Կառուցղական մեթոդով աշխատող պատմության ուսուցչիը պետք է լինի ազգային ոգու կրողը և սովորողի մեջ ձևավորի ազգային բնակուրություն ու խառնվածք, նպաստի նրա հայրենասիրական նկարագրի կերտմանը [4, էջ 11]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Փիլիսոփայական բառարան, Եր., 1975:
2. Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Զեռնարկ ուսուցիչների համար, Եր., 2004:
3. Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Զեռնարկ ուսուցիչների համար, Եր., 2004:
4. **Ա. Ղուկասյան**, Յայոց պատմություն, Ուսուցչի ձեռնարկ, Եր., 2000:

THE ROLE OF CONSTRUCTIVE APPROACHES IN THE DEVELOPING THE PRODUCTIVITY DURING THE HISTORY LESSONS

LILIT AGHUSUMTSYAN

History teacher of Vanadzor High school N10

Summary

Lately it is widely spread the using of constructive approaches in educational processes. In this article we have presented the meaning of constructive approaches generally in educational system and the role of history teacher in using this methodology.

It is explainind the work-style of history teacher in forming productivity of education and students' self and creative abilities.

**«ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԻՄՆԱՅԱՐՁԵՐ» ԱՌԱՐԿԱՅԻ
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾՄՆԹԱՅՑՈՒՄ***

Յաշա ՂԱԶԱՐՅԱՆ

Կանածողի թիվ 16 հիմնական դպրոցի գիմենեկ



Ո թ ու թ ա ն
առջև վերջերս
հարնում են
լուրը հիմնախմնդիր-
ներ: Յիմնախմնդիրնե-
րի մի խումբը պայ-
մանավորված է հա-
սարակության մեջ
կրթության նպատակ-
ների և բովանդակու-
թյան վերաբերյալ
պատկերացումների փոփոխությամբ, որը բե-
րում է կրթության նոր հարացույցների ձևավոր-
մանը՝ տեսանկյուն, որը դարձել է կրթական և
հետազոտական խմնիրների լուծման չափանիշ:

Այսօր կրթության ցուցանիշները ժամանա-
կակից չափորոշչների պահանջներին համա-
պատասխանեցնելու համար հանրակրթության զարգացման գործնթացում հստակորեն շրջա-
նառվում են կրթության հիմնարարացման, ան-
հատականացման և մարդասիրացման ուղղըն-
թացները: Ժամանակակից կրթությունը հիմն-
ված է մարդասիրական ու ժողովրդավարական սկզբունքների վրա, և դրա ուշադրության կենտ-
րոնում դրվում է անձին ներդաշնակ դաստիարա-
կության խնդիրը: Ուսուցման մարդասիրակա-
նությունը միտքած է անձին բնածին ընդունակու-
թյունների զարգացմանը: Այդ մոտեցումը ու-
սուցչին ուղղորդում է դեպի ուսումնառողի ներ-
աշխարհը, որում թաքնված են դեռ չբացահայտ-
ված ունակություններ, կարողություններ և հնա-
րավորություններ, ազատության, արդարության
ու այլ բարոյական հատկանիշների վերաբերյալ
չձևավորված սկզբունքներ: Յիմնախմնդիրների
մյուս խումբը պայմանավորված է ուսուցման

գործընթացի արդիականացման, ուսուցման մե-
թոդների և միջոցների կատարելագործման հետ:

Ուսումնական գործնթացում մերողը հան-
դես է գալիս որպես համակարգված միջոց ու-
սուցչի և սպորողի փոխկապակցված գործունե-
ության մեջ, որը ուղղված է ուսումնադաստիհա-
րակական որոշակի նպատակների համելուն: Այդ
տեսակետից ուսուցման յուրաքանչյուր մե-
րոդ օրգանապես իր մեջ է ներառում ուսուցչի
դրավագնդման աշխատանքը և սպորողների
ակտիվ ուսումնա-ինացացական գործունեության
կազմակերպումը:

Ուսուցման մեթոդները ենթադրում են ու-
սուցչի և աշակերտների համատեղ գործունեու-
թյուն՝ ուղղորդված դիտակտիկ խնդիրների լուծ-
մանը, ուսումնասիրվող նյութի յուրացմանը: Դա-
սավանդման մեթոդները դիտակտիկական օրի-
նաչափությունների և սկզբունքների հաշվար-
կով մշակված հնարների համակարգ է և դրան
համապատասխան մանկավարժական գործու-
նեության կանոններ, որոնց նպատակառուղյուղած
օգտագործումը ուսուցչի կողմից թույլ է տալիս
էականորեն բարձրացնել մանկավարժական
որոշակի խնդիրների լուծման ընթացքում սպո-
րուների գործունեության դեկավարման արդյու-
նավետությունը [3]:

Սերոյ ասելով ընթրնվում է գործունեության
եղանակների և հնարների յուրահասուկ համա-
կարգը, որն ապահովում է գործունեության
խնդիրների իրականացումը: Ուսուցման մեթոդ-
ները ուսուցման համապարփակ ուղիներ են և
ապահովում են ուսուցման գործնթացի ֆունկ-
ցիաների իրականացումը:

Ուսուցման մեթոդների ուսումնասիրությունը
ցույց է տալիս, որ առանձին վերցրած ոչ մի մե-

* Ներկայացվել է 11.11.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

թող չի կարող ապահովել անհրաժեշտ ամբողջական արդյունք և առավելագույն հաջողության կարելի է հասնել կիրառելով տարրեր մեթոդների համակցություններով:

Եթե ուսուցման մեթոդների դասակարգման մեջ նցոցնենք որոշակի հատակեցումներ, ապա բոլոր բազմատեսակ մեթոդները կարելի է բաժանել հետևյալ հիմն խմբերի:

1. ուսուցչի կողմից գիտելիքի բանավոր շարադրման և ստվարողների հմացական գործունեության ակտիվացման մեթոդ (պատմություն, բացադրություն, դասախոսություն, գրուց, ուսումնասիրվող բանավոր նյութի մատուցման ժամանակ պատկերավոր և ցուցադրման մեթոդ),

2. ուսումնասիրվող նյութի ամրացման մեթոդ (գրուց, աշխատանք ստվորողների հետ),

3. նոր նյութի հմաստավորման և յուրացման համար ստվորողների ինքնուրույն աշխատանքի մեթոդ (աշխատանք ստվորողների հետ, լարուատոր աշխատանքներ),

4. կարողությունների, հմտությունների ձեռքբերման և գիտելիքները գործնականում օգտագործելու համար ուսումնական աշխատանքի մեթոդ (վարժություններ, լարուատոր պարագաներ),

5. ստվորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման և զնահատման մեթոդներ (ստվորողների աշխատանքների ամենօրյա դիտարկումներ, բանավոր հարցումներ, սպուգորդական աշխատանքներ, տնային աշխատանքների ստուգումներ, ժրագրավորված հսկողություն, թեստավորում) [2]:

ՀՀ կառավարության 27.09.1996 թ. թիվ-320 ՀՀ կրթության համակարգում «Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ հրավիճակների հիմնահարցեր» առարկայի ուսուցման կազմակերպման մասին» որոշմամբ ուսումնական հաստատություններում ներդրվեց «Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկան, որով և պայմանավորվեց քաղաքացիական պաշտպանության ոլորտի կարևորությունը: Այս պարագայում քաղաքացիական պաշտպանության ուսուցչի առջև առաջադրվում են հետևյալ հիմնական խնդիրները.

1. ստվորողներին ներկայացնել պատերազմական իրավիճակների և տարարմության աղետների էությունը,

2. ուսումնասիրել աղետների առաջացման

պատճառները, առանձնահատկությունները և դրսնորումները,

3. ուսումնասիրել դրանցից պաշտպանվելու և վտանգների նվազեցման վարքականունները և ձևերը և այլ [1]:


Այստեղից կարելի է եզրակացնել, որ քաղաքացիական պաշտպանության գործընթացը բավկամնիմ հագեցած է բարդություններով, և այդտեղ կիրառելի են ուսուցման գրեթե բոլոր տեսակի մեթոդները:

Այժմ վերը նշված ուսուցման մեթոդները փորձենք ներմուծել քաղաքացիական պաշտպանության ուսուցման գործընթացի ոլորտ:

Պատմողական և բացատրական: Քաղաքացիական պաշտպանության ուսուցման գործընթացում համոիդայում են ուսումնական ոչ մեծ ծավալի նյութեր, որտեղ փաստերի վերլուծությունը, երևույթների համեմատումը, դատողությունները հարմար է անցկացնել պատմողական և բացատրական մեթոդների օգնությամբ: Օրինակ՝ երկրաշարժերի տեսակների և նրանց առաջացման վերաբերյալ ուսումնական նյութերը ուսուցչին հարմար է ներկայացնել պատմելով և բացատրելով: Մեկ այլ դեպքում ուսուցչը կարող է վերցնել երկու տարրեր բնական վտանգավոր երևույթներ և, օրինակ, «Վեճնի դիագրամ»-ի (տես՝ ստորև) միջոցով տանել համեմատություններ դրանց միջև, ստվորողների հետ բնարկել աղետներից պաշտպանվելու վարքականունները.

Դասախոսություն: Ավելի մեծ ծավալ ունեցող ուսումնական նյութերը, ինչպիսիք են քաղաքացիական պաշտպանության իրավական գործունեությունը կանոնակարգող օրենքները, կառավարության որոշումները, կանոնադրությունները և այլն, նպատակահարմար է իրականացնել դասախոսությունների միջոցով [3]:

Այդպիսի բովանդակությամբ ուսումնական նյութերը ծավալային առումով բավականին



բարդ են և մեծ: Ուսուցիչը սովորողներին ներկայացնում, բացատրում և պարզաբանում է օրենսդրական հիմունքները, դրույթները, քաղաքացիական պաշտպանության նախնական և հիմնական միջոցառումներն ու դրանց գործածության ոլորտները, պետական կառավարման համակարգի կառուցվածքը և դրանով ներգրավված գերատեսչությունների պարուականություններն ու նախատեսվող գործողությունները: Այսուհետև ներկայացվում են օրենքների հիման վրա կայացված ՀՀ կառավարության դրույթները յուրաքանչյուր դրույթի վերաբերյալ, օրինակ՝ բնակչության տարածանման կազմակերպման և անցկացման, բնակչությանը անհատական պաշտպանության միջոցներով պահպանման, փրկարար ուժերի և միջոցների ստեղծման մասին և այլն:

Այսինքն՝ կառուցվածքային առումով դասախոսության ընթացքը նաև կարող է լինել «բարդոց-պարզ», «գլխավորից-երկրորդական» բանաձևով, որը ավելի լավ կը նկալվի սովորողների կողմից: Միապաղադությունից գերծ մնալու համար ուսուցիչը դասախոսության ընթացքում կարող է կարճ հարցադրումների միջոցով ստուգել սովորողների կողմից ուսումնական նյութի ընկալման ընթացքի արդյունավետությունը կամ պատասխանել թեմայի առանձին դրույթները պարզաբանող հարցերի:

Զրոյություն: Բավականին մեծ ծավալ են կազմում այն ուսումնական նյութերը, որոնց ժամանակ անհրաժեշտություն է առաջանում վերլուծել առկա փաստերը, երևույթները և դրանց հաջորդականության միջոցով հասնել համապատասխան եզրակացության: Այդպիսի թեմաները բարդություն չեն ներկայացնում և, բնականարար, նպատակահարմար է դրանք անցկացնել զրոյությունով: Օրինակ՝ բնական վտանգավոր երևույթների շարքից ջրհեղեղի վերաբերյալ թեմայի ժամանակ ուսուցիչը կարող է հարցադրումների միջոցով դրդել սովորողներին թվարկել մարդկանց պաշտպանության վարքականուները ջրհեղեղի ժամանակ՝ հաջորդաբար վերլուծելով դրանք, և վերջում բույլ տալ սովորողներին կատարելու համապատասխան եզրակացություններ և ամփոփումներ: Մեկ այլ դեպքում ուսուցիչը ներկայացնում է երկրաշարժից տուժման դրավիճակը և հարցադրումների միջոցով սովորողներին ներգրավում նրան առաջին օգնություն ցուցաբերելու միջոցառումների հաջորդականության քննարկմանը և նրանց օգնությամբ տալիս հա-

մապատասխան եզրակացություններ:

Մեկ այլ դեպքում, տեխնածին բնույթի վլտանգավոր երևույթների շարքից՝ «պայրյուններ» թեմայից, ուսուցիչը բացատրում է պայրյունավտանգ արտադրական ծերնարկության տեխնոլոգիական ընթացքի կամ սարքավորման ռեժիմի, վտանգավորություններ և փորձում սովորողների միջոցով բացահայտել դրանից պայրյունի առաջացման պատճառները և հետևանքները, կամնարգելման ուղիները և այլն:

Պատկերազարդում և ցուցադրություն: Այս մեթոդի ժամանակ նպատակահարմար է ուսումնական նյութը մատուցել խոսքի և ցուցադրման գուգակցմանը:

Ուսումնական նյութի մատուցման ժամանակ ուսուցիչը օգտագործում է նկարագրող պաստառների, նյութատեխնիկական բազային թեմային վերաբերյալ պուրակություն իրեր և այլն:

Բնակչության տարիանման կազմակերպման գործընթացը նկարագրելու համար ուսուցիչը, օգտվելով նկարագրող պաստառներից, ցույց է տալիս բնակչուների գործողությունների հաջորդականությունը և միևնույն ժամանակ ցուցադրություն ուսումնական իրեղեն նմուշները: Օրինակ՝ բացատրելով և թվարկելով ուսումնական նյութի այն բաժինն, երբ տարիանման ժամանակ բնակչը իր հետ պետք է վերցնի անձը հաստատող փաստաթերթ, արժեքավոր իրեր, դեղորայք, երեք օրվա սնունդ, իհիգինիկ պարագաներ, տաք հագուստ և այլն, ուսուցիչը, պատմելուն գուգանքաց, ցուցադրում է իր ծեռքի տակ գտնվող տարիանման ճամպրուկը և նրա մեջ եղած պարունակությունը: Կամ հրաբխային լավամերի տեսակների, նրանց բաղադրության մասին պատմելով կարող է ցուցադրել հրաբխային քարտը (բազալտ, ֆերգիտ և այլն) նմուշներ, որոնք առաջացել են լավային հոսքերի դուրս ժայթրման և սառեցման արդյունքում [2]:

Տեսամեթոդ պատկերավոր ուսուցման լավագույն մեթոդներից է, որը կարող է համեստ գալ ինչպես ուսուցչի ներկայության, այնպես էլ նրա բացակայության պայմաններում՝ կախված տեսանյութի բովանդակությունից: Այսինքն, եթե օգտագործվում է տեսասկավառակ՝ հեռուստադիտումով, որտեղ ամփոփված են դիտողական և բացատրական նյութերը, ուսուցիչը կարող է միայն դասասկզբում այն ներկայացնել սովորողներին և դիտումից հետո ամփոփել մատուցված նյութը: Խոչ եթե օգտագործվում են այնպի-

սի դիտողական սարքավորումներ, որտեղ ծայնային, հետևաբար նաև բացատրական խոսքը բացակայում են, ապա ուսումնական նյութի դիտումը նպատակահարմար է զուգակցել ուսուցչի բացատրության հետ:

Քաղաքացիական պաշտպանության ուսուցման գործընթացում, որպես ուսումնա-իմացական գործունեության կազմակերպման և անցկացման մեթոդի, մեծ նշանակություն է տրվում գործնական և հետազոտական պարագմունքներին:

Սովորողների կարողությունների, ունակությունների զարգացման, ուսումնական առանձին նյութերի ամրապնդման և յուրացման համար գործնական և հետազոտական մեթոդների օգտագործումը համարվում է կարևոր պայման: Դրանք կարող են լինել փրկարարական, որոնողակարարական, տարհանման կազմակերպման և անցկացման, սողանքային, փլուզումային և քարաքափման վայրերի հետազոտման գիտելիքների, ունակությունների և կարողությունների յուրացումները, որը կազմում է ուսուցման գործընթացի անբաժանելի մասը [3]:

Նշված մեթոդներով «Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկայի դասավանդման արդյունավետությունը հիմնավորելու համար անցկացվեց փորձարարական աշխատանք:

Գիտափորձ իրականացնելու համար մեծ ուշադրության դարձվեց ելակետային տվյալների վրա, որից մեծապես կախված է փորձարարական աշխատանքի հաջողությունը: Այդ նպատակով ընտրվեց Կանաձորի թիվ 16 հիմնական դպրոցի 9-րդ «ա» դասարանը, որտեղ սովորում են 23 աշակերտներ:

Որոշվեց դասարանի աշակերտներին ներկայացնել «Երկրաշարժ» թեման ուսուցման երկու մեթոդներով՝ դասախոսության և զրույցի, որից հետո ստուգել այդ մեթոդների արդյունավետությունը:

Նախ 9-րդ «ա» դասարանի սովորողներին նեկ դասաժամի ընթացքում դասախոսության մեթոդով մանրամասն ներկայացվեց ուսումնական նյութը, որից հետո դրա յուրացման աստիճանի ստուգումը հարց ու պատասխանի միջոցով ցույց տվեց հետևյալ պատկերը.

1. Ինչպիսի՞ վտանգավոր երևոյթ է Երկրաշարժը:

(Սովորողներից միայն 6-ը տվեցին ճիշտ պատասխան):

2. Որո՞նք են Երկրաշարժի տեսակները:

(Ճիշտ պատասխաննեցին 8 սովորող)

3. Ինչպիսի՞ վտանգավոր երևոյթներ են հաջորդում Երկրաշարժերին:

(Ճիշտ պատասխաննեցին 7 սովորող)

4. Ո՞րն է կոչվում Երկրաշարժի էպիկենտրոն և հիպոկենտրոն:

(Ճիշտ պատասխաննեցին 4 սովորող)

5. Կարքավականոնները Երկրաշարժից առաջ, Երկրաշարժի ժամանակ և հետո:

(Ճիշտ բարկեցին 6 սովորող)

Այսուհետև նոյն ուսումնական թեման դասարանին ներկայացվեց զրույցի մեթոդով: Դասարավորինս փորձեց դասին ներգրավել բոլոր աշակերտներին: Դասի վերջում սովորողների համար անհասկանալի հարցերին տրվեցին պատասխաններ և պարզաբանվածներ:

Այս մեթոդով անցկացրած դասից հետո պատկերը հետևյալ էր՝

1. Ինչպիսի վտանգավոր երևոյթ է Երկրաշարժը:

(Ճիշտ պատասխաննեցին 18 սովորող)

2. Որո՞նք են Երկրաշարժի տեսակները:

(Ճիշտ պատասխաննեցին 20 սովորող)

3. Ինչպիսի վտանգավոր երևոյթներ են հաջորդում Երկրաշարժերին:

(Ճիշտ պատասխաննեցին 12 սովորող)

4. Որն է կոչվում Երկրաշարժի էպիկենտրոն և հիպոկենտրոն:

(Ճիշտ պատասխաննեցին 8 սովորող)

5. Կարքավականոնները Երկրաշարժից առաջ, Երկրաշարժի ժամանակ և հետո:

(Ճիշտ պատասխաննեցին 14 սովորող)

Անցկացված գիտափորձի վերլուծության աղյունքում պարզվեց, որ ընտրված թեման ծավալով և բարդության աստիճանով ավելի նպատակահարմար է անցկացնել զրույցի ուսուցման մեթոդով: Այսինքն՝ թեմայի ծավալը այնքան էլ մեծ չէ և այն կարելի է լիովին տեղափորել դասաժամի 20-30 րոպեների շրջանակում, ինչպես նաև սովորողների համար բարդություն ներկայացնող երևոյթներ և տարրեր, ինչպիսիք են Երկրաշարժի էպիկենտրոններ, հիպոկենտրոններ, օջախային խորություններ, Երկրաշարժի ժամանակ մարդկանց վարքականոնների առանձնահատկությունները և այլն:

Երականացված աշխատանքով պարզ դարձավ, որ ուսումնական նյութի յուրացումը սովորողների կողմից մեծապես կախված է այդ նյութը մատուցելու համար ճիշտ ընտրված ուսուց-

ման մերողից և նրա արդյունավետությունից:

Այսպիսով, քաղաքացիական պաշտպանության ուսումնական գործընթացը, լինելով բազմաբնույթ, կարող է ներառել ուսուցման գորեք բոլոր մերողները, դրոնք նպաստում են սովորողների գիտելիքների, ունակությունների և կարողությունների զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկայի ծրագիր և չափորոշիչ, Եր., 2009:
2. **Подласый И. П.**, Педагогика, Книга 1, М., “Владос”, 2002.
3. **Сластионин В. А.и др.**, Педагогика, М., “Академия”, 2000.

THE METHODS OF THE TEACHING PROCESS OF THE SUBJECT "CIVIL DEFENCE AND EMERGENCY ISSUES"

YASHA GHAZARYAN

Military/defence lecturer of Vanadzor, school #16

Summary

In the article there are represented using methods of the following subject "Civil defence and emergency issues" in the teaching process of the subject in order to study various lectures by the learners as well as the right choice of the chosen teaching method.

With the means of the practical work both the right choice of the chosen teaching method and their positive impact on teaching process are being shown.

Key words: teaching process, behavioural rules, technically caused dangerous phenomenon.

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՈՒՍՈՒՑՉԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ*

Անայա ԱՍԱՏՐՅԱՆ

Լոռու մարզի Կաթողիկոսական միջնակարգ դպրոցի դասվար



Այս այն մասին, թե ինչ է ուսուցումը: Հասկացություն, որի վերջնական սահմանումն անգամ մանկավարժների և գիտնականների մոտ տարակարծություն է առաջացնում: Կամ տասնյակ սահմանական որոնք, զնայած բնութագրական տարբերություններին, ունեն նաև ընդգծված մանառություններ և միասնական ուղղվածություն: Մանկավարժների մեջ մասը գտնում է, որ զնայած ուսուցումը ենթադրում է որոշակի արդյունք, սակայն դրա իրականացումը տեղի է ունենում հաղորդակցության միջոցով: Հետևաբար, ուսուցումը հաղորդակցություն է: Վ. Դյաչենկոյի սահմանմանը՝ «Հաղորդակցությունը մարդկանց միջև խոսքային փոխազդեցություն է, որի ընթացքում և որի միջոցով իրականացվում է»:

1. ինֆորմացիայի (մոտքերի, գիտելիքների, գաղափարների) փոխանակում,
2. գործունեության կառավարում,
3. հարաբերությունների ձևավորում կամ հաստատում» [1, էջ 45]:

Ուսուցումը բարդ հոգեբանական, ֆիզիկական և մտավոր գործունեություն է: Ուսուցչի համար այն նշանակում է կազմակերպել և առաջնորդել գործընթացը, աջակցել ուսուցման պրոցեսին, ստեղծել բավարար կրթական միջավայր, տեսաճանաչողական նյութեր և ուսումնական պայմաններ: Ուսուցումը ուսուցչի համար ամենահին չի նշանակում սույն դաս պատմել կամ խնդիր լուծել, կամ, որ նույն է, դասագրի բովանդակությունն ուղղակի մասուցել աշակերտին: Այդ ամենը սովորողը կարող է ինքնուրույն

կատարել՝ առանց ուսուցչի մասնակցության: Խնդիրն այն է, թե ինչպիսի մասնակցություն է ցուցաբերում ուսուցչը նյութից դեպի սովորող տանող ճանապարհին, ինչ է անում, որ սովորողը դառնա գիտելիքի ինքնուրույն մշակող: Այս թե ինչու ուսուցչի ամենակարևոր գործառություններից մեկը պիտի լինի այնպիսի միջավայրի ստեղծումը, որտեղ աշակերտը կարողանա սովորել նախկին գիտելիքների հիմքի վրա՝ ընկալելով նորի իրական և իմաստալի բովանդակությունը: Սովորողի համար կարևոր է, թե ինչու է ուսումնասիրվում տվյալ նյութը, որքանով է այն արդիական և անհրաժեշտ իրեն, ինչ աստիճանով է հոգեհարազարդ իր անձին և համահունչ նպատակներին: Սովորողի համար ուսուցման պրոցեսը արդյունավետ է լինում, եթե առկա են հետևյալ պայմանները.

ա. Եթե քննարկվող նյութի մասին նրանք ունեն նախնական պատկերացումներ, երրուսուցիչը աշակերտություն օգնում է պատկերացնելու այն առանցքային հասկացություններն ու գաղափարները, որոնց մասին քննարկումներ են ծավալվելու: Այսինքն ուսուցչը անհրաժեշտ նախադրյալներ է ստեղծում և շարժում է նրանց հետաքրքրասիրությունը: Սովորողը պետք է հսկա կիրառական համար և այդ սովորածը որքանով է իրեն անհրաժեշտ: Այլ կերպ ասած՝ ինչպես է մոտիվացվում սովորողը, որպեսզի ակտիվության մասնակից կոնկրետ ուսուցման պրոցեսին, ինչպիսի ակտիվություն է դրսևորում մոտքերի փոխանակման, պարզաբանման և, մասնավորապես, գիտելիքների կառուցման հարցում: Ուսուցման ճանաչողական խնդիրները կամ ներքին կառուցվածքի զարգացումը պահանջում է մշտապես վերանայել և վերակազմակերել մեր գիտելիքները և դրանց ծեռագույն ձևերը, այսինքն՝ «Ի՞նչ գիտենք և ինչպես ենք սովորում»-ի բովանդակությունն ու արժեքը: Այս

* Ներկայացվել է 04.11.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

մակարդակում ուսուցիչը «Ի՞նչ ենք սովորեցնում»-ին ավելացնում է «ո՞ւմ ենք սովորեցնում», «ինչպէ՞ս ենք սովորեցնում» և «ինչո՞ւ ենք սովորեցնում» նպատակառողիված գործողությունները:

բ. Երբ սովորողը նյութի բովանդակության պասիվ ընկալողից վերածվում է մտքերի և գաղափարների ակտիվ արարողի, երբ նրա համար գիտելիքի ձեռք բերումը և միջոց է, և նպատակ։ Այսինքն՝ ուսուցումը գիտելիքների փոխանցում չէ, այլ որոշակի մոտեցում, որի իմաստը ուսուցման գործընթացին սովորողի ակտիվ մասնակցությունն է։ Չենց այս մակարդակում էլ ուսուցչի առաջ ծառանում է ուսումնառության կազմակերպման հաջորդ կարևոր խնդիրը՝ սովորողներին ինչպես ներգրավել ուսումնառության բուն գործընթացի մեջ։ Ավելի քան պարզ է, ուսուցիչը պարտավոր է բացատրել սովորողներին նրանց առաջադրված խնդիրները և ուսումնառության գործընթացը հարմարեցնել նրանց հնարավորություններին։

գ. Աշակերտները սկսում են սովորել այն ժամանակ, երբ դառնում են ուսումնական պրոցեսի ակտիվ և գործնական մասնակիցներ։ Ուսուցումը ոչ միայն սովորողի համար գիտելիքի սուլյեկտիվ կառուցում է, այլև համագործակցային երևույթ, երբ համագործակցելով ստեղծում են որոշակի արդյունքներ, ինչը նշանակում է, որ գիտելիքներ, հմտություններ և արժեքներ նրանք ձեռք են բերում խստելու, բացատրելու, բանավիճելու, հարցելու տակու միջոցով։

դ. Երբ ուսուցման ընթացքում մեծանում է ինքնակարգավորումը և ինքնակարավարումը, սովորողների կախվածությունը ուսուցչներից նվազում է, չնայած որ ուսուցումն առավել արդյունավետ է, երբ առկա է չափավոր արտաքին միջամտություն։ Այնուամենայնիվ, ուսուցչի նպատակն է, որ սովորողներն ուսումնառության ընթացքում հաղթահարեն կախվածությունը ուսուցչից և դառնան առավել ինքնուրույն։

ե. Օգտագործելով Դո Կորտեի միտքը՝ «Թեպես ուսուցումը կարող է տեղի ունենալ պատահականորեն, սակայն այժմ շատերն են համաձայն, որ արդյունավետ, ինաստալի ուսուցմանը նպաստում է բացահայտ իրազեկությունը և նպատակամետությունը» [2, էջ 235]։ Գրեթե միշտ ուսուցիչն է որոշում դասի նպատակները՝ բինեցնելով դրանց առարկայական չափորոշչից, ծրագրից և դասագրքից։ Նաև կապահանջման առաջադրությունները, նախասիրությունները, ընդունակությունները, հմտություններն ու կարողությունները, նրանց սովորելու պատրաստակամության աստիճանը,

յուրացվեին դրանց կիրառման գործնական միջոցների, հմտությունների ձևավորման սերտ կապի մեջ։ Սակայն, մեր կարծիքով, ուսուցումն արդյունավետ կարող լինել է, եթե ուսուցիչն ընդունում է սովորողի կողմից առաջ քաշված նպատակները և գաղափարները։ Ուսուցման արդյունավետությունն աճում է, եթե առարկայական չափորոշչային, ծրագրային ճանաչողական և հուզական պահանջները հասանելի են սովորողին։ Ուստի պետք է որոշակի հարաբերակցություն գոյություն ունենա չափորոշչահեն կրության և աշակերտակենտրոն ուսուցման պահանջների միջև, այսինքն՝ ուսուցչի կողմից ուսումնական ծրագրերի և առաջադրանքների համապատասխանեցումը աշակերտների սպասվելքներին։ Յակառակ պարագայում, սովորողների համար դասն անհմաստ և անհետաքրքիր է դառնում։

Ինչպես արդեն վերևում նշեցինք, ուսուցիչը լուծում է աշակերտների հետաքրքրության, ձգտումների զարգացման, խրախսման և պահպանման խնդիրները։ Այդ խնդիրների իրականացման համար նա ուսուցումը դարձնում է առավել հետաքրքիր, այսինքն՝ աշակերտներին ոչ թե պարզապես գիտելիքներ են փոխանցվում, այլ գիտելիքներն ու հմտությունները գործողության մեջ են դրվում, և որոշակի արդյունքով ի ցույց են դրվում դրանց յուրացման եղանակները։ Այս պարագայում ուսուցումը դառնում է գիտելիքների կիրառման և որոշակի արժեքների ստեղծման գործընթաց, որի ժամանակ ուսուցչի մասնագիտական և անձնային որակները նրան մղում են մի շարք գործողությունների, որոնք են։

ա. Սովորողի ճանաչողական ներուժի բացահայտումը։ Ուսուցիչը բացահայտում է սովորողների գիտելիքների մակարդակը, նախասիրությունները, ընդունակությունները, հմտություններն ու կարողությունները, նրանց սովորելու պատրաստակամության աստիճանը,

բ. Դիտարկում, վերահսկում է սովորողների առաջադիմության և վարքային փոփոխությունները,

գ. Ժանորթանում է սովորողների տարիքային առանձնահատկություններով պայմանավորված բնութագրերին,

դ. Խթանում է ուսուցման նկատմամբ սովորողի ներքին շարժահիմները, տալիս է հարցեր և արձագանքում իրեն ուղղված հարցերին՝ աշակերտների մոտ ապահովելով ազատ մտածելակերպ, ինքնուրույն որոշումներ կայացնելու հմտություններ և պատասխանատվություն բարձր առաջադիմության համար,

Ե. ուսուցիչը ներգրավում է աշակերտին գիտելիքի կառուցման գործընթացին, ինչի արդյունքում սպիրող դաշնում է ուսուցման ակտիվ մասնակից:

Վերը նշված խնդիրները և հատկապես ուսուցումն առավել արդյունավետ դարձնելու նպատակով ուսուցիչը պետք է տիրապետի իր աշխատանքը ծրագրելու կարողությանը. այդ թվում՝

ա. ուսումնական գործընթացն արդյունավետ ծրագրելու, առանձին դասընթացների, թեմատիկ միավորների և դասերի պլաններ նշակելու,

բ. ինքնուրույն կամ գործընկերների հետ միասին ուսումնական նյութեր ստեղծելու,

գ. խմբային և անհատականացված ուսուցում իրականացնելու,

դ. աշակերտի տարիքային, հոգեբանական և կազմաբնախոսական առանձնահատկությունները, անհատական և խմբային գործունեության շարժարիթմներն ու վարքագիծը հաշվի առնելու,

ե. ուսուցման ժամանակակից մեթոդներ և հիմքներ ներդնելու,

զ. ուսուցման համար բարենպաստ սոցիալ-հոգեբանական միջավայր ստեղծելու,

թ. սովորողի առաջադիմության գնահատում՝ դիտարկելով գնահատումը որպես աշակերտի շարունակական զարգացումն ապահովող միջոց և այլն:

Այսպիսով՝ կարելի է հետևություն անել ուսուցչի գործունեության փուլային պրոցեսի կազմակերպման մասին: Այսպիսի տրամաբանության համաձայն՝ ուսուցչի գործունեությունը կարելի է բաժանել մի քանի փուլերի.

1. Զախարական փուլ, երբ ուսուցիչը կրկին վերադասավորում է իր անելիքները կոնկրետ

թեմայի կամ դասագրքի բովանդակության հետ ընդհանրապես, հստակեցնում է իր անելիքները ուսուցման և դասարանի սպիրողների ճանաչողական և վարքային խնդիրների հետ կապված:

2. Լուծում է բովանդակային հիմնախնդիրներ. տարրերակում է գլխավորը երկրորդականից, առանձնացնում է թեմայի առավել արդյունավետ մեկնաբանման կողմերը, այն հարստացնում գիտական նոր տվյալներով ու փաստերով.

3. Խաջորդ փուլում ուսուցիչը, հենվելով արդեն ձևակերպված առաջադրանքների, դիդակտիկայի սկզբունքների վրա, սահմանում է ուսուցման կազմակերպման ձևերն ու մեթոդները և այլն:

Հիմնվելով վերը նկարագրված ուսուցման գործընթացի առանձնահատկությունների վրա՝ թերևս կարելի է ասել, որ ուսուցումը մի կողմից ենթադրում է ճանաչողական, նյութ կողմից՝ վարքագիծային մոտեցումներ: Ուսուցման ժամանակակից ընթացումը չի առանձնացնում այդ երկու կողմերը: ճանաչողական մոտեցումը որպես ուսուցման ելակետ շեշտը դնում է սպիրողի կողմից սեփական ոչ բավարար գիտելիքները գիտակցելու վրա, իսկ վարքագիծային մոտեցումը միայն է մարդու ներաշխարհում կատարվող գործընթացների ուսումնասիրության հնարավորությունը, որը հանգեցնում է որոշակի հանգամանքներով պայմանավորված ուսուցման հասկացությանը:

ԳՐԱԿԱՌՈՒԹՅՈՒՆ

1. Ա. Գալյոյան, Վ. Ղյաչենկո, «Նոր դիդակտիկայի տեսական հիմքերը», «Մանկավարժություն», N2, 2012:
2. Կառուցղական կրթության հիմունքները և մեթոդները, Զենարկ ուսուցիչների համար, Եր., 2004:

THE PECULIARITIES OF THE PRODUCTIVITY OF EDUCATIONAL PROCESS AND TEACHERS' APPROACHES

AMALIA ASATRYAN

Form master at Katnadjur

Summary

In the article it is introduced the conception of education is explained some of the definitions in pedagogical literature, is commented the process of education in cognitive and typical levels.

They introduce teachers' professional and methodological activities, in revelation of students' cognitive qualities, in new motives, stimulation of education, creation of favourable conditions and other processes.

Արմինե ԹովսասՅան

Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հայցորդ

Ալեքսանդրա Բենաման՝ քաղաքային բնակավայրերի բնապահպանության՝ որպես էկոլոգիական ընդհանուր կրթության տարածաշրջանային քաղաքատարի ուսումնասիրության հայեցակարգը հիմնավորվում է փիլիսոփայական, հոգեբանանկավարժական, գիտամեթոդական արդի հիմնադրույթներով։ Այն ունի տեսական, աշխարհայացքային, արժեքային և կիրառական նշանակություն։

Էկոլոգիական ընդհանուր կրթության շրջանակում քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրության անհրաժեշտությունը հիմնավորվում է մանկավարժական այն օրինաչափություններով, որոնք արտացոլում են հասարակության պահանջմունքի, նրա սոցիալական պատվերի և այդ պատվերի իրականացման միջև փոխադարձ կայուն կապերը։

Կրթության բնագավառում հասարակության պահանջմունքները, շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորման սոցիալական պատվերը հիմնվում են հետևյալ սկզբունքների վրա։

• քաղաքային սոցիալ-բնական միջավայրի նկատմամբ անձնակենտրոն և գիտելիքակենտրոն մոտեցումների համադրման անհրաժեշտություն,

- սոցիումի անդամների միջանձնային հարաբերություններում և շրջակա բնական միջավայրի նկատմամբ մարդկանց հարաբերություններում մարդասիրական բովանդակության շեշտադրում,

- կրթության բովանդակության մեջ տարածաշրջանային գործոնի շեշտադրում։

Դպրոցում քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրման հայեցակարգը հիմնվում է էկոլոգիական, մարդասիրական, սոցիալ-մշակութային գաղաքարների ուսուցման մեջ անձնակենտրոն մոտեցումների վրա։ Այս մոտեցումների շրջանակներում են ծևավորվում դասընթացի բովանդակության ընտրության սկզբունքները, մեթոդական համակարգի քաղաքատարերը, սահմանվում են ուսուցման նպատակները։

Քաղաքային բնակավայրի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրումը նպատակատրության է քաղաքի սոցիալ-բնական միջավայրի, այդ միջավայրում նարդու առողջության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ծևավորմանը, անձի ու հասարակության, հասարակության և միջավայրի, անձնականի և հասարակականի փոխադարձ կապերի ներդաշնակեցմանը։ Նպատակները սահմանելիս հաշվի են արնվում արժեքանական հետևյալ մոտեցումները՝

- հոլգական ուղղված անձի հոլգական-արժեքային ոլորտի ծևավորմանը, շրջակա միջավայրի գեղագիտական ընկալմանը,

- հոգեոր-քարոյական ուղղված անձի բարոյական որակների և հոգեկերտվածքի ծևավոր-



Փառաջարկության բնակավայրերի բնապահպանության՝ որպես էկոլոգիական ընդհանուր կրթության տարածաշրջանային քաղաքատարի ուսումնասիրության հայեցակարգը հիմնավորվում է փիլիսոփայական, հոգեբանանկավարժական, գիտամեթոդական արդի հիմնադրույթներով։ Այն ունի տեսական, աշխարհայացքային, արժեքային և կիրառական նշանակություն։

Էկոլոգիական ընդհանուր կրթության շրջանակում քաղաքային բնակավայրերի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրության անհրաժեշտությունը հիմնավորվում է մանկավարժական այն օրինաչափություններով, որոնք արտացոլում են հասարակության պահանջմունքի, նրա սոցիալական պատվերի և այդ պատվերի իրականացման միջև փոխադարձ կայուն կապերը։

Կրթության բնագավառում հասարակության պահանջմունքները, շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորման սոցիալական պատվերը հիմնվում են հետևյալ սկզբունքների վրա։

• քաղաքային սոցիալ-բնական միջավայրի նկատմամբ անձնակենտրոն և գիտելիքակենտրոն մոտեցումների համադրման անհրաժեշտություն,

մանը,

- արժեքային-գնահատողական՝ ուղղված քաղաքային միջավայրի բաղադրատարրերի որակի և մարդու առողջության վրա դրանց ունեցած ազդեցության գնահատմանը,

- արժեքային-գրո՞նական, որը ենթադրում է քաղաքային էկոհամակարգերի պահպանման ուղղված գործունեություն:

Առաջարկված նպաստակներն իրականանում են մանկավարժական իրավիճակներում, որոնցում սովորողները ծանոթանում են շրջակա միջավայրի հիմնախնդիրներին, ծնավորվում են դրանց ուսումնասիրման և ինձաստավորման դրդապատճառները, գնահատվում են իրավիճակը և արդյունքները, արվում են առաջարկությունները, դրանու հոգակությունը և առաջարկության կառողությունները:

Մանկավարժական իրավիճակը նպաստում է քաղաքային կենսաերկրացենոզներում սովորողների պրակտիկ գործունեության փորձի կազմակերպմանը, կենսաբանական բազմազանության ուսումնասիրությանն ու պահպանման ուղղված գործունեության իրականացմանը նրանց համար մատչելի պայմաններում:

Մեր հետազոտության տեսանկյունից կայսր նշանակություն է ծեռք բերում «քաղաքի էկոլոգիական մշակույթ» հասկացության դիտարկումը: Դա մարդու՝ քաղաքային սոցիալ-բնական միջավայրի հետ փոխազդեցության հոգակու և պրակտիկ փորձի ամբողջությունը է, որն ապահովում է քաղաքային միջավայրում մարդու գոյատևումը: Անձի էկոլոգիական մշակույթի մակարդակը որոշվում է նրա՝ քաղաքային միջավայրի վիճակի համար բարոյական պատասխանատվությամբ, էկոլոգիական տեսանկյունից նպատակահարմար վարքով, հանուն առողջ միջավայրի և նրա բարելավման ուղղված գործունեության դրդապատճառներով և արժեքային կողմնորոշումներով: Էկոլոգիական մշակույթի ծևավորվածությունը ենթադրում է

- շրջակա սոցիալ-բնական միջավայրի բնապահպանության նկատմամբ պատասխանատվության տարրեր իրավիճակներում (տուն, բակ, փողոց, պուրակ, գրոսայգի, կանաչ գաղուներ), տարրեր հարաբերություններում (ընտանիք, ուսումնական կամ աշխատանքային կոլեկտիվ), տարրեր մակարդակներում (հասարակական վայրեր, մշակույթային օջախներ),

- դպրոցականների հետազոտական և ստեղծագործական ակտիվ գործունեություն քաղաքային միջավայրի ուսումնասիրման, բարելավ-

ման, պահպանման ուղղությամբ,

- քաղաքային սոցիալ-մշակութային միջավայրում միջանձնային, անձի և հասարակության, սոցիալական, ազգային, կրոնական, մասնագիտական տարրեր խմբավորումների միջև փոխհարաբերությունների ծևավորում, նրանց շանքերի միավորում քաղաքային միջավայրի խարարման ուղղված գործուների դեմ հանուն մարդու հոգակու և ֆիզիկական առողջության [3]:

Ծրագակա միջավայրի նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ծևավորումը կապված է մարդկանց ընտանիքան, հասարակական, արտադրական և միջանձնային հարաբերությունների հետ: Այս առնչվում է գիտակցության բոլոր ծևերին՝ բարոյական, կրոնական, քաղաքական, գիտական, իրավական, գեղագիտական:

Միջավայրի նկատմամբ աճող սերնդի էկոլոգիական պատասխանատվության ծևավորվածության մակարդակը որոշվում է մաղու-բնություն փոխհարաբերությունների վերաբերյալ գիտելիքների ծևավորվածությամբ, քաղաքային միջավայրի հիմնախնդիրների գիտակցնամբ և դրանց լուծնան ուղղությունից որոնմանը, տարածաշրջանի սոցիալ-բնական միջավայրի ուսումնասիրության և վիճակի գնահատման ուղղությամբ իմացական և գործնական կարողությունների ծևավորվածությամբ: Նշված չափանիշները լուծնան են մանկավարժական հետևյալ խնդիրները՝

- դաստիարակչական՝ քաղաքային բնակավայրի բնապահպանության նկատմամբ արժեքային վերաբերմունքի դրդապատճառների, պահանջնմունքների ծևավորում, էկոլոգիական տեսանկյունից նպատակահարմար վարք և գործունեություն, բնապահպանական հիմնախնդիրների վերաբերյալ գիտական, գեղագիտական, բարոյական, իրավական դատողությունների ունակություն, շրջակա միջավայրի մաքրությանը և առողջությանն ուղղված գործունեության ձգտում,

- գարգացնող՝ իմացական ուղրութում՝ բնապահպանական աղետների պատճառները փաստարկելու կաղողություն, հուզական ուղրութում՝ շրջակա միջավայրի գեղագիտական ընկալում և արժեկորում, կամային ուղրութում՝ բնապահպանական հիմնախնդիրների լուծնան անհրաժեշտության գիտակցում և հնարավորությունների համոզվածություն [1]:

Սովորողների մեջ քաղաքային միջավայրի բնապահպանության համար պատասխանատ-

վուրյան ձևավորվածության ցուցանիշ են ոչ միայն հասարակության և բնության փոխազդեցութան վերաբերյալ գիտելիքների խորությունն ու կայունությունը, այլև դպրոցականների զգայի ներդրումը շրջակա միջավայրի՝ բնակարանի, բակի, դպրոցի, շրջակայիքի, փողոցի, քաղաքային գրուսայինների ու պուրակների մաքրության և բարեկարգման գործում:

Ներկայումս հանրակրության աջև ծառացած խնդիրներից են ուսուցման տարբեր աստիճաններում տարրական, հիմնական, ավագ դպրոցում սովորութերին քաղաքային բնակչավայրերի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրության ընթացքում առաջարկվող արմատական չափորոշիչների մշակումը, հանրակրական դպրոցի ուսումնական պահանում «Քաղաքային բնակչավայրի բնապահպանություն» դասընթացի տեղի ծցրտումը և հիմնավորումը:

Սեր դիտարկումների արդյունքում մենք հանգեցինք այն եզակացության, որ դասընթացը նպատակահարմար է ընդգրկել հանրակրական ավագ դպրոցի բնագիտական տարրերակած հոսքի դպրոցական քաղադրիչում որպես ընտրովի դասընթաց:

Հանրակրության պետական կրթակարգը ավագ դպրոցի համար երաշխավորում ընդհանուր, հայագիտական, լեզվաբանական, իրավագիտական, հասարակագիտական, տնտեսագիտական, ֆիզիկամաթեմատիկական, տեղեկատվական տեխնոլոգիաների, բնագիտական, արվեստների, արհեստագործական, գյուղատնտեսական, պաշտպանության և մարզական հոսքերը: Յուրաքանչյուր ավագ դպրոց, ըստ իր հնարավորությունների և պայմանների, կարող է ընտրել երաշխավորված հոսքերից մեկը կամ մի քանիսը [2, էջ 100]: Ավագ դպրոցի տարրերակած հոսքերում իրականացվում է պետական պարտադիր և խորացված ուսուցմամբ առարկաների դասավանդում:

Ավագ դպրոցի տարրերակած հոսքի հենքային ուսումնական պլանը կազմված է երեք քաղադրիչներից՝ պետական, դպրոցական և նախարարական: Դպրոցական քաղադրիչը ըստ դասարանների ներառում է այն ժամաքանակը, որը տնօրինում է դպրոցը՝ դեկավարվելով նախարարության կողմից երաշխավորված առարկաների ցանկով, հաշվի առնելով տեղական պայմանները և համայնքի կարիքները [2]:

Տարրերական հիմքում ընկած է ըստ տարբեր մակարդակների սովորողների պատրաս-

տումը: Տարրերական նպատակը ուսուցման անհատականացումն է: Տարրերակած մոտեցումն իրականանում է ոչ այնքան ուսուցվող նյութի ծավալի փոփոխման, որքան այդ նյութի տարածակարգակ յուրացմանն առաջադրվող պահանջների հստակեցման հաշվին:

Հանրակրության պարտադիր մակարդակը ներառում է ծրագրի համընդհանուր պատադիր բաղադրիչը՝ պահովվելով յուրաքանչյուր սովորողի ընդհանուր հանրակրթական պատրաստվածությունը, հետագա ուսումնառության և աշխատանքային գործունեության համար հիմքերի ստեղծումը, ուսումնական բնագավառների ներդաշնակ և անբողջական ուսուցումը:

Հոսքային ուսուցման նպատակը սովորողների անհատական հնարավորությունների և ընդունակությունների առավել լիարժեք քացահայտումն է, մասնագիտական կողմնորոշումը, որը հիմնվում է ուսուցման մարդասիրական սկզբունքների վրա:

Սեր դիտարկումները ցույց են տվել, որ բնագիտության հոսքային դասարաններում սովորողները կողոգիայի ուսումնասիրության նկատմամբ ընդգծված կողմնորոշումներ և կայուն դրդապատճաններ ունեն շրջակա քաղաքային միջավայրի կողոգիական առանձնահատկությունները ճանաչելու ուղղությամբ: Ներկայումս ավելի ու պայմանագիտական կենչեղություն է ստանում կողոգիական նշակալույթը ձևավորումն է կողոգիական գիտելիքների, կարողությունների համակարգի և սովորողների վարքի ու գործունեության հիմնա վրա՝ ուղղած շրջակա բնական և մշակութային միջավայրի, անձի և հասարակության առողջության պահպանմանը: Եվ քանի որ սոցիալ-քաղաքական, ժողովրդագրական տեղաշարժերի, հասարակության զարգացման արդի փուլում բնակչությունն ավելի շատ կենտրոնանում է մեծ քաղաքներում, բնականարար օրինակի է դարձել, որ քաղաքային բնակչավայրում գտնվողները տիրապետեն այդ միջավայրի կողոգիական գործիությանը:

Հասարակության կրթության անհրաժեշտությամբ պայմանավորված է տվյալ ոլորտի օրենսդրական-նորմատիվային դաշտը կանոնակարգող փաստաթուղթը «Ազգաբնակչության կողոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 2001 թ. նոյեմբերի 20-ին: Օրենքը կարգավորում է ազգայինական գործիության կողոգիական անընդմեջ կրթության բնագավառում պետական քաղաքակա-

նության սկզբունքները, իրավական, կազմակերպական և ֆինանսատնտեսական հիմքերը: Օրենքը սահմանում է էկոլոգիական անընդմեջ կրթության բնագավառի հիմնական հասկացությունները՝ էկոլոգիական կրթության, էկոլոգիական դաստիարակություն, էկոլոգիական գիտելիք, էկոլոգիական կուլտուրա:

ՀՅ-ում էկոլոգիական անընդմեջ կրթության նպատակն է՝

ա) ապահովել մարդու և հասարակության անընդմեջ, հանալիր, միասնական էկոլոգիական գիտելիքների նախուացմանը,

բ) նպաստել էկոլոգիական դաստիարակության և կուլտուրայի ծևավորմանը, մարդու, հասարակության և շրջակա բնական միջավայրի փոխներագործության ներդաշնակեցմանը, համակողմանի զարգացած անձի ծևավորմանը:

Ըստ օրենքի՝ էկոլոգիական անընդմեջ կրթության համակարգը ՀՅ միասնական կրթական համակարգի բաղադրիչն է: Այն պետական կրթական չափորոշչչների, կրթական հաջորդականությունների պահովող տարրեր մակարդակի և ուղարկության կրթական ծրագրերի, դասընթացների, ուսումնական հաստատությունների և կրթության կառավարման մարմինների փոխկապացված ամբողջությունն է:

Էկոլոգիական կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպման հիմքը էկոլոգիական կրթության պետական համալիր ծրագրին է: ՀՅ-ում էկոլոգիական կրթությունն իրականացվում է միասնական պետական ծրագրերով:

Օրենքը սահմանում է նաև էկոլոգիական կրթության բնագավառում ՀՅ կառավարության, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները, էկոլոգիական կրթության իրականացմանը հասարակական կազմակերպությունների և մարմինների մասնակցությունը, միջազգային համագործակցությունը էկոլոգիական կրթության բնագավառում [3]:

Ավագ դպրոցում «Քաղաքային բնակավայրի բնապահպանություն» դասընթացի հայեցակարգի մշակման համար անհրաժեշտ է սահմանել կրթության բովանդակության բաղադրիչների՝ գիտելիքների, կարողությունների, հնտությունների, արժեքային համակարգի հարաբերակցությունը ու փոխադարձ կապը:

Դիտարկենք սովորողների գիտելիքներին, կարողություններին ներկայացվող պահանջերը «Քաղաքային բնակավայրի բնապահպանու-

թյուն» դասընթացի համար:

Սովորողները պետք է իմանան՝

- քաղաքային միջավայրը բնութագրող հասկացությունները, քաղաքային էկոհամակարգերի գործառույթները, քաղաքային միջավայրի ուսումնասիրները,

- քաղաքակենտրոնացման, ժողովրդագրական, շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ գլոբալ, ազգային, տարածաշրջանային, տեղական հիմնախմնիրները,

- մարդու էկոլոգիական պահանջնունքները (Փիզիոլոգիական, հոգեբանական, սոցիալական), քաղաքային միջավայրի որակի բնութագրումը, սոցիալական հիմնախմնիրները,

- քաղաքային միջավայրի որակի վրա ներգործության հիմնական մեթոդները (քաղաքական, կառավարչական, ճարտարապետական-պահանպորման, քաղաքային բուսական և կենդանական աշխարհի ծևավորում),

- քաղաքային էկոհամակարգերի նկարագրությունը (արդյունաբերական քաղաքի բնուն, քաղաքային կենսաերկրացենոգներ), դրանց քաղադասարքերը, կենդանի օրգանիզմների տեսակները:

Սովորողները պետք է կարողանան՝

- բացատրել քաղաքի էկոլոգիայի վերաբերյալ գիտելիքների տիրապետման անհրաժեշտությունը, քաղաքի էկոլոգիայի ուսումնասիրման մեթոդները,

- ընտրել քաղաքի էկոլոգիայի վերաբերյալ տեղեկատվություն, հետազոտություն իրականացնել լաբորատորիայում և քաղաքային միջավայրում, վերլուծել ստացված արդյունքները, սահմանել պատճռահետևանքահն կապերը:

- բացատրել քաղաքային էկոհամակարգերի էկոլոգիական փոխազդեցությունը շրջակա միջավայրի հետ,

- վարել առողջ ապրելակերպ, հետևել շրջակա միջավայրի վիճակին, բարելավել սոցիալական փոխարաբերությունները դպրոցում, ընտանիքում, հասարակական վայրերում,

- բնութագրել քաղաքային միջավայրի որակի վրա ներգործության հիմնական մեթոդները,

- գիտելիքները կիրառել ուսումնական գործունեության ընթացքում (բնապահպանական խնդիրների լուծում, դերային խաղեր, ուսումնահետազոտական նախագծեր), ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանության ուղղված պահպանի գործունեության մեջ:

Սեր հետազոտության ընթացքում ուսումնասիրել ենք գիտական հետազոտություններ,

որոնցում մշակված են քաղաքակենտրոնացված միջավայրի և քաղաքային էկոհամակարգերի ուսումնասիրման մեթոդիկաներ [4]: Մենք հիմնվում ենք դպրոցականների մեջ բնության ուսումնասիրության նկատմամբ իմացական հետաքրությունների ձևափորման ուղղությամբ մեթոդական հետազոտությունների արդյունքների վրա, ըստ որոնց՝ ուսումնարաստիհարակչական գործընթացի նպատակները սահմանելիս պետք է հիմք ընդունել դաստիհարակվող անձի գիտելիքների, ուսումնական գործունեության դրդապատճառների, հետաքրությունների, հուզականացների, գեղագիտական պատկերացումների ամբողջությունը: «Քաղաքային բնակավայրի բնապահպանություն» դասընթացի բովանդակությունը համադրում է քաղաքային էկոհամակարգերի տեսական և գործնական ուսումնասիրումը՝ լայն հնարավորություններ ընձեռնելով սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացման համար: Քաղաքային բնակավայրի վերաբերյալ գիտելիքներն ընդլայնում են սովորողների մտահորիզոննը, նպաստում են աշխարհայացքի ձևափորմանը, մարդ-բնություն կապի ինաստավորմանը, հե-

տաքրորություն են ձևավորում շրջակա բնության և քաղաքային սոցիալական միջավայրի օբյեկտների գիտական հետազոտության ուղղությամբ:

Դիտարկվող հիմնախմբիրների տեսանկյունից չպետք է անտեսել ևս մեկ կարևոր նպատակ՝ սովորողների մասնագիտական կողմնորոշումը: Տարբերակված հոսքում էկոլոգիական բովանդակությամբ առարկաների խորացված ուսումնասիրման ընթացքում լուծվում են սովորողների էկոլոգիական ուղղվածությամբ մասնագիտական կողմնորոշման և մինչմասնագիտական պատրաստության խնդիրները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ալեքսեևա Տ. Ի.**, Проблема биологического адаптации и охрана здоровья населения. М., Изд.-во МГУ, 1989.
- Вернадский В. И.**, Биосфера и ноосфера. Хадик, 1989.
- Кашерилова Г. С.**, Урбозоэкология. Н. Новгород, 1997.
- Мазинг В. В.**, Проблема экологии города "Город и экология", М., 1987.

PEDAGOGICAL AND PSYCHOLOGICAL PROVE OF RESEARCHING URBAN ENVIRONMENT

ARMINE TOVMASYAN

Summary

The article is pedagogical and psychological aspects of the study of ecology in urban areas. Discussed in the framework of environmental education on environmental problems in urban areas, which justifies the need to study the pedagogical patterns, which reflect the demand of the society, its social order and the order of the links between sustainable.

ԶԱՅՆԻՆ ԵՎ ԶԱՅՆԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՆՐԱԺԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՌՈՒՏԱՏԵՍԱՅԻՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ*

Անահիտ ԱՎԱԳՅԱՆ

Նեռուստառադիլրագրության ամբիոնի դասախոս

Րեռուստատեսությունը տեսալսողական հանակարգ է, որտեղ հավասարապես կարևոր են թե ծայնը, թե պատկերը: Իսկ ռադիոն անգամ նույնացվում է ծայնի հետ և, ի տարբերություն հեռուստատեսության, ռադիոն մայնը միակ արտահայտչամիջոցն է:

Չայնին վերաբերող ցանկացած առարկայի դասավանդումն ավելի արդյունավետ կլինի և միկրոյն ժամանակ ուսանողին ավելի հասանելի, եթե նա դասընթացի առաջին փուլում ծանրթանա ծայնին՝ որպես երևույթի, նրա բնույթին, հատկություններին, օրենքներին:

Օրենքներ, որոնք պետք է իմանա հեռուստատեսային յուրաքանչյուր առանցքային մասնագետ՝ հնչյունային ռեժիսոր, ինժեներ, ռեժիսոր, լրագրող, օպերատոր, մոնտաժող, մկարիչ: Օրենքներ, որոնք գործնականում՝ (տաղավարում, թե տաղավարից դուրս) ծիշտ և գրագետ աշխատելու առաջին նախապայմանն են հանդիսանում: Օրենքներ, որոնց իմացության շնորհիվ «լղոզված», աղավաղված և անհասկանալի ծայնի փոխարեն եթերում կունենանք լավ, մաքուր և հստակ ծայն:

Չայնի մասին մարդու պատկերացումները, գիտելիքները հաճախ խիստ սահմանափակ են: Սակայն ծայնի՝ որպես ֆիզիկական երևույթի, հոգեբանափիզիոլոգիական ընկալման, ազդեցության, դերի, կարևորության մասին անհրաժեշտ և ունենալ պատկերացում:

Տեսողությունից հետո մարդու մոտ կարևորվում է ծայնային զգացողությունը: Չայնի շնորհիվ կարող են սիրել, հիասքափվել, տեղեկատվություն ստանալ, բուժվել և անգամ հիվանդանալ: Չայնը նաև հաղորդակցության միջոց է, ինչորմացիայի փոխանցման, հաղորդակցման միջոց: Ապացուցված է, որ մարդկանց 20-30%-ը

ինֆորմացիան ականջով ավելի լավ է ընկալում, քան աչքով:

Մարդուն շրջապատող ծայները, ծայնային աշխարհը հիմնականում անգիտակցորեն ասուցվում է որոշակի զգացումներով, պատկերացումներով, որովհետև լսողական ընկալումն ունի իր յուրահատկությունը: Այն երբեք մեկրւսացած չի լինում, այլ նպաստում է ուրիշ զգացումների առաջացմանը: Այսինքն՝ ծայնը մենք մեծ մասամբ ընկալում ենք ոչ թե առանձին, այլ ինչոր երևույթի հետ միաժամանակ: Սպառնացող տոնը, աղմուկը, անձանոր, անորոշ ծայները մարդու մոտ կարող են առաջացնել վախի, վտանգի, տհաճության, անորոշության զգացողություն, և հակառակ՝ մեղմ տոնը, ծայնի նուրբ երանգը, անտարի խշողը, ծովի ալիքների ծփանքն առաջացնում են ջերմության, անվտանգության, ապահովության, հանգստության հաճելի զգացողություններ: Այստեղից է՝ մեզ շրջապատող ծայների ազդեցությունն առաջին հերթին տարածվում է մեր ենթագիտակցության վրա, և զարմանալի չէ, որ ծայները կարող են ազդել մեր տրամադրության, զգացմունքների, պատկերացումների վրա, ինչպես նաև նպաստել դրանց առաջացմանը: Իսկ երաժշտությունն առաջացնում է ոչ միայն տեսողական պատկերացում, այլ նաև որոշակի ապրումներ, հոլովեր, հուշեր, հիշողություններ:

Գիտնականները փորձերի արդյունքում պարզել են, որ մարդու և որոշ կենորամիների (շուն, կատու, ճագար և այլն) մոտ երաժշտության ազդեցության տակ մեծանում է սրտի կրծատումների հաճախությունը, փոխվում է արյան ճնշումը: Նրանք գտնում են, որ որոշ կոմպոզիտորների, հատկապես Մոցարտի երաժշտությունը դրականորեն է ազդում մարդկանց առողջության, հոգե-

* Ներկայացվել է 10.12.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

կան վիճակի, նյարդային համակարգի վրա, օգնում է հաղթահարել շատ հոգեբանական և առողջական խնդիրներ: Շատ հիվանդանոցներում հիվանդները պարտադիր կարգով անցնում են երաժշտական թերապիա, ունկնդրում են ինչպես Մոցարտի, այնպես էլ այլ կոմպոզիտորների ստեղծագործություններ:

Մարդ լսողությամբ կարող է որոշել, թե որտեղ է գտնվում՝ ազատ տարածությունում, թե քարանձավում, անտառում, թե ծովափին, սենյակում, թե եկեղեցում, տրանսպորտում, թե լոգարանում... Նշված վայրերից յուրաքանչյուրում ձայնը տարբեր կերպ է ինչում: Որպեսզի ուսանողը համոզվի դրանում և զգա հնչողությունների տարբերությունը, խորհուրդ է տրվում հանձնարարել նրան տարբեր միջավայրերում ձայնագրիչով ձայնագրություններ կատարել:

Մեր ենթագիտակցության մեջ լսողական ընկալումն ավելի հաճախ կապված է կատարվող դեպքերի տեսողական պատկերացումների հետ: Տեսողական համակարգը (կին, հեռուստատեսություն) դիտողին տալիս է տեսողական և լսողական պատկերացումներ, իսկ ռադիոլոցի մոտ (ինչպես նաև ընթերցողի) տեսողական պատկերացումը ստեղծվում է իր իսկ կողմից՝ հիմնվելով լսածի և սեփական պատկերացման վրա: Այսինքն՝ ռադիոլոցը (ռադիոլոցի ենթագիտակցությունը) ավելի ակտիվ է, քան ֆիլմ կամ հաղորդում դիտողին: Քերենք օրինակ. ռադիոբեմադրությունների ժամանակ ունկնդիրը ռադիոյից լսվող ձայնի միջոցով ստեղծում է բեմադրության ընթացքի, կերպարների շարժումների, արտաքին տվյալների մասին իր պատկերացումը, այսինքն՝ ձայնից ստացած ազդակները հնարավորություն են տալիս մարդուն գլխուղեղի միջոցով արագորեն կերտել պատկերներ և գործողություններ:

Փորձենք հասկանալ՝ ինչ է իրենից ներկայացնում ձայնը:

Ձայնը ֆիզիկական երևույթ է: Այն ձայնային ճնշման փոփոխման հետևանք է և հանդիսանում է փոփոխական ֆիզիկական ներություն:

Միջավայրի մասնիկների տատանման շնորհիվ առաջանում են աչքի համար անտեսանելի առաձգական ալիքներ, որոնք տարածվում են միջավայրում, այսինքն՝ ձայնը միջավայրի ալիքածն ճնշումն է:

Եթե օր չլիներ, բնականաբար մենք չինք լսի ձայնը: Ձայնը մենք լսում ենք, որովհետև ականջը զգայում է միջավայրի ճնշման փոփոխությունների, այսինքն՝ ձայնային ալիքների նկատմամբ, և այդ ձայնը մենք լսում ենք մեր ականջ-


ներում գտնվող նյարդային վերջույթների շնորհիվ: Ընդհանրապես ականջն ունի բարդ կառուցվածք, «այն յուրօրինակ ձայնարնկալիչ է, որն օժտված է հաճախային տարալուժիչ (առավազատ) հատկություններով»: Կազմված է արտաքին, միջին և ներքին ականջներից: Արտաքին ականջն օժտված է ականջախեցուց և լսողական անցուղուց, այն որսում է ձայնային տատանումները և ուղարկում դեպի միջին ականջ: Միջին ականջը կազմված է երեք լսողական ուկրիկներից՝ մուրճ, սալ, ասպանդակ, սա էլ իր հերթին արտաքին ականջից ստացված ձայնային տատանումները փոխանցում է դեպի ներքին ականջ, որը կոչվում է նաև լարիդինոս: «Ներքին ականջում՝ ականջի խեցիում, գտնվում է հիմնական թաղանթը, բաղկացած մեծ թվով թելիկներից, որոնք թոյլ կերպով կապակցված են իրար: Հիմնական թաղանթի երկարությամբ տեղադրված են նյարդային վերջավորություններ, որոնցից յուրաքանչյուրը (իսկ նրանք 20.000-ից ավելի են) գրգռվում են իրենց հպվող հիմնական թաղանթի թելիկներից՝ ուղեղի լսողական կենսուրուն ուղարկելով էլեկտրական ազդակներ: Այդտեղ այդ ազդակները ենթարկվում են բարդ վերլուծության, որի արդյունքում մարդը ճշգրտում է հաղորդվող լուրը» [1, էջ 23, 1, 2]: Այսինքն՝ մենք տարբերում, իրարից առանձնացնում ենք հաղորդվող հնֆորմացիան՝ խոսքը, աղմուկը, երաժշտությունը և այլը:

Այսպիսով, ձայնը տատանողական պրոցես է, առաջացական միջավայրի մասնիկների մեխանիկական տատանում:

Աղյօյւրը ճառագում է ձայնային ալիքների հաջորդականություն: ճնշման այդ փոփոխությունը տեղի է ունենում սինուսոիդի օրենքով:

Մեզ շրջապատող բոլոր հնչյունները, ձայներ՝ խոսք, երաժշտություն, աղմուկ, հանդիսանում են բարդ ձայներ: Դրանք կազմված են պարզ, հասարակ տոների միացությունից, որոնք, ինչպես նշեցինք, առաջանում են ճնշման փոփոխման ազդեցության տակ, միջավայրի մասնիկների սովորական տատանումից: Մաքուր տոների դեպքում (որոնք առօրյա կանքում շատ քիչ են հանդիպում) ականջի թաղանթի վրա ճնշումը փոփոխվում է հետևյալ կերպ (պատկերը տես հաջորդ էջում):

Տատանման սկզբում, ու ակնթարթում, ականջի թաղանթի ճնշումը հավասար է նորմալ մենայորտային ճնշման, և ակնթարթում այդ ճնշումը մեծ է +P-ով, t₂-ում էլի հավասարվում է նորմալ մենայորտային ճնշման, t₃-ակնթարթում ականջի թաղանթը գգում է ճնշման անկում-P-ի



չափով, t_4 -ակնթարրում նորից տեղի է ունենում ճնշման հավասարակշռում: Ընդ որում՝ մքնոլորտի սեղման փուլում ծայնային ճնշումը դրական է, իսկ նորացման, լիցքաբափման փուլում՝ բացասական:

Ինչպես նշեցինք վերևում, աղբյուրը ծառագում է՝ ծայնային ալիքների հաջորդականություն: Միջավայրի մասնիկների տատանողական շարժումը կոչվում է ծայնային տատանում: Չայնային տատանումների տարածումն առածգական միջավայրում կոչվում է ծայնային ալիք: Տարածությունը, որում տարածվում են ծայնային ալիքները, կոչվում է ծայնային դաշտ: Ուղղությունը, որով տարածվում են ծայնային ալիքները, կոչվում է ծայնային ծառագայք: Ընդ որում, տարածվում է միայն ծայնային տատանումը, այսինքն ծայնային էներգիան: Դա նշանակում է, որ ալիքը տեղափոխում է ոչ թե միջավայրի նյութը, այլ էներգիան:

Չայնային ալիքները տարածվում են ոչ թե ակնթարրուեն, այլ որոշակի արագությամբ: Այդ արագությունը կոչվում է ալիքի տարածման արագություն կամ ծայնի արագություն: Չայնային տատանումներ կարող են առաջանալ սեղմվելու ընդունակ յուրաքանչյուր միջավայրում և տարածվել ոչ միայն օդում, այլև ցանկացած միջավայրում՝ պինդ, հեղուկ, գազային: Տարբեր միջավայրերում ծայնային ալիքները տարածվում են տարբեր արագություններով, ինչը կախված է միջավայրի տեսակից, նյութից, խոռությունից, ջերմաստիճանից: Ջերմաստիճանի բարձրացման հետ միաժամանակ մեծանում է նաև ծայնային ալիքների տարածման արագությունը:

Սա կարևոր է հնանալ հատկապես համերգներ ծայնագրելիս: Բոլորս տեսել ենք, թե ինչպես են երաժշտ կատարողները համերգից առաջ լարում իրենց գործիքները (գործիքները լարում են ըստ հորոյի տված «յա» տոնի), քանի որ դրանք անոք է լինեն լարած, հնչեն հավասար, նույն բարձրությամբ, լինեն համահունչ: Այդ ընթացքում գործիքները տաքանում են, տաքանում են նաև, երբ բարձրանում է օդի ջերմաստիճանը և ըստ դրա, փոխվում է գործիքների հնչությունը:

Դություն: Օրինակ, եթե օդի ջերմաստիճանը բարձրանում է 8 աստիճանով, ֆլեյտայի հնչությունը կես տոնով փոխվում է:

Ցանկալի է, որ ուսանողները հաճախակի լինեն համերգաբարականերում, ուշադիր լինեն և, որ կարևոր է, ստվորեն լսեն և գնահատեն լսածը:

Ինչպես նշեցինք, ծայնի արագությունը կախված է միջավայրի խտությունից և ճնշումից, ըստ որում՝ գազային միջավայրում ծայնի արագությունն ավելի փոքր է, քան հեղուկներում, իսկ հեղուկներում ավելի փոքր է, քան պինդ մամիններում:

Չայնային ալիքը օդի ջերմաստիճանի 15-20% C-ի դեպքում տարածվում է՝ $c=340-343$ մ/վրկ-ում: Զրում այն ավելի արագ է տարածվում՝ 1430 մ/վրկ-ում, (աղյ ջրում՝ 1500մ/վրկ-ում) պողպատ միջավայրում (առանցքում) ծայնային ալիքը տարածվում է 5170մ/վրկ-ում (անսահման տարածությունում 5850մ/վրկ-ում), ապակե միջավայրում (առանցքում) 5300 մ/վրկ-ում է տարածվում ծայնային ալիքը (անսահման տարածությունում 5660 մ/վրկ-ում):

Անենադանդաղը ծայնային ալիքը տարածվում է ամորֆ (պլաստիկն, ցեխն, ռետին, խոնր, կաուչուկ և այլն) միջավայրում՝ 30 մ/վրկ [1, էջ 6, 7]:

Անփոփելով կարող ենք ասել՝ ծայնը առածգական միջավայրի մասնիկների տատանողական շարժում է, մեխանիկական տատանում, որը տարածվում է ալիքների տեսքով՝ գազային, հեղուկ և պինդ մարմիններում և ընկալվում հատուկ լսողական օրգանի՝ ականջի կողմից:

Չայնի առաջացման համար անհրաժեշտ է չորս պայման՝

1. Առածգական մարմին-ծայնի աղբյուր
2. Տատանում առաջացնող մարմին
3. Առածգական միջավայր
4. Այդ տատանումներն ընկալող օրգան:

Չայնի աղբյուր են հանդիսանում՝ մարդու մոտ՝ ծայնալարերը, լարային գործիքներում լարերը, փողային գործիքներում հավաքված, կուտակված օդի ծավալը և այլն: Տատանում առաջացնող մարմին հանդիսանում են աղեղը կամ մատը լարային գործիքների դեպքում, հարվածային գործիքների մոտ՝ փայտիկները և այլն:

Ինչպես տեսանք, ծայնը միջավայրի տատանման արդյունք է: Այդ տատանումները տարբերվում են ուժով, հաճախությամբ և օբերտուններով, որոնք են հանդիսանում են ծայնի ֆիզիկական հատկությունները: Սակայն մեր սուբյեկտիվ ընկալունակությունը տարբերվում է ծայնի ֆիզիկական հատկություններից: Չայնի ուժը մենք ընկալում ենք որպես ուժգնություն, հաճա-

խորյունը՝ որպես ծայնի բարձրություն, իսկ օքերտոնների շարքը՝ որպես տեմբր:

Այժմ խոսենք ծայնի առաջին ֆիզիկական հատկության՝ ուժի մասին:

Չայնի ուժը իրենից ներկայացնում է միավոր մակերեսի վրա ընկած ծայնային ճնշում: Այն կախված է ծայնի աղբյուրի հզորությունից և առաջական մարմնի տատանման ամպլիտուդից: Ամպլիտուդը (amplitude-լատիներեն՝ մեծություն) տատանվող մարմնի կատարած ամենամեծ շեղումն է հավասարակշռված դիրքից:

Մեծ համերգասրահներում, մարզադադաշտերում կամ բաց տարածությունում, համերգների ժամանակ օգտագործում են մեծ հզորություն ունեցող բարձրախոսներ, որոնց անմիջապես մոտ գտնվող կամ առաջին շարքերում նատած հանդիսատեսք իր վրա, կրծքավանդակին մոտ, իրոց է զգում: Կարծես ինչ-որ մեկը հրում է իրեն: Դա ոչ թե ինչ-որ մեկն է, այլ ծայնի ուժը, ծայնային ճնշումը:

Տեխնիկայում որպես ծայնի չափման միավոր վերցրել են Բելի 1/10մասը՝ դԲ-ը, ի պատիվ հեռախոսի շատ այլ գյուտերի հեղինակ Ալեքսանդր Բելի: Բելը գտնում էր, որ լսողական ընկալումը կախված չէ ծայնային ալիքի հզորության ռեալ մակարդակից: Այն կախված է դրա լոգարիթմից, այդ պատճառով էլ դր-ի սանդղակը լոգարիթմական է, որը շատ հարմար է մեծ բվերը ներկայացնելու համար: ԴԲ-ը համապատասխանում է ծայնային ճնշման մակարդակի այնպիսի մեծացմանը, որը մարդու բարենպաստ պայմանների դեպքում ի վիճակի է տարրերել լսողությամբ:

Մարդու ականջը, լսողությունը, սահմանափակ է տարրեր ուժի ծայներ ընկալելու տեսանկյունից: Այն կարող է ընդունել ծայներ, որոնց ուժը փոփոխվում է ոչ թե մի քանի միավորով, այլ միջինակարգությամբ:

Հաստ թույլ ծայները լսելիության զգացողություն չեն առաջացնում: «Եթե հիմնական թաղանքի թելիկը իր տատանումների ընթացքում չի հասնում իրեն մոտ գտնվող նյարդային վերջավորությանը, ապա ննան ծայնը մարդը չի լսում: Բայց բավական է մեծանա թելիկի տատանման ամպլիտուդը, այն կիպվի նյարդային վերջութիւն և կառաջացնի գրգիռ: Նյարդային վերջավորությունը անմիջապես կակսի էլեկտրական ազդակներ ուղարկել ուղեղի ծայնային կենտրոն, և ծայնը լսելի կլինի: Այս թոիչքածն անցումը լսելի վիճակից ոչ լսելին և հակառակ կը լուզում են լսելիության շեն: Լսողական ընկալման բացարձակ մեծությունը լսելիության շեմին

մեծ չէ, բայց և այնպես ունի վերջնական նշանակություն» [1, էջ 28]: Այսինքն ամենաթույլ ծայնը լսելու համար նրա ուժը պետք է ավելացնել, հասցնել մինիմալ մեծության: Ասպիսով՝ այն մինիմալ ծայն առաջացնող էներգիան, որն անհրաժեշտ է, որպեսզի մենք լսենք ամենաթույլ ծայնը, կոչվում է լսելիության շեմ կամ լսողական շեմ: Օ դԲ-ը ցույց է տալիս այն ամենաթույլ ծայնը, որը հասանելի է մարդուն: Լսելիության շեմը փոփոխվում է՝ կախված ծայնի հաճախության մեծությունից:

Չայնի ուժի մեծացման դեպքում լսելիությունը նորմալանում է, իսկ տատանման ավելի մեծ ամպլիտուդների դեպքում լսելիության զգացողության ավելանում է նաև ճնշման զգացողությունը, որն ականցներում առաջացնում է ցավ: Չայն առաջացնող մաքսիմալ էներգիան, որին ի վիճակի է դիմանալ մարդու ականջը, կոչվում է ցավի շեմ: Ցավի շեմը միշտ հաշվով կազմում է 130դԲ, և այս, ի տարրերություն լսելիության շեմի, թիվ է կախված հաճախությունից: Ցավի շեմը գերազանցող ծայները վտանգավոր են մարդու առողջության, երբեմն նույնիսկ կյանքի համար:

Չայնային ճնշման շեմերը՝ լսելիության շեմը և ցավի շեմը, հետ են ընկանում մեկը մյուսից մոտավորապես 110դԲ-ով: Առօրյա կյանքում զգացողությամբ ընկալվող հիմնական հնչողությունները գտնվում են այդ դիապազոնի ամենատարբեր շրջաններում: Սակայն սովորական խոսքի կամ լուր սենյակի աղմուկի միշտ մակարդակի և երաժշտական հաղորդման գերադասելի մարմար մակարդակի միջև եղած տարրերությունը ընդամենը 45դԲ է: Բերենք օրինակներ ծայների և աղմուկների սանդղակից, որոնք արվել են տարրեր ժամանակներում տարրեր գիտական խմբերի հետազոտությունների արդյունքում (տե՛ս այսուսալ):

Սեր սուրբեկտիվ ընկալունակությունը տարբերվում է ծայնի օրեկտիվ ֆիզիկական հատկությունից: Սենք ծայնի ուժը ընկալում ենք որպես ծայնի ուժգնություն: Չայնի ուժի մեծացման հետ մեծանում է նաև ծայնի ուժգնությունը, սակայն ուժգնության մեծացումը տարբերվում է նրա ուժի մեծացումից: Գիտնականներ Վերերը և Ֆեխները հիմնավորել և ապացուել են ծայնի ուժի և ուժգնության միջև եղած կախվածությունը, որը կոչել են Վերեր-Ֆեխների օրենք: Ըստ այդ օրենքի՝ մեր ընկալունակության ուժգնությունը ուղղի համենատական է ծայնի ուժի լոգարիթմին: Օրինակ՝ եթե ծայնի ուժը մեծանում է 100 անգամ, ապա ուժգնությունը մեծանում է 2 անգամ, եթե 1000 անգամ է մեծանում ծայնի ու-

| ԶԱՅՆԻ ԱՂԲՅՈՒՐ | ԴԲ | ԲՆՈՒԹԱԳԻՐ |
|---|---------|----------------|
| Լողական ընկալման շեմ | 0 | |
| Շնչառություն | 10-15 | Թույլ լսելի |
| Տերևների խցոց | 10-20 | Թույլ լսելի |
| Շշով (1մ հեռավորության վրա) | 20 | Թույլ լսելի |
| Սովորական խոսակցություն (1 մ հեռավորության վրա) | 40-50 | բավարար լսելի |
| Միջին խոսակցություն (1 մ հեռավորության վրա) | 55-60 | հստակ լսելի |
| Ուժին խոսակցություն (1 մ հեռավորության վրա) | 65-70 | հստակ լսելի |
| Ծափահարություններ | 60-70 | հստակ լսելի |
| Աղմկոտ փողոց | 70-80 | հստակ լսելի |
| Աշխատող փոշեկուլ | 70-80 | հստակ լսելի |
| Մետրոյի աղմուկ | 80-90 | հստակ լսելի |
| Բղավոցներ | 80-90 | հստակ լսելի |
| Որք խմբի համերգ | 90-100 | հստակ լսելի |
| Նվազախումբ (ֆորտիսիմոն) | 90-100 | հստակ լսելի |
| Ամարոպի ճայթյուն | 100-110 | հստակ լսելի |
| Դիմուտեկ (ուժգին) | 100-110 | հստակ լսելի |
| Չենքի կրակոց | 120-125 | ցավի շեմին մոտ |
| Ինքնաթիրի աղմուկ | 120-130 | ցավի շեմին մոտ |
| Ցավի շեմ | 130 | ցավի շեմ |

Ժր, ապա ուժգնությունը մեծանում է 3 անգամ՝ $Ig100=2$, $Ig1000=3$ և այլն:

Այսպիսով՝ ծայնի ուժի կամ նրա համապատասխան էներգիայի կրկնապատկումն ամեն անգամ ընկալվում է որպես ուժգնության մակարդակի հավասարաչափ մեծացում: Այսինքն եթե ծայնի ուժը աճում է թրչքածն՝ (երկարափական պյողորեսիա) 1:2:4:8:16:32:64 և այլն, ապա ականջը դա ընկալում է որպես ծայնի ուժգնության հավասարաչափ մեծացում (թվաքանական պյողորեսիա) 1:2:3:4:5:6:7:8 և այլն:

Չայնի ուժգնության մակարդակը արտահայտվում է ֆոներով, որը թվապես հավասար է ծայնի ճնշման մակարդակին՝ արտահայտված դեցիբելներով (հավասար ուժգնության կորեր):

Խոսելով ծայնի ուժգնության մասին, անհրաժեշտ է նշել մեր լսողության մի քանի առանձնահատկությունների մասին և՝ մեծ ուժգնությունը ունեցող ծայները երկարատև լսելու դեպքում (մեկ րոպե և ավելի) ծայնի ուժգնությունը աստիճանաբար պակասում է ականջի զգայունության կորստի պատճառով, չնայած ծայնի ուժը մնում է նույնը: Եթե միանգամից ծայնի ուժը փորձրացնենք, ապա ուժգնության ամկումը կիրար ավելի մեծ չափով, քան ծայնի ուժի ամկումը:

Ուժգին ծայներից հետո մեր ականջը, հարմարված լինելով այդ ծայներին, դրանց հաջորդող թույլ ծայները չի լսում: Քերենք օրինակ. սիմֆոնիկ, եստրադային-սիմֆոնիկ համերգների ժամանակ երենն ողջ նվազախմբի ուժգին հնչողությունից հետո հանդես է գալիս որևէ մեկ, համեմատաբար թույլ հնչողություն ունեցող

գործիք՝ ֆլեյտա, ջուրակ, հորոյ... Առաջին մի քանի պահը ներ ականջը այդ հնչյունները չի ընկալում: Դակիմում գտնվող ունկնդիրը սկսում է լսել դրամը մի քանի վայրկյան հետո, եթե վերականգնվում է ականջի զգայունությունը: Լիմանալով և հաշվի առնելով ծայնի ֆիզիկական հատկության ուժի և մեր ականջի այս առանձնահատկությունը, ինչպես նաև ծանոթ լինելով պարտիտորին, ինը պարտադիր է նման ստեղծագործություններ ծայնագործ հնչյունային ռեժիսորի պարագայում, նա մենակատարումով համենես եկող գործիքի հնչողության ուժգնության մակարդակը անմիջապես պետք է մեծացնի, հասցնելով լսելության մակարդակի, որպեսզի հեռուստադիտողը կամ ռադիոռունկնիդրը շիփին հեռակարավարման վահանակի օգնությանը, փորձելով իր հաճար լսելի դարձնել ականջին անհասանելի հնչյունները:

Միջին ուժգնության ծայները ուժգին ծայներից հետո մեզ թվում են թույլ և հակառակ՝ դրամը թվում են ուժգին թույլ ծայներից հետո:

Ականջի զգայունությունը թուլանում է ուժգին ծայների աղմկությունը:

Մեր ականջը հատկապես զգայուն է կարճ, կրկնվող ծայների նկատմամբ:

Չայնի ուժը մեծ նշանակություն ունի հալորդությմերի ծայնային որակի և հստակության համար: Օրինակ, երաժշտական ստեղծագործությունները, նույնիսկ ֆոնոգրամաները լսելիս ծայնի ուժի թույլ մակարդակի դեպքում տեղի է ունենում ցածր հաճախությունների (բասերի)

աղավաղում և երաժշտությունը թվում է քչ հյութեղ, քչ հագեցած, չոր:

Դարցագրույցների, ելույթների ժամանակ, եթե միկրոֆոնը գտնվում է ձայնի աղբյուրին շատ մոտ, ապա միկրոֆոնի վրա ճնշումը, այսինքն ձայնի ուժը մեծ է լինում, հատկապես եթե օգտագործել ենք միկրոֆոնների զգայուն տեսակը (ուժեղ ձայնային ճնշումը աղբյում է միկրոֆոնի թաղանթի վրա): Ճնշումը մեծ է լինում նաև, եթե հաղորդավարը, մասնակիցը, կամ դերասանը բղավում է, խոսում է ոգևորված կամ բարկացած: Այսպիս դեպքերում տեղի է ունենում մուտքային աղդանշանի ծանրաթեռնվածություն, գերբեռնվածություն, ստանում ենք աղավաղված ձայնային աղդանշան (ոչ զօյային աղավաղում), որի պատճառով կորում է խոսքի հստակությունը, իսկ շատ ուժգին ձայները ականցի կողմից ընկալվում են որպես խրխոռոց: Նման աղավաղումներից խուսափելու և հստակ հնչողություն ստանալու համար միկրոֆոնը պետք է շատ մոտ չպահել ձայնի աղբյուրին, հաշվի առնելով իհարկե միկրոֆոնի տեսակը՝ զգայունությունը: Իսկ թույլ ձայնային ճնշման դեպքում անհրաժեշտ է միկրոֆոնը ավելի մոտ տեղադրել: Այլապես՝ թույլ աղդանշանի դեպքում ստիպված ենք լինելու մոնտաժի ժամանակ այս ուժեղացնել, որի դեպքում կառաջանա այլ վտանգ: աղդանշանում ձայնի ուժեղացմանը գուցահեռ կուտեղանա նաև աղմուկի մակարդակը: Իսկ աղավաղված աղդանշանի դեպքում, մոնտաժի ժամանակ ինչքան էլ իշեցնենք ուժգնության մակարդակը մինչույնն է, ոչինչ չի փոխվի:

Մենք աղավաղումը կանխելու մի քանի տարբերակ և ունենք. թուլացնում ենք միկրոֆոնից դեպի վահանակ եկող ձայնային աղդանշանի հղորության մակարդակը (զգայունությունը), ձայնային վահանակի վրա գտնվող հատուկ պտուտակի միջոցով, որը նախատեսված է հենց այդ նպատակի՝ հղորության մակարդակը թուլացնելու, կամ անհրաժեշտության դեպքում ավելացնելու համար:

Կարող ենք նաև վահանակի վրա գտնվող համարիչների (մուկաքը) միջոցով իշեցնել ձայնային աղդանշանի մակարդակը, սակայն այս երկու դեպքում էլ տուժման են բարձր հաճախությունները, սեղմվում է դինամիկական դիապազոնը, տեղի է ունենում ձայնի հնչողության ծավալի կորուստ՝ հատկապես մոնուֆոնիկի հեռարձակման դեպքում: Այդախով՝ ձայնը, որը հաղորդվում է ռադիոյով կամ հեռուստահանությամբ, լսողին է հասնում որոշակի կորուստությունը: Հաճախություններն իհարկե կարելի է կար-

գավորել հնչյունային վահանակի վրա տեղադրված կոռեկտորների միջոցով, բայց ամեն դեպքում, ձայնը նույնիսկ տեմբրային փոփոխության է ենթարկվում:

Զայնային ուժեղ ճնշման, ուժի առկայության դեպքում խրհուրդ է տրվում նաև միկրոֆոնի վրա սպոնգ ամրացնել «փչոցներից», «փնչոցներից», հոգոնցներից խուսափելու համար, չնայած այս դեպքում ևս խախտվում են հատկապես բարձր հաճախությունները, որոնք, ինչպես նշեցինք, վերականգնվում են կոռեկտորների միջոցով: Յամերգմերի, համդիսական միկրոֆոնների, միջոցառումների ժամանակ հաճախությունների, միջոցառումների ժամանակ հաճախությունների միկրոֆոնը շատ մոտ պահելու դեպքում, որոշ շեշտած տառեր՝ բ, պ, փ... երեմն նույնիսկ սպոնգն էլ չի օգնում, բայց գուն թուլացնում է ճնշման ուժը և փափկացնում հնչողությունը: Ցավոք, շատ երգիչներ, մեկնաբաններ, հաղորդումներ և համդիսական մարդու խուսափում են միկրոֆոնի վրա սպոնգ ամրացնելուց, չհասկանալով նրա դերն ու անհրաժեշտությունը ձայնագրման պրոցեսում:

Եստրադային երգիչների համար (քանի որ նրանք շատ մոտ են պահում միկրոֆոնը և ձայնային ճնշումը ավելի մեծ է լինում միկրոֆոնի թաղանթի վրա): Նախատեսվում են հատուկ միկրոֆոններ, որոնցում հիմնական թաղանթից բացի կա նաև լրացրուցիչ ծածկույթ, որը կանխում է բաղադային մուտքը:

Աղդանշանի հղորության մակարդակը կարգավորելու երկու տարբերակ կա՝ ձեռքի և ավտոմատ: Յամադրիչով հնչյունային ռեժիսուրը իրականացնում է մակարդակի կարգավորումը ձեռքով, ի տարբերություն ավտոմատ կարգավորման, որն իրականացվում է տեխնիկական սարբերի միջոցով՝ սահմանափակիչ, կոմարեսոր և այլն: Մրանք բաց չեն թողնում, սեղմում են ուժգին աղդանշանները: Ավտոմատ կառավարումը լայն տարածում ունի TV-ում և ռադիոյում, բայց այն չի կարող փոխարինել բարձրակարգ հնչյունային ռեժիսուրի աշխատանքին երաժշտական հաղորդումներ, համերգներ (հասկապես դասական), ձայնագրելիս, քանի որ ավտոմատը չի կարող զգալ հնչողության ներբությունները, նրա դինամիկան: Դրա փոխարեն, տեսախցիկների վրա տեղադրված աղդանշանը գրանցող և կարգավորող մեխանիզմը հիմնականում դրվում է ավտոմատ ռեժիմի վրա, քանի որ օպերատորները հնարավորություն չունեն ձեռքով կառավարում այդտեղ իրականացնել:

Հնչյունային վահանակը հնարավորություն է տալիս օգտվել և արաջին և երկրորդ տարբե-

րակներից:

«Արտաստուդիական նկարահանումների ժամանակ հաճախ օգտագործում են խցիկի վրա տեղակայված միկրոֆոններ: Դրանք կարող են լինել ինչպես ներկալված, այնպես էլ՝ կորպուսին ամրացված: Սրանց գլխավոր առավելությունը օգտագործման հարմարությունն է: Դիմնական թերություններն են՝ ձայնի գրառման ցածր որակը, եթե նկարահանումը կատարվում է որոշակի հեռավորությունից, և կողմնակի ձայները (ինչպես արտաքին այնպես էլ խցիկի արձակած) հեշտությամբ որսալը:»

Այս պատճառով արտաարուելիական նկարահանումներում լայնորեն կիրարվում են արտաքին խցիկին չամրացված միկրոֆոններ: Սրանց հիմնական տեսակներն են՝ ձեռքի միկրոֆոնը, «կրիկները»... [2, էջ 98]:

Այս տողերից երեսում է, որ եթե նախկինում, արտաստուդիական նկարահանումների ժամանակ ձայնը ապահովում էր միայն ինչյունային ռեժիսորը (բոլոր խնդերում նրա ներկայությունը պարտադիր էր), ապա այժմ, նկարահանման գնում են օպերատորը և լրագրողը, երենքն նույնիսկ միայն օպերատորը: Սա նշանակում է, որ իրենց գործից բայց, նրանք պատասխանատու են նաև ձայնի համար, իսկ որևէ բանի համար պատասխանատվություն կրել: Նշանակում է, առնվազն պատկերացում ունենալ դրա մասին, տվյալ դեպքում ձայնի ֆիզիկական հասկությունների, ակուստիկայի, ձայնային տեխնիկայի:

Այս ամենի մասին պատկերացում պետք է ունենան նաև մոնտաժողները: «Զայնը տեսաժամանակին կարող բալկացնելու մեջն է: Մոնտաժի տեխնոլոգիայի տեսակետից անհրաժեշտ է ձայնագրությունը կարգավորել այնպես, որ ստացվի մաքուր, չաղավաղված հնչողություն: Գեղագիտական առումով՝ ձայնագրությունն էականորեն ազդում է մոնտաժվող նյութի տրամադրության ու ռիթմի վրա և, հետևաբար, այն տպավորության վրա, որ թողնելու է ծրագիրը» [2, էջ 109]:

Իրոք, մոնտաժողի աշխատանքը հաղորդման պատրաստման գործնթացի «Վերջին ակորդն» է, և հաճախ նրանից է կախված հաղորդման վերջնական արդյունքը: Եթե մոնտա-

ժողը չինանա ձայնի ֆիզիկան, կարող է նույնիսկ լավ արված ձայնագրությունը աղավաղել, որովհետև մոնտաժը միայն կադրերը հաջորդաբար դասավորելը, «կտրել-կպցնելը» չէ, դա խւապես բավական բարդ, լարված և պատասխանատու աշխատանք է, հատկապես որ հաղորդումների (բացառությամբ երաժշտական կատարումների, համերգային ծրագրերի), նույնիսկ ֆիլմերի մոնտաժման աշխատանքները հաճախ ընթանում են առանց հնչյունային ռեժիսորի մասնակցության:

«Ժամանակակից տեխնիկական միջոցների կատարելագործումը ստիպել է, որ մոնտաժողի մասնագիտական գործառույթները որոշակի դեպքերում իրենց վրա վերցնեն լրագրողներն ու ռեժիսորները: Այս երևույթը պարտադիր չէ, բայց դա էլ իր հարմարություններն ունի փոքր ծավալի սյուժեների դեպքում, եթե ավելի արագ աշխատելու անհրաժեշտություն և կարիք կա: Նույն չի կարելի ասել մեծ ծավալի հաղորդումների դեպքում, եթե մոնտաժի ժամանակ յուրաքանչյուրն իր անելիքն ունի» [3, 264]:

Իսկապես, լրագրողները, ռեժիսորները, օպերատորները հաճախ, օրենկույթի և սուբյեկտիվ պատճառներից ելնելով, իրենց վրա վերցնում են ոչ միայն մոնտաժողի, այլև ինչյունային ռեժիսորի պարտականությունները: Սա ևս մեկ անգամ հաստատում է, որ նշված բաժիններում ձայնին, ձայնային տեխնիկային վերաբերող առարկաների ուսուցումը ոչ թե ցանկալի, այլ անհրաժեշտ է և պարտադիր:

Այսպիսով՝ եթերում հստակ և որակյալ ձայն ունենալու համար մենք պետք է հնանանք ձայնի ֆիզիկան, ձայնային տեխնիկան, ընտրենք ճիշտ միկրոֆոն, կատարենք միկրոֆոնի ճիշտ տեղադրում և, որ շատ կարևոր է, աշխատենք մասնակից կատարողների հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **В. К. Иофе, В. Г. Корольков, М. А. Сапожков,** Справочник по акустике. М., "Связь" 1979:
2. Фонорадиометр հեռուստատեսային արտադրություն, 2002, Internews:
3. **Ա. Երիցյան,** Հեռուստատեսային մասնագիտություններ. Կրությունից մինչև վարպետություն, Եր., 2007:

THE PHYSICAL CHARACTERISTIC OF VOICE AND ITS SPECIFICATION OF PERCEPTION AT BROADCAST

ANAHIT AVAGYAN

Summary

The article represents a voice, its role and impact on the broadcast voice in television and radio. Voice has to be clear and pure. Therefore some professional specifications are presented to students.

ԴԱՎԻԹ ԱԼԱՎԿԱՊՐԴՈՒ «ԿԱՆՈՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ»*

Արտյոմ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ



A black and white portrait of Aram Sargsyan, a middle-aged man with short hair, wearing a dark suit, white shirt, and patterned tie. He is looking slightly to his right with a neutral expression. The background is plain and light-colored.

Դավիթ և նրա կանոնների մասին տեղեկությունները փոխանցվել են ժամանակակիցների՝ պատմագիրներ Կիրակոս Գանձակեցու¹, Վարդան Արևելցու, Ստեփանոս Օրբելյանի, Միհրար Վոհիմանեցու միջոցով:

Մասնավորապես Կիրակոս Գանձակեցին Ալավետի մասին գրում է. «Մարմնով վայել-չահասակ էր, լայնամորուք և փառահեղ, մեծաշ-ուր և պատկառազոր, քաղցրախոս ու շնորհա-լից, մտքով թեղմնավըրու պերծախոս, ժումկալ և աճճնաճի ուսուրախոռ»^{2:}

Կ. Գանձակեցին, որ սիրում է պատմության
թելը ընդհատելով խստել նտերիմների մասին,
հաճախ նաև հաղորդում է պատմական շառ
կարևոր և անզնահատելի տեղեկություններ ժա-
մանակի նշանավոր մշակութային ու գիտական
գործիչների մասին: Ահա այդպես, խստելով
Ալավկարորդ մահվան մասին, հիշում է նաև, որ
նա շատ զարգացած մարդ է եղել: Ալավկարորդու

Դավիթ Ալավելու մասին ուրիշ աղբյուրներ և տեղեկություններ են հաղորդում: Վարդան Սեծը Դավիթին անվանում է՝ «Յովիան Իմաստասերի ընկեր-Լժակից» և նրա մասին խոսում է որպես «ըրլորին ընթանելի և ոյուրահաս կանոնների» ստեղծող հերինանի:

Ալվակարդու կանոնախումբը քաղկացած է 97 հոդվածից: «Կանոնների» հայերեն տեքստն առաջին անգամ հրատարակվել է Ա. Արքահամ-յանը 1953 թ.: Գիտնական հյայսգիտ Դասմեթը 1961 թ. երկու հատորով հրատարակել է դրա հա-լեռն տեքստով՝ ամօւենի թարգմանութեամ հետ:

Ապագիր հրատարակություններով՝ «Կանոններին» առաջիններից անդրադարձել է Ս. Զամշյանը: Դայտնի հայագետ Կ. Կոստանյանցը, հետազոտելով Դավիթ կամոնները, բացահայտել է այն պատճառները, որոնցով պայմանավորվել է դրա լույս աշխարհ գալը, ինչպես նաև պատմական այն հանգամանքները, որոնցում կանոնները գործադրում էին աննախադեպ անվերապահությամբ:

Կանոնների հանրածանաչությունը մասսամբ բացատրվում է 12-րդ դարի հայ հասարակության տարրեր շերտերի փոխհարաբերություններին վերաբերող հարցերի լայն ընդգրկմամբ ու կառապահումամբ:

Դավիթը իր աշխատությունը գրել է որպես պատասխան քահանաների ամենօրյա գործունեության հարցերի, դրով և հիմնականում կանխորդյան է կանոնների ընվաճակներուն:

Դավիթ Ալավելիարու Կանոնական օրինադրությունը՝ ներառում է ինչպես եկեղեցական կանոններ, այնպես էլ աշխարհիկ օրենք-

* Ներկայացվել է 16.12.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

ներ, և բաղկացած է նախարանից ու ԺԴ հոդվածներից³: Դրանց զգալի մասը վերաբերում է այնպես հարցերի, որոնց կենցաղային մաքրակեցության տեսակետից կարևոր են եղել տվյալ շրջանում:

Դավիթ Կանոնագրի որոշ կանոններ ժամանակակից ընթերցողին կարող են անհմաստ և նույնիսկ ծիծառելի թվալ: Մինչդեռ հարկ է երևույթը գնահատելիս ելնել յուրաքանչյուր դարաշրջամի բուն իրականությունից: Դավիթ աշխատության երևան գալը պայմանակիրված էր երկրում տիրող արտակարգ ծանր տնտեսական և հասարակական-քաղաքական վիճակով, և այդ համայնապատկերում, ինը հարյուրամյակ մեզանից առաջ, նրա կանոնները լրիվ հասկանալի են ու անհրաժեշտ:

Ահա թե ինչպես է Դավիթ ժամանակակից Մովսես Կաղանկատվացին նկարագրում այն ժամանակա իրադարձությունները. «Դանից հետո, ի մի գալով, երեք կատարի գրուաթետը՝ սովոր, սուրբ և մահօք ծվատում էին անհման, և մարդկանց դիակները ծածկում էին հողը: Ոչ մեկը չէր արժանանում հաղորդության, սփոփանցի՝ մեղքերի թողության, քանզի խոչընդոտում էր սուրբ, ուժապատ էր անում քաղցը, և խեղում էր մահօք: Սարսափելի ժամանակ: Աղետալի էին աչքերը նրանց, ովերտեսնում էին այդ մեծ անդունդը... Ես լսել եմ վստահելի մարդուց. «Մենք տեսել ենք շատերին, որմեռելներ էին ուտում, նույնիսկ անասունի հնացած կաշի, իին կոշիկների ճոտեր,- այդ բոլորը խաչում էին և ուտում... Սահմենդը վերադարձավ Չողից և պաշարեց ծովով շրջապատված Սևան ամրոցը երեք տարի: Գրավելով այն՝ նա սրի քաշեց բոլորին՝ ում գտավ այնտեղ: Այնուհետև, անցնելով Հայաստանով, կոտորեց զորքերը հունական և հայկական: Այն աստիճանավոր հայերին, որոնց նա չէր կարողացել քոնել, խարդավանքով և կեղծիքով հավաքեց իրմոտ և, տանելով իրեն Նախիջևան, 800 մարդ փակեց Եկեղեցում և այրեց, ճիշտ այդպես էլ 400 մարդ Խորանում այրեց, իսկ ռամիկ ժողովրդին սրի քաշեց»⁴:

Դժվար է գերագնահատել Դավիթ Ալավելառորդու «Կանոնական օրինադրության» նշանակությունը՝ որպես ինքնուրույն և ինքնատիպ կանոնների մեկնություն, թվով երրորդ՝ Շահապիվանի դատաստանագրից և Շովիան Օձնեցու «Կանոնագիր Հայոց»-ից հետո: Նրանում տեղ են գտել արժեքավոր տեղեկություններ քրեական և քաղաքացիական իրավունքի վերաբերյալ, տվյալներ 12-րդ դարի առաջին կեսին հայ

ժողովրդի կենցաղի և բարքերի մասին:

Նախարանում հեղինակը խոսում էր իր կազմած «օգտակար կանոնական օրինադրություններ» նշանակության մասին:

Ըստ հոդվածների բովանդակության՝ այն կարելի է բաժանել առանձին խնդերի: Մի խմբում քննարկվում և պատիժ է նախատեսվում այնպիսի հանցագործությունների համար, ինչպիսիք են բռնաբարությունը, արվանդությունը, կաշակերությունը, հրդեհումները, աստվածանարգություններ, սուտ վկայությունը և այլն: Մյուսում բարձրացվում են բարոյականության և հիգիենայի, բուժման և կենսաբանական հարցեր: Երրորդում դատապարտվում է սննութիւնապաշտության, հմայության, շնորհավաճառության, դատավորների կաշակերության զանազան դրսևություններ և այլն: Ավելի քան տասը հոդվածներում համձնարարություններ են տրվում այն դեպքերի համար, երբ տարբեր կենդանիներ պղծում են սննդամերքը Վերջինս նման տիպի գրականություննում, ըստ եւրյան, նորություն էր:

Դավիթն առաջինն է կանոնների գրում ամրակյում հայ ժողովրդի՝ արդեն գոյություն ունեցող սովորություններն ու ավանդույթները: Ինչպես իրավաշիրեն նշում են Ա. Թովմանյանը և ուրիշներ, հեղինակն այդ կանոններով միաժամանակ պայքարում էր ժողովրդի մեջ գոյություն ունեցող հողի սովորույթների ու բարքերի դեմ:

Մի շաբթ կանոններում նա գրում է այլահավատների և օտար անձանց հետ հարաբերվելու անբույլատերելիության և դատապարտելիության մասին: Այնուհետև մանրամասն նկարագրվում են ոչ միայն տարբեր բնույթի գոյություններ, կողոպուտ, ավազակություններ, տարբերակվում նշված շահադիտական-քռնի հանցագործությունների համար պատասխանատվության աստիճանները, այլև համձնարարականներ են տրվում նրանց վերաբերյալ, ովքեր, քրնելով գոյին, կախում են: Որոշ ժամանակ անց նյուտ հայ իրավագետը՝ Միխիթր Գոշն իր «Դատաստանագրություն» նման տիպի հանցագործություններ կատարողների միանշանակ պահանջելով մական դատավճիռներ:

Դավիթ Ալավելառորդու կանոնների քննությունը ցույց է տալիս, որ իրենց բովանդակության բազմազանությամբ դրանք ժամանակին մեծ արժեք են ներկայացրել: Այդ պատճառով զարմանալի չէ, որ նրա մահից չորս տասնամյակ անց էլ որպես սկզբնադրյուր դրանք օգտագործվել են նախ՝ Միխիթր Գոշի, իսկ ավելի ուշ՝ 13-

րդ դ., Սմբատ Սպարապետի կողմից՝ իրենց դատաստանագրերը կազմելիս:

Ասվածի մեջ համոզվելու համար բավական է համեմատել Միխրա Գոշի «Դատաստանագրքի»՝ գողերին կախաղան բարձրացնելու մասին և կենդանիների կողմից սպանվածների մասին հոդվածները⁷ Դավիթ Ալավկայորդու աշխատության «Գողերի մասին, որոնց բռնումուն կախաղան են համար» և «Այն մարդու մասին, որ ունի զիժ անասուն կամ քացի տվող ձի» կանոնների հետ⁸:

Դանում արդարության անհրաժեշտ է նկատել, որ Դավիթ Ալավկայորդու կանոնները մեծ մասամբ վերաբերում են Եկեղեցական-ծիսական և քրիստոնեական կենցաղի և սոցիալական հարցերի, և դրանց հիմքում ընկած են սովորության իրավունքի նորմերը, որոնք հանդիսանում են հայ աշխարհիկ օրենսդրության օրինակարգավորման պահպանված առաջին փորձը:

Այնուամենայնիվ, չի կարելի չընդգծել դրանց եական նշանակությունը որպես հայ իրավափիլստիայական մտքի պատմության, մասնավորապես՝ դատական, քրեական և քաղաքացիական իրավունքի, ինչպես նաև միջնադարյան հայ կենցաղի, հասարակական-քաղաքական մտքի պատմության սկզբնադրյուր: Եվ ընդհանրապես իր հարուստ բովանդակության

շնորհիվ, կյանքի տարբեր երևույթների մանրակրիտ նկատառումով և դրանց ամբողջական ընդգրկմամբ Դավիթ Ալավկայորդի «Կանոնական օրինադրությունը» կարող է դասվել հայ կանոնական իրավունքի հուշարձանների և մյուս հայկական դատաստանագրերի շարքը:

¹ Տես Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն հայոց», Եր., 1961, էջ 2:

² Տես «Դայապատում», էջ 463, Վենետիկ, 1901:

³ L. Ավագյան, Դայ իրավական մտքի գանձնարան, Եր., 2000 թ., առաջին գրքի 8-րդ հավելվածը:

⁴ Տես Մովսէս Կաղամկատվացի, պատմութիւն Աղուանից աշխարհի, Եր., 1983, գլուծ ԺԶ, էջ 317-318:

⁵ Տես Դավիթ Ալավկայորդի «Կանոններ», 2-8, 89 և այլ հոդվածները:

⁶ Տես Միխրա Գոշ, «Դատաստանագիրք», Երևան:

⁷ Տես առաջին գրքի 5-րդ գլուխ հավելվածը:

⁸ Նույն տեղում 1-8, 333, 526, 681 հոդվածները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն հայոց», Եր., 1961:

2. «Դայապատում», էջ 463, Վենետիկ, 1901:

3. Մովսէս Կաղամկատվացի, «Պատմութիւն Աղուանից աշխարհի», Եր., 1983:

4. L. Ավագյան, Դայ իրավական մտքի գանձնարան, Եր. 2000:

5. Միխրա Գոշ, «Դատաստանագիրք», Եր., 1984:

DAVIT ALAVKAORDI'S "REGULAR LAWS"

ARTYOM ANDREASYAN

PHD, Associate professor

Summary

Medieval Armenian lawyer David Alavkaordi's "Regular laws" called rights collection? more concerns to church rites, Christian mode of life, and management of social questions, having in its background the habitual norms of laws. If is worth mentioning their main destinations as Armenian law and philosophy essential history, especially legal, criminal, civil law and medieval Armenian mode of life as well, public –political essence history source.

ՀԱՐԿԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՐԿԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎ, ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ*

Վարդան ՖԱՐԱՍԱԶՅԱՆ

Դայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի «Սահմանադրական և մունիցիպալ իրավունքի» ամբիոնի հայցորդ



Յարկային վերականգնության ծերերի մեջ ստուգումները առաջատար դիրք են գրավում իրենց գործուն լինելով, առյունավետությամբ և իրավական հետևանքների համապատասխան նշանակությամբ¹: Յարկային ստուգումներ հանդիսանում են փոփոխությունների են կատարվում ՀՀ հարկային օրենսդրությունում: Այդ փոփոխությունների հիմնական խնդիրներն են դարձել հարկային վարչարարության և վերահսկողության իրավական կարգավորման կատարելագործումը, հարկային ստուգումների ու հարկային ոլրուտում փաստաթղթերի շրջանառության կանոնակարգումը, հարկ վճարողների կողմից օրենքով հաստատված հարկերի ու գանձումների վճարման սահմանադրական պարտականությունների ինքնուրույն ու բարեփակի կատարման համար այժմաների լավացումը, հարկ վճարողների իրավունքների ու օրինական շահերի կատարման օրենսդրության ամրագրված երախչիքների ընդլայնումը:

Օրինաչափ է, որ այժմ հարկային ստուգումների իրավական կարգավորման հիմնահարցերն ունեն տեսական և գործնական մեջ նշանակություն օրենսդրության հետագա կատարելագործման ուղիների բացահայտման և հարկ վճարողների իրավունքների և պետության շահերի արդյունավետ պաշտպանության համար: Յարկային ստուգումն ուղղված է ոչ միայն հարկերի ու գանձումների մասին օրենսդրության խախտումների փաստերը հաստատելուն, այլ նաև ֆինանսա-տնտեսական գործունեության իրականացման կանոնների չկատարման անցանկայի հետևանքների նախազգուշացմանն ու կանխմանը, հաշվառման անցկացմանը և հաշվետվության լրացմանը:

Յարկային ստուգումների անցկացման գործնքացը կարգավորող նորմատիվա-իրավական բազմ նշտառեն կատարելագործվում է: Յարկային վարչարարության կատարելագործ-

ման միջոցառումների իրականացման շրջանակներում 2008 թ. հունվարի 1-ից դիմամիկ փոփոխություններ են կատարվում ՀՀ հարկային օրենսդրությունում: Այդ փոփոխությունների հիմնական խնդիրներն են դարձել հարկային վարչարարության և վերահսկողության իրավական կարգավորման կատարելագործումը, հարկային ստուգումների ու հարկային ոլրուտում փաստաթղթերի շրջանառության կանոնակարգումը, հարկ վճարողների կողմից օրենքով հաստատված հարկերի ու գանձումների վճարման սահմանադրական պարտականությունների ինքնուրույն ու բարեփակի կատարման համար այժմաների լավացումը, հարկ վճարողների իրավունքների ու օրինական շահերի կատարման օրենսդրության ամրագրված երախչիքների ընդլայնումը:

ՀՀ-ում հարկային ստուգումների իրավական հիմքերի ուսումնասիրման արդիականությունը պայմանավորված է դրանց իրավական կարգավորման լինվ և քազմակողմանի վերլուծության անհրաժեշտությամբ՝ հաշվի առնելով հարկերի ու գանձումների մասին օրենսդրության մեջ վերջին հինգ տարիներին կատարված փոփոխությունները և ստեղծված դատական պրակտիկան:

Այսօր հարկային ստուգման հասկացությունն օգտագործվում է հարկային վերահսկողության միայն երկու ձևերի նկատմամբ՝ կամերալ և արտագնա հարկային ստուգում: Գործող հարկային օրենսդրությունը այսօր բացում է «հակընդդեմ ստուգում» հասկացությունը, քանի որ հակընդդեմ ստուգումը միշտ եղել է ոչ թե հարկային ստուգման ձև, այլ միայն հարկային ստուգումների համար անհրաժեշտ փաստաթղթերի ստացման միջոց: Այժմ այդ գործնքացային վարչարարության կատարելագործ-

* Ներկայացվել է 25.11.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

թերի ու հարկ վճարողի կամ գործարքների մասին տեղեկատվության ստացման կարգը: Կրկնակի ստուգումներն այժմ կոչվում են «կրկնակի արտագնա հարկային ստուգումներ»: Դա ընդգծում է այն, որ կրկնակի ստուգումներն արտագնա հարկային ստուգումների միայն ձևն են ներկայացնում: Հարկային օրենսդրությամբ լրացուցիչ ստուգման մասին հիշատակում չկա, որը ստորադաս հարկային տեսչության որոշման դեմ բողոքի ուսումնասիրման արդյունքներով իրավունք ուներ նշանակել վերադաս հարկային մարմինը:

Ընդ որում, ինչպես և առաջ, գործող հարկային օրենսդրությամբ չեն բացատրվում կամերալ և արտագնա հարկային ստուգումներ հասկացույթունները: Դրանց միջև սկզբունքային տարբերություններ գտնելու համար քննարկենք դրանց հիմնական հատկանիշները՝

- հարկային ստուգման անցկացման տեղը,
- հարկային ստուգման առարկան,
- հարկային ստուգման անցկացման ժամկետը (այսինքն դրա առավելագույն տևողությունը):

Կամերալ հարկային ստուգման տարբերությունը արտագնա հարկային ստուգումից հանդիսանում է այն, որ առաջինը անցկացվում է հարկային մարմինի գտնվելու վայրում: Ընդհակառակը, արտագնա հարկային ստուգումը ընդհանրապես անցկացվում է հարկ վճարողի տարածքում:

Նետաքրքիր է կամերալ ստուգման առարկայի հարցը: Գործող օրենսդրությունը ստուգման առարկայի հասկացությանը չի անդրադառնում, սակայն սահմանում է, որ արտագնա ստուգման առարկան է հարկերի հաշվարկման ճշտությունը և վճարման ժամանակին լինելը: Դեկավարվելով արտագնա ստուգման առարկայի սահմանումով և կամերալ ստուգման անցկացման հիմքով, ենթադրում ենք, որ ի տարբերություն արտագնա ստուգման առարկայի՝ կամերալ ստուգման առարկան է հանդիսանում հանապատասխան հաշվետու (հարկային և հաշվապահական) փաստաթերի ճշշտ լրացումը և դրանք ժամանակին ներկայացնելը:

Հարկային օրենսդրությամբ կամերալ ստուգման հասկացության բովանդակության, առարկայի և նպատակների ոչ կարգավորված լինելը բազմիցս հանգեցնել է դատական վեճերի, թե ինչպիսին էր իր եւրեամբ անցկացված հարկային ստուգումը՝ կամերալ, թե արտագնա: Կամերալ և արտագնա ստուգումների հստակ բաժանմանը էական նշանակություն ունի կրկնակի ար-

տագնա ստուգում անցկացնելու փաստի հաստատման ժամանակ, որը, ընդհանրապես, ՀՀ հարկերի ու գանձումների մասին օրենսդրությամբ արգելված է անցկացնել:

Պատճական էքսկուրսները վկայում են, որ, օրինակ, ՈԴ Հարկային օրենսգրքի 88-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն կամերալ ստուգման անցկացման ժամկետը կազմում է երեք ամիս հարկ վճարողի կողմից հայտարարագիր ներկայացնելու օրվանից սկսած: Արտագնա ստուգումը ՈԴ ՀՕ 89-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն չի կարող շարունակվել ավելի, քան երկու ամիս: Սակայն այդ ժամանակահատվածը կարող է հետաձգվել մինչև չորս ամիս, իսկ բացառիկ դեպքերում մինչև վեց ամիս:

Այսօր Ռուսաստանի դաշնային օրենքով գործողության մեջ մտած նոր կանոններին համապատասխան հարկային ստուգումների բոլոր տեսակների համար սահմանված է միահանգիստ նպատակ՝ «հարկ վճարողների, հարկային գործակալների կողմից հարկերի ու գանձումների մասին օրենսդրության պահպանման վերահսկողությունը»: Նախկին օրենսդրությամբ հարկային ստուգման նպատակի հիշատակումը բացակայում է, առայսունքում արբիտրաժամկետ դատարանները այն սահմանում էին ինքնուրույն: Կամերալ հարկային ստուգման նպատակը, որպես կանոն, հանդիսանում է հարկային փաստաթերի լրացման ճշտության, հարկային հայտարարագրերի տվյալների և հաշվապահական հաշվառման ռեգիստրների համապատասխանության ստուգումը: Զաճախ հենց այդ իսկ պատճառով և դատական պրակտիկայում, և գրականության մեջ չին տարբերակվում հարկային ստուգման «նպատակ» և դրա «առարկա» հասկացությունները:

Արտասահմանյան մի շարք պետություններում կամերալ հարկային ստուգումը հանդիսանում է հիմնական և հարկային ստուգումների համախ օգտագործվող տեսակ: Կամերալ ստուգումը թույլ է տալիս նախազգուշացնել և կանխել հարկային ոլորտի իրավակիախտումների ու հանցագործությունները դրանց սկզբնական փուլում: Դրա նշանակման և անցկացման գործնաթացի առանձնահատկությունները, կամերալ ստուգման պարզեցված բնույթը այն դարձնում են առավել հասանելի հարկային մարմինների աշխատակիցների համար: Ստուգմանը ավելի շատ թվով հարկ վճարողների ընդգրկման հնարավորությունը հանգեցնում է ավելի շատ քանի հրավախախտումների բացահայտման և, հետևաբար, բյուջե պարտադիր վճարների հա-

վեյալ փոխանցված գումարների աճին ու արդյունավետության ցուցանիշների աճին արտագնա հարկային ստուգման համեմատությամբ: Կամերալ ստուգումների նշանակման և անցկացման իրավական կարգավիրման հիմքը ՀՀ-ում կազմում են «Հարկերի մասին» և «Հարկային ծառայության մասին» օրենքները: Ի լրացումն դրան, հարկային ծառայության կողմից տարրեր հիմքերով կամերալ ստուգումների անցկացման գծով նշանակած և հաստատված են բավական քանակով ներդրական հրահանգներ (կախված վճարման ենթակա հարկերից, գանձումներից, գործունեության տեսակներից, հարկ վճարողի, գանձումներ վճարողների ու հարկային գործակալների դասից և այլնից): Սակայն այդ բոլոր հրահանգները նախատեսված են ծառայողական օգտագործման համար, որոնք նորմատիվ իրավական ակտեր չեն հանդիսանում և պարտադիր են միայն հարկային մարմինների աշխատակիցների համար:

Այսօր ՀՀ-ում հարկային ստուգումների անցկացման իրավական հիմքը «ՀՀ տարածքում գործող կազմակերպություններում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքն է, որը կանոնակարգում է կամերալ ստուգման անցկացման կարգը և դրա արդյունքների ծևակերպումը²: Այժմ ստուգումների կազմակերպումն օրենքում առավել մանրամասն է նկարագրված, դրա անցկացման գործնքացք, ամրագրված է լրացուցիչ տեղեկություններ և փաստաթորեր պահանջելու գծով հարկային մարմինների աշխատակիցների իրավասությունների շրջանակը, հարկ վճարողի համար լուծված են կամերալ ստուգման արդյունքների ծևակերպման կարգի հետ կապված սկզբունքային մի շարք հարցեր: Կամերալ ստուգումներ անցկացնելու տեղի ու ժամկետների և դրանց նշանակման կարգին վերաբերող դրույցները հստակեցվել են:

Գործող օրենսդրությամբ կամերալ հարկային ստուգումը անցկացվում է ըստ հարկային մարմնի գտնվելու վայրի հարկ վճարողի կողմից ներկայացված հարկային հայտարարագրերի (հաշվարկների) և փաստաթորերի, ինչպես նաև հարկ վճարողի գործունեության մասին հարկային մարմնի մոտ եղած այլ փաստաթորերի հիմնա վրա:

Կամերալ ստուգումները անցկացվում են երեք ամսվա ընթացքում սկսած հարկ վճարողի կողմից հարկային հայտարարագրի և հարկի հաշվարկի ու վճարման համար հիմք ծառայող փաստաթորերի ներկայացման օրվանից: Գործ-

նականումհարկային մարմինները սույն դրույքը մեկնաբանում է հետևյալ կերպ: ստուգման անցկացման ժամկետը սկսվում է հարկային հայտարարագրի ներկայացնելուց հետո պահանջված լրացուցիչ փաստաթորերի ստացման պահից: Կամերալ ստուգումը պետք է անցկացվի հարկ վճարողի կողմից հայտարարագրի (հաշվարկի) ներկայացման օրվանից սկսած երեք ամսվա ընթացքում: Հարկային մարմնի պահանջով լրացուցիչ փաստաթորեր ներկայացնելու դեպքում կամերալ ստուգման անցկացման ժամկետը երկարաձգվել չի կարող:

Ներկայուն կամերալ ստուգումը կարող է ընդգրկել հարկ վճարողի գործունեության ցանկացած ժամանակաշրջանը: Այլ խոսքերով, այժմ կամերալ ստուգումն անցկացվում է նաև ավելի վաղ հարկային ժամանակաշրջանների համար ծշտված հայտարարագրերի ներկայացման ժամանակահատվածում: Սակայն այդ դեպքում հարկ վճարողից չեն կարող գանձվել տուգանքներ, քանի որ հարկային պատասխանատվության ենթակելու մասին ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված վաղենության ժամկետը կազմում է ընդհանուր երեք տարի: Ավելի վաղ, եթե կամերալ ստուգման անցկացման ժամկետը ցանկացած դեպքում չէր կարող գերազանցել երեք տարին, հարկային մարմինները մերժում էին հարկ վճարողից ընդունել երեք տարվա ժամկետից հետո ներկայացված և ծշտված հայտարարագրերը: Դատական պրակտիկան այս հարցով միանշանակ չէր: Օրինակ, դատական պրակտիկայի ուսումնասիրությունները վկայում են, որ առանձին դեպքերում որոշումներում նշված է, որ հարկային ստուգումը կարող է անցկացվել նաև երեք տարվա ժամկետի սահմաններից դուրս, եթե հայտարարագրությունները ներկայացվել են հարկ վճարողի նախաձեռնությամբ: Կարծում ենք, եթե ծշտված հայտարարագրերը ներկայացվել են երեք տարվա ժամկետի ավարտից հետո, դրանց կամերալ ստուգման անցկացումը անհնարին է:

Թե ինչպես է ամրագրվում կամերալ ստուգման ժամկետի ավարտը, այսօր գործող օրենսդրությամբ սահմանված չէ: Քանի որ ժամկետը չի վերականգնվում, հետևաբար ժամկետի բացքումը չի հանգեցնում գործնական հետևանքների: Ուստի, չի կարելի անվավեր ճանաչել հարկային մարմնի դրույմը միայն այն բանի վրա ինձնվելով, որ ստուգումը անցկացվել է ստուգման համար սահմանված երեք տարվա ժամկետի խախտումով: Կարծում ենք՝ կամերալ ստուգման ժամկետի խախտումը չի հանգեցնում պա-

հանգներ ներկայացնելու ժամկետի և հարկեր գանձելու նասին որոշումներ ընդունելու ժամկետի հաշվարկի կարգի փոփոխության: Այսինքն այդ ժամկետները սկսում են անկախ կամերալ ստուգման ավարտվելու ժամկետներից:

Հարկային հայտարարագրում սխալների և գոյություն ունեցող տեղեկություններում տարածայնությունների բացահայտման դեպքում, հարկային մարմինը պարտավոր է առաջարկել հարկ վճարողին սահմանված ժամկետում ուղղումներ մտցնել կամ իինք օրվա ընթացքում ներկայացնել անհրաժեշտ բացատրություններ: Ընդ որում, հարկային մարմիններն իրավունք ունեն գրավոր ծանուցման հիման վրա կանչել հարկ վճարողին հարկերի ու զանգումների վճարման կամ հարկային ստուգման հետ կապված բացատրություններ տալու համար:

Ստուգումների ծևակերպումների ոչ հստակ լինելը հանգեցնում է նրան, որ, որպես կանոն, հարկ վճարողն ընթիանաբառն հնարավորություն չուներ ուղղումներ մտցնել հարկային հայտարարագրի մեջ, քանի որ բացահայտված սխալների և անհատամապատասխանությունների մասին նրան չեր հաղորդվում, այլ անմիջապես ծևակերպվում էր հարկային պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը: Դեպքերի մեծամասնության ժամանակ դատարաններն այդպիսի որոշումը ճանաչում էին անվավեր՝ հարկ վճարողի հարկային հայտարարագրում ուղղումներ մտցնելու օրենքով նախատեսված իրավունքի խախտման պատճառով, եթե դրանում սխալներն ու հակասությունները դարձել են տեխնիկական կամ թվարանական սխալի հետևանք և չեն հանգեցրել հարկային օրենսդրության խախտման: Նման դեպքերում, կարում ենք, հարկային տեսչությանը պարտավոր է դիմողին հայտնել տեղեկությունների նշված հակասության առկայության մասին ու պահանջել նրանից ուղղումներ մտցնել հարկային հայտարարագրի ստացման օրվանից սկսած երեք ամսվա ընթացքում: Դատարանը հակառակ դեպքերում կարող է մերժել հարկային մարմնի փաստարկն այն մասին, որ հարկ վճարողին բացահայտված սխալների ու հակասությունների մասին ծանուցումը հանդիսանում է տեսչության իրավունքը, այլ ոչ թե պարտականությունը, քանի որ գործող օրենսդրությունը կատեգորիկ տեսչությանը թույլ չի տալիս նախաձեռնել այլ գործողություններ, բացառությանը հարկ վճարողին տեղեկություններում բացահայտված սխալների ու հակասությունների մասին ծանուցումը և հարկ վճարողից ուղ-

ղումներ կատարելու պահանջը:

Հարկային մարմնին օրենսդրությամբ վերապահված իրավասությունները կրում են հրապարակային-իրավական բնույթ, ինչը թույլ չի տալիս հարկային մարմնին կամավոր հրաժարվել հարկերի հաշվարկի ծշտությունը և վճարման ժամանակին լինելը հաստատող լրացուցիչ տեղեկություններ, բացատրություններ և փաստաթեր պահանջելու անհրաժեշտությունից: Հարկային իրավախաստումների բացահայտման գործառույթի հրականացման ժամանակ հարկային մարմինը հարկերի վճարման ծշտության կասկածների և առավել ևս հարկային իրավախաստումնան հատկանիշների բացահայտման բոլոր դեպքերում պարտավոր է օգտվել հարկ վճարողից անհրաժեշտ տեղեկատվություն պահանջելու իրեն տրված իրավասությամբ: Համապատասխանաբար, հարկ վճարողն իրավունք ունի ենթադրել, որ եթե հարկային մարմինը չի դիմում իրեն հայտարարագրված հարկերը հաստատող բացատրություններ կամ փաստաթերեր տրամադրելու համար, ապա հարկային մարմնի մոտ կասկածներ չկան հարկերի վճարման ծշտության վերաբերյալ: Հակառակը կնշանակեր իրավական որոշակիության սկզբունքի խախտում և կիանգեցներ հարկային մարմինների կամայականության:

Կարծում ենք, հարկ վճարողը հարկային մարմին ներկայացնելով հայտարարագրում բացահայտված սխալների և տեղեկությունների միջև հակասությունների վերաբերյալ իր բացատրությունները, իրավունք ունի կցել լրացուցիչ հարկային և հաշվապահական հաշվառման ռեգիստրումներից քաղվածքներ, ինչպես նաև այլ փաստաթերեր, որոնք հաստատում են հայտարարագրում նշված տվյալների արժանահավատությունը: Ընդ որում, ներկայացված բացատրություններն ու փաստաթերերը պետք է պարտադիր քննարկվեն հարկային մարմնի կողմից: Եթե հարկ վճարողի կողմից բացատրությունների և փաստաթերերի քննարկումից հետո կամ դրանց բացակայության դեպքում կիաստատվի իրավախաստումնան փաստը, հարկային մարմինը պարտավոր է կազմել ստուգման ակտ: Ակտի համապատասխան կարգը նպաստում է հարկային հայտարարագրերում սխալ տեղեկություններ ներկայացնելու բացահայտմանը, ինչպես նաև հարկ վճարողի և հարկային մարմնի համաձայնեցված գործողությունների միջոցով կամերալ ստուգում անցկացնելու փուլում տվյալ սխալների վերացմանը: Ակտի կազմումը հանդիսանում է պարտադիր պայման ամբողջական և բազմա-

կողմանի կամերալ ստուգման անցկացման համար և անհրաժեշտ է ըստ դրա արդյունքների հիմնավորված որոշում ընդունելու համար, քանի որ վերջինս հանդես է գալիս վճարողների պաշտպանության լրացուցիչ երաշխիք:

Վիճելի հիմնական հարցերից մեկը՝ կապված կամերալ ստուգման անցկացման հետ, այն է՝ հարկային մարմններ հարկային ստուգման անցկացման ժամանակ ինչպիսի և ինչ ծավալով փաստարդեր իրավունք ունի պահանջել: Քանի որ ավելի վաղ գործող հարկային օրենսդրությամբ չեղ նախատեսվում կամերալ ստուգման շրջանակներում պահանջվող փաստարդերի կոնկրետ թվարկում, այն անցկացվում էր արտագնա ստուգման ձևով և նմանությամբ: Դարկային օրենսդրության ուսումնասիրությունները վկայում են, որ սահմանափակված չեն հարկային մարմնի կամերալ ստուգում անցկացնելիս փաստարդեր պահանջելու իրավունքները միայն հարկ վճարողի կողմից արդեն ներկայացված փաստարդերուն սխալների ու հակասությունների բացահայտման դեպքերով: Դարկերի ու զանձումների օրենսդրությունը հարկային մարմնին իրավունք է տալիս պահանջել լրացուցիչ տեղեկություններ, ստանալ հարկերի ճիշտ հաշվարկն ու ժամանակին վճարումը հաստատող բացադրություններ և փաստարդեր:

Վերլուծությունները թույլ են տալիս հաճգել այն հետևողություն, որ հարկային մարմններն իրավունք ունեն պահանջել ստուգվող հարկ վճարողից ստուգման համար անհրաժեշտ փաստարդեր ինչպես կամերալ, այնպես էլ արտագնա հարկային ստուգման ժամանակ:

Անհրաժեշտ է նշել, որ հարկային օրենսդրությունը չի սահմանափակում կամերալ ստուգման ժամանակ հարկային մարմնի հարկ վճարողից միայն փաստարդեր պահանջելու իրավունքը, որոնց ներկայացման պարտականությունն ուղղակի սահմանված է հարկային օրենսդրության նորմերով:

Կամերալ ստուգումներ անցկացնելիս պահանջված առաջնային հանդիսանում են այն փաստարդերը, որոնք կարող են հաստատել հարկի հաշվարկի ճշտությունը և վճարման ժամանակին լինել, և ստուգման համար դրանց պահանջը չի խախտում հարկ վճարողի իրավունքներն ու տնտեսական շահերը:

Դանածայն հարկային օրենսդրության՝ հարկային հաշվառումն իրականացվում է հաշվառման կարգի մասին աճբողջական և արժանահավատ տեղեկատվության ձևավորման, հարկ վճարողի կողմից հաշվետու ժամանակակաշրջանի

ընթացքում իրականացված տնտեսական գործառույթների հարկային, ինչպես նաև հարկի հաշվարկի ճշտության, աճբողջականության և բյուջե ժամանակին վճարելու վերահսկողության նպատակներով:

Դաշվի առնելով ասվածը, հարկային մարմնի կողմից կամերալ հարկային ստուգում անցկացնելու ժամանակ կարող են պահանջվել առաջնային փաստարդերը հարկերի հաշվարկի և վճարման ճշտության ստուգման համար, ինչպես նաև հարկային հաշվառման տվյալները հաստատող փաստարդերը: Այսպիսով, փաստարդերի պահանջի հետ կապված իրավիճակը կամերալ հարկային ստուգումների շրջանակներում վաղուց իր լուծումն էր պահանջում:

Ինչպես հիշատակվեց, կամերալ ստուգման անցկացման ժամանակ հարկային մարմնն իրավունք չունի հարկ վճարողից պահանջել լրացուցիչ տեղեկություններ և փաստարդեր, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ հարկային օրենսդրությամբ կամ եթե այդպիսի փաստարդերի մերկայացումը հարկային հայտարարագրի (հաշվարկի) հետ միասին չի պահանջվում: Ընդ որում, գործող օրենսդրությամբ աճրագրված են դրա բացահայտությունները, համաձայն որի՝ հարկային մարմններն իրավունք ունեն սահմանված կարգով փաստարդեր պահանջել, որոնք կիսաստատեն հարկ վճարողի համապատասխան հարկային արտոնությունների իրավունքը, փաստարդեր, որոնք կիսաստատեն համապատասխան ավելացված հարկի նկատմամբ հարկային պակասաեցումների կիրառման իրավունքը, ինչպես նաև փաստարդեր, որոնք հիմք են հանդիսանում բնական ռեսուրսների օգտագործման հետ կապված հարկերի հաշվարկի և վճարման համար:

Այս հարցում իրավագետների կարծիքներն իրարամերժ են: Դեղինակների մի մասը հարկային օրենսդրությամբ լուծված է համարում կամերալ ստուգման շրջանակներում հարկ վճարողից փաստարդեր պահանջելու վաղուց գոյություն ունեցող խնդիրը³: Մասնավորապես, դեռևս լուծված չէ այն հարցը. «Իրավունք ունի՞», արդյոք, հարկային մարմննը ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) գծով կամերալ ստուգում անցկացնելիս պահանջել հարկային պակասաեցումների կիրառման իրավունքը հաստատող փաստարդեր, եթե հայտարարագիրը ներկայացված է հարկային հաշվառման ենթակա հարկի, այլ ոչ թե փոխհաստուման գումարով»⁴: Թե ինչ դեպքերում հարկային մարմննը կարող է պահանջել ԱԱՀ-ի գծով հարկային պակասաեցումների կիրառման

իրավունքը հաստատող փաստաթղթեր, հնարավոր է երկու դեպքում:

1) Կարծում ենք, հարկային մարմիններն իրավունք ունեն պահանջել հարկային պակասեցումների կիրառման իրավունքը հաստատող փաստաթղթեր, միայն այն դեպքում, եթե հարկ վճարողը ներկայացնում է ԱԱՀ-ի գծով հայտարարագիր փոխհաստուցման ենթակա հարկի գումարով:

Գործող օրենսդրությամբ սահմանված է, որ ԱԱՀ-ի գծով հարկային հայտարարագիր ներկայացնելիս, որում նշված է հարկի փոխհաստուցման իրավունքը, կամերալ ստուգումն անցկացվում է հաշվի առնելով նախատեսված առանձնահատկությունները: Ընդ որում՝ հարկային մարմինն իրավունքը ունի հարկ վճարողից պահանջել ԱԱՀ-ի գծով հարկային պակասեցումների կիրառման իրավունքը հաստատող փաստաթղթեր: Ուստի, այդպիսի ստուգումներ անցկացնելիս կարող են պահանջել փաստաթղթեր, որոնք կիսատատեն պակասեցումները: Այսինքն՝ վճարման ենթակա գումարով ԱԱՀ-ի գծով հարկային հայտարարագրի ներկայացնելիս հարկ վճարողից պակասեցումները հաստատող փաստաթղթեր չեն կարող պահանջել: Դեռևսաքաղաքացիները ԱԱՀ-ի գծով հայտարարագրի կամերալ ստուգման ժամանակ, տեսչությունն իրավունքը ունի պահանջել պակասեցումները հաստատող փաստաթղթեր:

2) Կամերալ ստուգում անցկացնելիս հարկային մարմիններն իրավունք ունեն պահանջել ԱԱՀ-ի պակասեցման իրավունքը հաստատող փաստաթղթեր ցանկացած դեպքում, եթե հայտարարագրում նշված են պակասեցումները՝ ինչպես հարկ վճարողի կողմից փոխհաստուցման ենթակա հարկի գումարով հայտարարագիր, այնպես էլ վճարման ենթակա հարկի գումարով հայտարարագիր ներկայացնելու դեպքում:

Այսպիսի դիրքորոշումը հիմնված է այն բանի վրա, որ հարկային մարմինների կողմից հարկային պակասեցումների կիրառման իրավունքը հաստատող փաստաթղթեր պահանջելու իրավունքը սահմանադրությունունու հարկային իրավանորմը հանդիսանում է ինքնուրույն իրավական պահանջ: Ուստինասիրությունները վկայում են, որ գործող օրենսդրության մեջ ոչ մի կերպ չեն սահմանափակվում դրա կիրառման դեպքերը, քանի որ իրավական ակտերում ասված չէ, որ հարկային մարմնի կողմից պակասեցումները հաստատող փաստաթղթեր պահանջելու իրավունքը գործում է միայն այն դեպքում, եթե հարկ վճարո-

ղը հանձնում է ԱԱՀ-ի գծով հայտարարագիր փոխհաստուցման ենթակա հարկի գումարով: Այն, որ մի դեպքում օրենքը հղում է կատարվում այդ կետի վրա, միայն նշանակում է, որ փոխհաստուցման ենթակա հարկի գումարով հարկային հայտարարագրի կամերալ ստուգման ժամանակ, հարկային մարմինն իրավունք ունի պահանջելու ներկայացնել նշված փաստաթղթերը: Սակայն դա չի նշանակում, որ այլ նմանատիպ դեպքերում պակասեցումների իրավունքը հաստատող փաստաթղթեր պահանջել չի կարելի: ԱԱՀ-ի պակասեցման իրավունքը հաստատող փաստաթղթերը չպետք է ներկայացվեն միաժամանակ հարկային հայտարարագրի հետ միասին, և հարկային մարմնինը իրավունք ունի պահանջել ներկայացնել դրանք ցանկացած դեպքում, այլ ոչ միայն այն ժամանակ, եթե հարկային հայտարարագրում կրացահայտի սխալներ կամ հակասություններ:

Բացի դրանից, գործող օրենսդրությամբ նախատեսված չէ պակասեցումները հիմնավորող փաստաթղթերի կոնկրետ բվարկում: Այդ պատճառով հարկային մարմինները հնարավորություն ունեն կամերալ ստուգում անցկացնելիս պահանջել փաստաթղթերի լայն և անորոշ շրջանակ, որոնք կիմնավորեն ԱԱՀ-ի գծով պակասեցումները, այդ թվում նաև առաջնային հաշվառման փաստաթղթերը: Դարկային մարմինների այդ իրավունքը հաստատվում է դատական պակտիկայով:

Դատուկ ուշադրություն պետք է դարձնել այն բանի վրա, որ կրկնակի կամերալ ստուգումներ անցկացնելու իրավասության, դրանց հաճախանության և պարբերականության, ինչպես նաև արտագնա ստուգման անցկացման ժամանակ գոյություն ունեցող ստուգման ենթակա ժամանակաշրջանի հետ կապված սահմանափակումները օրենսդրությամբ կարգավորված չեն: Կամերալ ստուգումների հաճախականությունը, ինչպես նաև դրա պարբերականությունը հաստատվում է հարկերի ու գանձումների մասին օրենսդրությանը համապատասխան՝ կախված հարկային հայտարարագրերի կամ հաշվարկերի հանձննան ժամկետներից: Կամերալ ստուգումը միևնույն հարկային (հաշվետու) ժամանակաշրջանի ընթացքում և միևնույն հարկի գծով կարող է անցկացվել այնքան անգամ, որքան անգամ հարկ վճարողը կներկայացնի ծզգրտված հարկային հայտարարագրեր, չհաշված հայտարարագրի սկզբնական ներկայացված տարբերակը: Ուստի, կամերալ ստուգման նկատմամբ չի կարելի կիրառել արտագնա

ստուգումների նկատմամբ կիրառվող պահանջները օգտագործվող կրկնակի հարկային ստուգման կանոնները: Այդ փոփոխությունների կապացությամբ իրավական գնահատական են պահանջում կամերալ ստուգումներ անցկացնելու ժամկետները կարգավորող հարցերը. պարզ չէ, գոյություն ունե՞ն, արդյոք, ժամանակաշրջանի սահմանափակումներ, և թե ինչ ժամկետում կարող են անցկացվել կամերալ ստուգումները: Պարզ է, որ հարկերի ու գանձումների մասին օրենսդրությունն այդ բացըողումները, որոնք առաջին հերթին ծագում են կամերալ ստուգման անցկացման գործներացի բովանդակության և առանձնահատկությունների յուրահատկությունից, կարող են վնասել հարկ վճարողների իրավունքներին ու օրինական շահերին, ինչի հետևանքով, հետազոյւմ կարող են առիթ ծառայել դատական քննությունների համար: Ավելի շուտ, իրավակիրառական պրակտիկայի դժվարությունները ծագելու են ճշգրտված հարկային հայտարարագրեր ներկայացնելու դեպքում, որոնք ավելի վաղ տարբեր պատճառներով չեն ներկայացվել երեք տարվա ժամկետը գերազանցող ժամանակաշրջանի համար:

¹ Նման դիրքորոշում ունեն հարկային իրավունքի ոլորտի մասնագետներից շատերը: Տե՛ս, օրինակ, Կомментарий к Закону "О налоговых органах Российской Федерации" Г. В. Петрова. М. Юридический Дом "Юстицинформ", 2001, с. 17, Комментарий к Налоговому кодексу Российской Федерации, части первой (в ред. Федерального закона от 9 июля 1999 года) / Под ред. Г. В. Петровой, М., "НОРМА-ИНФРА-М", 1999, с. 41, Лермонтов Ю. М. Выездная проверка как форма налогового кон-

троля//Аудиторские ведомости. 2005, N2, с. 14, Михаилова О. Р. Выездная налоговая проверка как форма налогового контроля // Ваш налоговый адвокат, 2001, N3, с. 34, Мамаев Р. Б. Права и обязанности налогоплательщиков при проведении налоговых проверок// Адвокат, 2004, N4, с. 4-7, Мамаев Р. Б. Права и обязанности налогоплательщиков при проведении налоговых проверок// Гражданин и право. 2003, N6, с. 18, Демидова Н. Г., Кастальский В. Г. Правовые аспекты налоговых проверок// Аудиторские ведомости, 2002, N8, с. 8 և այլ:

² «ՀՀ տպաքարտում գործող կազմակերպություններում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին օրենք», ընդունված 2000 թ. մայիսի 17-ին:

³ Лермонтов Ю. М. Новый порядок проведения камеральных налоговых проверок// Налоговые споры: теория и практика. 2006, N10, с. 22-27:

⁴ Մասնավորապես առանձին հղում կա ԱԱՀ-ի գծով կամերալ ստուգման անցկացման կարգի վեա: ԱԱՀ-ի գծով հարկի փոխառուցման իրավունք պարունակող հարկային հայտարարագրի ներկայացնելիս, կամերալ ստուգում անցկացվում է հարկ վճարողի կողմից հարկային հայտարարագրերի և փաստարդերի հիմնա վրա՝ հաշվի առնելով օրենքով նախատեսված առանձնահատկությունները: Դարձային մարմինն իրավունք ունի հարկ վճարողի պահանջնել ՈՉ 172-րդ հոդվածի համապատասխան հարկային պակասեցումների կիրառման իրավունքը հաստատող փաստարդեր:

⁵ Տե՛ս օրինակ, Камеральная налоговая проверка. Титова С. И.//Актуальные вопросы бухгалтерского учета и налогообложения, 2008, N9, с. 35, Статьи по новым проблемам возмещения НДС: читаем и применяем статью 176 Налогового кодекса РФ. Щербакова М. А. // Финансовые и бухгалтерские консультации, 2007, N12, с. 14.

INSPECTION AS THE MAIN FORM OF TAX CONTROL, THE LEGAL BASIS OF ITS IMPLEMENTATION

VARDAN FARAMAZYAN

Summary

Vardan Farmazyan's research paper - tax inspection as the main form of tax control, the legal framework to its implementation, one of the first attempts to highlight the problem of tax control and supervision in the field of tax law, which will help to improve the existing tax legislation, highlighting the legal basis of inspections.

**ՀԱՐԿԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ***

Վարդան ՖԱՐԱՄԱԶՅԱՆ

**Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի «Սահմանադրական և մունիցիպալ իրավունքի» ամբիոնի
հայցորդ**

ՀՀ հարկային համակարգի հետագա բարելավման սոցիալ-տնտեսական զարգացման ուղղություններից մեկը՝ հարկային վերահսկողության կատարելագործումն է: Վրդյունավետ հարկային վերահսկողությունն ունակ է հարկ վճարողների վկա մեծ ազդեցություն ունենալ և կամխել հարկային իրավականությունը: Գործնականում հարկային վերահսկողության հիմնական ձևը հարկային ստուգումն է, հետևաբար ավելի մեծ նշանակություն պետք է տրվի դրա իրավական կարգավորմանը: Այդուհանդեռձ, հարկային օրենսդրությունը հարկային ստուգումներ կազմակերպելու ու անցկացնելու բնագավառում վերջնականացնեն ծևակորված չէ, դրա անցկացման շատ տեսանկյուններ ներկայումս ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չեն: Այդ կապակցությամբ պրակտիկայում մեծ քանակով վեճեր են ծագում հարկ վճարողների և ԴԱԿ ծառայությունների միջև, ինչպես նաև հազվադեպ չեն տարբեր դատական ատյանների միջև եղած տարածայնությունները, որը բարենպաստ հող է ստեղծում հարկային նորմերի կամայական մեջնարաննան համար և, որպես հետևանք, խթանում է վարչադատական կամայականությունն ու կոռուպցիան: «Վրդյունքում իրավակիրառական գործունեությունը դարձնում է անկանխատեսելի և ոչ թափանցիկ, ինչը խթանում է գործարարության տնտեսական ակտիվությունը և նվազեցնում է երկրի ներդրումային գրավչությունը»^{1:}

Հարկային ստուգումների իրավական կարգավորման կատարելագործման ուղղությամբ ծևակերպված հիմնական գործնական առաջարկությունները հանդում են հետևյալ:

Առաջին, այսօր ՀՀ հարկային օրենսդրության մեջ չկա հարկային վերահսկողության ձևե-

րի ու միջոցառումների հստակ սահմանազատում: Օրենսդրության վերահսկողության ձևերի տակ առաջարկում է ներառել նաև միջոցառումները, որոնց ընդհանուր շարադրանքից պարզ է դաշնում, որ հարկային վերահսկողությունը անցկացվում է հարկային մարմինների պաշտոնատար անձանց կողմից իրենց իրավասության սահմաններում՝ հարկային ստուգումների, հարկ վճարողների, հարկային գործակալների ու հարկ վճարողների բացատրությունները ստանալու, հաշվառման և հաշվետվությունների տվյալների ստուգման, եկամուտ (շահույր) ստանալու համար օգտագործվող տարածքների գննման միջոցով, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված այլ ձևերով: Այսպիսով, գործող օրենսդրությամբ միայն թվարկվում են հարկային վերահսկողության ձևերն ու միջոցառումները չլուսաբանելով հասկացությունները: Առանց հարկային վերահսկողության ձևի հասկացության օրենսդրական ամրագրման՝ հասկանալ, թե ինչ ձևեր են ենթադրվում, կարելի է միայն ֆինանսական իրավունքի տեսական դրույթների, ինչպես նաև հարկային օրենսդրության վերլուծության հիմնա վրա: Կարծում ենք այս կապակցությամբ, օրենսդրությունում անհրաժեշտ է ամրագրել հետևյալ դրույթը. «Հարկային վերահսկողության ձևի տակ պետք է հասկանալ հարկերի ու գանձումների մասին օրենսդրության նորմերով սահմանված հարկային-վերահսկողական գործունեության արդյունքների կազմակերպման, իրականացման և ամրագրման եղանակները, որոնք իրենցից ներկայացնում են հարկային վերահսկողության կոնկրետ խնդիրների կատարման ուղղությամբ իրավասում ամրմինների գործողությունների միասնական համակարգ»:

* Ներկայացվել է 25.11.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

Ինչ վերաբերում է հարկային վերահսկողության միջոցառումներին, ապա այն պետք է մեկնաբանվի հարկ վճարողի, հարկային գործակալի կողմից հարկերի մասին օրենսդրության պահանջմների կատարման ստուգման, անհրաժեշտ ուսումնասիրությունների, փորձաքննությունների, արդյունքների և վերահսկողական միջոցառումների անցկացման արդյունքներով միջոցների կիրառման հետ կապված հարկային մարմինների պաշտոնատար անձանց ընդհանուր նպատակով միավորված գործողությունների անբողջությունը:

Բացի այդ, կարելի է ենթադրել, որ գործնականում որոշակի դժվարություններ կառաջանան հարկային ստուգման ընթացքում բացահայտված հարկային իրավախախտումների վերաբերյալ գործերի ու հարկային վերահսկողության այլ միջոցառումների ընթացքում բացահայտված հարկային իրավախախտումների վերաբերյալ գործերի քննարկման կարգում: Պատճառը հարկային օրենսդրությամբ հարկային վերահսկողության ոչ հստակ լուսաբանումն է: Օրենսդրությամբ սահմանված չէ հարկային վերահսկողության միջոցառումների բովանդակությունը: Եթե օրենսդրությունը նկատի ունի միջոցառումներ, ընթացակարգեր, որոնց անցկացմանը կանոնակարգված է (օրինակ՝ զննում, փորձաքննություն, փաստաթերթի պահանջում, փաստաթղթերի ու առարկաների առհանում), ապա, որպես կանոն, դրանք իրացվում են կամերալ կամ արտագնա հարկային ստուգման շրջանակներում, որպես հարկային վերահսկողության լրացուցիչ միջոցառումներ:

Հարկային վերահսկողության ձևերն ու միջոցառումներն իրենց գործնական իրացման ժամանակ շատ հաճախ խառնվում են և խաշաձևում: Հարկային ստուգումների շրջանակներում անց է կացվում հաշվառման և հաշվետվությունների տվյալների ստուգում, արտագնա ստուգումների շրջանակներում հարկ վճարողներից, հարկային գործակալներից ու և այլ սուրյեկտներից ստացվում են բացատրություններ, զննվում են տարածքները: Այդ պատճառով, փաստորեն, հարկային վերահսկողությունը հանգում է հարկ վճարողների հաշվառմանը, հարկային ստուգումների անցկացմանը, որը նեղացնում է հարկային վերահսկողության դերը և նշանակությունը: Այլ խոսքերով, եթե հարկային ստուգումները և հարկ վճարողների հաշվառումը վերաբերում են հարկային վերահսկողության ձևերին, ապա օրենսդրությամբ բարեկամ մնա-

ցած բոլոր հասկացությունները իրենցից ներկայացնում են հարկային վերահսկողության ձևերի հրականացման ժամանակ օգտագործվող միջոցառումներ:

Օրենսդրության այս անծշտությունները պատճառ են հանդիսացել ոչ միայն հարկային, այլ նաև դատական մարմինների կողմից հարկային վերահսկողության ձևերի ու միջոցառումների եւլրյան աղճատման համար: Հարկային վերահսկողության ձևերի ու միջոցառումների եւլրյան սխալ ընկալումը հանգեցնում է հարկային մարմինների գործունելության մեջ հարկ վճարողների ստուգումների ամեն հնարավոր տարածայնությունների առաջացմանը, որոնց անցկացման կարգը կարգավորված չէ հարկային օրենսդրությամբ: Այդուհանդերձ, դատարանները բավականին հաճախ ճանաչում են դրանց անցկացման օրինականությունն ու դրանց արդյունքներով հարկերի ու գանձումների գանձման լեգիտիմությունը: Ստուգման էլուրյան այլ ընկալումը գործնականում հանգեցնում է պետության շահերի խախտման, քանի ինչպես հետևում է հարկային օրենսդրության սկզբունքներից, իրակիւնքը չարաշահած հարկ վճարողները փաստորեն խուսափում են հարկեր վճարելուց:

Կարծում ենք, ՀՀ հարկային օրենսդրության բնախատեսված հարկային վերահսկողության ձևերի ու միջոցառումների կիրառումը հանգեցնում է հարկ վճարողների իրավունքների և օրինական շահերի խախտմանը, ուստի առաջարկում ենք սահմանազատել տվյալ հասկացությունները և սահմանել դրանց սպահչ ցուցակը և այն ամրագրել օրենքով: Այսպես, որպես կանոն, հարկային վերահսկողությունն անցկացվում է հարկային մարմինների պաշտոնատար անձանց կողմից իրենց իրավասությունների շրջանակում հարկ վճարողի հաշվառման, կամերալ հարկային ստուգումների, ինչպես նաև արտագնա հարկային ստուգումների ձևով:

Հարկային մարմինները հարկային վերահսկողություն իրականացնելիս հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգով անց են կացնում այնպիսի հարկային-վերահսկիչ միջոցառումներ, ինչպիսիք են առաջնային փաստարքերի ուսումնասիրությունը, գույքագրումը, փորձաքննությունը, վկաների քննումը, զննումը, փաստարքերի և առարկաների արգարակումը:

Հարկային վերահսկողությունը այլ ձևերով կամ հարկային վերահսկողության այլ միջոցառումների օգտագործմամբ արգելված է:

Հարկային վերահսկողությունն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով, կարծում ենք, օրենսդրությամբ պետք է ամրագրել հարկային վերահսկողության այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են ավելի վճարված և ավելի գանձված գումարների համատեղ բաղդատումը, հարկային արտոնություններ ներկայացնելու, հարկերի վճարման հետաձգման դեպքում հարկ վճարողի, հարկային գործակալի, ֆինանսական վիճակի նախնական ստուգումը, ինչպես նաև ենթադրվող գործադրեների հարկային հետևանքների նախնական ստուգումը: Հարկային մարմինների վերահսկողական գործունեության արդյունավետությունը կախված է դրանց իրավական կարգավորման մակարդակից: Գործող օրենսդրությամբ ընդամենը ազնարկվում են հարկային վերահսկողության ձևերը՝ առանց դրանց յուրաքանչյուրի բովանդակությունը լուսաբանելու: Այդպիսի դրույթունը գործնականում կարող է հանգեցնել հարկային մարմինների վերահսկողության իրականացման իրավասությունների ընդլայնված մեջնաբանման: Քանի որ հարկային վերահսկողության հիմնական և առավել արդյունավետ ձև է հանդիսանում հարկային ստուգումը, ապա առաջին հերթին անհրաժեշտ է օրենսդրութեն ամրագրել այդ հասկացության սահմանումը: «Հարկային ստուգում» հասկացությունը պետք է ընդգրկի հարկային օրենսդրության կատարման ստուգման ուղղությամբ հարկային մարմինների իրավական գործողությունները, այդ թվում՝ հարկ վճարողի հաշվետու տվյալները, նոր ֆինանսա-տնտեսական գործունեության փաստացի վիճակը, հարկային պարտականության ծավալը, որոնք հարկային իրավահարթերությունների բնագավառում կապատեն իրավահաստումների փաստերի բացահայտմանը: Ուստի, հարկային ստուգման տակ առաջարկում ենք հասկանալ հարկ վճարողի, հարկային գործակալի կողմից հարկերի ու գանձումների մասին օրենսդրության կատարման, ինչպես նաև իրավասու մարմինների՝ ստուգովորի ֆինանսա-տնտեսական գործունեության փաստացի վիճակի բացահայտման նպատակով վերահսկողական ընթացակարգային գործողությունների համալիր:

Անդրադարձալով գործող ստուգումների կարգին՝ նկատենք, որ հարկային մարմինն իրավունք ունի անցկացնել կազմակերպությունների ինքնուրույն արտագնա հարկային ստուգում: Ստուգման շրջանակներում հարկային մարմինն իրավունք ունի ստուգել նաև հարկ վճարողի

մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեությունը: Սամանաճյուղի և ներկայացուցչության ինքնուրույն արտագնա հարկային ստուգումը անցկացվում է հարկային մարմնի որոշման հիման վրա առանձնացված ստորաբաժանման գտնվելով վայրում:

Առանձնացված կազմակերպության ստորաբաժանման տակ պետք է հասկանալ ցանկացած տարածքային առանձնացված ստորաբաժանում, որի գտնվելու վայրում կազմակերպվել են աշխատանքներ: Առանձնացված ստորաբաժանումը քննարկվում է որպես ավելի ծավալուն հասկացություն, որն իր մեջ ներառում է կազմակերպության մասնաճյուղը (ներկայացուցչություն) հասկացությունը: Միաժամանակ, անհնարին է խոսել հարկային ոլորտում տվյալ հասկացությունների նոյնականության և, հետևաբար, հավասար հարկային կարգավիճակի մասին:

Քանի որ գործող օրենսդրությամբ խոսվում է հենց մասնաճյուղի (ներկայացուցչության) մասին, այդ պատճառով առաջին հայացքի բացակայում են կազմակերպության մասնաճյուղեր (ներկայացուցչություններ) չհանդիսացող առանձնացված ստորաբաժանման վկա վերահսկողություն տարածելու հիմքերը: Օրենսդրության տարածված մեկնաբանումը թույլ է տալիս հետևություն անել, որ կազմակերպության ցանկացած առանձնացված ստորաբաժանմում կարող է ենթարկվել ինքնուրույն արտագնա հարկային ստուգման: ՀՀ դատական պրակտիկայից և ընդունված որոշումներից պարզ է դառնում, որ դատարաններն իրենց որոշումներում հանգել են այն եզրակացության, որ հարկային մարմինը դիմողի առանձնացված ստորաբաժանման նկատմամբ իրավունք ունի անցկացնել արտագնա ստուգում տվյալ ստորաբաժանման գտնվելու վայրում: Դատարանն իր որոշումներում հիմնավորում է հետևյալով: հարկ վճարողներ են ճանաչվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, որոնց վրա գործող հարկային օրենքներով դրված են հարկեր ու ու այլ պարտադիր վճարներ վճարելու պարտականությունը: Հարկային օրենսդրությամբ նշխատեսված կարգով կազմակերպությունների մասնաճյուղերն ու այլ առանձնացված ստորաբաժանմուները կատարում են տվյալ կազմակերպությունների պարտականությունները հարկերի ու գանձումների վճարման ուղղությամբ այդ մասնաճյուղերի և այլ առանձնացված ստորաբաժանմուների գտնվելով վայրում: Ուստի, ինչպես ցույց է տալիս դատական պրակտիկան, դատարանի

կողմից չեղյալ ճանաչված բողոքներով կազմակերպության առանձնացված ստորաբաժանումը չի կարող ստուգվել հարկային մարմնի կողմից: Այլ խոսքով, դատական պրակտիկայի վերլուծությունները վկայում են, որ հարկային մարմիններն իրավունք չունեն անցկացնել կազմակերպության մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ չիմնադիմացող առանձնացված ստորաբաժանումների ինքնուրույն արտագնա հարկային ստուգումներ: Չիմնավորված է այն պրակտիկան, որ մասնաճյուղերն ու այլ առանձնացված ստորաբաժանումները միայն կատարում են հարկի վճարման պարտականություններ, որպես հարկային իրավահարաբերությունների մասնակիցներ հանդես չեն գալիս և չունեն հարկ վճարողների, հարկային գործակալների ու այլ պարտավորված անձանց կարգավիճակ: Բոլոր իրավաբանորեն նշանակալի գործողությունները հարկային մարմնի կողմից պետք է անցկացվեն միայն իրավաբանական անձանց նկատմամբ: Չարկերի, գանձումների, տույժերի ու տուգանքների վճարման բոլոր պարտականությունների կատարման պատասխանատվությունը կրում է իրավաբանական անձը, որի կազմի մեջ է մտնում համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը:

Չիմնվելով դատական գործերի արդյունքների վրա (խոսքը կազմակերպության մասնաճյուղերի ու ներկայացուցչությունների մասին է), որոնք թաղաքացիական օրենսգրքով և համապատասխան հիմնադիր փաստաթերթով ճանաչված են որպես մասնաճյուղեր ու ներկայացուցչություններ, կարող են հանդիս գալ միայն իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանումներ: Այլ խոսքով, պետք է նկատել, որ գործող օրենսդրական ակտերը չեն տարածվում կազմակերպության ստորաբաժանումների վրա, որոնք ճանաչվում են առանձնացված ստորաբաժանումներ, բայց արտացոլված չեն կազմակերպության հիմնադիր կամ այլ կազմակերպչական փաստաթերթում: Այս վիճելի հարցի կարգավորման նպատակներով առաջարկում ենք արգելել ստուգումների անցկացումն այն ստուգով կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներում, որոնք չունեն մասնաճյուղի կամ ներկայացուցչության կարգավիճակ:

Չատկանշական են այս հարցում հարկային օրենսդրության այն բարեփոխումները, ըստ որոնց՝ հարկային մարմիններին իրավունք է տրված անցկացնել մասնաճյուղերի և ներկայացուցչությունների արտագնա ինքնուրույն ստու-

գում համապետական և տեղական հարկերի ծիշտ հաշվարկման և ժամանակին վճարման ուղղությամբ²: Այդ կապակցությամբ, առաջարկում ենք ՀՀ «Հարկերի մասին» օրենքում սահմանել, որ հարկային մարմինն իրավունք ունի անցկացնել մասնաճյուղերի ու ներկայացուցչությունների արտագնա ինքնուրույն հարկային ստուգում միայն ստարածաշրջանային և տեղական հարկերի ծիշտ հաշվարկման և ժամանակին վճարման հարցերի գծով:

Ի լրացումն ասվածի նշենք, որ ապագա փոփոխություններում ծիշտ կիմի ամրագրել, որ հարկային ստուգումները կարող են անցկացվել հարկ վճարողների ու հարկային գործակալների նկատմամբ, այն ժամանակ, եթե հարկ վճարողի մասնաճյուղերը, ներկայացուցչություններն ու այլ առանձնացված ստորաբաժանումները հարկ վճարող (գանձումներ վճարողներ ու հարկային գործակալներ) չեն հանդիսանում:

ՀՀ հարկային օրենսդրությամբ վերահսկողության և ստուգումների անցկացման վիճելի հարցերից մեկը դարձյալ մնում է ստուգումներ անցկացնելու օրինականության և դրա արդյունքներով օրենքով սահմանված ժամկետի խախտումն որոշում կայացնելու հարցը: Դրա կարգավորված չինելը հանգեցրել է գործնականում դատական մարմինների կողմից ոչ միանշանակ հետևողությունների: Այս անենի հետևանքով հակասական են վարչական դատարանի որոշումները: Այս հարցում դատարանի ընդունած որոշումներում շատ հաճախ ուղղակի նշվում է, որ հարկային, որ տեսչության կողմից օրենսգրքում սահմանված ժամկետից դուրս անցկացված կամերալ ստուգման արդյունքներով պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը հանդիսանում է անօրինական: Կամ, ընդհակառակը, դատարանի որոշման մեջ երեն ասկել է, որ եռամսյա ժամկետը կամերալ ստուգում անցկացնելու համար հանդիսանում է կազմակերպչական, այլ ոչ թե կատեգորիկ, այդ պատճառով հարկային մարմնի կողմից տվյալ ժամկետի խախտումը հիմք չի հանդիսանում նրա որոշումը անօրինական ճանաչելու համար:

Հարկային մարմինների ստուգումների կազմակերպման և անցկացման կարգի, ինչպես նաև դատական պրակտիկայի ամփոփման հիման վրա կարելի է հանգել այն եղրահանգմանը, որ կամերալ ստուգում անցկացնելու ժամկետի խախտումը չի հանգեցնելու դրա արդյունքներով ընդունված հարկային մարմնի որոշման ավտո-

մատ անօրինական ճանաչման:

Այսպիսով, նկատենք, որ օրենսդրության մեջ հստակեցված չէ, թե ինչ հետևանքների է հանգեցնում կամերալ ստուգման համար սահմանված եռանյա ժամկետի խախտումը: Միևնույն ժամանակ կարելի է պնդել, որ կամերալ ստուգման ժամկետի խախտումը չի փոխում հարկի ու տույժերի հարկադիր գանձման ժամկետի հաշվարկան կազմը, պահանջներ ներկայացնելու ժամկետը և հարկերի գանձման վերաբերյալ որոշման ընդունման ժամկետը: Այսինքն այդ ժամկետները սկսում են անկախ կամերալ ստուգման ավարտի ժամկետներից: Գործնականում, իրավական այս բացի պատճառով հետագա դատական վեճերից խուսափելու համար առաջարկում ենք լրացնել գործող օրենսդրությունը հետևյալ բռվանդակությամբ. «Դարկային մարմին կողմից կամերալ ստուգման ժամկետի բացքումը հիմք չի հանդիսանում հարկային մարմին օրենքով նախատեսված ժամկետի պահպանմամբ ներկայացված հարկի ու տույժերի գանձման մասին պահանջը բավարարելու կամ մերժելու համար»:

Ստուգումների գործընթացը կարգավորող իրավական ակտով չի սահմանվել ստուգման ավարտի պահը: Ստուգման ավարտի ճգրիտ սահմանումը, կարծում ենք, եական նշանակություն ունի հարկային ստուգման ակտի կազմման ժամկետի հաշվարկի համար: Ամսաթիվը չնշելու դեպքում հարկ վճարողը չի կարողանա վերահսկել հարկային մարմնների ստուգում անցկացնող աշխատակիցների գործողությունը: Եթե, չի կարող ստուգել՝ պահպանվո՞ւմ են, արդյոք, հարկային ստուգման ակտի կազմման ժամկետները, չե՞ն խախտվում, արդյոք, նրա իրավունքներն ու օրինական շահերը: Այդ կապակցությամբ նպատակահարմար է իրավախախտումներ բացահայտած ստուգումների արդյունքների ձևակերպման ընթացակարգը լրացնել ստուգման ավարտի ձևակերպման կոնկրետ կարգով՝ այն դեպքում, եթե այն ավարտվում է դրա անցկացման առավելագույն ժամկետից առաջ (3 ամիս): Արտագնա ստուգման ավարտի ձևակերպման կարգի նմանատիպությամբ առաջարկում ենք ՀՀ գործող օրենսդրության մեջ ամրագրել մի նորմ, որը կպարտավորեցնի հարկային մարմնին կամերալ ստուգման ավարտին կազմել դրա անցկացման մասին տեղեկանք: Դա երաշխիք կծառայի հարկ վճարողների իրավունքների ապահովման համար:

Թե՛ ներքին և թե՛ արտագնա հարկային

ստուգումների անցկացման ժամկետի ավարտից հետո, հարկերի ու գանձումների մասին օրենսդրության խախտումների կատարման փաստը հաստատող լրացուցիչ ապացույցների ստացման անհրաժեշտության դեպքում, օրենսդրությունը հարկային մարմնին իրավունք է տալիս անցկացնել հարկային վերահսկողության լրացուցիչ միջոցառումներ: Օրենսդրության անորոշության պատճառով հարց է ծագում՝ պարտավո՞ր է, արդյոք, հարկային մարմնինը, ապահովելով հարկ վճարողի մասնակցությունը հարկային ստուգման նյութերի քննարկմանը, նոյն կերպ ապահովել մասնակցությունը հարկային վերահսկողության նյութերի, լրացուցիչ միջոցառումների արդյունքների քննարկմանը: Ենթադրվում է, որ այս հարցը պետք է լուծվի հօգուտ հարկ վճարողի՝ հետևյալ հիմնավորումներով: Դարկային վերահսկողության այնպիսի ծևերը, ինչպիսիք են վկայի հարցաքննումը, փորձաքննությունը և փաստաթրերի պահանջելը, որոնք անցկացվում են հարկային վերահսկողության լրացուցիչ միջոցառումների շրջանակներում, հանգեցնում են համապատասխան փաստաթրերի ձևակերպմանը, որոնք վերաբերում են հարկային ստուգման նյութերին, չնայած որ ստացվել են հարկային ստուգումների ավարտին և դրանց արդյունքների քննարկմանը սկսելուց հետո: Դարկային վերահսկողության լրացուցիչ միջոցառումների արդյունքներով ստացված փաստաթրերը դրված են հարկային ստուգման արդյունքներով կայացման ենթակա որոշման հիմքում:

Կարծում ենք՝ այս դեպքերում ճշշտը այն է, որ հարկային մարմններն ապահովեն ստուգվող անձի (անձամբ կամ նրա ներկայացուցիչ միջոցով) մասնակցությունը հարկային ստուգման նյութերի քննարկմանը, ներառյալ այն նյութերը, որոնք ստացվել են հարկային վերահսկողության լրացուցիչ միջոցառումների ընթացքում: Դա բացատրվում է նրանով, որ «հարկային մարմնի նեկավարը կամ տեղակալը որոշում է ընդունում հարկային ստուգման նյութերի քննարկման արդյունքներով, ներառյալ լրացուցիչ միջոցառումների արդյունքները»: Տվյալ իրավական դիրքորոշումը իրեն զգալ է տալիս դատաքննությունների ընթացքում: Ինչպես ցույց են տալիս հանրապետության դատարանների գործունեության ուսումնասիրությունները, հարկ վճարողին հարկային վերահսկողության լրացուցիչ միջոցառումների արդյունքների քննարկման ժամանակի ու տեղի մասին չժամանուցելը

դիտվում է հարկային իրավախախտման մասին գործով վարույթի կարգի խախտում, ինչպես նաև ստուգման նյութերի քննարկմանը հարկ վճարողի մասնակցության և լրացուցիչ ապացույցների ու առարկությունների ներկայացման իրավունքի էական խախտում է հանդիսանում և հանգեցնում է այդպիսի քննարկման արդյունքներով հարկային մարմնի կողմից ընդունված որոշման անվավեր ճանաչմանը: Յարկ վճարողին հարկային ստուգման արդյունքների հարկային մարմնի ղեկավարի (ղեկավարի տեղակալի) կողմից քննարկման ամսաթվի ու տեղի մասին ծանուցելու հարկային մարմինների պարտականությունը հարկային պատասխանատվության ենթարկելու հարցի լուծման ժամանակ կարևոր երաշխիք է հանդիսանում հարկ վճարողների իրավունքների պահպանման համար: Յաշվի առնելով հարկ վճարող տնտեսվարողների շահերը «Ստուգումների անցկացման մասին» գործու օրենքը համալրել հետևյալ նախադասություններով՝

Հարկային մարմնի ղեկավարը (ղեկավարի տեղակալը) ծանուցում է հարկային վերահսկողության լրացուցիչ միջոցառումների նյութերի քննարկման ժամանակի ու տեղի մասին այն անձին, որի նկատմամբ դրանք անց կացվել:

Անձը, որի նկատմամբ անցկացվել են հարկային վերահսկողության լրացուցիչ միջոցառումները, իրավունք ունի մասնակցել նշված միջոցառումների նյութերի քննարկման գործնրացին անձամբ կամ իր ներկայացուցչի միջոցով:

Բացի դրանից, հարկային օրենսդրությամբ կարգակիրված չէ այն հարցը, թե կարո՞ղ է, արդյոք, ստուգվող անձը ծանոթանալ հարկային վերահսկողության լրացուցիչ միջոցառումներ նշանակելու դրոշմանը:

Այսուհետև, որպես հիշարկվածի համարում ավելացնենք, որ հարկային վերահսկողության լրացուցիչ միջոցառումների նշանակման մասին որոշման պատճենը պետք է հանձնվի այն անձին, որի նկատմամբ կայացվել է տվյալ դրոշում:

Տվյալ դրույթի ոչ հստակ շարադրանքը գործնականում հանգեցնում է հարկ վճարողների ու հարկային մարմինների կողմից դրա ոչ միատեսակ կիրառմանը: Այսպես, գործնականում եթե հարկային ստուգմամբ հարկային հայտարարագրում (հաշվարկում) սխալներով ներկայացված փաստաթերի տվյալների միջև հակասություններ են բացահայտվել, կամ բացահայտվել են անհամապատասխանություններ հարկ վճա-

րողի կողմից ներկայացված փաստաթերի տվյալների և հարկային մարմնի մոտ եղած հարկային վերահսկողության ընթացքում ստացված փաստաթերում պարունակվող տվյալների միջև, որա մասին հաղորդվում է հարկ վճարողին՝ պահանջելով ինձօք օրվա ընթացքում ներկայացնել բացատրություններ կամ սահմանված ժամկետում համապատասխան ուղղումներ մտցնել: Բերված կանոններից կարող է հարց առաջանալ. արդյո՞ք տվյալ հաղորդումը հարկային մարմնի իրավունքն է, թե պարտականությունը: Եթե նկատի ունենք հարկային մարմնի իրավունքը, ապա տեսուչը կարող է իր հայեցողությամբ հաղորդել հարկային հայտարարագրի հակասությունների փաստի մասին կամ չանել որ: Եսկ եք արված առաջարկները մեկնարանվեն որպես հարկային մարմնի պարտականություն, ապա հարկային տեսուչի կողմից տվյալ ընթացակարգի չկատարման դեպքում կիսախտվի կամերալ ստուգման անցկացման կարգը:

Այսպիսով, «Հարկային ծառայության մասին» օրենքում հարկային մարմինների իրավունքների ու պարտականությունների վերլուծությունը թույլ չի տալիս անել միանշանակ եղանակում՝ հաշվետվության կազմում հարկ վճարողի կողմից ներկայացված փաստաթերում ուղղումներ մտցնելու մասին պահանջ ուղարկելով իրավունքը է հանդիսանում, թե պարտականություն:

Տվյալ հարցի լուծման մեջ հստակություն մտցնելու նպատակով, ընդգծենք, որ հարկային մարմնի իրավասությունները կրում են իրավարակային-հրավական բնույթ, ինչը հարկային մարմնին թույլ չի տալիս կամայականորեն հրաժարվել հարկերի ճիշտ հաշվարկումն ու ժամանակին վճարումը հաստատող լրացուցիչ տվյալներ, բացատրություններ ու փաստաթերեր պահանջելու անհրաժեշտությունից: Յարկային իրավախախտումներ բացահայտելու հարկային մարմնի վրա դրված գործառույթի իրականացման ժամանակ հարկերի վճարման ծշտության շուրջ կասկածների դեպքում, առավել ևս հարկային իրավախախտման հատկանիշներ հայտնաբերելիս, հարկային մարմնը պարտավոր է օգտվել հարկ վճարողից անհրաժեշտ տեղեկատվություն պահանջելու իրեն տրված իրավունքից: Յամապատասխանաբար, հարկ վճարողն իրավունք ունի ենթադրել, որ եթե հարկային մարմնին չի դիմում իրեն հայտարարագրված հարկերը հաստատող բացատրությունների կամ փաստաթերի համար, ապա հարկային

մարմնի մոտ կասկածներ չկան հարկերի վճարման ճշտության շուրջ: Դակառակը կնշանակեր իրավական որոշակիության խախտում և կհանգեցներ հարկային մարմինների կամայականությունների:

Այսպիսով, նմանատիպ հակասությունների վերացման համար նպատակահարմար է գործող օրենսդրությամբ ամրագործել, որ եթե հարկային ստուգմամբ հայտնաբերվել են հարկային հայտարարագրի (*հաշվարկի*) սխալներ կամ հակասություններ ներկայացված փաստաթղթերի տվյալների միջև, կամ բացահայտվել են անհամապատասխանություններ հարկ վճարողի կողմից ներկայացված տվյալների և հարկային մարմնի մոտ եղած փաստաթղթերում պարունակվող տվյալների կամ հարկային վերահսկողությամ⁴ ընթացքում ստացված տվյալների միջև, հարկային մարմինը պարտավոր է այդ մասին հաղորդել հարկ վճարողին՝ պահանջելով 5 օրվա ընթացքում ներկայացնել անհրաժեշտ բացատրություններ կամ համապատասխան ուղղումներ մտցնել սահմանված ժամկետում:

Դիմնվելով կատարված վերլուծությունների վրա կարծում ենք, որ հարկային օրենսդրության կատարելագործման նպատակով գործող օրենս-

դրության համակարգը անհրաժեշտ է համալրել նոր՝ «Հարկային վերահսկողություն» ինստիտուտով, որ փոփոխությունները հանդիսանում են ամենայանաձավալունն ու նշանակալին հարկային օրենսդրության կիրառման գործնարարություն: Վիճելի են մնում այնպիսի հարցեր, որոնք այս կամ այլ կերպ լուծում չեն ստացել կամ մշակում են պահանջում: Հարկային վերահսկողության կատարելագործումը պետք է ուղղված լինի գործող հարկային իրավանորմերի անորոշության և դրանց ոչ միանշանակ մեկնարաննան վերացմանը:

¹ **Կ. Ա. Խեռօս.** Налоговые аспекты трансферного ценообразования: сравнительный анализ опыта России и зарубежных стран. М., “Волтерс Клювер”, 2007, с. 145.

² Տե՛ս մանրամասն **Գ. Ա. Սուլիմայան, Ա. Յ. Օսիկյան, Ն. Գ. Սուլիմայան**, Հարկային իրավունք (ուսումնական ծերնակ), Եր., «Տնտեսագիտ», 2012, էջ 90-92

³ Ուսաստանի Ֆինանսների նախարարության 25.07.207 N 03-02-07/1-346 նամակը // Справочноправовая система онисультант. Плюс:

⁴ Մանրամասն տե՛ս, **Ա. Յ. Խաչատրյան**, Հարկային իրավունք, ՀՀ ԳԱԱ, Եր., «Գիտություն», 2003, էջ 312:

LEGAL WAYS OF IMPROVEMENT OF TAX CONTROL AND LEGISLATION IN RA

VARDAN FARAMAZYAN

Summary

In a Vardan Faramazyan's scientific article about tax audits and legal ways to improve tax legislation, based on the analysis of the tax authorities and judicial practice seeks to amend certain articles of the RA law "On auditing", so as to reveal the content of the term "validation", content and process organization.

**ՀՅ ՀԱՐԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ՄԱՐՄԻՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱՌԱՋԱՏՎՈՒԹՅՈՒՆԵՐԸ***

Արման ՎԱՐՈՍՅԱՆ

Երևանի «ՄԱՍՅ» համալսարանի հայցորդ



Պետության կենտրոնացված դրամական միջոցների հավաքումնան, եկամուտների ձևավորման գործունեության արդյունավետ կազմակերպմանը մեծապես աջակցում են հարկային և մաքսային մարմնները, որոնց գործունեության իրավական հիմքը ներպետական տնտեսական օրենսդրությունն է, ինչպես նաև միջազգային առևտրային գործունեությունը կարգավորող պայմանագրերը և համաձայնագրերը:

Այս խնդիրների հաշվառմամբ 2008 թ. օգոստոսի 20-ին ՀՅ նախագահի ՆՀ – 226 –Ն հրամանագրով ՀՅ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեն և հարկային պետական ծառայությունը միաձուլման ձևով վերակազմակերպվեցին ՀՅ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, որի համակարգը, ըստ ՀՅ կառավարության 2008 թ. սեպտեմբերի 4-ի ՀՅ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին 1005-Ն որոշման, ընդգրկում է հարկային և մաքսային ծառայությունները:

ՀՅ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, որպես գործադիր իշխանության կառավարման մարմին, հանդիսական որպես հարկային և մաքսային օրենսդրության պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնող պետական կառավարման մարմինների միասնական կենտրոնացված համակարգ, որը հարկման և առտաքին տնտեսական

գործունեության ոլորտում ապահովում է օրինականությունը և իրավակարգը, հանդիսական որպես հստակ մասնագիտացված իրավապահ մարմին:

Պետական եկամուտների համակարգի կառուցվածքում նեղգրկված ծառայությունների գործունեության իրավական կարգավիճակը սահմանված է ինչպես ՀՅ կառավարության 2008 թ. սեպտեմբերի 4-ի որոշումով, այնպես էլ «Հարկային ծառայության մասին» և «Մաքսային ծառայության մասին» օրենքներով և ՀՅ մաքսային օրենսգրքով:

Հիշատակված նոր իրավական ակտերի ուսումնասիրությունից դժվար չէ նկատել, որ պետական եկամուտների կոմիտեի ինչպես կազմակերպմանը, այնպես էլ գործունեությանը ներհարկ են այդ մարմինների միասնականության, անկախության և երկակի ենթակայության սկզբունքը:

Միասնականության սկզբունքը արտահայտվում է նրանում, որ ինչպես հարկային, այնպես էլ մաքսային մարմինները կազմում են մեկ միասնական համակարգ, որը պայմանավորված է հարկային և մաքսային քաղաքականության միասնության, միանձնյա կառավարման և հարկային ու մաքսային օրենսդրության պահպանման նկատմամբ հսկողության իրականացման միատարրության պահանջներից:

Պետական եկամուտների մարմինների համակարգի անկախությունը դրսորվում է հատկապես տվյալ մարմինների վերապահված գործնական լիազորությունների ինքնուրույն իրականացմամբ:

Պետական եկամուտների համակարգի մասը կազմոն ինչպես հարկային, այնպես էլ մաքսային ծառայությունները անկախ են օրենսդիր, գործադիր, դատական և տեղական ինքնակա-

* Ներկայացվել է 28.11.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

ռավարման մարմիններից:

Պետական Եկամուտների համակարգի մարմինների անկախության իրավական հիմքը վերջիններիս վերապահված հսկողության լիազորություններն են, որոնք ցանկացած պահի, ենթակա պետության տնտեսական ինքնիշխանության և ազգային անվտանգության պահպանության շահերից, կարող են կիրառվել հանրապետությունում գործող կազմակերպությունների նկատմամբ¹:

Վերջապես, պետական Եկամուտների համակարգի մարմինների աստիճանական ենթակայության սկզբունքի եռթյունն այն է, որ ենթակայության այս ձևին, մի կողմից, հասուլ է այն, որ կենտրոնական ապարատին ենթակա են ինչպես հարկային ծառայություններ մարզային, այնպես էլ մաքսային տարածաշրջանային մաքսատները և մաքսակետերը, իսկ մյուս կողմից՝ թե՛ հարկային և թե՛ մաքսային ծառայության բոլոր ստորաբաժանումների պաշտոններում նշանակություն կատարվում են կոմիտեի նախագահի կողմից:

Պետական Եկամուտների համակարգի ինչպես կենտրոնական մարմնի, այնպես էլ հարկային և մաքսային ծառայությունների կազմակերպման կարգը, խնդիրները, լիազորությունների ծավալը և իրավասության շրջանակներն ամրագրված են ՀՅ կառավարության 2008 թ. սեպտեմբերի 4-ի թիվ 1005-Ն որոշմամբ հաստատված կանոնադրությամբ:

Կոմիտեի լիազորությունները սահմանվում են «Հարկային ծառայության մասին» և «Սաքսային ծառայության մասին» ՀՅ օրենքներով, ՀՅ այլ օրենքներով և իրավական ակտերով, ՀՅ Նախագահի հրամանագրերով, կարգադրություններով, ինչպես նաև ՀՅ միջազգային պայմանագրերով:

Կոմիտեի համակարգը ընդգրկում է հարկային ծառայությունը և մաքսային ծառայությունը:

Կոմիտեն իրավապահ մարմին է:

Պետական Եկամուտների կոմիտեի կանոնադրությամբ հսկակեցված են նրա նպատակները և խնդիրները՝ ըստ համակարգի կառուցվածքային ստորաբաժանումների:

Այսպես, հարկային ծառայության մասով՝

ա. ՀՅ հարկային օրենսդրության հարկային հարաբերությունները կարգավիրող այլ իրավական ակտերի պահանջների կատարման ու կիրառման նկատմամբ օրենքով սահմանված կարգով հսկողության իրականացումը,

բ. ՀՅ հարկային օրենսդրության պահանջ-

նի խախտումների (հարկային հանցագործությունների) կանխումը, խափանումը, այդ խախտումների բացահայտումը, ինչպես նաև ծառայության իրավասության սահմաններում պետական տուրքի, ոչ հարկային Եկամուտների և ՀՅ օրենսդրությամբ նախատեսված այլ վճարների նկատմամբ հսկողության իրականացումը:

Կոմիտեն իր նպատակների և խնդիրների հարկանացման համար օրենսդրությամբ սահմանված կարգով հրականացնում է հետևյալ գործառույթները՝

- 1) հարկային ծառայության մասով՝
 - ա. հարկ վճարողների սպասարկում,
 - բ. հարկ վճարողների հաշվառում,
 - գ. հարկերի և այլ պարտադիր վճարների հավաքման կազմակերպում,

դ. հարկ վճարողների նկատմամբ՝ օրենքով սահմանված կարգով հսկողության իրականացում,

ե. ՀՅ հարկային օրենսդրության, հարկային հարաբերությունները կարգավիրող մյուս իրավական ակտերի՝ հարկային պարտավիրությունների գործ պահանջների խախտման համար օրենքով սահմանված պատասխանատվության կիրառում,

գ. հարկ վճարողների բողոքների քննարկում և որոշումների ընդունում,

թ. բյուջեների՝ հարկային մարմնի կողմից վերահսկող Եկամուտների հաշվառում,

ը. հարկային քաղաքականության մշակման նախակցություն,

թ. ՀՅ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով իրեն վերապահված գործերով հետաքննության ու նախաքննության հրականացում,

ժ. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՅ օրենսգրքին համապատասխան իրեն վերապահված գործերով վարույթի հրականացում,

ժա. հարկային իրավախախտումների բացահայտման ուղղությամբ անհրաժեշտ օպերատիվ-հետախուզական միջոցառումների հրականացում,

ժբ. ՀՅ հարկային օրենսդրությամբ և հարկային հարաբերությունները կարգավիրող մյուս իրավական ակտերով նախատեսված այլ գործառույթների հրականացում,

ժգ. ՀՅ հարկային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով հարկային մարմնի կողմից տնտեսվարող սուբյեկտների մոտ

օրենքով սահմանված կարգով ստուգումների անցկացում:

Գործող օրենադրությամբ առաջին անգամ ամրագրված է կոմիտեի կառավարման կազմակերպման կարգը, ըստ որի՝ կոմիտեն կառավարում է կոմիտեի նախագահը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ Նախագահը՝ ՀՀ վարչապետի առաջարկությամբ:

Կոմիտեի նախագահն իր գործունեության ընթացքում պարտավոր է առաջնորդվել ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ օրենքներով, սույն կանոնադրությամբ, այլ իրավական ակտերով և ՀՀ միջազգային պայմանագրերով:

Կոմիտեի նախագահն իրականացնում է կոմիտեին վերապահված գործառույթները և պատասխանատու է լիազորված քնազականներում քաղաքականության մշակմանը մասնակցության, տիրող իրավիճակի ու հեռանկարային զարգացման պահովման համար²:

ՀՀ կառավարությանն առջներ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությամբ հաստատված և սահմանազատված են կոմիտեի նախագահի լիազորությունները, ըստ որոնց՝ նա կոմիտեին վերապահված լիազորությունների սահմաններում ընդունում է գերատեսչական իրավական ակտեր, ոեկապարում է կոմիտեի ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է կոմիտեի առջև դրվագը իրականացների ու գործառույթների իրականացման համար. Կոմիտեի նպատակների ու խնդիրների համապատասխան առաջարկություններ է ներկայացնում ՀՀ կառավարություն:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և նրա առանձին ծառայությունների մարմինների իրավատնօրինության առարկան կազմող նյութական և գործընթացային գործունեության բոլոր ձևերն ունեն բնորոշ առանձնահատկություններ, որոնք բխում են բոլոր պետական մարմինների համակարգում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարգավիճակից, որին օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում իրավունք է վերապահված ըստ անհրաժեշտության հասարակական և պետական շահերի գերակայությունից ելնելով, հանդես գալ թե որպես հասուկ իրավասության պետական կառավարման մարմին և թե որպես արտաքին տնտեսական գործունեության մարմին, որի իրավական ռեժիմի առանձնահատկություններ անրագրված են ՀՀ հարկային և մաքսային օրենսդրությամբ, ՀՀ Նախագահի հրամանագրով:

Ներով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարգավիճակի իրավական առանձնահատկությունների կարտորությունը պայմանավորված է այն վիթխարի դերով, որ այսօր մեր պետության տնտեսական հիմքերի ամրապնդման և հզորացման գործում խաղողս են նրա համակարգի հարկային և նախագահի ծառայությունները:

ՀՀ ներպետական և արտաքին տնտեսական գործունեության ոլորտում օրենսդրությամբ ամրագրված հարկադրամքի միջոցների իրացումը պայմանավորված է հարկային և մաքսային իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության ու լուծման կարգի ճիշտ կիրառմամբ:

Գործող հարկային և մաքսային օրենսդրությունը կարգավորում է հիշատակված ոլորտների իրավախախտումներին վերաբերող գործերը քննելու և լուծելու հարցերը: Պետք է նկատել, որ գործող օրենսդրությամբ հսկողության կարգով հարկային և մաքսային պատասխանատվության ենթակելու կարգին վերաբերող բոլոր հարցերը վերջնական լուծումներ չեն ստանում: Դիշյալ ոլորտների օրենսդրության կատարելագործման հիմնախնդիրները ենել և վերաբերում են պետական եկամուտների կոմիտեի լիազորությունների ընդարձակման պատասխանատվության կիրառման ոլորտում:

ՀՀ կառավարությամբ առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավաստօրինությունը լայն իմաստով ներառում է նաև հարկային և մաքսային վարչապարությունը, որը դրսնորվում է գործադիր-կարգավորող այնպիսի պետական լիազորությունների համակցությամբ, որոնք մեծամասն ունեն կատարողական բնույթը:

Այլ խոսքով, պետական եկամուտների կոմիտեի կողմից իրականացվող վարչություն ասելով պետք է հասկանալ հարկային և մաքսային հսկողություն իրականացնող մարմինների կողմից հարկեր, մաքսավճարներ վճարողների և նրանց պարտավորությունների հաշվառում, հարկային և մաքսային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթների պահանջների ճիշտ կիրառման ապահովում, ինչպես նաև հարկային և մաքսային հսկողության իրականացման գործընթացների ամրողացությունը:

ՀՀ հարկային մարմինների համակարգում այսօր ակնառու են հարաբերությունների կարգավորման անբավարար դրսնորումները, որոնք հարկային օրենսդրության հետագա կատարելագործման անհրաժեշտություն են առաջաց-

նում:

Այսօր հարկային մարմինների նոր խնդիրները և նպատակները սահմանված են ՀՅ նախագահի 2008 թ. օգոստոսի 20-ի հրամանագրով, ինչպես նաև ՀՅ կառավարության 2008 թ. սեպտեմբերի 4-ի «ՀՅ կառավարության առջներ պետական եկամուտների կոմիտեի կամոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» որոշմանք, ըստ որի՝ կառավարությանն առջներ հարկային պետական ծառայությունը, միաձուվելով մաքսային ծառայության հետ, վերակազմավորվել է իրեն պետական եկամուտների կոմիտե:

Հարկային մարմինների խնդիրները, կարգավիճակը, գործառույթները և հրավասության շրջանակները ամրագրված են ոչ միայն հիշատակված իրավական ակտերով և հարկային ծառայության մասին օրենքներով:

Գործող օրենսդրությամբ սահմանված են հարկային ծառայության և հարկային մարմնի հասկացությունը, դրանց խնդիրները:

ՀՅ «Հարկային ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածում ասված է, որ հարկային ծառայությունը օրենքով և այլ հրավական ակտերով սահմանված կարգով ու իր հրավասության սահմաններում իրականացվող մասնագիտացված գործունեություն է, որը նպատակառուղյութ է հարկային մարմինների խնդիրների և գործառույթների իրականացմանը, իսկ հարկային մարմինը՝ հարկադիր և պարտադիր սոցիալական ապահովագրական վճարների մասին օրենսդրության կատարման նկատմամբ հսկողություն իրականացնող միասնական պետական կառավարման հանրապետական մարմին է, որը կոչված է իրագործելու օրենքով սահմանված խնդիրները, ապահովելու բյուջեների՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները, նպաստելու ՀՅ տնտեսական անվտագությանը:

ՀՅ հարկային օրենսդրության ուսումնասիրությունները բերում են այն համոզման, որ այսօր խնդիրները ուղղված են.

1) Հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի պարտադիր սոցիալական անվտանգության վճարների մասին օրենսդրության պահանջների կատարման և կիրառման օրենքով սահմանված հսկողության իրականացմանը:

2) Հարկային և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին օրենսդրության պահանջների մասին այլ իրավական անվտանգության վճարների մասին օրենսդրության պահանջների մասին օրենքով սահմանված հսկողության իրականացմանը:

րության պահանջների խախտումների կանխանք, խափանմանը, այդ խախտումների բացահայտմանը:

3) Հարկային և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին օրենսդրությամբ սահմանված պարտավորությունների չկատարման հետևանքով ՀՅ պետական, պարտադիր սոցիալական ապահովագրության և համայնքների նկատմամբ առաջացած պարտավորությունների մարման գծով աշխատանքների իրականացմանը:

4) Հարկային և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հարցերին առնընվորվող միջազգային պայմանագրերով ՀՅ պարտավորությունների կատարմանը և հրավունքների իրականացմանը, օտարերկրյա պետությունների հարկային և իրավասու այլ մարմինների միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությանը, ինչպես նաև օրենսդրությամբ անդադրված այլ խնդիրների:

Հարկային ծառայությունը օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպվում է որոշակի սկզբունքների պահպանմամբ, որոնք ուղղված են ՀՅ Սահմանադրության, օրենքների գերակայության, մարդու իրավունքների և ազատությունների առաջնայնության, հարկային ծառայության կայունության, իրապարակայնության, ինչպես նաև հարկային օրենսդրության միատեսակ կիրառման ապահովմանը:

ՀՅ հարկային ծառայության մարմնի իրավական վիճակի ուսումնասիրման կարևոր բնագավառներից են տվյալ մարմնի գործառույթների իրականացմանն ուղղված իրավունքներն ու պարտականությունները:

Օրենքի բովանդակությունից հժվար չէ նկատել, որ դրանք տվյալ մարմնում հարկային ծառայության տարրեր պաշտոններ գրադեցրած հարկային ծառայողի իրավունքները և պարտականություններն են, որոնց համակցությունը կազմում է ծառայության մարմնի իրավասությունը:

Այդ լիազորությունների սահմանման միջոցով է իրականացվում հարկային հսկողությունը և այդ ոլորտում առաջացող հարկային հարաբերությունների իրավական կարգավորումը: Եթևաբար առանց պետական իշխանական լիազորություններով օժտվելու անհնար է հարկային ծառայության մարմնի հսկողության և վերահսկողության գործունեության կազմակերպումը:

Հարկային մարմինը պարտավոր է.

• իրականացնել օրենսդրությամբ սահմանված չափից ավելի վճարված (բռնագանձված)

հարկերի և պարտադիր այլ վճարների հաշվանցումը (կամ վերադաման համար անհրաժեշտ՝ օրենսդրությամբ սահմանված տեղեկությունների, տեղեկանքների տրամադրումը), ապահովելով հարկային գաղտնիքը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում տրամադրել այդ տեղեկությունների օգտագործմանը աշխատանքներ կատարելու իրավասություն ունեցող պետական մարմիններին՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով,

- սահմանված ժամկետում քննարկել հարկ վճարողի ներկայացրած բողոքը հարկային մարմին (ստորաբաժանման) կամ հարկային ծառայողի գործողությունների (անգործության) դեմ և ընդունված որոշման մասին տեղյակ պահել հարկ վճարողին,

- իրականացնել ծառայողական քննություն՝ հարկային ծառայողների կատարած խախտումների վերաբերյալ:

Հարկային մարմինը ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով կրում է նաև այլ պարտականություններ:

ՀՀ հարկային օրենսդրությամբ առավել հստակեցված են հարկային մարմնի իրավունքները:

Այսպես, հարկային մարմին իրավունք ունի՝

- 1) հարկ վճարողից, հարկային գործականներից և հարկային հարաբերություններին առնչ-

վող այլ անձանցից պահանջել փաստաթղթեր, տվյալներ, բացատրություններ, տեղեկանքներ, հարկերի և պարտադիր այլ վճարների հաշվարկման ու վճարման համար հիմք համարվող՝ օրենքի հիման վրա սահմանված հաշվետվություններ, հաշվարկներ,

2) հարկերի և պարտադիր այլ վճարների հաշվարկման, վճարման նկատմամբ օրենքով սահմանված կարգով անցկացնել ստուգումներ՝ նախարարությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների աշխատակազմերում, կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող, եկամուտներ, գույք և ծախսեր հայտագրող անձանց մոտ:

3) և այլն:

¹ Տե՛ս մանրամասն **Գ. Ա. Սութիասյան, Ա. Յ. Օսիկյան, Ա. Գ. Սութիասյան**, Հարկային իրավունք (ուսումնական ձեռնարկ բուհերի համար), Եր., «Իրավունք», 2012, էջ 96-97:

² Տե՛ս մանրամասն **Արթուր Օսիկյան**, Հարկային իրավունք, (ուսումնական ձեռնարկ), Եր., «Իրավունք», 2009, էջ 101-102:

³ Տե՛ս մանրամասն **Налоговое право России**, (учебник для вузов), М., "Норм", с. 593:

THE ANALYSIS ON THE STATUS OF LEGAL CHARACTERISTICS OF FINANCIAL REGULATION AND SUPERVISION BODIES

ARMAN VAROSYAN

Summary

"The analysis on the status of legal characteristics of financial regulation and supervision bodies" article is highlighted tax-inherent economic factors, through the accounting of which, the legal functions of the latter are classified on the basis of fiscal function in the process of the stocking of the benefits of the state budget.

ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՎԵՐԱՀՄԱՆԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ*

Արման ՎԱՐՈՍՅԱՆ

Երևանի «ՄԱՆՅ» համալսարանի հայցորդ

Յպետական բյուջե նույթագրվող հարկերի և այլ վճարումների ճշշտ ժամանակին նույթը վերահսկելու պարտականությունը դրված է հարկային տեսչության վրա: Նա վերահսկում է կազմակերպությունների, հիմնարկների և անհատ ձեռներեցների հանդեպ ունեցած պարտականությունների ժամանակին և բարեխիղծ կատարումը:

ՀՅ հարկային տեսչության լիազորությունները սահմանված են «Հարկերի նախին», «Հարկային ծառայության նախին» 2002 թ. հուլիսի 3-ի, ինչպես նաև «ՀՅ ստուգումների կազմակերպման և անցկացման նախին» 2000 թ. մայիսի 17-ին ընդունված օրենքներով, ինչպես նաև ՀՅ կառավարության 2008 թ. սեպտեմբերի 4-ի որոշմամբ հաստատված ՀՅ կառավարության առջնորդեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությամբ:

ՀՅ հարկային տեսչության մարմինները (հարկային տեսչությունը և նրա տարածքային մարմինները) իրենց իրավասության շրջանակներում վերահսկություն են իրականացնում ՀՅ տարածքում գործող բոլոր հիմնարկների, կազմակերպությունների, ինչպես նաև անհատ ձեռներեցների վրա: Վերը նշված իրավական ակտերով սահմանված կարգին համապատասխան հարկային տեսչության մարմինները կազմակերպություններում անցկացնում են ստուգումներ, որի ընթացքում ուսումնասիրում են տնտեսվարող սուբյեկտների տնտեսվարող և այլ առևտրական գործունեությունը, վերլուծում են ֆինանսական և այլ արտահրացման գործառությունները, պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կատարման ընթացքը, իսկ ՀՅ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նաև այլ պարտավորությունների կատարման առումով ամփոփում, ձևակերպում և սահմանված կարգով ստուգման արդյունքները ներ-

կայացնում են կառավարությանը:

Ստուգումները տարբերակվում են՝ ա. Ըստ իրականացման վայրի՝ ներքին (կամերայ) և արտաքին:

Ներքին ստուգումը կատարվում է ստուգվող օրյեկտի գտնվելու կամ գործունեության վայր այցելության ծևով: Արտաքին ստուգումը ենթադրում է օրյեկտի գործունեության ստուգում նրա սկզբնական հաշվապահական և այլ անհրաժեշտ ընդգրկումով:

բ. Ըստ պարբերականության՝ սկզբնական և լուցուցիչ:

գ. Ըստ իրականացման՝ համատարած (բոլոր սկզբնական և հաշվետվական փաստաթղթերի դիտարկմանը) և ընտրանքային:

դ. Ըստ ընդգրկման աստիճանի՝ ֆինանսատնտեսական գործունեության (համալիր) ստուգումներ:

Հարկային մարմինների կողմից իրականացվող ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների նպատակը կազմակերպությունների կողմից պետական բյուջեի նկատմամբ հարկային պարտավորությունների կատարման ստուգումն է, որն իրականացվում է ըստ անհրաժշտության և իրենից ներկայացնում է արտաքին փաստաթղթային ստուգում, որի ժամանակ իրականացվում է (համատարած կամ ընտրանքային ծևով) կազմակերպության արտադրական, այլ առևտրական ողջ գործունեության և տնտեսական բոլոր տիպի գործառնությունների ստուգում, օգտագործելով փաստաթղթային ու փաստացի այնպիսի մերողների, ինչպիսիք են նորմատիվային համալրումը, հանդիպակաց ստուգումները, գույքագրումը, չափագրումները, փաստաթղթերի տրամաբանական ու փորձագիտական վերլուծությունը և այլն¹:

Մասնակի ստուգումը հարկային մարմինների կողմից իրականացվող ստուգումների հիմնական տեսակն է և իրենից ներկայացնում է ար-

* Ներկայացվել է 28.11.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

տաքին փաստաթղթային, ստուգվող օբյեկտի կողմից իրականացվող գործունեության կամ գործառնությունների մի մասի, որոշակի պարտադիր ստուգում:

Դարձային մարմինների կողմից ուսումնասիրություն անցկացվում է միայն կոնկրետ հարցերով և ընտրանքային ձևով՝ պետական բյուջեի պարտավորությունների կատարման նկատմամբ օպերատիվ և իրական վերահսկողության ապահովման համար:

Ստուգումների և ուսումնասիրությունների կազմակերպման նպատակով հարկային պետական տեսչության մարմնի դեկավար ստուգման վերաբերյալ հրապարակում է հրաման, կարգադրություն կամ հանձնարարագիր, որտեղ նշվում են ստուգումն իրականացնող հարկային մարմնի անվանումը, պաշտոնատար անձի պաշտոնը, անուն, ազգանունը: Հանձնարարագրի բնօրինակը ներկայացվում է ստուգվող օրյեկտի դեկավարին, իսկ երկրորդ օրինակը, վերջինիս կողմից ստորագրվելուց հետո, եթակա է դարձնան հարկային մարմին:

Ուսումնասիրության անցկացման դեպքում հարկային մարմնի դեկավար հրապարակում է ուսումնասիրության մասին հանձնարարագիր, որտեղ նշվում են ուսումնասիրության ժամկետը, նպատակը, հարկային մարմնի անվանումը, հարկային տեսուչի ազգանուն, անուն, հայրանունը: Այն ծանուցման նպատակով ցույց է տրվում օրյեկտի դեկավարին:

Ստուգումներն ու ուսումնասիրություններն իրականացվում են միայն հանձնարարագրում նշված նպատակների հետ առնչվող հարցերի շրջանակներում²: Անհրաժեշտության դեպքում, ստուգումն իրականացնող հարկային մարմնի պաշտոնատար անձի (հարկային տեսուչ) գրավոր հիմնավորմանը, հարկային մարմնի դեկավարը սահմանված կարգով կարող է լրացնմ կատարել նախկին հանձնարարագրի մեջ և փոխել ստուգման նպատակը: Ստուգումների ժամկետը կարող է սահմանվել ոչ ավելի, քան 15 անընդեմ աշխատանքային օրը: Կոնկրետ ժամկետը նշվում է հանձնարարագրի մեջ և անհրաժեշտության դեպքում, հարկային պետական տեսուչի գրավոր հիմնավորմանը, կարող է երկարաձգվել մինչև 10 անընդեմ աշխատանքային օր, տարվա արդյունքով 3,0 մլրդ դրամ և ավելի իրացման շրջանառության կամ համախառն եկամուտ հայտարարագրած տնտեսվարող ստրյեկտի մոտ մինչև 75 անընդեմ աշխատանքային օր:

Գործող օրենսդրությունը հատուկ ուշադրու-

թյան է արժանացնում հատկապես փոփոխություններ կատարելու կարգի գործունեությանը, ըստ որի՝ փոփոխությունների մասին պետք է տեղյակ պահպես ստուգվող օրյեկտների դեկավարները: Միևնույն ստուգվող օրյեկտում իրականացվող ստուգումների պարբերականությունը սահմանում է հարկային մարմինը: Ընդ որում, ստուգվող օրյեկտում տարվա ընթացքում մեկից ավելի ստուգումն իրականացվում է ՀՀ հարկային տեսչության թույլտվությամբ, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ բան չի նախատեսված:

Միևնույն ստուգվող օրյեկտում հարկային մարմինների կողմից ֆինանսատնտեսական գործունեության համալիր ստուգումներ, որպես կանոն, կարող են իրականացվել տարեկան ոչ ավելի, քան մեկ անգամ: Ֆինանսատնտեսական գործունեության վերաստուգումներ անցկացնելու կարգը և վերստուգման հասկացությունը սահմանված է օրենքի 5-րդ հոդվածում, որտեղ թարկված են վերստուգումները անցկացնելու իրավական հիմքերը:

Որպես կանոն ֆինանսատնտեսական գործունեության վերաստուգումները կարող են իրականացվել բացառապես ՀՀ վարչապետի գրավոր հանձնարարությամբ վերադաս մարմնի խնդրանքով, դ) եթե օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված են նախորդ ստուգողի այն հանցավոր գործողությունները, որոնք նա թույլ է տվել ստուգումն կատարելիս և այլ հիմքերով, որոնք սահմանված են հիշյալ օրենքով:

ա) տնտեսվարող ստրյեկտը լուծարելիս, բ) տնտեսվարող ստրյեկտի դեկավարի խնդրանքով, գ) ՀՀ վարչապետի գրավոր հանձնարարությամբ վերադաս մարմնի խնդրանքով, դ) եթե օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված են նախորդ ստուգողի այն հանցավոր գործողությունները, որոնք նա թույլ է տվել ստուգումն կատարելիս և այլ հիմքերով, որոնք սահմանված են հիշյալ օրենքով:

Ստուգումների անցկացման կարգը սահմանող իրավական ակտերում պարզեցված են ստուգման կազմակերպման գործմեթացները, սահմանված են ստուգման օրյեկտի պաշտոնատար անձի ու հարկային տեսուչության իրավունքներն ու պարտավանությունները:

Այսպես, սահմանված է, որ ստուգում անցկացնող անձը՝

ա) տնտեսվարող ստրյեկտի ներկայացուցչի մասնակցությամբ անարգել մուտք է գործուն տնտեսվարող ստրյեկտի ստուգվող ստորաբաժնումները.

բ) իրավունք ունի պահանջել փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկություններ, բացատրություններ, տեղեկանքներ, որոնք անմիջականութեն առնչվում են իրենց իրավասության շրջանակներում իրականացվող ստուգման նպա-

տակներին.

գ) անհրաժեշտության դեպքում ստուգումներին ներգրավել տնտեսական սուբյեկտի մասնագետներին՝ տնտեսվարող սուբյեկտի դեկավարի կամ նրան փոխարինող անձի համաձայնությամբ.

դ) սահմանել ժամկետներ՝ բացահայտված այն թերությունների և խախտումների համար, որոնք չեն առաջացնում քրեական կամ վարչական պատասխանատվություն.

ե) Վերցնել փաստաթղթեր, կրկնօրինակներ, լուսապատճեններ, իրեր, փորձանոնուշներ և այլ անհրաժեշտ նյութեր, որոնք անմիջականորեն առնչվում են ստուգման նպատակներին և չեն խոչընդոտում սուբյեկտի բնականոն աշխատանքին: Փաստաթղթերը Վերցնելիս ստուգում իրականացնող պաշտոնատար անձինք կմիզով կնքում են դրանց կրկնօրինակները և հանձնում տնտեսվարող սուբյեկտի ներկայացուցիչներին.

զ) իրականացնել ստուգման նպատակի հետ կապված չափագրումներ, կշռող, չափող և նմանատիպ այլ սարքեր ու սարքավորումների շահագործման ճշտության հսկիչ ստուգումներ.

է) ստուգվող տնտեսվարող սուբյեկտի կողմից դրամական գործառնություններ կատարելու, հաշվետվությունների և հաշվարկներ կազմելու ճշտությունը հիմնավորելու նպատակով իրականացնել գործարքի մյուս կողմի մոտ հանդիպակաց՝ միայն տվյալ գործարքի կատարման օրինականության ստուգումներ.

ը) ստուգման հրամանում նշված հարցերի շրջանակներում տնտեսվարող սուբյեկտի դեկավարից կամ նրան փոխարինող անձից պահանջել անցկացնելու հիմնական ֆոնդերի, ապրանքանյութական արժեքների, դրամական միջոցների և հաշվարկների գույքագրումներ: Գույքագրում կատարելիս ներգրավել տնտեսվարող սուբյեկտի համապատասխան աշխատակիցների և մասնագետների.

թ) անհրաժեշտության դեպքում գույքի նկատմամբ իրավունքներ գրանցող, հարկային, մաքսային և այլ պետական մարմիններից, կազմակերպություններից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահանջել սուբյեկտի գործարքների հաշիվների շարժմի մասին տեղեկանքներ, փաստաթղթերի պատճեներ.

ժ) ստուգման ցանկացած փուլում առանձին հարցերի պարզաբանման նպատակով ստուգմանը ներգրավել տնտեսվարող սուբյեկտի կողմից իրականացվող տնտեսական գործունեության ոլորտի համապատասխան մասնագետների և քարգմանիչների:

Ստուգման անցկացնան կարգը սահմանող իրավական ակտերում կանայականությունները արգելելու նպատակով հստակեցվում են հարկային տեսուչի պարտականությունները: Այն է՝

ա) պահպանել ստուգման հետ առնչվող՝ ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.

բ) առանց տնտեսվարող սուբյեկտի պաշտոնատար անձի գրավոր համաձայնության չիրապարակել ստուգման ընթացքում հայտնի դարձած տնտեսվարող սուբյեկտի գործառնությունների Վերաբերյալ տեղեկությունները:

Օրենքում տեղեկության իրապարակում է համարվում տեղեկությունը բանավոր կամ գրավոր ձևով զանգվածային լրատվության միջոցներով կամ այլ կերպ իրապարակելով կամ տարածելով, երրորդ անձին կամ անձանց հայտնի դարձնելով: Յարկային տեսուչը պարտավոր է պահպանել տնտեսվարող սուբյեկտի օրենքներով կամ այլ իրավական ակտերով սահմանված իրավունքները և շահերը, չխոչընդոտել տնտեսվարող սուբյեկտի բնականոն աշխատանքին: Իրենց իրավունքներին և պարտականություններին ծանոթացնել տնտեսվարող սուբյեկտի պաշտոնատար անձանց: Ստուգման ընթացքում գրավոր պատասխանել տնտեսվարող սուբյեկտի դեկավար կամ նրան փոխարինող անձի՝ անմիջականորեն տնտեսվարող սուբյեկտի ստուգվող ժամանակաշրջանին վերաբերող ստուգման հետ առնչվող ցանկացած գրավոր հարցման:

Յարկային տեսուչը իրեր, փորձանոնուշներ և այլ անհրաժեշտ նյութեր ժամանակավորապես վերցնելու դեպքում այդ մասին կազմում է արձանագրություն, որում նշվում է դրանց Վերադարձման ժամկետը: Արձանագրության մեկ օրինակը հանձնվում է տնտեսվարող սուբյեկտի դեկավարին կամ նրան փոխարինող անձին:

Ուստինասիրությունները վկայում են, որ հարկային ստուգումները կարգավորող իրավական ակտերում սահմանափակ անդրադարձ է կատարվում հարկային ծառայողի պատասխանատվության ենթակելու իրավական կարգավորման հարցերին: Օրենքի վերլուծումից երեսում է, որ ստուգումն իրականացնող անձինք պատասխանատվություն են կրում ժամանակավորապես վերցրած փաստաթղթերի, իրերի, փորձանոնուշների և այլ անհրաժեշտ նյութերի որակական և քանակական անբողջականւթյան պահպանման ու սահմանված ժամկետում վերադարձման համար: Օրենքում պատասխանատվության սահմանան փոխարեն սահմանան գործողությունների և հարկային տեսուչի գործողություններ-

րում սահմանափակող գործողություններ, որոնք շատ հաճախ իրավախախտման հիմք են:

Արգելվում է ստուգման ընթացքում կապարակներ պահեստներ, շինություններ, դրամարկեր, եներգիայի աղբյուրներ, սարքավորումներ, սարքեր և այլն, բացառությամբ հարկային նարմնի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվող գույքագրման և չափագրման դեպքերի, եթե դրանք չեն խոչընդոտում տնտեսվարող սուբյեկտի բնականոն աշխատանքին: Դարձային ստուգումների կազմակերպման օրենսդրությամբ սպառչի թվարկված են տնտեսվարողների իրավունքները: Ստուգումների ընթացքում տնտեսվարող սուբյեկտի պաշտոնատար անձինք իրավունք ունեն:

ա) արգելվ ստուգումը (ստուգումն իրականացնող անձանց փաստաթղթեր տրամադրելը), եթե ստուգողները խախտել են սույն օրենքի 3 և 4 հոդվածների պահանջները՝ այդ մասին նույն օրը գրավոր ժամուցելով ստուգում իրականացնող պետական մարմնին.

բ) ծանոթանալ ստուգումների ակտերին.

գ) ներկայացնել բացառություններ, պարզաբնումներ, հարուցել միջնորդություններ, օրենքով սահմանված կարգով բողոքարկել ստուգումն իրականացնող անձանց գործողությունները.

դ) պահանջել ստուգումն իրականացնող անձանց ապօրինի գործողությունների հետևանքով պատճառված վճար հատուցում.

ե) չկատարել ստուգումն իրականացնող անձանց իրավասություններից, ինչպես նաև ստուգման նպատակներից և ծրագրերից չբխող պահանջներ.

զ) ստուգով տնտեսվարող սուբյեկտի շահերի պաշտպանության նպատակով՝ ստուգման ցանկացած փուլում ստուգմանը մասնակից դարձնել մասնագետների, փորձագետների, առլիդուրների, փաստարանների:

Օրենսդրությամբ կարգավորված է նաև տնտեսվարող սուբյեկտի պաշտոնատար անձանց պարտականությունները:

Տնտեսվարող սուբյեկտի պաշտոնատար անձինք պարտականություն են՝

ա) չխոչընդոտել ստուգումների ընթացքին, կատարել ստուգումն իրականացնող անձանց օրինական պահանջները.

բ) ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի պահանջով ներկայացնել պահանջվող փաստաթղթերը, տվյալները, տրամադրել դրանց լրացածատենները (լրացածատենահանձնան ծախսերը կատարվում են ստուգումն

իրականացնող մարմնի կողմից), կրկնօրինակները և այլ տեղեկություններ: Պահանջը վերանյելուն պես, բայց ոչ ուշ քան 3 տարուց, փաստաթղթերը վերադարձվում են տնտեսվարող սուբյեկտին.

գ) անհրաժեշտ պայմաններ ստեղծել ստուգումն իրականացնող անձանց գործունեության համար.

դ) սահմանված ժամկետում վերացնել ստուգման արդյունքների թերությունները և խախտումները՝ այդ մասին գրավոր հայտնելով ստուգող մարմնին:

Ստուգման արդյունքները ամփոփվում են ստուգման ակտով, որը իրավական փաստաթուղթ է:

Արդյունքներով կազմվում է ակտ՝ երկու օրինակից, եթե տնտեսվարող սուբյեկտն ունի պետական բաժնեմաս՝ երեք օրինակից, խախտումներ և թերություններ չհայտնաբերելու դեպքում կազմվում է տեղեկանք, որում արձանագրվում են տեղեկանքը կազմելու ամսաթիվը ու տեղը, ստուգումն իրականացնող համապատասխան պետական մարմնի և տնտեսվարող սուբյեկտի անվանումները, ստուգող պաշտոնատար անձանց կազմը, ստուգման նպատակը, ժամկետը, արդյունքները, ակտի դեպքում տնտեսվարող սուբյեկտի ներկայացուցիչների բացառությունները (հասուկ կարծիքը), օրինակների քանակը և հերթական համարը:

Ստուգման ակտում պետք է նկարագրվեն արձանագրված խախտումները, այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել, խախտման կոնկրետ ժամանակը, հորում՝ համապատասխան փաստաթղթերին, պատասխանատվության կիրառման համապատասխան իրավական հիմքերը:

Եթե ստուգման ընթացքում արձանագրված խախտումները և դրանց հիմնա վրա տնտեսվարող սուբյեկտին առաջադրված պատասխանատվությունը հիմնվում է համանման պայմաններում գործող այլ սուբյեկտների կողմից կամ նրանց միջև կիրառված գների վերաբերյալ ստուգումն իրականացնող մարմնի կողմից կատարված համեմատական ուսումնասիրությունների և վերլուծությունների վրա, ապա ստուգման ակտին կցվում է նաև նշված ուսումնասիրության և վերլուծության վերաբերյալ տեղեկանքը:

Կազմված ակտում ստուգումն իրականացնող անձինք 3 օրվա ընթացքում պետք է ներկայացնեն տնտեսվարող սուբյեկտի դեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնարար անձին:

Սուուզման արդյունքներով քաջական պահանջման մեջ առաջարկ է առնելու համար այս պահանջմանը:

Ορθεύσητοι τελείωμαρά μαρτυρώνται ότι η απόφαση που πήραν οι δύο στρατηγοί ήταν αποτέλεσμα της επιθυμίας της Ελλάδας να πάρει την πόλη της Καρδίτσας και να αποτελέσει την πρώτη βάση για την επέκταση της ελληνικής δικαιοδοσίας στην Αχαΐα.

Օրենքի պահանջների խախտմամբ ստուգումն իրականացնող անձինք պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կազով:

Սուլուզում իրականացնող անձանց գործողություններն օրենքով սահմանված ժամկետներում կարող են բողոքարկել այն պետական

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45 46 47 48 49 50 51 52 53 54 55 56 57 58 59 60 61 62 63 64 65 66 67 68 69 70 71 72 73 74 75 76 77 78 79 80 81 82 83 84 85 86 87 88 89 90 91 92 93 94 95 96 97 98 99 100

մարդնին, որին անմիջականորեն ենթարկվում է ստուգող անձը, կամ դատապան: Տնտեսվարող սուբյեկտի դեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը մինչև բողոքի նկատմամբ պատասխան ստանալը կարող է թույլ չտալ շարունակելու ստուգումը:

Բղողոքները վերադասության կարգով քննության են առնվազամ և դրանց վերաբերյալ որոշումներն ընդունվում են ոչ ուշ, քան բողոքը ստացվելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում: Նշված ժամկետու բողոքի վերաբերյալ պատասխան չտրվելու դեպքում բողոքում բերված փաստարկները համարվում են ընդունված: Սահմանված ժամկետի հաշվարկը սկսվում է գրավոր բողոքը պատասխան նարնուու նույտքագրվելու օրվան հաջորդող առաջին աշխատանքահին օրվանից:

Եթե զնորդնավա որոշման հետ տնտեսվարող սուբյեկտը չի համաձայնում, դեկավար կամ նրան փոխարինող պայտնատար անձն իրավունք ունի բռոքարկել ռատարան:

Սուուզումն իրականացնող մարմինների ապօրինի գործողությունների հետևանքով տնտեսվարող սուբյեկտին պատճառված վճարելով, այդ թվում նաև բաց թողնված օգուտները, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Եւթակա են հատուցման պետական բյուջեի միջոցների հաշվին «ՀՀ բյուջենտային համակարգի մասին» ՀՀ օրենքով նախադեսված ժամկետում:

¹ Стін міжнародними Усєва И. П., Реформирование института налогоового контроля в сфере косвенного налогообложения, 2004.

² Տես Գ. Ա. Սովորայան, Ա. Ք. Օսիկյան, Ն. Գ. Սովորայան, Յարկային իրավունք (ուսումնական ձեռնարկ), Երև.՝ «Իրավունք», 2012, էջ 224:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՌԱՋԱՆՔԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Նախիրի ՍԱՐԳՍՅԱՆ

Երևանի «ԱԱԾ» համալսարանի հայցորդ



Ժամանակակից պետությունների ֆինանսական գործունեությունը չափազանց բարդ է, որի հրականացմանը մասնակցում են պետական ապարատի բազմաթիվ մարմիններ: Ֆինանսական վերահսկողության հրականացումը ինքնանձատակալ չէ, քանի որ դրա հրականացման ընթացքում ստուգվում են ֆինանսական գործունեության ֆինանսահրավական հարաբերությունների սուբյեկտների կողմից օրինականության պահպանումը և իրականացվող գործողությունների տնտեսական հիմնավորվածությունը ու արդյունավետությունը, դրանց համապատասխանությունը պետության խնդիրներին:

Ֆինանսական վերահսկողության հրավական կարգավորման շուրջ իրավաբանական գրականության մեջ ինչպես ժամանակին, այսպես էլ այսօր հրավագետների շրջանում կարծիքների միասնականությունը բացակայում է: Խոսքը իիմնականում վերաբերում է ֆինանսական գործունեության տեսակներին, իրականացման ձևերին և մերուներին:

Այսպես, իրավագետներից Ե. Ս. Վոզնեսենսկին ֆինանսական վերահսկողությունը, կախված վերահսկողության սուբյեկտներից, դասակարգում է երկու խմբի՝ պետական և հասարակական: Անդրադառնալով վերահսկողության օբյեկտների առարկայական առանձնահատկություններին՝ նա գտնում է, որ դրանք բազմազան են, օրինակ՝ ֆինանսական, հաշվապահական, վիճակագրական, սամիտարահիգիենիկ և այլ բնույթի:

Ներկայումս իրավաբան գիտնականները այն կարծիքին են, որ ֆինանսական վերահսկողության տեսակների համակարգում առաջին պլանի վրա պետք է քննարկել ֆինանսական վերահսկողության հրականացումը ըստ վերահսկողություն իրականացնող մարմինների:

Ֆինանսական իրավունքի գիտության ոլորտում այս չափանիշով ֆինանսական վերահսկողությունը բաժանում են.

1. Համապետական ֆինանսական վերահսկողություն, որն իրականացվում է պետական իշխանության և կառավարման բարձրագույն ու տեղական մարմինների կողմից

2. Ներգերատեսչական ֆինանսական վերահսկողություն

3. Վրտագերատեսչական ֆինանսական վերահսկողություն

4. Ներտեղական

5. Առողիտորական

6. Համարակական ֆինանսական վերահսկողություն:

Պետական իշխանության և կառավարման համակարգի մարմինների կողմից իրականացվող վերահսկողությունը իր էությամբ համապետական ֆինանսական վերահսկողություն է²:

Սկսած ՀՀ ԱԺ և կառավարությունից, վերջացրած տեղական հճնակառավարման մարմիններով, ֆինանսական վերահսկողությունն իրականացվում է համապատասխան բյուջեներից, սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի և բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվությունների քննարկման, հաստատման և կատարման գործընթացում: Նրանք ստուգման են ենթարկում բոլոր տեսակի բյուջեներով ծախսերի օրինականությունը և նպատակահարմարությունը, բյուջեների եկամուտների նույնագումարությունը և համապատասխան ծախսերի լիիվ ու ժամանակին կատարումը:

* Ներկայացվել է 28.11.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

ՀՀ Սահմանադրության 77-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովը «Վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ»:

Ազգային ժողովը անհրաժեշտության դեպքում ցանկացած հարցի շուրջ կարող է ստեղծել ստուգող հանձնաժողովներ: Պետական և հասարակական բոլոր մարմինները, կազմակերպությունները և պաշտոնատար անձինք պարտավոր են կատարել այդ հանձնաժողովների պահանջները, ներկայացնել անհրաժեշտ փաստաթրեր և նյութեր:

Տնտեսական և սոցիալական զարգացման ծրագրերի և բյուջեի քննարկման ժամանակ բյուջետային և ջուրային հանձնաժողովները, պատգամավորները իրականացնում են արտադրական և ֆինանսական ցուցանիշների մանրամասն քննարկում, բացահայտում են ներքին ռեգերվմերը, ուղիներ են գտնում պլանավորված ծախսների առավել արդյունավետ օգտագործման համար: Ընթացիկ բյուջեների կատարման հաշվետվությունների հաստատման ժամանակ նրանք ստուգում են բյուջետային միջոցների օգտագործման ճշտությունը, վեր են հանում առանձին արտադրական կազմակերպությունների, նախարարությունների և գերատեսչությունների կողմից բյուջե կատարվող մուծումների բերակատարման պատճառները, առաջարկություններ են արվում նշված բերությունների վերացման ուղղությամբ:

Ազգային ժողովը պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը քննարկում և հաստատում է Վերահսկիչ պալատի եղրակացության առկայությամբ:

ՀՀ Վերահսկիչ պալատը ֆինանսական առողջություն (ուսումնասիրություններ և վերլուծություններ) իրականացնող մարմին է, որը հաշվետու է միայն Ազգային ժողովին:

Վերահսկիչ պալատի խնդիրներն են Ազգային ժողով ներկայացնել ուսումնասիրության արդյունքները, դրանց մասին տեղեկացնել կառավարությանը, յուրաքանչյուր կիսամյակի սկզբում տեղեկանք ներկայացնել Ազգային ժողովի պատգամավորներին նախորդ կիսամյակում պետական բյուջեի կատարման՝ այլ պետություններից, միջազգային կազմակերպություններից ստացած փոխառությունների և վարկերի օգտագործման, սեփականաշնորհման և ապապետականացման ծրագրի կատարման ընթաց-

քի մասին:

Վերահսկիչ պալատն իր խնդիրների իրականացման համար օժտված է համապատասխան իրավասություններով: Վերահսկիչ պալատը վերահսկում է ՀՀ պետական բյուջեի կատարումը, պետական բյուջեի եկամուտների մուտքի, պետական բյուջեի միջոցների, պետական արտարյուջետային ֆոնդերի օգտագործումը, ինչպես նաև պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմիններում բյուջետային հատկացումների օգտագործումը:

Վերահսկիչ պալատի ուսումնասիրությունների հիմնարար վրա պատրաստվում են համապատասխան տեղեկանքներ, արձանագրություններ և եղրակացություններ:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների պաշտոնատար անձինք պարտավոր են Վերահսկիչ պալատին ըստ պահանջի ներկայացնել տեղեկանքներ ու անհրաժեշտ այլ փաստաթրեր բյուջետային միջոցների օգտագործման վերաբերյալ և աշակեցնել Վերահսկիչ պալատի պաշտոնատար անձանց իրենց պարտականությունները տեղադրելիս: Վերոհիշյալ պաշտոնատար անձինք Վերահսկիչ պալատին կեղծ տեղեկություններ հաղորդելու, նրա պաշտոնատար անձանց պարտականությունների կատարմանը խոչընդոտելու դեպքում պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

ՀՀ Կառավարությունն իր լիազորությունների սահմանում վերահսկում է պետական բյուջեի կազմումը և կատարումը (ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդված, 2-րդ կետ), ապահովում է ֆինանսատեսական, վարկային և հարկային միասնական պետական քաղաքականության իրականացումը (ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդված, 4-րդ կետ):

ՀՀ Ֆինանսների նախարարությունը վերահսկում է պետական մարմինների, բյուջետային ֆինանսավորում ստացող հիմնարկների, կազմակերպությունների կողմից բյուջետային միջոցների ծիծու և նպատակային օգտագործումը, վերը նշված մարմինների կողմից ֆինանսական կարգապահության կանոնների պահանջների կատարումը և այլն: ՀՀ Ֆինանսների նախարարությունը պարբերաբար անցկացնում է ստուգումներ՝ նախարարություններում ֆինանսական կարգապահության, վերահսկիչ-վերստուգիչ աշխատանքի վիճակի կապակցությամբ: Դիշյալ նախարարությունն իրավունք ունի ստուգվող մարմիններից պահանջել անհրաժեշտ նյութեր, փաստաթրեր, հաշվետվություն-

ներ, նախահաշիվներ, անցկացնել ֆինանսական գործունեության ստուգում և վերստուգում, ստուգել կանխիկ դրամի առկայությունը, կարգապահության վերհանված խախտումների վերացման վերաբերյալ ցուցումներ տալ ստուգվող կազմակերպությունների դեկավարներին:

Բյուջետային հատկացումների ծիչտ ու նպատակին օգտագործման վրա վերահսկողությունը ֆինանսների նախարարությունն իրականացնում է իր կառուցվածքային ստորաբաժանման՝ ֆինանսական վերահսկողության տեսչության միջոցով: Ֆինանսական վերահսկողության տեսչությունը ստուգումներն իրականացնում է «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան: Վերոհիշյալ տեսչության վերատուգիչները կանոնադրությամբ իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում իրավունք ունեն.

Պետական պարտքի գնահատման, ճակրոտնեսական քաղաքականության և բյուջետային ծախսային քաղաքականության տեսանկյունից միջազգային ֆինանսական կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից տրամադրվող վարկային 7 դրամաշնորհային միջոցների ստացմանն ուղղված պետական մարմինների գործողությունների (միջազգային ֆինանսական կազմակերպություններից օտարերկրյա պետություններից վարկեր և դրամաշնորհներ ստանալու նախաձեռնությամբ հանդես գալու, դրանց ստացման վերաբերյալ առաջարկություններ, դիմումներ, խնդրանքներ ներկայացնելու, պայմանավորվածություններ ծեռք բերելու, համագործակցելու, բանակցելու և նման այլ նախաձեռնողական-նախապատրաստական գործողություններ) համակարգումն իր իրավասության սահմաններում հաշվի առնելով երկրի սոցիալ-տնտեսական քաղաքականությամբ որոշված գերակայությունները, վարկային և դրամաշնորհային ծրագրերի ֆինանսական ստուգումների իրականացումը, լիազորված են նաև օրենքով Հայաստանի Հանրապետության Կառավարությանը վերապահված լիազորությունների շրջանակներում հանայնքներում ֆինանսատնտեսական ստուգումների իրականացում, տեղական ինքնակառավարման մարմիններին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրամադրվող հատկացումների հաշվարկման համար ներկայացվող տվյալների արժանահավատության պարզումը:

Համայնքներում ֆինանսա-վերահսկիչ աշ-

խատանք են տանում տեղական ինքնակառավարման մարմինները: Այսպես, համայնքների ֆինանսական բաժնի հիմնական խնդիրներից մեկն իր ենթակայության կազմակերպությունների և հիմնարկների կողմից պետության հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու է: Այս խնդիրի իրականացման համար համայնքների ֆինանսական բաժնն իրավունք ունի հիմնարկներից, կազմակերպություններից ստանալ ֆինանսական պլանները, ծախսերի նախահաշիվները, համայնքի կամ քաղաքի բյուջեն կազմելու և կատարելու համար անհրաժեշտ այլ նյութեր, հաշվապահական հաշվետվություններ և հաշվեկշիռներ, որոնք անհրաժեշտ են համայնքի ֆինանսա-բյուջետային պլանավորման, կազմակերպությունների և հիմնարկների կողմից պետության հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունների կատարման և պետական ֆինանսական կարգապահության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար:

Ֆինանսական վերահսկողության իրագործման բնագավառում նշանակալից դեր են խաղում ՀՀ Կենտրոնական բանկը և բանկային համակարգի մյուս մարմինները:

Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության լիազորություններն ամրապնդված են նրա իրավական կարգավիճակը սահմանող՝ 1996 թ. հունիսի 30-ին ՀՀ Աժ-ի կողմից ընդունված «ՀՀ Կենտրոնական բանկի մասին», ինչպես նաև «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքների համապատասխան նորմերով:

Կենտրոնական բանկի կարգավիճակը, վերահսկիչ գործառույթներն ուղղված են հանրապետությունը գնի կայունության ամրապնդմանը, միասնական դրամավարկային քաղաքականությամբ նշանակմանը, վարկային համակարգի կայունության ապահովմանը և ավանդառությանը:

«ՀՀ Կենտրոնական բանկի մասին» օրենքի 5-րդ հոդվածում սպառիչ թվարկված են այն հիմնական խնդիրները, որոնց իրագործման համար կյանքի է կոչված բանկը: Այս խնդիրների մի մասը ուղղված է վճարահաշվարկային համակարգի գործունեության կարգավորմանը և վերահսկմանը:

Կենտրոնական բանկի վերահսկողության գործառույթները կարելի են բաժանել ներքին՝ ստուգական կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության և գործառույթների վերահ-

կում, և արտաքին, որն ուղղված է բանկային համակարգի և մյուս ֆինանսական մարզիների գործունեության մեջախմբանը³:

Կենտրոնական բանկը կառուցվածքային ստորաբաժանումների ֆինանսական գրոծումն-ությունը վերահսկելու նպատակով ստեղծում է վերատուգիշ խումբ, որը բանկի հատուկ ստորաբաժանումն է: Նա վերահսկողություն է իրականացնում բանկի ստորաբաժանումների նկատմանը, վերատուգում է ԿԲ-ի ճախսերի ճախահաշվի կատարումը, հաշվապահական հաշվառումը ու հաշվեները, բանկի ֆինանսական հաշվետվությունը և այլ նման փաստաթղթեր:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ բանկը հսկում է նաև արժութային գործառությունների իրականացումը:

Հանրապետության ԿԲ-ի արտադիմ վերահսկողությունը գործառույթները դրսենորվում են բանկային համակարգի մարմնների նկատմամբ: Բանկերի գործունեության վերահսկողությունը ԿԲ-ի բացարձիկ իրավասությունն է: Բանկը վերահսկում է հանրապետության տարածքում գործող բանկերի գործունեությունը, սահմանում է դրանց կողմից ԿԲ մերկայացվող հաշվետվությունների և տեղեկանքների ձևերը և դրանք ներկայացնելու կարգը:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 6-րդ գլուխը սահմանում է ԿԲ-ի կողմից բանկային համակարգի մարմինների հաշվեկշիռների, հաշվապահական հաշվետվությունների վերահսկողության հրականացման կարգը։ Նոյն օրենքի 57-րդ հոդվածը սահմանում է, որ բանկերի գործունեության նկատմամբ վերահսկողության բացարձիկ իրավունքը պատկանում է ԿԲ-ին։

ՀՅ բանկային համակարգի ցանկացած օդակում յուրաքանչյուր տարի բանկը ստուգվում է:

առողջիտային գրոթւնենություն իրականացնելու հրավունքը ունեցող անկախ առողջիտորային կազմակերպության կողմից: Անկախ առողջիտային կազմակերպություն նշանակում է Կենտրոնական բանկը⁴:

Ֆինանսավարկային կամ առևտորական բանկի մարմինների կողմից ֆինանսական օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում ՀՀ ԿԲ-ը «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի պահանջներին համապատասխան կարող է կիրառել այնպիսի պատժամիջոցներ, ինչպիսիք են նախազգուշացումը և խախտումները վերացնելու հանձնարարականը, տուգանքը, բանկի դեկավարներին որակավորման վկայականից գործելը, լիցենզիայի ուժը կորցրած ճանաչումը: ՀՀ Կենտրոնական բանկը պարտադիր ցուցումները էտալիս հայտնաբերված խախտումները որոշակի ժամկետներում վերացնելու մասին:

¹ Ще є міжнародна норма **Д.І. Уотерхауса**, **І. А. Уотерхауса**, «Фінансова стабільність та фінансовий розвиток» (последнє видання), відповідно до якої держави мають зобов'язання підтримувати фінансову стабільність та фінансовий розвиток. Це зроблено в **Директиві ЄС про фінансову стабільність та фінансовий розвиток** (2011/69/EU) від 14 березня 2011 року, ст. 111-112. Фінансове право (учебник, под. ред. проф. С. В. Запольцького), М., «Экцмо», 2006, с. 103-104.

² Стін міжуряджанії Е. А. Вознесенський, фінансовий контроль в ССРР, "Юридическая литература", М., 1973, с. 67-68. А. В. Румянцев, фінансовий контроль (курс лекцій). М., "Дело и Сервис", 2003, с. 18-20.

³ Տե՛ս մանրանասն Ա. Գ. Սոլքիայան, Բանկային իրավունք (ըստօլունական ծեռնարկ), Եր., «Իրավունք», 2009, էջ 86:

⁴ Տե՛ս «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 58 հիդվածը (Բանկային տեղեկագիր), 2007 թ. Ա.1. «Լողակա-Ալունք» ՍՊԸ, Եր., 2007:

LEGAL CHARACTERISTICS OF THE STATUS OF FINANCIAL REGULATION AND SUPERVISION BODIES

NAIRI SARGSYAN

Summary

"Legal characteristics of the status of financial regulation and supervision bodies" article places State Surveillance bodies in a separate section, whose scope of liabilities and authorities practically goes beyond the jurisdiction of executive bodies, and bypassing the administrative subordination, acts as special jurisdiction body, whose daily subject matter is handling of reviews on financial activities and surveillance.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀԱԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ*

Նախրի ՍԱՐԳԱՅԱՆ

Երևանի «ՍԱՆՅ» համալսարանի հայցորդ

Ծ ուկայական տնտեսության անցման
պայմաններում վերահսկողության
գործուն համակարգը հանդիս է զալիս
որպես տնտեսության կառավարման գործընթացի որակական վերափոխման կարևորագույն նախադրյալ։ Արդի պայմաններում վերահսկողությունը պետք է լինի ունիվերսալ, շարունակական և գործում ընդգրկելով պետական, տնտեսական և սոցիալ-մշակութային շինարարության բոլոր ոլորտները, ինչպես նաև անկողմնակալ լինի, ինչին կարենի է հասմել վերջինիս խնդիրները և գործառույթները դնելով գերատեսչական վերահսկողության արդյունքներով շահագրգուված մարմինների և անձանց վրա։ Այսօր վերահսկողական գործառույթներ իրականացնող յուրաքանչյուր անհատ պետք է գործի անձնական բարձր պատասխանատվությամբ։ Պետական վերահսկողության բոլով լինելը բացասաբար է անդրադառնում կառավարման աճքործ հաճակարգի վրա։ Սա ՀՀ տնտեսության մեջ առկա ծանր վիճակի գործններից մեկն է։ Թեև վերջին տարիներին շատ է խոսվում շարունակական տնտեսական աճի մասին, այդուհանդեռձ, օրինակ, բյուջետային պակասորդը և պետության արտաքին պարտքի հսկայական ծավալները պահանջում են արդյունավետ օգտագործել առկա բյուջենետային միջոցները և փնտրել բյուջեի համալրման նոր աղբյուրներ։ Այս առօլում վերահսկողական միջոցները բոլով են տալիս ի հայտ բերել բյուջենետային միջոցների ոչ արդյունավետ և ոչ նպատակային օգտագործման, օրենսդրության խախտումների հետևանքով բյուջեի եկամուտների կորստյան և օրենսդրության մեջ առկա բացերի օգտագործման փաստերը։ Վերահսկողական միջոցների արդյունքում է, որ պետական բյուջե են վերադարձվում զգալի չափով դրամական միջոցներ,

Կանխվում են հետազա կորուստները:

Վերահսկողության՝ որպես պետական կառավարման առանցքային գործառույթի հովանունը և նշանակությունը կայանում է համապատասխան ենթավերահսկվող օրելեկտի գործունեության հսկողության, դրանում օրինականության և կարգապահության վիճակի վերաբերյալ օրելեկտիվ և հավաստի տեղեկատվության ստացման, օրինականության և կարգապահության խախտումների կանչնման և վերացման, մեղավոր անձանց պատուախանատվության ենթարկելու ուղղությամբ միջոցների ձեռնարկման, իրավախախումների կատարմանը նաև ստոր պատճառների և պայմանների բացահայտման ներք:

Արդի ժամանակաշրջանում ՀՀ-ը տնտեսական հարաբերությունների զարգացման փուլում է, ինչը հույս է Եթեղնում, որ կզարգանա արտադրությունը, կավելանան Եթերումները, կնաքանակ սղածի տեմպերը. ինչը Վերջին հաշվով կիանքեցնի տնտեսության և պետական առողջացմանը: Դա իր հերթին ենթադրում է, որ զարգացման այսպիսի մակարդակի և ֆինանսական կայունացման հասնելը հնարավոր չէ առանց լավ և հուսալիորեն գործոն պետական ֆինանսական վերահսկողության ինստիտուտի, որն էլ հանդիսանում է պետական վերահսկողության բաղկացուցիչ և անքակտելի մասը: Շուկայական հարաբերությունների զարգացումը ոչ միայն չի հերքում պետական ֆինանսական վերահսկողության գոյության անհրաժեշտությունը, այլև բարդանում է՝ սոցիալական կողմնորոշման ուժեղացմանը գուգընթաց: Պետական մարմինների վրա են դրվում ավելի մեծ թվով գործառույթներ, հասարակության ֆինանսական իրավունքի և շահերի պաշտպանության, ֆինանսական չարաշահումների նախագօրուցացման և

* Ներկայացվել է 28.11.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

կանխման ձևերի ներդրման ուղղությամբ։ Ֆինանսական վերահսկողության իրավական կարգավորման արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ՀՀ զարգացման ժամանակակից փուլը բնութագրվում է պետական իշխանության ամրապնդման, տնտեսության կառավարման համակարգում պետության դերի բարձրացման, տնտեսության բնագավառում կորուպցիայի և իրավախախտումների դեմ պայքարի ուժեղացման միտումներով։ Այս կապակցությամբ, օբյեկտիվորեն մեծանուն է ֆինանսական վերահսկողության՝ որպես պետական կառավարման կարևորագույն գործառույթի դերը և նշանակությունը, հատկապես մշտական թերֆինանսավորման, բյուջետային պակասորդի և ընդհանրապես բարդ տնտեսական իրավիճակի արդի պայմաններում։ Ֆինանսների բնագավառում պետության անգամ ամենակատարյալ քաղաքանությունը չի հանգեցնի շոշափելի արդյունքների՝ առանց աղոյունավետ պետական ֆինանսական վերահսկողության, որը բոլոր տնտեսվարող սուբյեկտների ֆինանսական գործունեության նկատմամբ օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների, հնչանեն նաև հատուկ ստեղծված հաստատությունների կողմից իրականացվող վերահսկողությունն է յուրահատուկ մեթոդների օգնությամբ, որոնք թույլ են տալիս լուծելու առաջ քաշված խնդիրները։ Ֆինանսական վերահսկողությունը կոչված է պետության և բոլոր տնտեսվարող սուբյեկտների իրավունքի ու շահերի ապահովմանը, պետության ֆինանսական քաղաքականության իրացման, ֆինանսական կայունացմանն ուղղված պայմանների ստեղծմանը։ Այս առօտնով, ֆինանսական վերահսկողության իմանական խնդիրներն են ֆինանսական իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների կողմից պետության հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունների ու շահերի ապահովմանը, պետության ֆինանսական քաղաքականության իրացման, ֆինանսական կայունացմանն ուղղված պայմանների ստեղծմանը։ Այս առօտնով, ֆինանսական վերահսկողության միջազգային միասնական համակարգի սկզբունքներն են, որոնց հետ մեկտեղ, ֆինանսական վերահսկողության արտասահմանյան պրակտիկայում ծևավորվել են վերջինիս կազմակերպման այնպիսի ունիֆիկացված պահանջներ, ինչպիսիք են ցանկացած տեղեկատվության մատչելիությունը, կայունությունը, համալիրությունը, իրազեկությունը, բարեխոցությունը, ազնվակերպությունը, նախապատվությունը, տնտեսական արդյունավետությունը և օպտիմալացումը, որոնք հանդես են գալիս որպես ֆինանսական վերահսկողության արդյունավետ կազմակերպման պայմաններ։

Արդի պայմաններում ֆինանսական վերահսկողության կազմակերպումը ՀՀ-ում ունի բազմաթիվ թերություններ։ Ֆինանսական վերահսկողությունը կարիք ունի բարելավման, կատարելագործման և վերջինիս դերի ուժեղացման տնտեսական հարաբերությունների ողջ համակցությամբ։ Այս առօտնով, ֆինանսական վերահսկողության իրավական կարգավորման կատարելագործումը թույլ կտա նպատակային և արդյունավետ օգտագործել ֆինանսական ռեսուրսները, ինչպես նաև ֆինանսական հոսքերի շարժը՝ ուղարկողից հասցեատիրոջը՝ չվախենալով, որ ճանապարհին դրամական միջոցները հերթական անգամ «անհետ կլորշեն»։ Ֆինանսական վերահսկողության օպտագործումը կատարելագործումը կապատի նաև տնտեսվարող սուբյեկտների ֆինանսական գործունեության օրինականության ապահովմանը, հակարգավական արարթների, դրանց նպաստող պատճառների և պայմանների

մարմինների օրենսդրորեն անրագրված կազմակերպական, գործառնական և նյութական անկախությամբ, ֆինանսական վերահսկողության արդյունքների համբարդիանուր հասանելիությամբ, ֆինանսական վերահսկողության մարմինների գործունեության, օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխանությամբ և վերահսկողության նկատմամբ որևէ կամայականության բացառմանը, վերահսկիչ մարմինների եզրահանգումների կանխակալ լինելու բացառությամբ, ֆինանսական վերահսկողության յուրաքանչյուր սուբյեկտի վերահսկողական գործառույթների ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությամբ, վերահսկողության սուբյեկտի պարտականությունները դրա դրույթում կամաց անհամար կատարման մարմինների կամաց անհամար կատարման մարմինների յուրաքանչյուր սուբյեկտի վերահսկողական գործառույթների ոչ պատշաճ կատարման համապատասխան ծավալի սահմանմանը։ Մրանք արդի ժամանակաշրջանում ձևավորվող ֆինանսական վերահսկողության ստանդարտացման միջազգային միասնական համակարգի սկզբունքներն են, որոնց հետ մեկտեղ, ֆինանսական վերահսկողության արտասահմանյան պրակտիկայում ծևավորվել են վերջինիս կազմակերպման այնպիսի ունիֆիկացված պահանջներ, ինչպիսիք են ցանկացած տեղեկատվության մատչելիությունը, կայունությունը, համալիրությունը, իրազեկությունը, բարեխոցությունը, ազնվակերպությունը, նախապատվությունը, տնտեսական արդյունավետությունը և օպտիմալացումը, որոնք հանդես են գալիս որպես ֆինանսական վերահսկողության արդյունավետ կազմակերպման պայմաններ։

Արդի պայմաններում ֆինանսական վերահսկողության կազմակերպումը ՀՀ-ում ունի բազմաթիվ թերություններ։ Ֆինանսական վերահսկողությունը կարիք ունի բարելավման, կատարելագործման և վերջինիս դերի ուժեղացման տնտեսական հարաբերությունների ողջ համակցությամբ։ Այս առօտնով, ֆինանսական վերահսկողության իրավական կարգավորման կատարելագործումը թույլ կտա նպատակային և արդյունավետ օգտագործել ֆինանսական ռեսուրսները, ինչպես նաև ֆինանսական հոսքերի շարժը՝ ուղարկողից հասցեատիրոջը՝ չվախենալով, որ ճանապարհին դրամական միջոցները հերթական անգամ «անհետ կլորշեն»։ Ֆինանսական վերահսկողության օպտագործումը կատարելագործումը կապատի նաև տնտեսվարող սուբյեկտների ֆինանսական գործունեության օրինականության ապահովմանը, հակարգավական արարթների, դրանց նպաստող պատճառների և պայմանների

ի հայտ բերմանը և Վերացնանը: Արդիական է նաև պետական ֆինանսական վերահսկողության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրը, որը, մեր կարծիքով, պետք է լուծվի համակարգային նոտեցմանը: Այս ամենով է ներկայում պայմանավորված ֆինանսական վերահսկողության իրավական կարգավորման լուսաբանումներում վերահսկողության հիմնախնդիրների հանդեպ իրավագետների ուշադրությունը:

ՀՀ տնտեսության զարգացման ժամանակակից պահանջները առաջին պահն մղելով ֆինանսական վերահսկողությունը՝ վերջինս առաջարկում են երկու հիմնական խնդիր՝

1. Ապահովել օրինականության պահպանում ֆինանսական գործունեության ընթացքում:

2. Դասնել այն բանին, որ կազմակերպությունների ֆինանսական գործունեությունը հանապատճախանի ոչ միայն օրենքին, այլև իր էռթյանը կրի ամենից առավել արդյունավետ և նպատակասլաց բնույթը:

Այսպիսով, ֆինանսական հսկողությունը հսկողություն է պետական դրամական միջոցների պլանային հաշվառման, բաշխման և օգտագործման գործընթացում կատարվող բոլոր միջոցների օրինականության և նպատակաւացության վրա²: Ֆինանսական կարգապահության հիմնական պահանջներն են՝ ապահովել օրինականության պահպանումը ֆինանսական գործունեության մեջ, հասնել այն բանին, որ բոլոր կազմակերպություններն ու քաղաքացիները կատարեն ֆինանսական հարցերով եղած բոլոր օրենքները, որոշումները և կարգադրությունները, բույլ չտան ֆինանսական կարգապահության խախտում: Ֆինանսական կարգապահության բովանդակությունը կազմող պահանջները հիմնականում հանգում են հետևյալին.

1. Բոլոր կազմակերպությունների ու քաղաքացիների կողմից բյուջե վճարումներ կատարելու պարտականությունները կատարվեն ժամանակին և լրիվ:

2. Կազմակերպությունների և հիմնարկների պետական և սեփական միջոցների ծախսումը իրականացնել խիստ նպատակային կարգով՝ ֆինանսական մարմնի կողմից սահմանված շրջաններում, ըստ պլանների բանակային ու որակային ցուցանիշների փաստացի կատարողականի, առավել տնտեսմամբ ու արդյունավետությամբ:

3. Բանկային վարկերի խստիվ նպատակային օգտագործումը և դրանց ժամանակին ու

լրիվ նարումը:

4. Կազմակերպությունների միջև դրամական հաշվարկների կատարման կարգի խստիվ պահպանումը:

5. Բոլոր կազմակերպությունների և պաշտոնատար անձանց կողմից հավաքվող կամիսիկ դրամի լրիվ և ժամանակին հանձնումը բանկային հաստատություններին և կազմակերպության դրամարկերի:

Ֆինանսական գործողությունների նպատակայնությունը բացի այս եղանակներից, ապահովում է նաև դրամով վերահսկողության միջոցով:

Դրամով հսկողությունը կազմակերպությունների տնտեսական-ֆինանսական գործունեության հսկողությունն է, այնպիսի արժեքային կատեգորիաների օգնությամբ, ինչպիսին է շահույթը, ինքնարժեքը, գինը և այլն, ինչպես նաև վարկավորման, ֆինանսավորման և հաշվարկների համակարգի միջոցով:

Միա համար բազա է հանդիսանում տնտեսական կազմակերպությունների գործունեության իրականացման մեթոդ՝ առևտրային հաշվարկը:

Դրամով հսկողությունը՝ մի կողմից, նպատակ ունի բացահայտել աշխատանքի արդյունքները և որակը, մյուս կողմից՝ մերագղել կազմակերպության և նրա աշխատողների վրա՝ թերությունները վերացնելու նպատակով: Դրամով վերահսկողության համար նախադրյալ է հանդիսանում այն հանգամանքը, որ դրամական նուտքերը ստացվում են կազմակերպության կողմից պլանի բանակական և որակական ցուցանիշների կատարմանը զուգընթաց: Այն դեպքում, եթե հաշվարկները աշխատողների հետ, բյուջե կատարվող վճարումները, բանկային վարկերի վերադարձը ըստ օրացուցային պլանի ժամկետավորվում է կազմակերպության հաշվարկներում դրամական միջոցների բացակայությունը, բանվորներին և ծառայողներին պարտը մնալը, բյուջե ժամանակին վճարումները չկատարելը, բանկային վարկերը ժամանակին չվերադարձնելը, մատակարարների հետ ժամանակին հաշվարկները չկատարելը ահազանգ են կազմակերպության գործունեության անբավարար վիճակի մասին և առաջ են քաշում ֆինանսական վիճակի բարելավման նպատակով գործնական միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը:

Ներկա հասարակական կյանքում հաշվառմն ու վերահսկողությունը դեռևս բնորոշված են տնտեսական օրենքների պահանջներով:

Դաշվառումը ամբողջ տնտեսության պլանային համաչափ զարգացման գործոններից մեկն է: Վերահսկողությունն անհրաժեշտ է, որպեսզի հնարավոր լինի պարզել, թե որքանով է արտադրությունը համապատասխանում տնտեսական պլաններին և խնայողության ռեժիմի պահանջներին:

Ծովայական հարաբերություններում դրանք, ինչպես հայտնի է, աշխատանքի ծախսումների զատ քանակի ու որակի հաշվառման և հասարակական արդյունքի բաշխման համապարփակ ձևն է:

Դաշվառումը և վերահսկողությունն անհրաժեշտ են ոչ միայն նյութական արտադրության մեջ նյութական և դրամական միջոցների ծախսման գործում, այլև, ամբողջ հասարակական կյանքում: Կ. Ի. Լենինը նշում է. «Մեզ պետք է մարդկանց պիտանիության ստուգում փաստական կատարման ստուգում... Ստուգել մարդկանց և ստուգել գործի փաստական կատարումը՝ այս է, դարձյալ այս է, միմիայն այս է այժմ ամբողջ աշխատանքի, ամբողջ քաղաքականության մեխը»³:

Կ. Ի. Լենինի այս կարծիքը մինչև այժմ էլ չի կորցնում իր կենսունակությունը:

Պետական հաշվառման ու վերահսկողության ընդհանուր համակարգում կարեոր տեղ է պատկանում ֆինանսական վերահսկողությանը: Նրա միջոցով է իրագործվում սեփականության ձերի պաշտպանությունը, ֆինանսական բյուջետային կազմապահության անրապես միջոցները, հասարակության նյութական միջոցների խնայողությունը: Ֆինանսական վերահսկողության նշանակությունն առանձնապես մեծանում է ժամանակակից հասարակության կառուցման ժամանակաշրջանում:

ՀՀ-ում հասարակությունն ունի համաժողովրդական ֆոնդեր, ուստի մեծանում է հաշվառման ու վերահսկողության դերը զարգային հարստության պահպանման և ճիշտ օգտագործման գործում: Ժողովրդին պատկանող յուրաքանչյուր դրամի խնայողական, ռացիոնալ օգտագործումը, միջոցների հնտորեն ծախսումը, ճիշտ կազմակերպված դեկավարման և տնտեսավարման մերժումների անշեղությունը (կազմակերպական և գիտակցական), օրինականության և կարգապահության բարձրացումը, ժողովրդական նախաձեռնության զարգացումը հասարակական արտադրության արագացման հեղոր աղբյուրներ են հանդիսանում:

Տնտեսության բնագավառում իրագործվող

ֆինանսական վերահսկողությունը բազմաձև է: Նրա մեթոդներով ստուգման են ենթարկվում առևտորահաշվարկային կազմակերպությունների ֆինանսական պլաններն ու բյուջետային հիմնարկությունների նախահաշիվները, որպեսզի թույլ չտրվեն ոչ նպատակահարմար բարձրացված ծախսեր ու նվազեցված եկամուտներ և պարզել, թե արդյոք հաշվի են առնվել արկա արտադրական հնարավորությունները: Տնտեսական տարվա ընթացքում կազմակերպություններում վերահսկման են ենթարկվում արտադրական պլանների կատարումը, թողարկվող արտադրանքի հնարավորությունը, շահույթի, բյուջեն կատարվելիք վճարումների պլանները: Ստուգման են ենթարկվում նաև խնայողության ռեժիմի պահպանումը, թե որչափ նպատակահարմար են օգտագործվում բյուջետային ու սեփական միջոցները, նյութական արժեքների օգտագործումն ու պահպանումը⁴:

Ֆինանսական վերահսկողության մեջ է մտնում նաև տարբեր ֆոնդերի, ինչպես նաև փոխառու միջոցների օգտագործման ստուգումը, տնտեսության ներքին ռեզերվների բացահայտումը, դրանց օգտագործումը արտադրության աճման և կուտակումների մեծացման համար: Ֆինանսական վերահսկողության օգնությամբ ոչ միայն բացահայտվում են պետական, տնտեսական ու ֆինանսական կարգապահության խախտումները, այլև կանխվում են, նախատեսվում են տնտեսավարման կատարելագործման ուղիները:

Այսպիսով, ֆինանսական վերահսկողությունը կարեոր լօսակ է նյութական և դրամական միջոցների արդյունավետ և խնայողաբար օգտագործման, սոցիալ-տնտեսական ծրագրերով նախատեսվող առաջադրանքների կատարման համար: Լավ կազմակերպված, բազմակողմանի վերահսկողությունը բարձրացնում է յուրաքանչյուր աշխատողի պատասխանատվությունն իր տեղամասի աշխատանքի համար, նպաստում արտադրական և տնտեսական ծրագրերի կատարմանը:

Ֆինանսական վերահսկողության հետ անխցիկորեն կապված է բոլոր կազմակերպությունների կողմից պետական կարգապահությանը և կառավարության կողմից ընդունված օրենքներն ու սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը կատարելու պահանջը:

Ծովայական հարաբերությունները օբյեկտիվորեն պայմաններ են ստեղծում ֆինանսական վերահսկողության դերի և նշանակության

սահմանափակումների համար, քանի որ ինչպես նյութական բարիքների արտադրության, այնպես էլ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների անմիջական վերահսկողությունը գտնվում է արտադրության միջոցների սեփականատերերի ձեռքին:

Գոյություն ունի արտադրական և առևտրական գործունեության զաղտնիություն, որը հնարավորություն է տալիս սեփականատիրոջը թաքցնել իրական եկամուտները:

Պետական և հասարակական ֆինանսական վերահսկողության աճող նշանակությունն իր օրենսդրական ամրապնդումն է ստացել հասարակական կյանքում:

Որոշված են հանրապետության նախագահին կից վերահսկողության մարմինների ծևավորման և ստուգումների անցկացման կարգը, Սահմանադրությամբ ամրապնդված է Աժ և կառավարության լիազորությունները բյուջեի նախագիծի քննարկման, նախորդ՝ տարիների բյուջեների կատարման հաշվետվությունների հաստատման ուղղությամբ: Սահմանադրական այս լիազորությունները վկայում են պետական ֆինանսական վերահսկողության անհրաժեշտությունը ազգային պետականության ամրապնդման գործնքացում: Այսօր հատուկ դեր ունի ֆինանսական վերահսկողությունը պետական կառավարման բնագավառում, քանի որ վերջին իրենից ներկայացնում է ամենօրյա պետական գործունեություն, որն ընդգրկում է հասարակական կյանքի առավել կարևոր ոլորտները:

Պետական վերահսկողությունն իրականացվում է գործադիր իշխանության բոլոր ուղղություններով, նրա բոլոր մարմինների կողմից իրենց և նրանց ենթակա օբյեկտների առաջ դրված խնդիրների ամենօրյա իրագործման ընթացքում: Այն կոչվում է պետական, քանի որ իրականացվում է պետության անունից՝ համապատասխան իրավական և իշխանական լիազորություններից օգտվելու հիման վրա:

Այսօր, ելեկով վերահսկող և վերահսկվող օբյեկտների կազմակերպական փոխհարաբերություններից՝ կարելի է տարրերել.

1. Ներքին (ներգերատեսչական) ֆինանսական հսկողություն

2. Արտաքին (արտագերատեսչական) ֆինանսական հսկողություն

Ներքին վերահսկողությունն իրականացվում է նոյն համակարգի մարմինների և արտաքին կազմակերպորեն ենթակա օբյեկտների նկատմամբ:

Ֆինանսական վերահսկողության միջոցով իրագործվում է սեփականության տարրեր ձևերի պաշտպանությունը, ֆինանսական-բյուջետային կարգապահության ամրապնդումը, հասարակության նյութական միջոցների խնայողությունը:

Ֆինանսական վերահսկողության բովանդակության մեջ մտնում է բոլոր գերատեսչությունների, կազմակերպությունների և հիմնարկների արտադրատնօսական և ֆինանսական գործունեության, ինչպես նաև պետական բյուջեի եկամուտների ու ծախսերի կատարման ստուգումը:

Ֆինանսական վերահսկողությունը պետական և հասարակական մարմինների գործունեություն է, որի եռթունը հասարակության ընդլայնված վերարտադրության պլանային համամասնությունների պահպանման նպատակով կենտրոնացված և ապակենտրոնացված դրամական ֆոնդերի առաջացման և օգտագործման գործընթացների ստուգման հիմնավորվածության մեջ է:

Այս բնորոշումը բույլ է տալիս ընդգծելու ֆինանսական վերահսկողության առանձնահատուկ տեղը, վերահսկողության մյուս տեսակների շարքում, ինչպես այդ վերահսկողության ուղղակի օբյեկտի (կենտրոնացված և ապակենտրոնացված դրամական ֆոնդերի), այնպես էլ ֆինանսական վերահսկողության անմիջական նպատակների տեսակետից (հասարակական ընդլայնված վերարտադրության պլանային համանականությունների պահպանում):

Ֆինանսական վերահսկողությունը ծնվում է արտադրական-տնօսական հարաբերություններից: Ներկայում այն իրականացվում է սկզբունքորեն այլ քաղաքական պայմաններում, ժողովրդավարական պետության նոր դերի պայմաններում: Այս հանգանաքը նատնանշում է ֆինանսական վերահսկողության արմատական բռվանդակությունը: Նորը դրսուրվում է գլխավորապես ոչ թե վերահսկողության կազմակերպման կարգի, այլ նրա առարկայի մեջ, որը, իր հերթին, որոշում է վերահսկողության մյուս առանձնահատկությունները, մասնավորապես՝ տարածման ոլորտը, վերարտադրության նկատմամբ ունեցած ներգործությունը, վերահսկողության ժողովրդավարական բնույթը և այլն:

Ֆինանսական վերահսկողության հնարավորությունը ելնում է ֆինանսների հատուկ վերահսկիչ գործառույթներից: Սակայն այդ հնարավորությունը ինքնին չի ծնում ֆինանսական

Վերահսկողություն: Դա իրականացնելու համար անհրաժեշտ են հանապատասխան կազմակերպական և ներողական պայմաններ, որոնց թվին կարելի է դասել վերահսկող հատուկ մասնագիտացված մարմինների ստեղծումը, դրանք որակյալ մասնագետներով պահպելը, նրանց երաշխավորված իրավունքներով և պարտականություններով լիազորելը:

Ֆինանսական վերահսկողության անհրաժեշտությունը ելնում է ապրանքային արտադրության շուկայական բնույթից, որը նշանակալից չափով կախված է ապակենտրոնացված դրամական ֆոնդերի լիարժեք և ճիշտ օգտագործումից: Անկախ առաջացման աղբյուրից՝ ֆինանսական հարաբերությունների յուրաքանչյուր խախոսում ըստ ծավալի և ժամանակի բացասարար է անդրադառնում շրջանառության վրա ամբողջությամբ:

Ֆինանսական վերահսկողության իրականացումը բոլոր է տակիս դրամական ֆոնդերի պլանաշափ շարժման պարբերաբար ստուգմանը լուծել նաև նյութական և աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման խնդիրը: Այստեղ ֆինանսական վերահսկողությունը հանդիսանում է գալիս որպես հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման գործն:

Տնտեսության բնագավառում իրազործվող ֆինանսական վերահսկողությամբ ստուգման է ենթարկվում նաև խնայողության ռեժիմի պահպանումը: Բացահայտվում են բյուջետային և սեփական շրջանառու նիշոցների օգտագործման նպատակայնությունը, նյութական արժեքների

պահպանման վիճակը: Ֆինանսական վերահսկողության մեջ մտնում են նաև տարրեր ֆոնդերի, ինչպես նաև փոխառած միջոցների օգտագործման ստուգումը, տնտեսության ներքին ռեզերվների բացահայտումը, նրանց օգտագործումը արտադրության աճի և կուտակումների մեծացման համար: Ֆինանսական վերահսկողության օգնությամբ ոչ միայն բացահայտվում են պետական, տնտեսական ու ֆինանսական կարգապահության խախտումներ, այլև նախատեսվում տնտեսության կատարելագործման ուղիներ: Լինելով սոցիալական վերահսկողության հատուկ ծև՝ ֆինանսական վերահսկողությամբ ստուգման է ենթարկվում գործադիր և կարգադրիչ մարմինների կողմից ընդունված ֆինանսական ակտերի կատարումը:

Այսպիսով, ֆինանսական վերահսկողության գործառությների իրականացման չափազանց լայն ոլորտը թույլ է տալիս նշանակալիորեն ազդել ընդլայնված վերադարձողական հարաբերությունների ամբողջության վրա:

¹ Տե՛ս մանրամասն **Գ. Ա. Սութիայան**, Ն. Գ. Սութիայան, Ֆինանսական իրավունք (ռուսմական ձևոնարկ բուհերի համար), Երև., «Իրավունք», 2010, էջ 102-103:

² Տե՛ս մանրամասն **Ա. Բ. Ռումյանց**, ֆինանսության կոնտրօլ (կурс լեկցիան), Մ., “Дело и Сервис”, 2003, с. 18-20:

³ Տե՛ս **Վ. Ի. Լենին**, Երև. հան. 21, էջ 187, Եր., 1955:

⁴ Տե՛ս մանրամասն **И. И. Химичев**, ֆинансовое право (учебник), М., “БЕК”, 2010, с. 128.

⁵ Տե՛ս **Е. А. Вознесенский**, финансовый контроль в СССР, М., “Юридическая литература”, 1973, с. 67-68.

THE ANALYSIS OF LEGAL REGULATION ISSUES ON THE CONCEPT OF FINANCIAL SURVEILLANCE

NAIRI SARGSYAN

Summary

The article on “The analysis of legal regulation issues on the concept of financial surveillance” is highlighted as a legal category, which was primarily inherent in the surveillance and control; the aim of the latter is the strengthening or fiscal discipline and financial legality of the financial sector.

**«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂ» ԵԶՐՈՒՅԹԻ
ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲՆՈՐՈՇՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ***

Դավիթ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՀ ՊԿԱ Իրավագիտության ամբիոնի ասպիրանտ, ասիստենտ

Պետուրյան և հասարակության բնականուն գործունեությունն ապահովելու համար բազմահաջար մարդիկ լուսականացնում էն տարարնույթ խնդիրներ և իրականացնում գործունեության տարբեր տեսակներ՝ ստեղծելով նյութական արժեքներ և նատուրալ գանազան ծառայություններ, իսկ առանձին խումբ անձինք ամենօրյա և իրական կառավարչական գործառնույթներ են կատարում պետական և տեղական ինքնակառավարման մարդիներում՝ ընդունելով բազմատեսակ որոշումներ [1, 133]:

Հանրային ծառայության համակարգի ժամանակակից փոփոխությունները իրականացվում են հետևյալ միտումներով՝

1. հանրային ծառայության արդյունավետության բարձրացման ապահովում,

2. հանրային ծառայության տեսակների փոփոխակցության ուղիների որոշում,

3. դրանց կատարելագործում,

4. հանրային ծառայողի կարգավիճակի արդիականացում [5, 2]:

Երկար ժամանակ «ծառայող» և «պետական ծառայող» հասկացությունները գործեք չեն տարբերվում, որի հիմնական պատճառը դրանց՝ գիտական շրջանակներում ոչ լիարժեք ուսումնակիրությունը էր: Խորհրդային հասարակությունում առկա էր երկու տեսակի ծառայություն՝

1. ծառայություն հասարակական կյանքում,

2. ծառայություն պետական կազմակերպություններում:

Առօրյա կյանքում ոչ ոք չէր փորձում պարզել, թե որոնք են այդ երկու հասկացությունների տարբերությունները: Սակայն 1950-ական թվականներին գրականության մեջ եղան բազմաթիվ փորձեր՝ բնութագրելու պետական ծառայողի հասկացությունը: Այսպես, Պորոբյան սահմանել է «պետական ծառայող» եզրույթի հետևյալ տար-

բերակը. «Խորհրդային իշխանության աշխատակիցներ են համարվում վարձատրվող աշխատանք կատարող այն անձինք, ովքեր գործում են (աշխատում են) ժամանակավոր կամ մշտապես, ընտրության կամ նշանակման միջոցով, պետական մարդում կամ պետական ծերնարկությունում՝ ի շահ խորհրդային ժողովրդի» [7, 4]:

Դաշվի առնելով ծառայողների կողմից տարաբնույթ և բազմազան սոցիալական գործառույթների իրականացման հանգամանքը, ինչպես նաև ծառայության՝ տարաբնույթ բնորոշումները, թե մասնագիտական գրականության մեջ և թե իրավական ակտերում «ծառայող» հասկացության վերաբերյալ տարաբնույթ բնորոշումներ են հայտնվում: Այսպես, ըստ Խորհրդային հանրագիտարանային բառարանների՝ «ծառայողներ» են համարվում «ոչ ֆիզիկական աշխատանք կատարողները և նտավոր աշխատողները, որոնք ստանում են աշխատավաճառք...» [6, 1243]: Կարող ենք ընդգծել, որ գրեթե համանամատ բնորոշում է տրվում նաև իրավաբանական բառարաններում, միևնույն ժամանակ նշելով, որ որոշակի յուրահատուկ կարգավիճակով օժտված են միայն պետական և համայնքային ծառայողները:

Հիմնական գործող անձը հանրային ծառայության համակարգում հանդիսանում է հանրային ծառայողը: ՀՀ-ում «պետական ծառայող» եզրույթի բավականին ընդարձակ բնորոշում է տրվել «Աշխատանքի վարձատրության մասին» ՀՀ օրենքում: Այսպես, համաձայն «Աշխատանքի վարձատրության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի՝ պետական ծառայող են համարվում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատողները, բացառությանը տնտեսական, տեխնիկական և սպասարկման գործառույթներ իրականացնող այն աշխատողները, որոնց աշխատանքի բնույթը ազդեցություն չու-

* Ներկայացվել է 03.10.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

նի տվյալ մարմինների իրավասության և լիազորությունների կատարման վրա: Պետք է նշել, որ նույն օրենքի համաձայն՝ պետական պաշտոնյաններ են հանդիսանում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված կամ նշանակված անձինք: Ինչպես տեսնում ենք, «Աշխատանքի վարձատրության մասին» ՀՀ օրենքը օգտագործել է «պետական ծառայող» հասկացությունը, չնայած այն հանգամանքին, որ օրենքը միանշանակ նկատի է ունեցել հանրային ծառայողներին, քանզի դա երևում է օրենքի 4-րդ հոդվածի բովանդակությունից: Սույն օրենքը ներկայումս կորցրել է իր իրավաբանական ուժը և «հանրային ծառայողի» նոր, սակայն մեր կարծիքով ոչ ճգրիտ սահմանում է տրվել 2011 թվականին ընդունված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում, որի 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հանրային ծառայողը՝ պետական և հանայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված, որևէ պաշտոն գրադեցնող կամ օրենքով սահմանված դեպքերում և կարգով հանրային ծառայության համապատասխան ռեգերվում գտնվող անձ է: Այսպիսով «հանրային ծառայող» հասկացության մեջ չեն ընդգրկվել պետական և հանայնքային պաշտոն գրադեցնող անձինք, ինչը կարելի է համարել օրենքի եկան բացքողություն:

Ինչպես նկատեցինք, «հանրային ծառայող» հասկացությունն ընդգրկում է «պետական ծառայող» և «հանայնքային ծառայող» հասկացությունները, և մեր յանդիրն է բացահայտել պետական ծառայող (քաղաքացիական ծառայող) և հանայնքային ծառայող հասկացությունների բովանդակությունը:

2004 թվականի դեկտեմբերի 14-ին ընդունված «Հանայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքը նորմատիվորեն սահմանեց համայնքային ծառայության և համայնքային ծառայության պետական և հանայնքային ծառայության հետ առնչվող բազմաթիվ հիմնարար հասկացություններ: Սասնավորապես, նոր իմաստ ներդրվեց «հանայնքային ծառայություն» և «հանայնքային ծառայող» հասկացությունների մեջ: Մինչ այս վերը նշված հասկացությունները սահմանվում էին «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով: Ներկայումս «Հանայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ հանայնքային ծառայող է համարվում աշխատակազմում հանայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված որևէ պաշտոն (բա-

ցառությամբ ժամանակավոր թափուր պաշտոնի) գրադեցնող անձը: Այսպիսով, համայնքային ծառայող է համարվում ոչ թե տեղական ինքնակառավարման մարմինների հանակարգում պաշտոն գրադեցնող յուրաքանչյուր անձ, այլ միայն նա, ով տվյալ աշխատակազմում գրադեցնում է պաշտոնների անվանացանկով նախատեսված որևէ պաշտոն: Ծիշտ կլինիր, որ օրենսդիրը համայնքային ծառայող հասկացության ավելացներ «համայնքի ներկայարի» բառակապակցությունը [2, 20], որպեսզի ավելի հստակ լինի ծառայողների գործունեության վայրը և համահունչ լինի «համայնքային ծառայություն» հասկացության օրենսդրական ձևակերպման հետ: Անհասկանալի է օրենսդրի մեկ այլ մոտեցումը, ըստ որի՝ ժամանակավոր թափուր պաշտոն գրադեցնող անձը չի կարող համարվել համայնքային ծառայող: Կարծում ենք՝ ծիշտ կլինի, որ վերացվի այս սահմանափակումը, քանզի անգամ եթե քաղաքացին մեկ օրով է գրադեցնում համայնքային ծառայության պաշտոն, նա, միևնույն է, ստանձնում է համայնքային ծառայողի համար նախատեսված բոլոր իրավունքները և պարտականությունները: Այսպիսին է նաև արտասահմանյան փորձը, մասնավորապես՝ ՈԴ «Համայնքային ծառայության մասին» դաշնային օրենքով, Ֆրանսիայի «Տեղական հանրային ծառայության մասին» օրենքով, Չինաստանի ժողովրդական Հանրապետության «Պետական ծառայության մասին» օրենքով (իր իրավակարգավորումը տարածում է թե պետական, թե համայնքային ծառայության հիմնահարցերի վրա) և այլ երկրների հանրային ծառայության ոլորտը կարգվողոր օրենքներով [4, 117, 413, 677-679]:

Մյուս կարևոր հիմնախմնդիրը համայնքային ծառայության կաղղերի ռեգերվում գտնվող անձանց համայնքային ծառայող համարելու խնդիրն է: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով հանրային ծառայող է համարվում պետական և հանայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված որևէ պաշտոն գրադեցնող կամ օրենքով սահմանված դեպքերում և կարգով հանրային ծառայության համապատասխան կարդերի ռեգերվում գտնվող անձը: Այսինքն՝ օրենքը հնարավորություն է տալիս կաղղերի ռեգերվում գտնվող քաղաքացուն համարել հանրային ծառայող և ծիշտ կլինի, որ այդ մոտեցումը արտացոլվի նաև «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքում, մասնավանդ, որ օրենսդիրը այդպիսի մոտեցում է ցուցաբերել «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքում: Այսպիսով, առաջարկում

Ենք «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը խմբագրել հետևյալ տեսքով. «Համայնքային ծառայող է համարվում համայնքի ղեկավարի աշխատակազմում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված որևէ պաշտոն գրադեցնող կամ կադերերի ռեգերվում գտնվող անձը»:

Համայնքային ծառայությունն առավել սերտ կապի մեջ է մտնում քաղաքացիական ծառայության հետ: Կարևորելով այս հանգամանքը, պետք է նաև դիտարկել «համայնքային ծառայող» և «քաղաքացիական ծառայող» հասկացությունների հարաբերակցությունը: Կարող ենք ընդգծել, այս հասկացությունները միմյանցից զգալիորեն տարբերվում են թե իրավական, թե բովանդակային առողմով: Համայնքային և քաղաքացիական ծառայողների հասկացությունների տարբերությունը հիմնականում պայմանավորված է նրանով, որ, նախ, եական տարբերություններ կան համայնքային ծառայության կադրերի ռեգերվ և քաղաքացիական ծառայության կադրերի ռեգերվում գտնվող անձինք (առավելագույն ժամկետը վեց ամիս է) նույնպես համարվում են քաղաքացիական ծառայողներ: Այսպես, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի «դ» Ենթակետը սահմանում է. «Քաղաքացիական ծառայող է՝ քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված որևէ պաշտոն (բացառությամբ ժամանակավոր թափուր պաշտոն գրադեցնող անձի) գրադեցնող կամ կադրերի կարճաժամկետ ռեգերվում գտնվող անձը»: Օրենսդիր տրամաբանությունը անհասկանալի է նաև «քաղաքացիական ծառայողի» հասկացության սահմանման պարագայում: Վերևում արդեն իսկ նշել և հիմնավորել ենք, որ ժամանակավոր թափուր պաշտոն գրադեցնող անձը պետք է համարվի «հանրային ծառայող»: Սակայն սա սահմանման միակ թերությունը չէ: անհասկանալի է՝ ինչու չպետք է քաղաքացիական ծառայողի կարգավիճակ չընենա կադրերի երկարաժամկետ ռեգերվում գտնվող անձը: Առաջարկում ենք «Քաղաքացիական ծառայության մասին»: ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի «դ» Ենթակետը խմբագրել հետևյալ տեսքով. «Քաղաքացիական ծառայող է՝ քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախա-

տեսված որևէ պաշտոն գրադեցնող կամ կադրերի կարճաժամկետ (երկարաժամկետ) ռեգերվում գտնվող անձը»:

Ինչ վերաբերում է համայնքային ծառայության կադրերի ռեգերվին, ապա այսուեղ անհասկանալի կերպով հայտնվել են պաշտոնատար անձինք, ովքեր գործնականում առնչություն չունեն այդ ծառայության հետ: Այսպես, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի (որը ստացել «համայնքային ծառայության կադրերի ռեգերվ» անվանումը) 1-ին կետի համաձայն՝ համայնքային ծառայության կադրերի ռեգերվում գրանցվում են նաև համայնքի ղեկավարի, երևանի վարչական շրջանի ղեկավարի, նրա տեղակալի (տեղակալների) կամ համայնքի ղեկավարի տեղակալի, խորհրդականի, մամուլի քարտուղարի, օգնականի, ռեֆերենտի պաշտոններ գրադեցրած անձինք՝ պաշտոնավարման ավարտից հետո: Սա անընդունելի մոտեցում է. անհասկանալի է՝ ինչու պետք է վերը հիշատակված պաշտոնատար անձինք պաշտոնավարման ավարտից հետո ընդգրկվեն համայնքային ծառայության կադրերի ռեգերվում: Դաշվի առնելով այն հանգանանքը, որ վերը թվարկված պաշտոնատար անձինք չեն համադիսանում համայնքային ծառայողներ, կարծում ենք՝ սա խախտում է նաև հանրային և համայնքային ծառայության մի շարք հիմնարար սկզբունքներ, ինչպիսիք են ծառայողների պրոֆեսիոնալիզմը, համայնքային ծառայողներին ներկայացվող հիմնական պահանջման միասնականությունը և օրենքի առջև համայնքային ծառայողների իրավահավասարությունը, քաղաքացիների համար համայնքային ծառայության հավասար մատչելիությունը՝ իրենց մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխան:

Անփոփելով վերոնշվածը՝ գալիս ենք հետևյալ եղանակումների՝

1. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը, սահմանելով «հանրային ծառայողի» հասկացությունը, նրանում չի ընդգրկել պետական և համայնքային պաշտոններ գրադեցնող անձանց, չնայած այն հանգանանքին, որ նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ հանրային ծառայությունը պետությանը հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը, պետական և համայնքային պաշտոնները:
2. Անհրաժեշտ է տալ «քաղաքացիական ծա-

ռայող» և «համայնքային ծառայող» հասկացությունների հետևյալ սահմանումները՝

- Համայնքային ծառայող է համարվում համայնքի դեկավարի աշխատակազմում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված որևէ պաշտոն գրադենող կամ կադերերի ռեգերվում գտնվող անձը:
- Քաղաքացիական ծառայող է՝ քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված որևէ պաշտոն գրադենող կամ կադերերի կարծամանկետ (երկարաժամկետ) ռեգերվում գտնվող անձը:

¹ Ըստ Վ. Գևորգյան՝ «ծառայություն» հասկացությունն օգտագործվում է տարբեր իմաստներով՝ որպես մարդկային գործունեության տեսակ, որպես սոցիալ-իրավական ինսիլիտուտ, որպես պետական և տեղական ինքնականավարման մարմինների համակարգ, անզան որպես հոգևոր գործունեություն և այլն: Առավել մանրանան տես՝ Գосударственное Служба: ученое пособие, Волкова В. В., Санфирова А. А., изд. ЮНИТИ-ДАНА, Закон и право, 2012[3]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքային ծառայության իմաստներ: Ուսումնական ծերնարկ (տնո. դոկ. պրոֆ. է. Յ. Օրյանի ընդհ. դեկ. և խմբ.): Եր., «Օդ-Դար», 2009, 336 էջ:
2. Մակինյան Մ. Ա., Համայնքային ծառայության իրավական կարգավորման իմաստներում ՀՀ-ում: Իրավաբանական գիտությունների թեկնածուի հայցման ատենախոսություն: Սեղմագիր: Եր., 2011:
3. Государственное Служба: Учебное пособие, Волкова В. В., Санфирова А. А., изд. «ЮНИТИ-ДАНА», Закон и право, 2012, 207 с.
4. Государственная служба: В Странах основных правовых систем мира, Под ред. и со вст. статьей канд. юр. наук А. А. Демина, М., «Книгодел», 2008, 792 с.
5. Антонова Наталья Михайловна: Конституционно - правовый статус публичных служащих в Российской Федерации: диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. Автореферат. М., 2012, 40 с.
6. Советский энциклопедический словарь, М., 1980, 1600 с.
7. Комсомольская Правда: М., 1975. N 229 (15247):

THE DEFINITION OF A PUBLIC SERVANT IN ACCORDANCE WITH THE LAWS OF THE REPUBLIC OF ARMENIA

DAVIT GHAZARYAN

PhD Student at the Chair of law of PAARA

Summary

Current article is devoted to the problems of definition of the public (state and municipal) servants. The author offers the legislator to give a new formulation of listed above categories.

Ողջա ԽԱԶԱՏՈՒՐՅԱՆ

Գյումրու Ակադեմիական վարժարանի պատմության և հասարակագիտության ուսուցչուհի

Առիջ հայ հասարակության լայն զանգվածների, սոցիալական տարրեր խնդիրի ուշադրության կենտրոնում դարձալ հայտնվել է կանանց և տղամարդկանց իրավահավասարության հարցը: Իրավահավասարությունը լայն հասկացություն է և ընդգրկում է հասարակական կյանքի տարրեր ոլորտներ: Պատմական զարգացման տարբեր ժամանակահատվածներում իրավահավասարությունը տարբեր կերպ է ընկալվել: Մեր խնդիրն է Ընդկայացնել միջնադարյան Հայաստանի ամուսնացնուանեկան հարաբերություններում առկա իրավահավասարության դրսնորումները: Միջնադարյան իրավական աղյուրների ուսումնասիրությունը թույլ կտա ապացուցել, որ միջնադարյան Հայաստանում եղել են տղամարդու և կնոջ միջև հավասարություն ապահովող նախադրյալներ, հավասարության գաղափարը նորք չէ հայ հասարակությանը և արիեստականորեն ներմուծված չէ Արևոտքից:

Ինչ իրավունքներ է ունեցել կինը ամուսնության ժամանակ, և իրավական այդ սկզբունքները արդյոք թույլ են տվել կնոջը ցածր կամ բարձր դասվել տղամարդուց: Միջնադարի իրավական հուշարձաններում մեծ տեղ է հատկացվում այնպիսի խնդիրների, ինչպիսիք են ամուսնությունը, ամուսնալութությունը: Դրանցում ընդգծված է կին և տղամարդ հարաբերություններում կնոջ ունեցած ազատությունը. կյանքի, պատվի, արժանապատվության իրավունքը: Կան նաև այնպիսի իրավանորմեր, որոնք ուղղված են կնոջ՝ անհավասար կարգավիճակի դեմ: Ընտանիքը հայ մարդու համար մեծագույն արժեք է: Նրա ծեավորման ու պահպանման հարցում մեծ է եղել հայ կնոջ դերը՝ իրեն մոր: Որպես մի կառույց, որը նախապես կազմված է 2 անձից, ընտանիքը նախևառաջ անձերի հարաբերություն է: Նրա անդամների միջև եղած հարաբերություններն են այդ միացումը դարձնում ընտանիքը, և ներքին հարաբերությունների կարգավոր-

մանք է ապահովում նրա և ինքնուրույնությունը, և կենսունակությունը: Լինելով հասարակության «միկրոպատկեր»՝ ընտանիքը ընկալվում է որպես մի կառույց, ուր ներմուծվում է հասարակությանը բնորոշ աստիճանակարգությունը:

Ուժայել Պապայանն արդի իրավունքի շատ ակունքներ որոնել է քրիստոնեության մեջ անդրադառնալով նաև ընտանեկան հարաբերություններին: Ըստ այդմ՝ ընդգծվում է ամուսնուների «մի մարմին» լինելով հանգամանքը: Սակայն պարբերաբար կրկնվող ու հիշեցվող այս բանաձևում օգտագործվում է միայն «մարմին» բառը, բայց ոչ երբեք՝ «հոգի»: Այսինքն՝ ամրագրվում է, որ մի մարմին լինելով հանդերձ, ամուսիններն այնուամենայի երկու ինքնուրույն, հավասար և ազատ անհատականություններ են: Ըստանիքը աստվածաշնչում նախանշված է որպես ինքնավար միավոր: Ինքնավարությունը սահմանվել էր եղենական այն բանաձևով, ըստ որի՝ «մարդը կրող իր հայրը և մայրը, և կյարի իր կնոջը» (Ծն. 2:24): Կին ստեղծելու մտադրությունը Աստված բանաձևեց որպես մարդու համար «օգնական ստեղծելու» մտադրություն «Ծն.2:18»: Այսպիսով Ադամի և Եվայի ընտանիքի ստեղծման պատմության մեջ առկա են ընտանեկան իրավունքի հետևյալ սկզբունքները. ընտանիքը 2 անձանց՝ տղամարդու և կնոջ միություն է, միասնական և անբաժանելի միավոր, սերունդների ծննդյան և դաստիարակության հիմք, ինքնավար հաստատություն, համատեղ տնտեսություն վարելու կազմավորում, մի միություն, որ հաստատվում է Աստծո օրինությամբ:

Ամուսնության իիմքը դրվում է նշանադրությամբ, որի կարևոր պայմանը կողմերի փոխադարձ համաձայնությունն է: Այս հարցում Կանոնական իրավունքը ոչ մի կողմին առավելություն չի տալիս: Ահա Պարթևի 27-րդ կանոնը ասում է, որ ամուսնությունը ամուսնական տարիի հասած անձանց համաձայնություն է: Կանոնը պատժով է սպառնում այն քահանաներին և

* Ներկայացվել է 10.10.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

ծնողներին, ովքեր երիտասարդ մարդկանց հարկադրում են ամուսնանալ հակառակ իրենց կամքի: «Կանոնագիրը հայոց»-ի այդ կանոնն էլ հիմք դարձավ դատաստանագրերում սահմանված օրենքների ծևակերպման համար:

Ամուսնացնանական հարաբերությունների վերաբերյալ պատկերացումները Կիլիկյան Հայաստանում զգայինուն տարրերով են Հայաստանում առկա պատկերացումներից: Սնճատի Դատաստանագիրը ձգտում է այդ հարաբերությունների բնագավառը հնարավորինս ենթարկել պետությանը և աշխարհիկ իրավագործությանը՝ այն ժամանակ, եթե Միփիքար Գոշի Դատաստանագրում վերոհիշյալ հարաբերությունները գտնվում են Եկեղեցու իրավասության ներքո: Անկախ այդ ամենից, ըստ Ա. Ղյուճեանի, միջնադարյան Հայաստանում ամուսնությունը դիտվել է որպես մարդու և կնոջ դաշնակցությունը՝ լինի այն կրոնական-Եկեղեցական, թե քաղաքացիական ակտ, գործողություն: Հայոց Եկեղեցին ազատ հավանությունը համարում է ամուսնության խորհրդի եական մասերից մեկը:

Միջնադարյան Հայաստանում գոյություն ունեցող քաղաքացիական պասակը դիտվել է ամուսնությունների վրա փոխադարձ պայմաններ, պարտականություններ դնող դաշնություն, կապակցություն: Միփիքար Գոշի Դատաստանագրքի «Յաղագ դատաստանաց տղայոց պասակաց» հոդվածում խստիվ արգելվում է աղջկա և տղայի պասակ օրինել, եթե նրանք միջանց չեն տեսել:

Առանձնացվում է նաև ամուսնության նեկ այլ ձև՝ առևանգումը, որի մնացուկները հայ իրականության մեջ պահպանվել են մինչև այժմ: Սակայն առևանգումից հետո կայացած ամուսնությունը համարվում է օրինական: Այդպիսի ամուսնության հնօրյա օրինակի է Արտաշես թագավորի կողմից ալանների թագուհի Սարենիկի առևանգումը, որի մասին վկայում է պատմահայր Մովսես Խորենացին: Սակայն Գրիգոր Լուսավորչի 9-րդ կանոնը կանանց առևանգումը համարեց անօրինական:

Առևանգման միջոցով կին ձեռք բերելու սովորությին ժամանակի ընթացքում փոխարինում է գննան միջոցով կին ձեռք բերելու սովորությը, թեև նախորդն ամբողջությամբ դուրս չի գալիս գործածությունից:

Ըստ Խ. Սամուելյանի՝ գննամբ ամուսնությունը եղել է փրկանք, որ վճարվել է տղայի կողմից աղջկա կողմին, որպեսզի մի կողմից ծածկվի այն վնասը, որ կրում էր աղջկա ընտանիքը՝ զոկվելով աշխատավոր ծերքից, և մյուս կողմից՝ հատուցվի առևանգմանբ պատճառված տոհմա-

յին վիրավորանքը:

Հայտնի չեն, թե երբ է գործածությունից դուրս եկել գլխագին սովորությը: Որոշ ուսումնասիրողներ գտնում են, որ «գլխագին» հասկացությանը փոխարինելու է գալիս «օժիտի» ինստիտուտը: Կին ամուսնանալիս իր հետ ամուսնու տուն է բերում իր գույքը՝ որպես օժիտ: Դրանով ապահովում է կնոջ ինքնուրույն գույքային դրությունը: Եթե նա ամուսնու տուն է մտնում իր գույքով, ապա նա գննան օրյեկտ չի և չի մտցվում ամուսնու համար մեջ: Նրա դրությունն ավելի է ամրապնդվում, եթե նա ամուսնուց ստանում է ամուսնական ընծա, որը ևս դարձնում է նրա սեփականությունը: Փաստորեն դարեր շարունակ «օժիտի» ինստիտուտը ծնողների համար եղել և մնում է իրու չգրված օրենք:

Բնակչության մեծամասնության համար ամուսնությունը նախևառաջ համակեցություն հաստատել և ընդհանուր տնտեսությունը միասին վարելն էր, իսկ «ընծան» և «օժիտը»՝ ամուսնություններին օգնություն ցույց տվող միջոցները:

Հայ իրականության մեջ տարածված է եղել նաև բազմակնությունը: Հայաստանում օրինակոր կնոջ կողմին թույլատրելի էր նաև այլ կանայք պահել: Ըստ Փավստոս Բուզանդի՝ Արշակ Բ թագավորն ուներ 2 կին՝ Փառանձեմը և Ողոնդին:

Այսպիսով, ըստ Սամուելյանի՝ ամուսնության ձևերը կվոյուցիա են ապերե: հայրիշխանության պայմաններում եղել են գննամբ ու առևանգումով կայացած ամուսնություններ, որոնց դեմ պայքարել է հայոց Եկեղեցին՝ հասնելով նրան, որ ամուսնությունը դիտվի 2 կողմերի կամավոր միություն՝ անհաջտ պայքար մղելով թե առևանգման, թե գննան, թե բազմակնության դեմ:

Մյուս երևույթը, որում ևս առկա է կնոջ և տղամարդու իրավահավասարության գաղափարը, ամուսնալուծությունն է: Միջնադարյան իրավական աղբյուրները ամուսնալուծությունների տարրեր պատճառներ են առանձնացնում և ըստ այդ էլ տարրերով են կնոջ և տղամարդու իրավունքներն ամուսնալուծվելիս: Որոշ դեպքերում ավելի լայն են տղամարդու իրավունքները: Շատ դեպքերում, սակայն, կինն ունի ազատություն, ինչի մասին են փաստում առկա աղբյուրները: Կնոջ դաշտանության կասկածի դեպքում ամուսնուն չի վերապահվում պատժելու իրավունք. այդ իրավունքն ունի միայն քահանան, որը տվյալ դեպքում դատավորի դեր է ստանձնում և քննություն անցկացնում: Եթե կնոյ անհնազանդության պատճառով գժտություն է ծագում ամուսնուների միջև, ապա ամուսնությունը կարող է լուծվել: Այդ դեպքում

կինը ստանում է այն ամենը, ինչ բերել է ամուսնու տուն և կենդանիների աճի կեսը: Եթե ամուսինը թողել էր կնոջը ամլության պատճառով, ապա ենթարկվում է տուգանքների և մեկ տարի այլ կին առնելու իրավունք չուներ: Ըստ Մշիթար Գոշի՝ կինը տուգանքի հետ կարող էր տանել նաև այն ամենը, ինչ բերել էր իր հետ՝ անասուն, աղախին, արծաթ, հանդերձ և այլն: Դա կնոջը հճնուրույն նոր կյանք սկսելու հնարավորություն էր տալիս: Եթե ամլության մասին ամուսինի իմացել էր մինչև ամուսնանալը, ապա ամուսնալուծությունն արգելվում էր:

Խստորեն պատճել է նաև առանց որևէ պատճառի ամուսնուն թողած կնոջ վարքը: Երբեմն ամուսինը թողնում էր կնոջը հոգեկան կամ որևէ այլ հիվանդության պատճառով: Դրա համար նախատեսվել են ապաշխարանք, գույքային սույներ, մարմնական պատիժներ: Կնոջը ապահարզանի իրավունք էր տալիս նաև ամուսնու՝ սեռական մերձեցման անընդունակությունը:

Ընտանիքը ոչ միայն ամուսինների համակեցություն է, այլև ծնողների ու զավակների միություն, որը նպատակ է հետապնդում դաստիարակել հաջորդ սերունդը: Ուստի ամուսնալուծության ժամանակ պետք էր լուծել նաև երեխաների հարցը: Միջնադարյան աղբյուրները նշում են, որ ապահարզանի պատճառ հանդիսացած ծնողը չի կարող երեխաների համար օրինակ լինել, ուստիև նրանց նկատմամբ իրավունք չունի: Երեխաները պիտի մնան նրա նոտ, ով օրինակելի ծնող է և դաստիարակ: Ընտանիքում երեխաների առկայությունը վճռական հանգամանք էր նաև ամուսինների գույքային հարաբերությունները որոշելու համար: Քանի որ երեխաները հանդպում էին ինչպես մոր, այնպես էլ հոր ժառանգները, հետևաբար ամուսինների գույքը պատկանում էր նաև նրանց:

Բերված բազմաթիվ փաստերում կինն ազատ է իր ընտրության մեջ, կա հավասարություն ամուսինների փոխարարերություններում: Իսկ ամուսնալուծությունների դեպքում տղամարդը պարտավոր է նյութական միջոցներով ապահովությունը կատարում է ամուսինների առաջնային պատճառը:

Վել կնոջը: Ամուսնալուծանեկան հարաբերություններում իրավահավասարության գաղափարը ամրագրված է հետևյալ նորմերում. նախ կամավոր համաձայնություն, ամուսնական որոշակի տարիք, մենամուսնություն, իրավահավասարություն համատեղ կյանքում, հավասար իրավունքներ ու պարտականություններ գույքի նկատմամբ: Ամուսնալուծության ժամանակ ևս հաշվի էին առնվուն կնոջ շահերը:

Այսօր ևս ՀՀ Ընտանեկան օրենսգիրը հավասար պայմաններ է ապահովում կնոջ և տղամարդու համար: Այնտեղ հստակ նշվում է. «Կանայք և տղամարդիկ ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս օգտվում են հավասար իրավունքներից»: Այսօր ևս ամուսնության կնքման համար անհրաժեշտ է ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը, եթե լրացել է նրանց ամուսնական տարիքը. աղջկա համար 17, տղայի՝ 18:

Ակնհայտ է, որ դեռևս միշնադարից հայ հասարակության մեջ արվել և արվում է ամեն ինչ ամուսնալուծանեկան հարաբերություններում կնոջ և տղամարդու իրավահավասարության սկզբունքը ամուր իրավական և քարոյական հիմքերի վրա դնելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սովետ Խորենացի, Յայոց պատմություն, Եր., 1981:
2. Փակսոս Բուզանդ, Յայոց պատմություն, Եր., 1947:
3. Կանոնագիր հայոց, Ա խմբ., աշխատասիրությամբ Վ. Յակոբյանի: Եր., 1964:
- 4.ՀՀ Ընտանեկան օրենսգիր (ընդունվել է 09.11.2004)
5. Մշիթար Գոշ, Գիր Դատաստանի, աշխատասիրությամբ Խ. Թորոսյանի, Եր., 1974:
6. Ղլուման Ա., Ամուսնալուծում, ամուսնալուծություն և քաղաքացիության պահպան: Ալեքսանդրապոլ, 1904:
7. Սուրեհայան Ա., Կիլիկյան հայկական պետության և իրավունքի պատմություն: Եր., 1978:
8. Սամուելյան Խ., Յին Յայաստանի կուլտուրան, Եր., 1941, հ. 3:
9. Պապայան Ռ., Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները: Մք. Էջմիածին, 2002:

THE EQUAL RIGHT IN THE MIDDLE AGES. THE FAMILY RIGHT

ROZA KHACHATURYAN

The teacher of history and social science of Academic lyceum in Gyumri

Summary

The aim of this article is to show that the wife's and the husband's equal right isn't strange to Armenian society. Analyzing the facts about marriage existing in the MidArmenia's legal and historical sources, we can conclude that in the Middle Ages for marriage, during years of marriage and divorce the wife and the husband had and have the same rights and obligations.

УДК 339:006

ПУТИ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ КОНТРОЛЯ И СЕРТИФИКАЦИИ ИМПОРТА И ЭКСПОРТА ПИЩЕВЫХ ПРОДУКТОВ РА*

Микаел МЕЛКУМЯН (на фото)
Доктор экономических наук, профессор

Фрида БАГАРЯН
Кандидат экономических наук, доцент

Сурен МУРАДЯН
ЕГУ, соискатель



товаров и стимулирование производства этих товаров.

Для стимулирования экспортоспособных производств используются государственные заказы, бюджетное финансирование, кредиты, финансирование НИО Р и т.п.

Импортная внешторговая политика направлена на регулирование ввоза в РА иностранных товаров (работ, услуг). Инструментами такого регулирования являются: прямое ограничение импорта с целью защиты экономики Армении. Для этого используются лицензирование и контингентирование импорта, антимонопольные и компенсационные пошлины, система минимальных импортных цен и т.д.

Объем внешторгового оборота Армении в 2012 году увеличился на 3.9% по сравнению с 2011 годом и составил порядка 5694.9 млн. долларов США. При этом, объем экспорта составил 1428.2 млн. долларов США, увеличившись на 7.0%, импорта – 4226.7 млн. долларов

Внешторговая политика включает в себя экспортную и импортную политику. Экспортная внешторговая политика направлена на реализацию на мировом рынке конкурентоспособных

США, увеличившись на 2.9%. Отрицательное сальдо внешней торговли РА за указанный период составило – 2838.7 млн. долларов США (см. табл. 1).

За 2012 год был зафиксирован незначительный по сравнению с показателем 2011 года рост объема экспорта. Увеличение в основном обусловлено ростом промышленной продукции, в частности, горнодобывающей промышленности, а так же реализуемой политикой государства, нацеленной на стимулирование экспорта.

В 2012 году в географической структуре товарооборота не наметилось резких изменений. Так, несколько увеличился удельный вес стран СНГ, составив 29.4%, в том числе доля России увеличилась до 23.5% в общем внешнеторговом обороте Армении по сравнению с 20.3% в 2011 году. Доля стран ЕС во внешнеторговом обороте Армении традиционно на несколько процентных пунктов выше, чем доля стран СНГ, но тем не менее по итогам 2012 года доля ЕС снизилась с 32.4% до 29.6 % (см. рис. 1).

Среди основных партнеров Армении во внешнеторговом обороте, кроме стран СНГ и ЕС, на долю которых пришлось 59.0% от




* Ներկայացվել է 10.12.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

Таблица 1

Динамика внешторгового оборота РА за период 2008 -2012 гг. [1]
(млн. долларов США)

| | 2012 | 2011 | 2010 | 2009 | 2008 | Темп роста 2012/2011,% |
|--------------|---------|---------|---------|---------|---------|------------------------|
| Товарооборот | 5694,9 | 5481,0 | 4790,0 | 4031,3 | 5483,3 | 103,9 |
| Экспорт | 1428,2 | 1329,5 | 1041,0 | 710,2 | 1057,2 | 107,0 |
| Импорт | 4266,7 | 4151,5 | 3749,0 | 3321,1 | 4426,1 | 102,9 |
| Сальдо | -2838,0 | -2822,0 | -2707,9 | -2611,0 | -3369,0 | 100,1 |

Рис. 1. Структура внешторгового оборота РА за период 2006 -2012 гг. (%)



всего внешторгового оборота Армении за прошедший год, являются Китай – 7.6% или 431.7 млн. долл. США, Иран – 5.6% или 317.7 млн. долл. США, США – 4.1% или 231.1 млн. долл. США, Турция – 3.8% или 215.5 млн. долл. США. Среди стран ЕС можно выделить Германию – 7.3% или 418 млн. долл. США, Болгарию – 3.8% или 215.8 млн. долл. США, Бельгию – 3.5% или 200.8 млн. долл. США, Италию 3.1% или 176.5 млн. долл. США и Нидерланды – 2.1% или 177.5 млн. долл. США.

По данным Национальной статистической службы Армении основные партнеры по экспортам по итогам 2012 года являлись страны ЕС с долей 39.2%, на второй позиции “другие страны” – 37.3%, на третьей – страны СНГ с удельным весом 23.5%.

Среди стран ЕС лидеры по экспортам: Германия (10.7%), Болгария (9.1%), Бельгия (8.9%), Нидерланды (5.6%). К числу ведущих экспортёров среди “других стран” можно отнести следующие государства: Иран – 6.8%, США – 6.1%, Канада – 5.9%, Грузия – 5.7%.

Среди стран СНГ основными партнёрами являются: Россия (19.6%), Украина (1.0%).

В 2012 году по сравнению с 2011 годом экспорт Армении в страны ЕС более диверсифицирован.

В 2012 г. Лидером по импортным поставкам в Армению являлись “другие страны” с долей 42.3%, на второй позиции – страны СНГ(31.3%), на третьей – страны ЕС (26.4%). Лидерами по товарному импорту в 2012 г. были следующие страны: Россия – 24.8%, Китай – 9.4%, Германия – 6.2%, Иран – 5.2%, Украина – 5.1%, Турция – 5.0%, США – 3.4%.

В динамике импорта в Армению в 2012 году можно выделить увеличение импорта из стран СНГ и сокращение из других стран и стран ЕС.

Армения старается диверсифицировать географию внешторгового оборота, разжигая или налаживая торговые и экономические связи с другими странами.

В товарной структуре экспорта Армении 2012 г. преобладали металлы и драгоцен-

ные камни – 533.2 млн. долларов США (доля – 37.3%), минеральные продукты – 401.0 млн. долларов США (28.0%), продукция сельского хозяйства – 323.2 млн. долларов США (22.3%).

В товарной структуре импорта Армении в 2012 г. преобладали машины и транспортные средства – 953.8 млн. дол. США (доля 22.4%), минеральные продукты – 916.4 млн. дол. США (21.5%); продукция сельского хозяйства – 812.5 млн. дол. США (19.0%), металлы и драгоценные камни – 570.4 млн. дол. США (11.6%).

После кризисных спадов внешнекономической деятельности в 2009 году, в 2011 году начались оживления по всем направлениям внешнеторговой деятельности, в частности по экспорту. Это подтверждается зарегистрированным ростом импорта и экспорта, которые в 2011 годы составили соответственно 10.7% и 27.7%. Но за 2012 год рост экспорта и импорта оказался не очень большим.

Важными стимулами для притока инвестиций в Армению являются либеральное законодательство и гибкий налоговый режим, а так же наличие квалифицированной рабочей силы. В Армении иностранные инвестиции защищены специальным законом. При изменении законодательства для инвесторов в течение следующих пяти лет действуют прежние налоги.

При изменении законодательства для инвесторов в течение следующих пяти лет действуют прежние налоги. К тому же Армения является членом MIGA (Международная организация, осуществляющая страхование инвестиционных рисков - Multinational Investment Guarantee Agency).

Законодательство Армении в области инвестиций весьма либеральное и практически не уступает международным стандартам, а по индексу экономической свободы Армения находится впереди всех стран СНГ по инвестиционному климату и степени открытости бизнеса.

Средствами контроля качества пищевых продуктов, имеющими фундаментально важное значение и широкое применение, являются официальные официально признанные системы контроля и сертификации. Уверенность потребителей в качестве (в том числе и безопасности) предлагаемых им пищевых

продуктов отчасти зависит от того, как потребители оценивают действенность мер по контролю их качества.

От применения систем контроля и сертификации зависит немалая часть мирового объема торговли пищевыми продуктами, например, мясом и мясными продуктами. Однако, требования, предъявляемые к контролю и сертификации, могут существенно содержать международную торговлю продуктами питания. Поэтому представляется желательным, чтобы структура и применение этих систем отражали соответствующие принципы.

Контроль пищевых продуктов может производиться на любом этапе процесса производства и распределения. Для одних продуктов наиболее правильным и разумным средством обеспечения их безопасности может иметь инспекторский надзор за уборкой урожая, переработкой, хранением, транспортировкой продукта и другими манипуляциями с ним. В зависимости от используемых способов сохранения продукта может возникнуть необходимость осуществлять инспекторский надзор на постоянной основе вплоть до момента продажи в розничной торговле. Объектом внимания систем контроля могут быть сами пищевые продукты, процедуры и технические средства, применяемые в цепи производства и распределения, вещества и материалы, которые могут попадать в пищевой продукт или загрязнять его.

Контроль нужно осуществлять на самых нужных этапах. При контроле соблюдения некоторых требований, например, касающихся описания продукта, возможно ограничение контроля процессом распределения вплоть до продажи конечному потребителю.

Как в структуре, так и в использовании системы контроля и сертификации пищевых продуктов должны соблюдаться определенные принципы, которые обеспечивают оптимальный результат, соответствующий целям защиты потребителей и облегчения торговли.

Системы контроля и сертификации пищевых продуктов должны применяться во всех случаях, когда это необходимо для того, чтобы обеспечить соответствие пищевых продуктов и систем их производства уста-

новленным требованиям в целях защиты потребителей от опасных факторов пищевого происхождения и от мошенничества при сбыте, а также для облегчения торговли на основе точного описания продукта.

Системы контроля и сертификации должны эффективно и полностью обеспечивать достижение поставленных перед ними целей, с учетом определения приемлемого уровня необходимой защиты [2].

Системы контроля, предназначенные для обеспечения безопасности пищевых продуктов, должны строиться и функционировать на основе объективной оценки риска сообразно с обстоятельствами. В основе оценки риска должны лежать имеющие в настоящее время научные данные. При осуществлении оценки риска или при применении принципов эквивалентности импортирующие страны должны надлежащим образом принимать во внимание заявления, сделанные экспортirующими странами на общенациональном или местном уровне, об отсутствии заболеваний пищевого происхождения.

Страны должны всячески избегать произвольных или необоснованных различий в уровне риска, который считается приемлемым в различных обстоятельствах, чтобы избежать дискриминации или скрытых ограничений торговли.

Система контроля и сертификации должны иметь достаточные средства для выполнения своих задач. При выборе систем контроля и сертификации необходимо учитывать издержки для потребителей и затраты денежных средств и времени, которые лягут на пищевую промышленность и государство, и, где это необходимо, консультироваться с заинтересованными организациями. Такие системы не должны ограничивать торговлю больше, чем это необходимо для достижения требуемого уровня защиты.

Странам следует признать, что разные системы контроля/сертификации могут быть способны достигать одной и той же цели, и поэтому эти системы эквивалентны. Обязанность продемонстрировать эквивалентность лежит на экспортirющей стране.

Законное стремление сохранять конфиденциальность должно уважаться, но в то же

время принципы построения и само функционирование систем контроля и сертификации должны быть открытыми для подробного изучения потребителями и представляющими их организациями и другими заинтересованными сторонами.

Импортирующие страны должны предоставлять информацию о существующих требованиях, публиковать предложения об изменениях в требованиях и, кроме случаев серьезной и непосредственной угрозы, давать достаточно времени для отзыва и комментариев. При принятии окончательного решения должны приниматься во внимание точки зрения экспортirующих стран, особенно развивающихся стран. Перед вступлением в силу какого – либо нового требования необходимо давать разумный период времени для того, чтобы экспортirующие страны, особенно развивающиеся страны имели возможность внести необходимые изменения в технологию производства и меры контроля [3].

Импортирующие страны должны своевременно представлять экспортirющим странам по их запросу сведения о том, на каком основании или принято решение о соответствии пищевых продуктов существующим в импортирующих странах требованиям в отношении этих продуктов.

По требованию компетентных органов импортирующих стран экспортirющие страны должны обеспечивать доступ для ознакомления с практикой работы их соответствующих систем контроля и сертификации и для оценки этой работы.

При выработке структуры и применении систем контроля и сертификации пищевых продуктов импортирующие страны должны принимать во внимание возможности развивающихся стран по предоставлению необходимых гарантий.

Импортирующие страны должны незамедлительно выполнять все процедуры необходимые для оценки соответствия существующим требованиям. Требования импортирующих стран о предоставлении им информации и взимаемые ими сборы должны быть ограничены пределами разумного и необходимого.

Страны, сертифицирующие экспортные поставки, и те импортирующие страны, которые полагаются на сертификат об экс-

порте, должны принимать меры к тому, чтобы обеспечить юридическое действие сертификации. Меры экспортаций стран по подтверждению юридического действия могут включать достижение уверенности в том, что официальные или официально признанные системы контроля проверили и установили соответствие продукта или технологического процесса, указанного в сертификате, существующим требованиям. Меры импортаций стран могут включать системы контроля в точке ввоза, ау-

дит систем контролю экспорта и гарантию того, что сами сертификаты аутентичны и правильны.

ЛИТЕРАТУРА

- Статистический ежегодник Армении, 2013.
- Никифоров А. Д.,** Взаимозаменяемость, стандартизация и технические измерения: Учеб. Пособие для вузов. М., "Высшая школа", 2007, 512 с.
- Магомедов М. Д.,** Управление качеством в отраслях пищевой промышленности: учебное пособие. М., "Дашаков и Ко", 2006, 190 с.

ԱՆՆԱՎԱԹԵՐՔԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՍ ԵՎ ՆԵՐՍՈՒԾԱՌԱՆ ԴԵՊԲՈՒՄ ՍԵՐՏԻՖԻԿԱՑԻԱՆ ԵՎ ՎԵՐԱՀԱՆՈՂՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ՄԻՔԱՅԵԼ ՄԵԼԿՈՒՄՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՖՐԻԴԱ ԲԱՀԱՐՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ՍՈՒՐԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԵՊՀ հայցորդ.

Անվիտում

Արտաքին առևտրային քաղաքականությունը միտված է համաշխարհային մակարդակով նրանունակ, որակյալ ապրանքների իրացմանը և դրանց արտադրության խթանմանը: Սննդամթերքի դրակի վերհսկողության հիմնարար, կարևոր նշանակություն ունեցող և լայնորեն կիրավող միջոցներից է սերտիֆիկացման և վերահսկողության համակարգը:

THE WAYS OF IMPROVEMENT CERTIFICATION AND CONTROL EFFICIENCY IN CASE OF FOOD IMPORT-
ING AND EXPORTING IN RA

MIKAYEL MELKUMYAN

Doktor of Economics Sciences, professor

FRIDA BAHARYAN

Candidate of Economics Sciences, docent

SUREN MURADYAN

Ph.D student Yerevan State University

Summary

Foreign trade policy aimed at world competitive, high quality products, sales and boosting the production. The food quality control fundamental, important and widely used means are certification and control system.

**ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԴԱՏԱԿԱՆ
ԳԱՆԳԱՏԱՐԿՍԱՆ ԻՆՍԻՏՈՒՏԻ ԴԵՐԱ ԱՌԵՎԱՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿՍԱՆ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒԻ***

Միքայել ՄԵԼքՈՒՄՅԱՆ

ԴՊՏԴ «Միկրոէկոնոմիկայի և ծերնարկատիրական գործունեության կազմակերպման»
ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Վարդան ՄԱՐՈՒԹՅԱՆ (Նկարում)

ԴՊՏԴ «Միկրոէկոնոմիկայի և ծերնարկատիրական գործունեության կազմակերպման»
ամբիոնի ասպիրանտ

Աւելախոսության թեմամ՝ Առևտրային կազմակերպությունների հարկման կատարելագործման
հիմնախնդիրները (ՀՀ նյութերով)

Գիտական ղեկավար՝ Միքայել ՄԵԼՔՈՒՄՅԱՆ՝ տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր



Մոհասարակ, վարչական մարմնի գործողությունների հախատատական գանգատարկման հիմսադրուտությունն ու զարգացվածության աստիճանը երկրի ներդրումային գորավության հիմնարար ցուցիչներից մեկն է: Այս հանգամանքը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ պատճառներով, որոնցից, թերևս, հատկապես հիշատակման են արժանի հետևյալները՝

- նախադատական գանգատարկումը բույլ է տալիս վարչական մարմնի հետ հարաբերություններում վեճերը լրտեղ առավել սեղմ ժամկետներում և նվազագույն ռեսուրսներով, մինչդեռ դատական ատյաններում հարցի քննարկումները կարող են տևել տարիներ, խել մեծ նյութական և աշխատանքային ռեսուրսներ:

- նախադատական գանգատարկման հիմսադրուտությունը վկայում է վարչա-

կան մարմնի օբյեկտիվ, անաշառ և թափանցիկ գործելազնի մասին

- նախադատական գանգատարկման հիմսադրուտությունը նաև պետությունմասնավոր հատված գործակցության արդյունավետ և առողջ ձևաչափի առհավատցյան է:

Գործարար միջավայրի բարելավման համատեքստում հատկապես կարևորում ենք վարչական մարմններից հարկային մարմնի գործողությունների զանգատարկման-բռնդրաբական հիմսադրուտությունը, քանզի վերջինիս հետ տնտեսվարողների շփումն ու գործակցությունը կրում է առավել հաճախակի, իսկ ֆինանսավան ու իրավական պաշտպանվածության տեսանկյունից՝ սեմսիտիվ բնույթ: Թեման առավել արդիական է դասնում՝ հաշվի առնելով այս ինստիտուտի՝ ՀՀ-ում անցած ընդամենը հնգամյա, իսկ համալիր աշխատանքի տեսանկյունից՝ եռամյա փորձն ու միջազգային գործունակ պրակտիկայից որոշ մեխանիզմների տեղանացման անհրաժեշտությունը:

Այսպիսով՝ հարկային մարմնի և հարկային ծառայողի գործողությունների վարչական կարգվ բողոքարկման վերաբերյալ դրույթները կա-

* Ներկայացվել է 25.10.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

նոնակարգվում են «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1 հոդվածով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով:

Հարկային մարմնի կամ հարկային ծառայությի գործողությունները կամ անգործությունը կարող են գանգատարկվել հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովին:

Գանգատարկման հանձնաժողովի աշխատաքարզը սահմանված է հարկային պետական ծառայության պետի 06.06.2008թ. 06-Ն և 07-Ն հրամաններով:

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը հարկային մարմնի ղեկավարի կողմից ծևակորվող, վերադաս հարկային մարմնում մշտական գործող մարմնի է, որը բարկացած է նախագահից և ուրա անդամից, որոնք աշխատանքը հանձնաժողովում համատեղում են իրենց գրանցությամբ հարկային ծառայության պաշտոնների հետ: Գանգատարկման հանձնաժողովի որոշումներն իրավագոր են, եթե այդ որոշումների կայացմանը նախակցել է առնվազն 7 հոգի: Որոշումները կայացվում են բաց քվեարկությամբ, պարզ մեծամասնության ձևով: Դիմում-գանգատների նախամք բավարարելու կամ դրամը մերժելու դեպքերում հանձնաժողովներն իրենց որոշումների նախագծերը, գանգատի փաթեթի հետ միասին, մեկ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում են գանգատարկման խորհրդությունը:

Հարկ է նշել, որ Վերադաս հարկային մարմնների գանգատարկման խորհրդությունը ստեղծվել է հանձնաժողովի ծևակորումից շուրջ երկու տարի հետո՝ 2010 թվականի հոկտեմբերի 21-ին՝ ՀՀ Կառավարության թիվ 1361-Ն որոշմամբ, որով էլ կարգավորված են խորհրդի աշխատակարգի առանձնահատկությունները:

Խորհրդությունը իր նիստերի ընթացքում քննարկում է հանձնաժողովի ներկայացրած յուրաքանչյուր գանգատի փաթեթը և խորհրդի նիստերի անցկացման վայրում դրա մուտքագրվելուն հաջորդող տասն օրվա ընթացքում իր եղանակությունը ներկայացնում ՀՀ ԿՍ ՊԵԿ:

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը, հաշվի առնելով խորհրդի եղանակությունը, երկու աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է դիմում-գանգատի վերաբերյալ որոշում, որի բնօրինակը մեկ օրվա ընթացքում տրամադրվում է տնտեսվարող սուբյեկտին, իսկ կրկնօրինակը՝ խորհրդին:

Խորհրդի ընդունած եղանակության վերա-

բերյալ առարկությունների առկայության դեպքում ՀՀ ԿՍ ՊԵԿ նախագահը սահմանված կարգով երկարաձգում է որոշումների ընդունման համար սահմանված ժամկետները՝ գանգատի փաթեթը խորհրդի եղանակության, կոմիտեի առաջարկությունների և հիմնավորումների հետ միասին ներկայացնելով ՀՀ վարչապետին, և հանձնաժողովները, ըննարկման արդյունքներին համապատասխան, դիմում-գանգատի վերաբերյալ ընդունում են որոշում:


Փորձը վկայում է, որ բողոքներն իրենց բնույթով բազմազան են, սակայն դրանց մեծ մասը վերաբերում է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ծշտության գծով իրականացված ստուգումներից: Հանդիպում են նաև դեպքեր, երբ գանգատարկվում են ՀՀ ԿՍ ՊԵԿ աշխատական պահանջումների հետ:

2010թ. ընթացքում քննության առնված


թվով 194 բողոքների վիճակագրությունը



2011թ. ընթացքում քննության առնված թվով 230 բողոքների վիճակագրությունը



2012թ. ընթացքում քննության առնված թվով 156 բողոքների վիճակագրությունը



Եկամուտների կոմիտեի պաշտոնատար անձանց գործողությունները կամ անգործությունը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնից տրամադրված տեղեկությունների համաձայն¹, գանգատարկման հանձնաժողովում 2010-2012 թթ. քննության առնված գործերի հանգուցալուծման վիճակագրությունն արտացոլող զծապատկերը տես նախորդ էղում:

Զարմանալի է այն փաստը, որ բավարարված գործերի տեսակարար կշրջի աճին զուգահեռ՝ մասնավորապես 2012 թ. ընթացքում բավարարված և մասնակի բավարարված թվով 79 բողոքների վերաբերվող վերանայված վարչական ակտերի կազմնանը մասնակցող հարկային ծառայողներին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումներ չեն կայացվել, և սա այն դեպքում, եթե քննարկվող գործերի ուսումնասիրությունից հաճախ, մեղմ ասած, ակնհայտ է որոշ հարկային ծառայողների անբարեխից և ոչ հրավաչափ գործելածը: Դարկ է նշել, որ հանձնաժողովի խնդիրներից մեկը հենց հարկային վարչարարության կատարելագործումն է, ուստի բողոքների միջոցով խստաված հրավությունի վերականգնումից զատ՝ կարծում ենք, որ իր առարելության լավագույնս իրագործման համատեքստում կարող է նաև հետևադարձականություն ցուցաբերել արտավագրությունների կանխարգելման գործում:

Չնայած հանձնաժողովը և խորհրդի համատեղ աշխատանքի երեք տարվա պրակտիկայում քիչ ծերքերումներ չեն արձանագրվել, այնուամենայնիվ, կան հարցեր, որտեղ ընդորինակելի է այլ պետությունների առաջավոր փորձը, իսկ գործողության մեխանիզմում որոշ դրվագներ պարզապես սկզբունքորեն ենթակա են վերածնակերպման:

Միջազգային փորձի ուսումնասիրությունից, թերևս, կարելի է առանձնացնել մի քանի կոնցեպտուալ դիրքորոշումներ, որոնց տեղայնացումը ՀՀ օրինակով անկանակա կրեթեր այս ինստիտուտում դրական բարեփոխումների, մասնավորապես՝

- գանգատարկման գերմանական մոդելից մեր իրականությունում շատ արդիական ենք համարում տնտեսվարողի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքներ առաջադրուող վարչական ակտի գործողության-ուժի մեջ մտնելու հետաձգումը մինչև գանգատը քննող մարմնի վերջնական որոշման կայացումը²: Փորձը ցուց է տալիս, որ շատ հաճախ անհիմն

կազմված կամ վարչարարության տեսամնկյունից ոչ հրավաչափ ակտերը ծանր հետո են թողնում տնտեսվարողի բնականոն գործունեության վրա՝ իրենցից բխող արգելանքների և բռագանձումների պատճառով:

- գանգատարկման ուկրաինական մոդելի հիմնայուններից մեկն այն է, որ հարկ վճարողի կողմից գանգատի հիմնավորվածության մասով որևէ ապացույց ներկայացնելը պարզապես նրա իրավունքներից, այլ ոչ թե պարտականություններից: Այստեղ շատ հստակ գործում է վարչարարության հիմնարար սկզբունքներից մեկը, այն է՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների դեպքում վարչական մարմնի հետ հարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմնը: Ըստ էության, սրանով գանգատի քննությունը վերափոխվում իր էությամբ վերստուգման նմանվող մի ընթացակարգի, որտեղ վարչական մարմնի ներկայացուցիչը աստիճանակարգությամբ առավել բարձր հարթությունում հիմնավորում է իր կազմած ակտի իրավափոխությունը: Ըստ որում, հատկանշական է, որ այս քննության ընթացքում ի սկզբանե կազմված վարչական ակտին ի լրումն նոր հանգամանքների բացահայտման պարագայում կարող են լրացնել պարտականություններ առաջադրվել տնտեսվարողին:

Այս ամենից զատ՝ գանգատարկման ազգային մոդելում կան մի շարք բացեր և սկզբունքային խնդիրներ, որոնք անվերապահորեն ենթակա են վերանայման: Անփոփելով թեման՝ Շերկայացնենք նկատված խնդիրներն ու դրանց լուծման կապակցությամբ առաջարկությունները:

Այսպիսով՝

- I. Առաջին հերթին պետք է սկսել հանձնաժողովի կազմում կառուցվածքային փոփոխություններից: Ներկայում հանձնաժողովի անդամների թեկնածուների առաջադրման կարգի համաձայն⁴ հանձնաժողովն ունի հետևյալ կառուցվածք՝ մեկական անդամ՝ առաջարկված Շայաստանի Շանրապետության կառավարության աշընքեր պետական եկամուտների կոմիտեի ռազմավարական ծրագրավորման վարչության, հարկ վճարողների սպասարկման և հարկման ընթացակարգերի վարչության, հարկային տեսչությունների աշխատանքների համակարգման վարչության, ներքին դիտարկումների և վերահսկողության վարչության, ընչական վարչության, հետաքննության վարչության, օպերատորի հետախուզության վարչության կողմից և

մեկ հարկային տեսչության պետ: Նախ ակնհայտ է հանձնաժողովի այսպես ասված «ուժային» ուղղվածությունը՝ հաշվի առնելով հանձնաժողովում քննչական, օպերատիվ և վերահսկողական ապարատից ներկայացնեցիների գերակշռությունը, այն դեպքում, երբ առավել նպատակահարմար է նման կառույցում ավելի ներողական ուղղվածություն ունեցող մասնագետների ներգրավումը: Իսկ առհասարակ, առաջարկում ենք հանձնաժողովի 8-ից 4 անդամներին պարտադիր առաջարկել ոչ հարկային համակարգից՝ այդ կերպ բարձրացնելով հանձնաժողովի՝ որոշումների կայացման գործընթացում օբյեկտիվությունն ու անաշառությունը: Ընդունում, հանրային հատվածից չորս ներկայացուցիչների բաշխումը հարկ վճարողների իրավունքների պաշտպանության տեսնակյունից նպատակահարմար ենք գտնում կատարել հետևյալ սկզբունքով: Ներկայացնեցիչ ՓՄՁ ԶԱԿԻ, ներկայացնեցիչ Արևորապետույնարելողների պալատից, ներկայացնեցիչ միջազգային մասնագիտացված առողջապահութական ընկերությունից և ներկայացնեցիչ հարկատուների շահերի պաշտպանության ոլորտում առնվազն հինգ տարվա փորձ ունեցող հասարակական կազմակերպությունից (կամ ՀՀԱՍ-ից): Այս կերպ հնարավոր կդառնա բարձրացնել հանձնաժողովի անկախությունը, հեղինակությունը և վստահությունը հասարակության շրջանում: Իսկ միջազգային մասնագիտացված ընկերության ներկայացնեցիչ ներգրավումը լրացնեցիչ գրավական կիրար օտարերեկոյա ներդրումների համար:

II. Մյուս խնդիրը կապված է հանձնաժողովի ներկայացնեցիչներից ոնանց՝ Գանգատարկման խորհրդի կազմում ներգրավված լինելու հետ. այստեղ ուղղակի խնդիր ունենք շահերի բախման հետ. հանձնաժողովում քվեարկած անձը քվեարկության իրավունք է ստանում նաև խորհրդում, այն դեպքում, երբ խորհրդի առաքելությունը հանձնաժողովի որոշումների վերաբերյալ մասնագիտական օբյեկտիվ եզրակացնեցում տրամադրելն է: Աստացվում է՝ որոշում կայացրած անձը ուղղակիորեն մասնակցում է իր իսկ կայացրած որոշման վերաբերյալ եզրակացնեցության տրամադրման գործընթացում: Առաջարկում ենք այս անդամների մասնակցությունը սահմանափակել բացառապես հարցի մասնագիտական ներկայացնամք, և վերջիններիս չտրամադրել քվեարկության իրավունքը:

III. Խորհրդի եզրակացնեցության վերաբերյալ առարկությունների պարագայում գանգատի փա-

թերը կից փաստաթղթերով ներկայացվում է ՀՀ վարչապետին՝ քննարկման, որից հետո կայացվում է համապատասխան որոշում: Մինչդեռ չկահստակ ընթացակարգ, թե վարչապետի մոտ ինձ ձևաչափով է իրականացվում այս քննարկումը: Անհրաժեշտ է հստակեցնել ընթացակարգը հնարավոր թյուրմքոնումներից խուսափելու նպատակով:

IV. Կառավարության սահմանած կարգի համաձայն՝ խորհրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով՝ ազատ քննարկման և հրապարակյանության պայմաններում, մինչքեզ փորձը վկայում է, որ գրեթե անհնար է որևէ սոսոյց տեղեկություն ստանալ նիստերի ժամանակացույցի և օրակարգի մասին: Այսինքն՝ փաստացի անհնար է դարձնում ապահովել տնտեսվարողի ներկայությունը և մասնակցությունը խորհրդի նիստերին, ինչը, ըստ մեզ, ինչպես դատավարական պրակտիկայում, այնպիս է գանգատարկման ընթացակարգում կողմերի իրավահավասարության ապահովման առաջնային նախադրյալներից է: Ուստի առաջրկում ենք նիստերի վերաբերյալ պատշաճ ծանուցել դիմումատուններին և ապահովել վերջններիս լիարժեք մասնակցությունը իր գործի մասավոր խորհրդի նիստերին:

V. Հարկավոր է նաև լուրջ հետևողականություն ցուցաբերեն, որպեսզի բացառվի հանձնաժողովում կամ խորհրդում ապարատի այնպիսի ներկայացնեցիչների ներգրավվածությունը, որոնց կապվածությունը վարչական ակտերի կազմնան գործընթացում ուղղակիորեն շահերի բախման է բերում հանձնաժողովի կամ խորհրդի աշխատանքներում: Փորձը ցույց է տալիս, որ միևնույն անձը, որը հանդիսացել է վարչական ակտի կայացնողը կամ մեթոդական ցուցումներ է տվել ստուգման ակտի կազմնան գործընթացում, ներգրավված է նաև գանգատարկման մարմնի կազմում, ինչն ուղղակիորեն ստվեր է գցում հանձնաժողովի աշխատանքի անաշառության և օրյեկտիվության վրա:

Այսպիսով, վերոնշյալ առաջարկությունների հետևողական իրագործման արդյունքում ակնկալվում է բարձրացնել հանձնաժողովի գործունեության արդյունավետությունն ու անկախությունը, հանրային հատվածում մինչդատական գանգատարկման ինստիտուտի նկատմամբ վստահությունը և գործարար հատվածի տնտեսահրավական կարգավորման մեխանիզմների ձևունությունն ու երկրի ընդհանուր ներդրումային գրավչությունը:

1 «168 ժամ» օրաբերություն:

<http://168.am/2013/06/20/241130.html>

2 Ո՞՛ հարկային խորհրդատուների պալատի պաշտոնական կայքը. <http://www.palata-nk.ru/php/content.php?id=2346>

3 <http://ukrnalog.org.ua/>

4 Համաձայն ՀՀ ԿԱ ՀՊԾ ՊԵՏԻ 06.06.2008թ. 06-Ն ՀՐԱՄԱՆԻ հավելվածի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ օրենքը «Հարկային ծառայության մասին», ՀՕ-407-Ն, ՀՀՊՏ 2002.08.14/33/(208):

2. ՀՀ օրենքը «Հարկերի մասին», ՀՕ-107, ՀՀՊՏ 1997.05.20/11:

3. ՀՀ օրենքը «ՀՀ-ում ստորգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՕ-60, ՀՀՊՏ 2000.06.23/14(112):

4. «ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՍԻՆ ԳԱՍԳԱՏԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱԼՂԱՄՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՊԶԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՐՍԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱ ՀՊԾ ՊԵՏԻ

06.06.2008թ. 06-Ն ՀՐԱՄԱՆ, ՀՀՊՏ 2008.07.01/21(295):

5. «ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՍԻՆ ԳԱՍԳԱՏԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱԾԽԱՏԱԿՄՐԳԸ, ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՍԻՆ ԳԱՍԳԱՏԱՐԿՄԱՆ ՅԱՀԱՆԱԺՈՂՈՎԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱՌՈՒ ԴԵՎԻ ԵՎ ԴԻՄՈՒՄ-ԳԱՍԳԱՏ ՆԵՐԿԱՅԱՑՎԱՅՐԱԾ ԱԶԲԻՆ ՆԻՍՏԻ ԱՏՎԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ ՈՒՂԱՐԿՎՈՂ ԾԱՆՈՒՑԱԳՐԻ ԶԵՎՀ ՍԱՐՍԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱ ՀՊԾ ՊԵՏԻ 06.06.2008թ. 07-Ն ՀՐԱՄԱՆ, ՀՀՊՏ 2008.07.01/21(295):

6. «168 ժամ» օրաբերություն:

<http://168.am/2013/06/20/241130.html>

7. Ո՞՛ հարկային խորհրդատուների պալատի պաշտոնական կայքը. <http://www.palata-nk.ru/php/content.php?id=2346>

8. <http://ukrnalog.org.ua/>

9. Налоговый кодекс РФ (НК РФ) часть 1 от 31.07.1998 N 146-ФЗ

10. Е. Ю. Грачева, Э. Д. Соколова, Финансовое право. Второе изд. испр. и доп. М., "Юриспруденция", 2000.

THE ROLE OF THE INSTITUTE OF THE PREJUDICIAL APPEALANCE OF THE ACTIONS OF TAX AUTHORITIES IN THE CONTEXT OF IMPROVEMENT OF THE TAXATION OF COMMERCIAL ENTITIES

*MIKAYEL MELKUMYAN
VARDAN MARUTYAN*

Summary

This article is discussing the main problems and subjects of improvement in the institute of tax authorities' actions prejudicial appealance. There are also adequate parallels to the successful foreign experience in the article, which can be partly successfully localized in the Armenian legal practice.

The article summarizes the main principles of the institute and suggest a few definite steps in order to develop and improve the role of the institute and by this way to build a strong and healthy PPP model, attract the foreign direct investments with the help utilization of transparent and rightly chosen tax administration tools.

ԳԼՈԲԱԼԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱՋԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱԳՈՐԾԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ*

Տիգրան ԲԱՂՋՅԱՆ

Տնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ



Դեռևա 1990 թ.
Զ. Նեյսրիտը
և Պ. Աբրոդենը
կամխատեսում էին.
«2000 թ. հիրավի գլո-
բալ քաղաքներ կլի-
նեն ոչ թե խոշորա-
գույնները, այլ ամե-
նախելամիտները»
[1]: Զ. Լենդին այս-
պես է նկարագրում
Եվրոպական և ամերիկյան քաղաքային դեկա-
վարների գործունեությունը. «Ամենուրեք քաղա-
քային մենքերները ճգոտում են գտնել իրենց
քաղաքների հիմնախնդիրների լուծնան ճիշտ
ուղիները, սակայն նրանց մշտապես ինչ-որ քան
խոչընդոտում է: Այդ ոչ միշտ ակնհայտ խոչըն-
դութները անհրաժեշտ է վերացնել մինչև այն
պահը, եթե մենք կսկսենք քաղաքային կրթատիվ
միջավայրի ձևավորումը: Դրանց մեջ մասը
ստեղծվում է բյուրոկրատական մտածելակեր-
պի հետևանքով: Շատ քաղաքներում ընդուն-
վում են անհմաստ որոշումներ, որոնք հաճախ
կրկնում են ին օրինակները: Ամենուր հանա-
պագօրյա հարցերին մոտենում են չափազանց
ներ նիդրորոշումներից, որոնք թույլ չեն տալիս
տեսնել հրականությունը: Դաճախ որոշումները
հիմնվում են քացարձակապես ստանդարտ ֆի-
նանսական հաշվարկների վրա, որոնցում տեղ
չի տրվում ներքըքննանքը և քողարկված ներու-
ժերի քացահայտմանը: Ինչպես երևում է, քաղա-
քային դեկավարության ոչ կրթատիվ գործողու-
թյուններին այսօր դարձել են կանոն: Ընդհանուր
առմամբ, քաղաքի պահապետնան իրավիճակը
ճնշող է, երևում է՝ մարդիկ ուղղակի վախենում
են 21-րդ դարի քաղաքների կառավարման որա-
կի խնդիրների բնակումից» [2]:

Ուսասատամի Դաշնությունում Ա. Բորիսովը

և Պ. Օրեխովսկին, իրականացնելով քաղաքնե-
րի համակարգված վերլուծությունը, եկել են
հետևյալ եզրակացությանը՝ արդի ժամանակնե-
րում Ուսասատանում ռազմավարական պլանա-
վորումը ավելի շատ կրում է դեկլարատիվ
բնույթը և չունի իրական կազմակերպչական
հիմք: Տպագրված փաստաթրերի վերլուծու-
թյունը ցույց է տալիս, որ դրանք յուրահատուկ
քաղաքական փիառ են՝ քաղաքի իշխանություն-
ները բոլորին ցուցադրում են գեղեցիկ հեռան-
կարների իրենց ցանկությունները: Բնութագրա-
կան է, որ նաև փիառների բովանդակությունը
երբեք չի դառնում լուրջ քննարկման առարկա
ինչպես մամուլում, այնպես էլ կառավարման այլ
մարմիններում: Այնպես որ, այս ամենը գուտ
իմիջային փիառ է և բնավ ոչ քաղաքային դեկա-
վարության կոնկրետ գործողության ձևերի և
ուղղությունների առաջնորդում: Այդ պատճառով
գոյություն ունեն շատ փաստաթրեր, որոնք ան-
վանվում են քաղաքային ռազմավարական
պլաններ, մինչդեռ ռազմավարական պլանա-
վորման գործունեություն գոյություն չունի [3]:

Այս, ինչ այսօր մշակվում է հայ մասնագետ-
ների կողմից, կոչվում է «սոցիալ-տնտեսական
զարգացման ռազմավարություն»: Իրականում
այդ ռազմավարությունները միտումների երկա-
րացման միջոցառումների հավաքածուներ, ո-
րոնք պահպանվում են ոչ պատճեն, քան, ըստ Մարք-
սի, «ընդամենված վերատադրությունը»: Դրան-
ցում հազվադեպ կարելի է գտնել որոշումներ,
որոնք իրականում ուղղված են դեպի զարգա-
ցումը, նորանուժությունը, ոչ ստանդարտայինը:

Ժամանակակից պայմաններում ռազմավա-

րական համատեքստում քաղաքների կառավա-
րիչները հաշտարարներ են, միջնորդներ, որոնք
նպաստում են ցանցերի ստեղծմամբ:

Ժամանակակից աշխարհի բարդ կառույցնե-

րո չի կարելի կառավարել հասարակ, պարզ վե-

* Ներկայացվել է 16.12.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

րահակողության միջոցով: Դրանց հետ կարելի է աշխատել միայն համագործակցության և համատեղ գործողությունների հիման վրա:

Դանրային կառավարման արևատյան տեսաբանները և գործարարները առաջարկում են հանրային իշխանության մարմինների ազդեցության հետևյալ ոլորտները.

- ժամանակակից գիտահետազոտական և փորձնական նախագծային աշխատանքների ոլորտ,

- կադրերի պատրաստման և վերապատրաստման ոլորտ,

- աշխատուժի ճկունության բարձրացման ոլորտ,

- շահերի համաձայնեցման, իշխանության մարմինների և բիզնեսի միջև համագործակցության սկզբունքների վրա հիմնված հարաբերությունների նոր համակարգի ձևավորման ոլորտ:

Այս ցանկում բացակայում են ավանդական այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, սոցիալական ոլորտը և այլն: Անզան Արևատյան Եվրոպայի և ԱՄՆ-ի ապահովված, զարգացած մունիցիպալ կառույցներում հանրային իշխանության մարմինները հասկանում են, որ իրենց ռեսուրսները բավական չեն տնտեսական գործունեության ուղղակի միջամտելու համար:

Դայաստանի քաղաքային դեկավարներին անհրաժեշտ է գիտակցել պարզ, բայց շատ կարևոր մի գաղափար՝ բյուջեն քաղաքի ռազմավարական զարգացման գործիք չէ: Եվ երկրորդ, ոչ պակաս կարևոր գաղափարը, որը պետք է դրվի ռազմավարական պլանավորման հիմքում՝ քաղաքային զարգացման ռազմավարությունը պետք է լինի բայց շուկաներում դիրքադրման ռազմավարությունը և ոչ թե ներքաղաքային միջոցառումների հավաքածու:

Անհրաժեշտ է ընդգծել քաղաքի՝ որպես կառավարման օբյեկտի արտաքին միջավայրի գործոնների մակարդակները. ի դեպ քաղաքային միջավայրը և նրա գործոնները, կառավարչական վերլուծության տեսանկյունից, ներքին միջավայրն է: Տվյալ միջավայրը լիարժեք չի ենթարկվում ուսումնասիրման. այն մինչև վերջ անճանաչելի է, և այս փաստը պետք է գիտակցվի քաղաքի դեկավարների կողմից: Առաջարկվում է քաղաքի արտաքին միջավայրի մակարդակները (տե՛ս գծապատկերը ստորև):

Միկրոմիջավայրը տարածքային միջավայրի գործոններն են, մեզոմիջավայրը՝ երկրի մակարդակի գործոնները: Ազգային միջավայրը ներառում է ոչ միայն այն գործոնները, որոնք կա-

րևոր են ամբողջ երկրի համար, նրանք կարևոր են նաև երկրի տարածաշրջանների համար: Մակրոմիջավայրը գլոբալ միջավայրի գործոններն են, որոնք նույնական են նշանակություն և ազդեցություն ունեն քաղաքի վրա:

Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ քաղաքի արտաքին միջավայրի գործոնների մակարդակների հաստատումը զուտ գաղափարական գործներաց է: Այն փաստը, որ գլոբալ միջավայրի գործոնները վերաբերում են մակրո մակարդակին, նշանակում է միայն այն, որ այդ գործոններն ազդում են ոչ միայն տվյալ քաղաքի, այլ նաև ամբողջ աշխարհի քաղաքների, ինչպես նաև երկրի և տարածաշրջանի վրա: Քաղաքի արտաքին միջավայրի բաժանումը միկրո-մեզո-մակրո մակարդակի, թույլ է տալիս բացահայտել տվյալ մակարդակի գործոնների ազդեցությունը քաղաքի վրա: Մենեցմենքի տեսությունում ենթադրվում է, որ եթե գործոնները վերաբերում են մակրո մակարդակին, ապա դրանց ազդեցությունը ուղղակի է, անմիջական: Իսկ եթե, օրինակ, մակրո մակարդակին են վերաբերում, ապա նրանց ազդեցությունն անուղղակի է: Նման տարրերակները, որպես կանոն, տաճում են դեպի մակրո մակարդակի գործոնների թերագնահատում, որոնց ավելի քիչ ուշադրություն է դարձվում, և դրանք բավարար չափով չեն վերլուծվում: Սակայն գլոբալացման պայմաններում մակարդակների և գործոնների ազդեցության բնույթի նման հարաբերակցումը չի համապատախանում իրականությանը և պետք է քննադատաբար վերաբերականությունը: Գլոբալ միջավայրի գործոնները բավականին կարևոր, զգալի, նշանակալի են, այնպես որ չեն կարող լինել երկրորդ պլանում յուրաքանչյուր տարածքի գարզացման հնարավոր ուղիների վերլուծության և գնահատման գործի իրականացման ժամանակ:

Գլոբալ գործոնները

ազգային գործոնները

տարածքային գործոններ

քաղաք

միկրոմիջավայր

մեզոմիջավայր

Եթե դիտարկենք տարածքի հակադարձ ազդեցուրյան հնարավորությունները միջավայրի յուրաքանչյուր մակարդակի գործոնների վրա, ապա այստեղ էլ հնարավոր չէ անել միանշանակ պնդումներ: Դավանաբար միկրոմիջավայրը, այսինքն՝ տարածքային միջավայրի գործոններն ավելի հեշտ են ենթարկվում ազդեցուրյան: Ինչ վերաբերում է արտաքին միջավայրի ազգային կամ գլոբալ գործոններին, ապա դժվար է ասել, թե դրանցից որն ավելի դժվար կազդի քաղաքի վրա, և, հետևաբար միանշանակ հնարավոր չէ ասել, թե ռազմավարական պլանավորման և կառավարման ժամանակ գործոնների ո՞ր մակարդակի վրա է անհրաժեշտ ավելի շատ ուշադրություն դարձնել:

Ռազմավարական պլանավորման իրացման տրամաբանությունն այսպիսին է:

1. Քաղաքի առաքելությունը. դա նրա յուրահատուկ դերն է աշխարհում, գլոբալ տարածաշրջանում, երկրում, երկրի տարածաշրջանում: Առաքելության ծավալը կախված է քաղաքի սոցիոտնտեսական հզորությունից: Դինգ հարյուր հազար և ավելի բնակչությամբ քաղաքների առաքելությունը պետք է դիրքադրվեն գլոբալ մաշտարներում, քանի որ նրանց առաքելությունը հեռանկարային գերճանակներն են: Խսկ հարյուրից մինչև 500 հազար բնակչությամբ քաղաքների առաքելությունը պետք է լինի աշխարհի գլոբալ տարածաշրջանի մասշտարներում: Մինչև հարյուր հազար բնակչությամբ քաղաքների առաքելությունը կարող է լինել երկրի կամ երկրի տարածաշրջանի մասշտարներում:

2. Եթե բոլոր քաղաքների ընդհանուր ռազմավարական նպատակները միանման են (բնակչության բարեկեցուրյան բարձրացում, գրադարձության աճ, տնտեսության կենսունակության բարձրացում և այլն), ապա նպատակները պետք է լինեն յուրօրինակ, բնորոշեն միայն տվյալ քաղաքը և ամրապնդեն նրա առաքելությունը:

Հետաքրքրություն են ներկայացնում եվրոպական քաղաքների նպատակների հետևյալ ձևակերպումները [5].

- լինել «բաց քաղաք» (ներգաղթողների և այլոց համար), միջազգային քաղաք, մշակութային քաղաք (Ամստերդամ),

- դաշնալ «ԵՄ-ի տեղեկատվության նայարձական» և «ԵՄ-ի տրամադրութային տեղափոխումների կենտրոն (Քյոլու),

- զարգանալ որպես տեխնոլոգիական նորամուծությունների կենտրոն (Մանչեստրո),

- կապի առաջադեմ տեխնոլոգիաների ներդր-

ման ոլորտում դարնալ առաջատարներից մեկը տարածաշրջանում (Սյուրնբերգ),

- ստեղծել բարձրորակ արտադրության եվրոպական կենտրոն (Բրեդֆորտ),

- իրականացնել «արդիականացման եռակի քաղաքականությունը» (տարածա-տնտեսական, սոցիալական և կառավարչական արդիականացում) (Ուտերդամ):

3. Ինչպես նշված է մենեջմենթի տեսությունում, SWOT վերլուծությունն արտաքին միջավայրի վերլուծությունն է, որում արտահայտվում են կազմակերպության հնարավորությունները և վտանգները, ինչպես նաև ներքին միջավայրի վերլուծությունը, որում որոշվում են կազմակերպության ուժեղ և բոլոյ կողմերը:

Վերլուծության իրականացումը ճշգրիտ ձևով հանդիսանում է քաղաքային զարգացման ռազմավարական պլանավորման գործընթացի հաջողության կրիտիկական գործոն: SWOT վերլուծության իրականացման համար չափությունների հավաքածուն չի կարող հաստատուն լինել. այս 3-5 տարիների ընթացքում պետք է վերանայվի: Ռազմավարական վերլուծությունը անցյալի վերլուծություն չէ, այդպես է կոչվում հաշվետու ժամանակաշրջանում. դա արդեն անցյալ է, իսկ անցյալի վերլուծությունը գլոբալացման դրաշրջանի համար չի կարող լինել օգտագույն, քանի որ տվյալ դեպքում պազան է անցյալի շարունակությունը: Բնականաբար այս պնդումը վերաբերում է միայն ռազմավարական, ոչ թե օպերատիվ պլանավորմանը: Եթե քաղաքին պեկանակների համար տարածքային և ազգային արտաքին միջավայրի վերլուծության տրամաբանությունը թիւ թե շատ հասկանալի է, ապա գլոբալ միջավայրի վերլուծությունը դյուրին չէ: Առաջ են գալիս հարցեր՝ ինչը և ինչպես:

1. Ի՞նչ վերլուծել. անհրաժեշտ է վերլուծել գործընթացները և զարգացման միտումները միջավայրի բոլոր 3 մակարդակներում, ընդ որում՝ տարրեր ոլորտներում՝ տնտեսական, տեխնոլոգիական, մշակութային, բնապահանական, քաղաքական, ժողովրդագրական, սպառման, արտադրության, զվարճալիքների, աշխատանքի և գրադարձության, մենեջմենթի և այլ:

2. Ինչպես վերլուծել. գլոբալ միջավայրի գործընթացների, երևույթների և միտումների վերլուծությունն առաջին հերթին որակական վերլուծությունն է: Միջազգային վիճակագրական տվյալները ունեն սահմանափակ արժեք, քանի որ արտացոլում են անցյալ ժամանակաշրջանները և հազարեալ կարող են ցույց տալ հեռանկարային փոփոխությունները:

Գլոբալ արտաքին միջավայրի մասին տեղեկատվության հիմնական աղբյուրներ կարող են լինել.

- մասնագիտացված ամսագրերի վերլուծական նյութերը,
 - միջազգային կազմակերպությունների վերլուծական և կանխատեսումային նյութերը (օրինակ՝ ՄԱԿ, Համաշխարհային բանկ և այլն),
 - ռազմավարական մշակումները (օրինակ՝ Եվրամիության և այլ երկրների),
 - միջազգային կազմակերպությունների ցանցերի նյութերը, որոնք տարածվում են դրանց անցումների միջև,
 - արտասահմանյան հետազոտողների գիտական հոդվածները և մենագրությունները, որոնք վերաբերում են արդի հիմնախճանդիրներին,
 - համացանցում տեղադրվող հայկական և արտասահմանական մանուկի տեղեկությունները:

Վերլուծական աշխատանքի տվյալ թվոկը (արտաքին միջավայրի վերլուծություն) չի կարող լինել ամբողջովին ձևակերպված, քանի որ հնարինով չէ նախօրոր որոշել, թե որ երևույթը երբ ու գործընթացները և կոնկրետ որ ոլորտ-երում կինեն ավելի նշանակալի՝ կոնկրետ քառակի հեռանկարային զարգացման տեսանկյունից:

Տվյալ Վերլուծական բլոկի աշխատանքների արդյունք պետք է դառնա քաղաքի զարգացման հեռանկարների ու գործընթացների ցանկը, որը պետք է նոցցի SWOT մատրիցայի մեջ: Դա նշանակում է, որ ոչ բոլոր միտուներն ու գործընթացներն են արժանի միանման ու շարության: SWOT մատրիցան, ի տարբերություն քաղաքային պահանջման ժամանակակից փաստարդենի, չաետք է լինի անսահման:

Դա համապարփակ գործիք է, որը պետք է օգնի կառավարչին ճիշտ վճռել քաղաքի ապագա խնդիրները և ապագա հնարավորությունները:

որ և ոչ թե արդի խնդիրները, նրան պեսոք է թույլ տա կանխատեսել այդ բոլոր հիմնախնդիրների հաղթահարման հնարավոր գործողությունները:

SWOT վերլուծությունը պետք է կատարվի ոչ սովորական գործողություններում՝ կատարելու համար. դա անհրաժեշտ է իրականացնել՝ կողմնորոշվելով դեպի քաղաքի առաքելությունը: Քաղաքի ուժեղ և բոլոր կողմերը կարելի է գնահատել միայն համեմատելով դրանց առաքելությունը նվազելու հեռանկարների հետ: Բոլոր առաքելությունները և թերությունները պետք է գնահատվեն և ստորակարգվեն գերնպատակին: Նոր օդանավակայանի կառուցումը, քաղաքում հանցագործության մակարդակի նվազումը, բնույթում նոր մասնագիտությունների բացումը կամ փակումը, տարրեր շինարարական համալիրների կառուցման համար ազատ քաղաքային հողերի առկայությունը կամ բացակայությունը, – այս ամենը պետք է դիտարկվի որպես քաղաքի ուժեղ կամ բոլոր ըստ մրա գլխավոր նպատակի՝ առաքելության:

Նույն ձևով պետք է գնահատվեն արտաքին միջավայրում առաջացող հնարավորությունները և վստանգմերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Naisbitt J., Aburdene P.**, Mega-Trends 2000, L., 1990.
 2. **Лэндри Ч.** Креативный город: пер. с англ. М., 2006.
 - 3 **Борисов А., Ореховский П.** Города: системный анализ // Муниципальная экономика. 2002, N3.
 4. **Кузин Д. В.**, Современный капитализм: государственное управление и промышленная политика. М., 1989.
 5. Страгическое планирование в городах и регионах России: сервер для специалистов по территориальному стратегическому планированию. М., 2002 // <http://rels.obninsk.com>.

METHODOLOGICAL APPARATUS IMPROVEMENT OF STRATEGIC PLANNING OF URBAN DEVELOPMENT IN GLOBALIZING CONDITIONS

TIGRAN BADOYAN
Candidate of Economics Sciences, docent

Summary

In the article it is discussed the problem that the Armenian urban authorities are necessary to realize one simple but an important thing, that the budget is not the tool of strategic development . And the second one is not less important notion, which should be put in the basis of strategic planning, that urban development strategy must be position strategy in the open markets, but not the collection of interurban events.

ՈՐԱԿԻ ՄԵՆԵԶՄԵՆԹԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄ ՆՈՐԱՄՈՒԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ*

Տիգրան ԲԱՂՋԱՎԱՆ

Տնտեսական գիտությունների բեկմածու, դոցենտ

Որակի նորամուծական մենեզմենթի ներդրումը մեր երկրում ունի առանձնահատուկ նշանակություն, քանի որ հասարակական համակարգի սոցիալ-տնտեսական զարգացման ճգնաժամային, անցումային բնույթը պահանջում է արդյունավետ կայունացնող կառավարում: Այն պետք է գիտակցված ձևով ուղղված լինի դեպի նոր կազմակերպչական ձևերի ստեղծումը, որը կտանի դեպի տնտեսական առաջնորդաց:

Կառավարումը պետք է ներառի ռազմավարական նորամուծական գաղափարներ: Զարգացման «առաջանցիկ» մոդելը ժամանակակից փուլում նախատեսում է կայունության այնպիսի գործոնների ընտրություն, ինչպիսիք են՝ բարձր տեխնոլոգիաները, գիտատար արտադրությունը, կրթությունը, մտավոր ռեսուրսների մշտադիտակումը, որոնք ամբողջությամբ կարող են ապահովել ՀՀ-ի տնտեսական անկախությունը և դուրս բերել նրան դեպի «տեղեկատվական հասարակություն»:

Որակի կառավարման հիմնախնդիրներից և դրա դասական մեթոդների մշակողներից են համարվում ամերիկյան գիտնականներ և Դեմինգը [1], Զ. Չուրանը [2], Ա. Ֆեյգենբառումը [3]: Այս դպրոցի ներկայացուցիչներն են նաև ճապոնական գիտնականներ Կ. Խսակովան [4], Գ. Տագուչին, որոնք մեծ ներդրում ունեն որակի պլանավորման մեթոդների և վիճակագրական վերլուծության զարգացման մեջ [5, 6, 7, 8, 9]:

Որակի կառավարման դասական մեթոդները հիմնված են տեխնիկական մոտեցումների վրա (տեղեկատվության մշակման վիճակագրական մեթոդների, որակի վերահսկման ֆիզիկական մեթոդների օգտագործում) և կառավարման մեթոդների լայն կիրառում: Որակի կառավարման ժամանակակից մեթոդները տարբերվում են

իրենց սոցիալական կողմնորոշվածությամբ և առավել ամբողջական արտացոլված են «որակի համընդհանուր կառավարման» հայեցակարգում [10]:

Ե. Դեմինգն առաջիններից էր, որ ուշադրություն դարձրեց որակի կառավարման կազմակերպչական հարցերին և նշեց դեկավարության դերը որակի կառավարման գործում: Նա ձևակերպել է ծեռնարկության դեկավարության հիմնարար սկզբունքները: Այդ բավականաչափ պարզ ձևակերպմանը սկզբունքների արդյունավետ կիրառման համար հարկավոր է մշակել և ծեռնարկությունում ներդնել բարդ միջացառումների մի համախումը:

Ե. Դեմինգը ներկայացրել է որակի մշտական բարեկավման մոդել՝ Դեմինգի շրջան:

Այդ մոդելի համաձայն՝ ցանկացած գործունեություն կարող է բաժանվել փուլերի՝ պլանավորման, ճշգրտող, գործողությունների իրագործման, վերահսկման:

Պլանավորման փուլում որոշվում են գործունեության հիմնական ուղղությունները:

Իրագործման փուլում իրագործվում է պլանավորված գործունեություն:

Ճաջորդ փուլում պլանավորվածի իրագործումից հետո հարկավոր է պլանավորված ցուցանիշները համեմատել ձեռք բերվածների հետ, արձանագրել ցանկալիի և իրականի միջև տարբերությունը: Որից հետո դեկավարը վերլուծության է ենթարկում անհամապատասխանութան պատճառները: Պատճառների բացահայտումից հետո միջոցներ են ծեռնարկվում դրանց վերացման ուղղությամբ: Արդյունքների դրական գնահատման դեպքում գործընթացը պետք է ներառվի նորմատիվային փաստաթղթերում՝ ծեռնարկության ներքին ստանդարտի մակարդակով:

Պլանավորում ⇒ իրագործում ⇒ վերա-

* Ներկայացվել է 16.12.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

հսկում => ղեկավարման ներգործությունը ձևավորում են ղեկավարման ցիկլը:

Արդյունքները (դրական և բացասական) հաշվի են առնվում հաջորդ պլանավորման գործընթացում:

Որակի կառավարումը բնդիանուր կառավարման բաղկացուցիչ մասն է:

Ե. Ղեճինագի ցիկլը հանդիսանում է որակի կառավարման գործառությունները. պլանավորումը նախատեսում է ապրանքի որակի ակնկալվող աստիճանը:

Իրագործման գործառության իրենից ներկայացնում է նախագծված որակի ապահովում պատրաստի արտադրանքում:

Վերահսկման գործառության իրենից ներկայացնում է գործընթացների որակի, հումքի, նյութերի նկատմամբ վերահսկողություն, ինչպես նաև պատրաստի արտադրանքի նկատմամբ, որի նպատակն է դրանց որակի համապատասխանությունը նախատեսվածին:

Եղագատող գործողությունների գործառությը ենթադրում է արտադրանքի իրացման վերաբերյալ միջոցների ձեռնարկում և տեխնիկական սպասարկման ոլորտում միջոցառումների անցկացում:

Զ. Զուրանն իր «Որակի եռագործություն» մենագրության մեջ քարոզում էր վիճակագրական նոտեցումների կիրառում արտադրության կազմակերպման մեջ: Զուրանի սկզբունքի համաձայն՝ որակը կարելի է ղեկավարել 3 գործընթացների միջոցով [2]:

Պլանավորումը կոչված է հաստատելու և փաստաթրավորման միջոցով ձևակերպելու արտադրանքի և գործընթացների պահանջվող բնութագիր:

Կարգավորումը ներառում է վերահսկողությունը և գործընթացներում օպերատիվ միջամտությունը: Որակի բարելավումն ուղղված է խոտանի առաջացման դեպքում լինդիների լուծմանը՝ արտադրանքի արդյունավետության մշտական բարձրացման ձևով: Զուրանի համակարգի հիմնական տարրերն են [2]՝ սպառողների պահանջնունների բավարարման հետաքրքրությունների ուղղվածությունը որակի վերահսկմանը, որակի բարելավման նպատակով արտադրական գործընթացների օպտիմալացումը:

Գ. Տագուչին [6] առաջինն է կիրառել որակի բարելավման գործընթացների կիրառումը արտադրանքի պլանավորման գործում, այսպես կոչված՝ ոչ արտադրական որակի կառավարում:

Նման մոտեցումն ունի 3 բաղկացուցիչ՝

1. համակարգային նախագծում
2. պարամետրերի նախագծում
3. թույլատրելի շեղումների նախագծում:
4. Տագուչին մշակել է որակի կառավարման

7 հիմնական սկզբունքներ [6]՝ պատրաստի արտադրանքի որակը որոշող բնութագիշներ, հասարակության հնարավոր կորուստներ (որոնք կապված են տվյալ արտադրանքի օգտագործման հետ), արտադրանքի արժեքի տատանումների նվազում, այդ տատանումներից կախված հասարակական կորուստների մակարդակը, արտադրանքի և գործընթացների պլանավորում, ոչ օճախին արդյունքների նվազման պատճառով արտադրանքի որակի տատանումների նվազում, արտադրանքի և գործընթացների չափորոշիչների կառավարում վիճակագրական մեթոդների շնորհիվ:

Առավել շատ տարածում են ստացել որակի կառավարման հետևյալ ներողները՝ «անընդհատ բարելավում» (Կայզենի մեթոդ), «ճիշտ ժամկետ» (Կանբանի մեթոդ), «արտադրողականության համբային նորման կառավարում» [5]:

Նշված մեթոդների բազային դրույթները և առավել կարևոր տարրերը բավականին նման են դասական մեթոդներին. և նոր, և դասական մեթոդներում ընդհանուր են ղեկավարի դերի առաջնայինությունը և պատասխանատվությունը, ուղղակի կողմնորոշումը դեպի պատվիրատուն, դեպի անթերի արտադրությունը, գործընթացների կառավարումը, շահադրդման նեխանդմերը, աշխատողների նախապատրատումը:

Եական տարբերություններին են պատկանում որակի ժամանակակից կառավարմանը բնորոշ գոյություն ունեցող տեխնիկական, կազմակերպական, կառավարչական և այլ հատուկ մեթոդների համալիր օգտագործումը, ինչպես նաև պահանջարար կիրառվող հաջորդական մեթոդների շարքը. դասական մեթոդները կառուցված են անցյալի վերլուծության հիմնա վրա՝ ներկայի կազմակերպման սկզբունքով, իսկ նոր մոտեցումները շեշտը դրում են իդեալական ապագայի պատկերացման հիմնա վրա ներկայի կազմակերպմանը:

Խիիեկի, Յոյսիհարայի կարծիքով՝ գոյություն ունեն ճապոնական կառավարման հետևյալ բնութագրի հատկանիշները [7]:

- Կառավարում, որը կողմնորոշված է դեպի որակը. որակը դրվում է կազմակերպության բայաբականության և ռազմակարության հիմքում,

- կառավարնան կոլեկտիվ ձևեր և կողեկտիվ պատասխանատվություն, որի նպատակն է խմբի աշխատանքի բարելավումը և համախմբվածության ուժեղացումը,
- կազմակերպության հրապարակայնությունը և արժեքները,
- դեկավարության ընդհանուր ներկայությունը արտադրությունում,
- տեղեկատվության հիմնան վրա կառավարում:

Արտադրանքի վերջնական որակը ձևավորվում է դամրադ, նրա արտադրության բոլոր փուլերում: ճապոնական կառավարման համակարգի ձևավորման ժամանակ հաշվի է առնվում այն փաստը, որ թերությունների, խոտանների, կրկնվող վերահսկողության քանակի կրծառումը, դետալների շարժման ուղիների ռացիոնալիզացումը տանում է դեպի նյութական ռեսուրսների և ժամանակի զգալի տնտեսմանը:

Որակի կառավարման նորամուծական համակարգի ստեղծման գործներացում ձևավորվում են երկու նակարդակներ, որոնք սերտ համագործակցում են, թեև լուծում են տարբեր խմբերի խնդիրներ՝ որակի կառավարման ֆիրմային ընդհանուր համակարգ, որը հորիզոնական կապերի և այլ ֆունկցիոնալ բաժինների հետ ստեղծում է զարգացած համակարգ, ինչպես նաև որակի մակարդակին համապատասխանող կազմակերպվող գործունեություն, բոլորում է արտադրանք, որը համապատասխանում է ընդհանուր կառավարման մասշտաբի ծառայություններին. որակի խճակների համակարգ, որոնք ստեղծվում են արտադրական ցածր օլակներում և լուծում են արտադրության արդյունաբերության աշխատանքի արտադրողականության և որակի տեղական խնդիրներ (անմիջապես աշխատատեղում): Գործնականում որակի կառավարման նորամուծական համակարգերի օգտագործման դեպքում առանձնացնում են գործունեության ձևերի մի քանի հիմնական խմբեր, որոնց իրականացումը համապատասխան կառավարչական մարմնների հետ բույլ է տալիս երկարաժամկետ հեռանկարներում ապահովել բարձր որակի կայուն արտադրանք:

Այդ գործողություններն են՝

- արտադրվող արտադրանքի որակի հանդեպ շուկայի պահանջների անընդհատ ուսումնասիրում,
- արտադրվող արտադրանքի կատարելագործում, նոր ապահների արտադրանք համար հետազոտությունների և մշակումների նա-

խածերում և իրականացում,

- հաշվի առնելով շուկայի և սպառողների պահանջները՝ որակի նոր ստանդարտների մշակում,
- օպտիմալ ծախսերով համապատասխան որակի մակարդակի արտադրանքի համար արտադրատեխնիկական չափորոշիչների մշակում և ներդրում,

• համապատասխան որակի ստանդարտների ապրանքի արտադրության ապահովման համար որակի վերահսկման և թերությունների վերացման գնահատման արդյունավետ համակարգի ստեղծում,

• փարերավորման, տեղափոխման, պահեստավորման, վերանորոգման, սպասարկման նպատակվող որակի ամբողջական համալիր ստանդարտների մշակում և ներդրում՝ ապրանքի անհրաժեշտ որակի ապահովման նպատակվոկ,

• եթե արտադրության փուլում բացահայտված թերությունների վերացման նպատակով շահագործման գործներացում համապատասխան որոշումներ ընդունելու համար արտադրանքի որակի նախին տեղեկատվության ձեռքբերում, մշակում և վերլուծություն:

Այս և մի շարք այլ գործունեության ձևեր, որպես կանոն, իրականացվում են կազմակերպության որակի կառավարման համակարգի սահմաններում: Սակայն նման համակարգի ամփոփական գծապատճերը կարող է գործել նաև կլաստերային համակարգի մակարդակում:

Արևմտյան և ճապոնական կառավարման դպրոցների կողմից որպես գիտության առաջարկված մեթոդների հարուստ գինանոց օգտագործելով՝ ամիրաթեշտ է հիմնական շեշտը դնել կարևոր աշխատողներին հիմնախնդիրների վերլուծություն և լուծման հմտություններ «պատվաստելու» վրա, որոնց կարող են ի հայտ գալ նրանց գործունեության ընթացքում:

ճապոնական կազմակերպությունների դեկավարությունն արտադրական խնդիրների լուծման ընթացքում աշխատողների ներգրավման գործում հասել է մեծ հաջողությունների: Այսպես, որոշ տվյալների համաձայն՝ ճապոնական խոշոր կազմակերպությունների անձնակազմի մոտ 65%-ը ներգրավված է արտադրանքի որակի բարձրացման գործներացում (այդ նույն ցուցանիշը ԱՄ-ի կազմակերպություններում չի գերազանցում 10-12%-ը):

Անձնակազմի ստեղծագործական ակտիվության դաստիարակման և խթանման գործում

կարևոր դեր պետք է խաղան միջին մակարդակի կառավարիչները, որոնց վրա դրված է խնդերի անմիջական դեկավարությունը, աշխատանքի արտադրողականության և արյունավետության բարձրացման գործունեության կազմակերպումը:

Այսպես, արևմտյան մասնագետների գնահատման համաձայն՝ ճապոնական անձնակազմի արտադրական ցուցանիշների բարձր մակարդակը պայմանավորված է մեծամասամբ նրանով, որ նրանք սովոր են բարձր որակի կառավարմանը, քանի որ դա որպես լավագույն մեջնօններ ապահովում է նրանց լավագույն շահադրդումը, աշխատանքից բավարարվածության առավել բարձր աստիճանը, սեփական կրթական և որակական մակարդակի բարձրացման հնարավորությունը:

Այստեղից հետևում է, որ աշխատանքի բարձր արտադրողականությունը և լավագույն որակը տանում են դեպի նորամուծական զարգացում:

Որակի մենեջմենքի մեթոդաբանության զարգացման վրա զգալի ազդեցություն են բողել գիտատեխնիկական հեղափոխությունը, սոցիալ-տնտեսական վերափոխումները, որոնք տեղի են ունեցել 20-րդ դարի ընթացքում շուկայական տնտեսության երկրներում, նաև ազդեցություն են ունեցել որակի մենեջմենքի տարբեր մոտե-

ցումների միավորումները և դրա հիման վրա ռացիոնալ մենեջմենքի ստեղծումը, որն իր հերթին կոնկրետ կազմակերպությունների, առանձին մարդկանց գործունեության արժանիքն է, որոնց գործունեությունը կառուցվում է առաջանցիկ նորամուծական զարգացման հիման վրա:

ԳՐԱԿԱՂՈԹՅՈՒՆ

1. **Деминг Э.**, Выход из кризиса / Э. Деминг. М., "Экономика", 1985, 201 с.
2. **Джуран Дж. М.**, Ачество и прибыль / Дж. М. Джуран. М., Изд.-во стандартов, 1970, 198 с.
3. **Фейгенбаум А.**, Онконтроль качества продукции / А. Фейгенбаум. М., "Экономика", 1986, 214 с.
4. **Исикава К.**, Японские методы управления качеством / . Исикава. М., "Экономика", 1988, 208 с.
5. **Вахрушев В.**, Принципы японского управления / В. Вахрушев. М., "ФОЗБ", 1992, 248 с.
6. Семь инструментов качества в японской экономике. М., Изд.-во стандартов, 1990, 220 с.
7. **Мильнер Б. З.** Японский парадокс / Б. З. Мильнер, Я.С. Олеиник, С.А. Рогшинко. М., "Мысль", 1985, 218 с.
8. **Николаева Э. К.**, Кружки качества на японских предприятиях / Э. К. Николаева. М., Изд. стандартов, 1990, 146 с.
9. **Каору И.**, Японские методы управления качеством / И. Каору. М., "Экономика", 1988, 172 с.
10. **Джордж С.**, Всеобщее управление качеством / С. Джордж, А. Ваймерских. М., "Ряд", 2002, 486 с.

THE ORIGIN OF THEORY OF QUALITY MANAGEMENT IN THE DEVELOPING CONDITIONS OF INNOVATIVE ECONOMY

TIGRAN BADOYAN

Candidate of Economics Sciences, docent


Summary

In the article has been made an analysis of development of theoretical aspects of quality, and has been exposed the influence of quality management on the increase of effectiveness of management of organization in the innovative developing conditions of economy.

ՀԻՄՆԱԿԱՆ ՖՈՆԴԵՐԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ*

Լևոն ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՊՃԴ ՄԱԼԿ ամրիոնի ղոցենստ



Բողվածում քննարկում է հիմնական արտադրական ֆոնդերի ինտենսիվ նորացման (վերարտադրության) դերը նրանունակ արտադրանք թողարկելու շուկայի պահանջներին համապատասխան:

Հուկայական տնտեսակարգի պայմաններում տնտեսական գործունեության առաջնահերթ և անհրաժեշտ պայմանը ծեռնարկության ապահովումն է նյութական, աշխատանքային ռեսուրսներով և հիմնական միջոցներով՝ շենքերով, սարքավորումներով, տրանսպորտային և այլ միջոցներով։ Հուկայի պահանջարկի բավարարման համապատասխան նրանունակ ապահովներ արտադրելու համար անհրաժեշտ է, որ ծեռնարկությունները ապահովված լինեն նորագույն բարձր արտադրողական մեքենասարքավորումներով։

Դաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ներկա ժամանակաշրջանում ծեռնարկությունները հիմնական ֆոնդերը ծեռք են բերում իրենց սեփական միջոցների հաշվին, դրանց արդյունավետությունը օգտագործումը ստանում է բացառիկ կարևոր նշանակություն։

Հիմնական արտադրական ֆոնդերը ըստ արտադրական գործընթացին նաև նկատության բռնույթի խնդրավորվում են։

• Ծեմբեր, կառուցվածքներ, փոխանցող հարմարանքներ, մեքենասարքավորումներ, տրանսպորտային միջոցներ, գործիքներ ու հարմարանքներ, տնտեսական գույք և այլ հիմնական ֆոնդեր։

• Հիմնական արտադրական ֆոնդերը (ՀԱՖ) միաժամանակ կազմում են ծեռնարկությունների, ընդհանուր առնամք նաև երկիր նյութական

բազան, արտադրության զարգացման տեխնիկական մակարդակը։

Հուկայի պահանջներին համապատասխան՝ ՀԱՖ-ի դերի ու նշանակության քննարկման ժամանակ անհրաժեշտ է ուշադրության դարձնել դրանց արտադրական և տեխնոլոգիական կառուցվածքներ բացահայտելով ակտիվ և պասիվ տարրերի հարաբերակցությունները։

Ակնհայտ է, որ ակտիվ տարրերի արդյունավետ օգտագործումն ապահովում է որակյալ արտադրանքի թողարկումը շուկայի պահանջներին համապատասխան, որը միաժամանակ նպաստում է արտադրական գործընթացի մեքենայացմանը, ավտոմատացմանը և արդիականցմանը։

Այս գործընթացը ներկա ժամանակաշրջանում կարևորվում է նաև նրանով, որ ՀԱՖ-ը կարելի է ծեռք բերել փոխառու միջոցների հաշվին՝ լիզինգի միջոցով։ Լիզինգը ՀԱՖ-ի առանձին տեսակների վարձակալումն է 6-ամսից մինչև 10 տարի ժամանակով, որի արդյունավետ օգտագործումը լայն հենարավորություններ է ստեղծում վարձակալի համար ապահովելու աշխատանքի բարձր արտադրողականություն տնտեսության տարրեր ոլորտներում որակյալ արտադրանք թողարկելու և շուկայի մրցակցությանը դիմակայելու համար, քանի որ նրանկցությունը ստիճանում է արտադրողներին բարձր արտադրողական ֆոնդերը ծեռք բերելու միջոցով շուկայում նպաստավոր դիքը գրավել և զարգացման ռազմավարությունը ճիշտ սահմանելու համար ապահովելով ցանկալի շահույթը։

Հուկայի այսօրվա պահանջները բավարարելու և մրցունակ ապրանքներ արտադրելու նպաստակով կարևորվում է նաև նոր, բարձր արտադրողական ֆոնդերի ծեռք բերումը և գործողների արդիականացումը։ Այստեղ ամենակարևոր արդյունավետ տարրերակի ընտրությունն է կամ գործող (բարձր) գներով ծեռք բերել նոր բարձրարտադրողական մեքենասար-

* Ներկայացվել է 17.12.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.։

քավորումներ, կամ արդիականացնել գործող սարքավորումները այսօրվա պահանջներին համապատասխան ապահովելով տեխնիկայի և տեխնոլոգիայի զարգացման ժամանակակից տեսաբու:

Կարծում ենք, որ երկու դեպքում էլ կարելի է ապահովել ցանկալի արդյունքը, եթե իրականացվի ֆոնդերի ակտիվ տարրերի շահագործման բարձր հուսալիությունը՝ հիմնավորված ամորտիզացիոն նորմեր կիրառելու ճանապարհով: Ամորտիզացիոն նորմը պլանային կարգով սահմանվող ֆոնդերի արժեքի մարման տարեկան տոկոսն է և որոշվում է ամենամյա նվազեցումների գումարով: Որքան արագ ձեռնարկությունների հիմնական ֆոնդերը փոխստուցվեն, այնքան ձեռնարկությունները մեծ հնարավորություն կունենան ձեռք բերելու բարձր արտադրողական ֆոնդեր՝ մրցունակ ապրանքներ արտադրելու համար, ապահովելով համապատասխան շահույթ:

Ամորտիզացիոն նորմը որոշվում է ամորտիզացիոն մասհանումների տարեկան գումարի և հիմնական ֆոնդերի տարեկան միջին արժեքի հարաբերությամբ՝ արտահայտված տոկոսներով

$$\text{Na} = \frac{A}{\Phi} \%$$

որտեղ A -ն տարեկան ամորտիզացիոն հատկացումների գումարն է, Φ -ը՝ հիմնական արտադրողական ֆոնդերի արժեքը:

Ամորտիզացիոն հատկացումները ներառվում են թողարկվող արտադրանքի հնարաբերում, և արտադրանքի իրացումից հետո դրամական ձևու ձևավորվում է ձեռնարկության ամորտիզացիոն ֆոնդը: Այն հետագայում ծախսվում է հիմնական ֆոնդերի նորոգման և նորացման համար՝ պահովելով հիմնական ֆոնդերի ինտենսիվ վերարտադրությունը ձեռնարկության գործունեության ամրող ժամանակաշրջանում բարելավելով ֆոնդերի հնտենսիվ օգտագործման գործակիցը [3, էջ 34]:

Սովորաբար ինտենսիվ վերարտադրությունը տնտեսական պրակտիկայում անվանվում է տեխնիկական վերազինում, գիտատեխնիկական նվաճումների ներդրման արագացում, որը հնարավորություն է տալիս ապահովելու մեծ հավելած ավելի քիչ նյութական ծախսումներով ավելացնելով աշխատանքի արտադրողականությունը և նվազեցնելով արտադրանքի հնարաբերությունը:

Վերը նշված պահանջների բավարարման և ՀՀ-ում արդյունաբերության հիմնական ֆոնդերի օգտագործման արդյունավետությունը գնահա-

տելու համար բերված է 2009-2012 թթ. ֆոնդերի դինամիկան օրինաչափ փոփոխություններով և զարգացման առանձնահատկություններով հանդերձ (տե՛ս այսուսակ 1):

Այսուսակի տվյալների վերլուծությունից պարզվում է, որ ինչպես ամրող արդյունաբերությունում, այնպես էլ նրա առանձին ճյուղերում հիմնական ֆոնդերի ակտիվ տարրերի կառուցվածքը անընդհատ փոփոխվել է, ապահովելով թողարկվող արտադրանքի համապատասխան քանակը և որակը սպառողների պահանջներին համապատասխան:

Ամբողջ արդյունաբերության մասշտաբով մերենասարքավորումների քանակը 2009-2012 թթ. ավելացել է (բաց. +4.7) 112 %-ով, այդ թվում սննդի արտադրության ձեռնարկություններում հիմնական ֆոնդերն աճել են (6.4) 112 %-ով, իսկ էլեկտրական սարքավորումներու արտադրող ձեռնարկություններում՝ մոտ 140 %-ով: Այն ճյուղերում, որտեղ մերենասարքավորումների փաստացի քանակը նվազել է, ավելացել է թողարկվող արտադրանքի ծավալը ի հաշիվ արտադրողական ֆոնդերի հնտենսիվ վերարտադրության, գիտատեխնիկական նվաճումների ներդրման արագացման: Արտադրության տեխնիկական նորացման և վերազինման ժամանակակից պահանջների կատարումը միայն կարող է ապահովել ձեռնարկությունների մշտական գործունեությունը՝ թողարկելու միայն որակյալ արտադրանք շուկայի պահանջներին համապատասխան [1, էջ 133-134]:

Հիմնական ֆոնդերի վերարտադրության հիմնական նպատակը միաժամանակ ձեռնարկությունների ապահովումն է հիմնական ֆոնդերով իրենց անհրաժեշտ քանակական և որակական կազմով [2, էջ 35, 41]:

Հիմնական ֆոնդերի վերարտադրության քանակական բնութագրերը տարվա ընթացքում արտացոլվում է սկզբնական արժեքով հիմնական ֆոնդերի հաշվեկշռություն հետևյալ բանաձևով՝

$$\Phi_K = \Phi_H + \Phi_B - \Phi_L$$

Φ_K – հիմնական ֆոնդերի արժեքը տարվա վերջում

Φ_H – հիմնական ֆոնդերի արժեքը տարվա սկզբում

Φ_B – տարվա ընթացքում շահագործման հանձնվող հիմնական ֆոնդերի արժեքը

Φ_L – տարվա ընթացքում լրացրվող հիմնական ֆոնդերի արժեքը:

Բերված տարբերակումները հաշվի առնելով հանդերձ կարծում ենք, որ ամրող արդյունաբերության և տարբեր ճյուղերի ու ձեռնարկու-

Աղյուսակ 1

ՀՅ արդյունաբերության հիմնական միջոցների կառուցվածքն ըստ տեսակների 2009 -2012 թթ.*

| | | Ընդամենը | 2009 | 2010 | 2011 | 2012 | Փոփոխություն 2009-2012 | |
|---|------------------------|----------|------|------|------|------|---------------------------|-----|
| | | | | | | | բացարձակ | % |
| 1 | Ծենքեր | 100 | 17,9 | 18,0 | 17,5 | 18,0 | +0,01 | 101 |
| 2 | Կառուցվածքներ | 100 | 18,7 | 17,1 | 17,7 | 17,1 | -1,6 | 91 |
| 3 | Փոխանցող հարմարանք. | 100 | 16,6 | 15,5 | 16,4 | 13,7 | -2,9 | 82 |
| 4 | Մեքենասարքավորումներ | 100 | 36,9 | 37,7 | 38,1 | 41,6 | +4,7 | 112 |
| 5 | Տրանսպորտային միջոցներ | 100 | 3,8 | 3,8 | 3,5 | 3,1 | -0,7 | 81 |
| 6 | Այլ հիմնական ֆոններ | 100 | 6,1 | 79 | 6,8 | 6,5 | +0,4 | 106 |

ԱՐԵՎԱՏՅԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

| | | | | | | | | |
|---|------------------------|-----|------|------|------|------|------|-----|
| 1 | Ծեմբեր | 100 | 17,1 | 18,7 | 18,5 | 14,2 | -2,9 | 83 |
| 2 | Կառուցվածքներ | 100 | 5,1 | 3,7 | 3,1 | 5,1 | - | |
| 3 | Փոխանցող հարմարանք. | 100 | 0,8 | 0,7 | 0,6 | 0,8 | - | |
| 4 | Մերժնասարդավորումներ | 100 | 54,5 | 58,4 | 60,2 | 60,9 | +6,4 | 112 |
| 5 | Տրանսպորտային միջոցներ | 100 | 14,0 | 11,4 | 10,7 | 10,1 | -3,9 | 72 |
| 6 | Ալ հիմնավաճ ֆոնդեր | 100 | 8,5 | 7,1 | 6,9 | 8,9 | +0,4 | 105 |

Եթե ուսումնական սպառավորությունը պահպանվելու

| | Ընդունակություն | Ծեմբեր | 100 | 57,3 | 53,3 | 54,9 | 53,6 | -3,7 | 93 |
|---|------------------------|--------|------|------|------|------|-------|------|----|
| 2 | Կառուցվածքներ | 100 | 6,4 | 3,5 | 3,6 | 3,5 | -2,9 | 55 | |
| 3 | Փոխանցող հարմարանք. | 100 | 0,2 | 0,4 | 0,6 | 0,6 | +0,4 | | |
| 4 | Մերժնասարքավորումներ | 100 | 24,0 | 33,8 | 32,0 | 34,0 | +10,0 | 141 | |
| 5 | Տրանսպորտային միջոցներ | 100 | 8,5 | 4,5 | 4,4 | 3,3 | -5,2 | 39 | |
| 6 | Այլ հիմնաևան ֆոնդեր | 100 | 7,2 | 4,5 | 4,6 | 5,0 | -2,2 | 69 | |

* ՀՅ Վիճակագործական վարչություն արդյունաբերության հիմնական ֆոնդեր

2. Յովեսիյան Ռ. Ա., Խաչատրյան Ռ. Ա., Հայրապետյան Ս. Գ., Ձեռնարկությունների էկոնոմիկա, Եր., 2009:
 3. Գալստյան Օ. Ա., Ձեռնարկության տնտեսագիտություն, Եր., 2012:
 4. Աղաջանյան Լ. Յ., Ձեռնարկությունների զարգացման սարքի հիմնախնդիրները, Եր., 2006:
 5. Ծօվելյես Ը. Ա., Լազար, Մ., 2011.
 6. Իլյին Ա. Ի., Планирование на предпринимателя, Минск, 2003.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- ## **1. Մարկոսյան Ա., Սաֆարյան Ռ., Շուկայական տնտեսության մեջ հիմնումը Երևան, 2002:**

REQUIREMENTS OF REPRODUCTION OF BASIC FUNDS IN THIS PERIOD OF TIME

LEVON KHACHATRYAN

Summary

In this article there have been discussed the conditions of improvements of the use of basic production funds in accordance with market requirements.

The study established that for turning out the competitive products it is necessary to carry out the reproduction of basic production funds by the way of intensive innovations, applying reasonable standards, ensuring reimbursement of active elements of funds in time, preventing the profitability of moral depreciation.

ԱԳՐԵՍԻՎ (ՆԱԽԱՐԱՐՁԱԿ) ԱՄՈՐՏԻԶԱՏԻՌՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ*

Արամ ԱՐՇԱԿՅԱՆ

**Տնտեսագիտության թեկնածու, դրցենտ
ՀՊՏՀ «Միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական
գործունեության կազմակերպման» ամբիոնի
դասախոս**



Իմնական կապիտալի ամորտիզացիոն քաղաքականությունը զարգացած երկուներուն համարվում է տնտեսական աճի հիմնական գործիքներից մեկը: Հայաստանի Հանրապետությունում ամորտիզացիոն հատկացումները կազմում են իմնական կապիտալի մեջ տարեկան ներդրումների 33.7%-ը, որը տնտեսական ճգնաժամից հետո՝ 2010 թ.-ին, որը նոտավորապես հասել է 2006 թ.-ի մակարդակին (տես աղյուսակ 1):

Իսկ մենք գտնում ենք, որ ամորտիզացիոն հատկացումները այսօր առավել արդյունավետ ներդրումային ռեսուրս են: Որպեսզի տնտեսության արդիականացումը դառնա իրականություն, հարկավոր է ոչ միայն արագացված ամորտիզացիա, այլև ագրեսիվ (նախահարձակ) ամորտիզացիոն քաղաքականություն:

Ամորտիզացիայի գերակշռող բաժինը հիմնական ֆոնների ներդրումների մեջ թույլ է տալիս արտադրել առավել էժան արտադրանք, հանեմատած այն ձեռնարկությունների հետ, որոնք ներդրումների համար օգտագործում են իրենց սեփական շահույթը կամ փոխառու միջոցներ: Չինաստանը, ինչնելով էժան աշխատումի վրա, գրավում է այլ պետությունների շուկաներ՝ էժան գների պատճառով: Մեր պետությունը չի կարող կիրառել այդ մեթոդը և կարող է հասնել արդյունքների՝ կիրառելով նաև արագացված ամորտիզացիայի մեթոդը:

Վահե ԱՎԵՏԻՍՅԱՆ

**ՀՊՏՀ Կառավարման ֆակուլտետի
«Միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական
գործունեության կազմակերպման» ամբիոնի
մագիստրոսուրայի ուսանող**



Ամորտիզացիայի օգտագործումը դառնա տնտեսության զարգացման պետական բյուջեից ամուլդակի սուբսիդավորման ձև: Դրա արդյունքն է բյուջեի հարկային թերիավաքագրված նուտքերի՝ հարկից շահույթի յուրիհնակ տրանսֆորմացիան:

Ուազմատենչ ամորտիզացիայի կիրառման արդյունքում, ամորտիզացիոն հատկացումների նպատակային օգտագործման լավ վերահսկողության առկայության դեպքում, հարկային կորուստները փոխիահատուցվում են բազմակի անգամ ավելի շատ՝ երկու, երեք տարվա ընթացքում:

Ներդրումների համեստ բաժինը

ՀՀ ամորտիզացիոն քաղաքականությունը, չնայած մի շարք դրական նորարարությունների, վերջին տարիներին ընդհանուր առմանք թույլ է կատարում իր հիմնական առաքելությունը՝ ներդրումային ակտիվության մեծացումը և հիմնական ֆոնների (ՀՖ) նորացումը: ՀՀ տնտեսության ՀՆԵՐԻ ամորտիզացիայի մասնաբաժինը դրանց նորացման գործում 32.9%-ից՝ 2006 թ.-ին, հասել է 33.7%-ի 2010 թ.-ին (տես աղյուսակ 1):

ՀՆԱ-ի օգտագործման կառուցվածքում, ընդհանուրի նկատմամբ հիմնական կապիտալի համախառն կուտակումը կազմում է 33.4%, ընդուրում, դրանց հիմնական մասը կատարվում է շենքերի և սարքավորումների վրա (տես աղյուսակ 2):

Նշենք նաև, որ այն նվազող տեսնենց ունի:

* Ներկայացվել է 04.10.2013 թ., ընդուրման տպագրության 20.12.2013 թ.:

Այուսակ 1

ՀՅ տնտեսության հիմնական կապիտալի տարեկան ներդրումների և դրանց ամորտիզացիոն հատկացումների համեմատությունը¹

| | 2006 թ. | 2007 թ. | 2008 թ. | 2009 թ. | 2010 թ. |
|---|---------|---------|---------|---------|---------|
| Հիմնական կապիտալի (հիմնական ֆոնդերի) համախառն կուտակում (մլրդ դրամներով) | 943.7 | 1163.2 | 1418.7 | 1143.8 | 1156.7 |
| Հիմնական կապիտալի սպառում (ամորտիզացիա), (մլրդ դրամներով) | 310.7 | 362.2 | 375.0 | 341.0 | 389.5 |
| Հիմնական կապիտալի սպառնան մասնաբաժնը ՀՅ տնտեսության հիմնական կապիտալի կուտակման մեջ (%-ներով) | 32.9 | 31.1 | 26.4 | 29.8 | 33.7 |

Այուսակ 2

ՀՅ տնտեսության հիմնական կապիտալի մասնաբաժնը ՀՆԱ -ի օգտագործման կառուցվածքում²

| | 2006 թ. | 2007 թ. | 2008 թ. | 2009 թ. | 2010 թ. |
|--|---------|---------|---------|---------|---------|
| Համախառն ներքին արդյունք (ՀՆԱ) (մլրդ դրամներով) | 2656.2 | 3149.3 | 3568.3 | 3141.7 | 3460.2 |
| Հիմնական կապիտալի (հիմնական ֆոնդերի) համախառն կուտակում (մլրդ դրամներով) | 943.7 | 1163.2 | 1418.7 | 1143.8 | 1156.7 |
| ՀՅ տնտեսության հիմնական կապիտալի մասնաբաժնը ՀՆԱ -ի կառուցվածքում (%) | 35.5 | 36.9 | 39.7 | 36.4 | 33.4 |

2008 թ.-ի 39.7%-ի փոխարեն 2010 թ.-ին կազմում է 33.4%: Եթե ՀՆԱ-ի մեջ ներդրումների բաժնը հետաքայում է շարունակի պահպանվել այդ մակարդակի վրա, հումքային կախվածությունից ազատվելու և նորարարության վերաբերյալ բոլոր խոսակցությունները կմնան ընդամենը որպես բարի ցանկություններ:

ՀՅ տնտեսության ներդրումների կառուցվածքը, ըստ դրանց ֆինանսավորման աղբյուրների, շատ ծախսատար բնույթ ունի: Հիմնական ֆոնդերի գոռվ ընդհանուր ներդրումների մեջ ամորտիզացիայի բաժնն ընդամենը 33.7% է, այն դեպքում, եթե, օրինակ, ԱՄՆ-ում 2.2 անգամ բարձր է՝ 74.2%:

Ամորտիզացիոն հատկացումների օգտագործման այդ աստիճանի հետ մնալը և փոխառության միջոցների ներդրումների գերակշռությունը լիցորեն բանկացնում է ապրանքային արտադրությունը ՀՅ-ում: Բացի դրանից, դա բացասաբար է ազդում դրանց նրգունակության վրա՝ թե՛ ներքին և թե՛ արտաքին շուկաներում:

Ի տարրերություն շատ զարգացած երկրնե-

րի, մեր պետությունում բացակայում է ամորտիզացիոն հատկացումների ծախսի վերահսկողությունը: ՀՅ տնտեսության ՀՖ-երի ամորտիզացիոն հատկացումների ընդհանուր գումարից, որը 2010 թ.-ին կազմում էր 1330.6 մլրդ դրամ³, կատարվել են հիմնական ֆոնդերի մեջ ներդրումների հետ կապ չունեցող ծախսեր՝ 173.9 մլրդ դրամի (15.03%) (տես այուսակ 3):

Այուսակ 3-ից պարզ է դառնում, որ, ճիշտ է, հիմնական ֆոնդերի մնացորդային արժեքի և ՀՆԱ-ի հարաբերության գործակիցը չի կրծատվել 2008 թ.-ի նկատմամբ, համարյա մոտ է նախաճաշմարդական 2008 թ.-ին, բայց դա շատ անգամ ավելի փոքր է, քան, օրինակ, ՈԴ-ում: Եթե ՀՆԱ-ի ծավալով ՈԴ-ն առաջ է անցնում ՀՅ-ը մոտ 120 անգամ (ՈԴ 2012 թ. ՀՆԱ-ը կազմում է մոտ 450 տրիլիոն դրամ), ապա ՀՖ-երի ծավալով և ամորտիզացիոն հատկացումների ծավալով՝ շատ ավելի անգամ:

Անհրաժեշտ է նշել, որ Հայաստանում կան ամորտիզացիոն հատկացումների աճնան և դրա հետ մեկտեղ՝ հիմնական ֆոնդերի մեջ ներդ-

Աղյուսակ 3

ՀՀ տնտեսության Հիմնական ֆոնդերի մնացորդային արժեքի և ՀՆԱ -ի հարաբերակցությունը

| | 2008 թ. | 2009 թ. | 2010 թ. | 2011 թ. |
|--|---------|---------|---------|---------|
| Համախառն ներքին արդյունք (ՀՆԱ) (մլրդ դրամներով) | 3568.3 | 3141.7 | 3460.2 | 3776.4 |
| Հիմնական ֆոնդերի մնացորդային արժեքը (մլրդ դրամներով) | 1611,9 | 1850.7 | 2063.9 | 2277.4 |
| ՀՀ տնտեսության Հիմնական ֆոնդերի մնացորդային արժեքի և ՀՆԱ -ի հարաբերակցությունը | 0.45 | 0.58 | 0.59 | 0.60 |

Թումների բավականին մեծ ներքին ռեզերվներ:

Ազրեսիկ ամորտիզացիայի բաղադրիչները

Հաշվի առնելով հիմնական ֆոնդերի մաշվածի բարձր աստիճանը, Հայաստանին այսօր անհրաժեշտ է ոչ թե սովորական արագացված անորտիզացիա, այլ ազրեսիկ ամորտիզացիոն քաղաքականություն, որն, ըստ մեզ, ներառում է:

- հիմնական ֆոնդերի նորացման ժամկետների կրծառում՝ դրանց նորմատիվները հասցելով զարգացած երկրների մակարդակին,

- հաշվապահական հաշվելչում անորտիզացիոն մասհանումների գծով կուտակային հաշվի ներմուծումը և դրա նկատմամբ կտրուկ վերահսկողություն սահմանելը: Անորտիզացիոն հատկացումների ոչ նպատակային օգտագործման դեպքում՝ առաջարկում ենք մտցնել շահութահարկ՝ անորտիզացիոն հատկացումների ոչ նպատակային օգտագործված մասի տասնապատիկի չափով,

- օրենսդրության մեջ ամրագրում այն մասին, որ տնտեսավարող սուբյեկտները պարտավոր են. եթե հիմնական ֆոնդերն ունեն ավելի քան 30% մաշվածը, անկաս ամորտիզացիոն նորմատիկ տոկոսադրույթներից, ստացված շահույթի 60-80%-ը վերագրել ամորտիզացիոն ֆոնդին: Ինչքան մեծ է մաշվածը, այնքան համամասնորեն մեծ պետք է լինի ամորտիզացիոն ֆոնդին վերագրված շահույթի բաժինը:

Տնտեսավարման մեջ ազրեսիկ անորտիզացիոն քաղաքականության ներդրումը և ֆինանսական գործարքների նկատմամբ հարկային բեռի ավելացումը (որպեսզի այդ գործարքը դառնա ավելի քիչ շահութաբեր հիմնական միջոցների մեջ ներդրումների համեմատ), կըրկնապատկի մեր երկրում հիմնական միջոցների մեջ ներդրումների չափը: Սա հնարավորություն կընձեռի մեծացնել ՀՆԱ-ի մեջ ներդրումների մասնաբաժնը 33% -ից մինչև 40%, իսկ նրանց տարեկան աճի տեմպերը մինչև 9-10%:

Մեր կարօքիով՝ ազրեսիկ ամորտիզացիոն քաղաքականությունը կիսամի ստվերային եկամուտների վերացնամը: Անուղղակիորեն նման եկամուտների բարձր մասնաբաժնի մասին է վկայում կուտակված շահույթից ֆինանսական ներդրումների վրա տարեցտարի կատարվող դրամական ծախսի մեծացումը:

Հայկական ընկերությունները, գլոբալ ֆինանսական շուկաներում իրենց ակտիվների գնահատմամբ, 2010 թ. տվյալներով համարվել են շատ երազգահատված և այս ցուցանիշով զիջում են առաջարեմ երկրների: Ազրեսիկ ամորտիզացիոն քաղաքականության իրականացումը ցույց կտա, որ ՀՀ-ը ոչ թե խոսքով, այլ գործով է տրամադրված արդիականացնել տնտեսությունը: Դա կիանգեցնի երկրի տնտեսական քաղաքականության նկատմամբ վստահության վերականգնանը, ավելի գրավիչ կդարձնի օտարերկրյա կապիտալի համար թե՛ ուղղակի եւ թե՛ աղորտֆելային ներդրումները: Եթե հասնենք նրան, որ հայկական ընկերությունների ակտիվների գնահատումը արտաքին շուկաներում մոտավոր եղուր ունենա առաջարեմ երկրների ցուցանիշների հետ, կավելանա օտարերկրյա կապիտալի ներհոսքը մեր երկիր:

Տնտեսության որպես անրողության, բարելավումը

Ներդրումային քաղաքականության խթանման ակտիվացումը ՀՀ-ում ինչպես անորտիզացիոն, այնպես էլ հարկային քաղաքականության օգնությամբ, կնպաստի երկրի ընդհանուր տնտեսական իրավիճակի բարելավմանը, քանի որ արդյունքում կփոքրանա հարկերից խուսափելու բազմազան միանաների հանցագործ օգտագործման անհրաժեշտությունը: Ինչու բացընել շահույթը, եթե պետությունն ինքը երաշխավորում է հարկային արտոնություն այդ ուղղությամբ, եթե կատարվել է ներդրում: Տնան հանգամանքներում գործարարներն իրենց ջանքերը

կուղղեն արդիականացնանք և արտադրության ընդլայնմանը, իսկ պետությունը արդար խաղ կխաղա տնտեսվարող սուբյեկտների հետ: Այն գործարարներին կապահովի լրացուցիչ միջոցներով՝ բյուջեի հաշվին, իսկ փոխարենք կպահանջի միայն մի բան՝ ծախսել այդ գումարները ներդրումների վրա: Արդյունքում իշխանությունը կստանա տնտեսության արդյունավետության աճ, նրա զարգացման արագացում, նոր աշխատանքեր, աշխատանքի արտադրողականության բարձրացում, արտադրանքի որակ և այլն:

Դայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության մեջ ամորտիզացիոն մասհանումների անբույլատրելի ցածր բաժնի հիմնական պատճառներից մեկը ցանկացած

ամի՝ որպես պետական բյուջեի անուղղելի վնասի, գնահատումն է: Անորտիզացիոն մասհանումների նման գնահատումը հիմնովին սխալ է և զգայիրեն արգելակում է ազգային տնտեսության զարգացումը:

¹ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, 2012 թ. «Ազգային հաշիվների համակարգ» բաժին, էջ 233:

² ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, 2008 թ. 2012 թ. «Ազգային հաշիվների համակարգ», բաժին էջ 248:

³ ՀՀ սոցիալ տնտեսական վիճակը 2012 թ. հունվարնոյեմբերին «ՀՇ առկայությունն ըստ ԵՀՀ 95 ձևաչփում օգտագործվող Ա17 դասակարգման 2008-2011 թթ. Վերջին»:

GRESSIVE AMORTIZATION POLICY

**ARAM ARSHAKYAN
VAHE AVETISYAN**

Summary

In the article there is discussed one of the forms of amortization policy, which is called aggressive amortization policy. There is also analyzed the comparison of annual capital investments and their amortization allocations in the economic of Republic of Armenia. There are designated the components of aggressive amortization and there are suggested several ways of improvement of economics, using aggressive amortization policy.

ԽՈՇՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ*

ՈՒՐԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԴՊԾԴ կառավարման ամրիոնի դրոցնոտ, տնտեսագիտության թեկնածու



Փաղաքայի համար այս պատճենը բարեկան և համաձայնեցման խնդիրների լուծմամբ, ինչպես նաև քաղաքի կառավարման համակարգի բարդությամբ: Քաղաքի զարգացման գործընթացները, կազմավորվող իրավական հարաբերություններն այլևս չեն կարող ապահովել պարզ ուղղահայաց վարչական կապերի միջոցով: Եվ ինչքան մեծ է քաղաքային համայնքը, այնքան ավելի ցածր է այդպիսի վարչարարության արդյունավետությունը: Այս չի ապահովում կառավարչական որոշումների ամբողջ բազմազնությունը, քանի որ վերջիններս շատ հաճախ գլորալ և ոչ ակնհայտ բնույթ են ունենում:

Քաղաքների համար բարդ և միաժամանակ շատ կարևոր խնդիր է հանդիսանում իշխանության այնպիսի կառուցվածքի ձևավորումը, որը կապահովի նրանց բոլոր գործառույթների արդյունավետ իրականացումը: Անչափ էական է նաև վարչատարածքային բաժանման ծիծու իրականացումը, որը վերաբերում է ինչպես քաղաքի արտաքին սահմանների որոշմանը, այնպես էլ քաղաքի ներսում համապատասխան վարչական տարածքների բաժանումների իրականացնանը:

Ժամանակակից քաղաքային համայնքը բարդ և բազմասպեկտ երևույթ է, և դրա կենսագործության մեխանիզմների ուսումնասիրության համար պետք է ցուցաբերել համակար-

գային մոտեցում՝ իրավական, տնտեսական, սոցիոլոգիական, աշխարհագրական և այլ գիտությունների տեսանկյուններից:

Իհարկե, խոշոր քաղաքային համայնքների առանձնացումն այլ համայնքներից պայմանական բնույթը է կրում և կարող է մեկնաբանվել մի քանի տեսանկյուններից: Որպես չափանիշ կարելի է ընդունել համայնքի տարածքը, բնակչության թիվը, սոցիալ-տնտեսական նշանակությունը և այլն: Սակայն, պետք է նշել, որ համաշխարհային պրակտիկայում ձևավորվել է մի հասկացություն, որը թիվ թե շատ փորձում է հստակեցնել խոշոր քաղաքային համայնքների կարգավիճակը: Ընդունված է երկրի համար առանձնահատուկ նշանակություն ունեցող խոշոր քաղաքային համայնքներն անվանել «մեգապոլիս»:

Մեգապոլիսը բնակյան երևույթ է, որը ոչ թե առանձին մարդկանց հայտնագործություն է, այլ հասարակության ինքնակազմակերպման և հասարակական վերարտադրության արդյունք [1, էջ 4]:

Մեկ այլ մեկնաբանությամբ մեգապոլիսը խոշոր քաղաք է, որի բնակչությունը մեկ միլիոնից ավելի է, և որն ունի երկաստիճան կամ եռաստիճան կառավարման համակարգ [2, էջ 95]:

Ընդհանուր առմամբ, կարելի է առանձնացնել մեգապոլիս համարվող խոշոր քաղաքային համայնքի հետևյալ բնորոշ հատկանիշները՝

- բնակչության մեծ թիվը և կենտրոնացվածությունը (մեկ միլիոնից ավելի),

- քաղաքի տարածքի զգակի մեծությունը,
- քաղաքի զարգացման բնական միտումների առկայությունը,

- ձևավորված իրավական պայմանները (քաղաքի կանոնադրություն, օրենք քաղաքի նասին և այլն), ինչը թույլ է տալիս ունենալ սեփական իրավական կարգավորումը,

- զարգացած տնտեսական պայմանները (գործարար կենտրոն, տրանսպորտային խոշոր

* Ներկայացվել է 22.10.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

ցանց և այլն),

- ակտիվ սոցիալ-մշակութային միջավայրը:

Դաշնային երկրներում առանձին խոչող քաղաքներ կարող են համատեղել դաշնության սուբյեկտի և տեղական ինքնակառավարման լիազորությունները:

Որոշ դաշնային երկրներում քաղաքային համայնքների առանձին տեսակ են հանդիսանում նաև համայնքային կորպորացիաները, որոնք կազմավորվում են համապատասխան նահանգի կամ էլ կենտրոնական իշխանության օրենքներով։ Յնդկաստանում համայնքային կորպորացիայի կարգավիճակ ունեն առավել խոչող քաղաքները, որոնք դուրս են շրջանային ենթակայությունից (Ազրա, Բոնբեյ, Կալկուտա, Կանապուր, Մադրաս և այլն)։ Միութենական տարածքներում (չեն հանդիսանում դաշնության սուբյեկտներ և փաստացի կառավարվում են կենտրոնից) համայնքային կորպորացիաները կազմավորվում են կենտրոնական պառլամենտի օրենքներով, մինչեւ նահանգներում՝ համապատասխան նահանգի օրենքով։ Նման օրենքը կարող է նվիրված լինել ինչպես առանձին համայնքային կորպորացիայի ստեղծմանը (1957 թ. օրենքը Դելիի կորպորացիայի ստեղծման մասին), այնպես էլ՝ կրել համարդիանուր բնույթ՝ թույլ տալով համապատասխան տարածքում ստեղծել ցանկացած քանակով կորպորացիաներ, որոնք համապատասխանում են առաջ քաշված պահանջներին (1959 թ. օրենքը համայնքային կորպորացիաներ ստեղծելու մասին Ուժար-Փրատեց նահանգում) [3, էջ 105]։ Յնդկաստանի համայնքային կորպորացիաները ոչ միայն տիրապետում են ավելի լայն լիազորությունների և ինքնիշխանության, քան սովորական համայնքները, այլև ունեն քավականին քարող ներքին կազմակերպման տարրեր, որոնք առաջին հերթին վերաբերում են օրենսդիր և գործադիր մարմինների միջև իշխանության առավել խոր քաժանմանը։ Յանայնքային կորպորացիաների կազմավորման հիմնական չափանիշ է հանդիսանում համապատասխան տարածքային միավորի բնակչության թիվը։ Յնդկաստանում համայնքային կորպորացիա կարող է ստեղծվել միայն այն քաղաքներում, որտեղ բնակչության թիվը գերազանցում է 200 հազար։ Բացի այդ, Յնդկաստանի նահանգներում պահանջվում է, որ համապատասխան տարածքային ստորաբաժանման տարրեկան եկամուտը կազմի ոչ պակաս, քան 10 միլիոն ռուփի։ Դաշնայնքային կորպորացիայի կազմավորման մա-

սին որոշում ընդունելիս հաշվի է առնվում նաև բնակչության խտությունը, տեղի բնակչությունը ունակությունը վճարելու բարձրացված հարկեր կորպորացիայի պահպանման համար, հասարակության վերաբերմունքն այդպիսի քայլի նկատմամբ և այլն։

Պետք է նշել, որ վարչատարածքային բաժանման հետևանքով կազմավորված խոչող քաղաքային համայնքների բաժանումը համապատասխան վարչական շրջանների պայմանավորված է տեղական պայմանների յուրահատկությամբ։ Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է բնական, պատմական, ժողովրդագրական, տնտեսական գործոնների ազդեցությամբ։ Միայն այդ գործոնները հաշվի առնելու դեպքում քաղաքային համայնքի կառավարումը կարող է լինել արդյունավետ։ Ընդհանրապես, խոչող քաղաքային համայնքների մասին խոսելիս, հարկ է նկատի ունենալ, որ դրանք միահանձն չեն կարող լինել։ Ինչպես արդեն նշվել է, այդ հասկացությունը շատ պայմանական է և կարող է մեկնաբանվել տարրեր տեսանկյուններից։ Այդ պատճառով էլ չի կարող լինել մեկ ընդհանուր մոտեցում ո՞չ դրանց կառուցվածքի, ո՞չ էլ կառավարման մեխանիզմի ընտրության հարցում։ Բնականարար, տարրեր քաղաքային համայնքների բնորոշ են կառավարման տարրեր խնդիրներ և կառավարման պայմանական համապատասխան կառավարման մարմինների ծավալներ և, որպես հետևանք, իշխանական լիազորություններով օժտված տեղական մարմինների համապատասխան կառուցվածք և գործառություններ։

Դաշվի առնելով այս ամենը՝ պետք է նաև նկատի ունենալ, որ ինչպես բոլոր համայնքների, այնպես էլ քաղաքային համայնքների տեղական իշխանությունների կառուցվածքում և գործառույթներում անհրաժեշտ է պահպանել որոշակի ընդհանուր սկզբունքներ։ Խոսքը, առաջին հերթին, վերաբերում է կառավարման մարմինների ձևակորմանը և դրանց լիազորությունների տարածատման ընդհանուր մոտեցմանը։ Մասնավորապես՝ պարտադիր պետք է գոյություն ունենալ գործադիր և ներկայացուցչական կառավարման մարմիններ, և հստակորեն առանձնացված լինեն դրանցից յուրաքանչյուրի գործառույթները։

Վարչատարածքային բաժանման արդյունքում, ինչպես նշվել է, ձևակորմում են համայնքներ, որոնք ի սկզբան առանձնանում են մյուսներից իրենց մասշտաբներուն։ Սակայն, համայնքների միջև տարրերությունները ժամանա-

կի ընթացքում կարող են էլ ավելի խորանալ, և խոշոր հաճայնքները կարող են ավելի ընդգծված դարնալ: Հասարակության զարգացումը պայմանավորված է մի շարք հակասություններով, առաջին հերթին, ինչը նյութական առումով իր արտահայտությունն է ստանում ուրբանիզացիոն գործընթացների մեջ: Խոսքը, նաև ավորապես, վերաբերում է մարդկանց վերաբնակեցմանը և քաղաքային բնակչության թվի աճին:

Տարածքային վերարտադրության տեսությունն առանձնացնում է քաղաքային համայնքների հետևյալ տարատեսակները՝ քաղաքային ագլոմերացիաներ և քաղաքներ, որոնք առաջնում են արտադրական ռեսուրսների կենտրոնացման վայրերում [4, էջ 7]: Սրանցից յուրաքանչյուրն ունի իր բնական, տնտեսական, ժողովրդական, ինչպես նաև կառավարման համակարգի ձևավորման առանձնահատկությունները: Դիտարկենք այդ 2 տեսակի քաղաքային հաճայնքներից յուրաքանչյուրի քաղաքական և սոցիալ-տնտեսական որոշ առանձնահատկությունները: Քաղաքային ագլոմերացիաներին բնորոշ են.

- բնակչության խոշոր զանգվածի կենտրոնացումը և տարածքի աճը,
- արվարձանների արագ զարգացումը,
- նոտակա գյուղական համայնքներից բնակչության ներգրավումը քաղաքային կազմակերպություններում, ինչպես նաև քաղաքային ենթակառուցվածքի ոլորտում աշխատելու համար,
- ճոճանակային միգրացիան, այսինքն՝ բնակչության կողմից պարբերաբար կատարվող տեղաշարժն ագլոմերացիայի սահմաններում աշխատանքի և ուսման վայր հաճախելիս, հանգստի գնալիս և այլն:

Անհրաժեշտ է նշել, որ այս առանձնահատկությունները պետք է պարտադիր կերպով հաշվի առնելին վերոիիշյալ տեսակի քաղաքային հաճայնքների զարգացման ընթացքում: Բացի այդ, պետք է նաև նկատի ունենալ այն գործնները, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ քաղաքային հաճայնքների կազմավորման գործընթացի վրա, մասնավորապես՝ տրանսպորտային և այլ կոմունիկացիոն համակարգերի անցկացման համար անհրաժեշտ ինժեներական սարքավորումների թանկացումը, որի ավագանի աղյուսումը, բնակչության հեռացումը բնական միջավայրից և ակտիվ հանգստի վայրերից: Այս բացասական գործն

ների ազդեցության վերացումը կամ գոնե մեղմացումը հնարավոր է նիստ նորագույն տեխնոլոգիաների և տեխնիկական միջոցների կիրարմամբ, որոնք հնարավորություն կտան պակասեցնել ագլոմերացիայում կենտրոնացված ծեռնարկությունների արտանետումները, որոնք աղյուսում են օդային և ջրային ավազանները: Էկոլոգիական իրավիճակը հնարավոր է կարգավորել նաև բնակելի տարածքների, հանգստի գոտիների, ինչպես նաև ջրամբարների նկատմամբ արտադրական ծեռնարկությունների օպտիմալ տեղաբաշխման միջոցով: Քաղաքի տարածքի ճիշտ ճարտարապետանախագծային կազմակերպումը թույլ կտա պահպանել շրջակա միջավայրը:

Ուրբանիզացիայի առյունքում կարող են ձևավորվել տարբեր ագլոմերացիաներ (ամերիկյան գրականության մեջ դրանք ստացել են «մետրոպոլային վիճակագրական արեալներ» անվանումը), որոնք հանդիսանում են տվյալ քաղաքի, քաղաքային արվարձանների, ինչպես նաև մոտակա փոքր քաղաքների (տվյալ քաղաքի հետ տնտեսական կապերով կապված) միասնությունը: Պետք է նշել, որ այսպիսի ագլոմերացիաների սահմաններում մեծամասամբ գործում են տարբեր և իրարից անկախ կառավարման մարմիններ: Բանի որ հիմնականում որևէ ընդհանուր կողրինացնող մարմին չի գործում արեալում, համաձայնեցված քաղաքականության իրականացումն այստեղ շատ բարդանում է: Ընդորում, այս դեպքում անշափի կարևոր խնդիր է հանդիսանում նաև ագլոմերացիայի կամ խոշոր քաղաքի մասշտաբների աճի, արբանյակային քաղաքների ստեղծման և քաղաքային արվարձանների զարգացման գործընթացների կարգավորումը: Համայնքի բաժանումը մի շարք ինքնավար տարածքային միավորների բարդացում է մեզապոլիսի լայնամասշտար ենթակառուցվածքի ֆինանսավորումը և, հետևաբար, զարգացումը: Բացի այդ, ժամանակակից տեխնիկայի և քանիկարժեք սարքավորումների օգտագործումը փոքր միավորների համար դառնում է տնտեսապես ոչ շահավետ: Մետրոպոլային արեալը որպես մեկ միասնություն չի հիմնարկելը, ինչպես նաև միջոցների վերաբաշխման այնպիսի մեխանիզմների բացակայությունը, որոնք հաշվի կառնեն ամբողջ տարածաշրջանի շահերը, հանգեցնում են, այսպես կոչված, ռեսուրսների և կարիքների տարածքային անհամապատասխանության երևույթին [5, էջ 87]: Համայնքի կառավարման շատ մարմիններ ձգտում

են բնակչությանը մատուցել առավելագույնս լայն շրջանակով ծառայություններ, ինչը երեմն բերում է ծառայությունների կրկնության և միջնողների ոչ ռացիոնալ օգտագործման (հայտնի է, որ ինչքան մեծ թվով մարդկանց են մատուցվում ծառայությունները, այնքան դրանց արժեքը ցածր է):

Տարածքային և կարավարչական կառուցվածքների բազմազանությունը դառնում է «անվճար սպառման էֆեկտի» առաջացման պատճառ, երբ ծառայությունների առանձին տեսակներ տարածվում են այնպիսի Փիգիկական և իրավաբանական անձանց վրա, որոնց համար անմիջականորեն նախատեսված չեն, և այդ պատճառով էլ Վերջիններս դրանց դիմաց չեն վճարում: Այսպես՝ արվարձանների բնաշուրջունը, հանդիսանալով ինքնուրույն իրավաբանական անձ, օգտվում է մեզապոլիսի կողմից մատուցվող որոշ ծառայություններից: Հատ հանյօնքային ծառայություններ (արքահանության, հակահրեթային, իրավակրաքի պահպանման և այլն) չեն կարող անհատապես բաշխվել իրենց պոտենցիալ սպառողների շրջանում առանձին ապրանքների կամ էլ ինքնուրույն ծառայությունների տեսքով, այդ պատճառով էլ դժվարությամբ են ենթարկվում քանակական չափման: Դրանք այլ են, քան այն ծառայությունները, որոնք կարելի է տարբերակել կենտրոնացված բնակչության շրջանակներում (օրինակ՝ բնակարանների ջեռուցումը), այսինքն՝ արտահայտել որոշակի քանակական ցուցանիշներով և «դեմք հանապատասխան սահմանների մեջ», որպեսզի տվյալ սահմաններից դուրս գտնվող կողմնակի անձինք չկարողանան օգտվել տվյալ հասարակական բարիքից [6, էջ 25]: Որպես այդպիսի «քամենքրարման» օրինակ՝ կարելի է բերել Սյու Յորքի արվարձաններում տեղակայված որոշ հանյօնքներում այդմներից և լողափերից օգտվելու հնարավորության տրամադրումը միայն տեղի բնակչներին, որոնց վճարած հարկերի հաշվին էլ գործում են տվյալ հանգստի վայրերը:

Քաղաքային հանյօնքների երկրորդ տեսակը քաղաքներն են: Ընդունված է՝ քաղաք համարել բավականաչափ խոշոր բնակավայրը, որի բնակչներն առավելապես զբաղված չեն գյուղատնտեսական արտադրությամբ [7, էջ 8]:

Սոցիալ-տնտեսական գործոնները պայմանավորել են վարչատարածքային միավորների կենտրոն հանդիսացող խոշոր քաղաքային հանյօնքների արագ աճը: Ուստաստանի Դաշնությունում խոշոր քաղաքների կատեգորիային են

դասվում 500 հազարից ավելի բնակիչ ունեցող քաղաքները, իսկ առանձնահատուկ խումբ են կազմում 1 միլիոնից ավելի բնակիչ ունեցող մեծապուխտները [8, էջ 250]:

Ներկայում աշխարհի գրեթե բոլոր երկրներում շատ լրաց խնդիր է հանդիսանում այսպես կոչված քաղաքների ճգնաժամը: Բանն այն է, որ ուրբանիզացիայի արդյունքում տեղի է ունենում ոչ միայն բուն քաղաքների զգալի աճ, այլև դրանց արվարձանների մեծացում [9, էջ 42]: Այդ պատճառով էլ Վերջին ժամանակներս արևմտյան շատ երկրներում նկատվում են քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև տարբերությունների վերացման որոշակի միտումներ: Քաղաքային համայնքները սկսել են կորցնել իրենց նախկին համապարփակ (կոմպակտ) ձևը՝ աստիճանաբար ձեռք բերելով ընդարձակ ուրբանիզացված շրջանների հատկանիշներ: Ինտենսիվ շինարարության արդյունքում քաղաքային սահմանների ուղագծերի հստակությունը փոխարինվել է դրանց անընդեզ աճող անորոշությամբ, իսկ բաժանումը, որը գոյություն ունի խոշոր քաղաքի և շրջակա միջավայրի միջև, տեղը գիրում է շահերի ընդարձակվող ընդհանրությանը [10, էջ 47]: Բացի դրանից, արդյունաբերության և առևտուրի ընդհանուր շարժք զարգացած երկրներում իրականացվում է կենտրոնից դեպի ծայրամասեր ողղությամբ, որովհետև նոր արդյունաբերական ծենոններում բնակչությունները, ինչպես նաև խոշոր խանություններն ավելի ու ավելի հաճախ են սկսել կառուցվել ավանդական քաղաքային սահմաններից դուրս, ինչը զրկում է քաղաքին պատենցիալ եկամտի աղբյուրներից: Վերոհիշյալ գործընթացն ուղեկցվում է «միջին խավի» զանգվածային վերաբնակեցմամբ քաղաքային արվարձաններում: Դրան հակառակ՝ բնակչության «աղքատ խավը», որը քաղաքի համար հանդիսանում է աշխատուժի համարման հիմնական աղբյուրը, աստիճանաբար տեղափոխվում է կենտրոնական հատվածներ, ինչն իր հերթին բերում է խոշոր քաղաքի հարկային բազայի նշանակալի կրծատմանը: Որպես հետևանք՝ նման իրավիճակը նպաստում է հասարակության առաջացմանը:

Վերլուծելով քաղաքային հանյօնքների և ուրբանիզացված շրջանների ձևավորման տնտեսահրավական և սոցիալ-քաղաքական պատճառներ՝ կարելի է եղակացնել.

• Ուրբանիզացիոն գործընթացները փոխում են քաղաքային հանյօնքների տեղը պետական

և տարածքային սոցիալ-քաղաքական և տնտեսական կառուցվածքում, մեզապոլիսներն ինքնուրույն և որոշիչ դեր են խաղում երկրի զարգացման համար՝ հանդիսանալով հենակետային ժողովրդատնտեսական գոտիներ, ինչպես նաև ապահովելով քաղաքական և տնտեսական կյանքի կայունությունը,

- քաղաքային համայնքների զարգացման հիմնախնդիրների ընդարձակումը և խրացումը պահանջում է քաղաքային իշխանության օպտիմալ և բազմաստիճան կառուցվածքի ձևավորում, որը կապահովի քաղաքային տնտեսության և սոցիալական ոլորտի ամրող հանալիրի ներդաշնակ աշխատանքը,

- քաղաքային համայնքները սեփական ներքին ռեսուրսների խիստ պակաս են գործ, ինչը պահանջում է արտաքին աղբյուրների ներգրավում, հատկապես՝ պարենամբերնան և քափոնների օստագործման բնագավառներում,

- լրջորեն սրվող սոցիալական խնդիրները պահանջում են ավելի շատ ֆինանսական և մարդկային ռեսուրսներ դրանց հետևանքները վերացնելու համար, ինչը ծանր թե՛ է հանդիսանում առանց այն էլ ծայրահետ աստիճանի ծանրաբեռնված քաղաքային բյուջեի համար,

- քաղաքային համայնքների կառավարման ունիտար կենտրոնացված համակարգն արդեն չի կարող ապահովել քաղաքային իշխանության արդյունավետ գործող մեխանիզմ, և քաղաքի մեջ համայնքային իշխանության առանձին տարածքային մարմինների ստեղծումը դառնում է կենսական անհրաժեշտություն՝ ապահովելու համար քաղաքացիների գործ նվազագույն հնարավորությունն իրականացնելու իրենց՝ տեղա-

կան գործերի կառավարմանը մասնակցելու իրավունքը,

- եկոլոգիական խնդիրները քաղաքային հշիքանության համար դարձնում են առաջնային, քանի որ ուղղակիորեն ազդում են մեզապոլիսի կայուն զարգացման գործոնների ապահովման վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Мусеев Н.**, Научиться жить в мегаполисах / Моя М., 2008, №6.
2. **Таболин В. В.**, Организационно-правовые основы деятельности местного самоуправления в крупных городах / Комитет по телекоммуникациям и средствам массовой информации Правительства Москвы. М., 2005.
3. **Muttalib M. A., Ali Khan M.A.** Theory of Local Government. New Delhi, 1982.
4. **Маршалова А. С., Новоселов А. С.** Основы теории регионального воспроизводства: Курс лекций. М., 2007.
5. **Barlow I.M.**, Special Dimensions of Urban Government. Chichester, 2001.
6. **Остром В.**, Смысл американского федерализма. М., 1993.
7. **Боголюбов В. С.** Актуальные проблемы крупных городов. СПб., 2007.
8. Основы местного самоуправления в городах России / Под ред. Когута А. Е., СПб., 2005.
9. **Симагин Ю. А.** Современный этап субурбанизации в Московском столичном регионе. М., "Геовектор", 2010.
10. **Тринин А. А.**, Административно-территориальная организация капиталистического государства. М., 1984.

A FEW QUESTIONS ON MANAGEMENT OF BIG CITIES

RUBEN HAYRAPETYAN

Associate Professor of Chair of Management at ASUE, Ph.D. in Economics

Summary

City development processes and the corresponding legal relationship can no longer be achieved through a simple vertical administrative ties. And the bigger the community is, the lower the effectiveness of such administration would be. It does not provide a whole variety of managerial decisions, as the latter is often global and not totally obvious in its nature. In this regard, based on a comprehensive study of urban management theories, the specific problems that arise in the management of big cities are reviewed and discussed in this article.

Նարինե ԲԱՐՍԵՂՅԱՆ

**ՎՊՄԻ տնտեսագիտության ամբիոնի վարիչ,
տնտեսական գիտությունների թեկնածու, դրենուտ**



Եռնարկության բրենդային գրքունելության ծավալմանը, շուկայում նրանցակության բարձրացմանը, այսինքն նարեթինքի բոլոր միջոցների օգտագործմանը՝ սպառողների վրա ազդեցություն գործելու նպատակով:

Բրենդ շուկայում ապահովում է պաշտպանվածություն գնային նրանցության գործընթացում: Կայուն բրենդը սպառողների միջավայրում արժանանում է մեծ վստահության, նաև ձեռք բերում բարձր վարկանիշ և որակի երաշխիք:

Բարդ է ընկերության բրենդի ստեղծման և կայացման գործընթացը. դրան հասնելու համար ընկերությունը ծախսում է հսկայական միջոցներ՝ նարեթինքային միջոցառումների իրականացնան նպատակով: Ակզբճական շրջանում բրենդը ծևավորվում է տեղեկատվության և գորվագիտական հիմքում:

Բրենդի վերոհիշյալ սահմանումը վերաբերում է ինչպես նյութական արտադրանքին, այնպես էլ ծառայությունների ոլորտին. Վերջինիս պատկանում է նաև կրթական համակարգը: Ծառայությունների ոլորտում, մասնավորապես կրթական համակարգում բրենդի դերն ավելի է կարևորվում, քանի որ բոլի շրջանավարտի հետագա կարիերան զգալիորեն կախված է նրա ավարտած ուսումնական հաստատության հե-

Մարիան ԱՄԻՐԵԿՅԱՆ

**ՎՊՄԻ մանկավարժության ֆակուլտետի
մագիստրատուրայի ուսանողության գործակության պատասխանական պատճենագիրը**



Եռնարկությունից և վարկանիշից: Սույն հոդվածով փորձ է արվել ուսումնասիրել բրենդի ծևավորման և կիրաօնման գործընթացը կրթական համակարգում:

Բրենդի ստեղծումը սպառողի մոտ տվյալ ծառայության ձեռք բերման ցանկության առաջացումն ու անհրաժեշտ պահանջարկի ծևավորումն է:

Բրենդինքի ծևավորումը պայմանավորված է շուկայի հատվածավորման ու դիրքորոշման գործընթացներով և գորվագրային դիմելածի, ստեղծագործական գաղափարներով:

Բրենդինքը պետք է հաշվի առնի ժամանակակից հասարակության միտումները, սպառողի անհատականությունը և ձգտումները, գլոբալացումը ու խորհրդանշական փորձը:

Մարքեթինգում բրենդինքի ակտիվացմանը նպաստում են մի շարք պատճառներ.

1. Մրցակցության ծավալների ընդլայնումը,
2. Ծառայության առաջարկի ընդլայնումը և պոտենցիալ սպառողների ներգրավումը,
3. Արևա սպառողների պահպանման անհրաժեշտությունը,

4. Երակարաժամկետ սպառողական գերադասելության ծևավորումը նախընտրելի ծառայությունների հանդեպ,

5. Հաղորդակցման նոր միջոցների որոնումը:

Ժամանակակից շուկան այնպես է կարուցված, որ ապրանքներ և ծառայություններ արտադրողները առաջարկում են, իսկ սպառողները գնում են ապրանքների կամ ծառայությունների օգտակար հատկանիշները և մակնիշները: Սպառողական շուկայում հաջողության գրավա-

կանը կայուն մրցակցային առավելություններն են, որին կարելի է հասնել բրենդի հեղինակության և վարկանիշի շնորհիվ:

Որոշ մասնագետներ գտնում են, որ «բրենդ» բառը կապված է լատինական «brand» բառի հետ, ինչը նշանակում է խարան, նշան, դրոշ (կլենտ, տաքրություն): Բրենդը սերտորեն կապված է նաև հասկացության հետ: Առևտրային նաև նիշը (տորգուայ մարկա) անվանում է, տերմին, նշան, որի նպատակն է նույն վաճառողի ապրանքների և ծառայությունների ննանակումը և տարրերակումը մրցակիցների ապրանքներից կամ ծառայություններից:

Բրենդի հստակ սահմանում գոյություն չունի: Ըստ էլույան, դա ճանաչում գտած, հասարակության կողմից ընդունված ընկերության նաև նիշը է, կերպարը: Այն ոչ նյութական արժեք է: Ապրանքի կամ ծառայության մասին բրենդը ավելի լայն պատկերացում է տալիս, քան ապրանքային նշանը: Բրենդը արտացոլում է ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական արժեքների անբողջությունը: Ապրանքային նշանի վերածումը բրենդի կարելի է ներկայացնել գծապատկերով (տես ստորև):

Բրենդինգը կիրառվում է տարբեր ապրանքների և ծառայությունների իրացման քաղաքականության դեպքում: Սպառողական ապրանքների և ծառայությունների համար, որոնք բնութարվում են տարբերակվածությամբ և մատչելիությամբ, բրենդինգը հանդիսանում է զալիս որպես շուկայի հատվածավորման և ապրանքների տարբերակման նեխանիզմ: Բրենդինգի կարիք ունեն հաստակեցված ծառայությունները, քանի որ դրանք տարբերվում են գննան անորոշությամբ և գգացմունքայնությամբ, պահանջում են կարծիքի, հեղինակության, վստահության և դրական փորձի ձևավորում:

Կազմակերպությունը բրենդինգի հետ կապված որոշումների ընդունման ժամանակ պետք է հիմնվի հետևյալ սկզբունքների վրա՝

- Ռազմավարական ուղղվածություն և երկարաժամկետություն (բրենդի ստեղծման համար անհրաժեշտ է ժամանակ),
- Հաջորդականություն (փոխկապակցվածություն բրենդինգի նախորդ գործողությունների հետ),

• Համախմբվածություն (ծրագրերի իրականացման ժամանակակից պետք է հաշվի առնել մարթնություն),

• Համակարգվածություն (բրենդի բոլոր ոլորտների փոխկապակցվածություն),

• Ավանդականի և նորության համատեղում,

• Ներգրավված մարդեթինգ, որն ուղղված է ինչպես դեպի ապրանքը կամ ծառայությունը, այնպես էլ դեպի սպառողը:

Կրթական համակարգում բրենդինգի ռազմավարությունը ուսումնասիրենք կանածորի պետական մանկավարժական ինստիտուտի օրինակով: Բուհն ունի 44 տարվա պատմություն: Բուհը գովազդային քաղաքականությունը իրականացնում է գովազգի տարբեր միջոցներով՝ հեռուստատեսություն, թերթ, համացանց, պաշտոնական կայք:

Հեռուստատեսությամբ հայտարարություն է տրվում տվյալ ուսումնական տարվա մասնագիտությունների ցանկի, ընդունելության կամոնակարգերի, բնությունների անցկացման ժամկետների մասին: ՎՊՄԻ-ն ունի իր երկշարաբարերը՝ «Ապագա մանկավարժ»-ը: Այնտեղ տպագրվում են ուսանողների հոդվածները, նրանց արձակ ու չափած գործերը, կերպարվեստի բաժին շնորհալի ուսանողների ստեղծագործությունները, ուսանողների կողմից կազմված լավագույն խաչքանիզմը: Բացի ընթացիկ տեղեկատվությունից, երկշարաբարերը ունի հիմնական խորագրեր՝ «Դասախոսները հանդիսան զալիս իրենց հոդվածներով», «Սատենագիտական տեղեկատու», որտեղ նշվում է տեղեկատվություն ՎՊՄԻ-ի գրադարանի համալրման մասին, «Մեր շրջանավարտների հետքերով», «Սարգական էջ», «Ժողովրդական մանկավարժ» երկշարաբարերի էջերում տեղ են գրավում նաև ամենամյա գիտխորհողի հիմստերում քննարկվող հարցերը:

Համացանցային գովազգի իրականացվում է «Վիքիպեդիա ազատ հանրագիտարան» կայքի միջոցով, որտեղ տեղակայված է տեղեկատվություն ՎՊՄԻ-ի պատմության, ֆակուլտետների և ամբիոնների, ՎՊՄԻ-ի կողմից մատուցվող կրթական ծառայությունների ցանկի, ՎՊՄԻ-ի հրատարակությունների, արտաքին կապերի մասին:

Առևտրային
նշան

ճանաչվածու-
թյուն շուկայում

Վստահություն
սպառողների
մոտ

Բրենդ

Համացանցային գովազդի տեսակ է նաև որոնողական կայքի նկարներ բաժինը, որտեղ գետեղված են համացանցային տարրեր օրաթերերի կողմից արված ՎՊՄ-ի միջոցառումների լուսանկարները [11]:

ՎՊՄ-ի պաշտոնական կայքում առկա են հետևյալ ենթաբաժինները:

- ՎՊՄ-ի մասին - պատմական ակնարկ, խորհրդանշաններ, իրավական փաստաթղթեր (ռազմավարություն, կանոնակարգեր, հաշվետվություններ, որոշումներ), կառուցվածք

• Կրթություն - դիմորդ՝ ընդունելության կարգի և նախապատրաստական դասընթացների տվյալներ, հենակետային վարժարանի, քոլեջի, բարձրագույն, հետրուհական և լրացուցիչ կրթության մասին տեղեկություններ

• Գիտություն - գրադարանի, հետազոտությունների, գիտաժողովների մասին, ինչպես նաև գիտական նյութերի ժողովածուներ:

- Արտաքին կապեր
- Հետադարձ կապ

Կայքը ունի նաև դիմորդների, ուսանողների, շրջանավարտների, աշխատակիցների համար հաստուկ բաժիններ, որտեղ տեղադրված են համապատասխան տեղեկություններ ընդունելության կարգի, ուսումնական տարրա ժամանակացույցների և այլ ոլորտների վերաբերյալ [12]:

ՎՊՄ-ի բրենդը ծևակվորու բաղադրիչներն են՝ ՎՊՄ-ի խորհրդանշանը, ՎՊՄ-ի օրիներգը, դրոշը, կապույտ և սպիտակ գույների համակցությամբ այլ բաղադրիչներ:

ՎՊՄ-ում անցկացված հարցումների արդյունքներից պարզ է դառնում, որ ուսանողների 52%-ը գտնում է, որ ՎՊՄ-ի խորհրդանշանը, օրիներգը, դրոշը և մյուս բաղադրիչները զնահատվում են որպես գովազդման ազդեցիկ տեսակներ և սպառողների մոտ ծևակվորում են ընկերության կերպարը, հեղինակությունն ու վարկանիշը:

ՎՊՄ-ն կիրառում է գովազդման ամբողջական համակարգ: Հարցումների արդյունքներից պարզվել է, որ բուհ ընդունվելիս ուսանողների

42%-ը առաջնորդվում է հասարակական կարծիքներով, 36%-ը բուհի ընտրության հարցում կողմնորոշվում է ՎՊՄ-ի պաշտոնական կառուցվածքանից առաջ գտնական կայք-էջի տեղեկատվությամբ,

16%-ը՝ տեղեկատուից ստացված տեղեկատվությամբ, 6%-ը՝ առաջնորդվում է հեռուստատեսությամբ ինչած հայտարարությամբ:

Ըստ ուսանողների կարծիքների՝ գովազդում ներառված տեղեկատվության առավել կարևոր բաժիններն են.

• ավարտելուց հետո աշխատանքի տեղափորկելու երաշխիքներ՝ 70%

• բուհի հեղինակությունը (պրոֆեսորադասախոսական կազմ, լաբորատորիաների, կարիետների, համակարգչային սենյակների, գրադարանների առկայությունը)՝ 42%

• բուհի կապերը այլ երկրների ուսումնական հաստատությունների հետ՝ 42%

• բուհի գոյության ժամանակահատվածը և փորձը՝ 30%

• բուհի հավատարմագիրը՝ 26%

• բուհի կողմից այլ երկրներում պարակտիկան անցկացնելու հնարավիրությունը՝ 20%

• Վարձերի մատչելիությունը՝ 10%

• բուհական տարածքի մոտ լինելը բնակավայրին՝ 10%

• բուհում կրթությունը շարունակելու հնարավությունը (մագիստրատուրա, ասպիրանտուրա)՝ 6%:

Այսպիսով, մերկայումն ՎՊՄ-ի կողմից իրականացված գովազդը (հեռուստատեսություն, թերթ, համացանց, պաշտոնական կայք) դեռևս ցանկալի արդյունք չի տալիս, քանի որ ուսանողների որոշակի մասը ՎՊՄ-ի գովազդի կիրառման փոխարեն հենվում է հասարակության տարրեր շերտերի կարծիքների վրա: Նրանք նախընտրում են տեղեկություններ ստանալ պապական ուսումնական հաստատության հետագա մասնագիտական պատրաստվածության աստիճանի, արտերկրուտ սովորելու հնարավորությունների, ՎՊՄ-ի և գործատուների միջև հաստատված կապերի մասին:



ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Ապրանքային նշանները փոքր ու միջին ձեռնարկությունների համար» Մտավոր սեփականության գործակալություն, ՍՄՀԿ հրատ., թիվ 917, 2010:
2. **Ольга Бруковская, Нина Осовицкая**, HR-Бренд. 5 шагов к успеху вашей компании. Питер, 2011.
3. **Хлебович, Д. И.**, Сфера услуг: Маркетинг. М., “Норус”, 2009.
4. <http://businessblogger.net>
5. <http://www.prreality.net>
6. <http://www.armeco.am>
7. <http://www.sony.com>
8. <http://www.sony.net>
9. <http://www.habeas.ru>
10. <http://www.iteam.ru>
11. <http://hy.wikipedia.org/wiki/>
12. <http://www.vspi.am/index.php/hy/>

BRAND STRATEGY IN THE EDUCATION SYSTEM

**NARINE BARSEGHYAN
MARIAM AMIRBEKYAN**

Summary

The role of the enterprise brand strategy is very important nowadays in the market economics.

Brands help the consumer differentiate the product among the similar ones, it performs the function of the “sell-er”. The article deals with the study of the real brand value as a capital in enterprises, the mechanisms of outstanding brand creation. We have tried to represent the stages of branding design, to reveal the chain of brand marketing steps, as well as to study the characteristics of the further marketing strategy improvement.

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ, ԷՈՒԹՅՈՒՆ, ԳՆԱՀԱՏՈՒՄ*

Վահրամ ԳՐԻԳՈՐՅԱՆ

«Միության Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարամի տնտեսագիտության ֆակուլտետի դեկան



Գոլոր ժամանակակիրք սարադարձության կարևոր առանձնահատկություններից մեկը եղել ու շարունակում է մնալ գիտության, մշակույթի և տեխնիկայի զարգացմանը ուշադրության հատկացումը։ Կախված նրանից, թե ինչ մակարդակում են գտնվում հասարակության մտավոր ներուժը և մշակութային զարգացման մակարդակը, նույն հաջողությամբ լուծվում են նաև տնտեսական հիմնահարցերը։ Գիտությունը, մշակույթը, տեխնիկան կարող են դիմանալ զարգանալ միայն համապատասխան պայմանների առկայությամբ՝ ներառյալ նաև մտավոր սեփականության իրավական պաշտպանությունը և գնահատումը [1, էջ 22]։ Մտավոր սեփականությունը պայմանականորեն օգտագործվող հասկացություն է, որն օգտագործվում է ստեղծագործական գործունեության օրենսդիր ծև ստացած արդյունքների ու դրանց հավասարեցված այլ օրենսդիր ստեղծման և օգտագործման կապակցությամբ առաջացող հասարակական հարաբերությունների միասնական կարգավորման ու դրանց մասնակիցների իրավունքների պահպանման համար։

Արդի ժամանակաշրջանում շուկայական պայմաններում սեփականության օրենսդիր են դառնում նաև ֆիրմայի անվանումները, ապրանքանիշները, սպասարկման նշանները, ապրանքների ծագման տեղի անվանումները։

Տնտեսավարման հավասար պայմանների ստեղծումը, մրցակցային սկզբունքների ներդրումը և ապրանքներով ու ծառայություններով

շուկաների հագեցման անհրաժեշտությունը թելադրում են մտավոր սեփականության օրենսդիրի պաշտպանություն և գնահատում։

Արտոնագրային իրավունքը գործ ունի արտադրական սեփականության հետ, այսինքն՝ արտադրության, առևտորային շրջանառության ոլորտում իրացվող բացարձակ իրավունքների հետ։ Երբ խոսքը մտավոր սեփականության օրենսդիրի իրավական պաշտպանության մասին է, դրա հիմնական գործառույթը է դառնում արտադրողների և նրանց ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների անհատականացման ապահովումը [3, էջ 13-15]։

Ֆիրմային անվանումը կազմակերպության առևտորային անունն է, որն անբաժանելիորեն կապված է նրա գործարար հեղինակության հետ։ Այդ անվան տակ ձեռներեցը կատարում է գործարքներ և այլ իրավական գործողություններ, կրում է իրավաբանական պատասխանատվություն, իրականացնում է իր իրավունքները, գովազդում և իրացնում է իր արտադրանքը։ Ֆիրմային անվանումները, որոնք դառնում են սպառողների մոտ ճանաչված և արժանանում նրանց վստահությամբ, ձեռներեցին ոչ միայն եկամուտ, այլ նաև հասարակությունում ճանաչում են բերում։ Ֆիրմային անվանման օգտագործումը իրականացնում է նաև տեղեկատվական գործառույթը։

Ապրանքանիշը կամ սպասարկման նշանը, որոնցով մակնշավորվում են արտադրվող ապրանքներն ու ծառայությունները, արտադրողի և սպառողի միջև կապող օղակ են։ Բացի տարբերակից գործառույթից հանրաճանաչ ապրանքանիշը սպառողի մոտ ծևավորում է որոշակի պատկերացում ապրանքի որակի մասին։ Ապրանքանիշի կարևոր գործառույթներից է նաև արտադրանքի գովազդը։ Ի վերջո, ապրանքանիշը շուկայում անբարեխիղ նոցակցության

* Ներկայացվել է 12.12.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.։

պայքարի պայմաններում ծառայում է նաև որպես ապրանքի պաշտպանություն:

Ապրանքի ծագման տեղի անվանումը ունի նույն գործառությունները, ինչ ապրանքանիշը: Դա նաև ապրանքի հասողությունը կապված են ապրանքի ծագման վայրի հետ: Ապահովելով նաև ապրանքների հրավական պաշտպանությունը՝ աետությունը նաև պաշտպանում և խթանում է մեծ պահանջարկ ունեցող ապրանքների արտադրության զարգացումը:

Ստավոր սեփականության շաղրին են դասվում նաև ստեղծագործական գործունեության զանազան արդյունքները՝ գիտության, գրականության, արվեստի բնագավառում, նաև գյուտերը, օգտակար նորելները և արտադրական նմուշները:

Այսպիսով՝ մտավոր սեփականությունը հավաքական հասկացություն է, որը ներառում է՝

- Մտավոր (ստեղծագործական) գործունեության արդյունքները՝ գրականության, արվեստի, գիտության և տեխնիկայի բնագավառներում:

- Քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների կամ ծառայությունների անհատականացման միջոցները:

- Պաշտպանվածություն անբարեխիղ մրցակցությունից:

Ստավոր սեփականության համաշխարհային կազմակերպության կոնվենցիան, որն ընդունվել է 1976 թվականի հուլիսի 14-ին Սրբությունում, մտավոր սեփականության իրավունքների օբյեկտ է համարել՝

1. Գրական, գեղարվեստական ստեղծագործությունները և գիտական աշխատանքները (պաշտպանվում են հեղինակային իրավունքը):

2. Դերասանների կատարողական գործունեությունը, ձայնագրությունները և ռադիոհաղորդումները (պաշտպանվում են հեղինակային իրավունքը):

3. Գյուտերը, օգտավետ մորելները, արդյունաբերական նմուշները, ապրանքանիշները, սպասարկման նշան, ապրանքի ծագման տեղի անվանում (անհատականացման միջոց):

3. Գյուտերը, օգտավետ մորելները, արդյունաբերական նմուշները, ապրանքանիշները, սպասարկման նշան, ապրանքի ծագման տեղի անվանում (անհատականացման միջոց):

3. Գյուտերը, օգտավետ մորելները, արդյունաբերական նմուշները, ապրանքանիշները, սպասարկման նշան, ապրանքի ծագման տեղի անվանում (անհատականացման միջոց):

Կում և կիրառում է իր սեփական ազգային օրենքները:

Այսպես, արդի ժամանակաշրջանում ՀՀ օրենսդրությամբ պաշտպանված են մտավոր սեփականության հետևյալ օբյեկտները.

1. Գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունները (գրական ստեղծագործություններ, դրամատիկական ստեղծագործություններ, երաժշտական ստեղծագործություններ, սցենարներ, արվեստի ստեղծագործություններ):

2. Գյուտեր, օգտավետ մորելներ, արդյունաբերական նմուշներ:

Ստավոր սեփականության օբյեկտ կարելի է համարել գյուտը, եթե այն իրենից ներկայացնում է սարքավորում, մեթոդ, նյութ, միկրոօրգանիզմի շտամ, նաև հայտնի սարքավորման մեթոդի և նյութի կիրառումը՝ նոր նշանակությամբ:

Օգտավետ մորելներ են կոչվում նոր և արդյունաբերողներ արդյունաբերությունում օգտագործվող լուծումները, որոնք վերաբերում են արտադրության միջոցների կառուցվածքային իրականացմանը:

Վրդյունաբերական նմուշները արտադրանքի գեղարվեստակառուցվածքային լուծումներ են, որոնք որոշում են նրա արտաքին տեսքը:

3. **Ֆիրմային անվանում**, ապրանքանիշ, սպասարկման նշան, ապրանքի ծագման տեղի անվանում (անհատականացման միջոց):

4. **Հայտնագործություններ**: Հայտնագործություն է համարվում այն ամենի բացահայտումը, որն օբյեկտիվ գոյություն ունի, բայց մինչ այդ հայտնի չի եղել: Հայտնագործությունը՝ մի կողմից գիտական գիտակցման գործընթաց է, մյուս կողմից՝ դրա արդյունքը:

5. **Առևտորային գաղտնիք**: Համարվում է այն տեղեկատվությունը, որն ունի առևտորային արժեք և պետք է պաշտպանվի երրորդ անձանց կողմից օգտագործումից:

6. Մտավոր սեփականության օբյեկտ են համարվում նաև միկրոսխեմաները, սելեկցիոն նվազումները, արտադրական գաղտնիքները [2, էջ 206-209]:

Ստավոր սեփականության իրավունքի գնահատման համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև նրա հավաքական բնույթը, որն արդյունք է կոնկրետ հարցի լուծման համար տարբեր օրենքների հավաքածուի օգտագործման:

Ստավոր սեփականության իրավունքները պետք է գնահատվեն ինչպես հաշվապահական

հաշվառման, վիճակագրական մեթոդների, այնպես էլ փորձագիտական գնահատման միջոցով:

Անհրաժեշտ է նաև մտավոր սեփականության տնտեսագիտական գնահատում:

Չուկայական հարաբերությունների պայմաններում և համաձայն կոնկրետ պահանջների մտավոր սեփականության ոլորտն ընդունված է քաֆանել հետևյալ 3 խմբերի:

Կորպորատիվ գործարքներ, որոնց շարքին են պատկանում ծեռնարկությունների սեփականացնորհությը, փակ քաֆնետիրական կազմակերպությունների վերափոխումը բացի, հիմնադրամների մեջ ավանդների ներմուծումը:

Արտոնագրերի և լիցենզիաների ազատ առօղու վաճառքը:

Ստիպորական լիցենզավորում և քաշարձակ իրավունքների խախտման պատճառով հատկացրած վնասների մարումը՝ դատական մարմինների միջոցով:

Ստավոր սեփականության իրավունքների գնահատման և պաշտպանման պահանջարկի գերակշռությունը կախված է նրանից, թե ինչ ակնկալիքներ ունի շուկայական տնտեսության սուբյեկտը (կազմակերպություն, մասնավոր անձ և այլն) տվյալ մտավոր սեփականության՝ օբյեկտի սեփականատեր լինելու [1, էջ 169]:

Դաշվի առնելով մտավոր սեփականության տնտեսական կարևորությունը, արտոնագրերի և լիցենզիաների առօղու վաճառքը կարելի է միանցանակ փաստել մտավոր սեփականության շուկայի գորության մասին:

Ի տարբերություն այլ ապրանքային շուկաների, այստեղ որոշ բարդություններ են ստեղծվում այդ սեփականության գնահատման հարցում, քանի որ վաճառքի է հանդիս այդ սեփականությունն օգտագործելու իրավունքը: Դաշնային մտավոր սեփականության իրավունքները փոխանցվում են ոչ թե առանձին-առանձին, այլ իրավունքների կամ ծառայությունների հետ հանատեղ, որոնք ապահովում են նոր ապրանքի կամ նոր տեխնոլոգիայի արտադրության ներաշնորհը: Այլ կերպ ասած՝ փոխանցվում է մտավոր սեփականության իրավունքը պորտֆելը:

Եթե մտավոր սեփականության օբյեկտների իրավունքները դառնում են տնտեսական շուկայական հարաբերությունների օբյեկտ, նրանք պետք է օժտված լինեն որոշ հատկանիշներով, որոնք ապահովում են շրջանառելի լինելու նրանց ունակությունը: Այդ հատկանիշներն են.

- Քաշարձակությունը, այսինքն՝ պայմանագրերի հիման վրա հնարավոր է փոխանցումը մեկ անձից մյուսին:

Է դառնալ հանրանատչելի:

- Օտարելիությունը, այսինքն՝ պայմանագրերի հիման վրա հնարավոր է փոխանցումը մեկ անձից մյուսին:

- Համապատասխանությունը, այսինքն՝ տարբեր շուկայական ապրանքների հետ փոխանակելու ունակությունը:

Եթե մտավոր սեփականությունը չի պարունակում նշված հատկությունները, ապա նրա շուկայական արժեքի մասին խոսելն ավելորդ է: Ուստի շատ կարևոր է ստանալ արտոնագիր գյուտի և արդյունաբերական ննուշի համար:

Որոշ երկրների օրենսդրության համաձայն (օրինակ՝ ՌԴ) անձնական ոչ ունեցվածքային իրավունքները չեն կարող օտարվել, սակայն չի կարելի ասել, որ նրանք չունեն արժեք, օրինակ՝ գյուտի հեղինակի անունը կարող է ունենալ արժեք և կարող է վաճառվել, եթե այն նախատեսված լինի օրենքով: Բայց քանի որ նման իրավունք չկա, ապա գործատերը դիմում է այլ հնարների, որի պայմաններում հեղինակը կարող է օգտվել իր հեղինակային իրավունքից, այնպես, ինչպես ծեռնոտու է գործառուին: Այս դեպքում հեղինակը ստանում է որոշակի փոխառուություն, իսկ դա նշանակում է, որ անհատական ոչ ունեցվածքային իրավունքը նույնական ունի արժեք:

Արդյունաբերական տեխնոլոգիաները՝ որպես մտավոր սեփականության նյութական օբյեկտներ, ունեն որոշ տարբերակիչ հատկանիշներ: Նրանք պետք է ունենան շուկայական ապրանքի 3 հիմնական հատկանիշները.

1. օգտավետություն, որը գիտակցվում է որպես որոշակի պահանջնունք բավարարելու ունակություն,

2. հազարեապություն, դիտարկվում է որպես հանրամատչելիությանը հակառակ հատկանիշ,

3. համապարփակություն՝ շուկայական այլ ապրանքների հետ փոխանակման ունակություն:

Տեխնոլոգիայից օգտվելու իրավունքը կարող է դառնալ ապրանք, եթե նրան արհեստականորեն տրվի հազվադեպության հատկանիշը, այսինքն՝ որոշակի անձի համար ամրապնել այդ իրավունքը և ուրիշներին, առանց սեփականատիրոջ թույլատվության, արգելել դրա օգտագործումը: Այլ կերպ ասած՝ տեխնոլոգիան որպես մտավոր սեփականության օբյեկտ ունի իրավական պաշտպանություն, եթե այն արտոնագրված է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Մյուսի Վ. Ի.**, Սուբյեկտուալիզմը և պահպանության ռեալիզմը. Երևան, 2007, 335 էջ:
2. **Բարսեղյան Տ. Կ.**, Ստավրո Մեհմանության իրավունքը. Երևանի պետական համալսարան, Երևան, 2002, 240 էջ:
3. Ստավրո Մեհմանության պահպանության ռեալիզմը վերը և միջին ձեռնարկատիրության սուբյեկտուալիզմը. Երևան, ՀԱՊՀ գարգարական ազգային կենտրոն, 2007, 60 էջ:

INTELLECTUAL PROPERTY: PERCEPTION, ESSENCE, ASSESSMENT

VAHRAM GRIGORYAN

Summary

In the article all the great role plays the processes taking place in key intellectual sphere of the modern economical and political conditions of development.

As it is known this sphere relates to the main resources of the stage, to its scientific technical potential, which, in the final stage, defines the fate and results taking place in economical transformations.

Perception of the intellectual product (invention), as a category of private ownership, as an industrial property and understanding of necessity of its protection, has become a significant step in development of the society, and makes the law relation regulate formally connected with the invention and the right of property and, its usage of the invention and other intellectual products.

**ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ
ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԿՈՌՈՒԻՆԱՑՈՒՄ ՀՀ-ՈՒՄ
ՃԳՆԱԺԱՄԻ ԺԱՄԱՆԱԿ ՈՒ ՃԳՆԱԺԱՄԻ ՀԵՏՈ***

Վանյա ՂԱԶԱՐՅԱՆ

ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի տնտեսագիտության տեսության ամբիոնի հայցորդ

Աստենախոսության թեմա՝ Տնտեսության պետական կարգավորման հարկաբյուջետային մեթոդների արդյունավետությունը բարձրացման հիմնախնդիրները ՀՀ-ում
Գիտական ղեկավար՝ Միքայել Միքայելյան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր



Sն տ ե ս ա կ ա ն աճի և զների կայունության ապահովման անհրաժեշտ նախապայմաններից մեզը բոլոր զարգացած և հատկապես զարգացող երկրներում դրամավարկային և հարկաբյուջետային քարականությունների արդյունավետ կոռորդինացման է կամ, այլ կերպ ասած, կոռորդինացված մակրոտնտեսական քաղաքականության իրականացումը։ Գրեթե բոլոր երկրներում դրամավարկային քաղաքականությունը մշակում և իրականացնում է կենտրոնական բանկը, իսկ հարկաբյուջետային քաղաքականությունը, կառավարության լիազոր մարմինը, ֆինանսների նախարարությունը։ Կոռորդինացումն արտահայտվում է նշված մարմինների կողմից մակրոտնտեսական քաղաքականության նպատակների համատեղ սահմանման և քաղաքականության իրականացման ժամանակ օրենսդրությամբ նրանց ամրագրված գործիքների կիրանան փոխհամաձայնեցման ընթացքում։ Միևնույն ժամանակ, հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոռորդինացման արդյունքում պետք է ստեղծվի տնտեսության զարգացման բարենպատ տնտեսական միջավայր, ինչն էլ կառավարության և կենտրոնական բանկի գործունեության ընդհա-

նուր նպատակն է։

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ կոռորդինացման արդյունավետությունն առաջին հերթին պայմանավորված է նաև ԿԲ-ի անկախության աստիճանով, քաղաքականություններից որևէ մեկի մոլուսի նկատմամբ դրմինանության բացակայությամբ։

Որպեսք են դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների կոռորդինացման ուղղությունները և զարգացման առանձնահատկությունները ՀՀ-ում։ Դեռևս մինչև 1995-1996 թվականները, եթե սկսեցին ի հայտ գալ ՀՀ տնտեսության կայունացման առաջին միտումները, սակայն ֆինանսական շուկան գտնվում էր զարգացման շատ ցածր մակարդակում, քաղաքականության կոռորդինացմանը բնորոշ էր հարկաբյուջետային քաղաքականության դրմինանությունը դրամավարկային քաղաքականության մեջ։ Դա առաջին հերթին արտահայտվում էր նրանում, որ պետքութեի պակասուրդի ֆինանսավորման ներքին հիմնական աղբյուրը հանդիսանում էր ՀՀ ԿԲ-ի ուղղակի վարկավորումը։ 1994-95 թվականից սկսած միջազգային վարկային կազմակերպությունների կողմից իրականացվող ՀՀ տնտեսության աշակեցման ծրագերի շոշանակներում որպես պակասուրդի ֆինանսավորման աղբյուր լայնորեն սկսեցին օգտագործվել նաև արտաքին վարկերը։ Այդ միջոցների ծախսման ոլորտում փոխհամաձայնեցված քաղաքականության բացակայությունը ևս իր բացասական աղբյուրությունն էր ունենում տնտեսության վրա։ Այս պայմաննե-

րում շատ ցածր էր հատկապես սղաճի կառավարելիությունը, գները և փոխարժեքը Ենթարկվում էին զգայի տատանումների՝ խոշընդոտելով տնտեսության զարգացման կայուն միջավայրի ստեղծմանը: 1997 թվականից ուղղակի վարկերին գուգընթաց ֆինանսավորման ներքին աղբյուրների մեջ կարևորվեց պետական արժեքրերի տեղաբաշխումից ստացվող եկամուտը: 1998 թվականից արդեն կոռորդինացման բարելավման որոշակի պայմաններ ստեղծվեցին, նաև նավորապես սահմանվեց կենտրոնական բանկի նկատմամբ կառավարության պարտավորությունների սահմանաշախ՝ 8350 մլն դրամի չափով, որը գործելու էր տարվա և եռամսյակների կորպածքով, ընդունվեցին փոխհարարերությունների ինստիտուցիոնալ կարգավորումը կամոնակարգող մի շաբթ իրավական փաստաթերեր: Կոռորդինացման բարելավմանը նպաստեց նաև 1999 թվականի երկրորդ կեսից ԿԲ-ի կողմից կառավարության ուղղակի վարկավորման դադարեցումը, որը 2001 թվականի վերջին ստացավ նաև օրենսդրական ամրագրում «ՀՀ կենտրոնական բանկի մասին» օրենքում: Նշված փոփոխությունը նախատեսում է, որ ԿԲ-ի կողմից բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը կարող է իրականացվել միայն անուղղակի եղանակով՝ ԿԲ-ի բաց շուկայական գործառնությունների միջոցով: Այս միջցառումների արդյունքում հաջողվեց առավել կանխատեսելի և կայուն դաշտ ստեղծել ամբողջական պահանջարկի կառավարման, դրա սեղոնայնության հարցման և սղաճի դրամականացման մեջմնան համար: Ներկայուն դրամավարկային և հարկարյութետային քաղաքականությունների կոռորդինացումն արտահայտվում է նաև միջին ժամկետ և տարեկան տնտեսական ծրագրերի համատեղ մշակման և իրականացման ժամանակ: Այդ ծրագրերի իրականացումն ապահովելու նպատակով համատեղ մշակվում են նաև քաղաքականությունների ընթացիկ ծրագրեր՝ շաբաթական, ամսական և եռամսյակային կորպածքներով: 1999 թվականից սկսած մինչ այժմ ՀՀ ԿԲ-ի և ՀՀ ֆինանների նախարարության քաղաքականության կոռորդինացման կարևորությունը մեկն է դարձել պետական արժեքրերի բողարկման ժավալների մեծացման, ժամկետների երկարացման և տոկոսադրույթների իշեցման ու կայունացման ուղղությամբ վարչովող քաղաքականությունը: Նման ռազմավարության իրականացումը պահանջում է ՀՀ ԿԲ-ի գործիքների և պետական արժեքրերի տեղա-

բաշխման ծավալների արդյունավետ համարդում տոկոսադրույթների տատանումները և արժույթի շուկայում ճնշումները մեղմելու նպատակով: Այդ նպատակով ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակված իրացվելիության գնահատականները հաշվի են առնվում ֆինանների նախարարության կողմից պետական արժեքրերի տեղաբաշխման ծրագրերի մշակման ժամանակ, ինչը նպաստում է տոկոսադրույթների և փոխարժեքի վարքագիր կայունացմանը: Նման հետևողական քաղաքականությունը 2000 թվականից սկսած պետական արժեքրերի տոկոսադրույթների նվազեցման գործուներից մեկը հանդիսացավ: Այս մոտեցումը կիրառվեց նաև ճգնաժամի դեպքում, որն ունեցավ իր դրական ազդեցությունը: Այսպէս, 2008-2009 թվականներին ընդլայնողական հարկարյութետային քաղաքականության իրականացմանը նպաստելու նպատակով ՀՀ ԿԲ-ն, երկրորդային շուկայից պետական արժեքրերի ձեռք բերելով, ավելացրել է իր պորտֆելը մինչև 20 մլրդ դրամ՝ միևնույն ժամանակ օժանդակելով կառավարությանը պետական արժեքրերի էժան տեղաբաշխման հարցում, և վերջին հաշվով ֆինանսական շուկայում տոկոսադրույթների նվազմանը:

Ընդհանրացմելով վերը նշված՝ կարելի է փաստել, որ 1999-ական թվականներից սկսած՝ նախորդ տարիների համեմատ փոխհարաբերությունների կոռորդինացման դաշտը բարելավվել է և դարձել ավելի կայուն ու կանխատեսելի:

Դարկաբրյութետային և դրամավարկային քաղաքականությունների կոռորդինացված իրականացման անհրաժեշտությունը որպես տնտեսության պետական կարգավորման արդյունավետության բարձրացման անհրաժեշտ պայման, փորձենք երկայացնել մեր տնտեսության օրինակով՝ ճգնաժամի և հետզգնաժամային ժամանակաշրջանների համար: Մեր հանրապետության տնտեսության իրական հատվածում համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությունները սկսել են դրսնորվել 2008 թվականի չորրորդ եռամսյակից և շարունակել են խորանալ 2009 թվականին: Տեսությունը և համաշխարհային փորձը փաստում են, որ այս իրավիճակում դրամավարկային և հարկարյութետային քաղաքականությունը պետք է լինի հակացիկլիկ-ընդլայնող, այսինքն մասնավոր հատվածի ծախսերի կրծատման դեպքում պետական հատվածը պետք է լինի ծախսողական, որպեսզի ապահովի պահանջարկի անհրաժեշտ ամի տեմպը և հակազդի ֆի-

Նանսական ներկությունը կրօնատման ազդեցության մասին: Ինչպես վկայում են այդ ժամանակաշրջանում՝ համար կատարված բյուջեային ծախսերի գույքամիջնորդը նվիրված ուսումնասիրությունները, բյուջեի խոչորագույն ընդլայնումը տեղի է ունեցել հենց զգնաժամային 2009 թվականի [1], երբ տնտեսության հրական հատվածում տեղի ունեցավ մեծ աճելում՝ ՀՆԱ-ի կրօնատելով 14.1 տոկոսով [2], որի արդյունքում պետք է դեֆիցիտը ՀՆԱ-ի 0.7%-ից դարձավ 7.7%: Պետական սպառումը (որը բյուջեի աշխատավարձերի և ապրանք-ծառայությունների գծով ծախսերի հանրագումարն է) և ներդրումները, լինելով ամբողջական պահանջարկի տարր, զգնաժամի տարում անվանական աճել են համապատասխանաբար 10.7% և 21.9% [1]: Բացի այդ, տնտեսական աճի վերականգնմանը նպաստելու նպատակով ՀՀ Կառավարության և Կենտրոնական բանկի համատեղ ջանքերով ֆինանսական միջոցներ են ներգրավվել առևտրային բանկերի միջոցով տնտեսության կարևոր ծյուղերի, արտահանման ուղղվածություն ունեցող ձեռնարկությունների և ՓՄՁ վարկավորման համար (Յանձխարհային բանկից ստացված 50 մլն ԱՄՆ դոլար վարկը, ՈՂ Կառավարության կողմից տրամադրված կայունության վարկից 60.5 մլրդ դրամ): Այդ միջոցները բանկերի են տրամադրվել նոր վարկերի վերաֆինանսավորման նպատակով և միայն վարկային պորտֆելի աճի պարագայում նախատեսված չեն եղել հին վարկերի վերաֆինանսավորման համար: 2009 թվականի հունիսից գործում է Ազգային հիփոթեքային հիմնադրամը, որը վերաֆինանսավորում է առևտրային բանկերի կողմից տրամադրված հիփոթեքային վարկերը: Ի լրումն դրան՝ տրամադրվեցին ռորշակի հարկային արտոնություններ, ինչը վկայում է ընդլայնողական հարկարյությանը քաղաքականության մասին: Կենտրոնական բանկը ևս մեղմացրել է դրամավարկային քաղաքականությունը՝ իշեցնելով տոկոսադրույթը: 2009 թվականի ընթացքում դրամավարկային քաղաքականության ռեապ տոկոսադրույթը իրականաւ իշեցվել է մեկ տարվա ընթացքում 2.25%-ային կետով՝ նպաստելով նոյնիսկ 2009 թվականին վարկերի ծավալների մոտ 18.1 % աճի [3]: Ընդլայնումն այնքան մեծ էր, որ հետագայում բերեց զննաճային ճնշումների և 2010-2011 թվականներին տնտեսությունում արձանագրվեց բավական բարձր զնաց՝ որոշ ամիսներին տասներկուամսյա կտրվածքով հասնելով երկուին թվի: 2010 թվականին ռեապ տոկոսադրույթը աճեց առաջային ճնշումների և

Վերլուծելով վերը նկարագրված իրավիճակ-ները՝ կարելի է եզրակացնել, որ ՀՀ ԿԲ-ի հետևողական համագործակցությունը Կառավարության հետ հարկաբուժետային և դրանվավարկային քաղաքականությունների կողորդինացման հարցերում կարևոր է որպես դրանց արդյունավետության բարձրացման անհրաժեշտ պայման։ Այս համագործակցությունը պետք է ուղենչվի նաև երկարաժամկետ հատվածի համար, քանի որ ՀՀ տնտեսության զարգացման կայուն և տևական երաշշիքների ապահովման համար կարևոր նշանակություն ունի տնտեսությունում երկարաժամկետ խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացումը։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Վիճակը 2009 թ. հուլիս-դեկտեմբեր», Եր., 51 էջ:
1. ՀՀ օրենքը «ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի մասին»:
2. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության վիճակագրական տեղեկագիր, «ՀՀ սոցիալ-տնտեսական 3. ՀՀ Կենտրոնական բանկի հաշվետվություն, 2010թ. «Ֆինանսական կայունության հաշվետվություն 2009», էջ 52:
4. «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012», Եր., 2012:

FISCAL AND MONETARY POLICY COORDINATION DURING CRISIS
AND AFTER THE CRISIS PERIODS IN THE PA

VANYA GHAZARYAN

Summary

It is presented in this article the fiscal and monetary policies of state regulation of the economy, that need to be coordinated.

**ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԱՐԴՅՈՒՆԱԳԵՐԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՐԱ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ՈՐՊԵՍ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ***

Անուշ ԱԶԱՏՅԱՆ

ՀՊՏՀ Միկրոէկոնոմիկայի և ծերնարկությունների գործունեության կազմակերպման ամբիոն, ասպիրանտ

Աստենախոսության թեման՝ Արտահանման ուղղված արդյունաբերական քաղաքականության կատարելագործման հիմնախնդիրները ալկոհոլային խճիչների շուկայում (ՀՀ նյութերով)

Գիտական դեկան՝

Միքայել ՄԵԼքՈՒՄՅԱՆ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր



Յուրաքանչյուր զարգացմանը պետության, այդ թվում Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման միջնաժամկետ ռազմավարությունը պետք է ուղղված լինի տվյալ երկիր տնտեսության դիմանիկ զարգացմանը, նրա քաղաքացիների բարեկեցության բարձրացմանը, միջազգային շուկայում հայրենական արտադրանքի մրցունակության բարձրացմանը, տարածաշրջանների համաչափ զարգացմանը, հասանելի դարձնի որակյալ առողջապահությունը և կրթությունը: Այս նպատակների իրականացումը պահանջում է հանալիք մոտեցում: Դրա հրականացման համար անհրաժեշտ է ծիշտ արդյունաբերական քաղաքականության ընտրություն:

Արդյունաբերական քաղաքականությունը տնտեսագիտական գրականության մեջ չի ընկալվում միասնական ձևով և դիտարկվում է ինչպես նեղ, այնպես էլ լայն առօսով: Նեղ առօսով այն ընդունվում է որպես արդյունաբերության որոշակի բնագավառի կամ ոլորտի առնչվող կոնկրետ ծրագրերի իրականացում, ինչպես նաև արդյունաբերական ծերնարկության զարգացում: Լայն առօսով արդյունաբերական քաղաքականությունն իրենից ներկայացնում է այն

միջոցառումների համախումբը, որն ուղղված է տնտեսության մեջ տեղի ունեցող կառուցվածքային փոփոխություններին աջակցելուն կամ կանխելուն [1, էջ 14]: Այդ միջոցառումներն իրականացվում են ի նպաստ առաջարկի ապահովման, բարելավման, ինչպես նաև տնտեսության աճի ապահովման, արտադրողականության և մրցունակության բարելավման:

Մեզանուն արդյունաբերական քաղաքականությունը հաճախ մեկնաբանվում է որպես արդյունաբերության ոլորտում պետական քաղաքականություն: Սակայն խիստ տեսական դիտանկյունից այդպիսի մեկնաբանումը ճիշտ չէ: Արդյունաբերական քաղաքականությունն ավելի հաճախ նշանակում է պետության կողմից իրականացվող միջոցառումներ՝ տնտեսության կոնկրետ հատվածների աջակցության և զարգացման համար: Միաժամանակ այն նշանակում է ոչ միայն սեկտորային քաղաքականություն, այլև տնտեսությունը կառուցվածքային ճգնաժամից հանելուն ուղղված պետական քաղաքականություն:

Արդյունաբերական քաղաքականության հիմնական նպատակն է խթանել պետության տնտեսության անցումը զարգացման նորարարական ուղղություն, որը հնարավոր է դարձնում արդյունաբերության ոլորտներից գիտատար և բարձր տեխնոլոգիական արդյունաբերության տնտեսական աճի շարժիչ ուժ դասնալը, ապահովում է տնտեսության արդյունաբերական հատվածի զարգացումը, փոքր և միջին ծերնար-

* Ներկայացվել է 15.10.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

կատիրության գործունեության համար բարենպաստ նորմատիվակարական դաշտի ստեղծումը և այլն: Այդպիսի արդյունաբերական քաղաքականության նշանական խնդիրները և հիմնահարցերը լավագույն ուսումնասիրության են ենթարկվել օարգացած երկրներում, նաև ավորապես նպատակահարմար է ուսումնասիրել եվրոպական երկրների փորձը: Եվրոպական երկրների այդ փորձի հմացությունը և կիրառումը հնարավորություն կը նենայի մեր երկրի տնտեսության դիմանմիկ օարգացմանը և միջազգային նարուահայակերներին դիմակայանը:

Կառուցղական արդյունաբերական քաղաքականության սկզբունքներն են՝ պետական խրանող քաղաքականություն՝ արտադրության բոլոր ճյուղերի նկատմամբ, օպտիմալ չափանիշների սահմանան միջոցով աջակցման ծրագրերի ընտրություն, նաև ավորապես արտահանման ներուժ ունեցող ճյուղերի աջակցման ծրագրերը, արդյունաբերական ենթակառուցվածքների օարգացման խթանում [2]:

Երկրի արդյունաբերության մրցունակությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, նաև ավորապես:

- աշխատանքային ռեսուրսների որակավորմամբ,
- ծեռնարկատիրական ամուր կապերի առկայությամբ,
- քարձորագույն ուսումնական հաստատությունների և գիտահետազոտական ինստիտուտների առկայությամբ,
- արտասահմանյան տեխնոլոգիաների և տեխնիկայի յուրովի յուրացմամբ,
- կառավարչական և տեխնոլոգիական ինովացիաների արդյունաբերության ճյուղում տարածման արագացմանը:

Ակտիվ արդյունաբերական քաղաքականությունը ներառում է պատեմտների հեշտ հասանելիություն, նոր արտադրական գործունեության ֆինանսական և հարկային աջակցություն, տեղեկատվության հասանելիություն և տարածում, օտարերկրյա ուղղակի ներդրումների նկատմամբ ծիշտ ընտրված ռազմավարություն [3, էջ 25-28]:

Համաշխարհային փորձի հիմնական միտումն է հանդիսանում այնպիսի արդյունաբերական քաղաքականության կառուցումը, որը կիահարդի տարրեր տնտեսվարողությունը ոչ միայն ներկա, այլ նաև ապագա գործունեություններում:

ԵՄ երկրների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կրթական համակարգում ակտիվորեն մասնակցող պետության դերը դժվար է գերազնահաստել: Կրթական համակարգը պետք է բավարարի ժամանակակից արդյունաբերության պահանջները: Այդ իսկ պատճառով նպատակահարմար ենք գտնում նշել, որ յուրաքանչյուր երկիր, որը ձգտում է ունենալ արդյունավելու արդյունաբերական քաղաքականություն, պետք է իր տնտեսական քաղաքականությունում առանձնահատուկ ուշադրություն դարձնի կրթական համակարգին: Եվրոպական փորձը վկայում է, որ արդյունաբերական քաղաքականությունը պետք է հնտերպալ բնույթ ունենա, այսինքն՝ պետք է նաև միահյուսի տնտեսական և սոցիալական քաղաքականության տարբեր հարցեր: Արդյունաբերական քաղաքականության նորարարական մողելը հաշվի է առնում նաև ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների հարածուն արժեքը՝ դիզայնը, բրենդի մշակումը, ինտելեկտուալ կապիտալը:

Կարևորագույն եզրակացությունն այն է, որ հաջողության կարելի է հասնել միայն այն դեպքում, եթե գործարկի սիմերգիկ մեխանիզմը տնտեսական քաղաքականության այնպիսի գործիքների համադրությամբ, որոնց գործողությունները ենթակա են այնպիսի առաջանություններին, որոնք պատասխանառու են հասարակության և պետության պահանջներին:

Որոշ տնտեսագետներ արդյունաբերական քաղաքականության կիրառման դեմ ներկայացնում են մի շարք փաստարկներ. զարգացող երկրներում արդյունավետ արդյունաբերական քաղաքականության իրականացում հնարավոր չէ, քանի որ կառավարությունը ընդունակ չէ կրահել, թե որոնք են պատենցիալ ունեցող ընկերությունները, այդպիսի երկրներում պետական ապարատը բավարար չափով բանհմաց չէ, որ պեսզի ապահովի ճյուղային քաղաքականության արդյունավետ իրականացմանը, պետության միջամտությունը ճյուղերի օարգացմանը խթանում է կոռուպցիան և այլն: Սակայն տնտեսագետների այլ խումբ ամրում է, որ չնայած այդ փաստարկներուն կա ճշմարտության բաժին, սակայն համակողմանի և խոր ուսումնասիրության արդյունքում փաստվում է հակառակը: Միջազգային համագործակցության համաձայնագրերը, չնայած այն հանգամանքին, որ սահմանափակում են տնտեսության ազատությունը՝ սահմանելով որոշակի կանոններ, այնուամե-

նայնիվ ունեն դրական հատկանշներ. մասնավորապես կնքվող գործարքների թափանցիկության պահանջը հանդիսանում է արդյունավետ արդյունաբերական քաղաքականության բաղադրիչներից [4]:

1990-ական թվականներին Հայաստանը, ազգային ազգային գործարքների հոգածությունը, կարելի է ասել՝ ընտրեց այնպիսի տնտեսական քաղաքականություն, որը կարելի է բնորոշել որպես արդյունաբերական քաղաքականության բացակայություն՝ ձգտելով նվազագույնի հասցել պետության միջանալությունը տնտեսությանը: Սակայն ինչպես ցույց տվեց 2008-2009 թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամը, ծիշտ ընտրված արդյունաբերական քաղաքականությունը հանդիսանում է տնտեսության և ողջ հասարակության զարգացման և առաջնային գործարքների օրինակ կարող է հանդիսանալ Իռլանդիայի կողմից իրականացվող արդյունաբերական քաղաքականությունը, որի ուսումնասիրությունը և արդյունքների կիրառմը կարող է հանդիսանալ Հայաստանի տնտեսության արդյունավետ արդյունաբերական քաղաքականության մշակման ուղի: Արդյունաբերական քաղաքականության այդպիսի մոդելում առաջնային է որակի ապահովում՝ կառավարության մշակած տեսլականների որակը, հարկաբրյուշենային ծրագրերի որակը, ՓՄՁ աջակցության և օժանդակման որակը, կրթության որակը: Պետք է կենտրոնանալ գիտական հետազոտությունների և նորարարությունների վրա:

2008-2009 թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամը, ունենալով քաղում բացասական ազդեցություններ, ՀՀ տնտեսության վրա ունեցավ նաև դրական ազդեցություն: Տնտեսության դիվերսիֆիկացման անհրաժեշտությունը բոլորն էին գիտակցում, սակայն ճգնաժամը այդ հարցում առավել արդյունավետ գտնվեց: Ներկայունս տնտեսական աճը ապահովվում է հատկապես արդյունաբերության և ծառայության ոլորտների առաջանցիկ զարգացման հաշվին: Հայաստանի Հանրապետության արդյունաբերության ոլորտը հանդիսանում է տնտեսության հիմնական և առանցքային ճյուղերից մեկը, որի մասնաբաժնը ՀՆԱ-ի կառուցվածքում 2012 թվականին կազմել է 17.2%:

Հակակաճգնաժամային քաղաքականությունը ներառում էր ինստիտուցիոնալ բնույթի և ենթակառուցվածքների կատարելագործման միջոցառումներ, որոնք իրենց ազդեցությունն ունե-

ցան 2011 թ. ձևավորված արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության վրա [5]: Պետք է նշել, որ առաջնային է պետության նախաձեռնողական դերը տնտեսական գործընթացներում, սակայն ընտրված ռազմավարությունը վկայում է, որ պետությունը օժանդակում և աջակցում է արդեն գործող կամ արտահանման ներուժ ունեցող կազմակերպություններին, սակայն առավելությունը պետք է տրվի նորարական ձեռնարկություններին, գործունեության նոր տեսակներին: Փորձենք նշել ՀՀ որդեգրած արդյունաբերական քաղաքականության որոշ հատվածներ, որոնք ուշադրության կարիք ունեն:

- ռազմավարությունը չի նախատեսում գործունեության նոր տեսակների ստեղծմանն ուղղված ուղղակի միջոցառումներ,

- ռազմավարությունը ներառում է այնպիսի ընդհանրական միջոցառումներ, որոնք այսպես թե այնպես տարիներ շարունակ իրագործվում են,

- առաջնայինություն պետք է տալ կառուցվածքային հիմնախնդիրների լուծմանը:

Վրյունավետ արդյունաբերական քաղաքականության ժամանակ հաշվի են առնվում տնտեսության բոլոր ենթակառուցվածքները, եթե տնտեսությունը արդյունավետ է գործում ֆինանսական հատվածը, ապա կարելի է աջակցել ֆինանսատնտեսական կորպորացիաների ձևավորմանը, սակայն ՀՀ տնտեսությունը ֆինանսական շուկայում վարկավորումը աչքի է ընկնում բարձր տոկոսադրույթներով, ինչը էլ չի նպաստում տնտեսության տարբեր ոլորտների վարկավորմանը: Չնայած քանի որ գերշահույթներ են ստանում, սակայն չեն նպաստում տնտեսության գործունեության ակտիվացմանը, մասնավորապես այն ճյուղերում, որտեղ հիմնային մուտքանամբ՝ ոչ միայն ծիշտ շարադրմանք, այլ նաև հետևողական և նպատակային իրականացմանք և կառավարմանք, պետության տնտեսությունում ակտիվ մասնակցությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արշակյան Ալ. Յ., Արշակյան Ա. Ա., Արդյունաբերական քաղաքականություն, Երևան, 2004:

2. **Rodrik D.**, Industrial Policy for the Twenty – First Century, Harvard University, september, 2004.
3. **Կ. Ա. Բաբկին**, Разумная промышленная политика или как нам выйти из кризиса, М., 2008.
4. **Polterovich V., Popov V.**, Appropriate Economic Policies at Different Stages of Development, 2005.
5. ՈԱՉՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ «ՀՀ արտահանման ուղղված արդյունաբերական քաղաքականություն», Հավելված, ՀՀ կառավարության 2011 թ. արձանագրային որոշում:

EFFECTIVE INDUSTRIAL POLICY AND ITS APPLICATION AS A GUARANTEE FOR THE ECONOMIC DEVELOPMENT OF ARMENIA

ANUSH AZATYAN

Summary

Industrial policy is a guarantee for the country's economic development and stable growth. This article presents the concept of industrial policy, its types and history of development, this article describes foreign practice of industrial policies. The article examines Armenia's industrial policy, its shortcomings and how to overcome these disadvantages, the application possibilities of effective industrial policy in Armenia.

ԽՄԲԱՅԻՆ ՂԵՎԻԱՑԻԱՅԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ*

Նարինե ԿՈՂՅԱՆ

«Միսիար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարամի հայցորդ

Ավտենախոսության թեմամ՝ Անձնակազմի դեվիհանտ վարքագիծի կանխարգելման և կառավարման առանձնահատկությունները ՀՀ կազմակերպություններում
Գիտական դեկան՝ Վահրամ ԲԱՐԴԱՍԱՐՅԱՆ՝ տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր



շումների կայացման և իրականացման:

Դեվիհանտ վարքագիծը (լատ. devictio - շեղում) այնպիսի վարքագիծ է, որը շեղված է ընդունված, առավել տարածված և գոյություն ունեցող նորմերից որոշակի հանրույթներում՝ նրանց զարգացման որոշակի ժամանակաշրջանում [1, էջ 63]:

Դեվիհացիաները, ըստ իրենց դրսկորման և կառավարման առանձնահատկությունների, դասակարգվում են երեք խմբում, որոնցից մեկը խմբային դեվիհացիայի ծևավորումը և կառավարումն է կազմակերպությունում: Դաշվի առնելով այն հաճամանքը, որ կազմակերպությունը իրենց ներկայացնում է տարեր խմբերի ամբողջություն, դեվիհացիայի այս ձևը խոցելի է դարձնում ամբողջ կազմակերպությունը, և դրա ախտորոշումը և կառավարումը շատ կարևոր խնդիր է:

Խմբային դեվիհացիայի եռթյան բացահայտման նպատակով նախ անհրաժեշտ է նշել խմբերի առանձնահատկությունները.

- կազմակերպության նպատակում են խմբի դրսկորման և առանձնահատկություններում,

- խմբերում են բացահայտվում անձի անհատական հատկանիւթյունները և պրոֆեսիոնալ գործունեությունը:

* Ներկայացվել է 19.11.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

Անձնակազմի դեվիհանտ վարքագիծի գործընթացում կարող է կառավարման առանձնահատկությունները համար կազմակերպություններում նշել կազմակերպություններում արդյունավետությունը նվազում է:

• Խմբային գործներությունը նպաստում է կազմակերպության սոցիալ-քարոյական նրբությունի և կորպորատիվ մշակույթի ձևավորմանը,

• Խմբերը նպաստում են աշխատանքային ներ մասնագիտացմանը, գիտելիքների և կարողությունների զարգացմանը,

• Խմբերում է տեղի ունենում անձնակազմի ուսուցումը՝ փորձի փոխանակման և սերնդափոխության միջոցով,

• Կազմակերպությունը խմբերի ամբողջություն է, հետևաբար նրա հաջողությունները պայմանավորված են յուրաքանչյուր խմբի գործունեությամբ [2, էջ 110]:

Խմբերի ճիշտ ծևավորումն ու կառավարումը կարող է դեվիհանտ վարքագիծի դրսկորումները հասցնել նվազագույնի: Մենեջմենտում մի շարք մասնագետներ մանրամասն նկարագրել են խմբային դեվիհացիան նշելով, որ դրանք են հիմնականում դառնում կոլեկտիվում բախումների և սրբեսների դրդապատճառներ, դիտարկենք դրանք առավել մանրամասն՝ առաջարկելով ախտորոշման և կառավարման լուծումներ:

Գոյություն ունեն խմբային դեվիհացիաների ախտորոշման մի շարք մոտեցումներ.

I. Զ. Թոմազոնի կողմից առաջարկված՝ կազմակերպություններում խմբային դեվիհանտ վարքագիծի ախտորոշման դասակարգումը, որը հիմնված է հետևյալ երկու գործների վրա.

1. Աշխատանքն իրականացվում է համագործակցության սկզբունքով՝ թե՝ կատարվում է անհատական ծևով (ընդգրկվածությունը խմբում):

2. Արդյո՞ք հնարավոր է խմբավարության

որոշակի աստիճանի տրամադրում, թե՝ պետք է պահանջել աշխատավիշների կողմից պարտականությունների և կանոնների անվարան կատարում (կանոնների ուժը):

Այս երկու գործոնը՝ ընդգրկվածությունը խմբում և կանոնների ուժը, գնահատվում են ուժեղ կամ թույլ և պատկերացում են տալիս կազմակերպությունում դեվիանտ վարքագիծ չորս նախատիպերի մասին: Վերոնշյալ մոտեցումը դեվիանտ վարքագիծը բաժանում է չորս կատեգորիայի՝ «Ավանակներ», «Բազեներ», «Գայլերի ռիմակներ» և «Գիշանգրներ»: Ցուրաքանչյուր կատեգորիայի ներսում գործունեությունը ոչ միայն օժտված է կառուցվածքային ընդհանուր բնութագրերով, այլև հստակ կապված է աշխատանքի ընթացքում դեվիանտ վարքագիծ այս կամ այն տեսակի հետ [3, էջ 340-342]:

«Բազեներ» (թույլ կանոններ / խմբի մեջ թույլ ընդգրկվածություն): Վարքագիծի մոցունակ տարատեսակ է: Նրանց բարձր դիրքը կազմակերպությունը չի կարելի հանձնել հաջողություն կազմակերպության համար, քանի որ նրանց բնորոշ է սեփական կանոնների սահմանումը և դրանց փոփոխությունն այն ժամանակ, երբ այն իրենց ձեռնոտությունը՝ «Բազեն» հանդիսանում է փոքր խաղողախության օրինակ՝ կարողանալով միաժամանակ օգտագործել մարդկանց մի քանի հիմքեր, որոնք այդ մասին չգիտեն և չեն էլ ուզում ուշադրություն դարձնել այդ հանգամանքին: «Բազեի» համար արդարացում է հանդիսանում այն հանգամանքը, որ իր գործողությունների արդյունքում կազմակերպության պոտենցիալ եկամուտներն սկսում են գերազանցել ծախսերը: Սակայն «բազեներն» աչքի չեն ընկնում նվիրվածությամբ, ինչն էլ բացատրում է հաճախ նրանց կիցների կողմն անցնելու նրանց հակումը, առավել և երբ իրենց հետ նրանք կարողանում են տանել նաև նախորդ կազմակերպության ռեսուլուները:

«Ավանակներ» (ուժեղ կանոններ / խմբում թույլ ընդգրկվածություն): «Ավանակները»-ի աշխատանքում գլխավորը կանոններն են՝ ինքնավարության պակասը, հաճախ ցածր կարգավիճակը և միջնացից հարաբերական մեկուսացումը: Գոյություն ունի նրանց աշխատանքային գրաֆիկներով, անվտանգության կանոններով սահմանակելու տեղենք: Մրա հետ կապված՝ նրանց մոտ, հատկապես ծառայությունների ոլորտում, նվատվում է կանոնների խախտման, սարուտածի, ապրանքների փոփոխման, խաբեության, ազգակցական կապերի օգտագործման միջոցով անկախության և սեփական շահերը պաշտպանելու ձգում: «Ավանակների» գործո-

որությունները արձագանք են՝ կապված աշխատավայրունցածք աշխատավարձի և կարգավիճակի, կառավարչական վերահսկողության նկատմամբ Վիրավորվածության հետ: Սոցիալական համերաշխության բացակայությունը բավականին բնորոշ գործոն է «ավանակների» աշխատանքի համար: Որքան շատ են լինում դեկավորության կողմից կիրավող սահմանափակումներն ու կանոնները, այնքան ավելի է նվազում նրանց աշխատանքի արդյունավետությունը:

«Գայլերի ռիմակներ» (ուժեղ կանոններ / ուժեղ ընդգրկվածություն խմբում): Արանք կիրառում են խմբային դեկավորում, որն իրականացնում են լավ կազմակերպած և բազմաշերտ ավագականիներ հիշեցնող թիմերը, որոնք իրենց աստիճանակարգումով, կարգապահությամբ, ներքին վերահսկողությամբ հիմնված են խմբային աշխատանքի սկզբունքների վրա, ինչն էլ իր հերթին արածադրված խնդիրների լուծման համար պահանջում է աշխատանքի բաժանում և կոռպերացիա: Գոյանալով կամ դեվիանտ վարքագիծի այլ տեսակներ դրսությելով՝ նրանք գործում են չգրված օրենքների համաձայն, որոնցում հստակ ամրագրված են վարքագիծի կանոններն ու աշխատանքի բաժնում: Նրանց մոտ ենթադրվում է դեվիանտ վարքագիծի տեխնիկայի և պրակտիկայի ուսուցանում: Ինչպես գայլերն իրական կյանքում, նրանք գիտեն՝ ով է լիդերը, և ովեր են նրա ետևից գնացողները, ընդ որում օգտագործում են ներքին կազմակերպում պատիժների և խրախուսանքի համար՝ կախված խմբի ներսում առկա շերտուններից:

«Գիշանգրներ» (թույլ կանոններ / ուժեղ ընդգրկվածություն խմբում): Արանք ևս գործում են թիմով, սակայն աստիճանակարգումն ու աշխատանքի բաժանումն այսուել չափազանց ցածք մակարդակի վրա է: Բոլորը կախված են որոշակի տեղեկատվությունից: Գործընկերների ու աճրող անձնակազմի կարիքն ունենալով համեմերձ՝ ունեն նաև իրենց անձնական շահերը: Բոլորի կողմից ընդունված լիդերի բացակայությունը, ինչը պարտականությունների թույլ դասակարգման և ներքին նրանց կցուցության ու կոռպերացիայի պահանջմունքի զարմանալիութենական միասնության հետևանք է, վեճերի լուծման ժամանակ՝ «գիշանգրներին» կանգնեցնում է դժվարությունների առջև և նրանց դարձնում է բամբասանքի առարկա, երբեմն էլ՝ քավության նոյնական: «Գիշանգրների» խմբավորումները, որպես կանոն, կայուն չեն: Հաճախ նրանց վարքագիծի դեվիանտությունը կարող է դրսուրկել աշխատողի և դեկավարության միջև գաղտ-

նի համաձայնության ծևով, որը, հակասելով կազմակերպության շահերին, ծառայում է նրանց անձնական բարեկեցությանը:

II. Խմբային դեվիացիայի ախտորոշում, որը հիմնված է խմբում անդամների շահերի բախումների վրա:

Այս խմբային դեվիացիայի դրսեռումը հիմնականում ծևավորվում է խմբում՝ տարբեր շահերի բախումների հիման վրա (նյուրական և քարոյական շահադրդման, առաջխաղացման, առանձին հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման ժամանակ տարակարծությունների պատճառով և այլն), որի ախտորոշման համար կարելի է օգտագործել տարբեր սոցիոնետրիկ, հարցումային մեթոդներ, որոշ դեպքերում՝ խմբի առանձին անդամների համար նաև հոգեբանական վերլուծություններ:

Խմբային դեվիացիայի ախտորոշման չափորոշիչներ կարող են հանդիսանալ.

1. Խմբի անդամների համատեղելիության աստիճանը:

2. Համախմբվածությունը:

3. Բախումների հաճախության ցուցանիշը:

Համատեղելիությունը որոշում են հետևյալ ձևերի հիման վրա.

- Փիզիկական (ուժային չափորոշիչներով, դիմացկունությամբ),

- Փիզիկահոգեբանական (տեսողական, լսողական, հոտառության, շոշափելիք, համի չափորոշիչներով),

- Սոցիալ-հոգեբանական (անհատի բնութագրիներով՝ բնափորություն, խառնվածք, հաղորդունակություն, ճաշակ, հակումներ),

- Սոցիալ-գաղափարախոսական (հայացքներ, սոցիալական արժեքներ, նորմներ):

Խմբի անդամների համատեղելիության աստիճանը որոշելու համար կարելի է օգտվել Ռ. Քերբելի՝ անձի հատկանիշների գնահատման մեթոդից, սակայն առաջարկված 16 գործուներից ընտրելով միայն նրանք, որոնք անմիջականորեն կապված են համատեղելիության ունակությունների հետ [4, էջ 172-193]:

Համատեղելիությունը ազդում է խմբի համախմբվածության աստիճանի վրա:

Համախմբվածությունը բնուրագում է, թե որքանով են անհատները ինտեգրված կոլեկտիվի մեջ, կիսում են, արդյոք, խմբային գործունեության նպատակները, և թե ինչպիսին են փոխհարաբերությունները և փոխգործակցության օպտիմալացման աստիճանը, որի արդյունքում խմբի բոլոր անդամները ընդունակ են իրականացնել համատեղ գործունեություն:

Համախմբվածության վերլուծության հետ

կապված՝ կարելի է առանձնացնել երկու մոտեցում:

1. Խմբի անդամների միջև էնոցիոնալ հարաբերությունների տեսակետից

2. Խմբի անդամների փոխհարաբերությունների արդյունավետության տեսակետից, առավել կոնկրետ՝ համատեղ գործունեություն իրականացնելու ընդունակությունից:

Առաջին դեպքում համախմբվածությունը դիտարկվում է խմբի ներսում միջանձնային կապերի հաճախականության և ամրության հիման վրա: Այն հաշվելու համար կարելի է օգտվել համախմբվածությունը հաշվարկող սոցիոնետրական ինդեքսից (Cn)

Cn= K/Σ_{BB} , (1), որտեղ

Cn-ը՝ էնոցիոնալ-միջանձնային մակարդակում համախմբվածության ցուցանիշն է,

K-ը՝ խմբի անդամների կողմից փոխադարձ ընտրությունների հմարավոր առավելագույն թիվը:

Σ_{BB}-ը՝ տվյալ խմբում փոխադարձ ընտրությունների հմարավոր առավելագույն թիվը:

Կ ցուցանիշը որոշվում է սոցիոնետրիկ մատրիցայի հիման վրա, իսկ Σ_{BB}-ը հաշվարկում են հետևյալ բանաձևով.

Σ_{BB}= n (n-1)/2 (2), որտեղ n-ը խմբի անդամների քանակն է:

Համախմբվածության ինդեքսը որոշում են նաև Սիշորի թեստավորման եղանակով [5, էջ 179-180]:

Երկրորդ դեպքում համախմբվածությունը անհատների համար դիտարկվում է ոչ միայն կոլեկտիվին անդամակցելու էնոցիոնալ գրավչության, այլ ավելի շուտ անհատների՝ համատեղ գործունեության մեջ ընդգրկվելու տեսակետից: Կոլեկտիվ աշխատանքի կառավարման իդեալական ռազմավարության հետ կապված՝ R. Ուցցին, ուսումնասիրելով՝ կոլեկտիվի ներսում փոխհարաբերությունների ազդեցությունը համատեղ աշխատանքի արդյունքների վրա՝ պարզել է հետևյալը:

1. Մարդիկի, ովքեր աշխատում են մի կազմակերպությունում, հանդիսանում են շատ խիստ սոցիալական ցանցի անդամներ, և դժվար չէ գտնել այն կապերը, որոնք առկա են նրանց միջև:

2. R. Ուցցին առաջարկեց այդ կապերի խոսությունը չափելու համակարգ և դուրս բերեց մի մեծություն, որն անվանեց Q:

Q-ն արտահայտում է խմբում աշխատող մարդկանց սոցիալական մերձությունը, մտերմությունը: Որքան մեծ է Q-ն, այնքան մեծ է այդ մերձությունը, և հակառակը: R. Ուցցիի հետազոտությունները ցույց տվեցին, որ եթե Q-ի նակարգակալը ցածր է (ցածր 1,7-hg), աշխատանքը խմ-

բում արդյունավետություն չի ապահովում։ մարդկան իրար լավ չեն ճանաչում, իետևաքար միմյանց հետ աշխատելու ու նտքեր փոխանակելը դժվարանում է։ Սակայն, եթե Q-ի մակարդակը չափազանց բարձր է լինում (3.2-ից բարձր), ապա այս պարագայում ևս համատեղ աշխատանքը չի ստացվում, և դեվիացիայի հավանականությունը սկսում է աճել։ Ըստ Ուցցիի՝ առավել արդյունավետ են աշխատում այն կոլեկտիվները, որտեղ առկա է մտերմության միջին մակարդակ ($Q = 2.6$ կամ $1.4 < Q < 3.2$)։ Այսպիսով, խնդրում համագործակցությունն առավել արդյունավետ է, եթե կոլեկտիվի կազմը խառն է։ իրար լավ ժամոր մարդկանցից բացի, կան նաև նորեկներ։ Մի կողմից՝ կան մարդիկ, ում միշտ կարելի է դիմել խորհուրդ հարցնելու համար, մյուս կողմից՝ մշտապես նոր գաղափարների պակաս չի զգացվի։ Մարդիկ իրենց պետք է հարմարավետ զգան, բայց ոչ շատ [6]։

Ս. Զերսի կարծիքով՝ խնդրի արդյունավետ աշխատանքի գրավականը մարդկանց փոխգործակցությունն է։ «Լավագույն աշխատակիցները, նախագծի հետ կապված, անընդհատ խորհրդակցում են 4-9 գործընկերոց հետ, իսկ աշխատանքից ցածր արտադրողականության ցածր ցուցանիշ գրանցվում է նրանց մոտ, ովքեր շփում են միայն 1-2 աշխատակցի հետ։» Ուրեմն՝ որքան մեծ է աշխատակիցների թիվը, որոնց հետ խորհրդակցում է ծառայողը, այնքան բարձր է նրա անձնական արտադրողականությունը։

Կոլեկտիվ աշխատանքի արդյունավետության բարձրացումը և դեվիանտության բացառումը հանրահայտ «Pixar» և «Apple» ընկերություններում տեղի է ունենում աշխատանքում թերացումների և բացքումների պատճենագույնությունում նկատվում է միջոցով, քանի որ սիսակի ընդունումը իշեցնում է այդ սիսակի գիրն։

Բախումների հաճախության ցուցանիշը պահանջում է կոնֆլիկտների վիճակարությունը բախումների հաշվառմով, մասնակիցների քանակով, բախումների սրության աստիճանով, դիմանիկայով՝ դրանք համեմատելով նախորդ ժամանակահատվածների ցուցանիշների հետ։ Քնականարար, որքան ցածր է այդ ցուցանիշը, այնքան արդյունավետ է կազմակերպված դեվիացիաների կառավարման գործընթացը։ Բախումների հաճախության ցուցանիշին գուգահեռ կարելի է հաշվարկել նաև **խմբային լարվածության ցուցիչը**։ Անձնական զգուշումների, սպասումների և իրական աշխատանքային իրավճակի անհանապատճանության դեպքում կամ, եթե միշտանձնային հարաբերությունների

առանձնահատկություններն ու բնույթը չի բավարարում աշխատակցին, խնդրի ներսում աճում է լարվածությունը։ Այդպիսով, «խմբային լարվածությունը» գործում է որպես կենտրոնախույս ուժ՝ սկզբան առնելով խմբային կոնֆլիկտներից և աշխատակիցներից բախումներից, որոնք ել իրենց հերթին կարող են խնդրի դեվիանտ վարքագիր պատճառ դառնալ։

Պ. Վ. Մինոնը, Օշելով հարցի կարևորությունը, առաջարկել է լարվածության գնահատման հետևյալ բանաձնը [7, էջ 115].

$$\Theta = \Pi (H - C) \quad (3),$$

որտեղ՝ Θ -ն կոլեկտիվում գգացմունքային լարվածության մակարդակի ցուցանիշն է, Π -ն տեղեկատվության նկատմամբ պահանջմունքը, H -ը՝ անհրաժեշտ (ցանկալի ընդգրկումով) տեղեկատվությունը, C -ն՝ գոյություն ունեցող տեղեկատվությունը։

Համաձայն այս բանաձնի՝ եմոցիոնալ լարվածությունը կոլեկտիվում ուղիղ համեմատական է ցանկալի և առկա տեղեկատվության տարրերությանը։ Որքան այդ տարրերությունը զգում է գորոյի, այնքան հանգիստ և աշխատունակ է կոլեկտիվը, այնքան կայուն է հոգեբանական մինուլորտը, և այնքան նվազ են դեվիանտության դրսերումները։

Դեվիացիայի փասիի բացահայտումից և ախտորոշումից հետո դրանք պետք է կամխարգելվեն և կառավարվեն, որի համար առաջարկում ենք օգտվել հետևյալ մոտեցումներից։

I. Ըստ Զ. Թոնպսոնի՝ դեվիանտ վարքագիր կատեգորիաների համար

«Բագեների» համար առաջարկում ենք տարրեր թեստերի միջոցով բացահայտում և, եթե նրանց աշխատանքը շատ կարևոր ու անհրաժեշտ է կազմակերպության համար, և նիկույն ժամանակ նրանք չեն կարող գործել խնդիրից դուրս, ապա անհրաժեշտ է խիստ ընդգծել նրանց լիազորությունների, պարտականությունների, իրավունքների և պատասխանատվության շրջանակը, ծանոթացնել կազմակերպության կանոնակարգին և նրանց հարաբերությունները խնդրի անդամների հետ ձևավորել նորմատիվային հիմքի վրա։

«Ավանակմաների» համար անհրաժեշտ է խիստ ընդգծել նրանց պարտականությունները և պատասխանատվությունը։ «Ավանակմաներին» առավել արդյունավետ աշխատեցնելու նպատակով ցանկալի է նրանց համար մշակել շահադրուման այնպիսի սանդղակ, որն ուղղակիորեն կապված է կատարած աշխատանքի արդյունքների հետ։ Այս կարգի դեվիանտ վարքագիր հակում ունեցող աշխատողները պետք է պաշտպանված լի-

նեն ներքին կանոնադրությամբ, ինչը նրանց թույլ կտա հարգված զգալ աշխատավայրում:

«Գայլերի ոհմակներին» կառավարելիս՝ պետք է հաշվի առնել այս դեվիսացիայի վտանգավորությունը կազմակերպության համար և բացահայտել այն հենց աշխատանքի ընդունան ժամանակ: Եթե նման վարդագիծ դրսնորելու հակում ունեցող աշխատողն ունի նաև առաջնորդի հատկանիշներ (համապատասխան բարձր գիտելիքներ, հաղորդակցման մեջ ունակություն, կազմակերպաչական կարողություններ), ապա ցանկալի կլինի այդ անձին նշանակել ծևական առաջնորդ-դեվիսավար: Ընդ որում, անհրաժեշտ է խիստ ընդգծել նրանց պատասխանատվությունը աշխատանքի արդյունքների համար: Առաջնորդական հատկանիշների բացակայության դեպքում, այս դեվիսացիայի նկատմամբ հակում դրսնորդ անձանց ցանկալի է հնարավորինս նենուսացնել խմբային շփումներից և խմբային որոշում կայացնելու հնարավորությունից:

«Գիշաճագողների» դեվիսացիայի առկայությունը վկայում է կոնֆլիկտային հրավիճակի նախադրյալների առկայության մասին և շատ վլունգավոր է, եթե ծիշտ ժամանակին կառավարվի: Նախ անհրաժեշտ է ծշտել (անցկացնել լրացուցիչ հարցում) և բացահայտել խմբի անդամների վերաբերությունը կազմակերպության առաքելության, նապատակների և խնդիրների նկատմամբ: Անհրաժեշտ է վերանայել կրպորատիվ մշակույթի նորմերում նախատեսված ավանդույթների, արժեքների համակարգը՝ միաժամանակ ուժեղացնելով ոչ միայն աշխատանքային կարգապահության, այլ նաև աշխատանքային գործունեության նկատմամբ վերահսկողությունը:

II. Խմբային դեվիսացիաների ախսորոշումից հետո դրանց կառավարման համար առաջարկում ենք.

1. Անհրաժեշտ է յուրաքանչյուր անձի, աշխատանքի ընդունելուց առաջ, ծանրացնել տվյալ խմբի կորպորատիվ մշակույթի նորմերին, խմբի առջև դրված խնդիրներին և կոնկրետ իր լիազորություններին, պարտականություններին և պատասխանատվության սահմաններին: Առաջարկում է հնարավոր դեվիսանտ վարդագիծը բացահայտել տարբեր սոցիալական գործունեության առանձնահատուկ ձև է, որը ենթադրում է երրորդ կողմի և բախվող կողմերի մասնակցությամբ խնդիրի լուծման այնպիսի տարբերակի որոնման գործընթաց, որը կրավարարեր կողմերին և կյուծեր կոնֆլիկտը [8, էջ 324-327]:

2. Խմբերում շատ կարուր է ծևակորել թիմային մոտեցում: Այսինքն՝ խմբի բոլոր անդամնե-

րին կապել միմյանց համատեղ լուծվող խնդիրների միջոցով: Այդ նպատակի համար գերադասելի է կառավարման այն մոդելը, երբ ամրող խումբը ընդհանուր պատասխանատվություն է ստանձնում արդյունքների համար (և խրախուվում են, և պատժվում են բոլորը միաժամանակ): Ընդ որում, խմբի կազմը խառը պետք է լինի: իրար լավ ծանոր մարդկանցից բացի, ցանկալի է, որ մշտակես լինեն նաև նորեկներ: Խմբի անդամների միջև պետք է լինի սոցիալական մտերմության միջին մակարդակ ($Q = 2.6$ կամ $1.4 < Q < 3.2$): Մարդիկ աշխատավայրում պետք է ունենան աշխատանքային ընկերների հետ մշտապես հաղորդակցվելու, մտքեր, գաղափարներ փոխանակելու հնարավորություն:

3. Բախտմների առաջացման շեմին անհրաժեշտ է կոնֆլիկտի դրդապատճառը ոչ կառուցողականից տեղափոխել կառուցղական հարություն: Մենքնմենք տեսությունում կոնֆլիկտների կառավարման բաժնում դրա համար ներկայացված են մի շաք եղանակներ՝ կառուցղաքային և միջանձնային: Խմբի ներսում բախտմները կառավարելու միջոց է նաև հաշտեցում: Հաշտեցումը (մեդիացիան) գործունեության առանձնահատուկ ձև է, որը ենթադրում է երրորդ կողմի և բախվող կողմերի մասնակցությամբ խնդիրի լուծման այնպիսի տարբերակի որոնման գործընթաց, որը կրավարարեր կողմերին և կյուծեր կոնֆլիկտը [8, էջ 324-327]:

4. Որպես կանոն, դեվիսանտ վարդագիծի դրսնորման լավ միջավայր է համարվում կազմակերպությունում, այդ բվում՝ նրա կառուցղաքային բոլոր ստորաբաժանումներում, միջանձնային հաղորդակցության, կազմակերպչական մշակույթի կանոնակարգերի բացակայությունը, ավանդույթների, սովորույթների անտեսումը: Այստեղ լուծումը միանշանակ պահանջում է վերոնշյալ փաստաբորդերի ընդունում, պարտադիր կիրառում և անընդհատ վերահսկում: Միջանձնային շփումների արյունավետությունը բարձրացնելու համար պետք է փոխել նաև ստորաբաժանումներում միջանձնային հաղորդակցման կառուցղաքիք՝ ծերազատվելով նաև հաղորդակցմանը խոչընդոտող ֆիզիկական, մշակութային, հոգեբանական և այլ սահմանափակումներից: Կարելի է օգտվել Շ. Ուրինսոնի և Ս. Ֆիլիի աշխատանքներում առաջարկված կանոնների համարից, որոնք բոլոր կտան խմբում նվազեցնել դիմադրությունը և ճանապարհ հարթել արյունավետ փոփոխությունների համար [9, էջ 283]:

5. Խմբերի համար մեջ նշանակություն ունենա արտաաշխատանքային կրոպորատիվ տոները

և միջոցառումները: Խորհրդուրդ է տրվում ղեկավարներին, օգտվելով ոչ ծևական մթնոլորտից, ուշադրություն դարձնել առանձին անձանց վարքագիր: Այս պայմաններում կարելի է բացահայտել նաև որոշ աշխատողների բոլարկված շատ դրական հատկանիշներ:

6. Շատ կարևոր է խմբի առաջնորդի կերպարը: Ցանկալի տարրերակ է, եթե առաջնորդը ծևական ղեկավարն է: Նա պետք է իր գիտելիքներով, հաղորդունակության բարձր մակարդակով, արժանապատկությամբ ի վիճակի լինի յուրաքանչյուր կոնֆլիկտի տալ կառուցողական լուծում: Մենեղմների տեսությունում մի շարք մասնագետներ անդրադարձնել են առաջնորդության խնդիրներին, որը խստ կարևոր է կիրառել գործնական կյանքում:

7. Կազմակերպության և խմբի ղեկավարների կողմից անհրաժեշտ է խմբի գործունեության արդյունավետության պարբերական (տարին 1-2 անգամ) գնահատում և արդյունքների հրապարակային քննարկում: Որպես արդյունավետության ցուցանիշ, բացի արտադրական նվաճումներից, պետք է հաշվի առնել նաև խմբում աշխատողների հոսունությունը, նրանց աշխատավարձի աճը, կամքի դրական բարձրացումը:

8. Կազմակերպության անձնակազմի կառավարման բաժինը (մենեգերը), խմբերի ղեկավարների և կազմակերպության այլ բաժինների ղեկավարների հետ համատեղ, համաձայն նախօրոք ընդունված ժամանակացույցի, պետք է կազմակերպի խմբերում աշխատողների ուսուցում, վերապատրաստում լայնորեն օգտագործելով ուսուցման ժամանակակից մեթոդները (ինտերվակտիվ ուսուցում, խաղերի տեսություն, քուչինգ և այլն): Միաժամանակ անհրաժեշտ է նախատեսված պլանի համաձայն անընդհատ անցկացնել ատեսանակիրում, որի արդյունքում բացահայտված ղեկացիայի փաստը պետք է դառնա ղեկավար անձնակազմի առանձին հետազոտման առարկա:

9. Եվ վերջապես, խմբի վարքագիր վրա հրականացվող փոփոխությունների կանխա-

տեսման նպատակով անհրաժեշտության դեպքում առաջարկում ենք կիրառել փորձնական՝ «այլուտային» նախագծեր, որոնք կարելի է իրագործել կամավորների փոքրաքանակ խմբի վրա, ինչը հնարավորություն կտա ոչ մեծ ծախսերով բացահայտել փոփոխությունների բոլոր դրական և բացասական կողմերը, հնարավորություններն ու դիմերը:

Այսպիսով, յուրաքանչյուր կազմակերպության անձնակազմի կառավարման համակարգության ղեկանության վարքագիր դրսևորումներից խուսափելու նպատակով խմբերում պետք է ախտորոշել դրանց հետևանքները և, համաձայն մեր ենթակայացրած առաջարկների, իրականացնել կառավարման գործընթաց: Ընդ որում՝ այդ գործընթացը պետք է լինի անընդհատ՝ անձնակազմի կառավարման բոլոր՝ պլանավորման, անձնակազմի ընտրության, հավաքագրման, ուսուցման, գնահատման, առաջնադաշտման փուլերում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Громов И. А., Мацкевич И. А., Семенов В. А., Западная социология. СПб., ООО «Издательство ДН», 2003, с. 532.
2. В. А. Спивак, Организационное поведение и управление персоналом. СПб: Питер, 2000., с. 416.
3. Организационное поведение: Учебник для вузов / Под ред. Г.Р. Ламфулина, О.Н. Громовоу. СПб: Изд. Питер, 2006, с. 413.
4. Спивак В., Корпоративная культура. СПб: Питер, 2001, с. 352.
5. Фетискин Н. П., Козлов В. В., Мануилов Г. М., Социально-психологическая диагностика развития личности и малых групп. М., 2002, с 200.
6. «Вокруг Света», Журнал, N8 "Вообрази", ст. Д.ж. Лерера, М., 2012.
7. В. А. Спивак, Организационное поведение и управление персоналом. СПб: Питер, 2000, с. 416.
8. Սովորյան Յու., Մենեղմներ, Եր., «Տնտեսագետ», 2002, 560 էջ.
9. Robbins X., Финли М., Почему не работают команды? Что идет не так, и как это исправить /Пер. с англ. М., «Добрая книга», 2005, с. 304.

THE FORMATION AND MANAGEMENT OF GROUP DEVIATION IN ORGANIZATION

NARINE KROYAN

Summary

It is very important to take account the impact of deviant behavior in the process of personnel management, since it can lead to the adoption and implementation of the infidels and non effective solutions. This article analyzes the features of formation and diagnostics group deviation and submits management approaches to deviant group behavior.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՒՄ
ԱԳՐԱՐԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ԵՎ ԼՐԱ ԱՌԱՆՁԻՆ
ԲԱՂԱՌԻՉՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ***

Մարիետա ԱՆԱՀՅԱՆ

ՎՊՄԻ տնտեսագիտության տեսության ամբիոնի դասախոս



բացես՝

- տնտեսական ազատությունը. Ենթադրում է, որ հասարակության յուրաքանչյուր անդամ, ծեռնարկություն, ֆինանսնություն է որոշում ինչ և ինչպես պրոտարել, որտեղ իրացնել, ինչ նպատակներով օգտագործել ստացված եկանութենքը և ինչպես լուծել այլ արտադրատնտեսական խնդիրներ,

- սեփականության իրավունք. այդ պայմաններուն ֆիզիկական և իրավաբանական անձինք իրենց սեփականության նկատմամբ ունեն տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունք,

- մրցակցություն. սա նմանատիպ գործունեություն իրականացնող մրցակից սուբյեկտների միջև մրցակցության առկայություն է, որը սահմանափակվում է մենաշնորհային դրսուրությունը և խթանում տնտեսության զարգացումը,

- գնագոյացման ազատություն, որի դեպքում արտադրանքի, աշխատանքների, ծառայությունների գները ծնավորվում են վաճառողի և գնորդի միջև համաձայնության գալու պայմաններուն,

- ինքնաֆինանսավորում, որի դեպքում շուկայական հարաբերությունների յուրաքանչյուր սուբյեկտ ինքը պետք է փոխառություն իր ֆինանսական ծախսերը՝ ապահովելով իր հետագա գոյատևումը և զարգացումը.

* Ներկայացվել է 22.11.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

Sտեսագիտությունը և համաշխարհային փորձը ցույց են տալիս, որ շուկայի կայացման և դրա լիարժեք գործունեության համար անհրաժեշտ են որոշակի նախապայմաններ, մասնավորապես՝ առանձին համակարգեր, մարդերին գաղտնական կազմակերպություններ, ֆոնդային և արժութային բորսաներ, զանազան ֆինանսական ինստիտուտներ և այլն,

- գործոն իրավական համակարգ, որը ենթադրում է ոչ միայն օրենսդրական դաշտի ծևազորում, այլև դատադիրավական գործառույթներ իրականացնող կառույցների առկայությունը,

- նպատակվոր ֆիսկալ քաղաքականություն, եթե ֆիզիկական և իրավաբանական անձանց եկամուտների մի մասը հարկերի, տուրքերի և այլ գանձումների ծնևով ուղղորդվում է պետական բյուջեի և նպատակային հիմնադրամների միջոցների կազմավորմանը,

- պետական աջակցության քաղաքականություն, որը երկրի ժողովրդավարացման և հասարակական ու տնտեսական համակարգի զարգացածության կարևոր բնութագրի մեջն է: Այն առավել ևս խիստ կարևոր է շուկայական տնտեսության անցման շրջանում գտնվող երկրներում:

Ուղամավարական առումով էական նախապայման է նաև սեփականության և տնտեսաձևերի բազմազանության, շուկայական ուղղվածության պահպանման երաշխիքների առկայությունը:

Շուկայի գործունեությունն իրագործվում է որոշակի տարրերի առկայության շնորհիվ, որոնք ծնավորում են ամբողջ շուկայի մեխանիզմները: Դրանցից կարևորագույններն են պահանջարկը, առաջարկը, մրցակցությունը և գների համակարգը: Այս տարրերից յուրաքանչյուրը շուկայում ունի իր առանձնահատուկ ազդեցությունները, սական դրանք գործում են փոխշաղկապայման և պայմանավորված են մեկը մյուսով:

Նման փոխշաղկապայմանության տրամաբար-

նական հիմքը հետևյալն է. առավելագույն շահույթ ստանալու ձգողումը ստիպում է արտադրողներին իրենց ռեսուրսներն ուղղորդել այն ապրանքների արտադրությանը և ծառայությունների մատուցմանը, որոնց կարիքն ունի հասարակությունը և պատրաստ է վճարել դրա դիմաց:

Պահանջարկը և առաջարկը շուկայում համեմատվելով (հարաբերվելով)՝ որոշում են գնվող ու վաճառվող ապրանքների քանակը և ձևավորում գների համակարգը [1]:

Գները տոկոսադրույթի հետ միասին ժամանակ առ ժամանակ սպառողներին և արտադրողներին տեղեկացնում են շուկայում տիրող իրավիճակի մասին:

Այլ կերպ ասած՝ գներն անուղղակիրուեն տեղեկացնում են տեխնոլոգիաների, դրա հետ կապված ծախսերի և ընդհանրապես արտադրությունում տեղի ունեցող փոփոխությունների մասին:

Գների միջոցով, մրցակցության մեխանիզմի օգնությամբ միագումարվում և հավասարակշռվում են պահով թելադրված շատ տնտեսական որոշումներ:

Մրցակցության օգնությամբ շուկան գտում, մաքրում է հասարակական արտադրությունը տնտեսապես անկայուն, անկենսունակ տնտեսական միավորներից:

Մրցակցությունն արտադրողներին թելադրում է բավարարել սպառողների պահանջները, խթանել գների իջեցումը, արտադրանքի որակի բարձրացումը և տեսականու նորացումը՝ դրանով նպաստելով գիտատեխնիկական առաջընթացի ձեռքբերումների ներդրմանը և սահմանափակ ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործմանը:

Շուկան իրենից ներկայացնում է որոշակի ենթակառուցվածքային հիմնարկությունների, կազմակերպությունների պետական և առևտրական ձեռնարկությունների համակարգ, որոնք կոչված են ապահովելու շուկայի բնական և արդյունավետ գործունեություններ: Տարեր շուկաներ ունեն գործունեությանը բնորոշ ենթակառուցվածքներ:

Ապրանքային շուկայի բաղադրիչներն են մեծածախ և մանրածախ առևտուրը, որոնք ապահովում են ապրանքների պահպանումը և պայմաններ ստեղծում դրանց առք ու վաճառքի համար: Ապրանքային շուկայի բաղկացուցիչ մասերն են նաև զանազան աճուրդները, տոնավաճառները, առևտրական և միջնորդական կենտրոնները, ապրանքային բորսաները և այլն:

Մարդկության պատմության ընթացքում ձևավորված շուկաները ընդհանուր օրինաչափություններից, սկզբունքներից և նախապայմաններից բացի՝ ունեն տվյալ շուկաներին հատուկ որոշակի յուրօրինակություններ, որոնք թելադրվում են տվյալ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով, բնակչության ստվորություններով և այլ առանձնահատկություններով:

Իրականում շուկայի ձևավորումը, բացի նախադրյալների առկայությունից, պահանջում է գործնականում դրսուրվող տարրեր մեխանիզմների կենսունակության ուսումնափորություն և առողջ միտումների խթանման բաղաքանության իրականացում:

Դայաստանի Հանրապետությունում վերջին 5 տարիներին միջին հաշվով ապրանքային տեսք է ստանում գյուղացիական տնտեսություններում արտադրված արտադրանքի 30-35%-ը (արտադրանքի մի մասն օգտագործվում է ներտնտեսային կարիքների համար), որը բավականին ցածր ցուցանիշ է: Դրա հիմնական պատճառը գյուղմթերքների շուկայի անկատարությունն է: Գյուղատնտեսական հումքի (պտու, խաղող, հացահատիկ, ծխախոտ, բանջարեղեն, կաթ և այլն) հիմնական գնորդները վերամշակող ձեռնարկություններն են: Գյուղմթերքների իրացման ծավալների ավելացման հիմնական կանխորշիչներն են ներքին շուկայի մրցունակությունը, արտահանման ծավալների մեծացումը: Ներքին շուկաներում գյուղմթերքների իրացման ծավալները կախված են բնակչության գնողունակությունից, որը ՀՀ-ում բավականին ցածր է: Ներքին շուկաներում գյուղմթերքների իրացմանը նպաստում են հավաքող միջորդները, սեղոնային տոնավաճառները, «քերքի տոն» անվան տակ կազմակերպվող ցուցահանդես վաճառքները: Սակայն դժվար չէ նկատել, որ ներկայիս կարգավիճակով կազմակերպահովավական որևէ կարգավիճակ չունեցող միջնորդները խոչընդոտում են շուկայում գների բնական ձևավորմանը, սահմանափակում արտադրողների կողմից պարենամթերքների ազատ իրացումը և նպաստում ստվերային շրջանառության ավելացմանը [2]:

Ուստիմնասիրությունները ցույց են տվել, որ ցորենի, խաղողի, պտղի, կարտոֆիլի, բանջարեղենի, միկ և կաթի ապրանքայինության¹ մակարդակը դեռևս խիստ ցածր է, նվազ են իրացման, պահպանման, փաթեթավորման հնարավորությունները, որոնք դժվարեցնում են ներքին, առավել և արտաքին շուկայահանումը:

Ներքին շուկաներում գյուղներքների իրացման ծավալների մասին ինանալու համար նշենք մի քանի տվյալներ (տես աղյուսակ):

Բորսայական առևտուրը պահանջում է ապրանքների բարձր աստիճանի ստանդարտավորում: ՀՀ-ում ապրանքային բորսայի հիմնադր-

| R/h | Ապրանքների անվանումը | Ապրանքների մասնություն - ընդունակություն - % | Ապրանքների մասնություն | Ապրանքների մասնություն | Ապրանքների մասնություն | Օգնագործություն | Դաշտավայրի մասնություն | Տարածություն | Տարածություն | Տարածություն | Տարածություն |
|-----|----------------------|--|------------------------|------------------------|------------------------|-----------------|------------------------|--------------|--------------|---------------|--------------|
| 1 | Ցորեն | 26.39 | 241.6 | 27.08 | 31.09 | 124.38 | 5.58 | 150.4 | 53.47 | 9976 20% | |
| 2 | Կարտոֆիլ | 33.2 | 414.1 | 92.59 | 38.30 | 150.32 | 6.63 | - | 126.26 | 6541 39.7% | |
| 3 | Բանջարեղեն | 65.8 | 456.0 | 243.5 | 49.93 | 135.02 | 6.61 | - | 20.98 | 978 36.7% | |
| 4. | Խաղող | 65.4 | 116.5 | 69.7 | 5.44 | 38.05 | 1.07 | - | 2.23 | 1984 35.2% | |
| 5 | Միս | 77.7 | 86.8 | 57.85 | 7.61 | 17.8 | 1.94 | - | 1.61 | 4328 12.4% | |
| 6 | Կաթ | 34.9 | 465.3 | 108.79 | 48.21 | 260.5 | 5.49 | - | 42.34 | 2590 23.1% | |
| 7 | Պտուղ | 67.3 | 101.9 | 50.28 | 16.03 | 27.32 | 2.27 | 10.248 | 6.00 | 2059 35.3% | |
| | | | Հազ. տոն. | Հազ. տոն. | Հազ. տոն. | Հազ. տոն. | Հազ. տոն. | Հազ. տոն. | Հազ. տոն. | Մըն դրամ | |

Ծանոթություն. Տվյալները վերցված են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունից:

Աշխարհի համարյա բույրը երկրներում գյուղներքների մեծաքանակ իրացումը կատարվում է ուղղակի ձևով՝ քաղաքային շուկաներում, մանրածախ առևտորի գանցում կամ «հավաքիր ինքոք» համակարգով²: Ուղղակի վաճառքում գյուղացիական տնտեսությունն իր վրա է վերցնում նաև վաճառքի գործառույթները: Վերջինն եթե լրացուցիչ վարձու աշխատութ չի ներգրավում, բացասարա է անդրադառնում արտադրության վրա: Ուղղակի վաճառքի դրական կողմերը մասնավորապես արտահայտվում են հետևյալում՝ ըստ հասունացման աստիճանի բերքի փոքրաքանակ, միջնորդական ծառայությունից կախվածության նվազում և հասույթի ավելացում:

Հայաստանում ուղղակի վաճառքը ներկայում գյուղ արտադրանքի իրացման հիմնական ձևերից մեկն է:

Զարգացած շուկայական տնտեսության պայմաններում ձևավորվում են գյուղարտադրանքի իրացման այնպիսի կազմակերպված ինստիտուտներ, ինչպիսիք են՝ ապրանքային բորսաները, մեծածախ շուկաները և աճուրդի կենտ-

ման փորձ արվեց 1993-94 թթ.: Սակայն շուրջ երկու տարվա աշխատանքը ցույց տվեց, որ ՀՀ-ում դեռևս չկան ապրանքային բորսայի բնական գործունեության համար անհրաժեշտ նախադրյալներ:

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական մեծածախ շուկայի ստեղծման չհաջողված փորձ կատարվեց, իսկ աճուրդի կենտրոնների ձևավորման և որոշակի գործարքների իրականացման փորձ ՀՀ-ում արդեն կա:

Ազգային ոլորտում պարբերաբար աճուրդներ են կազմակերպվում ապրանքային վարկով կամ մարդասիրական օգնությամբ ստացված ցորենի, պարարտանյութերի և գյուղատնտեսական տեխնիկայի վաճառքի համար: Ընդունված են աճուրդի երկու հիմնական և երեք անանցյալ ձևեր:

1. Անգիտական աճուրդը, որի դեպքում գնորդը գնման իրավունքի ձեռք բերման նպատակով բարձրացնում է իր կողմից առաջարկվող գինը:

2. Հոլանդական աճուրդը, որի դեպքում սակարկությունը կատարվում է նախորդին հակառակ կարգով:

Այս դեպքում սակարկողը նախ հայտարա-

րում է վաճառքի ենթադրվող գնից բարձր գին և ընդունում գնի իշեցման առաջարկները՝ մինչև դրանց սպառվելը: Վաճառքը կատարվում է հայտարարված գնին մոտ առաջարկված գնով: (Կանադայի և Եվրոպայի ազգարային շուկաներում):

Աճուրդի ածանցյալ ձևերն են երկակի աճուրդը, միաժամանակյա մրցակցությամբ աճուրդը և փակ աճուրդը:

ա) Երկակի աճուրդի կանոնակարգի համաձայն՝ յուրաքանչյուրը հանդես է գալիս սեփական սակարգողի միջոցով, այսինքն՝ շուկայի մի կողմում ձգտում են բարձրացնել, իսկ մյուս կողմում՝ իշեցնել գները: Այս տիպի աճուրդի դեպքում ձևակորպում են ավելի արդյունավետ գներ:

բ) Միաժամանակյա մրցակցությամբ (ճապոնական) աճուրդի կանոնակարգով սակարգողի ազդանշանով գնորդները միաժամանակ հայտարարում են յուրաքանչյուրի կողմից ներկայացվող գինը: Ամենաբարձր գին առաջարկողն իրավունք է ձեռք բերում գնել ապրանքի մեկ խմբարանակ (լոտ): Այս ծնն արդյունավետության տեսակետից մոտ է հոլանդականին:

գ) Փակ աճուրդը ենթադրում է գննան հայտերի փակ (ծրարավորված) ներկայացում: Աճուրդի այս ձևը խիստ հազվադեպ է օգտագործվում ազգարային սակարգություններում:

Գյուղատնտեսական արտադրանքների իրացումը կատարվում է նաև մասնավոր մեծածախ միջնորդների, վերամշակող և առևտորային ֆիրմաների վրա: Միջնորդները կարող են լինել գործակալներ և վերավաճառողներ: Գործակալներն անմիջականորեն ապրանքի գնորդ չեն: Նրանց խնդիրն է ի մի բերել գնորդներին և վաճառողներին, իսկ վերավաճառողներն անմիջականորեն դաշնում են ապրանքի սեփականատերեր և հետագայում այն իրացնում են ինքնուրույն:

Գյուղարտադրանքի գգայի մասը գնվում է վերամշակող կազմակերպությունների կողմից: Այս դեպքում վաճառող-գնորդ հարաբերություններն ավելի երկարաժամկետ և կայուն բնույթ են կրում:

Ընդհանուր պարենային սպառման ծավալում նեծանում է պահաժոյացված արտադրանքների, կիսաֆարբիկատների տեսակարար կշիռը:

Պարենային ապրանքների իրացնան համակարգում ուրույն տեղ ունի մանրածախ առևտուրը, որն իր դերը պահպանում է ինչպես զարգացած, այնպես է զարգացող երկններում: Մասնավորապես ինքնասպասարկման համակարգի ներդրումը հանգեցրեց սուպերմարկետների և առևտորային կենտրոնների աննախադեպ տարածման:

Հայաստանի Հանրապետությունում գնալով մեծանում է հասարակական սննդի ցանցում իրացվող սննդամբերների տեսակարար կշիռը:

¹ Ապրանքայինության մեջ ներառվում է վաճառքը, ապրանքափոխանակությունը, ծառայությունների դիմաց բնամքերով վճարումը:

² «Հավաքիր ինքոր» համակարգը ֆերմերների կողմից իրենց արտադրանքի իրացնան և ագրոտուրիզմի զարգացման ձև է: Հիմնականում տարածում է տաշել ԱՄՆ-ի քաղաքամերձ ֆերմերային տնտեսություններում և ռազմուներում (ազգականերում): Էռլերյուն այն է, որ բերքի հասունացման շրջանում քաղաքային բնակիչները, հիմնականում ընտանիքով, հանգստյան օրերն անցկացնում են ֆերմայում, մասնակցում բերքահավաքին և ցածր գներով գնում գյուղատնտեսական մթերք:

ԳՐԱԿԱՌՈՒԹՅՈՒՆ

1. **Ս. Ավետիսյան**, Հայաստանի Հանրապետության ագրարային շուկայի ծևակորման հիմնախնդիրները անցումային տնտեսության պայմաններում, Եր., 2002:
2. **Ս. Ավետիսյան**, **Մ. Իգմիրյան**, Ֆյուչերային շուկաների տնտեսական ֆունկցիաները Զիկագոյի ապրանքային բրոսային օրինակով: Գիտական աշխատանքների ժողովածու, թիվ 2, Եջմածին, 1997:
3. **Ս. Միքայելյան**, Շուկայի կազմակերպման առանձնահատկություններն անցման շրջանում. ՏԳԻ, ժողովածու, գիրք 1, Եր., 1997:
4. **Ս. Ս. Ավետիսյան**, Եվրոպմիության երկների ագրարային շուկայի կազմակերպման փորձը և դրա կիրառման հնարավորությունները Հայաստանում, «Ազգություն», 1998, 1-2, էջ 5-12:

AGRARIAN MARKET DEVELOPMENT PRECONDITIONS AND THE MARKET SEPARATE COMPONENTS FORMATION IN THE RA

MARIETA ANANYAN

Summary

For the complete activity of the agrarian market, as the economics theory and international experience indicate, we need some preconditions with the help of which the agrarian market separate components and the market itself may be formed. The article touches upon some theoretical preconditions related to the agrarian market formation.

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊՐԱՆՔԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ԱՆՅՈՒԺԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒԽՆԵՐԸ*

Մարիետա ԱՆԱՅՅԱՆ

ՎՊՄԻ տնտեսագիտության տեսության ամբիոնի դասախոս

Րանրապետության ընդհանուր սոցիալ-տնտեսական իրավիճակով, ագրոպարտենային ղլորտի ենթակառուցվածքների անբավարար գործունեությամբ և մի շարք գործոններով պայմանավորված՝ զյուղատնտեսության առջև ներկայում ծառացած կարևոր հիմնախնդիրներից է զյուղացիական տնտեսությունների ապահնագույթյան մակարդակի բարձրացումը:

Հանրապետության բնակչության ցածր վճարուակությամբ և այլ հանգամանքներով պայմանավորված՝ սմնայանքների ներքին սպառման շուկան հազեցած է, և նմանի կանոնադրության շուկայում զյուղատնտեսական մթերքների իրացման բնագավառում: Դրա հետ մեկտեղ՝ անբավարար են զյուղմթերքների արտահանման ծավալները:

Գյուղատնտեսական մթերքների գգալի մասը սպառվում է տնտեսություններում, ինչպես արտադրական կարիքների (սերմացու, անսանակեր), այնպես էլ անձնական օգտագործման համար: Կարելի է ասել, որ զյուղացիական տնտեսությունների մի մասը վերածվել է բնամթերային տնտեսությունների: Այսպես, օրինակ, հացահատիկային մշակարույսերի 5,48%, կարտոֆիլի 36,3%-ը, կարնամթերքի 55,98%-ը, ձկի 60,34%-ը, բրդի 43,13%-ը օգտագործվում է զյուղացիական տնտեսություններում:

Այսպիսի իրավիճակում զյուղատնտեսությամբ գրավող տնտեսվարող սուբյեկտները հնարակորություն չեն ունենում ապահովելու բնականն վերարտադրություն, տեխնիկական վերացնում և անհրաժեշտ արդյունավետություն:

Կախված զյուղատնտեսական մթերքների արտադրության կառուցվածքից և իրացման պայմաններից՝ ապահնագույթյան մակարդակը մարգերում արտահայտվում է տարբեր կերպ: Օրինակ՝ հացահատիկային մշակաբույսերի ապ-

րանքայնությունն առավել բարձր է Շիրակի և Արմավիրի մարզերում: Պտղի ապրանքայնության մակարդակը բարձր է Կրազմածոտնի, Արմավիրի, Սրբարատի մարզերում: Անասնապահական մթերքներից կարի և կարնամթերքի ապրանքայնությունները համեմատաբար բարձր է Կոտայքի, Կրազմածոտնի և Գեղարքունիքի մարզերում:

Գյուղատնտեսական արտադրամքի ապրանքայնության ցածր մակարդակը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները.

- զյուղմթերքների և դրանց վերամշակումից ստացված արտադրանքի իրացման համակարգի անկատարություն,

- մթերքների ապրանքային տեսքի, փաթեթակրոնան և տարավիրնամա անբավարար վիճակ,

- մեծածախ շուկաների համակարգի բացակայություն,

- գնող-պահապանող-իրացմող (արտահանող) շղթայում կազմակերպված միջնորդական առևտուական կազմակերպությունների բացակայություն,

- հարևան երկրների կողմից արտաքին շուկաներին կապող հաղորդակցության ուղիների շրջափակում,

- արտաքին շուկայում մարկեթինգային միջոցառումների իրականացման անբավարար կազմակերպում,

- վերամշակող ընկերությունների արտադրական հզորությունների օգտագործման ցածր մակարդակ,

- վերամշակող կարողությունների տեխնիկական հագեցվածության անբավարար վիճակ,

- սմնայանքների նկատմամբ հանրապետության բնակչության գնողունակության ցածր մակարդակ,

- միջազգային չափանիշներին համապատասխանող սմնայանքների որակի երաշխավոր-

* Ներկայացվել է 22.11.2013 թ., ընդունվել է տպագրության 20.12.2013 թ.:

ման համակարգի անկատարություն,

- սննդամբերի իրացման, արտահանման գործընթացը խթանող իրավական դաշտի անկատարություն,
- տրանսպորտային փոխադրումների թանկություն՝ կապված շղափակման հետ:

Գյուղատնտեսական մթերքների ապրանքային գործընթացը մակարդակի բարձրացնանը կնպաստեն հետևյալ միջոցառումների իրականացումը.

- Ներկայումս կարևոր դեր է ստացել գյուղատնտեսական մթերքների մեծածախ առևտրական գործունեությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների (միջնորդների) ձևավորման գործընթացը: Սիջնորդ կազմակերպությունները, հանդիսանալով արտադրողի և սպառողի միջև միջամյալ օդակ, կիրականացնեն գյուղացիներից գյուղատնտեսական ապրանքների անմիջական գնումներ և կանոնակարգումներ կկատարեն ապրանքաբաշխ համակարգում: Դրանք կվերացնեն գյուղատնտեսության և մաճաքածախ առևտրի շղթայում ապրանքների շարժի առկա խզումը, միաժամանակ գյուղացուն կազատեն մթերքների իրացման նրան ոչ բնորոշ հոգսերից:

- Հանրապետությունում գյուղատնտեսական մթերքների առևտրի ընդհանուր մակարդակի բարձրացնանը կնպաստի մեծածախ շուկաների համակարգի ձևավորումը: Այս առումով սկզբնական փուլում հարկ կլիմի հիմնել կենտրոնական մեծածախ շուկա իր տարածաշրջանյին բաժանմունքներով: Մեծածախ շուկաների համակարգի ստեղծումը կնպաստի փաթեթավորման, որակի վերահսկման, պահպանման, ներքին և արտաքին շուկաներուն իրացման գործընթացի բարեկավմանը և ընդհանուր առնամք՝ ներկայիս շուկայական հարաբերությունների կատարելագործմանը:

- Ժամանակավոր շուկաների (տոնավաճառների) կազմակերպումը որոշակի պարբերական ժամանակահատվածներում, օրինակ՝ շաբաթը մեկ կամ մի քամի օր, որոշակի տևողությամբ, տեղական իշխանության մարմինների կղմից հատկացված վայրերում: Նման տոնավաճառների կազմակերպումը հիմնականում կարող է խթանել հանրապետության առանձին համայնքների գյուղատնտեսական մթերքներն իրացնելու գործին:

- Գյուղատնտեսական մթերքների մեծածախ առևտրական գործունեությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների ձևավորումը խթանող դեր կլինենա նաև գյուղմեթերքների և վերամշակված արտադրատնեսական մթերքների արտահանման գործընթացում, եթե դրանք այդ նպատակով ծեռք

բերված ապրանքների համար, համաձայն օրենսդրությանը, ազատվեն անուղղակի հարկերի վճարումից: Այսինքն՝ ապահովվի օրենքի կատարումը:

- Գյուղապարենային համակարգում մթերքների իրացման հետագա խթանումը կապված է նաև համապատասխան մասնագետների առկայության հետ: Այդ նպատակով, հիմնական ուսուցման հետ մեկտեղ, անհրաժեշտ է կադրերի վերապատրաստման ծրագրերում ընդգրկել մարկեթինգի, մենեջմենթի հարցերը:
- Գյուղատնտեսական մթերքների և դրանց վերամշակումից ստացված արտադրատնեսակների արտահանմանը կնպաստեն նաև ազրուապերենային ոլորտում կոռուպտացիայի ձևավորումը, ինչպես նաև՝ փոքր և միջին բիզնեսի գարգացումը:

• Ճաշվի առնելով, որ խաղողի հիմնական սպառողը գինեգործությունն է, ներքին շուկայի անհամենա փոքր ծավալների պայմաններում, խաղողի վերամշակման ձեռնարկությունների կողմից առաջնահերթ լուծվելիք խնդիրներն են՝ միջազգային մարկեթինգի ողջ համալիրի իրականացումը, արտաքին շուկայում ամրապնդումն ու առաջնադաշտումը, գինու և կոնյակի արտահանումների ավելացումը:

- Պտղաբուծություն և բանջարաբուծության գարգացման կարևոր ուղղություններից մեկը պետք է դարձնա քարմ մրգերի, հատկապես ծիրանի և բանջարենի (լոլիկ, սմբուկ, կաղամբ, վաղահաս կարտոֆիլ) արտահանումների կազմակերպմանն ուղղված պետական խրախուսող միջոցառումների իրականացումը:

• Անհրաժեշտ է առավել նպաստավոր պայմաններ ստեղծել արտասահմանյան ներդրումների ներգրավման համար, որի արդյունքում հնարավլորություն կը նենառվի ծեռք բերել նոր տեխնոլոգիաներ, վերաշնել արտադրությունը, բարեկավել փաթեթավորումը և ապրանքի արտաքին տեսքը, որը կնպաստի ապրանքի մրցունակության բարձրացմանը:

- Գյուղատնտեսական արտադրանքի իրացման բնագավառի առջև ծառացած խնդիրների լուծմանը կնպաստեն վերամշակող ոլորտի վարկավորման ծավալների ընդլայնումը և վարկավորման մեխանիզմների կատարելագործումը, արտահանման համար վարկերի տրամադրումը:

• Պարենային մթերքների արտահանման և ներմուծման խթանման համար առաջարկվում է ստեղծել հանրապետության ամբողջ տարածքն ընդգրկող տեղեկատվական կենտրոն, որի միջոցով կապահովվի ուղղակի և հետադարձ կապը

տեղական արտադրողների և արտերկրի սպառողների միջև։ Նշանակած կառույցը կտրամադրի թիզնեսի զարգացման համար անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը՝ ապրանքների բնութագիրը, գները, որակի և սերտիֆիկացման պահանջները, ներմուծման և արտահանման ռեժիմները և այլն։

- Գյուղատնտեսական մթերքների իրացմանը կնպաստի նաև որակի երաշխավորության միջազգային չափանիշների պահպանման համար չափանիշների՝ որպես ազգային ստանդարտի ընդունումը։

- Գյուղատնտեսական մթերքների իրացմանը կիրանի արտահանման շուկայավարման ծախսերի համար հարկային արտոնությունների տրամադրումը։ Ներկայումս արտահանման շուկայավարման որոշ ծախսեր չեն հանդիւմ հարկվող շահույթից։ Արտահանման շուկայավարումը խրախուսելու նպատակով անհրաժեշտ է ընդլայնել հարկային արտոնությունները այդ գործունեության իրականացման ծախսերի մասով։

- Գյուղատնտեսական մթերքների մթերման իրացման (արտահանման) գործընթացում անհրաժեշտ է կանխել հնարավոր չարաշահումները, վարչարարական խոչընդոտները բացահայտել արևա փաստերը։

- Անհրաժեշտ է ապահովել հաճարագետության տնտեսվարող սուբյեկտների մասնակցությունը տարբեր երկրներում կազմակերպվող ցուցահանդեսներին։

Ազրարային շուկայի ձևավորման և ապրանքային արտադրացման կարևոր պայմաններից մեկը տարածքային, տարածաշրջանային, տնտեսական և միջտնտեսական մասնագիտացման և կոռպերացման խորացումն է։ Դրա հիմնան վրա զարգանում են տարածաշրջանային և միջտարածաշրջանային կապերը, ագրոպարենային համակարգի ապրանք արտադրողների համագործակցությունը, իրագործվում է աշխատանքի բաժանման բարդ գործընթացը, արտադրությունը մասնատվում է ըստ տեխնոլոգիական փուլերի։ Այս բոլորը նպաստում են արտադրության մեջ ներդնելու գիտության նվաճումը։

Ներն ու բարձր արտադրողական տեխնիկան [5, էջ 36-42]։

Ներկայումս, երբ գյուղատնտեսական ապրանք արտադրողը պետք է աշխատի շուկայի համար, մասնագիտացումը, կոռպերացիան և ինտեգրացումը հանդես են գալիս նոր բռվանդակությամբ, նոր պահանջներով։ Այսինքն՝ շուկայական հարաբերությունների պայմաններում տարածաշրջանները, գոտիները, ֆերմերային և գյուղացիական տնտեսություններն արտադրում են հատկապես այն գյուղատնտեսական մթերքները և հումքը, որը շուկայում ունի սպառնան լայն հնարավորություններ։ Ընդհանրապես կոռպերացիայի վրա հիմնված փոխհարաբերությունները լավագույն արդյունք են ապահովում հատկապես շուկայական էկոնոմիկայի պայմաններում։

Բոլոր դեպքերում կոռպերացիայի ձևավորման նախաձեռնությունը պետք է սկսվի անմիջականորեն գյուղացիական տնտեսություններից՝ խստորեն պահպանելով կամավորության սկզբունքները, իսկ պետության դերը նրանում է, որ իր հնարավորություններով (նյութատեխնիկական, ֆինանսավարկային, մասնագիտախորհրդատվական և այլն) նպաստի այդ գործընթացին [1]։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ավետիսյան, Յայաստակի Յանրապետության ագրարային շուկայի ձևավորման հիմնախնդիրները և անցումային տնտեսության պայմաններում:**
2. **Ա. Գ. Ղազարյան, Ա. Յ. Մնացականյան, Յայաստակի գյուղատնտեսության հեռանկարային զարգացումը կոռպերացիայի հիմնան վրա, Եր., 2000։**
3. **Ա. Մարկոսյան, Պետություն և շուկա, Գիր Առաջին, Եր., «Տիգրան Սեծ», 2000։**
4. **Ա. Գ. Ղազարյան, Վ. Գ. Գրիգորյան, Կոռպերացիան և գյուղատնտեսական արտադրության զարգացումը, «Ազրոգիտություն», 1998, 3-4, էջ 119-122։**
5. **Ա. Ղազարյան, Ե. Ղազարյան, Տնտեսական քաղաքականությունը և գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնարդույթները, ՏՀԻ, Ժողովածու, գիր Երևանորդ, Եր., 1997։**
6. **Ա. Ա. Գևորգյան, Գյուղատնտեսական կոռպերացիա։ Անցյալը և ներկան, Եր., «Տնտեսագետ», 2002։**

THE BUSINESS RALE INCREASE IMPORTANCE AND WAYS IN RURAL FARMS

MARIETA ANANYAN

Summary

One of the most problematic issues of the agriculture in the RA is the business role of the rural farms in the country, which is conditioned by the country, which is conditioned by the republic socioeconomic state, the substructures incomplete activity of the agrarian sphere as well as by several factors which have been studied in the present article to a greater extent.

ԱՅՍ ԴԱՍԱՐՈՒՄ

ՄԱՍԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|----|
| ՎԱԶԻԿ ԲՐՈՒՏՅԱՆ. Իրավական կրթության հիմնախնդիրները և ժամանակակից նիտումները Հայաստանի Հանրապետությունում | 4 |
| ՎԱԶԻԿ ԲՐՈՒՏՅԱՆ. Իրավաբանական կրթության համակարգում ուսանողների հումանիտար և մասնագիտական պատրաստվածության ինտեգրացման գործընթացի կազմակերպումը..... | 10 |
| ՄԻՆԱՍ ՍԱՅԱԿՅԱՆ. Սոցիալական հարմարեցումը և դեռահասների կենսունակության ձևավորումը որպես ժամանակակից մանկավարժության մեջ հիմնահարց..... | 14 |
| ՄԻՆԱՍ ՍԱՅԱԿՅԱՆ. Մանկավարժի նոր դերը. գաղափարներ, մոդելներ, դիրքորոշումներ | 18 |
| ԱՍՈՒԾ ԵՂՋՅԱՆ. Դպրոց-բուհ համագործակցությունը որպես շրջանավարտների՝ աշխատաշուր- կայում կողմնորոշվելու և իրենց հակումներին ու ընդունակություններին համապատասխան մասնագիտական կրթություն ստանալու հնարավորություն | 22 |
| НИНА ԿԱՐԱՊԵՏՅԱՆ. Применение различных видов контроля учебной деятельности студентов технических вузов | 27 |
| ԷԼԼԱ ԿԱՖԵՅԱՆ. Проблемы семьи, воспитывающие ребенка с отклонениями психофизического развития | 30 |
| ԳԱՅԱՆԵ ԵԳԱՆՅԱՆ, ԱՐՈՒՍՅԱԿ ՃՈՎՃԱՆՆԻՍՅԱՆ. Մանկաբանության ծագումն ու զարգացումը մանկավարժական դիագնոստիկայի տիրություն | 34 |
| ՇԱԿՈՐ ԶԻԼԻՆԻՍՅԱՆ. Գեղարվեստականի ընկալման և հանդիսատեսի դաստիարակության ժամանակակից խնդիրները | 40 |
| ՄԱՐԻԱՄ ԴԱԿՈԲՅԱՆ. Ընտանեկան պայմաններում մտավոր խնդիրներ ունեցող երեխաներին վերականգնող-զարգացնող օգնության կազմակերպման տեսական մոտեցումները և գործնական ուղիները | 44 |
| ԳԻՒԳՈՐ ՄԿՐՏՅԱՆ. Ուսուցման մերուների ընտրության նշանակությունն ավանդական գեղարվեստական արհեստագործության ուսուցման գործնքացում | 48 |
| ՄՈՒՇԵՐ ՄԱՐԳԱՅԱՆ. Ուսումնական նատյուրմորտի հորինվածքային կազմակերպման սկզբունքները | 52 |
| ԱԼԻՆԱ ՄԱՍԻՒԿՅԱՆ. Հոգեկան առողջությանը միտված դասեր հանրակրթական դպրոցում | 56 |
| ՆԱՐԻՆԵ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ. Հեռավար ուսուցում և նրա առավելությունները | 59 |
| ՇՈՎԻԿ ՄԱՐԳԱՅԱՆ. Ֆիզիկական դաստիարակության բաժնի ուսանողների շարժողական գործողությունների ուսուցման արդյունավետության բարձրացման եղանակները տեսազգայական մեթոդներ | 62 |
| ԱՐՄԱՆ ԲԱՐԵՍԵԳՅԱՆ. Основная направленность совершенствования постановки работы по физическому воспитанию студентов с нарушением зрения | 64 |
| ՄԱՐԻՆԵ ՄԱՐԱԿՅԱՆ. Սոֆյա Բաբայանի ֆրենքեյան և զրկիմնեց մանկապարտեզմերը | 67 |
| ՄԱՐԻԱՆԱ ԱՄԻՐԱՊՈՅԱՆ. Ավագ նախադպրոցական տարիքի երեխայի խոսքի զարգացման արդի մոտեցումներ | 70 |
| ՄԱՐԻԱՆԱ ՎԿԱԳՅԱՆ. Նախադպրոցականի համագործակցային կարողությունների զարգացման առանձնահատկությունները | 76 |
| ՄԻԹՐԱ ԱՐՊՈՒՄՅԱՆ. «Դամաշխարհայնացման ազդեցությունն Իրանի կրթության համակարգի վրա» խնդրի վերաբերյալ սոցիալցումների արդյունքների վերլուծություն | 79 |

| | |
|---|-----|
| ՂԱՔԻՔ ԴՈՒԱՍ ԾԱՐՁԱՐԻ. Տեղեկատվական տեխնոլոգիաների տարրեր բաղադրիչների ներդրման ազդեցությունն Իրանի բարձրագույն կրթության համակարգում..... | 84 |
| ՎԱՐՈՇՈՒՐԻ ԴԱՎՈՅԱՆ. Տնային աշխատանքի առանձնահատկությունները | 88 |
| ДЖУЛЕТА ГРИГОРЯН. Методика обучения чтечению учащихся как виду речевоой деятельности | 93 |
| ԴԵՂԻՆԵ ԱՄԻՐԲԵԿՅԱՆ. Դանրակրթությունը և տարրական կրթության առանձնահատկու- թյունները | 96 |
| ՇՈՂԻԿ ԲԱԼՅԱՆ. Դիզայնի բնապահպանական, գեղագիտական-գործառնական ժամանակակից միտումները | 100 |
| ԱՐՄԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ. Սովորողի ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը և ուսուցչի գործունեությունը | 103 |
| ԼԻԼԻԹ ՎՐՈՒԶՈՒՅՑՅԱՆ. Կառուցողական մոտեցման դերը պատմության դասերի արդյունավետության բարձրացման մեջ | 106 |
| ՅԱԾԱ ԴԱԶԱՐՅԱՆ. Ուսուցման մեթոդները «Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկայի դասավանդման գործընթացում | 110 |
| ԱՄԱԼՅԱ ԱՎԱՏՐՅԱՆ. Ուսուցման գործնքացի արդյունավետության առանձնահատ- կությունները և ուսուցչի մոտեցումները | 115 |
| ԱՐՄԻՆԵ ԹՈՎՄԱՍՅԱՆ. Քաղաքային բնակավայրերի պահպանության ուսումնասիրման մանկավարժական և հոգեբանական հիմնավորումը | 118 |
| ԱՄԱՐԻ ԱՎԱԳՅԱՆ. Զայնին և ձայնային տեխնիկային վերաբերող առարկաների ուսուցման անհրաժեշտությունը հեռուստատեսային մասնագետների պատրաստման գործում..... | 123 |

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|-----|
| ԱՐՏՅՈՒ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ. Դավիթ Ալավերդյու «Կանոնական օրինադրությունը» | 130 |
| ՎԱՐՈՒՆ ՖԱՐԱՍԱԶՅԱՆ. Հարկային ստուգումը որպես հարկային վերահսկողության հիմնական ձև, դրա իրականացման իրավական հիմքները | 133 |
| ՎԱՐՈՒՆ ՖԱՐԱՍԱԶՅԱՆ. Հարկային ստուգումների և օրենսդրության կատարելագործման իրավական ուղղությունները ՀՀ-ում | 140 |
| ԱՐՄԱՆ ՎԱՐՈՍՅԱՆ. ՀՀ հարկային հսկողության նարմինները, դրանց կարգավիճակի իրավական առանձնահատկությունները | 147 |
| ԱՐՄԱՆ ՎԱՐՈՍՅԱՆ. Հարկային տեսչության խնդիրները, վերահսկողության լիազորությունների իրավական կարգավորումը | 152 |
| ՆԱԻՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ. Ֆինանսական վերահսկողության մարմինները, դրանց կարգավիճակի իրավական առանձնահատկությունները | 157 |
| ՆԱԻՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ. Ֆինանսական վերահսկողության հասկացությունն ու կարգավորումը | 161 |
| ԴԱՎԻԹ ԴԱԶԱՐՅԱՆ. «Դանրական ծառայող» եզրույթի օրենսդրական բնորոշման հիմնախնդիրները | 167 |
| ՈՂՋԱ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ. Իրավահավասարությունը միջնադարում: Ամուսնա-ընտանեկան իրավունք | 171 |

ՏԱՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|-----|
| ՄԻԿԱԵԼ ՄԵԼԿՈՒՄՅԱՆ, ՓՐԻԴԱ ԲԱՂԱՐՅԻ, ԾՈՐԵՆ ՄՈՐԱԴՅԱՆ. Պուտի повышения эффективности контроля и сертификации импорта и экспорта пищевых продуктов РА | 174 |
| ՄԻՔԱՅԵԼ ՄԵԼԿՈՒՄՅԱՆ, ՎԱՐԴԱՎ ՄԱՐՈՒԹՅԱՆ. Հարկային մարմնի գործողությունների նախադատական գանգատարկման ինստիտուտի դերը առևտորային կազմակերպու- թյունների հարկման կատարելագործման համատեքսում | 179 |
| ՏԻԳՐԱՎ ԲԱՐՊՈՅԱՆ. Գլոբալացման պայմաններում քաղաքի զարգացման ռազմավարական պլանավորման մեթոդական գործիքակազմի կատարելագործում | 184 |
| ՏԻԳՐԱՎ ԲԱՐՊՈՅԱՆ. Որակի մենքնենքի տեսության ժագումը նորամուծական տնտեսության զարգացման պայմաններում | 188 |
| ԼԵՎՈՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ. Յիմնական ֆոնդերի վերարտադրության պահանջները ներկա ժամանակաշրջանում | 192 |
| ԱՐԱՄ ԱՐԴԱԿՅԱՆ, ՎԱՐԵ ՎԿԵՏԻՍՅԱՆ. Ագրեսիվ (նախահարձակ) ամորտիզացիոն քաղաքականություն | 195 |
| ՈՈՒՒԵԼ ԿԱՅՐԱՊԵՏՅԱՆ. Խոշոր քաղաքների կառավարման մի քանի հարցի շուրջ | 199 |
| ՆԱՐԻՆԵ ԲԱՐՍԵՂՅԱՆ, ՄԱՐԻԱՄ ԱՄԻՐԻՔԵԿՅԱՆ. Բրենդային ռազմավարությունը կրթական համակարգում | 204 |
| ՎԱՐԴԱՎ ԳՐԻԳՈՐՅԱՆ. Մտավոր սեփականություն. հասկացությունը, էությունը, գնահատումը | 208 |
| ՎԱՐՅԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ. Յարկաբուժետային և դրամավարկային քաղաքականության կողորդինացումը ՀՀ-ում ճգնաժամի ժամանակ ու ճգնաժամից հետո | 212 |
| ԱՌՈՒՆ ԱԶԱՏՅԱՆ. Արդյունավետ արդյունաբերական քաղաքականությունը և դրա կիրառումը որպես ՀՀ տնտեսության զարգացման գրավական | 216 |
| ՆԱՐԻՆԵ ԿՈՈՅԱՆ. Խմբային դեվիացիայի ձևավորումը և կառավարումը կազմակերպությունում | 220 |
| ՄԱՐԻԵՏԱ ԱՆԱՆՅԱՆ. Յայաստանի Յանրապետությունում ագրարային շուկայի և նրա առանձին քաղադրիչների ձևավորման նախադրյալները | 226 |
| ՄԱՐԻԵՏԱ ԱՆԱՆՅԱՆ. Գյուղացիական տնտեսությունների ապրանքայնության մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը և ուղիները | 230 |

Արտատպելիս հղումը «ՄԽԻԹԱՐ ԳՈԾ» հանդեսին պարտադիր է:
Պրո перепечатываниии отсылка на журнал “МХИТАР ГОШ” обязательна.

Տպագրվել է «ՍԻՍ տպագրատուն» ՍՊԸ-ում:

| | |
|--------------------------------|---------------|
| Ծավալը՝ 14.75 տպագրական մամուլ | Տպաքանակ՝ 110 |
| Объем - 14.75 печатных листов | Тираж - 110 |

Խմբագրության հասցեն՝ 2001, ԴՌ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 30ա
Հեռ.՝ (0322) 4-07-11, 4-20-11

Էլ. փոստ՝ mghandes@mail.ru, lsg57@mail.ru
Կայքէջ՝ www.mkhitargosh.com